



*Վարդան
Գրիգորյան*

**ՀԱՅ
ԱԶԳԱՅԻՆ
ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ**



**ՀԱՅՈՒԹՅԱՆ
ԿԵՆՍՈՒՆԱԿ ՀԱՐԱՏԵՎՄԱՆ
ԳՐԱՎԱԿԱՆ**

ՏԱՐԻՆԵՐԻ ԽՈՂԵՐ, ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱՄ «Գիտություն» հրատարակչություն

Մարտ, 2009

ՀՏԴ 1/14:941(479.25):32
ԳՄԴ 87+63.3(2Հ)+66
Վ 301

Վարդան Գրիչենց

Վ 301 Հայ Ազգային Գաղափարախոսություն. հայության կենսունակ
հարատևման գրավական.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն,
2009.- 316 էջ:

Գրքում ներկայացվում, բնորոշվում ու արժևորվում է Հայ Ազգային Գաղափարա-
խոսությունը (ՀԱԳ) որպես հայոց հավատամքից բխող և դրա վրա հիմնված ուսմունք
ու հայ ժողովրդի հոգևոր-գաղափարական, պետական-քաղաքական, բարոյական-
հասարակական, կրթական-մշակութային և կազմակերպական կառավարման
կայացման կարևորագույն ու անփոխարինելի գործոն: Սույն աշխատությամբ հայ
ազգային կյանքի տարբեր ոլորտների համար բնութագրված է ՀԱԳ-ի հոգեբարոյական
վարականերթության և պետականակերտ արժեքը: Գիրքը լի է լավատեսությամբ,
որ հայությունն ի վերջո կկարողանա՝ լիարժեքորեն ըմբռնել ՀԱԳ-ի պատմական
դերը, կդարձնի այն կյանքի ապրում, որով և կհաղթահարի համայն հայության ու
Հայաստանի Հանրապետության դիմագրաված և դեռ դիմագրավելիք բազմակողմանի
ու բազմաբնույթ մարտահրավերները: Այդ առումով հեղինակը հանդմունք է հայտնում,
որ հայությունը, տոգորվելով Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, կենթարկվի
Աստվածահաճո այնպիսի վերակերտման, որ ի զորու կլինի առողջ հասարակության
հիմքի վրա բարձրանալ մարդկային հասարակության ամենաբարձր աստիճաններին:

ԳՄԴ 87+63.3(2Հ)+66

ISBN 978-5-8080-0763-5

© Բաբկեն Վարդանյան, 2009 թ.

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Այս գիրքը թե՛ ժամանակագրական և թե՛ թեմատիկ առումով շարունակությունն ու ընդլայնումն է հեղինակի «Հայացք ներսից և դրսից» աշխատության՝ սակայն մի էական տարբերությամբ: «Հայացքում» նախ ներկայացվում է հեղինակի խորհրդային շրջանի գործունեությունը, որը նպատակամիտված էր Խորհրդային Միության ակնկալվող փլուզումից հետո Խորհրդային Հայաստանի՝ հնարավորինս նվազագույն ցնցումներով ինքնուրույն պետականություն ձեռք բերելուն Հայաստանի և համայն հայության ուժերի այնպիսի կազմակերպմամբ, որով հնարավոր լիներ նման խնդրի իրականացումը: Վարդան Գրիչենցի մատնանշած գաղափարախոսությամբ և կազմակերպական կառավարման սկզբունքով նման ծրագիրն իր արդիականությունը պահպանեց նաև Խորհրդային Միության փլուզումից հետո՝ արդեն նորանկախ Հայաստանի Հանրապետությունում:

Երկրորդ՝ «Հայացքի»՝ գլխավորաբար 1990-ական թթ. կատարված վերլուծություններին և դիտարկումներին բնորոշ է մտահոգությունը, անգամ տագնապը ՀՀ ներկայի և ապագայի հանդեպ ու նաև համոզումը, որ ստեղծված աշխարհաքաղաքական միանգամայն նոր իրավիճակում հայությունը պետք է որդեգրեր նոր մտածելակերպ և գործելակերպ, պետք է վերջ տրվեին տնտեսության և, ընդհանրապես, կառավարման բնագավառի բոլոր այն երևույթներին, որոնց խորացումն արդեն սկսել էր վտանգել մեր նորակերտ պետականությունը: Բոլոր այս հարցերը դիտարկելով համակարգային մի ամբողջության մեջ՝ դրանց լուծման գործում Վարդան Գրիչենցն առանձնակի կարևորություն է տալիս մեր ազգային տոհմիկ նկարագիրն արտահայտող և 1700 տարի առաջ Հայաստանի քրիստոնեացմամբ սրբագործված մեր նախնիների որդեգրած Հայ Ազգային Գաղափարախոսությանը և վերջինիս ամենօրյա կիրառությանը մեր կյանքում:

Ներկայացվող «Հայ Ազգային Գաղափարախոսություն. հայության կենսունակ հարատևման գրավական» գրքում ի մի են բերվել Վարդան Գրիչենցի հիմնականում 2000-ական թթ. խոհերը և հարցադրումները: Պայմանավորված ՀՀ-ում կատարված որոշակի փոփոխություններով և նկատվող առաջընթացով՝ այստեղ թեև չկան նախորդ գրքին բնորոշ տագնապի և ահազանգի շեշտերը, սակայն այն գրված է Հայաստանի և համայն հայության ներկայի ու ապագայի նկատմամբ նույն մտահոգությամբ, իսկ նախորդ գրքում արծարծված խնդիրներին հավելվել են նաև արդի մարտահրավերները, որոնք վերաբերում են թե՛ մեր պետականության և թե՛ ժամանակակից աշխարհի աշխարհայնացման (սեկուլյարիզմ) և գլոբալ համահարթեցման պայմաններում մեր ազգային նկարագրի անխաթար պահպանմանը:

Վարդան Գրիչենցը տարիների իր այս մտածումները կազմակերպական ձևի մեջ է դրել ու աշխատել է ՀԱՅԶ հաստատության միջոցով, ուստի գրքի սկզբում ներկայացվում է ՀԱՅԶ հաստատության հիմնադրման և գործունեության պատմությունը և Հայ Ազգային Գաղափարախոսությունը ՀԱՅԶ հաստատության ըմբռնմամբ, ապա հետևում է գրքի բուն շարադրանքը: Հեղինակը, որպեսզի ներկայացնի այս և նախորդ գրքի փոխկապակցվածությունը և իրար շարունակություն լինելը, ինչպես նաև ասելիքը նախորդ գրքի բնորոշ հրապարակումներով լրացնելու համար ներառել է մի շարք էջեր «Հայացքից»: Այս նոր գրքի նպատակը և ասելիքը լավագույնս խտացված է նրա «Հայ Ազգային գաղափարախոսություն. հայության կենսունակ հարատևման գրավական» վերնագրում, որով ընդգծվում է, որ Հայաստանն ու հայությունը կարող են հարատևել ու վերելք ապրել, եթե մենք՝ հայերս, Հայ Ազգային Գաղափարախոսությունը ճիշտ ճանաչենք, ընդունենք և մեր կյանքի ամենօրյա ապրումը դարձնենք:

Գիրքը բաղկացած է հինգ գլխից. առաջին՝ «Հայ Ազգային Գաղափարախոսությունը և հայոց պետականությունը» գլխում Հայ Ազգային Գաղափարախոսությունը (այսուհետև՝ ՀԱԳ) Հայոց պետականության տեսանկյունից կարևորվում է երկու առումով. նախ՝ թե ՀԱԳ-ն ինչպես պետք է դրված լինի մեր պետականության, պետական կառուցվածքի ու դրանց կառավարման հիմքում և երկրորդ՝ թե ՀԱԳ-ի կիրառումը ինչպիսի նոր լիցք և խթանում կառաջացնի պետականության ամրապնդման և զորացման գործում, որի համար առաջնային են համարվում հոգևոր-բարոյական կռվանները, որոնց հետ են հարաբերվում ազգային ինքնագիտակցության ու քաղաքացիական պարտաճանաչության պակասի և կաշառելիության, կոռուպցիայի հետ կապված երևույթները, քանի որ նման միջավայրի ձևավորումն արդեն նվազեցնում է այն նախադրյալները, որոնք իրենց հերթին կարող էին նպաստել վերոնշյալ պակասի և կոռուպցիայի չարիքի առաջ գալուն, ուստի ՀԱԳ-ն ունի նաև պետականակերտ գորություն:

Այսպիսով, առաջին գլխում եթե ՀԱԳ-ը քննվում է պետականության և պետականակերտության տեսանկյունից, ապա երկրորդ՝ «Հայ ազգային գաղափարախոսությունը և հայրենիքի զարգացումն ու գորացումը» գլխում ներկայացվում է ՀԱԳ-ի դերը հայ ազգի և հայրենիքի զարգացման ու առաջընթացի գործում այն իմաստով, թե Հայաստանի տնտեսությունը և կյանքի տարբեր բնագավառները ինչ զարգացում և վերելք են ապրելու ՀԱԳ-ի՝ նաև որպես արժեհամակարգ որդեգրելու դեպքում: Հեղինակի պատկերավոր բնորոշմամբ՝ վերջինս դառնալու է հայկական այն գյուտը, որն ապահովելու է Հայաստանի ու հայության աննախադեպ պաշտպանվածությունն ու առաջընթացը:

Երրորդ՝ «Հայկականության իմաստավորումն ըստ Հայ Ազգային Գաղափարա-

խոսության» գլխում ՀԱԳ-ը ներկայացվում է որպես ազգային ինքնաճանաչման միջոց, և առաջին իսկ հոդվածն սկսվում է «Ճանաչենք մեզ» կարգախոսով, իսկ հաջորդող նյութերում շեշտվում է, որ այդ ճանաչումը (հայոց կրթության, մշակույթի և քաղաքական-հասարակական բնագավառների) այն վերելքն է, որը զորացնում է հայոց պետականությունը և Հայաստանի տնտեսությունը:

Այս գլխում, որպես ազգային ինքնության և ՀԱԳ-ի կարևոր մի բաղադրատարր, ներկայացվում է Տարոնականությունը: Եթե այս՝ երրորդ գլխում ՀԱԳ-ը կարևորվում է ազգային ինքնաճանաչողության տեսանկյունից, ապա հաջորդ՝ չորրորդ՝ «Հայ Ազգային Գաղափարախոսությունը և հայ մարդը» գլխում արդեն ցույց է տրվում, թե գաղափարագրկումն ազգային ինքնության ինչպիսի կորստի կարող է հանգեցնել:

Վերջին՝ հինգերորդ՝ «Հայ Ազգային Գաղափարախոսությունը և հայ կյանքի մարդկայնորեն իմաստավորումը» գլխում արդեն այսօրվա համամարդկային հիմնախնդիրներն են՝ դիտարկված Հայ Ազգային Գաղափարախոսության տեսանկյունից, թե որո՞նք են մեր ազգային ինքնությանը ներդաշնակող արժեքները և որոնք են սպառնում մեր ինքնությանը՝ կեղծ և վտանգավոր ուսմունքների, կարգախոսների ներքո: Այս գլխում արծարծվում է նաև այն հարցը, թե ո՞րն է մեր տեղն ու դերը աշխարհում:

Այսպիսով, այս գրքում պատմական փորձի ու արդի միջազգային հարաբերությունների համատեքստում ցույց է տրվում Հայ Ազգային Գաղափարախոսության կարևորությունը աշխարհասփյուռ հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանման, զորացման, համայն հայության համախմբման ու զարգացման և հայոց պետականության ամրապնդման, վերելքի համար:

ԱՌԱՋԱԲԱՆ

Բացատրություն, թե ինչպես գրվեց այս գիրքը:

Այն գրվեց բազում տարիների խոհերի հիման վրա՝ մեր ազգի ոգու, կերպարի, ինքնության, որով և էության մասին: Ո՞վ ենք մենք՝ հայերս, ինչո՞ւ է Աստված ստեղծել մեզ (մյուս ազգերի կողքին): Ի՞նչ նախասահմանված ծրագիր ունի մեզ համար Աստված ու ի՞նչ է ակնկալում մեր ազգից... Հետևապես՝

- ո՞րն է մեր կոչումը, պարտականությունն Աստուծո և Նրա ստեղծած մարդկային ցեղի առաջ...

- ինչո՞ւ Աստված մեզ այնքան սիրեց, որ հակառակ մեր բազում մեղանշումներին՝ մեզանից երես չդարձրեց և միշտ ներեց,

- ինչո՞ւ Աստված Իր իսկ արարած ու սիրած մարդկության մեջ հայ ազգին շնորհ արեց, որ պետականորեն առաջինը զգա, հասկանա, ընդունի և պաշտի Իր Միածին Որդուն, որով և հասկանա Իր հավերժական կամքը, ծրագրերը, գործերը և մասնակից դառնա դրանց կատարմանը:

Ասված է՝ ում շատ է տրված, շատ էլ պահանջվում է նրանից: Դրա համար ու հետևապես մեզ՝ հայերիս, քանի որ Աստված հավատքի շնորհով փրկեց ու Իր հավերժական խորհուրդներին հաղորդակից լինելու ու, ամենաէականը, Իր Աստվածային էությունը և Հիսուս Քրիստոսի Աստվածությունը պետականորեն ճանաչելու առաջնությանն արժանացրեց, ապա դրանով հայության առաջ ավելի մեծ ու առաջնային պահանջ՝ դրվեց՝ լինել Իր ժողովուրդը՝ ապրել Իր պատգամներով և կատարել Իր կամքն ու ծրագիրը:

Այդ իրականության լույսի տակ հայ մարդու, հայության, Հայաստանի ու հայոց պետության առաջ կենսական նշանակությամբ հարց է դրվում՝ ի՞նչ պետք է հավատքով գիտենանք, որ իմաստնանանք, զորանանք և, ըստ մեր կարգավիճակի, ճիշտ և լիարժեք ապրենք մեր կյանքն ու ամբողջությամբ կարողանանք կատարել մեր առջև դրված պահանջը՝ մեր պարտքը, որով և կիմաստավորվի մեր կյանքն անձնապես ու ազգովին՝ այժմ և հավիտյանս...

Խորապես համոզված են, որ տրված կենսական հարցի պատասխանն այն է, որ պետք է հավատանք. կա մեկ Աստված՝ ամենակալ Հայրը, ում ճանաչում ենք Իր Միածին Որդու Ավետարանով և խաչով: Ու այդ հավատքով ճանաչենք, ընդունենք ու ապրենք այդ հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ... Որպեսզի միշտ ու ամենուր պաշտպանություն, զորություն, վերելք և կյանք ունենանք:

Ահա այս ըմբռնումով էր, որ խոհերս ուղղվեցին կենսականի՝ մեր Սուրբ Հավատքի և դրանից բխող ու դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության վրա, որից ծնունդ են առել մեր մարդկային-ազգային կյանքի բարոյական արժեհամակարգը, բարոյական նորմերը: Ու այդ խոհերով, իմ հոգու պարտքից բխող գիտակցությամբ և ցանկությամբ այս գիրքը ներկայացնում են իմ ազգակիցներին ու առաջին հերթին հոգեհարազատ եղբայրներին ու քույրերին և մեր զավակներին ու թոռներին:

Ամբողջ հոգով շնորհակալ եմ Արարչից, որ թույլ տվեց ինձ՝ մեղավորիս, ունենալու այս խոհերը...

Եթե արդար է ներկայացված խոհերիս տրամաբանությունը, ապա, ելնելով դրանից ու նաև խորին ցավ ու տագնապ առաջացնող այն երևույթից, որ ներկայումս

մեր խաչապաշտ ժողովրդի մեծամասնությունն անտեղյակ է իր ազգի դավանանքից, նախքան Հայ Ազգային Գաղափարախոսության և դրա առնչությունների վերաբերյալ տողերին անցնելը հարկ են համարում հիշեցնել մեր ՀԱՎԱՍԱՍՔԸ՝ Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու, հայ ազգի բազմադարյան հավատամքը:

ՀԱՎԱՍԱՍՔ, որը պարունակում է այն, ինչին 1700 տարի Աստուծո շնորհով հավատացել է մեր ժողովուրդը՝ մեր սրբերի, մեր մեծերի ուսուցմամբ և նրանց՝ ապրումի վերածված կյանքի սուրբ օրինակով:

ՀԱՎԱՍԱՍՔ, որը լուսավորում է երկրային ու երկնային կյանքը՝ հավիտենական Աստուծո՝ Հոր, Միածին Որդու և Սուրբ Հոգու Բնության ու օրենքների, պատգամների և Ընդհանրական ու Առաքելական Սուրբ Եկեղեցու կոչումի, առաքելության և դերի ճանաչմամբ...

ՀԱՎԱՍԱՍՔ, որն Աղբյուրն է և Հիմքը մեր ազգի գաղափարի՝ Հայ Ազգային Գաղափարախոսության և, ըստ այնմ, մեր բարոյականության՝ բարոյական արժե-համակարգի, կյանքի բարոյական նորմերի:

Հաւատում ենք մէկ Աստուծոյ՝ ամենակալ Հօրը, երկնքի եւ երկրի, երեւելիների ու աներեւոյթների Արարչին:

Եւ մէկ Տէր Յիսուս Քրիստոսին՝ Աստուծոյ Որդուն՝ ծնուած Հայր Ասծուց՝ միածին, այսինքն՝ Հօր էութիւնից: Աստուած՝ Ասծուց, լոյս՝ լոյսից, ծճմարիտ Աստուած՝ ծճմարիտ Ասծուց, ծնունդ էւ ոչ՝ արարած: Նոյն Ինքը՝ Հօր բնութիւնից, Որով ամենայն ինչ եղաւ երկնքում եւ երկրի վրայ՝ երեւելիներ ու աներեւոյթներ: Որ մեզ՝ մարդկանց համար էւ մեր փրկութեան համար, երկնքից իջնելով, մարմնացաւ, մարդացաւ, Սուրբ Հոգով կատարելադէտ ծնունեց սուրբ Կոյս Մարիամից: Որով վերցրեց մարմինը, հոգին էւ միտքը էւ ամենայն ինչ, որ ունի մարդ՝ ծճմարտադէտ էւ ոչ՝ կարծեօք: Չարչարուեց, խաչուեց, թաղուեց, երրորդ օրը յարութիւն առաւ, նոյն մարմնով ելաւ երկնքէ եւ նստեց Հօր աջ կողմում: Գալուն է նոյն մարմնով էւ Հօր փառքով՝ դասելու կենդանիներին էւ մեռելալիներին, Որի թագաւորութիւնը վախճան չունի:

Հաւատում ենք էւ Սուրբ Հոգուն՝ անեղին էւ կատարելին, որ խօսեց Օրէնքում, Մարգարէներում ու Աւետարաններում: Որ իջաւ Յորդանան, քարոզեց առաքելների միջոցով էւ բնակուեց սուրբերի մէջ:

Հաւատում ենք նաեւ միայն մէկ Ընդհանրական ու Առաքելական Սուրբ Եկեղեցու, մէկ մկրտութեան, աղաճխարութեան, մեղքերի քաղութեան էւ թողութեան. մեռելների յարութեանը, հոգիների էւ մարմինների յաւիտենական դասաստանին, երկնքի արքայութեանը էւ յաւիտենական կեանքին:

ՓԱՌՔ ԵՎ ԳՈՂԴՈՒԹՅՈՒՆ ԱՍՏԾՈՒՆ, ՈՐ ՄԵՁ ԷԼ ԱՐԺԱԼԱՑՐԵՑ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼՈՒ ՍՈՒՐԲ ՀԱՎԱՍԱՍՔԻՆ:

Եվ Նրանից, Նրանով ու Նրա՝ համար պետք է լինի մարդկության հարազատ մասնիկ հայ ազգի և հայ անհատի ընտանեկան, ընկերական, հասարակական, պետական ու ազգային կյանքի ապրումը:

Ու երբ մեր կյանքի ապրումով կփառաբանվի մեր Արարիչը՝ մեր Հայրը՝ Աստված, կփառավորվի և Հայ ազգն ու յուրաքանչյուր հայը, այժմ և հավիտյանս:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՀՈՒՇԵՐ ԵՎ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ

*Ով որ չգիտե՝ ինչ է մահը,
նա վախենում է մահից, իսկ
ով որ գիտե՝ ինչ է մահը, չի
վախենում մահից:*

Իմ կյանքի ամենամեծ զոհաբերությունը, որ արել եմ հանուն իմ ազգի ու հայրենիքի, 1964 թ. կոմկուսի անդամության համար իմ դիմելը էր, այդ ուղղությամբ ջանքեր գործադրելն ու անդամ դառնալը: Երկրորդ իմ ամենամեծ զոհաբերությունը՝ 1973 թ. Խորհրդային Հայաստանից արտագաղթելու համար դիմելը և մեծ, բարդ ու բազմակողմանի աշխատանք տանելով՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ մեկնելը: Դրանք որոշումներ էին, որոնք բխում էին մեր ազգին ու հայրենիքին էական ծառայություն մատուցելու իմ նպատակից և ծրագրերից: Եվ քանի որ զոհաբերությունն արդեն կատարված էր, այսինքն՝ կոմկուսին անդամագրվելու և ավելի ուշ՝ Հայաստանից տեղափոխվելու որոշումն ընդունված էր, դրա կատարման կարգապահ հետևողականությամբ իրագործման համար ամեն հնարավորն ու անհնարինը փորձեցի:

Առաջին զոհաբերությունն ավելի մեծ էր, սակայն, համեմատած երկրորդի հետ, ավելի դյուրին, մինչդեռ, երկրորդ զոհաբերությունն իրագործելու համար ավելի շատ ջանք պահանջվեց: Այդ առնչությամբ, եթե միայն ասեի, թե. «Աստված իմ, ինձ տվածդ խղճով և գիտակցությամբ այդ երկու զոհաբերությունները կատարելու պատրաստ եմ», սակայն հսկայական աշխատանք չկատարեի, այն էլ մեծ հնարամտությամբ, ես ո՛չ կոմկուսի անդամ կդառնայի, ո՛չ էլ Ամերիկա կգնայի: Կմնայի իմ կոմունիստներժ սկզբունքին և 1978 թվականից ի վեր հայրենիքից չէի զրկվի: Մանավանդ որ 1980-ականների վերջին ու 90-ականների սկզբին հնարավորություն կունենայի հայրենիքում անմիջականորեն մասնակցել ազգային պայքարին, ոչ թե այդ կանեի արտասահմաններում՝ անուղղակիորեն...

Բայց այս բոլոր մտքերը և գնահատականները «մաքուր, սկզբունքային» լինելու մասին ու նաև, թե որտե՞ղ ավելի օգտակար կլինեի իմ ազգին և հայրենիքին, անհմաստ են դառնում, քանի որ իմ այդ երկու և դրանց նման (թեև ոչ այդքան մեծ զոհաբերությամբ) գործերն ու արարքները կատարել եմ **անկեղծ հավատքով առ Աստված**, որ դրանք լավագույն և ուրույն ծառայություններն են, որ ես պետք է անեմ իմ ազգի ու հայրենիքի համար՝ ի սեր Աստուծո...

Այդ երկու զոհաբերություններին նման էր նաև իմ պայքարը 1947 թվականի աշնանից մինչև 1949 թվականի հունվարը (երբ երկրորդ անգամ ձերբակալվեցի), որը պարզորեն գիտակցված և ճշգրտորեն հաշվարկված կյանքի վտանգ էր պարունակում՝ հանուն հայ ազգային, հոգևոր, գաղափարական, բարոյական և քաղաքական դիմադրության՝ խորհրդային-ստալինյան տոտալ նախահարձակման դեմ,

որը սպառնում էր ոչնչացնել հայ ազգային արդեն իսկ վիրավոր ինքնությունը: Սակայն իմ այդ գիտակցված զոհողությունը ես նվազ եմ համարում վերոնշված երկու զոհաբերություններից, որովհետև վերջինիս վտանգն ուղղված էր իմ կյանքին միայն, իսկ հավատամքս, գաղափարս և սկզբունքներս անխոցելի էին մնում, չէին զիջվում, ընդհակառակը՝ իմ ապրած վտանգավոր կյանքով դրանք ավելի զորանում էին:

Իսկ 1964 թ. (կոմկուսին անդամագրությամբ) և 1973-77 թթ. (արտագաղթելու) իմ գործունեության մեջ մտնում էին ավելի կոնկրետ, օգտակար նպատակներ իմ ազգին ու հայրենիքին ծառայելու համար՝ հատկապես հեռանկարային առումով, բայց կատարվում էին՝ վտանգի տակ դնելով իմ հավատամքը և գաղափարական վարկը: Ու եթե չլիներ իմ համոզմունքը և առավել քան համոզմունքը, եթե չլիներ իմ խոր հավատքը, որ իմ արածները, ի վերջո, Աստված է դատում և որ դրանք Աստվածահաճո են, ես երբեք, ո՛չ մի դեպքում չէի ընդունի այդպիսի որոշումներ ու երբեք չէի կատարի դրանք: Բայց հավատքով այս ամենը կատարեցի ու համոզված էի, որ պարտավոր եմ անել ու արդար է իմ արածը և կհաջողեմ՝ շրջանցելով կամ հաղթահարելով բոլոր ռեալ վտանգները, նեղություններն ու անորոշությունները: Սակայն, եթե անգամ որևէ իրադարձության բերումով իմ գաղափարական վարկը մարդկանց կողմից արատավորվի, միևնույն է, իմ հավատամքը կմնա անաղարտ, քանզի այն հոգուց է բխում: Իսկ հոգին Աստուծո՛րդատաստանի առաջ է, այլ ոչ թե մարդկանց, որ կարող են և սխալվել...

Եվ իմ հավատքը հաղթեց, ու ես չչեղվեցի՝ և չկորա՛: Եվ ես շնորհակալ եմ Աստծուց և միշտ շնորհակալ կլինեմ, ինչ էլ որ լինի, որովհետև հաստատ գիտեմ, որ ինչ որ հավատքով եմ անում, Նրա կանքը կատարելու համար, դա անպայման լավ է, և ես դրա համար միշտ ու միշտ պետք է շնորհակալ լինեմ ամբողջ հոգով, ամբողջ սրտով ու ամբողջ էությամբս...

Փա՛ռք Նրան:

Գնահատական

Իմ կատարած զոհաբերությունները (իսկ եթե իսկապես անհարմար է արածներս զոհաբերություն անվանել, ապա ասեմ՝ իմ ջանքերը) ու նաև այժմ գործադրածս ջանքերը, որոնք նույնպես հոգով են թելադրվում, քանի որ ո՛չ միայն ազգային ինքնագիտակցությամբ են, այլև՝ խղճով, ինձ համար մինչև վերջ դեռ պարզ չէ, թե ինչքանով են դրանք համապատասխանում անհրաժեշտորեն պահանջվածին ու արդյունավետ են որպես Աստուծո ծառայության համար ազգային ծառայություն: Բայց ավելի քան 60 տարի առաջ՝ սկսած 1947 թ. աշնանից, քանի որ հավատքով եմ անում և նաև նույն համոզմամբ ու նույն ըմբռնումով, ապա ես ինձ հանգստացնում եմ նրանով, որ դա՛ է կարևորը, որ իմ պարտքն է՝ խղճով և գիտակցությամբ, ազնվորեն ու ժրաջանորեն ջանքեր կատարելը: Ինչ մնում է մարդկանց գնահատանքին, դա այնքան էլ կարևոր չէ (գուցե նաև պետք չէ, վնաս է ինձ): Իսկ ինչ մնում է մարդկանց՝ ինձ ընդառաջելուն,

որ կարողանամ իմ ջանք-ծառայությունները ժամանակին ու առավել արդյունավետությամբ կատարել, ապա, ըստ երևույթին, դա՛ էլ իմ գործը չէ կամ ի՛մ խնդիրը չէ: Հավատում եմ, որ դա Աստուծո գործն է և այդ մարդկանց՝ ներառյալ ղեկավարների խնդիրը...

1947 թվականից՝ ավելի քան 60 տարի առաջ սկսած ազգային ծառայությունս մեկ խոսքով վերաբերում է ազգային կենսունակ պետության ստեղծմանը՝ հայ ազգային դիմադրության և պաշտպանության կայացմանն ու ազգային կարողության և ներուժի (առաջին հերթին՝ հոգևոր, գաղափարական, բարոյական, հայրենասիրական) բացահայտմամբ, զարգացմամբ ու արդյունավետորեն գործադրմամբ:

Հայության անհրաժեշտ դիմադրությունը և պաշտպանությունը դեռ ամբողջացած չէ

Հայության և Հայաստանի թշնամիները, վաղուց ի վեր հզոր ուժերի հետ դաշնակցած, կազմակերպված ու համակարգված պայքար են մղում հայ ազգի և Հայաստանի գոյության դեմ: Բայց հայության համար էական հարց է, թե որևէ ժամանակ վերջին դարերի ընթացքում ու այժմ հայությունը կազմակերպե՞լ ու ապահովե՞լ է ամբողջ ազգի ու Հայաստանի համար կարող ուժերի հետ դաշնակցած, կազմակերպված և համակարգված պաշտպանություն, ինչպես նաև իր դեմ կատարվող ոտնձգություններին ըստ հարկի հակադարձում: Եթե այո, ապա ե՞րբ, ո՞ւր է, թող ցույց տրվի, որ շարունակենք: Եթե ո՛չ, ապա ինչո՞ւ, թող պարզաբանվի, որ վերջապես ստեղծենք:

Այս պարզ, բայց էական խնդիրը կատարվում էր (կամ գոնե ջանք էր գործադրվում կատարելու) հայոց թագավորների կողմից: Մեր թագավորությունների անկման ժամանակ շատ դեպքերում դա կատարվում էր զորեղ նախարարների նախաձեռնությամբ: Նրանց բացակայության ժամանակ էլ, այս կամ այն չափով, դա արվում էր Հայ եկեղեցու կողմից:

Սոտավորապես 120 տարի առաջ այդ կենսական խնդրի կատարումն սկսեցին վերցնել հայ կուսակցությունները, բայց չկարողացան կատարել, ու այդ ուղղությամբ նրանց ջանքերն աստիճանաբար հասան զրոյի:

Խորհրդային Հայաստանն ի վիճակի չէր նման խնդիր կատարել և չկատարեց, իսկ այն, ինչ որ կատարեց, զուրկ էր ազգային համադրումից և ընդհանրապես ազգային քաղաքականությունից: 1991 թվականին հռչակված Հայաստանի անկախ Հանրապետությունը տրամաբանորեն անմիջապես պիտի լրացներ բացը, բայց չարեց, ու այնուհետև էլ դա տեղի չունեցավ:

Հարց. այժմ չի՞ եկել արդյոք ժամանակը (արդե՛ն իսկ ուշացած), որ դա արվի: Արվի պետականորեն՝ հայ թագավորների, նախարարների ցուցաբերած նախանձախնդրությունից և պատրաստականությունից նույնիսկ ավելի բարձր նախանձախնդրությամբ և պատրաստականությամբ ու նաև հմտությամբ, որովհետև այլևս տեղ չկա ո՛չ սպասելու, ո՛չ էլ նահանջելու...


Իրավիճակ, որը պետք է փոխվի

Հայ ժողովրդին և Հայաստանը տնտեսական շնչահեղձության ենթարկելու (և ո՛չ միայն տնտեսական շնչահեղձության) թշնամական նպատակադրումը, ծրագրավորումը և տարբեր միջոցներով կիրառումը նորություն չէ՝, որ տեսնում ենք վերջին տասնամյակներին: Այն սկսվել է շատ վաղուց և հիմնավորապես գործադրվել 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրության կողմից և շարունակվել Թուրքիայի նացիստական և Ռուսաստանի բուլշևիկյան կայսերապաշտ քաղաքականությամբ, ինչպես նաև միջազգային անտարբերության, շահամոլության և կամ անզորության պատճառով: Ասվածի ճշմարտացիությունը երևում է թեկուզ այն ակնհայտ փաստից, որ Հայաստանը կոտորակված, սեղմված, շրջափակված է և զրկված որևէ ծովային ելքից:

Սա տեսանելի կորուստն ու շարունակվող վտանգն է: Անտեսանելին կամ դժվար տեսանելին մեր հոգևոր, գաղափարական և բարոյական կորուստները և հետևանքներն են ու այդ արժեքների և մեր մշակույթի, կրթության, կենցաղավարության, հետևապես և մեր ազգային ինքնագիտակցության ու ինքնության դեմ վտանգը: Եվ թեև այդ վտանգը ճակատագրական նշանակություն ունի, այդուհանդերձ ազգը և ղեկավարությունը պատշաճ ուշադրություն չեն դարձնում դրան, ու ազգային և դաշնակիցների համապատասխան զորահավաք չի կատարվում և կազմակերպական կառավարում ու պաշտպանություն չի ապահովվում այդ վտանգի վերացման համար:

Այդ ցավալի, անոթալի և կործանարար իրավիճակի պատճառների և հետևանքների մասին շատ երկար կարելի է խոսել, և կխոսենք: Սակայն անմիջական լինելու համար հակիրճ ասենք, որ այս դրության փոփոխությունը կարող է սկսվել հայության մեջ կրիտիկական զանգվածի (ԿՁ) առաջացմամբ: Իսկ դրա համար պետք է բեղմնավորվի ԿՁ-ի կորիզը: Բեղմնավորում՝ Աստուծո Յոզով: Իսկ Սուրբ Յոզու բեղմնավորման համար պետք է սրբվեն համապատասխան նվիրյալ և գիտակից հայորդիների սրտերն **աստե՛սական ազնվությամբ...**

Օ՛ն, առա՛ջ. ո՞ւր ե՛ք:



ՀԱՅՔ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

ԱՌԱՋԱՅՄԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

(Ինչո՞ւ, ինչպե՞ս)

ԵՎ

ՆՐԱ

ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅ

ԱԶԳԱՅԻՆ

ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆԸ

ՀԱՅՔ ԳԻՏԱՐԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅՔ գիտահետազոտական-ծրագրային հաստատությանը նախորդել է Հայ ազգային գիտահետազոտական-ծրագրային ինստիտուտը, որի ստեղծման որոշումն ընդունվել է Խորհրդային Հայաստանում 1962 թվականի ապրիլի 25-ին, մի խումբ անձանց կողմից, ովքեր նպատակ էին դրել գոյություն ունեցող պայմաններում կատարել հայ ազգային գաղափարախոսական, քաղաքական, սոցիալական ու տնտեսական հարցերի վերաբերյալ համակարգված գիտահետազոտական աշխատանքներ:

Այդ որոշումն ունեցել է հասունացման մի քանի փուլեր:

Դեռ 1947-57 թվականների ընթացքում հայ ազգային պայքարի ուրույն բովով անցած մի խումբ մարդիկ 1957-1962 թվականներին ՀԽՍՀ-ում, Մոսկվայում և Խորհրդային Միության այլ քաղաքներում, նոր համախոհների հետ տարբեր բնույթի և մոտեցմամբ բազմաթիվ խորհրդակցություններից հետո, հանգեցին այն վերջնական եզրակացության, որ հայ ազգի գոյատևման և զարգացման համար ամենակենսական նշանակություն ունեցող գաղափարների, կարիքների և խնդիրների ըմբռնումը, վերլուծումը և, դրանց հիման վրա, տարբեր բնագավառների ազգային քաղաքականության մշակումը պետք է կատարվի արհեստավարժորեն, գիտական օբյեկտիվությամբ և զերծ որևէ հատվածական կամ օտար շահագրգռությունից ու ազդեցությունից: Գիտակցվում էր նաև, որ տարբեր բնագավառների քաղաքականության մշակումն ու դրա կիրառության ծրագրավորումը հարկ է կատարել անկախ և փակ ազգային հաստատությունում, որը գոյություն չունի հայ իրականության մեջ, սակայն պետք է ստեղծել:

1962 թվականի ապրիլի 25-ին ընդունված հիշյալ որոշմամբ նկատի էր առնվում երեք գլխավոր հանգամանք:

Նախ` նման ազգային հաստատության առկայությունը հույժ կարևոր է հայ ազգի ազատ, անկախ, անվտանգ ու բարգավաճ գոյության նպատակի իրագործման համար այնքանով, որ դրա առաջնային խնդիրը լինելու է ամբողջ հայության բոլոր հատվածների տարբեր բնագավառների կարողության հաշվառումը, ներուժի բացահայտման ու զարգացման հետազոտումն ու դրանց լիարժեք կիրառման տարբեր փուլերի ծրագրավորումը` ընթացիկ պայմանների ու ապագայի մրցահրավերների դիմագրավման համար. հատկապես Խորհրդային Միության ակնկալվող (որևէ միջոցով ու ձևով) կազմալուծման հետևանքով առաջանալիք նոր բնույթի, բարդ ու ճակատագրական նշանակությամբ իրադարձություններում:

Երկրորդ` այդպիսի հաստատության ստեղծումն ու գործունեությունը, բացի վտանգավոր լինելուց, նաև շատ դժվար է` փորձի, մարդկային ու նյութական համապատասխան ռեսուրսների համարյա լրիվ բացակայության պատճառով:

Երրորդ` այդ հաստատության ստեղծումն ու աշխատանքների սկսումը պետք է կատարվի անհապաղ: Թե՛ մեր պատմությունը և թե՛ ընթացիկ ժամանակաշրջանը ցույց են տվել, որ ժամանակի գործոնը հաճախ վճռորոշ է եղել ազգի ճակատագրական լուծումների համար: Դրա վերջին հատկանշական օրինակը համարվում էր Խրուշչովյան իշխանության տասնամյա շրջանը. եթե հայությունը նախատեսած լիներ Խորհրդային Միությունում տեղի ունենալիք գաղափարախոսական, քաղաքական և այլ զարգացումների տարբերակներ և ըստ այնմ նախապատրաստած լիներ ծրագրեր և դրանց գործադրման համար միջոցներ, համադրում և ղեկավարում, ապա այդ տասը տարվա ընթացքում հնարավոր կլիներ, ի թիվս մի շարք տարբեր կենսական հարցերի, «սահուն կերպով» լուծել նաև Ղարաբաղի հարցը լրիվ և Նախիջևանի հարցը՝ առնվազն մասամբ:

Գիտակցվում էր, որ կորցնելով այդ պատմական հնարավորությունը՝ հայությունը պատրաստ չէ պատշաճորեն դիմագրավելու նման և դեռ ավելի պատասխանատու զարգացումների, որոնք կարող են ստեղծել ճակատագրական ելքով ամենաբարենպաստից մինչև ամենաանբարենպաստ պայմանները հայության և Հայաստանի համար:

Այս և նման այլ նկատառումներով մշակվեցին Հայ ազգային գիտահետազոտական ինստիտուտի նպատակային ծրագրերը և, ըստ այնմ, ծրագրվեցին նրա աշխատանքները՝ ապահովության նկատառմամբ ապակենտրոնացնելով դրանք ըստ համապատասխան անհատների, խմբերի և վայրերի՝ Խորհրդային Հայաստանում և ներքին ու արտաքին Սփյուռքում:

Խորհրդային իրականությունում, այս անհրաժեշտ թվացող պայմանների ապահովմամբ հանդերձ (բացի այն, որ ծրագրերի կատարումը դանդաղ ու անբավարար էր), կառույցն անվտանգության իմաստով ճեղքեր էր տալիս, և գործունեության մթնոլորտը հարաճունորեն լարվում էր:

Թեև կործանարար ցնցումներ ու վնասներ չեղան, բայց ամեն մի ցնցումի որոշ սառեցման ժամանակաշրջան էր հետևում, որը պահանջում էր շատ բան նոր իրադրությունում սկսել: Այս պայմաններում հետզհետե ավելի պարզորոշ էր ուրվագծվում, որ անհրաժեշտ է ազգային այս հաստատության գոնե որոշակի օղակների գործունեությունը և հատկապես «հավաքման» գործընթացը և կիրառական ծրագրավորումը տեղափոխել Խորհրդային Միությունից դուրս:

Բազում տարիներ այդ ուղղությամբ ջանալուց հետո՝ 1978 թվականից, արտաքին Սփյուռքի տարբեր շրջաններում անմիջական աշխատանքներ կատարվեցին՝ ստեղծելու համար Հայ ազգային գիտահետազոտական-ծրագրային ինստիտուտն աշխատանքային բնականոն պայմաններում:

Հիմնականում ԱՄՆ-ում և Եվրոպայում, անցնելով որոշ կազմակերպական փուլեր, 1989 թվականին ՀԱՅՔ հաստատությունը պաշտոնապես հաստատվեց և սկսեց գործել Վաշինգտոնում՝ որպես հայության հարցերով գիտահետազոտական, շահույթ չհետապնդող անկախ հաստատություն:

Միաժամանակ, անմիջապես օգտվելով խորհրդային Միությունում տեղի ունեցող փոփոխություններից, ՀԱՅՔ հաստատությունը նոր պայմաններում սկսեց իր գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում, և 1992 թվականի սկզբին պաշտոնապես գրանցվեց նրա երևանյան մասնաճյուղը:

Մինչ այդ՝ 1989-1992 թվականների ընթացքում ՀԱՅՔ հաստատության ներկայացուցիչները հանդիպումներ ունեցան Հայաստանի բոլոր գլխավոր գիտական ու բարձրագույն ուսումնական հաստատությունների և մի շարք պետական հիմնարկների ղեկավարների հետ՝ ծանոթացնելով նրանց ՀԱՅՔ հաստատության նպատակին, ծրագրերին և գործունեությանը: Այդ հանդիպումներին հաջորդեցին բազմաթիվ խորհրդակցություններ ու քննարկումներ, որոնց արդյունքում հաջորդ տարիների ընթացքում կնքվեցին նպատակային գործակցության պայմանագրեր ՀԱՅՔ հաստատության ծրագրերի իրագործման և տարբեր հիմնարկների խորհրդատվական ծառայություն տրամադրելու մասին:

Պետական ու կառավարական հիմնարկների հետ ՀԱՅՔ հաստատության համագործակցությունն սկսվեց Գերագույն խորհրդի նախագահության և բարձրագույն կրթության ու գիտության, էկոնոմիկայի, արդյունաբերության, կապի ու այլ նախարարությունների հետ: Դրա արդյունքների մի զգալի մասը, ՀԱՅՔ հաստատության աշխատակիցների աշխատությունների հետ, տեղ է գտել հաստատության հրատարակած «Տեղեկագրի» տասնվեց համարներում և այդքանից ավելի մենագրություններում ու առանձին զեկուցագրերում:

2000 թվականին ՀԱՅՔ հաստատությունը վերակազմավորվեց՝ նպատակ ունենալով ավելի մեծ ընդգրկմամբ ու արդյունավետությամբ ծավալել իր գործունեությունը՝ հաշվի առնելով ազգային և միջազգային տարբեր բնույթի էական զարգացումները...

Ներկայումս ՀԱՅՔ հաստատությունն ընթանում է այդ ուղղությամբ:

ՀԱՅՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՉՈՒՄԸ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅՔ գիտահետազոտական հաստատության հիմնադրման կապակցությամբ նրա կոչումը, նպատակն ու գործունեությունը համառոտակի հետևյալ կերպ է ներկայացվել.

ՀԱՅՔ հաստատության կոչումն ու նպատակն ազգային գոյատևման և զարգացման համար ամենակենսական նշանակություն ունեցող գաղափարները, կարիքներն ու խնդիրներն ըմբռնելու, վերլուծելու և դրանց հիման վրա տարբեր բնագավառների ազգային ամենաբարենպաստ քաղաքականությունն առաջարկելն է:

ՀԱՅՔ հաստատությունը, իր սկզբունքի համաձայն, ազգային խնդիրներին մոտենում է գիտական օբյեկտիվությամբ և համահայկական չափանիշներով ու հեռանկարով և բացարձակապես զերծ է որևէ հատվածական շահա-

գրգռվածությունից և կամ ազդեցությունից:

ՀԱՅՔ հաստատության գործունեության հիմնական մասը կազմում է՝

ա) Հայ ազգային ամենակենսական գաղափարների ու խնդիրների բարձրացման, հստակեցման և դրանց գործնական լուծման համար գիտահետազոտական ծրագրային աշխատանքների կատարումը՝ գործակցելով համապատասխան գիտահետազոտական հաստատությունների և անհատների հետ:

բ) Այդ աշխատանքի արդյունքները հայության տարբեր հատվածներին, շրջանակներին ու խավերին մատչելի դարձնելը տարբեր մակարդակներով ու ձևերով:

ՀԱՅՔ հաստատությունը հիմնադրվել և ղեկավարվում է և կամ աջակցություն է գտնում հայության ճակատագրով մտահոգ և կյանքի այլազան բնագավառներում էական փորձառությամբ, տարբեր վայրերում ապրող անձանց կողմից: Նրանք ՀԱՅՔ հաստատությանն աջակցում են այն գիտակցությամբ, որ հայ իրականության մեջ նման հաստատության գործունեությունը վաղուց ի վեր կենսական անհրաժեշտություն է:

ՀԱՅՔ հաստատությունը որևէ ձևով կապված չէ, ազդված չէ ու առավել ևս չի ղեկավարվում որևէ քաղաքական, պետական կամ այլ նման կազմակերպության կողմից:

ՀԱՅՔ հաստատությունն ազգային շահերին հետամուտ, գիտահետազոտական-ծրագրային բնույթի գործունեությամբ, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, լիովին անկախ ընկերակցություն է:

ՀԱՅՔ հաստատության առաջին երեք տեղեկագրերը հրատարակվել են Սփյուռքում՝ 1990 թվականի նոյեմբերից 1991 թվականի մարտը, երբ դեռ հորհրդային Միությունը գոյություն ուներ:

Այդ համարներում տեղ են գտել հայությանն ու Հայաստանին առնչվող միջազգային իրադարձությունների հակիրճ շարադրանքը և ՀԱՅՔ հաստատության առջև դրված կարևորագույն խնդիրների արձարծումը, տվյալ ժամանակահատվածի ազգային կենսական որոշ հարցերի ներկայացումը և առաջարկներ՝ դրանց հնարավոր լուծումների վերաբերյալ:

Այս երեք տեղեկագրերում միաժամանակ տպագրվել են ՀԱՅՔ հաստատության խնդիրներին վերաբերող նախորդ տասը տարիների՝ 1980-ականների ընթացքում հրատարակված հոդվածներ:

ՀԱՅՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՀԱՅՔ հաստատության նպատակի համաձայն՝ իր մշակած տասը հիմնական ծրագրերը կոչված են անդրադառնալու հայության համար ամենակենսական բնագավառների տարբեր խնդիրների ուսումնասիրմանը, վերլուծմանը և

գործնական ծրագրերի կամ առաջարկների մշակմանը: Այդ ընթացքում նախատեսվում է նաև ստացված տվյալների հիման վրա տեղեկատվական և ուսումնական կիրառություն:

Թիվ 1 ծրագրով խնդիր է դրվում **վերականգնել հայի տոնիկ հարազատ կերտարը**, որով նա կարողանա ճանաչել իր ազգային հավատամքը, բարոյական արժեքները, որոնք միաժամանակ համամարդկային արժեքներ են, և կարողանա դրանք կիրառել ամենօրյա կյանքում՝ անձնական, ընտանեկան, հասարակական, ազգային և պետական հարաբերություններում:

Այս ծրագրով միաժամանակ ջանքերն ուղղվում են **բացահայտելու Հայ Ազգային Գաղափարախոսության բաղկացուցիչ մասերը**, բնորոշելու դրանց պատմական դերը և մեր հասարակության մեջ վերասահմանելու ու վերականգնելու՝ ազգը քսանմեկերորդ դար առաջնորդելու կարողությամբ օժտված գաղափարախոսությունը որպես ազգային ինունիտետ՝ վարակամերժ կարողություն, համահայկական ազգապետության կառույցի շաղախ ու ազգային կենսագործումների հիմք:

Թիվ 2 ծրագիրը վերաբերում է **հայության կառավարելիության կասարելագործմանը**՝ չափանիշ ընդունելով ազգային կենսական շահերի օգտին հայության տարբեր բնագավառների ներուժի օգտագործման արդյունավետությունը: Սույն ծրագիրը ներառում է նաև համայն հայության ազգային քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հարցը՝ «Մեկ ազգ, մեկ հայրենիք, մեկ ճակատագիր» նշանաբանով, Հայ Ազգային Գաղափարախոսության հիման վրա՝ միաժամանակ հաշվի առնելով ազգային և միջազգային տարբեր բնագավառների պայմաններն ու պահանջները:

Թիվ 3 ծրագիրը վերաբերում է **ազգային արժափն ֆաղափական դոկտրինի** սկզբունքներից բխող քաղաքականության և դրա իրագործման ծրագրերի գիտական քննարկմանը:

Թիվ 4 ծրագիրը վերլուծում է **Հայաստանի և հայության անվճանգության և կենսական շահերի**՝ ամբողջ աշխարհում պաշտպանության հարցերը՝ այդ առումով շեշտը գլխավորապես դնելով **կանխատեսման և կանխարգելման** ծրագրված և համակարգված մոտեցման վրա:

Թիվ 5 ծրագիրը վերաբերում է ամբողջ **հայության հաղորդակցության համակարգի կասարելագործմանն ու համադասասխան սվյալների** ստացման, բաշխման և մասնագիտական օգտագործման համապատասխան կառույցի ստեղծմանը: Ծրագրի անհրաժեշտությունը բխում է այն իրողության գիտակցումից, որ հայության ազգային գործնական ամբողջություն կազմելու խնդիրը պահանջում է սերտ համագործակցություն, ինչը կարող է իրագործվել համապատասխան հաղորդակցության առկայությամբ:

Թիվ 6 ծրագիրը նախատեսում է **հայության կրթական, գիտական և սեփնուլոգիական կարողությունների** հաշվառում, ներուժի գնահատում, ինչպես

նաև այդ բնագավառների զարգացման այնպիսի ռազմավարության մշակում հայության և Հայաստանի համար, որն առավելագույն չափով կհամապատասխանի հայ անհատի և ամբողջ ազգի կարողություններին, կարիքներին ու բարգավաճման խնդիրներին:

Թիվ 7 ծրագիրն ուղղված է **հայության անանց իրավունքների (Հայ Դաս) դաստիարակության** կատարելագործմանն ու զորացմանը, ինչպես նաև Կովկասում և մասնավորապես Անդրկովկասում խաղաղությանը և բոլոր բնագավառներում համագործակցությանը գիտահետազոտական միջոցներով նպաստելուն:

Թիվ 8 ծրագիրը վերաբերում է **Հայաստանի սոցիալ-սնտեսական շեշակի զարգացմանը` Հայ Ազգային Գաղափարախոսության հենքի վրա հիմնված Ազգային կառավարման (թիվ 1 և 2 ծրագրեր) կիրառմամբ:**

Թիվ 9 ծրագիրն ուղղված է ծավալելու **սփյուռքահայության և նրա միջոցով նաև սարքեր երկրների** գործարար, մասնագիտական և գիտատեխնիկական աջակցությունն ու գործակցությունը Հայաստանի Հանրապետության հետ:

Թիվ 10 ծրագիրը նախատեսում է բնորոշել **հայ կնոջ ժամանակակից կոչումն ու խնդիրներն** ազգի կենսունակության պահպանման և զարգացման խնդրում` ուսումնասիրելով ու բացահայտելով հայ կնոջ տոհմիկ կերպարը և պատմական դերը:

ՀԱՅՔ գիտահետազոտական հաստատության այս ծրագրերը մշակվել են` հիմնվելով հայ ժողովրդի պատմական փորձի վրա ու նաև ելնելով հայության և Հայաստանի արդի ու ապագա արժանապատիվ գոյավիճակի համար էական նշանակություն ունեցող պահանջներից: Այդ պահանջները բացահայտվել, որոշվել են ՀԱՅՔ հաստատության բազմամյա դիտարկումների, ուսումնասիրությունների, քննարկումների, վերլուծությունների ու եզրակացությունների արդյունքում:

Ներկայացված տասը հիմնական ծրագրերից առաջին յոթը մշակվել են 1958-1978 թվականների ընթացքում, իսկ մյուս երեքը` 1980-1990-ական թվականներին:

Ստորև ավելի մանրամասն անդրադառնում ենք ՀԱՅՔ հաստատության

Թիվ 1 ծրագրին.

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ

ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

ՀԱՅՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏԱՍԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՆ ԱՆԴՐԱԴԱՌՆՈՒՄ ԵՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԿԵՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ՏԱՐԲԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆԸ, ԿԵՐԼՈՒԾՄԱՆԸ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՄ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆԸ:

Առաջին ծրագիրը վերաբերում է հայի տոհմիկ հարազատ կերպարի վերականգնմանը, որով նա կկարողանա ճանաչել իր ազգային հավատամքը, բարոյական արժեքները, որոնք միաժամանակ համամարդկային արժեքներ են, և կկարողանա դրանք կիրառել ամենօրյա կյանքում՝ անձնական, ընտանեկան, ընկերային, ազգային և պետական հարաբերություններում:

ՀԱՅՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԹԻՎ 1 ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԸ ԿԱԶՄՈՂ

«ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ»՝

ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱՃԱՆԱԶՄԱՆ ԳԻՏԱՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐ, ՈՒՍՈՒՄ-ՆԱՍԻՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒՄ ԵՎ ԲՆՈՐՈՇՈՒՄ Է ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՐՑԵՐԸ, ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԸ, ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

Ա. Հայ ազգային խառնվածքը, նկարագիրը և հոգեբանությունը:

Բ. Դարավոր իրավագուրկ իրավիճակի ազդեցությունը հայի հոգեբանության, բարոյական կերպարի և մտածելակերպի վրա:

Գ. Պետական կյանքով ապրելու դարավոր զրկվածության ազդեցությունը ազգային կյանքի բոլոր բնագավառներում հայի ընկալման և արտահայտման վրա:

Դ. Ազգային հավատքի, ոգու և նկարագրի (եթե ազդված են) վերականգնման և վերահաստատման քաղաքական-հասարակական նշանակությունը արդի պայմաններում:

Ե. Եթե ազդված է, ապա ինչպե՞ս կարող է հայությունը ձերբազատվել որոշակի ստրկամտության, ազգային պետական կյանքի նկատմամբ անգիտակից, անհաղորդ և խորթացած վիճակից:

Զ. Հայի տոհմիկ ազգային կերպարի սահմանումը և դրա արժևորումը համամարդկային չափանիշներով:

Այդ կերպ ապրելու անհատական, ընտանեկան, ազգային և մարդկային նշանակությունը: Ի՞նչ կստանան դրանցից ազգն ու մարդկությունը, հայ ընտանիքն ու անհատը:

ԱՎՆԿԱԼՎՈՒՄ Է, ՈՐ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԵԾԱՊԵՍ ԿՕԳՆԻ ՎԵՐՈՂԻՇՅԱԼ ԽՆԴՐԻ ԿԱՏԱՐՄԱՆԸ՝ ԱՌԱՋԱՑՆԵԼՈՎ ՆԱԵՎ ԱՅՆՊԻՍԻ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՐՏԱՃԱՆԱԶՈՒԹՅՈՒՆ, ՈՐՈՆՔ ԿԵՆՍԱԿԱՆՈՐԵՆ ԱՆՀՐԱՄԵՇՏ ԵՆ՝ ՁԵՐԲԱԶԱՏՎԵԼՈՒ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ՀԱՏՎԱԾՆԵՐՈՒՄ ՏԱՐԲԵՐ ԶՓԵՐՈՎ ՈՒ ՁԵՎԵՐՈՎ ՏԵՂ ԳՏԱԾ ՀՈԳԵԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԽՏԵՐԻՑ:

**ԹԻՎ ՄԵԿ ԾՐԱԳՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԸ
ԿԱԶՄՈՂ**

«ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ»

ՀԱՅՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԸՄԲՈՆՈՒՄ Է ՀԵՏԵԿՅԱԼ ԿԵՐՊ.

ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ, ԳՈՅՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎԱՐՔՆ ԻՄԱՍՏԱՎՈՐՈՂ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ Է:

ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՆ ԿՐՈՂԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՎԱՏԱՍՔԸ, ՀԱՍՈՁ-ՍՈՒՆՔՆԵՐԸ, ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ, ՁԳՏՈՒՄՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ԿԵՐՊԵՐԸ ԲՆՈՐՈՇՈՂ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ Է, ՓԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆՆ Է, ԴՐՈՇՄՆ Է:

ՄԻԱԺԱՄԱՆԿ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԵՎ ԴՐԱՆՑ ՍԱՀՄԱՆՈՒՄՆ Է, ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄԵՆԱՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՈՒ ԱՄԵՆԱՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՄՐԱԳՐՈՒՄՆ Է՝ ՍԵՓԱԿԱՆ ՊԱՏՎԻ ԵՎ ՀԱՎԱՏԱՍՔԻ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՄԲ:

ՀԱՅՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ «ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱ-ԳԻՐԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒՄ ԵՎ ԲԱՑԱՏՐՈՒՄ Է ՀԵՏԵԿՅԱԼ ՀԱՐՑԵՐԸ.

Ա. Գոյություն ունի՞ Հայ Ազգային Գաղափարախոսություն:

- Ո՞րն է այն, ինչո՞ւմն է այն կայանում, ո՞րն է նրա էությունը և որքանո՞վ է այն ճանաչված ու կիրառվում հայության կողմից՝ հասարակական և պետական իմաստով:

Բ. Որո՞նք են հայկականության արժեքներն ու արժանիքները և ի՞նչ տեղ ունեն համաարդկային ընտանիքի արժեհամակարգում:

Գ. Ինչո՞ւ և ինչպե՞ս գոյություն ունի հայությունը:

- Ինչո՞ւ պետք է այն գոյություն ունենա:

- Ո՞րն է այդ գոյության իմաստը՝ անձնական, ազգային և մարդկային տեսանկյուններից:

Դ. Ինչո՞ւ ենք հայ և ինչո՞ւ պետք է հայ լինենք ու նոր սերունդներին հայ պահենք: Ի՞նչն է մեզ պարտավորեցնում դրան: Ո՞րն է դրա օգուտը, եթե այն կա:

Ե. Ինչպե՞ս կարող է հայը հայ լինել այսօր՝ գաղափարով, քաղաքացիական կարգավիճակով, գործով:

ԱՅՍ ԵՎ ՆՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՄԱՆ ԱՐԴ-ՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՏԱՐԵՐԸ, ԲՆՈՐՈՇԵԼ ԴՐԱՆՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՍԱՀՄԱՆԵԼ ԴԵՊԻ 21-ՐԴ ԴԱՐ ԱՌԱՋՆՈՐԴԵԼՈՒ ՎԱՐՈՂ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԻՍՈՒՆԻՏԵՏ, ԱՅՍԻՆՔՆ՝ ՎԱՐԱԿԱՄԵՐԺ ՎԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ԱԶԳԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՇԱՂԱԽ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՔ:

ՀԱՅ

ԱԶԳԱՅԻՆ

ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ*

* Այս հասկացումն առանձին գրությունով՝ «Հայ Ազգային Գաղափարախոսություն (ՀԱԳ), հսկակեցման և ճանաչման
ֆայլեր», հրատարակել է ՀԱՅՔ հաստատությունը 1995 թ. նոյեմբերին և 1997 թ. հոկտեմբերին:

ՆԱԽԱԲԱՆ

Հայոց Ազգային Գաղափարախոսություն (ՀԱԳ) հասկացությունը, նրա էությունը, բաղադրամասերը, դերը, նշանակությունը և դրանց հարակից հարցերն ու խնդիրները, ըստ երևույթին, երկար ժամանակից ի վեր պատշաճորեն չեն արժարժվել հայ իրականության մեջ: Գալով մեր ժամանակաշրջանին՝ առնվազն վերջին վաթսուն-յոթանասուն տարիների ընթացքում ՀԱԳ-ի վերաբերյալ հարցերն ու խնդիրները դրված չէին Սփյուռքում և բացարձակապես գոյություն չունեին Հայաստանում և ներքին Սփյուռքում: Խորհրդային Հայաստանում եթե որոշակի շրջանակներում ու պարագաներում բացահայտորեն արժարժվում էին ազգային գաղափարախոսության հարցեր, ապա միայն վատաբանելու և վարկաբեկելու համար ազգային գաղափարն ու դրա նշանակությունը կեղծ, ապազգային ու անմարդկային տեսություններով և բացատրություններով: Վերջին հաշվով, փաստն այն է, որ թե՛ խորհրդային վարչակարգի օրոք ապրող հայության մեջ և թե՛ Սփյուռքում պատշաճորեն չի արժարժվել ու պարզաբանվել Հայոց Ազգային Գաղափարախոսության բովանդակությունը, պատմական նշանակությունը և մանավանդ արդի պայմաններում նրա դերի կենսական անհրաժեշտությունը:

Արդյունքը եղավ այն, որ հայությունն անտեսեց, մոռացավ, եթե չասենք ուրացավ իր ազգային գաղափարախոսությունը, որն արտահայտում է իր էությունը, իմաստավորում ու արժևորում է իր գոյությունը, կողմնորոշում է իր ընթացքը, տալիս է իրեն ուժ, զորություն, դիմացկունություն ու իրական կյանքի անսասան, հաստատուն ու հավերժական եՐԱՇԽԻՔ:

Խորհրդային վարչակարգի քայքայման վերջին տարիներին և հատկապես 1989 թվականից Հայաստանում ՀԱՅՔ հաստատության վերահաստատումից ի վեր հանրապետության որոշ գիտահետազոտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ ՀԱՅՔ-ի կողմից տեղեկացվեցին ՀԱԳ-ի վերաբերյալ գիտահետազոտական ծրագրի մասին՝ որպես ազգային հույժ կարևոր և առաջնահերթ պահանջ (տե՛ս ՀԱՅՔ հաստատության թիվ 3 Տեղեկագիրը), և այդ ուղղությամբ համագործակցություն առաջարկվեց: Մտավորապես մինչև 1990 թվականի վերջը Հայաստանում այդ մասին լսում էին մեծամասամբ լռելյայն զգուշությամբ, երբեմն՝ կասկածանորեն, երբեմն՝ հակառակվելով, սակայն գրեթե մշտապես հարևանցի անտարբերությամբ և առանց պատշաճ հասկացողություն ցուցաբերելու պատրաստականության:

1991-1992 թվականների ընթացքում զգացվեց ՀԱԳ-ի նկատմամբ ՀՀ մտավորական որոշ շրջանակների հետաքրքրության աճ: Ավելի հաճախ էր խոսվում ՀԱԳ-ի կարևորության աստիճանի վերաբերյալ, և նույնիսկ առաջարկություններ արվեցին նրա ստեղծման համար մտածելու և ուսումնասիրություններ կազմակերպելու մասին: Արդյունքը եղավ այն, որ 1993 թվականից ի վեր ՀԱԳ-ի մասին բանավեճերն ու քննարկումները դարձան

ավելի հրապարակային ու հաճախակի: Տարբեր առիթներով սկսեցին տարբեր գնահատականներ տրվել ՀԱԳ-ի անհրաժեշտությանն ու նշանակությանը՝ սկսած նրանից, թե այն օգտակար չէ հայության համար, մինչև այն, որ առանց ՀԱԳ-ի անհնարին է լուծել հայ ազգի ու հայրենիքի հիմնական խնդիրները և, հետևապես, թեև ուշացումով, հարկ է անհապաղ ձեռնարկել նրա ստեղծումը:

Բոլոր դեպքերում 1993 թվականից ՀԱԳ-ի առնչությամբ գիտահետազոտական աշխատանքները ՀՀ-ում սկսեցին դառնալ ավելի ծրագրված և նպատակային: Մի շարք սեմինար-խորհրդակցություններում գիտաշխատողներն արդեն որոշակի աշխատանքների ծրագրեր և մեթոդաբանական մոտեցումներ առաջարկեցին՝ սկսած հայոց պատմության նորոգ ուսումնասիրումից և գնահատումից մինչև այլ ազգերի, կուսակցությունների, քաղաքական շարժումների և կրոնների ու գաղափարախոսությունների ուսումնասիրումը պատմաբանական, հոգեբանական, սոցիոլոգիական, քաղաքագիտական, աստվածաբանական և այլ ուղղություններով:

Այս առումով ՀԱԳ-ի վերաբերյալ, նրա էության, բովանդակության, դերի, նշանակության և կարևորության աստիճանի մասին ՀԱՅՔ հաստատությունը տարբեր առիթներով արտահայտվել է իր ըմբռնման մասին միայն մասնակի որոշակիությամբ՝ ակնկալելով, որ այլ հաստատություններ կամ անհատ հետազոտողներ ու մտածողներ կարտահայտվեն այդ ուղղությամբ, և բազմակարծության պայմաններում կընթանա խնդրի ընդհանուր ըմբռնումը:

Թեև այդ անկեղծ հույսը միշտ եղել է, այնուամենայնիվ, ՀԱՅՔ հաստատությունը համարում է, որ ժամանակն ու տեղը եկել է, որ ՀԱԳ-ի վերաբերյալ ավելի պարզ, հստակ և որոշակի արտահայտվի՝ հիմնականում շեշտը դնելով դրա համապարփակ, մինչև վերջ պարզաբանման և դրա դերի, նշանակության ու արժևորման վրա, այլ ոչ թե միայն գիտական ձևակերպման որոշակի պահանջների բավարարման վրա:

Միաժամանակ, այդ պարզաբանումից ու արժևորումից բացի, հարկ համարվեց ավելի մանրամասն նշել հայության կողմից ՀԱԳ-ի ընկալման և կիրառման աստիճանի մասին*:

* ՀԱԳ-ի վերաբերյալ մինչև այս հրատարակությունը անդրադարձ է եղել 2002 թ. ՀԱՅՔ հաստատության լույսընծայած՝ Վարդան Գրիչենցի «Հայսոց մերսից և դրսից» գրքում:

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ. ՀՍՏԱԿԵՑՄԱՆ ԵՎ ՃԱՆԱԶՄԱՆ ՔԱՅԼԵՐ

ՀԱՅ ԱԶԳՆ ՈՒՆԵՑԵՒ Է ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ (ՀԱԳ): ԱՅԴ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է, ՈՐ ԱՅՍՕՐ ԷԼ ԱՅՆ ԿԱ՛: ԵՎ ՔԱՆԻ ՈՐ ԱՅՆ ԿԱ, ԱՅԼ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՓՆՏՐԵԼԸ ԿԱՍ ՆՈՐ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՆ ԱՆԻՄԱՍՏ Է, ՈՐՈԿՅԵՏԵՎ ԵՂԱԾԻՑ ԲԱՑԻ ՈՒՐԻՇԸ ՉԻ՛ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ: ՈՒՐԵՄՆ՝ ՀԱԳ-Ի ՊԱԿԱՍԸ ՉԿԱ. ՊԱԿԱՍՈՒՄ Է ՆՐԱ ՃԱՆԱԶՈՒՄԸ, ՈՐՈՇԱԿԻ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ՝ ԿՅԱՆՔԻ ԲՈԼՈՐ ՀԱՆԳՐՎԱՆՆԵՐՈՒՄ:

Սակայն ի՞նչ է ՀԱԳ-ը: Ե՞րբ և ի՞նչի՞ց է այն առաջացել: Ի՞նչի՞ վրա է հիմնված: Ի՞նչ դեր է կատարել դարերի ընթացքում: Ի՞նչ նշանակություն է ունեցել հայության գոյության համար: Ի՞նչպիսի՞ն է այսօր ՀԱԳ-ի դերը և նշանակությունը Հայ ազգի ու նրա հայրենիքի գոյատևման, զարգացման ու բարգավաճման համար:

- Նախ և առաջ ՀԱԳ-ն Աստվածատուր շնորհ է:

- ՀԱԳ-ը բխում է Աստուծո խորհուրդներից և հիմնված է Նրա սուրբ հավատքի վրա:

- ՀԱԳ-ի գոյացումը սրբագործվեց և ըստ այնմ կենսագործվեց մեկ թվականին՝ Աստուծո մարդեղացմամբ՝ աշխարհի Փրկիչ Հիսուս Քրիստոսի Ծնունդով ու արմատավորվեց երեք հարյուր մեկ թվականին՝ Հայոց Պետականության Քրիստոնեացմամբ ու Հայոց Հայրապետության հիմնադրմամբ:

- ՀԱԳ-ն արտահայտել է Հայ ազգի, Հայրապետության և Պետության հավատամքն ու գոյության իմաստը 301 թվականից ի վեր, երբ տիեզերական ու հավիտենական խորհուրդների ակունքներից բխող Աստվածաշնորհի հավատը դարձավ ազգային գաղափարախոսության հիմքը հայ ժողովրդի բոլոր խավերի համար՝ թե՛ ավագանու, թե՛ շինականի, թե՛ աղքատի և թե՛ հարուստի:

- ՀԱԳ-ը հայության հավատքի երկնականարում ծագեց որպես լուսատու աստղ և կողմնորոշեց նրա պատմական ընթացքը: ՀԱԳ-ն այնպիսի նոր իմաստ և ուղղություն տվեց հայի անձնական ու ազգային կյանքին և բարձրացրեց ազգի կենսունակությունը, զորացրեց նրա ստեղծագործ ոգին և օժտեց ազգն անընկրկուն դիմացկունությամբ, որ ի զորու դարձրեց նրան իր դարավոր երթում հաղթահարելու խոչընդոտները, փորձությունները և երրորդ հազարամյակի շեմին վերականգնել իր ազգապետությունը:

ՀԱԳ-Ի ՀԻՄՔՈՒՄ, ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՆՔ, ԵՂԵԼ Է ՀԱՎԱՏՔԸ, ՈՐ՝

– Աստված կերտեց աշխարհն իր հավիտենական ու տիեզերական կամքով:

– Աստված ստեղծեց մարդկային ցեղը՝ ծրագրելով որոշակի ժամանակաշրջանի համար նրա գոյությունը և զարգացումն ազգերի առաջացմամբ,

զարգացմամբ և բարգավաճմամբ:

– Հայ ազգի գոյացումը, ինչպես ամեն ազգի, որպես մարդկության բաղկացուցիչ մասը, Աստուծո Տիեզերական և Հավիտենական Կամքով ու Ծրագրով է կատարված:

– Հայի հայ մնալը և հայ ազգի գոյատևումն ու զարգացումը Աստվածային կամքի և նրա Ծրագրի կատարումն է:

– Հայ ազգի պահպանման, զարգացման և բարգավաճման համար Աստուծո առաջ պատասխանատուն նախ և առաջ հայն է՝ իր անմահ հոգու հատուցման հավատքով, հույսով և գիտակցությամբ:

ԱՍՏՈՒԾՈՒ ՀՎԱՍՏՔԻՑ ԲԵՆՈՂ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՀԱԳ-Ի ԸՄԲՈՆՈՒՄՈՎ՝

– Հայոց պետականության քրիստոնեացմամբ Հայ ազգը վերակերտեց իր կյանքը, վերստեղծեց իր մշակույթը և Աստվածատուր աննահանջ դիմադրողականությամբ ընդդիմացավ թշնամուն՝ չարին, դիմացավ փորձություններին ու հարթեց իր գոյության Աստվածապատվեր ուղին դարերի միջով:

– Բոլոր պայմաններում՝ կախյալ թե ազատ, կարիքավոր թե բավարարված, իր հողի վրա թե օտարության մեջ, իր ազգային գաղափարախոսությամբ տոգորված հայը հոգով, մտքով և վարքով ձգտեց պաշտպանել, պահպանել ու նաև ծաղկեցնել իր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի՝ իրեն հանձնված Անդաստանը՝ իր Ազգային Աստվածապատգամ Գոյությունը:

– Այնքան ժամանակ, որ Ազգը, պահպանելով և մշակելով իրեն հանձնված Անդաստանը՝ Հայոց Աստվածանվեր Գոյությունը, պարտաճանաչորեն տալիս էր նրա պտուղներն իր Տիրոջը, այսինքն՝ կատարում էր Նրա պատգամները և ինքն էլ սնվում դրանց կենսանյութով, ոչ մի դժվարություն, հալածանք, զրկանք, վտանգ կամ փորձություն չկարողացավ կասեցնել հայի Աստվածապատվեր ընթացքը, այն է՝ ապրել իմաստավորված կյանքով երկրի վրա և արժանանալ հավիտենական կյանքին:

– Եթե հայն իր Աստվածատուր գոյությունը հավատարմությամբ պահպանի ու զարգացնի թե՛ հայրենիքում և թե՛ հայրենագուրկ պայմաններում, ապա Աստված անպայման կշնորհի նրան նաև ազատ, անկախ, ապահով ու բարգավաճ ազգապետություն:

– Հայությունը պարտավոր է Սուրբ Ազգապետություն ստեղծել ու պահպանել, ուր չի թույլատրվում, որ մոլախոտը կասեցնի իր Անդաստանի Աստվածատուր Գոյության կենսունակությունն ու կենսատվությունը...

ՄԱՐԴՈՒ, ՀԱՅԻ ԵՎ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՑՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՀԱԳ-Ի ԸՄԲՈՆՄԱՍԲ ՆՇԱՆԱՎՈՒՄ Է.

– Մարդու և Ազգի գոյության էական իմաստն Աստուծո կամքի և ծրագրի կատարումն է, այն է՝ Աստվածասիրությամբ ապրել Նրա պատգամներով և ընտանիքի ու Ազգի պահպանմամբ ու զարգացմամբ՝ պահպանելով և զարգացնելով մարդկությունը: Անհատն ու Ազգն այդ իմաստավորմանը կարող

են արժանանալ Աստվածաշնորհի սիրով, հավատքով և հավիտենական կյանքի հույսով:

– Իր կամքի և Ծրագրի իրագործման համար Աստված ստեղծեց մարդու բնությունը, նրա բնական հատկությունները: Սակայն այդ բնական հատկությունների կիրառմամբ Աստվածային կամքի և Ծրագրի կենսագործման լիարժեք մասնակիցը դառնալու համար անհրաժեշտ է Սուրբ Հոգու շնորհով ստանալ Աստուծո հավատքը և հաղորդվել Հիսուս Քրիստոսի Ավետարանին: Ավետարանի հաղորդությամբ քրիստոնեական հավատքն Աստված շնորհեց մարդկությանը և առաջին հերթին՝ Իր սիրեցյալներին, Իր սիրած և պաշտոնի կոչած ազգերին, որոնց մեջ Հայ ազգն առաջնային է՝ որպես պետականորեն քրիստոնեացած ազգ:

– Աստուծո շնորհով՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանին հաղորդությամբ, ճանաչվում է Հավիտենական ճշմարտությունը՝ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ, և ուղղություն ու կարողություն է տրվում ապրելու Աստվածահաճո ճշմարիտ կյանքով և արժանանալու Աստուծո արքայությանը:

– Աստուծո՝ Հայ ազգին շնորհած Տեր Հիսուս Քրիստոսի Ավետարանից և խաչից բխող **ՓՐԿՈՒԹՅԱՆ** հավատը հազար յոթ հարյուր տարի առաջ հայ անհատի և պետության համար դարձավ նոր ազգային փիլիսոփայական ուսմունք ու համոզմունք, դարձավ սոցիալական գաղափար, ըմբռնում, վարքագիծ և կենցաղավարություն, ու այս բոլորով **ՓՐԿՈՒԹՅԱՆ** հավատը վերակերտեց հայ մարդու ներաշխարհը, կերպարը, ազդեց նրա խառնվածքի, հոգեբանության ու նկարագրի վրա, վերասահմանեց կյանքի՝ նրա ըմբռնումները, իմաստավորումը, բարոյական արժեքները և որպես հետևանք՝ էականորեն վերափոխեց նրա անձնական և հավաքական ընկալումներն ու վերաբերմունքն անձի, Ազգի և մարդկության նկատմամբ:

– Իր աստվածային լուսակերտմամբ ճանաչելով Հավիտենական ճշմարտությունը՝ **ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ**՝ Ազգը շնորհ, ուղղություն և կարողություն ստացավ ապրելու ճշմարիտ կյանքով աշխարհում ու հավերժության մեջ: Փրկության հավատքով հայ մարդն իմաստնացավ հոգեպես և հավիտենական կյանքի հույսից բխող մտայնությամբ և վարքով կերտեց ու ապրեց մարդկային իսկական՝ քրիստոնեական կյանքն իր անձնական, ընտանեկան ու ազգային հարաբերություններում: Արդյունքում շեշտակիորեն ավելացավ Ազգի ստեղծագործ կարողությունն իր գոյության պաշտպանության և զարգացման համար: Դառնալով Աստվածային բնության և խորհուրդների հաղորդակից՝ Հայ ազգն ստեղծեց հոգևոր ու նյութական կոթողներ և դարձավ գիտության ու արվեստների, ինչպես և ազգերի գոյության ու արժանապատվության պահպանման համաշխարհային ջանքերի գործուն գործակից:

– Մեր նախահայրերը հազար յոթ հարյուր տարի առաջ մեր ազգի ճշմարիտ կյանքի գոյության համար դրեցին այնպիսի անսասան հիմքեր, կառուցեցին

ազգի դիմացկունության, հզորության, զարգացման և բարգավաճման այնպիսի ամրոց և դրա պաշտպանության համար այն շրջապատեցին այնպիսի պարիսպներով, որ ոչ ոք որևէ միջոցով խոսքով կամ գործով, զենքով կամ զրահով, ինչպիսին էլ լինեն դրանք՝ ատոմային թե էլեկտրոնային, չի կարող խախտել, գրավել դրանք: Չի կարող, որովհետև այդ պարիսպներից անցնելու, այդ ամրոցը մտնելու և այն կործանելու բանալին ոչ ոք չունի: Միակ բանալին, որ գոյություն ունի, Աստված հանձնած է... հենց իրեն՝ Հայ ազգին: Եվ միայն Հայ ազգը կարող է այն գործածել իր գոյության պահպանման, զարգացման և բարգավաճման օգտին կամ... գործածել այն իր գոյության դեմ՝ ինքնահոժար, առանց նույնիսկ դիմադրելու՝ բացելով այդ դարպասներն իր գոյության էությունն արտահայտող և կենսագործող գաղափարախոսության թշնամիների առաջ, դաշնակցելով նրանց հետ իր գոյության դեմ:

– Բազմաթիվ են հայոց թշնամիները: Բայց դրանցից ամենաոխսերիմ և վտանգավոր թշնամին ՀԱԳ-ի թշնամի անաստված քրիստոսամերժությունն է: Սակայն դրանցից էլ վատ ու կործանարար վտանգ այն ժամանակ է առաջանում, երբ անաստված քրիստոսամերժությունը գալիս է հայության միջից: Եվ կիրառվում է նենգաբար, ազգային կյանքի տարբեր ասպարեզներում հանգրվանորեն: Կիրառվում է նրանց կողմից, ովքեր բացահայտ չեն խոստովանում իրենց աստվածամերժությունը. ընդհակառակը՝ նրանք առերես, կեղծորեն հավատավորված, իսկ հաճախ նույնիսկ կեղծորեն հոգևոր ծառայությամբ սքեմավորված՝ շահագործում են մեր հավատքն առ Աստված, Նրա անունը և ապակողմնորոշելով, մոլորեցնելով և գայթակղելով՝ ներսից քանդում, ավերում են ներքինը: Եվ այդ բոլորի համար փոխանակ, ըստ Ավետարանի, ջրաղացի քարը մեր վզից կապելով ծովը նետվելու, հավակնում և ձգտում ենք նույնիսկ ավելի մեծ դերակատարություն ստանձնել: Այսինքն՝ ավելի մեծ ավերածության և զոհերի տեղիք տալ՝ առանց վախենալու հատուցումից: Բայց հատուցումը չի՝ կարող չլինել, այն անխուսափելի է: Այն եղել է, կա՛ ու դեռ պիտի լինի: Էական հարցն այն է, թե ազգովի՞ն պիտի շարունակենք հատուցել: Եվ, բացի այդ, այդ հատուցումն ի՞նչ հետևանքներ պիտի շարունակի ունենալ մեզ համար անհատապես և ազգովին:

Վերոհիշյալ առումներով՝

Ելք կա՞ հայության այս ընթացքից: Ո՞րն է այն: Ի՞նչ պետք է անենք ու ի՞նչ չպետք է անենք: Սա է կենսական հարցը, որի ճիշտ կամ սխալ, ժամանակին կամ ուշացումով պատասխանը ճակատագրական է լինելու մեզ համար, մեր ազգի համար:

Այդ իմաստով ինչպիսի՞ պատասխան պետք է ակնկալել հայությունից:

Հայությունից սպասվող ճակատագրական պատասխանի էական մաս պետք է կազմի նաև այն, թե որպես ինչպիսի՞ ազգ, ինչպե՞ս ենք ընկալում հայոց

պետականորեն քրիստոնեացման հազար յոթհարյուրամյա մեր **ԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ** խորհուրդն ու իմաստը: Ընկալում ենք դարերի ազատագրկությանբ բթացած և «Ուր հաց՝ այնտեղ կաց» հասկացությունը որպես կյանքի փիլիսոփայություն և նպատակ ընդունած ծառայի հոգեբանությամբ, կամ յոթ տասնամյակ սովետական մարդու դաստիարակության ամենասովորոտ արդյունքն արտահայտող՝ անհավատ, վախկոտ, անսկզբունք և կեղծավոր կամակատարի նկարագրով, կամ աշխարհի փորձը բացասականորեն ընկալած, ազգային և մարդկային արժեքների գնահատումից զուրկ, նյութական կյանքի ձեռքբերումների համար միջոցների մեջ խտրություն չդնող, ընդամենը ճարպիկ, չարչի քաղբենու մտայնությամբ, թե՞ որպես իր նախնյաց Աստվածաշնորհի խորհուրդներին հաղորդ, նրանց Աստվածատուր առաքինությունները կրող և նրանց Աստվածապատվեր վարքը շարունակելու հանձնառությամբ պատրաստական ԱԶԳ:

Վերոհիշյալ և սրանց հարակից հարցերին պարտավոր ենք պատասխանել շիտակ ու անհապաղ: Դա հայոց, ուր էլ նրանք բնակվեն և ինչպիսի պայմաններում էլ գտնվեն, ամենակենսական անձնական, ընտանեկան, հասարակական և պետական խնդիրն է: Մենք այդ պատասխանները պարտավոր ենք տալ մեր Աստծուն, մեր սուրբ նախնյաց, մեր բոլոր նահատակներին, պարտավոր ենք պատասխանել մարդկությանը, պատմությանը և մեր սերունդներին: Եվ պարտավոր ենք պատասխանել մեր սրտով, հոգով, գործերով ու նաև մեղա գալով: Այնպես պատասխանել, որ մեր որդիք այլևս այդ անհրաժեշտության առաջ չկանգնեն երբեք: Այլ վայելեն աստվածահաճո ու **շնորհակալ** Ազգի և նրա օրինյալ Հայրենիքի կենսունակ, ստեղծագործ, ապահով, խաղաղ ու իմաստալից կյանքը երկրի վրա՝ ազգերի ընտանիքում, ու նաև արժանանան Աստուծո խոստացած հավիտենական իրական կյանքին՝ Աստուծո Արքայությունում:

ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ԴՐՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՈՒՂԻՂ ԵՎ ՃՇՄԱՐԻՏ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԿԱՐԵԼԻ Է ՏԱԼ ՄԻԱՅՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՈՐՀ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԻՑ ԲԽՈՂ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՄԲ, ԸՆԴՈՒՆՄԱՄԲ ԵՎ ԿՅԱՆՔԻ ԲՈԼՈՐ ՀԱՆԳՐՎԱՆՆԵՐՈՒՄ ԴՐԱ ԿԻՐԱՌՄԱՆ ՊԱՐՏԱՃԱՆԱԶ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՄԲ:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅ

ԱԶԳԱՅԻՆ

ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ

ՀԱՅՈՑ

ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՍՈՒՆՔԸ

Հայ Ազգային Գաղափարախոսության ուսմունքի հիմքում այն ըմբռնումն է, որ առանց Հիսուս Քրիստոսի՝ Ավետարանով ու խաչով Աստուծո հավատքի ու այդ հավատքը վերածելու կյանքի ապրումի, վերջին հաշվով, ամեն ինչ սուտ է՝ ունայնություն և կորուստ...

Բայց եթե չկա հավատքը, հետևապես չկա նաև դրանից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ) ու նաև այդ հավատքով ու գաղափարով կյանքի ապրումը: Դրա արդյունքում հայ ազգը մնում է առանց գաղափարախոսության՝ իր բոլոր հետևանքներով, որոնց մեջ ամենաանմիջական հետևանքը կլինի հայ կյանքի պետականագրկունը՝ պետականության կենսազրկմամբ: Քանի որ նյութը դիտվում է որպես կյանք, հետևապես և առաջնային, դրա նվաճումը, դրան հասնելը դառնում է կյանքի գոյության հիմնական նպատակ, գլխավոր իմաստ: Հետևապես, ամեն գնով և նույնիսկ առանց միջոցների խտրության, նյութական առավելագույն նվաճումների ձգտումը (հարստություն, իշխանություն, փառք և զեխ կյանք) դառնում է կյանքի տրամաբանական, ճիշտ ու արդարացված ձգտում և ուղղություն: Այդ մտածելակերպով Հիսուս Քրիստոսի Ավետարանի ու խաչի հավատքը և ՀԱԳ-ը դառնում են հիմարություն, հետևապես դրանցով կյանքի ապրումը՝ կորուստ, որին ձգտելը կամ կեղծ է, հիմարներին խաբելու միջոց և կամ հենց իրենց՝ հիմարների ժամանակավոր մոլորություն (մի հոգեբարոյական, գաղափարական և մտավոր վիճակ, որն անհարիր է պետականության ստեղծման, պահպանման և զարգացման պահանջներին):

Եվ այս երկվության առաջ մարդ կանգնած է երեսի մի կողմով դեպի լույս, մյուս կողմով՝ դեպի խավար. դեպի փրկություն և դեպի կորուստ. վերելք ու անկում հավիտենական:

Եվ ի՞նչ պետք է քարոզենք, բացահայտենք, ուսուցանենք, ապացուցենք, համոզենք մեր հայությանը: Հավատքի՞ իմաստությունը, հավատքի՞ գիտությունը և դրանցից բխող ու դրանց վրա հիմնված գաղափարը, որը կյանքի վերելք է, թե՞ քարոզենք նյութի իմաստությունը և նյութի գիտությունը, որոնցից բխող և որոնց վրա հիմնված գաղափարը՝ նյութապաշտությունը, մահացու անկում է:

Կամ, այլ կերպ ասած, քարոզենք հոգևոր Լո՞ւյս, փրկություն ու վերե՞լք, որը հավատքով և ՀԱԳ-ով իմաստություն է, բայց առանց հավատքի ու ՀԱԳ-ի՝ հիմարություն: Թե՞ քարոզենք նյութապաշտություն՝ մահացու անկում, որը հավատքով և ՀԱԳ-ով հիմարություն է, իսկ առանց հավատքի և ՀԱԳ-ի՝ իմաստություն, իրապաշտություն:

Պարզ է, որ «հիմարություն» պետք է քարոզենք, որպեսզի իմաստնանանք, ինչպես նաև «տկարություն» պետք է քարոզենք, որպեսզի զորանանք, և

ապաշխարություն՝ որպեսզի երջանկանանք՝ որպես հայ և որպես մարդ՝ անձնապես, ազգովին և պետականորեն:

Հայ ազգն իր մեծամասնությամբ, այդ թվում և ղեկավարությամբ, բավական երկար ժամանակ է, որ սխալ ճամփով է գնում, կեղծ ճամփով, անհեռանկար: Նույնն էլ գործադրած միջոցներն են, նրա կեցվածքն է, հույսն ու ձգտումն է անհեռանկար: Հայ ազգը պետք է զգաստանա՝ սթափվի՝ իր հավատազրկությունից և գաղափարազրկությունից, ձերբազատվի նյութապաշտությունից, քաղքենիությունից և դառնա Հավատքի գաղափարական Աստվածասեր ազգ՝ նահատակ ազգի ժառանգորդի հեղափոխական և պետական գիտակցությամբ: Հայ ազգը դա կարող է անել հոգևոր իմաստությամբ, որը միայն Աստուծո հավատքով և նրա նկատմամբ սիրով և երկյուղով է գոյանում, որով և մարդկայնորեն ևս կիմաստնանա, կբարոյականանա, կազնվանա, և՛ կստանա հավատքի գաղափարապաշտություն և՛ կունենա ՀԱԳ՝ դառնալով աղ ու նմուշ մարդկային կյանքի՝ մարդկության մեջ:

ՀԱԳ-ի ըմբռնումով, նահատակ ազգի հեղափոխական և պետական գիտակցությամբ գոյացած Հայ Քրիստոնյա Ասպետությունից սկսած՝ հայությունը պետք է ունենա վավերական խորհրդանիշներ՝ հավատքի, գաղափարականության և բարոյականության հարատև ու անսակարկ հավատարմության: Այդ խորհրդանիշներից հիմնականը հավատքով հարատև հավատարմության հոգեկան, գաղափարական, բարոյական և գործնական պարտքն է հայ ազգին, որով և՛ մարդկությանը, և՛ Աստծուն: Պարտքի չափն ու ձևը տարբեր հայերի համար տարբեր է, բայց բոլորի համար միշտ ու հարատև:

Սեպտեմբեր, 1986 թ.

ԲԱՑԱՐԱՅՏՈՒՄ ԵՎ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Հայ Ազգային Գաղափարախոսության (ՀԱԳ) բացահայտման, պարզաբանման նշանակությունը հայ ազգի համար հույժ կենսական է նաև այն առումով, որ հայ մարդու կողմից ՀԱԳ-ի ճանաչմամբ, ընդունմամբ և կիրառմամբ իր ազգի գոյապահպանմանն ու զարգացմանն ամենագործուն և հարատևորեն մասնակցելու շահագրգռվածությունը նրա համար տիեզերական և հավիտենական չափանիշ ու իմաստ է ստանում:

Հայ ազգի գոյության և բնականոն զարգացման համար անհրաժեշտ են բոլոր բնագավառներում ամենակենսական նշանակության կարիքների պետականորեն բավարարում, որը բարդ խնդիր է: Այդ խնդիրը հայությանն է, և ինքն է պատասխանատու դրա կատարման համար: Սակայն անհնարին է դրա կատարումը ջանքերի այն չափով ու որակով, որ **բավական ժամանակից ի**

վեր ներդրել է ու այժմ ներդնում է հայությունը: Այդ խնդիրը կատարելու համար հայությունն ունի անհրաժեշտ կարողությունը և մանավանդ ներուժը, բայց չունի դրա գործադրման համար անհրաժեշտ մասշտաբի և որակի կազմակերպական կառավարումը, չունի նաև բավարար ցանկությունը, կամքը և, ամենակարևորը, չունի անհրաժեշտ բարոյական և գաղափարական շահագրգռվածությունն ու խթանումը:

Այսօր հայության մեծամասնությունն ազգային գերագույն շահերին ու ապագային հարկ եղած չափով ծառայելու (և դրանով իր ու իր սերնդի ազգային բնականոն, արժանապատիվ գոյությունը ապահովելու) ո՛չ պատշաճ շահագրգռվածություն ունի, ո՛չ էլ պարտավորվածություն է զգում: Ամենա-ցավալին այն է, որ կենսական նշանակությամբ այս բացը լրացնելու ոչ միայն այս պատշաճ ձգտումն ու ջանքերն են բացակայում, այլև նրա մասին մտածելն ու մտահոգվելը: Մինչդեռ հայ իրականության մեջ շատոնց ի վեր պետք է գոյություն ունենային պետական, կրոնական, հասարակական ու այլ կառույց-ներ, որոնք Հայ Ազգի Գաղափարախոսության հիման վրա հասարակության բոլոր խավերում, տարբեր ձևերով և միջոցներով կատարեին դաստիարակչա-կան աշխատանքներ, ինչպես նաև կիրառեին նյութականի և բարոյականի դրական ու բացասական (պատժական) խթանումները:

Այս նպատակի գործնականացման շուրջ խոսակցությունը դեռ պետք է շարունակվի ու ամբողջացվի:

Շաբաթ, 6-ը հուլիսի, 1996 թ., ժամը 10:00

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔԸ

Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ) մեր՝ հայերիս մարդկային ու ազգային գոյության, կյանքի ու արարքների իմաստը բնորոշող ուսմունքն է:

Մասնավորապես, ՀԱՅՔ հաստատության ըմբռնումով՝ Հայ Ազգային Գաղափարախոսությունն առաջացել է ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏԻ ԱՍՏՎԱԾԱՇՆՈՐՀ հավատքով ազատասիրության ՀՈԳԵՄՏԱՎՈՐ ՃԱՌԱԳԱՅԹՈՒՄԻՑ և կազմավորել է ազգի հոգեմտավոր կերտվածքը: Աստվածաշնորհի այդ ճառագայթումով առաջացած ՀԱԳ-ը պատմականորեն շաղախեց, թրծեց, լուսավորեց, կողմնորոշեց և հաստատեց հայ ազգը՝ իր երկրով ու պետականությամբ: Նրա երթը Աստվածաշնորհի էր, նրա գործը՝ Աստվածահաճո:

Թե ինչու Աստված շնորհ արեց հային, հայ ազգին և նրա պետականու-թյունն ընտրեց առաջինը քրիստոնեացնելու համար, ՀԱՅՔ հաստատության պատասխանը հավատքն է:

Աստված առաջինը Հայոց պետականությունը քրիստոնեացրեց* Հայկ Նահապետի Աստվածաշնորհ հատկությունների՝ հավատքի հավատարմության և հավատքով ազատասիրության համար:

Հայկ Նահապետի ցուցաբերած այդ հավատքի վարձն Աստուծո՝ Հայկյան ցեղի նկատմամբ սերը, շնորհը, գթությունն ու նաև հատուկ ծրագրի (քրիստոնեացման) արժանանալու արդյունքն էր:

* * *

Հայկ Նահապետի ազգաբանության մասին Մովսես Խորենացին գրում է. «Բերված ազգաբանությունը հավաստի է, քանի որ երեք ցեղերն էլ տասնմեկական սերունդ են կազմում մինչև Աբրահամ, մինչև Նինոս, մինչև Արամ, որովհետև Արամը՝ տասներկուերորդը, Նինոսից հետո է, երիտասարդ հասակում վախճանված: Եվ սա ճշմարիտ է, ոչ ոք չկասկածի, որովհետև այս բաները մեզ պատմում է շատ բաներում վստահելի Աբյուղենոսը, որ ասում է այսպես. «Նինոսի (որդի) Արբեղի, (որդի) Քայաղի... Նույնպես մերը, Հայկից մինչև Արա Գեղեցիկ, որին վավաշոտ Շամիրամը սպանեց, թվարկում է այսպես. Արա Գեղեցիկ (որդի) Արամի (որդի) Հարմայի... (որդի) Արամանյակի, (որդի) Հայկի, որ դուրս եկավ Բելին հակառակորդ և միանգամայն նրա կյանքին վերջ դնող»: Այս բանն է ասում Աբյուղենոսը իր առաջին առանձին մանր ազգաբանության մեջ, որ վերջերս ոմանք դեն գցեցին» (Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 102):

* * *

Քրիստոնեական հավատքից բխող և նրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ), որով ապրել և մեզ կտակել են մեր Սուրբ Հայրերը, մեր մեծերը, մեզ պատգամում է, որ **անիրավությունից հեռու լինի ամենայն ոք, ով խոստովանում է հայի որդի լինելը**: Առավել ևս նրանք, որ ազգային, հոգևոր, պետական ու հասարակական ծառայության մեջ են և սրբության պետք է ձգտեն ու այդպես ապրեն:

Մեր Սուրբ Հայրերի, մեր մեծերի կտակած ՀԱԳ-ը մեզ սովորեցնում է նաև Աստվածային այն ճշմարտությունը, որ հայ ազգի գոյությունն ու վերելքն ամեն մի հայի վարած կյանքով և Հայաստանի հանդեպ վերաբերմունքով է պայմանավորված: Իսկ դրանով պայմանավորված է նաև հայի հոգու փրկությունը և հավիտենական կյանքը՝ Աստուծո Արքայությունում:

* Այն հավասով, որ 1700 տարի ղեկավարներն կրում են, քանի որ տեղն անգամ վայր չի ընկնում առանց Աստուծո գիտության, մի ղեկության փրկությունը ղափարակական չէր կարող լինել: Այն Աստուծո սիրո, անրհի, գուցե նաև գնահատանի, բայց հաստատաբան Նրա կամի և ծրագրի արդյունքն է:

Ուրբաթ, 2-ը հոկտեմբերի, 1998 թ.

ԱԶԳԻ ՈՐԱԿԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Որակական փոփոխությունը կարող է առաջանալ որակական կատարելությանը: Միջոց, որ կարող է փրկել և բարձրացնել հայ ազգն ու պետությունը: Դրան հասնելու համար անհրաժեշտ է ազգի, առաջին հերթին՝ ընտրյալների (որոնք կարող են ընտրանին դառնալ) որակական կատարելագործում՝ որակապես կատարելագործելու համար ազգն ու պետությունը:

Որակական կատարելագործման միջոցը **քրիստոնեական հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունն է (ՀԱԳ):**

Որակական կատարելագործումը կարող է սկսվել ազգի կողմից ՀԱԳ-ի ճանաչմամբ, ընդունմամբ և կիրառմամբ անձնական ու ազգային կյանքի բոլոր բնագավառներում և հանգրվաններում: Մի նպատակ և գործընթաց, որը, ըստ երևույթին, պետք է հանդիսանա հայության ու նրա Հանրապետության և Հայրապետության ռազմավարությունը:

Փետրվար, 1998 թ.

ՀԱՅՈՑ ԵՐԿՐԻ ԵՎ

ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԽՏԸ

Ո՞ւմ ձեռքում է հայության, հայոց երկրի ու պետականության բախտը: Ո՞վ է, որ իրա՛վ զորություն ու իշխանություն ունի՝ հայոց բախտը որոշելու:

Թվում է, թե ազգի ու երկրի գոյությունն ու զարգացումը պայմանավորված են ազգային պետական կենսունակ ինքնիշխանության առկայությամբ: Դա շատ ճիշտ է, բայց որպեսզի ՀՀ իշխանությունը լինի կենսունակ և երկիրն ու ազգը տանի վերելքի ճանապարհով, նախապայման է, որ հանրապետության քաղաքական իշխանությունը, ներառյալ հոգևոր իշխանությունը, ինչպես նաև ընդդիմությունը կամ գոնե նրա մեծ մասը, ինքը գնա և իր օրինակով ու առաջնորդությամբ տանի ամբողջ ազգն Աստուծո ճանապարհով և որպես քրիստոնյա ազգի իշխանություն՝ կատարի Աստուծո օրենքներն ու կամքը՝ ենթարկվելով Նրան ու ապրելով Նրա պատգամած կյանքով:

Իսկ այս կենսական նախապայմանի կատարման համար, բնականաբար, պայման է, որ հայոց իշխանությունը Հիսուս Քրիստոսի Ավետարանով իրազեկ լինի, գիտենա Աստուծո ճանփաները, Նրա օրենքները, կամքն ու պատգամները և ամենակարևորը՝ ամբողջ հոգով, սրտով ու էությամբ հավատա ու սիրի իր Աստծուն:

Այսինքն՝ 1700 տարի առաջ աշխարհում առաջինը պետականորեն

քրիստոնեացած հայ ազգն այսօր էլ պետականորեն լինի իրական քրիստոնյա, նախևառաջ՝ իր աշխարհիկ և հոգևոր իշխանությամբ ու մտավորականությամբ: Եթե սա լինի, ապա ժողովրդի խնդիրը դյուրին է, որովհետև ինչպես մարդկության, այնպես էլ դրա մասնիկ հայոց «զարգացած» խավի քրիստոսամերժ անհավատության, ուրացումի և նույնիսկ թշնամության մոխիրների տակ հայ ժողովրդի հավատքի կայծերը միշտ վառ են եղել ու մնում են: Հետևապես՝ Հայաստանի ու ամբողջ հայության մեջ քրիստոնեական 1700-ամյա հավատքի վերահաստատման Աստվածային շնորհով մեր հոգիներում և սրտերում կվերածագի Գրիգոր Լուսավորչի վառած՝ Քրիստոսի լուսափառ սերն առ մեր Արարիչը, որով և՛ մեր փրկությունը թե՛ երկրի վրա և թե՛ երկնքում: Այսպիսով՝ ո՛չ մի խնդիր՝ ինչքան էլ բարդ, ո՛չ մի դժվարություն՝ ինչքան էլ մեծ, և ո՛չ մի հակառակորդ՝ ինչքան էլ զորեղ, չեն կարողանա խախտել, վտանգել հայ ազգի ու ՀՀ անվտանգությունը, չեն կարողանա խոչընդոտել, կասեցնել նրանց զարգացումն ու բարգավաճումը: Ու այդ ամենի հետ հայ մարդը կստանա նաև երկնային հավիտենական թագավորության քաղաքացիություն և այնտեղ մուտքի համար՝ Քրիստոսի հայադրոշմ վիզան:

Հայ ազգի ու Հայաստանի փրկության և վերելքի միակ գրավականը Հիսուս Քրիստոսի հավատքի վերահաստատման Աստվածատուր շնորհին արժանանալու համար մեր անելիքների ու չանելիքների պարզաբանումը և կիրառումը հայության (ազգային ու մարդկային առումներով) ամենաառաջնային, ամենակենսական խնդիրն է: Այդ մասին հայությանը (ըստ փուլերի ու հատվածների՝ համապատասխան ձևով) հարկ է, որ ասվի, ուսուցանվի և սեփական օրինակով ու առաջնորդությամբ ուղղություն տրվի հատկապես հոգևորականության և բոլոր բնագավառների ղեկավարության ու մտավորականության կողմից:

Այդ խնդրում կարևոր դեր է վերապահված նաև յուրաքանչյուր հայ հավատացյալի ու առանձնապես՝ յուրաքանչյուր ծնողի համար:

Սակայն այս Աստվածապատգամ գործն սկսելու շնորհիւ և կարողությունն ստանալու համար, ըստ մարդկային ու ազգային կյանքի օրինաչափությունների քրիստոնեական մեր ըմբռնման ու մեկնաբանման, ինչպես նաև մեր ազգի 1700-ամյա հավատամքի ընկալման, պայման է հետևյալը.

Ազգի մեծ մասի և հատկապես մտավորականության ու ղեկավարության կողմից երկարատև աստվածամերժության, քրիստոնեական հավատքի ուրացման և դրա արդյունքում հոգեկան և բարոյական շեղումների ու անկումների համար զղջալ, նաև մեղա գալ: Բոլորս՝ եպիսկոպոսապետերից մինչև բոլոր հոգևորականները, նախագահից մինչև բոլոր պետական պաշտոնյաները, ակադեմիկոսներից մինչև ուսանողները, ողջ ժողովրդի տարբեր խավերն ու տարիքային խմբերը՝ իշխանամետ թե ընդդիմադիր, բոլորս մեղա գանք, աղոթենք և խնդրենք մեր Աստծուց գթություն, ներում, շնորհ, կարողություն և ուղղություն՝ Իր ազգը դառնալու համար:

Հուսով ենք, որ բռնապետության մեջ միլիոնանոց հանրահավաքներ անող խիզախ ժողովուրդը, Աստվածաշնորհի խղճի ձայնով ու փրկության գիտակցությամբ, երկրի բոլոր վայրերից ու Սփյուռքից, իր հոգևորական և պետական ավագանու օրինակով ու առաջնորդությամբ, կհավաքվի դարձյալ, այս անգամ իր անկախացած հայրենիքում՝ ազգային քրիստոնեական նորոգված ուխտով դառնալու համար Աստուծո ժողովուրդ: Այն է՝ հայը, իր հոգում, սրտում և մտքում միշտ վառ պահելով իր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի կենսատու լույսը, ապրի Նրա պատգամներով, կատարի Նրա կամքը և կենսագործի արարչական ծրագիրը՝ ըստ Իր հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության. Հայը ծառայում է Աստծուն՝ ծառայելով իր ազգին՝ հայությանը, որպեսզի հայությունն էլ ծառայի Աստծուն՝ ծառայելով մարդկությանը, որպեսզի մարդկությունն էլ ծառայի Աստծուն՝ միշտ, ամենուր, ամեն ինչում:

Սա՛ է հայոց պետականությանը պատվաստված 1700-ամյա Աստվածաշնորհ, Քրիստոսափառ հավատքից բխող և նրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունը*։ Սա՛ է եղել ու նորից ի գործ է լինելու հայոց անխորտակելի գորությունը, փառքն ու երջանկությունը հավիտյանս հավիտենից:

14-ր սեպտեմբերի, 1998 թ.

ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ԹԻՎ ՄԵՎ ՊԱՅՄԱՆ

Միշտ չէ, որ անձն ազնիվ է իր բոլոր հարաբերություններում: Լինում է անհատական ազնվություն: Այսինքն՝ անհատն ազնիվ է իր անձնական հարաբերություններում, բայց անազնիվ է իր հանրային հարաբերություններում՝ հանրության նկատմամբ: Հատկապես ոչ շարքային անձնավորության դեպքում հանրային մասշտաբի անազնվությունը գլխավորաբար արտահայտվում է պարտազանցությամբ՝ ժողովրդի, պետության ու ազգային հաստատությունների նկատմամբ: Եվ այդ պարտազանցությունն արտահայտվում է ոչ միայն տալիքի կամ մասնակցության թերացմամբ, այլև յուրացումներով, շորթումներով, անիրավ որոշումներ կայացնելով, անարդար, վնասակար կողմնակցություններով ու հարաբերություններով՝ կռռումպացմամբ:

Անձնական զգացումների արտահայտությունների, վերաբերմունքի, դիրքորոշման և արարքների ազնվությունը, էական լինելով նախ տվյալ անձի համար, էական է նաև նրա անմիջական հարազատների, անմիջական շրջանակի, ինչպես նաև ամբողջ ազգի ու մարդկության համար: Եվ այդ հանգամանքը մեր ազգի կրթական և բարոյագիտական համակարգում պետք է որոշակիացվի բոլոր ձևերով ու միջոցներով՝ տանը, փողոցում, դպրոցում, աշխատավայրում

*Տե՛ս այս գրքի էջ 23-31

և ընդհանրապես կյանքում: Այն պետք է ուսուցանվի ու դաստիարակվի եկեղեցու, պետության և հասարակության տարբեր կառույցների կողմից՝ ազգի կազմակերպված գիտակցությունն արտահայտող մտավորականության գործուն մասնակցությամբ:

Այս հենքի վրա, մասնավոր մոտեցմամբ, մեթոդներով ու միջոցներով անհրաժեշտ է պարզաբանել, ուսուցանել և կրթել անհատի (մանավանդ հասարակական, պետական, կրոնական որոշակի պատասխանատվություն ստանձնելու հավակնությամբ անձի) հասարակական լայն մասշտաբի ազնվության գիտակցությունը, դրանից բխող պարտաճանաչությունը և դրա կիրառման կենսական կարևորությունը, դարձյալ անձի, ընտանիքի, ազգի ու մարդկության համար այն հասկացողությամբ, որ **ազնվությունը կյանքի ակտիվության կենսանյութն է:**

Ակտիվությունն առանց այդ **կենսանյութի**, ինչքան էլ պրոֆեսիոնալ լինի ու փայլուն թվա, ամուլ է: Այն չի կարող սնել, բավարարել կյանքի պահանջը, քանզի վերջին հաշվով կաղավաղվի հենց ինքը՝ այդ ակտիվությունը, և տարբեր աստիճանի (կախված աղավաղման սաստկությունից ու պայմաններից) կործանարար չարիք կդառնա:

Հայությանը ոչ թե իշխանաբռնական, այլ իշխանածառայական ղեկավարություն է պետք: Ծառայական ղեկավարության հայեցակարգը, ծառայական ղեկավարության արդարամտությունը, ինչպես նաև ծառայական ղեկավարության զորությունը և արդյունավետությունը՝ որպես հայ հասարակության, հայ ազգի և Հայաստանի գոյատևման ու զարգացման գրավական, պետք է հստակ, հասկանալի դառնա և այդպիսին դարձվի թե՛ ղեկավարների և թե՛ ղեկավարվողների համար:

Ազգի երեք հաստատությունների՝ պետական իշխանության, հոգևոր իշխանության և կազմակերպված մտավորականության գերագույն պարտականությունը և իրենց գործունեության գնահատման չափանիշը պետք է լինի ազգային կյանքի այն դրվածքի և մթնոլորտի ապահովումը, որում ազնվությունը, վեհանձնությունը, առաքինությունը և ընդհուլսա ասպետությունը խրախուսվում են: Եվ դրանով հայ մարդու, ՀՀ քաղաքացու հասարակական պատվի, հասարակական վստահության, ինչպես նաև գործնական ու նյութական հաջողության և անձնական երջանկության հասնելու աստիճանը ուղիղ համեմատական է նրա ազնիվ, բարի, վեհանձն ու ասպետական զգացումների, մտածումների, վարվելակերպի ու արարքների աստիճանին:

Սա հայ ազգի երեք հաստատությունների թիվ մեկ խնդիրն է: Սրանից է կախված նրանց կենսունակ գոյությունն ու զարգացումը: Հետևապես և՛ Ազգի ու Հայրենիքի կենսունակ ապագան:

Այս խնդրի կատարման բանալին Աստուծո հավատքը, հույսը և սերն է: Դու-

ընդ որանցից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունն է (ՀԱԳ), որ հայ անհատին ու ազգին տանում է Քրիստոսանվեր կյանքի, այն է՝ երկրային կյանքի իմաստալից արդյունավորում և երկնայինի գերագույն և հավիտենական կատարելություն՝ երանություն:

Բանալին՝ հավատքը, հույսը և սերը Աստված շնորհել է հայ ազգին և ցույց տվել ազգի փրկության ու փառքի դուռը՝ ՀԱԳ-ը, 1700 տարի առաջ: Հայ ազգի հոգևոր իմաստության՝ Աստվածասիրության, և իր փրկության՝ Քրիստոսանվեր ինքնագիտակցության ճառագայթումը պետք է լինի 21-րդ դարասզկբին ազգի ու հայրենիքի կյանքի սրբացմամբ:

Հարկ է, որ ազգի վերոհիշյալ երեք հաստատություններն Աստուծո, մարդկության և ազգի առաջ ամենօրյա պատասխանատվության գիտակցությամբ անհապաղ սկսեն նախապատրաստել ազգը բոլոր միջոցներով և ձևերով, մանավանդ անկեղծ հավատով ու բարոյականության անձնական օրինակով: Քանզի Աստվածային լույսը, Աստվածային շնորհը, Աստվածային կամեցողությունը և Նրա հաճությունն են էականը՝ իրական կյանքին արժանանալու համար:

Հայ ազգը, Հայաստանը քրիստոնեորեն ասպետականացած կյանքով կարող է Քրիստոսափառ լույսը տարածել թե՛ իր բարեկամների և թե՛ իր հակառակորդների վրա: Աստուծո և մարդկության նկատմամբ ազգային ծառայության ի՛նչ փառավոր առաքելություն...

8-ը նոյեմբերի, 1998 թ., առավոտյան ժամը 4:30

**ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՆ ՀԱՅ ԱԶԳՆ ՈՒ
ՀԱՅԱՍՏԱՆԸ ԶՈՐԱՆԱԼ ԵՎ
ՎԵՐԵԼՔ ԱՊՐԵԼ**

Ամբողջ հայությունն ու Հայաստանը գոյատևելու, զարգանալու, զորանալու և բարգավաճելու համար պետք է լինեն ԼԱՎ՝ ազնիվ, առաքինի ու վեհ:

Եթե Հայաստանն ու հայությունը չկարողանան լինել մարդկության առաջին շարքերում ազնվությամբ, առաքինությամբ ու վեհությամբ՝ որպես քրիստոնյա՝ Աստվածասեր ու աստվածավախ ժողովուրդ, երկիր և պետություն, ապա չեն կարող վերապրել դարերի ընթացքում իրենց ինքնության դեմ կատարված հարվածների հետևանքները և չեն կարող դիմագրավել ընթացող հոգեբարոյական, գաղափարական և մշակութային տոտալ նախահարձակումը, որը միտում է վերաճելու բարոյական ցեղասպանության՝ այլասերման և ձուլման՝ 21-րդ դարասկզբին:

Հետևապես, հայությունը, Հայաստանն ու հայոց պետականությունն իրենց

հոգեկան, բարոյական ու գաղափարական ներկայիս անկումային ընթացքով չեն կարող կազմակերպվել և միասնական ու համադրված ջանքերով օգտագործել ազգային ու միջազգային առկա ներուժի հնարավորություններն ու միջոցները՝ պաշտպանվելու համար մոտակա ու հեռագնա բազմաբնույթ ու բազմաձև ճնշումներից և չպարտվելու, կորուստներ չտալու, այլ հաղթանակներ տանելու, դարձյալ բազմաբնույթ և բազմաձև մրցակցություններում:

Հայության և Հայաստանի ֆիզիկական գոյությունը և զարգացման ու բարգավաճման մակարդակները կախված են հայության ու Հայաստանի հոգեկան, բարոյական և գաղափարական վիճակից և դրանց պաշտպանվածության, կենսունակության և զորանալու ունակության մակարդակներից: Այս ճշմարտությունը՝ պատմականորեն հաստատված մարդկության զարգացման բնական օրենքներով ու ապացուցված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ (ՀԱԳ), պետք է դառնա Հայոց Հանրապետության և Հայրապետության գոյության նպատակների հայեցակարգը, որից պետք է բխեն նրանց խնդիրները և դրանց իրագործման քաղաքականությունը, վերաբերմունքն ու արարքները:

Սա դժվա՞ր խնդիր է: Գուցե և անիրագործելի՞: Պատասխանը, ակնհայտորեն, թե՛ այո է և թե՛ ոչ: Բոլոր դեպքերում պատասխանը կախված է հայությունից, և դա հրաշալի է, արդար է ու բարի...

Արդարև՝ Հայաստանն ու հայությունն իրենց հոգեբարոյական և գաղափարական անկումային ընթացքի փոխարեն զորանալու և վերելք ապրելու համար պետք է լինեն Լավ՝ ազնիվ, առաքինի ու վեհ:

Այդ հնարավոր է միայն Աստուծո օգնությամբ: Հետևապես, դրան կարելի է հասնել՝ կատարելով Աստուծո կամքը, հետևելով Նրա պատգամներին: Հայաստանի ու հայության համար դա քրիստոնեությունն է, քրիստոնեական կյանք վարելը՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանի հավատքով, գիտությամբ և Նրա խաչի խորհրդով ու զորությամբ:

Հայ ազգի, նրա ղեկավարության, հայոց պետականության և մանավանդ Հայրապետության հիմնական նպատակն ու քաղաքականությունը պետք է լինի Ազգի ու Հանրապետության կյանքի ՔՐԻՍՏՈՆԵԱՑՈՒՄԸ: Շատերի համար, ըստ երևույթին, դա հեռավոր ու անկարելի, այլոց համար էլ անհիմաստ ու ապարդյուն իրագործում է համարվում: Բայց...

Զի՛ կարող միաբան, միասնական, իր ինքնությանը հավատարիմ և պարտականությանը գիտակից աշխարհատարած իրականությամբ կենսունակ հայ ազգ գոյություն ունենալ՝ առանց Քրիստոնեական հավատքի, առանց հավատալու և հետևելու Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ԴԱՎԱՆԱՆՔԻՆ:

Հետևապես, Քրիստոսի Սուրբ Ավետարանից բխող Հայ Առաքելական Եկեղեցու՝ 1700 տարի առաջ Ազգի ու Պետականության հոգու, սրտի և գաղափարի մեջ դրոշմված և կյանքի ապրում դարձած դավանանքից էլ պետք

է ծագեն հայոց վերականգնված պետականության զինանշանը, դրոշը, հիմնը, Սահմանադրությունն ու գրված և չգրված օրենքները, բարոյական նորմերը, մշակույթն ու կրթությունը, հասարակական հարաբերությունները և հայոց ազգային և պետական դիրքորոշումն ու գործերը:

Հայոց դավանանքը, որից բխում է և որի վրա հիմնված է Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ), որպեսզի ճանաչվի, ընդունվի ու այդ մակարդակով կիրառվի հայ կյանքում, այն պետք է քաղաքացիականանա, քաղաքականանա ու դառնա հայ մարդու կրթության աղբյուրը:

Այդ դավանանքով ու ՀԱԳ-ով այդժամ կծեփվողի Հայ ազգային ինքնագիտակցությունը, դրանցից կսնվեն հայոց մշակույթը, կենցաղավարությունը, հասարակական հարաբերությունները և նրանցով կընթանա հայ պետական կյանքը՝ 1700-ամյա լուսավորությամբ:

Հայոց այդ դավանանքի ու ՀԱԳ-ի կրթությամբ, ազգային քաղաքացիական ինքնագիտակցությամբ, մշակույթով, հասարակական հարաբերություններով ձևավորված հայոց պետությունը կունենա շուրջ տասը միլիոն քաղաքացի ամբողջ աշխարհում: Տասը միլիոն հայ՝ մարդկայնորեն առաքինի, ազգայնորեն ինքնագիտակից և պետականորեն մտածող, քաղաքացիական, ինքնաբուխ պարտաճանաչությամբ և պատրաստակամությամբ հայ քաղաքացի:

Հայոց դավանանքի ու ՀԱԳ-ի գիտակցված կյանքով հայոց պետության՝ աշխարհի այդ տասը միլիոն գաղափարական քաղաքացիները թե՛ հանձնառու և թե՛ ի վիճակի կլինեն իրենց մասնակցությամբ պատմականորեն շատ կարճ ժամանակամիջոցում կերտել հինգ միլիոն և դեռ հաստատունորեն աճող բնակչությամբ կենսունակ, ապահով, խաղաղ, զարգացած, բարգավաճ ու Աստվածասեր հայրենի հասարակություն՝ Հայոց զարգացած պետություն: Այն կվայելի աշխարհի հարգանքն ու վստահությունը և Աստուծո հաճությունն ու պաշտպանությունը:

23-ը մարտի, 2000 թ.

ԱՆԿԱՇԱՌ ԱԶԳ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔ

Հայ ժողովրդի ու հայրենիքի ազգային և պետական կենսական խնդիրներից է ԱՆԿԱՇԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ հաստատումը՝ վերևից սկսած մինչև ամենուր:

Ազգի ու հայրենիքի ապահովության, կենսունակության և վերելքի, այդ թվում՝ անվտանգության, հզորության, զարգացման, բարգավաճման, արժանապատվության և համաշխարհային հարգանքի ու վստահելիության մակարդակն ուղիղ համեմատական է յուրաքանչյուր հայի, ամբողջ հայության ու հատկապես ղեկավարության անկաշառելիության մակարդակին:

Ասում ենք յուրաքանչյուր հայի, որովհետև աշխարհիկ ու հոգևոր ղեկավարության, նաև մտավորականության մակարդակը պայմանավորված է հիմնականում ժողովրդի ընդհանուր մակարդակով: Այլ խոսքով՝ ժողովուրդը ծառն է, որից պտուղը՝ մտավորականությունն ու ղեկավարությունը, շատ հեռու չի կարող ընկնել:

Այլ բան է, որ ազգի մեջ անկաշառելիության մակարդակի բարձրացումն ավելի արագ, հարթ ու առավել արդյունավետ կլինի, եթե սկսվի հոգևոր ու աշխարհիկ ղեկավարությունից:

Բայց: Ի՞նչ է կաշառելիությունը: Ինչի՞ց է այն առաջանում ու ծավալվում: Եվ ի՞նչը և ինչպե՞ս կարող է այն նվազեցնել, վերացնել ու այլևս երբեք թույլ չտալ դրա վերագոյացումը:

Ի՞նչ է կաշառելիությունը: Այն խախտումն է՝ ազգի ու երկրի օրենքների, գրված ու չգրված բարոյական օրենքների, կանոնների:

Ի վերջո, կաշառելիությունը ազգի, երկրի, հասարակության ՅՈՒՆԵՍԿՈՒՅԿԻ և ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ անբավարարությունից առաջացող ընկերային հիվանդություն է, որը տարածվում է քաղցկեղի նման և ճարակում ազգային-հասարակական ու պետական օրգանիզմի կենսունակությունն ու վարակամերժ հատկությունը: Դրանից հետո օրգանիզմի քայքայումը, անպիտանությունը և վերջին հաշվով մահը վարակահարուցիչների սաստկության աստիճանի ու ժամանակի հարց է:

Ինչի՞ց է առաջանում կաշառելիությունը. հոգեղենության, գաղափարականության և բարոյականության տկարացումից, նվազեցումից և կամ աղավաղումից, այլասերումից: Այն տարածված կարծիքը, թե կարիքը, աղքատությունն են ծնում կաշառելիություն, ըստ մեր ազգային փորձի և, բնականաբար, նաև մարդկության փորձի, ճիշտ չէ: Չէ՞ որ կաշառելիությունը խոր ու ծավալուն է ավելի շատ ղեկավար ու ունևոր խավերում, այս աշխարհի գորեղների շրջանակում:

Կարիքը, անապահովությունը, վտանգը ծանրաբեռնում են ազգի, երկրի, հասարակության վարակամերժ կարողությունը՝ դիմադրելու, չեզոքացնելու, հաղթահարելու տարբեր փորձությունները՝ վարակահարուցիչ բացիլները (ինչպես ծանրաբեռնվում է սրտի աշխատանքը տարբեր առիթներով, բայց սիրտը հաղթահարում է հաճախ աննկատելի, երբեմն՝ պարզապես միայն ազդվելով, եթե հիվանդ չէ), բայց դրանք հիմնական պատճառ չեն: Մանավանդ որ աղքատությունն ու տկարությունը, այն էլ ավելի խոր իմաստով, հաճախ ինքնին արդյունք են հոգեբարոյական և գաղափարական վարակամերժության անկման:

Առողջ օրգանիզմի վարակամերժության համակարգի տկարությունը քրոնիկական չի կարող լինել, այն էպիզոդիկ է որոշ բնական անզգուշության և վարակահարուցիչ վիրուսների (կարծես թե դարձյալ բնական) վերափոխվելու

և վերադասավորվելու հատկության պատճառով: Սակայն դրանց նոր հարձակումն անմիջապես կկասեցվի, երբ առողջ օրգանիզմում դրական վիրուսները ևս անմիջապես վերադասավորվելով պարտության մատնեն նախահարձակումը: Ուրեմն՝ կաշառելիությունը հիմնականում արդյունք է հոգեբարոյական ու գաղափարական անկումի:

Ինչպե՞ս կարելի է վերացնել կաշառելիությունը հայոց կյանքից: Այն կվերացվի մեր երկրի ու ազգի բոլոր հավաքականությունների, խավերի հոգեղենության, բարոյականության և գաղափարականության զորացմամբ, բարձրացմամբ և վերածմամբ ապրումի՝ մեր անձնական, ազգային և մարդկային կյանքի բոլոր հանգրվաններում:

Հոգեղենությունը՝ Աստուծո հավատքի շնորհով, բարոյականությունը՝ Քրիստոսի Ավետարանի իմաստությամբ և գիտությամբ, գաղափարականությունը՝ Աստուծո հավատքի շնորհից, Քրիստոսի Ավետարանի իմաստությունից, գիտությունից ու նաև Տիրոջ խաչի խորհրդի զորությունից բխող և դրանց վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ:

Շաբաթ, 30-ը սեպտեմբերի, 2000 թ., առավոտյան ժամը 8:10

ԽՈՐԵՐ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայ ազգի և երկրի գոյապահպանումն ու զարգացումը պահանջում են, կարճ ասած, հավատավոր, հարազատ և գրագետ մոտեցում: Վերջինիս մեջ մտնում է արհեստավարժությունը, որը հմտությունից բացի ենթադրում է նաև ճշտապահություն և կարգապահություն:

Հայ ազգային ու պետական բոլոր հիմնական բնագավառների ամրապնդումն ու դրանց զարգացման համար ջանքերը, որպեսզի համապատասխանեն ազգի ու հայրենիքի Աստվածահաճո՝ արժանապատիվ, ապահով ու բարգավաճ վիճակի ապահովմանը, լինելով հավատավոր, հարազատ, գրագետ և գործնականորեն կիրառելի, պետք է ծրագրվեն Հայ Ազգային Գաղափարախոսության (ՀԱԳ), դրա վրա հիմնված ռազմավարության և դրանից բխող մարտավարության վրա՝ բոլոր հանգրվանների համապատասխան կազմակերպական կառավարմամբ: Վերջինիս գերազանցության չափանիշ պետք է ընդունել ամբողջ ազգի բոլոր բնագավառների բազմաբնույթ կարողությամբ և ներուժի զորահավաքը, դրանց շարունակական հարատև զարգացումը, հզորացումը և ամենաարդյունավետ կիրառումը ՀԱԳ-ի հիման վրա՝ ընդունված ռազմավարական ու մարտավարական ծրագրերով:

Ուրեմն՝ նախ գաղափարախոսություն, հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսություն (ՀԱԳ), որից պետք է բխեն՝

- ազգի բարոյական նորմերը,
- պետականության և պետության քաղաքական ռազմավարական հայեցակարգը,
- կրթական և մշակութային հայեցակարգը,
- ազգային կենցաղավարության հայեցակարգը,
- համահայկական տնտեսական հայեցակարգը,
- պաշտպանության ու անվտանգության հայեցակարգը, որը միահյուսվում է

նախորդ չորս հայեցակարգերի և բարոյական նորմերի հետ:

Հիմնականն ու առաջնայինը, բնականաբար, մեր հավատամքից բխող և դրա վրա հիմնված ՀԱԳ-ն է, որը պետք է թելադրի ազգի և պետության քաղաքական ռազմավարությունը և միաժամանակ իմաստ և ուղղություն տա ու սնի ազգի տարբեր բնագավառների հայեցակարգերը, որպեսզի դրանց հիման վրա կառուցվեն նրանց ռազմավարական և մշակվեն դրանցից յուրաքանչյուրի մարտավարական հիմնական ու հարակից ծրագրերը:

ՀԱԳ-ի ճշմարիտ ճանաչումը, ընդունումը և կյանքում կիրառությունը հնարավորություն է տալու բացահայտել, ճանաչել, զարգացնել ու արդյունավետորեն օգտագործել ազգի անհատնուն, բազմակողմանի և բազմաբնույթ կարողությունն ու ներուժը...

Աստուծո օգնությամբ:

* * *

Հայոց պետականորեն քրիստոնեացմամբ, Աստուծո հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության (ՀԱԳ) ըմբռնումով հայ ազգը վերակերտեց իր կյանքը, վերստեղծեց իր մշակույթը և Աստվածատուր զորության աննահանջ դիմադրողականությամբ ընդդիմացավ թշնամուն՝ չարին, դիմացավ փորձություններին ու հարթեց իր գոյության Աստվածապատվեր ուղին դարերի միջով:

Արդ, հայությունը պարտավոր է սուրբ կյանքի ապրումով Սուրբ Ազգապետություն ստեղծել ու պահպանել, ուր չարի մոլախոտը չի կարող աճել և խախտել իր Անդաստանի, այն է՝ իր Աստվածատուր գոյության կենսունակությունն ու կենսատվությունը...*

Մեր նախահայրերի բազմադարյան ընթացքն այդ ուղիով զորեղ ու աննահանջ էր իր հավատքով ու գաղափարով: Երբ հարկ էր լինում, նրանք զիջում, զոհաբերում էին նյութականը, աշխարհիկը, բայց անսակարկ պահում հոգեկանը, երկնայինը, որով և արժանի դառնում իմաստավից իրական կյանքին

*Տես այս գրքի էջ 28

երկրում, որով և արժանանում Աստուծո Արքայությանը...

Ներքին ու արտաքին տարբեր ճնշումների և մոլորությունների ազդեցությամբ մեր նախահայրերն այդ ուղու ընթացքի մեջ վայրիվերումներ, շեղումներ ունենում էին, բայց դուրս չէին գալիս ընթացքից: Ինչպես Առաքյալն իր մասին ասաց՝ «Կատարեցի ընթացքը», նրանք՝ նույնպես: Սակայն հատկապես 19-րդ դարից սկսեցինք նախ՝ քայլ չպահել, հետո էլ խավ առ խավ, մաս առ մաս դուրս գալ մեր Աստվածապատվեր ուղու ընթացքից... դժբախտաբար, մեծ մասամբ մեր ուսյալ խավի օրինակով ու առաջնորդությամբ...

Այս էական փոփոխությունը, շեղումը գին պիտի պահանջե՞ր: Հետևանքներ պիտի ունենա՞ր...

Ազգի, Հայրապետության ու Հանրապետության ղեկավարության և մեր առաջատար մտավորականության պարտականությունն է հաշվել վճարված (և գուցե դեռևս պահանջվող) գինը, պարզել վճարվածի հետևանքները և գտնել ամենաէական, հավիտյան ճակատագրական պատասխանը: Ի՞նչ անենք, որ այլևս պարտավոր չմնանք և միշտ վստահ լինենք, որ հայ ազգն ու հայկական պետականությունը Հայրապետության առաջնորդությամբ այդ ուղու (Ֆարվատերի) կենտրոնում են և երբեք դուրս չեն գա այնտեղից՝ մինչև մեր հավատքի հույսի՝ Աստվածային խոստումի կատարումը...

Երկուշաբթի, 30-ը հոկտեմբերի, 2000 թ., երեկոյան ժամը 11:15

ՍՈՒՐԲ ՀԱՅԱՍՏԱՆ

Սո՛ւրբ Հայաստան՝ սուրբ ազգի սո՛ւրբ հայրենիք: Ահա Աստվածային երկնային քաղաքականությունից թելադրված հայ ազգային երկրային քաղաքականության նպատակը և կիրառությունը: Ահա՛ բոլոր խնդիրների լուծման, դժվարությունների հաղթահարման և վտանգների վերացման Աստվածատո՛ւր շնորհը, միջոցը, ուժը, կարողությունը և դրությունը:

Հետևապես, այդ կիրառությունը հայության և նրա Հայրապետության ու Հանրապետության հիմնական և գլխավոր նպատակը, ծրագիրը և գործունեությունը պետք է լինի: Յուրաքանչյուր հայի սրբությունն ազգի սրբությունն է: Ազգի սրբությունը երկրի ու նրա պետականության սրբությունն է և, վերջին հաշվով, մարդկության սրբությունը: Եվ Աստված գոհանալու է, որ 1700 տարի առաջ շնորհ արեց հայ ազգին, որ հավատքով պետականորեն առաջինը հաղորդակցվի իր հավիտենական Սո՛ւրբ խորհուրդներին ու ծրագրերին և մասնակցի դրանց երկրային կիրառությանը...

1700 տարի առաջ Աստվածային հավիտենական խորհուրդների և ծրագրերի Աստվածաշնորհ հաղորդումից ծնված Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ), որ հավատքով կյանքի ապրում դարձավ, Ազգի Սուրբ Ասպետությամբ

(ԱՍԱ) սնեց Թարգմանչաց ու Վարդանանց ոգին, լուսավորեց նրանց գործերը և հարթեց փրկության ճանապարհը հայի հավիտենական կյանքի...

Այս իրականությունն ազգի ժառանգությունն է, այն նորից ապրում դարձնելը հայությունն ու Հայաստանը էապես դարձնում է ոչ միայն համամարդկային, այլև երկնային մասնիկ-աղ` ի ծաղկունն հայրենիքի, ի երջանկություն ազգի, հոգուտ մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության:

Կիրակի, 14-ը հունվարի, 2001 թ.

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ 44 ՏԱՐՎԱ ՄՏՔԵՐԻ

Ինչպես տասնյակ տարիներ առաջ, այսօր ևս վիճակը նույնն է. Ազգի ու Հայրենիքի գործերի ծրագրումը և կառավարումը, համալիր, համապարփակ ու համահայկական խնդիր լինելով, նույն համապարփակ ու համահայկական մոտեցումով էլ պետք է կատարվի, բայց չի՛ կատարվում...

Բացի այդ՝ հայության ու ՀՀ վիճակը արտակարգ է ճգնաժամային իմաստով: Հետևապես, այդ վիճակից դուրս գալու ջանքերն ու միջոցները նույնպես պետք է արտակարգ լինեն: Սա պահանջում է, որ կյանքի բոլոր բնագավառներում հայությունն ու ՀՀ-ն իրենց կյանքը դասավորեն ըստ այնմ՝ համաձայն ճգնաժամային պայմանների (պատերազմական, պաշարողական, մեկուսացման պայմաններում նաև ազգային պահանջատիրություն): Իսկ դա նշանակում է, որ ազգը պետք է անհապաղ վերափոխի իրեն: Եվ վերափոխումը պետք է սկսի կերպարից, նկարագրից, հոգեբանությունից, մտածելակերպից, արարքներից, բարոյական արժեքներից ու ազգային կազմակերպական կառավարումից մինչև մեր ազգային-մարդկային ինքնության նկատմամբ հավատարմությունն ու այդ ինքնությունը պահպանելու և պետականորեն զարգացնելու պարտաճանաչությունը՝ համաձայն հոգեկան պարտքի զգացումով գիտակցված, քրիստոնեական հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության*:

Ուրբաթ, 2-ը փետրվարի, 2001 թ., առավոտյան ժամը 7:20

ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆՆ ԱՐԺԱՆԱՆԱՂ Է ՊԵՏՔ

Արդարև, Աստուծո Հոգին պետք է գա վրադ, որ Աստուծո մասին մտածես:

Աստուծո Սուրբ Հոգին պետք է գա վրադ, որ Աստուծո ապավինես:

Եվ Աստուծո Սուրբ Հոգով միայն կարող ես Նրա գործերն անել՝ դառնալով Քրիստոսի խնորհից, սնվելով Նրա Ավետարանից և սիրելով Նրա խաչը: Ինչպես

*Տես այս գրքի էջ 23-31

Նա սիրել է մեր ազգը և 1700 տարի առաջ ազգովին և պետականորեն Սուրբ Չոզով Լուսավորել:

Երբ Աստուծո Չոզին լուսավորեց հայի հոգին, նա խորհեց Աստուծո մասին... Նրա մտածումները խոյացան երկինք... Հայն Աստծուն փառաբանեց...

Երբ Աստուծո հոգին լուսավորեց հայի հոգին, նրա գործերը Աստուծո շնորհով բեղմնավորվեցին... Քրիստոսի սերն արտահայտեցին... Թարգմանիչները Հայոց աշխարհում հոգևոր, մտավոր ու աշխարհիկ Ոսկեդար ստեղծեցին, այն է՝ Աստվածային Սուրբ Լույսի Սուրբ կանթեղը՝ ազգի կենարար անանց սուրբ ժառանգությունը...

Լույսը՝ Աստուծո հավատքը Հիսուս Քրիստոսով, միշտ եղել է, կա և լինելու է հավիտյանս հավիտենից...

Հայոց պետականորեն քրիստոնեացման 1700-ամյակը տոնակատարող հայոց պետության և Հայրապետության քաղաքականության և գործունեության հիմքում պետք է լինի ազգի հոգին, սիրտը և միտքը միշտ բաց պահելն այդ Լույսին, որ այդ Լույսից ստանան իրենց եռանդը, ու ազգը, երկիրն ու պետությունն այդ Լույսով ընթանան, այդ Լույսի համար, դեպի այդ Լույսը:

1700 տարի այդ Լույսից, այդ Լույսով ու այդ Լույսի համար հայոց սրտերի բաբախումը՝ Ավարայրից Առաքելոց վանք և Սարդարապատից Շուշի, անցած չէ, կորած չէ, այն շարունակվում է Աստվածային՝ տիեզերական ու հավիտենական եռանդով: Էականն այն է, որ մենք՝ ժամանակակիցներս, և հաջորդ ու ապագա սերունդները, այդ լույսի ժառանգները լինելով, արժանի՝ դառնանք այդ ժառանգությանը, որ մեզ չտիրի խավարը՝ դեպի անդունդ և մահ, այլ ընթանանք Լույսով դեպի Լույս՝ կյանք: Այս է մեր Սուրբ Հայրերի կտակը, որի կատարումով որոշվում է մեր ճակատագիրը: Արժանանանք, տե՛ր կանգնենք մեր կտակին, չուրանանք, չդավաճանենք այդ կտակին, որպեսզի դուրս չնետվենք մեր ճակատագրային հանգրվանից՝ Քրիստոսակերտ երկրային ու երկնային բնակությունից, այլ Կյանք ունենանք, ունենանք Նրա՝ մեջ՝ Աստուծո լո՛յս խոսքով, միշտ, ամենուր, ամեն ինչում: Նաև հոգուտ մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության:

* * *

Իրական կյանքն Աստուծո Սուրբ Չոզու բեղմնավորումով է: Առանց Սուրբ Չոզու բեղմնավորման կյանքն ունայնություն է, քանի որ կյանքը Կյանք է դառնում Սուրբ Չոզով ապրված լինելով: Այս է Աստուծո շնորհը մարդուն և հա՛յ մարդուն, պետականությանը և հա՛յ պետականությանը՝ Քրիստոսով, որ արտահայտում է Նրանից բխող և Նրա վրա հիմնված Հայ Ազգային (տոհմիկ) Գաղափարախոսությունը:

ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՈՒՍՏԻՃԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

(ԵՎ ԴՐԱ ԽՈՐՀՐԴԻ ԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ)

301 թվականին հայ ազգի պետականորեն քրիստոնեացման խորհուրդը 2001 թվականին՝ 1700-ամյակին և դրանից հետո էլ միշտ պետք է հասկանանք նույնպես ազգովին և պետականորեն...

Մենք հաճախ ենք կրկնում, հատկապես Սփյուռքում, «համազգային» հասկացությունը, որով և միասնությունը՝ որպես նպատակ, բայց այն կյանքի իրագործում չի դառնում, ինչպես և ՀՀ-ում: Որպեսզի դառնա, համազգային նպատակը պետք է պետական ծրագիր լինի՝ ճշմարտության Հոգուց բխող ազգային գաղափարախոսությամբ՝ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ:

* * *

Հայոց պատմական առանձնահատկությամբ հայոց պետականության գոյության պահպանման և հարատև զարգացման կազմակերպական կառավարման հիմունքը, ըստ երևույթին, հարկ է ըմբռնել եռաստիճան բովանդակությամբ՝ փաստացի պետականություն, իրավական պետականություն և հոգեղեն պետականություն:

Այս երեքից հոգեղեն պետականությունը, որ հիմնականն է, ուղղակիորեն սնվում և գործում է քրիստոնեական հավատքից բխող և նրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ (ՀԱԳ):

Հայ ազգն իր բազմադարյան գոյության տարբեր ժամանակաշրջաններում ունեցել է փաստացի իրավական պետականություն (երբեմն՝ զորեղ, երբեմն՝ ոչ այնքան զորեղ) և ունեցել է միայն փաստացի պետականություն՝ առանց միջազգային ճանաչման (միջազգային իրավական կարգավիճակի, ինչպիսին է մոտավորապես այժմ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պարագան): Իսկ այն ժամանակաշրջաններում, երբ չենք ունեցել ո՛չ իրավական, ո՛չ էլ փաստացի պետականություն, ունեցել ենք հոգեղեն պետականություն: Եվ ինչքան զորեղ է եղել վերջինը, այնքան քիչ են ազդել ազգի վրա իրավական և փաստացի պետականության բացակայության բազմաբնույթ հետևանքները:

Միաժամանակ, հոգեղեն պետականության զորությամբ և կենսունակությամբ է պայմանավորվել նաև հայ փաստացի, հետևապես և իրավական պետականության կառուցման անհրաժեշտության գիտակցումը և դրա իրագործման պարտաճանաչությունն ու հանձնառությունը: Որովհետև ազգային-պետական մտածելակերպը և քաղաքացիական ինքնագիտակցու-

թյունը գոյանում են հոգեղեն պետականության ապրումով, քանի որ, ինչպես վերը նշվեց, այն սնվում և գործում է մեր հավատքից բխող և նրա վրա հիմնված ՅԱԳ-ով:

Այսինքն՝ վերջին հաշվով, հայոց հիմնական՝ Հոգեղեն Պետականության գորությունը, ստեղծագործական կարողությունը, դրա հարատևությունը և վերածումը փաստացի ու իրավական պետության պայմանավորված է եղել (ու է) հայ ազգի քրիստոնեական հավատքի նկատմամբ հավատարմությամբ, բացահայտված այդ հավատքից բխող և դրա վրա հիմնված ՅԱԳ-ի ապրումով՝ կյանքի բոլոր հանգրվաններում...

Ուրեմն՝ երբ առկա է հոգեղեն պետականությունը, փաստացի պետականության ստեղծումը կազմակերպական կառավարման հարց է, որն անպայման կարելի է լուծել: Արագությունը և նրա որակը դարձյալ պայմանավորված են հոգեղեն պետականության կենսունակության աստիճանով: Իսկ երբ փաստացի՝ պետականությունն է կառուցված, նրա միջազգային կարգավիճակը՝ որպես իրավական պետականություն, միայն ժամանակի հարց է: Իսկ ժամանակը, ինչպես նաև իրավական պետականության որակական մակարդակը թեև կախված են նաև շրջապատի և ընդհանուր զարգացումներից, բայց հիմնականում պայմանավորված է փաստացի պետականության որակական մակարդակով: Այն էլ իր հերթին հոգեղեն պետականության մակարդակով, որը՝ ՅԱԳ-ի մակարդակով և որը՝ մեր Հավատքով:

Աստված մի՛ արասցե, բայց եթե իրավական պետականություն չունենանք, եթե փաստացի պետականությունն էլ կորցնենք, նույնիսկ հայրենիքի այս պատառիկից էլ զրկվենք, դեռ վերջը չէ, և կարող ենք ամեն ինչը նորից ունենալ ու ավելի փառավորապես ունենալ, եթե ամուր, իր բարձունքի վրա պահենք հոգեղեն պետականությունը՝ որպես հարազատ, գիտակից, ինքնաբուխ պարտաճանաչությամբ և ինքնակառավարվող հանձնառությամբ պատրաստական քաղաքացիներ: Մեր պատմությունը բազմաթիվ օրինակներ ունի նման հայ քաղաքացիների՝ հնդկաստաններից և ռուսաստաններից, ամերիկաներից ու եվրոպաներից մինչև Երզնի...

Մեր ազգի վերջը կգա, եթե ինքը վերջ դնի իր (արդեն իսկ բավականին թուլացած) հոգեղեն պետականությանը: Որովհետև այդ պիտի նշանակի, որ մենք լրիվ զրկված ենք ՅԱԳ-ից, որովհետև լրիվ դատարկված ենք հավատքից: Իսկ դա, որովհետև ավտահարված ենք հոգեբարոյապես, ու Աստված զզվել է մեզանից ու փոխել է մեր երկնային «իրավական կարգավիճակը»:

Ահա իրական անկումը, կործանումը և կորուստը՝ մահը՝ հակառակն իրական վերելքի, վերակերտման ու երանության, այսինքն՝ ԿՅԱՆՔԻ:

Կյանք, որը Միածինը, աշխարհ գալով, մարդկությանը բերեց և մեզ էլ առանձնապես բերեց՝ իջնելով մեր երկիր... Մնում է զարթնել մեղքի թմբիրից, տեսնել, ճանաչել, հասկանալ՝ ի՞նչ է էջմիածինը... Այն պատմական արժեքավոր

ճարտարապետություն չէ, հոգևոր արվեստի թանգարան էլ չէ, ոչ էլ հայոց պատմական թագավորանիստ քաղաք, թեև այդ բոլորն էլ է՝ երկրային իմաստով: Միածնի՝ Հայոց աշխարհի իջման և հայի հետ հաղորդակցվելու վայրը սուրբ է թե՛ խորհրդով և թե՛ բնությամբ, որ ամեն մի հայի կփոխանցվի, եթե հավատա: Ինչպես ասված է՝ «Հավատա՛ և կփրկվես»... Արդ, մեզ մնում է ընդունել ու ապրել մեր Սուրբ Հայրերի Աստվածաշնորհի հավատքի ժառանգությամբ և դրանից բխող ու դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ և բարոյականությամբ, որ ԿՅԱՆՔ ունենանք:

Եվ մեծ հույս ունենք, որ Աստվածային Շնորհով 301 թվականի քրիստոսաբնույթ խորհուրդն ընդմիջտ մեր մեջ ունենալով՝ այն կլուսավորի մեր խորհուրդները, զգացումները, արարքներն ու ընթացքը դեպի ԿՅԱՆՔ... ՄԻԱՅՆ ԹԵ ՀԱՎԱՏԱՆՔ:

Կիրակի, 8-ը ապրիլի, 2001 թ.

ԿՈՌՈՒՄՊԱՑՈՒՄԸ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ԵՎ ՀԱՎԱՏՔԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Կոռուպցիան՝ որպես աղետ, եթե առկա՛ է ու արդեն իսկ խանգարում է հայոց պետականության բնականոն կայացմանը, զարգացմանը ու հզորացմանը, եթե խանգարում է հասարակության առողջացմանն ու ազգի համախմբմանը, եթե կոռուպցիան հարվածում է տնտեսությանը և վնասում երկրի հեղինակությանն ու վստահելիությանը՝ բազմաթիվ հետևանքներով, ապա դրա վերացումը պայմանավորված է առաջին հերթին և հիմնականում ոչ թե վարչական և ֆինանսական միջոցառումներով, այլ իրական՝ Հայ Ազգային Գաղափարախոսության ճանաչմամբ, ընդունմամբ և կիրառմամբ կյանքի բոլոր հանգրվաններում, բոլոր հարաբերություններում ու արարքներում:

Այս դեպքում կոռուպցիան կվերանա արմատապես՝ ի շահ ազգի ու հայրենիքի, ի բարի օրինակ մարդկության և ի փառս մեր քրիստոնեական հավատքի, որովհետև այդ հավատքից է բխում և դրա վրա է հիմնված իսկական Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ):

ՀԱԳ-ը՝

- կվերալուսավորվի և կվերականգնի ազգի, երկրի հավաքական ու անհատական աշխարհայացքն ու աշխարհընկալումը,
- կվերաթևորի և կվերահաստատի ազգի ու պետականության բարոյական արժեքների համակարգն ու նորմերը,
- ըստ այնմ կվերահաստատի հայության կենսաձևը,
- կյանքի պահանջների և դրանց բավարարման չափանիշները,

- ըստ այնմ հասարակական ըմբռնումը, գնահատականը և կարծիքը,
 - դարձնելով այդ բոլորը կյանքի ապրում՝ հիմնականում ինքնագիտակցված պարտաճանաչությամբ և պատրաստականությամբ, և վերածելով հայության և Հայաստանի մարդկային կյանքն աշխարհի սքանչելիքի...

Երազանք, ցնորք է այս հեռանկարը, թե՞ իրականություն՝ վավերացված ամենահաստատուն երաշխիքով:

Ցնորք է, եթե հայությունը, Հայաստանը և հայոց պետականությունը ազգի պետականորեն քրիստոնեացման 1700-ամյակն ընկալեն լոկ որպես պատմական, ավանդական-մշակութային երևույթ ու արձագանքեն որպես այդ չափանիշներով և բովանդակությամբ պարտականություն, որը, ի դեպ, կարող է նաև (հմուտ գործարարությամբ) նյութական, ինչպես նաև բարոյական ու քաղաքական որոշ օգուտ բերել:

Եվ ամենահաստատուն երաշխիքով իրականություն է այդ հեռանկարը, եթե նախ՝ հայ ազգը, Հայաստանը և հայոց պետականությունը 1700-ամյակը մեր նախնյաց պես ընկալեն որպես Աստվածաշնորհի փառավոր փրկության լուսավորում, որով մեր ազգին ու պետականությանը մարդկային ցեղի առաջին շնորհն արվեց՝ հավատքի միջոցով հաղորդվելու կյանքի հավիտենական խորհուրդներին և այդ հաղորդության լույսով ընթանալու ու ապրելու երկրային կյանքը: Եվ երկրորդ՝ եթե հայ ազգը, Հայաստանը և հայոց պետականությունը 1700-ամյակին արձագանքեն՝ վերանորոգելով սուրբ հայրերի հավատքի Աստվածաշնորհ Ուխտը՝ որպես աղբյուր և հիմք ՀԱԳ-ի և կիրառեն այն միշտ, ամենուր, ամեն ինչում՝ կյանքի բոլոր բնագավառներում, հանգրվաններում:

- Կարո՞ղ ենք դա անել:

- Իհարկե:

- Ի՞նչ է պետք դրա համար:

- Ընդամենը՝ հոգևոր վերածնունդ, այն է՝ հավատալ Աստծուն՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ավետարանով, հավատալ Սուրբ խաչի շնորհին և, զորությամբ: Անկեղծորեն զղջալ մեր շեղումների՝ ուրացումների, նյութապաշտության և քաղքենիության համար, այսինքն՝ ապաշխարել, աղոթել, խնդրել, որ Սուրբ Հոգին բուժի մեր սրտի կարծրությունը, և, ինչպես 1700 տարի առաջ, անսանք Տիրոջ կանչին՝ վերստին սիրելով Աստծուն մեր ամբողջ սրտով, մեր ամբողջ հոգով և մեր ամբողջ մտքով ու զորությամբ և սիրելով մեր մերձավորին մեր անձի պես՝ մեր սրտերը, մեր տները, մեր երկիրն ու կյանքը բացենք Աստուծո Միածին Որդու առջև, որ Նա նորից հաճի իջնել մեր մեջ՝ որպես Իր սիրեցյալ ու ընտրյալ ժողովուրդ:

Այսինքն՝ անենք այն, ինչ արեցին մեր նախնիք. մեր ներկա հոգևոր ու աշխարհիկ իշխանությունների առաջնորդությամբ ամբողջ հայ ժողովրդի հավատքի հավատարմության ուխտի վերանորոգում՝ ազգի և պետության մկրտությամբ:

1700 տարի առաջ Տրդատ թագավորը, լինելով անառակ որդի, դարձավ սուրբ որդի-թագավոր՝ Աստուծո շնորհով իր սրբությունը ժառանգություն թողնելով հայ ազգին, Հայաստան աշխարհին և հայոց պետությանը: Փառք Տիրոջը, որ այդ երեքն էլ կան, դրանցից ավելի հստակ կա նաև ժառանգությունը: Մնում է, որ արժանանանք Աստվածաշնորհ, հոգևոր, կենսատու ժառանգությանը՝ պահելով մեր սուրբ հայրերի ընթացքը...

Այս եթե կատարենք, հավատո՞ւմ ենք, համոզվա՞ծ ենք, որ մեր 1700-ամյա հավատավորման հերթական տարեդարձներին տուրի՛ստ չեն գա Հայաստան, կզան ուխտի, հայերը՝ մկրտվելու, իսկ այլազգի եղբայրներն ու քույրերը՝ հաղորդվելու երկնային շնորհի երկրային հայկական սքանչելիքին:

Մեր վերալուսավորման, փրկության ու վերելքի բանալին՝ մեր Սուրբ Հայրերի ժառանգությունը, դեռ մնում է երկնային գանձարանի հայոց պահարանում: Մեր ազգի ու պետության հոգևոր սրբագործված ծննդյան ամեն մի տարեդարձի Աստված մեզ համար կբացի՝ երկնային գանձարանը, որպեսզի մենք ստանանք այդ բանալին, եթե կատարենք դրա պայմանները՝ մեր հոգով, սրտով, խորհուրդներով ու արարքներով:

Այս պայմանները բոլորովին էլ ծանր, դառն ու նվաստացուցիչ չեն, ինչպես համաշխարհային բանկերի, արժութային ֆոնդերի, եվրամիությունների ու նմանների պայմանները: Ընդհակառակը, դրանք, ինչպես Տերն ասաց, թեթև ու քաղցր են, կյանք են, երջանիկ, իմաստալից ապրումով իրական կյանք:

Երանի թե Աստված գթա մեզ և շնորհք տա, որ կարողանանք արժանանալ... այդ կյանքին՝ մեր սրտերն իրեն դարձնելով, իրեն լսելով, իրեն ծառայելով և իր կամքը կատարելով՝ որպես իր սուրբ ժողովուրդը...

Այդ տարեդարձները կազմակերպողների՝ մարդկանց ուշադրությունը գրավելու և տպավորելու խնդիրը կարևոր է: Բայց ավելի կարևոր, կենսական ու էական է հիշել, որ մեզ երկնքի՛ց էլ են նայում: Նայել են ու նայում են և տեսնում են մինչև մեր սրտերի խորքերը և գնահատում են մշտարժեք չափանիշներով, որից և իրականում կախված է մեր ապագան, մեր ճակատագիրը: Կախված է մեր կյանքն այժմ ու հավիտյանս...

Արդյո՞ք սա չէ մեր 1700-ամյա հավատքի խորհուրդը և մեր Տիրոջ պատգամը: Արդյո՞ք սա չէ, որ պետք է տոնենք հայրենն ու մարդկայնորեն՝ ուղիղ սրտերով, և փառավորենք ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆԸ...

Աստվա՞ծ հասնի մեզ...

Աստվա՞ծ օրհնի հայ ազգը, Հայաստան երկիրը և հայոց պետությունը:

ՀԱՅՈՒԹՅԱՆ ԷՎԿԱՆ ՀԱՐՑԵՐԻՑ ՄԵԿԸ

Ովքե՞ր և մեր ազգային ո՞ր կառույցներն են կոչված ու պատասխանատու ազգի և պետականության հոգեբարոյական և գաղափարական առողջության ու կենսունակության համար:

Հարցը, ըստ երևույթին, թե՛ բարդ է և թե՛ անսովոր՝ հատկապես մեր ներկա ըմբռնումով, և պատասխանն էլ, հավանաբար, լինի թեև պարզ, բայց նույնպես անսովոր՝ իր երկար և կարճ տարբերակներով:

Ընտրենք ամենակարճ տարբերակը. նախ նշենք, որ հարցի ամբողջական պատասխանը կարելի է ստանալ՝ հասկանալով մեր 1700-ամյա հավատամքի ամբողջական խորհուրդը: Իսկ մեր հոգեբարոյական և գաղափարական վարականերժ համակարգի առողջությունը և կենսունակությունը կարելի է ապահովել՝ վերականգնելով մեր Աստվածաշնորհի քրիստոնեական հավատքը և դրանից բխող ու դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունը: Եվ ինչքան լիարժեք վերականգնենք և մեր կյանքի ապրումը դարձնենք դրանք, այնքան առողջ, տոկուն, կենսունակ, հզոր, անվտանգ և բարգավաճ կլինեն մեր ազգն ու հայրենիքը:

«Թե ովքե՞ր, ո՞ր կառույցներն են կոչված և պատասխանատու դրա իրագործման համար» հարցի պատասխանն է՝ բոլորս: Ամեն մի հայ կոչված է և պատասխանատու: Սակայն Հայոց Հայրապետությունը, Հանրապետությունը և մասնավորապես դրանց և բոլոր քաղաքական, հասարակական, գիտական, կրթական, մշակութային կառույցների ղեկավարները հատուկ կոչում ունեն և պատասխանատվություն են կրում հայ ազգի նորագույն պետականությունում՝ հայոց պետականորեն ընդունված 1700-ամյա քրիստոնեական հավատքը և դրանից բխող ու նրա վրա հիմնված գաղափարախոսությունը (ՀԱԳ) իրենց կյանքի ապրումը դարձնելով՝ իրենց օրինակով և ղեկավարությամբ առաջնորդեն և ղեկավարեն ազգն ու պետությունը, որպեսզի այդ հավատքով ու գաղափարով ապրեն և գործեն միշտ, ամենուր, ամեն ինչում...

Այս կոչումին կարելի է արժանի լինել, պատասխանատվությունն զգալ ու պարտականությունը կատարել Սուրբ Երրորդության շնորհած անընկրկուն այն հավատքով, որ մեր Անմահ Յոզին հաշվետու է Երկնային Հավիտենական Արքայությունում:

Այս հավատքով հայ ազգն ու հայոց պետականությունը իմաստություն, արիություն և կարողություն կստանան՝ ամեն տեսակ խնդիր արագ և լավագույնս լուծելով միշտ, ամենուր ու ամեն ինչում երբեք չվնասվելով, այլ միշտ օգտվելով...

Աստուծո օգնությամբ:

Կիրակի, 14-ը հոկտեմբերի, 2001 թ., Երևան,
գիշերվա ժամը 12:35

ՆՄԱՆ Է, ԲԱՅՑ ՆՈՒՅՆԸ ՉԷ

Ազգի՞ն ծառայել՝ ծառայելով Աստծուն, թե՞ Աստծուն ծառայել՝ ծառայելով ազգին, որը նաև ծառայություն է մարդկությանը:

Եթե ազգին ծառայելու համար ծառայենք Աստծուն՝ կապվելով մեր եկեղեցուն, ընդունելով նրա դավանանքը և դառնալով հավատացյալ, Աստծուն ծառայությունը դառնում է անհիմն, պատեհական, ժամանակավոր... հետևապես և ազգին ծառայությունը՝ նույնպես...

Եթե Աստծուն ծառայելու համար ծառայենք ազգին՝ կապվելով մեր եկեղեցուն Աստուծո հավատքով, ազգի ծառայությունը դրվում է վեմի վրա, դառնում է հաստատուն, տևական, ընդմիշտ... ինչպես Աստծուն ծառայությունը... որովհետև Աստված հավիտենական է և ազգին ծառայությունը դրվում է հավիտենական խրախուսանքի և հատուցման վրա... և ոչ թե հակառակը...

Այս ըմբռնումից էլ բխում է, ի դեպ, ՀԱՅՔ հաստատության նշանաբանը. ՀԱՅՔԸ ծառայում է Աստծուն՝ ծառայելով ազգին, հայությանը, որպեսզի ազգն էլ ծառայի Աստծուն՝ ծառայելով մարդկությանը, որպեսզի մարդկությունն էլ ծառայի Աստծուն՝ միշտ, ամենուր, ամեն ինչում:

Այս է թելադրանքը Հայ Ազգային Գաղափարախոսության (ՀԱԳ) 301 թվականից ի վեր, որը բխում և հիմնված է Աստվածաշնորհ Քրիստոնեական Հավատքի վրա, պետականորեն ընդունված... Եվ, ըստ այնմ, երբ հայոց պետական գիտակցությամբ և պատասխանատվության զգացումով իշխանությունը, ղեկավարությունը ծառայում էր Աստծուն՝ դրանով իսկ ծառայելով ազգին, ազգն ու պետությունը ծաղկում էին: Եվ, հակառակը, երբ ազգի ու պետականության բարօրության համար, որպես օգտակար գործոն, նույնիսկ խրախուսվում էր հավատքը, աջակցություն էր ցուցաբերվում եկեղեցուն, ինչ-որ օգուտ դարձյալ ստացվում էր, բայց կարճատև ու անկենսունակ...

Հիմա՞: Այս իրականությունը գիտակցվո՞ւմ է: Եթե ոչ, ապա գոնե ջանքեր գործադրվո՞ւմ են դա գիտակցելու համար... Բայց դա ավելին է, քան ազգային-պետական առաջնային խնդիր լինելը, դա լինելության խնդիր է: Այս գիտակցությունը պետք է ամբողջ ազգի չափանիշը դառնա՝ պահանջելու և գնահատելու հայ ղեկավարության ծառայությունը, որը պետք է լինի ծառայել Աստծուն՝ ծառայելով ազգին, Հայաստանին, հայկական պետականությանը, որպեսզի ազգն ու հայրենիքն էլ ծառայեն Աստծուն, այնպես ծառայելով մարդկությանը, որ մարդկությունն էլ ծառայի Աստծուն միշտ, ամենուր, ամեն ինչում... Աստվածասիրությամբ...

Սրա՛ արդյունք հունամիզմը կլինի բոլորի կողմից՝ բոլորին, կլինի կառուցողական և կենարար, ազատական ու ազատագրող, միշտ, ամենուր, ամեն ինչում:

Այս հավատքով, այս նպատակով ու այս սկզբունքով կառավարվող մեր ազգի, երկրի ու պետության կարգավիճակը կհամապատասխանի 301 թվականին Աստվածաշնորհի հավատքով սահմանված Ուխտին, որ հաստատվեց ամեն տեսանելիի ու անտեսանելիի՝ Արարչի և հավերժական Տիրոջ՝ Աստվածորդու և հայ ազգի ու պետականության միջև:

Եթե որևէ երկրի, միության և նույնիսկ ձեռնարկության հետ մեր կնքած պայմանագրի համաձայն փոփոխություններ ենք մտցնում մեր սահմանադրության ու օրենքների մեջ և դա օգտակար անհրաժեշտություն ենք համարում, ապա ոչ միայն օգտակար, այլև մեր գոյության իսկ պայմանից ենք զրկում մեզ, եթե մեր սահմանադրության և օրենքների ոգին ու տառը և դրանց կատարումը չենք համապատասխանեցնում 1700-ամյա մեր Սուրբ Ուխտին Աստվածորդու հետ... Եթե մեր պետական քաղաքական միտքը համոզված է, որ «խաղ չկա» այս աշխարհի այս կամ այն հզորի հետ, ինչու չի հավատում, որ (մեղա համեմատության համար) բացարձակապես «խաղ չկա» Տիեզերքի Արարիչ Հավիտենական Արքայի հետ...

Իսկ այն ասողներին, թե սա քաղաքականագիտություն չէ, կասենք՝ սա իսկական քաղաքականագիտություն է, ինչն ում հասու չի եղել դարերի ընթացքում, իրեն գտել է պատմության աղբանոցում: Իսկ հայոց 1700-ամյա պետական իմաստությունից բխող ամենաարդիական քաղաքականությունը, եթե պատրաստ ու արժանի լինենք որդեգրել, ուժ, հզորություն ու հաղթանակներ կունենանք միշտ, ամենուր, ամեն ինչում... Աստուծո օգնությամբ:

Եթե մեզ ազգային կենսատու ծրագիր ու քաղաքականություն է պետք, եթե ազգային սեր ու միություն է պետք, եթե մեզ դաշնակից ու աջակից է պետք, եթե հարստություն, զորություն, բարեկեցություն, հաջողություն, երջանկություն, փառք և ուրիշ ինչ-որ լավ բան կա՝ պետք լինի, ապա դա Սուրբ Ուխտին հավատարմությամբ՝ այդ Սուրբ կարգավիճակին արժանանալով և ըստ այդմ՝ ազնիվ ու հարազատորեն գործելով կարող է լինել:

Շաբաթ, 1-ը դեկտեմբերի, 2001 թ.
առավոտյան ժամը 9:00

ՀԻՄՔ, ՈՐ ԿԱՐՈՂ Է ԿԱՌՈՒՅՑԸ ՊԱՅԵԼ

Ազգը, հայրենիքը, պետականությունը (ինչպես և անձը, ընտանիքը, հասարակությունն ու համայն մարդկությունը) պետք է հիմնվեն Աստուծո հավատքի վրա և գործեն այդ հավատքով...

Ո՛չ թե հավատքը ազգի համար, այլ հայ ազգը Աստուծո հավատքի համար: Քանզի Աստված է Ալֆան և Օմեգան, Սկիզբը և Վերջը, որի մեջ է ամեն ինչի սկիզբը և վերջը...

Հեթանոսություն, նյութապաշտություն և, վերջին հաշվով, աստվածամերժություն է փորձել Աստուծո «հավատքը օգտագործել» հանուն ազգի, երկրի, պետության և ուրիշ ինչի էլ լինի ու ինչքան վեհ և նվիրական էլ լինի:

Եվ Աստվածապաշտություն, Աստվածասիրություն ու հավատքի հավատարմություն է՝ թե՛ հայ ազգը, թե՛ Հայաստանը, թե՛ հայոց պետականությունը և թե՛ մեր կյանքը, մեր գոյությունն ու էությունը, ճակատագիրն ու ապագան հիմնելը Աստուծո հավատքի վրա: Ապրել դրանով և դրա համար՝ միշտ, ամենուր ու ամեն ինչում...

Սա Աստուծո կամքն է, Նրա օրենքը, նպատակը և ծրագիրը, որից բխում է և որի վրա հիմնված է Հայ Ազգային Գաղափարախոսությունը՝ ազգի սկզբնավորումից ի վեր, որը սրբագործվեց ու վերականգնվեց 301 թվականին:

Դրա ճանաչումը և հավատարմությամբ կիրառումը կյանքի բոլոր հանգրվաններում կերաշխավորի հայ ազգի, հայրենիքի և պետականության անընկրկուն վերելքը մարդկության առաջին շարքերում...

16-ը մարտի, 2002 թ.

ԻՆԵՐՑԻԱՅԻ ՈՒԺԸ

(Դրական և բացասական)

Իներցիայով ասում ենք, թե մենք պետականորեն քրիստոնեությունն ընդունեցինք (թեև, ավելի շուտ, տառացիորեն ասում ենք՝ հռչակեցինք որպես պետական կրոն): Բայց քրիստոնեության իրականության մեջ ո՛չ ընդունեցինք-ը, ո՛չ էլ հռչակեցինք-ը չեն բնորոշում եղելությունը, որովհետև քրիստոնեությունը մեզ Աստված շնորհեց: Մենք ո՛չ ուզեցինք, ո՛չ փնտրեցինք, ո՛չ էլ գտանք, այլ մեզ շնորհվեց-տրվեց՝ որպես կյանքի շնորհ Աստվածային Սիրով, որ լուսավորեց-սնեց մեզ Աստվածորդու Ավետարանի իմաստությամբ և գիտությամբ... Ինչպես մայրը երեխային կյանք է տալիս և կա՞թ է տալիս, ու երեխան ո՛չ ընդունում է իր ծնունդն ու կաթն իր մորից, ո՛չ էլ հռչակում է դրանք... Մի՞թե այսպես չեն բնորոշում եղելությունը հայոց քրիստոնեական կյանքի ճարտարապետներն ու կառուցողները և այդ կյանքով ապրողները՝ Լուսավորչից, Թարգմանիչներից մինչև վասն հավատո և վասն հայրենյաց մեր նորագույն նահատակները: Եվ Տերն այդպես չի՞ ասում, թե «...Այլևս ձեզ ծառաներ չեմ կոչում, որովհետև ծառան չգիտե, թե տերն ինչ է անում. այլ ձեզ բարեկամներ կոչեցի, որովհետև այն բոլորը, ինչ Իմ Հորից լսեցի, հայտնեցի ձեզ: Ոչ թե դուք Իմ ընտրեցիք, այլ ես ձեզ ընտրեցի և ձեզ կարգեցի, որ դուք գնաք և շատ պտղաբեր լինեք, և ձեր պտուղը մնա, և ինչ էլ որ Իմ անունով Հորիցս խնդրեք, ձեզ տա: Այս եմ ձեզ պատվիրում՝ որ սիրեք միմյանց» (Հովհ. 15. 15 - 17):

Ահա թե ինչու մեր հոգևոր լուսավորման հենց արշալույսին առաջացավ Թարգմանչաց շարժումը՝ վերաճելով մշակութային ոսկեդարի և շարունակելով

իր կենսատու հաղթարշավը դարերի ընդմեջով նույնիսկ կյանքի ամենածանր պայմաններում և պահպանեց, հասցրեց մեզ մինչև մեր օրերը: Լուսավորվելով քրիստոնեական հավատքով՝ հայոց հոգևոր Շնորհընկալ Հայրերը, Հավատքի Ջորագլխի պատգամով, զորաշարժի ենթարկվեցին՝ մարմնավորելու համար Ավետարանի Լույսի իմաստությունն ու գիտությունն ազգի և պետականության կյանքում...

Ի դեպ, հիմա, երբ, ըստ երևույթին, այլևս քրիստոնեությունը պետականորեն չենք ընդունում կամ չենք հռչակում պետական կրոն, հապա ի՞նչ ենք անում: Հրաժարվո՞ւմ ենք, հե՞տ ենք հռչակում: Կամ եթե չենք ընդունում պետականորեն, ապա ի՞նչ ենք անում՝ պետականորեն մերժո՞ւմ ենք... և մասնավոր կարգով ենք ընդունում: Այս հարցերը մեր ժողովրդի համար պետք է պարզվեն: Դրանց հստակեցումը մեր նախնիք ու նաև Աստված է պահանջում, և պահանջելու են սերունդները. կարո՞ղ ենք հստակեցնել...

Տիրոջ պատգամն անփոփոխ է և այսօր, որովհետև հավիտյան է: Ոչինչ չի փոխվել, ամեն փոփոխություն ձևի մեջ է, էությունը նույնն է՝ հարատև: Հարատև պետք է լինի նաև Թարգմանչաց Շարժումը, որ հարատև լինի նաև հայոց ազգային և պետական «ոսկեդարը»...

Այս է եղել, հետևապես օրինաչափորեն և է՝ Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ), որն ինչքան գիտակից, ազնիվ և հետևողական կիրառվի, այնքան անուր կլինի երաշխիքն Ազգի, Հայրենիքի և Պետականության վերելքի: Հօգուտ նաև ամբողջ մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության:

ՀԱԳ-ի պարզաբանումը, ընդունումը և ազգային կիրառությունը Հանրապետության ու Հայրապետության էական խնդիրն ու պարտականությունն է, որ պետք է կատարվի անհապաղ ու անթերի... որովհետև այժմ է նախապայմանը հայության ու Հայաստանի վայրընթացի կասեցման և վերելքի ապահովման՝ միշտ, ամենուր, ամեն ինչում...

19-ը մարտի, 2005 թ., Գլենդել (ԱՄՆ)

ՀԱՎԱՏՔ, ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայության դեպքում Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ) հայության քրիստոնեական հավատքի քաղաքացիականացումը և քաղաքականացումն է: Այսպիսով՝ ՀԱԳ-ը, որ բխում է և հիմնված է հայության հավատամքի վրա, պետք է գոյացնի հայության հասարակական, պետական մտածելակերպը, վարքը, բարքը և ուղղություն տա ամեն տեսակ ազգային հարաբերություններին՝ սահմանադրական կարգով պետական օրենքներից և պաշտոնական ներքին ու

արտաքին քաղաքականությունից մինչև հասարակական, ընտանեկան գրված և չգրված օրենքներն ու կանոնները...

Հավատքն Աստվածաշնորհ է: Այն չէ՛ն կարող ստեղծել, գնել կամ նվաճել մարդկային ուժով, գիտությամբ կամ հնարքով: Սակայն Աստվածաշնորհի հավատքը կարող ես խորացնել և զորացնել Աստվածասեր ապրումով, այսինքն՝ հոգով, մտքով ու ամբողջ էությանբ սիրելով քո Արարիչ Հորը, ապրելով և գործելով Նրա հավատքով կյանքի բոլոր հանգրվաններում... Ու երբ դա անում ես քո Աստվածասիրության, որով և մարդասիրության մղումով, այսինքն՝ սիրով հանդես քո Արարիչը և մերձավորը, և ըստ այնմ ապրում և գործում ես կյանքի բոլոր բնագավառներում, բոլոր հանգրվաններում, բոլոր հարաբերություններում, դա նշանակում է, որ հավատքդ զորացավ և գաղափարականացավ ու դրանով՝ նաև քաղաքացիականացավ և քաղաքականացավ՝ ընդհանուր առմամբ մարդկային՝ աշխարհիկ ու առարկայական դառնալով: Դրա համար ասում ենք, որ ազգի իրական գաղափարախոսությունը, տվյալ դեպքում տոհմիկ Հայ Ազգային Գաղափարախոսությունը, մեր հավատքի քաղաքացիականացումն ու քաղաքականացումն է:

Եվ ինչպիսին որ է որևէ ազգի՝ հավատքի ընկալման, ըմբռնման ու արտահայտման առանձնահատկությունը, այդպիսին է նաև այդ ազգի գաղափարախոսության ընկալման, ըմբռնման ու արտահայտման առանձնահատկությունը:

Հավատքն Աստվածատուր գերագույն շնորհ ու պարգև լինելով մարդուն՝ Աստվածատուր շնորհ ու պարգև է նաև մարդուն տրված լեզուն, որը բարձրագույն իմաստ է ստանում՝ փառաբանելով Աստծուն ու արտահայտելով Նրա նկատմամբ իր սերը՝ սիրելով իր մերձավորին և լսելով ու կատարելով Նրա կամքը, պատգամները, երկրային ծրագիրը և գործերը:

Մարդուն շնորհված լեզուն, ունենալով մարդկային մեկ ընդհանրություն, տարբերվում է ըստ ազգերի և ցեղերի որոշակի առանձնահատկությունների, որոնցից են նրանց ապրած վայրը, մերաշխարհը, կերպարը, մտածողությունը, կենցաղը, պատմությունն ու այլ ազգերի հետ հարաբերությունների բնույթն ու արդյունքը... Այս առումով լեզուն սուրբ է և պետք է պահպանվի հավատարմությամբ և գործածվի սրբությամբ, ստեղծագործաբար և կառուցողական իմաստով ու նպատակով, այլ ոչ թե պղծությամբ, նենգությամբ և կործանարար իմաստով ու նպատակով:

Ահա՛ թե որտեղից է Հայկ Նահապետին շնորհված հայկյան ցեղի հավատքն արտահայտող լեզվամտածողությունը: Հավատք, որը Տիրոջ ծննդյան 301 թվականից դարձավ հայ ազգի և պետության հավատքը, որից բխեց, դրա վրա հիմնվեց ու սրբագործվեց՝ նորոգ իմաստավորելով Հայոց Հայկյան Ազգային Գաղափարախոսությունը, և, ըստ այնմ, նորոգվեց ու զարգացավ Հայկյան ցեղին շնորհված հայ ազգի Լեզուն՝ հարուստ գրականությամբ հանդերձ...

Հավատք, Գաղափար և Բանականություն. մարդու մարդկայնացման այս երեք կենսաբաղադրիչներով օրհնված է հայ ազգը՝ կերտված արարչական ուրույն կերտվածքով և դրոշմված ցեղային ուրույն հատկանիշներով: Հայի համար դրանք հարազատ են, նվիրական են և սուրբ:

Երկուշաբթի, 4-ը ապրիլի, 2005 թ., ժամը 19:10

ՀՈԳՈՒ ՊԱՐՏՔ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Իմ անձը, իմ եսը, այն, ինչով որ ես ճանաչվում և ընդունվում եմ աշխարհում՝ որպես ֆիզիկական ինքնություն, այսինքն՝ ես, ոչ մի պարտք և պատասխանատվություն չունեմ այլևս: Որպես այդպիսին՝ լավ թե վատ, շատ թե քիչ, ինձ թվում է՝ ես կատարել եմ իմ ֆիզիկական, երկրային ես-ի պարտքը, բայց... Բայց իմ հոգու պարտքը կատարե՞լ եմ արդյոք...

Ո՛չ: Ես պարտական ու նաև պատասխանատու եմ իմ ամբողջ հոգով ու ամբողջ էությանը, որ հավերժական, անանց, հավիտենական է իմ Արարիչ Հոր՝ Աստուծո առաջ: Եվ միայն ու միայն Նրա առաջ: Սակայն եթե Նրա առաջ, նշանակում է Նրանով նաև բոլորի՝ առաջ եմ պատասխանատու՝ թե՛ մարդկության, թե՛ իմ ազգի և թե՛ իմ մերձավորի առաջ: Եվ վա՛յ ինձ, եթե պատասխանատվությամբ չվարվեմ և հոգուս պարտքը չկատարեմ: Վա՛յ ինձ, վա՛յ մեզ, վա՛յ բոլորիս, եթե հոգով պարտական մնանք:

Բայց մեր բարեգութ Հայրը՝ Արարիչն Աստված, մեզ չի թողնի, որ վայի մեջ մնանք, Նա կօգնի մեզ, որ կատարենք մեր հոգու պարտքը:

Մեր հոգու պարտքի կատարման ու դրա նկատմամբ մեր պատասխանատվության զգացումի վերաբերյալ մեր Հայրը մեզանից ընդամենը մի փոքր բարի ցանկություն է ուզում տեսնել, մի փոքր, անկեղծ, մաքուր սրտով ձգտում և գործ է ուզում տեսնել՝ որպես Իր նկատմամբ և Իր արարածների՝ մեր եղբայրների և քույրերի նկատմամբ մեր սիրո արտահայտություն: Եվ մեր սիրով այդ սրտանց ցանկությունը, անկեղծ ձգտումն ու գործը կբեղմնավորի, կարդյունավորի Նա, կընդունի մեզ և փրկելով կորստյան փորձությունից՝ կբարձրացնի դեպի լուսավոր երանություն՝ կյանք երկնային և հավիտենական:

Եվ իմ եսը ֆիզիկական, ա՛յն, ինչով ճանաչված եմ, ընդունված եմ աշխարհում (որի տևողությունը մի ակնթարթ իսկ չէ և որի փոշին էլ չի մնալու աշխարհում), երբ սրտանց նվիրում եմ Իրեն և ծառայեցնում եմ Իր պատգամները կատարելուն, կամքը և ծրագիրը հայկականությամբ կատարելուն Իր պարզևած՝ իմ հայոց ազգային գոյության անդաստանում՝ հայությունում և նրա օրրան և տուն Հայաստանում (և սա հոգուտ նաև մարդկության ու աշխարհի և ի փառս Սուրբ Երրորդության), այնժամ ես արտահայտում եմ գերագույնը, ամենաեականը և ամենաաստվածահաճոն, որ մարդ էակը կարող է արտահայտել՝ իմ սերն իմ Աստուծո նկատմամբ և դրանով նաև՝ իմ սերն իմ Աստուծո բոլոր

ստեղծածների՝ իմ մերձավորների և ընդհանրապես Նրա արարչագործության նկատմամբ:

Սա՛ է իմ՝ հայի ազգային գաղափարախոսությունը՝ ժառանգած իմ հորից, իմ պապից, ապուպապից և մեր սուրբ հայրերից մինչև մեր քրիստոսաշնորհ Գրիգոր Լուսավորիչն ու նաև ժառանգած դեռ նրանից էլ առաջ՝ մեր Աստվածաշնորհ մեծերից մինչև մեր հավատավոր, ազատատենչ Հայկ Նահապետը: Ճշմարտությունն այս իրականությունն է, որն ըստ ՀԱԳ-ի, բխում է Աստուծու Հոգուց, որ Նա փչեց մարդկության նախահոր հողանյութ շինվածքին, որպեսզի մենք գոյանանք:

Այդպիսով, Հայ Ազգային Գաղափարախոսությամբ հայը ծառայել է Աստուծո՞ւ ծառայելով իր ազգին՝ հայությանը, որպեսզի իր ազգն էլ ծառայի Աստուծո՞ւ ծառայելով մարդկությանը, որպեսզի մարդկությունն էլ ծառայի Աստուծո՞ւ միշտ, ամենուր, ամեն ինչում՝ ի փառս իր Արարչի:

Այս գաղափարախոսությունն է, որ Աստվածորդու արարչագործական լույսով և Նրա՝ աշխարհին պարզևած Ավետարանի և խաչի իմաստությամբ, գիտությամբ, շնորհով և զորությամբ հայ հոգու սրտի և մտքի վրա դրոշմվեց որպես ՀԱԳ և նրան կողմնորոշեց երկրային կյանքում դեպի հավիտենական կյանք:

Այս է մեր ՀԱԳ-ը և մեր պետականության ակունքն ու հիմքը: Ուրիշ գաղափարախոսություն չկա հայոց պետականության համար, որովհետև գաղափարի ուրիշ ակունք և հիմք գոյություն չունի հայի, հայության և Հայաստանի համար, որ անաղարտ, անխախտ, զորեղ և կենսունակ պահի հայոց հոգեկան և բարոյական իմունիտետը՝ վարակամերժ հատկությունը, որով ոչ մի ախտ չի կարողանա այլասերել, ոչ մի ունայնություն չի կարողանա ստրկացնել մեզ, և մեր ընթացքը միշտ կլինի անփորձանք, անվտանգ և սլացիկ դեպի վեր. Դեպի Աստված՝ այս կյանքում և հավիտյանս:

Եվ ինչպե՞ս չասենք էական նշանակությամբ այս ճշմարիտ խոսքը.

- Լա՛ո, ճանաչի՛ր քո ազգային գաղափարախոսությունը, պաշտպանվի՛ր նրանով, ապրի՛ր նրանով և կերտի՛ր նրանով, որ Կյանք ունենաք դու՛ և քո ա՛զգը... Եվ դա կլինի նաև ի բարօրություն մարդկության և ամենաեականը՝ ի փառս Սուրբ Երրորդության:

31-ը մայիսի, 2006 թ.

ԻՆՉՆ ԻՆՉԻՑ Է ԲԽՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄՆԵՐՈՒՄ

Մարդկության պատմական զարգացումը, ինչպես և մեր ազգի պատմական զարգացումը որոշակի տեսակետից դիտելիս ուրվագծվում է այդ զարգացման մի օրինաչափ նախապայման. դա հավատքն է և կյանքում դրա կիրառումը:

Կրոնը, մեր դեպքում Հայ Քրիստոնեական կրոնը, հայ մարդու հավատքի՝ երկրային կյանքի հոգևոր իմաստավորումը լինելով, դարձել էր նաև հայի հավատքի երկրային կյանքի ապրումի վերածման կազմակերպումը: Այդ կազմակերպումը և դրա համազգային (ամենայն հայոց) կիրառումը եղել է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու սուրբ կոչումն ու գործը, որը պետք է շարունակվի նաև այսօր և միշտ, Մայր Աթոռի գլխավորությամբ:

Գաղափարախոսությունը, մեր դեպքում Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ), հայ մարդու հավատքի երկրային կյանքի աշխարհիկ իմաստավորումը լինելով, դարձել էր նաև հայի երկրային կյանքի քաղաքացիականացումն ու քաղաքականացումը (օրինակ՝ Վարդանանց և դարերի ընթացքում նրանց հաջորդների կեցվածքը): Այդ քաղաքացիականացումը, քաղաքականացումը և դրանց համազգային (համահայկական) կիրառումը եղել է հայկական պետության, իսկ պետության բացակայության պայմաններում (ժամանակներում) պետական ֆունկցիան ստանձնած կառույցների կամ խավերի (եկեղեցի, ազնվական դաս կամ պետական մտածելակերպով ու գիտակցությունը մտավորական խավ, քաղաքական կազմակերպություններ և այլն) սուրբ կոչումն ու գործը: Այսօր այդ սուրբ գործին պետք է կոչվի ու այն կատարի Հայաստանի Հանրապետության իշխանությունը՝ նախագահի գլխավորությամբ:

Մեր ազգի մեջ Հայ Եկեղեցու միջոցով քրիստոնեական կրոնի՝ ապրումի վերածման կազմակերպումն ու կիրառումը պատմության ընթացքում ունեցել է վայրիվերումներ, բազում փայլուն էջերի կողքին եղել են և ստվերոտ էջեր... Սակայն վերջին շուրջ հարյուր հիսուն տարիներին մեր կրոնի՝ ապրումի վերածման կազմակերպումն ու կյանքի բոլոր հանգրվաններում կիրառումը, որպես սկզբունք, հանգումունք և ուղեցույց տարբեր պատճառներով աստիճանաբար թուլացել է և շարունակում է թուլանալ: Դրա դժբախտ ապացույցը կարելի է համարել այն հանգամանքը, որ թեև Հայաստանի և ներքին Սփյուռքի համար վերջին հետխորհրդային 15-20 տարիների ընթացքում նախադրյալները դրական են եղել, այդուհանդերձ, Հայ Առաքելական (Ամենայն Հայոց) Եկեղեցին չի կարողանում իր կոչումն ու պարտականությունն ըստ հարկի կատարել:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության միջոցով հավատքի աշխարհիկ իմաստավորմանը և դրա քաղաքացիականացմանը ու քաղա-

քականացմամբ Հայ Ազգային Գաղափարախոսության վերահաստատմանը, դժբախտաբար, մինչև հիմա դա որպես խնդիր իսկ դրված չէ:

Ափսո՛ս, շա՛տ ափսոս... Ի՞նչ պետք է անել... Ովքե՞ր պետք է անեն... Ովքե՞ր են պարտավոր սկսել անել:

Կիրակի, 5-ը նոյեմբերի, 2006 թ., ժամը 2:00

ԱՅՍ ԱՆԳԱՄ ԷԼ ԿԱՐԿՈՒՏԻՑ ՓԱԽԱՆՔ, ՍԱԿԱՅՆ ԻՆՉՊԻՍԻ՝ ԱՆՁՐԵՎԻ ՏԱԿ ԸՆԿԱՆՔ

Բռնատեր տիրակալների և տիրակալ բռնապետական ռեժիմների տիրապետության տակ դարեր շարունակ ու անընդհատ մասնատված և կեղեքված վիճակում լինելուց հետո հայ ազգն արյունաքամ, ցնցված և հոգևոր ու աշխարհիկ գլխատված առաջնորդությամբ ընկավ իր ու համաշխարհային պատմության համար աննախադեպ փորձության մեջ՝ յոթանասուն տարի: Այդ ընթացքում ազգի հատվածների բաժանումն ավելացավ ոչ միայն աշխարհագրական և քաղաքական սահմաններով, այլև մտավոր, կրթական, մշակութային, գաղափարական և նույնիսկ հոգևոր անջրպետներով: Շփումները հազվադեպ, տկար և մեծ մասամբ կեղծ ու արհեստական էին՝ զերծ տարրական վստահությունից...

Փա՛ռք Աստուծո, այդ ձմռան օրերն էլ անցան, ու եկավ 1991 թվականը: Բայց այն հույսը, որ ազգային մթնոլորտը կջերմանա, կպարզվի, կհստականա, և մենք կսկսենք տեսնել, ինչ որ չէինք տեսնում, և կզգանք այն, ինչ դուրս էր մնացել մեր սրտերից ու այլևս չէինք զգում, չիրականացավ: Ու եղավ այն, որ կարկուտից փախանք, սակայն ընկանք հորդառատ անձրևի տակ, այն էլ՝ էկոլոգիապես ոչ մաքուր անձրևի:

Եվ այս անգամ թեև մենք համեմատաբար ֆիզիկապես այնքան արյունաքամ չէինք, ու առաջնորդությունն էլ՝ ո՛չ այնպես գլխատված, ինչպես 20-րդ դարասկզբին, բայց մենք հոգեբարոյական արյունաքամություն էինք ունեցել և գաղափարական ու նկարագրային գլխատվածություն:

Մեր այս որակի պայմաններում ազգային պետականություն կառուցելիս մեզ շատ բան էր բացակայում (և հիմա էլ բացակայում է), սակայն դրանց մեջ հարկ է նշել մեկը, որ կոչվում է պատասխանատվություն:

- Պատասխանատվություն հոգու, խղճի, գաղափարի, բարոյականի և պատասխանատվություն ազգի, մարդկության ու Աստուծո առաջ:

- Պատասխանատվություն անմահ հոգու հավիտենական հատուցման քրիստոնեական հավատքով և Հայ Ազգային Գաղափարախոսությամբ:

Երեքշաբթի, 23-ը հունվարի, 2007 թ.,
ժամը 22:00

**ԲԱՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԿԱՊԸ, ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՀԱՎԱՏԱՎՈՐ, ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՈՒ
ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ**

Հիրավի, առանց բարության հնարավոր է ժողովրդավարություն:

Չարը կարող է լինել ժողովրդավար: Ըստ երևույթին, ժողովրդավարը կարող է կատարել չարություն*, բայց չարը չի՛ կարող լինել ժողովրդավար, որովհետև ժողովրդավարությունը հիմնվում, կայանում և աշխատում, կիրառվում է բարությանը: Եթե բարություն չկա, իրական ժողովրդավարություն չի՛ կարող լինել, որովհետև ժողովրդավարությունն ու չարությունն անհամատեղելի են:

Որևէ շարժման, կուսակցության կամ երկրի առաջնորդ, եթե իր մեջ բարություն չունի, չար է, բայց խոսում է ժողովրդավարության մասին և խոստումներ տալիս, ստում է կամա թե ակամա, գիտակցաբար կամ՝ ոչ:

Մենք՝ հայերս, մեր Հայաստանի համար պետք է հաստատ գիտակցենք այս պարզ ճշմարտությունը, որ չխաբվենք և ճիշտ ընտրենք երկրի ղեկավարներին ու նաև դաշնակից երկրներին:

Դա հնարավոր կլինի, առաջին հերթին, ճիշտ ճանաչելով ու ընդունելով Հայ Ազգային Գաղափարախոսությունը նաև որպես աշխարհաճանաչման չափանիշ, սկզբունք և կողմնորոշիչ:

* * *

Հայ Ազգային Գաղափարախոսության համաձայն՝ յուրաքանչյուր հայ պետք է ուզենա հավատակից, գաղափարակից, կուսակից, կողմնակից ու նաև գործակից լինել մեր Սուրբ Հայրերի՝ մեր Սուրբ նախնյաց և նրանց գործերն այսօր շարունակողներին: Դա Աստվածահաճ է, քանի որ դա Նրա կամքը և ծրագիրը կատարելն է:

* Ժողովրդավարը բարությանը ժողովրդավար լինելուց հետո կարող է և չարանալ, որով նրա ժողովրդավարությունը կսկսի խամբել և կորցնել իր կենսունակությունը...

ՀՈՒՍԱԼ ԵՎ ՉԳՏԵԼ ԻՐԱԿԱՆԻՄ, ԹԵ՞ ԿԵՂԾԻՆ

Պատմական և ժամանակակից փորձն ակնհայտ է դարձնում, որ Հայաստանում, առնվազն տեսանելի ապագայում, ժողովրդավարություն չի կարող կայանալ: Որոշ արևմտյան երկրների չափանիշներով ժողովրդավարական կարգերի հաստատմանը հուսալու, ձգտելու ու առավել ևս այդ ուղղությամբ պարտադրված միջոցներով այդ անելու արդյունքը կլինի համազոր, օրինակ, Թուրքմենստանում, Ադրբեյջանում կամ հենց Վրաստանում և Հայաստանում խորհրդային իշխանությունների՝ սոցիալիզմ ստեղծելու ձգտումի արդյունքին:

Նման ժողովրդավարություն հաստատելու փորձն անխուսափելի է դարձնելու կան օտարների ձեռքին խաղալիք դառնալը և կան ժողովրդավարական բռնապետության հաստատումը, այսինքն՝ ձևով ժողովրդավար, իսկ բովանդակությամբ բռնատիրական կարգերը: Որպեսզի այդ տեղի չունենա Հայաստանում, դարձյալ, առնվազն տեսանելի ապագայի համար, հարկ է հաստատել ազգային ամբողջատիրական ժողովրդավարություն:

Այն ամբողջությունը, որում ամբողջատերն օժտված է հայի տոհմիկ կերպարով, հայոց հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ և դրա բարոյականությամբ, որով ամբողջատերն իր պետական կառավարման պարտականությունը կատարում է ոչ միայն ազգի ներկայի ու ապագայի նկատմամբ ամենաբարձր պատասխանատվության զգացումով, այլև ու ամենաէականը՝ իր անմահ հոգու հավիտենական հատուցման գիտակցությամբ, այդ ամբողջատիրությունը կվերածվի հնարավոր լավագույն ժողովրդավարության, այսինքն՝ ձևով ամբողջատիրություն, իսկ բովանդակությամբ՝ ժողովրդավարության, այն է՝ հայ ժողովրդի կամքով, սրտով և մասնակցությամբ գործող ամբողջատիրական ժողովրդավարական քաղաքական կարգերի:

Այդպիսի վիճակի ստեղծման անհրաժեշտության մասին հարկ է լուրջ մտածել, լավ ըմբռնել և իմաստությամբ այն կենսագործել:

Աստուծո օգնությամբ:

Կիրակի, 10-ը փետրվարի, 2008 թ.,
ժամը 16:40

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ԴԵՄՔԸ (ԷՈՒԹՅՈՒՆԸ)

- Ժողովրդավարությունը երկրի, ազգի, պետության համար օգտակա՞ր է, թե՞ վնասակար: Ե՞րբ է օգտակար, ե՞րբ է վնասակար և ե՞րբ է հնարավոր ու անհնարին:

- Ժողովրդավարությունը միջոց է, իսկ դրա օգտակար կամ վնասակար լինելը պայմանավորված է դրա կիրառողներով. ժողովրդավարություն հաստատել փորձող ղեկավարության հոգեբարոյական, գաղափարական որակով և տվյալ ժողովրդի մշակույթով ու զարգացման մակարդակով (ներառյալ ազգային ինքնագիտակցությունը, քաղաքական գրագիտությունը և քաղաքացիական պարտաճանաչությունը):

Անաստված, այն է՝ Աստծուն չհավատացող, Աստծուն չսիրող ու Աստծուց չվախեցող, հետևապես և գաղափարազուրկ ղեկավարությունը, ինչքան էլ բարի ու արդար երևա, ժողովրդավարության տեսություններ քարոզի և խոստումներ տա, այդպիսի ղեկավարությունից չի՛ կարելի ժողովրդավար նպատակներ, որոշումներ և գործեր ակնկալել, այլ միայն՝ ժողովրդավարական դեմագոգիա և ժողովրդավարության մանիպուլյացիա՝ ի վնաս երկրի և ժողովրդի, տվյալ ժամանակաշրջանի և հատկապես հեռանկարային առումով...

- Իսկ այսպես կոչված անցումային երկրներում ժողովրդավարության կայացումն ինչպե՞ս կարող է բնորոշվել:

- Առանց Քրիստոսի Ավետարանով Աստուծո հավատքի և Նրա պատգամների կատարման անկեղծ ձգտումի, ժողովրդավար կոչված կարգերը ժողովրդավարությանը հարիր խնդիրներ չեն կարող լուծել և չեն լուծում, այլ միայն իշխանություններ կարող են փոխել և փոխում են՝ անկախ նրանից, թե այդ իշխանությունները երկրի, ժողովրդի համար դրակա՞ն են, օգտակա՞ր են և իրենցից ավելի՞ լավ են, թե՞ ոչ:

Հայաստանում ժողովրդավարության հաստատումը և կյանքի վերածումը կարող են իրականացնել 1700-ամյա մեր հավատքով տոգորված Աստվածասեր, ազգասեր, հմուտ ու աշխատասեր ղեկավարները: Ղեկավարներ, ովքեր իրենց ծրագրերով, քաղաքականությամբ, գործունեությամբ ու անձնական օրինակով՝ հայոց հավատամքը, ազգային գաղափարախոսությունը և դրանից առաջացած բարոյական տոհմիկ արժեքները ձգտելու են դարձնել հայության կյանքի իմաստը, ապրելաձևը և Աստծուն, ազգին ու հայրենիքին ծառայելու գլխավոր նպատակը...

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՊԵ՛Ս ԱՌՈՂՋ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական առողջ հասարակության մասին ռազմավարական նպատակադրմամբ որոշումներ ենք կայացնում՝ ընդ որում, որպես Հայաստանի քաղաքացիական առողջ հասարակություն նկատի ունենալով արևմտյան մոնիթորինգը՝ մոդելը:

Եթե քաղաքացիական հասարակությունը մեր ազգի, երկրի և պետության համար կարևոր բան է (իսկ մենք համոզված ենք, որ կարևոր է), ապա տրամաբանական ու օրինական հարց է առաջանում՝ մեր ժողովրդի ո՞ր տոկոսը (ներառյալ քաղաքական գործիչները) կարող է բացատրել, թե ի՞նչ է քաղաքացիական հասարակությունը, քանի՞ տեսակ է լինում և դրանցից որը ինչն է պետք Հայաստանին և ինչպե՞ս կարելի է ստեղծել, արմատավորել այն Հայաստանում և ի՞նչ դեր ունի կատարելու դրանում ինքը՝ Հայաստանի քաղաքացին:

Այս հարցախմբին պատասխանելուց հետո հարկ է որոշել, թե չկա՞ արդյոք տարբերություն ու ինչքանով է համապատասխանում Հայաստանի բնակչի և ընդհանրապես հայ մարդու հոգեբարոյական և գաղափարամտավոր կերտվածքը, այսպես կոչված, արևմտյան քաղաքացիական հասարակության տվյալ մոդելին:

Ըստ երևույթին, չի՞ համապատասխանում մի քանի պատճառներով ու եական դրույթներով: Չի՞ համապատասխանում հատկապես վերջին 80-90 տարվա արևմտյան, նախևառաջ, բարոյական մորմներին ու երկրորդ՝ այդ մորմների ստեղծած հոգեբանությանը, գաղափարներին և սովորություններին:

Բացի այդ կան նաև այլ հանգամանքներ՝ պատմական, կրոնական, նկարագրի, խառնվածքի և այլն:

Բայց բավարարվենք նշված տարբերություններով. այդ դեպքում Հայաստանում քաղաքացիական հասարակության արևմտյան մոդելին համապատասխան քաղաքացիական հասարակության կառուցման շինարարներն ի՞նչ պիտի անեն. պիտի փոխեն հայերի հոգեբարոյական և գաղափարամտավոր կերտվածքը, քաղաքական գրագիտությունը, մտածելակե՞րպը, մշակո՞ւյթը, որով և, ի վերջո, քաղաքական համակա՞րգը: Բայց ինչքա՞ն ժամանակ պետք կլինի դրա համար: Շատ ռեժիմներ հարյուրավոր տարիների ընթացքում, սկսած 4-րդ դարից, չկարողացան այդ անել Հայաստանում, չստացվեց: Ըստ երևույթին, հայերը «հաստագլուխ» են, չեն կարողանում «սովորել իրենց դասը» (ինչպես սպառնալով ասել էր մեր հարևան երկրներից մեկի ղեկավարը՝ նկատի ունենալով մեր դեմ գործադրված ցեղասպանական ռճիրը): Սակայն ինչպե՞ս պիտի արագացվի մեզ «շուռ տալու» գործընթացը, որպեսզի եթե ի վերջո 70 տարում չստացվեց, որ «սովետական մարդ» դառնանք, ապա «արևմտյան մարդ» ստացվի, ասենք... յոթ տարում:

Ինչպե՞ս կարելի է այդ անել՝ սպառնալո՞վ, ճնշելո՞վ, խաբելո՞վ, գովազդելով կամ կաշառելով (որը, ըստ երևույթին, արդե՛ն արվում է): Իսկ եթե այդ էլ չօգնի, մյուս միջոցը ո՞րն է, բռնի ընդունել տա՞լը...

Կամ էլ գուցե մենք՝ հայերս, առերե՞ս ընդունենք, ցույց տանք, թե ընդունե՞լ ենք... Ինչպես 451 թվականին... Բայց որ ի՞նչ լինի, ինչո՞ւ:

Ճիշտ հասկանանք իրար, որպեսզի որևէ մեկը չնենգափոխի մեր հարցադրումները՝ մեզ մեղադրելով «արևմտաֆոբիայի» մեջ: Մի բան, որ այդպես չէ, քանի որ հայը ո՛չ թե «արևմտաֆոբիայով» է տառապում, այլ չափազանց արևմտաֆիլությամբ է տարված: Ի դեպ, նա արևմտասիրությամբ է համակված երկու հազար տարուց ի վեր, երբ արևմուտքի մեծ մասը դեռ շատ հեռու էր արևմտականությունից: Երբ հայերը գնում էին Հին Հունաստանի գիտական և մշակութային կենտրոնները, արևմտյան քաղաքակրթության մյուս կենտրոնները՝ հաղորդվելու նրանց գիտությանն ու արվեստին, «արևմտյան» շատ ազգեր վայրագ, դաժան հարձակումներ էին կատարում այդ կենտրոնների վրա, արևմտյան քաղաքակրթության հայրենիքի վրա՝ քայքայելով այն:

Ուրեմն՝ հարցն ինչ-որ ֆոբիայի չի վերաբերում, այլ պարզապես մեր՝ մենք լինելու իրավունքին, որը ազատություն և հանդուրժողականություն քարոզողները պարտավոր են հարգել և «քաղաքավարի» քողարկված ճնշումներ չգործադրել, եթե դույզն իսկ գերծ են երկերեսամիությունից և կամ կայսերապաշտությունից...

Հիրավի, ինչո՞ւ անվանարկել հայ ծնողին, եթե իր անչափահաս աղջկան խրատում է և եթե պետք է, արգելում է, որ իր ննջասենյակում փակվի ինչ-որ տղայի կամ տղաների կամ էլ կասկածելի աղջիկների հետ (ինչպես հանուն «ազատականության» թույլատրվում է մեր բարեկամ արևմուտքում) կամ քոչարի պարի «մինի» շրջագեստով կամ էլ կիսամերկ, անպարկեշտ շարժումներով ինչ-որ լատինա-ամերիկյան պար և այլն՝ համարելով, որ այդպիսի ազատականությունն իրեն պետք չէ:

Հայաստանի Հանրապետության մարդիկ պետք է լա՛վ հասկանան, թե ի՞նչ է նշանակում այդպիսի «քաղաքացիական առաջադեմ» հասարակությունը և ի՞նչ գին է պահանջվում իրենցից միջազգային այդպիսի՝ ակունքի անդամ դառնալու համար:

Եվ այս մոտեցումը թող ոչ ոք չփորձի ներկայացնել որպես հետադիմական-պահպանողական, որովհետև այս մոտեցումը, այս համոզումնքը պահպանողական է, բայց ո՛չ հետադիմական, այլ պահպանողականի, այսինքն՝ հարազատի, բնականի վրա հիմնված իսկական առաջադիմական է, որովհետև այդպիսի՝ հիմքի վրա միայն կարելի է նախ՝ տեսնել իրական առաջընթացը և երկրորդ՝ հասնել Պահպանողական առաջադիմության (ՊԱ), ինչը բնական, օգտակար և վայել է հայ ազգին, Հայաստանին ինչպես և հենց իրեն՝ Արևմուտքին և համայն մարդկությանը:

ՎԵՐՋԱՊԵՍ, ԶԱԶԻՎՅԱԶ

Վերջապես Յայաստանի քաղաքական միտքն ընթռնեց ու բարձրաձայնեց, թե Յայաստանն առանց Սփյուռքի... այն չէ: Այսինքն՝ Յայաստանը Սփյուռքով՝ հայության 2/3-ով, ոչ թե ավելի հզոր, ապահով ու նաև, ինչո՞ւ չէ՝ երջանիկ է, այլ ընդամենը՝ այն չէ: «Է՛հ,- կասեին երջանկահիշատակ Յակոբ Պարոնյանն ու Երվանդ Օտյանը,- դրա՛ համար էլ շատ շնորհակալ ենք»:

Բայց գանք բուն խնդրին՝ մեղալի մյուս կողմին. մի՞թե հարկ չկա, որ Յայաստանի քաղաքական միտքը նշի նաև երկու էական հանգամանք.

- Առաջինը՝ իսկ ինչպիսի՞ն է հայության երկու երրորդը՝ արտերկրի հայությունը, Յայաստանով ու առանց Յայաստանի: Այն էլ ո՛չ միայն տկար, դեռ չկայացած և խոցելի Յայաստանով ու նաև ոչ նույնիսկ հզոր, անվտանգ և բարեկեցիկ Յայաստանով, այլ նաև հավատացյալ՝ ազնի՛վ ու համերաշխ Յայաստանով:

- Եվ երկրորդը՝ մի՞թե ընդհանրապես արժե քննարկել, թե Յայաստանն ինչպիսի՞ն կլինի առանց Սփյուռքի, կամ այդ Սփյուռք կոչվող հայության մեծամասնությունն ինչպիսի՞ն կլինի առանց Յայաստանի: Այսինքն՝ յուրաքանչյուրն ինչպիսին կլինի առանց մյուսի... Սա ի՞նչ հարց է: Սա էլ 21-րդ դարասկզբի՞ «մեղմ» տարբերակն է այն ամոթալի, խայտառակ և վնասակար մտածելակերպի և վերաբերմունքի, որ սկսվեց 20-րդ դարասկզբից՝ «ռուսահայ»-«թուրքահայ», «արևելահայ»-«արևմտահայ», «տեղացի»-«ախպար», վերջերս էլ՝ «հայաստանցիները եկան լցվեցին «մեր» Ամերիկան...» կամ ավելի պիղծ, տգետ ու ազգադավ՝ «ղարաբաղցիները լցվեցին, տիրացան Յայաստանին...»: Սա ինչպիսի՞ գաղափարի, ինչպիսի՞ հասկացողության արդյունք է և ի՞նչ կապ ունի հայ ազգային, տոհմիկ, հարազատ ու նաև պետական մտածելակերպի հետ:

Չէ՞ որ Սփյուռք կոչվածը խորհրդային չեկայի հորինվածքն էր՝ սահմանազատելու, անջատելու համար պրոլետարական, սոցիալիստական, ինտերնացիոնալիստական հայությանը բուրժուական, կապիտալիստական, նացիոնալիստական հայությունից, որի քաղաքական (և ոչ միայն քաղաքական) կազմակերպություններն ու առաջնորդներն իմպերիալիզմի լակեյներ ու «գործակալներ» են... Եվ դրանով ավելի խորացնել հայության ջլատումը:

- Լավ, սա մարտնչող բոլշևիզմի մի տեսակի մտածումն էր, ըստ որի հայ ազգը դիտվում էր որպես «մատաղացու» սոցիալիստական համաշխարհային «հեղափոխության» զոհասեղանին՝ հանուն այդ հեղափոխության հաղթանակի: Բայց Յայաստանի անկախ հանրապետության դեկավար, մտավորական, գիտական, հոգևոր և ընդհանրապես հասարակական միտքը մի՞թե չպետք

է վերջապես ըմբռնի, որ երկու ու ավելի թվով հայություն չկա, այլ կա մեկ հայություն, մեկ հայրենիքով՝ Հ ա յ ա ս տ ա մ՝ առանց արևելքի ու արևմուտքի, հյուսիսի և հարավի՝ որպես Հայաստան հայրենիքի հայ բնակչության սահմանազատում:

Հայաստանաբնակ ու արտերկրի հայության՝ որպես տարբեր կողմերի մտայնությունը, մոտեցումները և ամենավատը ազգի կազմակերպական կառավարման վերաբերյալ պետական գործադիր որոշումները, որոնք անմիջականորեն առնչվում են ազգի, հայրենիքի և պետության ապահովության, զորացման ու վերելքի համար համայն հայության կարողության և ներուժի բացահայտման, զարգացման ու ամենարդյունավետորեն օգտագործումն իրականություն դարձնելու հնարավորության հետ, հարկ է անհապաղ վերանայել:

Եթե կարողանանք հայ ազգի թե՛ ֆիզիկական և թե՛ ներքին՝ հոգեկան մեծ պատկերը տեսնել, որով և կարողանանք ընկալել մեր անցյալը, ներկան ու ապագայի տեսլականը, ապա կզգանք, որ մեր ազգի թշնամիների նախագծած ուղիով ընթացքի շարունակությունը շատ սխալ, ամոթալի ու աղետաբեր է: Այն, մանավանդ, խորթ է մեր հավատամքին, Հայ Ազգային Գաղափարախոսությանը, ազգային բարոյականությանը և զգվելի՝ Աստուծո համար...

Սթափվել է պետք, իրականությունը ճանաչել է պետք և ըստ այնմ՝ անհապաղ կազմակերպվել, գործել ու ապրել է պետք (ժամանակը վաղուց անցել է)՝ որպես մեկ ազգ, մեկ հայրենիք և մեկ ճակատագիր՝ համայն հայության համար:

Այս նպատակի իրագործումը հնարավոր է՝

- Հայության հոգևոր վերածնունդով,
- Մեր հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության ճանաչմամբ, ընդունմամբ և կիրառմամբ կյանքի բոլոր բնագավառներում ու հանգրվաններում:
- Ազգային քաղաքական գրագիտությամբ և պետականամետ քաղաքացիական պարտաճանաչությամբ:

ՀՀ նախարարություններից մեկը, որը նախընտրեցինք կոչել «Սփյուռքի», փաստորեն պետք է կատարի ազգային կազմակերպական կառավարման համահայկական (ԱԿԿՀ) կառույցի դերն ի բարօրություն հայ ազգի, նրա երկիր Հայաստանի և հայրենի պետության:

Եվ դա կլինի նաև հօգուտ մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության՝ Աստուծո:

ՍՓՅՈՒՌՔԸ ՎԵՐՋԻՆ 80 ՏԱՐՈՒՄ` 1926-2006 թթ.

Ներկայիս արտերկրի Սփյուռք կոչված հայությունը իր ազգային կազմակերպական կառավարման ձևով էապես նույնն է ինչ եղել է մոտ 85-90 տարի առաջ, երբ ձևավորվել էր այն ժամանակվա դեպքերի բերումով: Սակայն, արտերկրի հայության կազմակերպական կառավարման ունակության մակարդակը և ըստ այնմ հայկականության ինքնության ու արժեքների պահպանման ցանկությունն ու նպատակը և դրանցով ապրելու և գործելու ջանքերն ու արդյունավետությունը շատ ավելի բարձր էին, քան մեր օրերում: Ի՞նչ է նշանակում սա: Ինչո՞ւ արտերկրի հայերի վերջին տասնամյակների համեմատաբար բարձր տնտեսական, կրթական ու կենցաղային մշակույթի մակարդակը և գումարած դրան Հայաստանի՝ արդեն 15-ամյա անկախությունը հզոր խթան չպետք է լինեին, որ արտերկրի հայությունը դադարեր ազգային գաղափարագրկությամբ ու անտարբերությամբ հարաճունորեն ավելի զոհեր տալ սպիտակ ջարդին ու ավելի հայրենասեր, ավելի ազգասեր և մինչև իսկ մեկ ազգ, մեկ հայրենիք, մեկ ճակատագիր կյանքով չհապրեր:

Հայոց մեծագույն (և մարդկության մեծ) ողբերգություն ցեղասպանությունից հետո առաջացած արտերկրի համայնքներում համարյա բոլոր տարիքի և խավերի հայերի ցանկությունն ու նպատակը՝ պահպանել և զարգացնել իրենց հայկական ինքնությունը, շատ ավելի մեծ էր, քան այժմ է: Եվ իրենց հայ մնալու և հայորեն ապրելու ցանկության իրագործման համար պահանջվող գինը, որ ներկայիս գնից բավական բարձր էր, իրենց այն ժամանակվա նյութական վիճակի համեմատությամբ, նրանք շատ ավելի մեծ պատրաստականությամբ էին վճարում այդ գինը, քան այժմ՝ 80 տարի հետո:

Ինչո՞ւ:

Հարկ չկա շարունակել երկար տարիների ընթացքում կրկնվածը օտար մշակույթների և այլնի ամենակուլ զորության մասին: Պետք չէ պատճառ բերել նաև տարբեր երկրներում գոյություն ունեցող ավելի կոպիտ ու ազրեսիվ ազգայնամոլությունը, անհանդուրժողականությունը և օրենքները:

Շատ կարևոր է, որ պատճառը դրսի գործոնների մեջ փնտրելու փոխարեն, կամ գոնե դրան զուգահեռ, փնտրենք մեր մեջ: Փնտրենք մեր ազգային հոգեբարոյական, որով և գաղափարական իմունիտետի, իմուն համակարգի, այսինքն՝ մեր ազգային վարակամերժ հատկության և կարողության տկարացման, նվազեցման և գուցե նաև կորստի պատճառի մեջ:

Հայաստան-Սփյուռք գոյությունը, այդ գոյության՝ որպես չարյաց փոքրագույնի ժամանակավորապես պահպանումն ու այդ գոյության նույնիսկ կենսատու գործի վերածումը խնդիր է, որն անմիջականորեն բխում է և ուղղակիորեն

առնչվում է հայ ազգի հոգեբարոյական, դրանով և գաղափարական վարակամերժ կարողության (անվանենք դա ինունիտետ) մակարդակի հետ: Եթե այդ վարակամերժ կարողության մակարդակը ցածր է, անկում է ապրում, ապա այդ մակարդակի անկումը կանգնեցնելը և հետևողական ու կայունորեն այն բարձրացնելը պետք է լինի ազգային պետական առաջնային նպատակ, խնդիր, ծրագիր և գործ: Այն կարող էր սկսել կազմակերպելով հատուկ աշխատախումբ՝ ծրագրելու համար այս նպատակ-խնդրի կատարումը, ազգի և պետության բարձրագույն հովանավորությամբ... Այժմ Սփյուռքի հարցերով նախարարության ստեղծմամբ հույս ունենանք, որ այդ խնդիրը կկատարի Սփյուռքի նախարարությունը:

Ուրբաթ, 21-ը հոկտեմբերի, 2005 թ.

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ (ՀԱՄԱՅԱՅԿԱԿԱՆ) ԱՆԿԱՌԱՎԱՐԵԼԻՈՒԹՅՈՒՆ (Պատճառ, հետևանք ու անելիքներ)

Հայ ազգի ներկայիս իրականությունում ազգային (համահայկական) կառավարումը կարող է իրագործվել միայն Հայաստանի նախագահի նպատակադրմամբ և նրա ղեկավարությամբ:

Եվ Հայաստանից բացի աշխարհում ուրիշ միջավայր չկա, ուր կարող է ստեղծվել, կիրառվել և ղեկավարվել համազգային կառավարումը՝ որպես անհրաժեշտ պայման՝ հայության տարբեր կարողությունների և ներուժի համախմբման, համադրման, զարգացման և համայն հայության ու Հայաստանի նպատակներին ծառայեցման համար:

Հայության պատմական ու հատկապես ներկայիս զարգացման ընթացքը փաստում է, որ այսօր ՀՀ նախագահը ցանկանա թե ոչ՝ հայոց ազգապետն է, միայն այն տարբերությամբ, որ նա կարող է իր այդ պատմական պարտականությունը կատարել լիարժեք կամ ոչ լիարժեք, բայց դրանից Հայաստանի Հանրապետության նախագահի՝ որպես ազգապետի կոչումը, պարտքը և իրավունքը չի փոխվում:

Մինչև 1991 թվականն ակնհայտ պատճառներով, իսկ այնուհետև՝ մինչև այսօր դեռ լրիվ չպարզաբանված պատճառներով այդ պարտականությունը չի կատարվում: Հայ ազգը մնում է անկառավարելի՝ դրա բոլոր ճակատագրական հետևանքներով...

- Ինչո՞ւ է անկառավարելի:

Հայ ազգը դարերի ընթացքում անկառավարելի էր, առնվազն՝ պետականորեն: Հայության այս կամ այն հատվածները այս կամ այն չափով ազգայնորեն կառավարելի էին՝ տեղական կիսահնքնիշխան առումով: Բայց հայությունն

ամբողջությամբ զրկված էր ազգային (պետական իմաստով) կառավարումից: Հայությունը, հիմնականում զրկված լինելով նաև պետական մտածելակերպից, չունեցավ նաև իր ազգային փաստացի կառավարման անհրաժեշտության գիտակցությունը, հետևապես, և այն ստեղծելու համապատասխան ձգտումը:

Խորհրդային Հայաստանի գոյությունը չապահովեց հայ ազգային պետական կառավարում՝ ո՛չ թվաքանակով (համայն հայության համար), ո՛չ էլ որակով և բնույթով: Այսինքն՝ Խորհրդային Հայաստանի կառավարումը տարածվում էր միայն հայության՝ հայաստանյան այդ հատվածի վրա ու այնքանով էր հայ ազգային, ինչքանով որ հայության հայրենաբնակ այդ հատվածն ի վիճակի էր անկախորեն ընտրել Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության իշխանությունը՝ որպես իր ազգային իշխանություն:

Ուրեմն այն, ինչ 1918 թվականին կատարվեց Հայաստանի մի մասում՝ որպես Երևան մայրաքաղաքով հայոց պետականության սկիզբ, և երկուսուկես տարի հետո շարունակվեց 70 տարի՝ որպես ձևով ազգային, բայց բովանդակությամբ Խորհրդային Միության վարչատնտեսական տարածք, չէր կարող և չապահովեց հայ ազգային պետական կառավարում, ու ազգը դարձյալ շարունակեց մնալ անկառավարելի: Խորհրդային կառավարման ընթացքում Հայաստանի փաստացի իշխանությունն իրագործող Մոսկվան, վերահսկելով Հայաստանի ու այլ Խորհրդային հանրապետությունների հայությանը, փորձեց և որոշ չափով ու ձևով կարողացավ վերահսկել նաև աշխարհատարած հայությանը, բայց դա կապ չուներ և ինչ-որ տեղ նաև դեմ և ի վնաս էր հայ ազգային պետական կառավարմանը:

Ի՞նչ տեղի ունեցավ 1991 թվականին Հայաստանի անկախացումից հետո: Ստեղծվե՞ց դարերի ընթացքում խզված հայ ազգային (համահայկական) պետական կառավարման բնական կառույցը՝ Հայաստանի Անկախ Հանրապետության ստեղծմամբ:

- Ո՛չ, չստեղծվեց:

- Ինչո՞ւ:

- Պատճառները շատ են, թվենք հիմնականները.

1. Ազգային կազմակերպական կառավարման մակարդակով այդ խնդիրը դրված իսկ չլինելով՝ չկատարվեց անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքը, նախևառաջ հայության հոգեբարոյական, գաղափարական, ծրագրային և կազմակերպական առումով:

2. Արտերկրի հայությունը ի վիճակի չէր այդպիսի խնդիր դնելու ու առավել ևս լուծելու: Իսկ ՀՀ ղեկավարությունն ընդհանրապես կողմ էլ չէր այդ նպատակին...

- Այժմ կատարվո՞ւմ է:

- Այժմ ներկա ժամանակն արդեն խոսում է իր մասին. եթե ծառը լինի, պտուղն էլ կլինի, բայց քանի որ պտուղը չկա, ուրեմն ծառն էլ չկա կամ այն վիճակում չէ՛,

որ պետք է լիներ: Ափսո՛ս...

Հայությունը և մանավանդ Հայոց պետությունը դեռևս չի՛ ստեղծել, մշակել այն հողը, որում կարող է առաջանալ, աճել և պտուղ տալ հայոց համազգային պետական կառավարման ծառը՝ Հայ Պետականության (համահայկական ազգային) կառավարումը: Մի բան, որ կարող է տեղի ունենալ, կենսագործվել Հայաստանի նախագահի գլխավորությամբ՝ պետական համապատասխան մակարդակի իշխանության ջանքերով:

Հողը, պարարտ հողը հայոց հավատամքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ գիտակցված և Հայաստանի պետական այդպիսի իշխանության կողմից ստեղծված և ղեկավարվող կազմակերպական կառավարման կառույցի գործունեությունն է: Այն կարող է սկսվել Հայաստանի նախագահի նախաձեռնությամբ և նրա հրամանով ստեղծված ու ղեկավարվող նախապատրաստական հատուկ ծրագրի իրականացմամբ:

Երեքշաբթի, 23-ը մարտի, 2004 թ.

ՀԱՐԿ Է ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայոց հավատամքի և դրանից բխող ու դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ ու բարոյականությամբ ազգային նոր կազմակերպական կառավարման քաղաքականությունը կխթանի և նոր հնարավորություններ կստեղծի իրագործելու ազգի համախումբ կայացումը աշխարհի ամբողջ տարածքում՝ կենտրոնացնելով ազգային կարողությունն ու ներուժը հայության և Հայաստանի կենսական խնդիրների կատարման վրա, որոնցից են՝

1. Հայաստանի հասարակության ու պետության կայացումը՝ չափանիշ ունենալով ամբողջ հայության հոգևոր, գաղափարական, մտավոր և ֆիզիկական կարողությունների և ներուժի կենտրոնացումը ապահով, կենսունակ, արդար և զարգացած հայրենիքի կերտման և պաշտպանության նպատակի ու իրագործման վրա:

2. Հայոց քրիստոնեական հավատամքի և դրանից բխող ու դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության գիտակցմամբ բարոյական արժեքների և քաղաքացիական պարտականությունների ճանաչումը, ընդունումը և դրանց՝ ազգային ապրումի վերածման կազմակերպական կառավարման համահայկական կառույց-համակարգի ստեղծումն ու գործադրումը:

Այս իմաստով հարկ է հաստատել հայի հոգեբարոյական, գաղափարական

և քաղաքացիական կերպարի* կազմավորման, սնուցման ու նրան ազգային ծառայության համար վերապատրաստելու կառույց-համակարգ՝ ապահովելով դրա հարատև գործունեությունը:

Այդ կերպարի գիտակցմամբ մարդկային ու ազգային իղծերի և հայության ու Հայաստանի կոնկրետ կարիքների, պահանջների բավարարման պարտաճանաչությունը հարկ է, որ մարմնավորի Հայաստանի (որով և՛ համայն ազգի) ղեկավարի կերպարը, գաղափարը և կյանքի ապրումը: Բացի այդ և դրան հավասար, այդ կարիքների և պահանջների բավարարումը հարկ է, որ մարմնավորեն այդ հատկություններով ղեկավարի ներկայացրած ծրագրերը և դրանց կենսագործման կազմակերպական կառավարումը՝ իր արդարությամբ, հմտությամբ ու արդյունավետությամբ:

* * *

Եթե ազգը հոգեպես վերածնվի, այդ վերածնունդով գաղափարականանա, բարոյապես ամրանա Ավետարանի և Խաչի հավատքից բխող ու դրանց վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, ապա մնացածը կազմակերպական կառավարման և ժամանակի հարց է միայն: Ընդ որում՝ ժամանակը ոչ թե տարիներով, այլ շաբաթներով ու ամիսներով կարելի կլինի հաշվել: Եվ գերխնդրի կատարումը կդառնա հայոց հոգևոր, քաղաքական և մտավորական ղեկավարության հմտության հարց միայն, որը ժողովրդավարությամբ պետք է հաստատվի:

Ջարթնի՛ր, լա՛ո:

Երեքշաբթի, 11-ը հուլիսի, 2006 թ.,

ԼՂՀ, Շուշի

ՆՈՐ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՋԱՆՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի (և հայության) ներքին ու արտաքին քաղաքականության մեջ նոր գաղափարների, մոտեցումների և գործունեության կարիք կա՞:

Այո՛, կա՛:

Սակայն ի՞նչ սկզբունքներով, ի՞նչ տեսանկյուններով պիտի ծրագրվեն նոր մոտեցումներն ու գործունեությունը և ի՞նչ նոր աղբյուրներով (ռեսուրսներով) պիտի իրագործվեն դրանք: Սա հարց է, որ կարիք ունի անմիջական և սպառնիչ պատասխանի:

* Կերպարի օրինակը և գաղափարի բովանդակությունը կունենան կրթական և դաստիարակչական կարևորագույն նշանակություն համայն ազգի ու հասկաղես նոր սերնդի համար:

Ի՞նչ պետք է անել և ինչպե՞ս անել, որ այդ հարցերը բարձրացվեն և պատասխաններն ստացվեն: Ովքե՞ր կարող են փակ դռները և փակ սրտերն ու փակ մտքերը բացել...

Սա էլ հարց է, այն էլ՝ ելակետային, որ պետք է մտածել այդ մասին և գտնել պատասխանը՝ որպես սկիզբը հաջորդ պատասխանների: Աստուծո օգնությամբ:

Եվ մի ուրիշ հարց.

Հայաստանը (և հայ ժողովուրդը) կարո՞ղ է ունենալ առավել գիտածավալով արդյունաբերություն: Սա շատ տեսակետներից մեծ, բարդ և դժվա՞ր հարց է:

Այո՛, այդպե՛ս է, և դրա համար այդ հարցն ազգային և պետական օրակարգում պետք է ավելի՛ շատ տեղ ունենա ու ավելի՛ գործնական քննարկման ենթարկվի ավելի՛ գործնական անձանց կողմից՝ ավելի՛ գործնական պատասխանների ակնկալությամբ՝ համահայկական տեսլականով ու ընդգրկումով:

Նշենք, որ մանավանդ վերջին հարցի լուծման կապակցությամբ պետք է նկատի ունենալ Հայ Ազգային Գաղափարախոսության և Ազգային Կազմակերպական Կառավարման գործոնները, որ պետք է ստեղծել կամ առնվազն եղածը էապես կատարելագործել:

28-ը մարտի, 2007 թ., Air France-ի
թռիչք՝ Փարիզ-Lnu Անջելես

ՀԱՅՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԼԻԱՐԺԵՔ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՀԱՎԱՏՔՈՎ, ԳԱՂԱՓԱՐՈՎ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ


Հայության մտավոր-մասնագիտական ռեսուրսները պետք է հաշվառել, («գուլքագրել») դասակարգել, կազմակերպել ու ազգայնորեն իրացնել՝ որպես ազգի, հայրենիքի և պետության զարգացման, զորացման, ամրապնդման և վերելքի կարևորագույն պայմաններից մեկը:

Թեև այդ անելու համար կարող են որդեգրվել տարբեր միջոցներ, սակայն դրա համապարփակ, կայուն, լիարժեք ու հարատև արդյունավետությամբ կատարման համար մեկ միջոց կա՝ Հայ Ազգային Գաղափարախոսության (ՀԱԳ)՝ հայության կողմից ճանաչումը և որպես կյանքի ուղենիշ, իմաստ և նպատակ ընդունումն ու կիրառումը կյանքի բոլոր բնագավառներում, բոլոր հանգրվաններում:

- Ո՞ր ՀԱԳ-ի:

- Այն ՀԱԳ-ի, որ բխում է և հիմնված է Աստուծո հավատքի վրա՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանով ու խաչով, և ձևավորվել է հայոց մեծերի բարոյական կերպարով:

**ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐՈՒՄԸ
ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՀՄԱՄԲ,
ԸՆԴՈՒՆՄԱՄԲ ՈՒ ԱՊՐՈՒՄՈՎ՝ ԿՅԱՆՔԻ
ԲՈԼՈՐ ՀԱՆԳՐՎԱՆՆԵՐՈՒՄ**



Երբ այս հավատքով ու գաղափարով առաջացած որակը և պատրաստակամությունը տարածվեն ազգի (համայն հայության) գոնե տասից մեկի վրա, կսկսվի ազգի վերածնունդը, կազմակերպական կառավարման կատարելագործումը և հզորացումը, անվտանգությունն ու բարգավաճումը: Այդ տեղի կունենա, որովհետև ազգը կուզենա և կկարողանա մոբիլիզացնել իր հոգեբարոյական և մնացած բոլոր բնագավառների կարողությունները և ճիշտ ժամանակին ու արդյունավետորեն դրանք կկիրառի իր և իր հայրենիքի ազատության, ապահովության, զարգացման, զորացման և բարգավաճման համար:

Միաժամանակ, այս գործընթացի հետ հայության մեջ այս որակի հատկություններով տասից մեկը կդառնա տասից երկուսը, չորսը, վեցը ու ավելի: Այնժամ հայությունը, Հայաստանը և հայ պետությունը Աստվածահաճո կյանքով կընթանան մարդկության առաջին շարքերում:

** Գրագես հասկացության շեշտումը բխում է մեր՝ լուսավորչական գիտելիքից, որ հայրենասիրությունը (ինչը նշանակում է մահ ազգի, հայրենիքի և լուսավորչական նկատմամբ լուսաստիճանավորությամբ քաղաքացիական և քաղաքական դիրքորոշում), ազնվության հետ լուսավորչական և քաղաքական գրագիտություն, որոշեցիկ հայրենասեր չխաբվի, չաղակողմնորոշվի ու (անկախ իր կամից) ոչ միայն անարդյունավետ, այլև վնասակար կողմնակցություն չունենա ու արարներ չկատարի ու օտար և խորթ Երկրի չճանաչի:*

Երեքշաբթի, 22-ը փետրվարի, 2005 թ., ժամը 23:40

ԴԱՐՁՅԱԼ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱԶԳԱԿԵՐՏ ԵՎ ՊԵՏԱԿԱՆԱԿԵՐՏ ՋՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հավատքը և հավատքով գիտակցված հոգու պարտքը կյանքն իմաստավորող պարտականություն և գործ դառնալու համար պետք է նաև գաղափար դառնա, հայության պարագայում քրիստոնեական հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսություն (ՀԱԳ) դառնա: Այսինքն՝ հավատքը քաղաքացիականանա և քաղաքականանա ՀԱԳ-ի բարոյական նորմերով: ՀԱԳ-ը, իր հերթին, ազգային ինքնաբուխ, ինքնապարտաճանաչ և նույնիսկ ինքնակառավարվող պարտաճանաչությամբ պատրաստականություն առաջացնելու համար պետք է իր գաղափարական, քաղաքացիական գիտակցությամբ, գրագետ հայրենասիրությամբ և բարոյական նորմերով ընկալվի:

Եվ այդպիսի ընկալումն է, որ ազգային-պետական տարբեր բնագավառների և բնույթի գործի կվերածվի՝ հիմք դառնալով նաև համահայկական կազմակերպական կառավարման նորատիպ, կենսունակ, հարատև կառույցի համար: Այսինքն՝ այդպիսի ընկալմամբ հայրենասերների կազմակերպմամբ հնարավոր կլինի աշխարհասփյուռ հայության կազմակերպական կառավարման համազգային (պետական) կառույցի ստեղծումն ու դրա հարատև կիրառումը: Նման կառույցի գործունեությունը սկիզբ կդնի համայն հայության բազմակողմանի և բազմաբնույթ կարողության և ներուժի մի կողմից անընդհատ մեծացման, մյուս կողմից՝ համապարփակ ու արդյունավետ կիրառման ազգային, պետական արդի և հեռագնա նպատակների իրագործման համար:

* * *

Հարկ է իմանալ, թե աշխարհում ո՞վ է հայը, ի՞նչ գիտե և ի՞նչ կարող է անել: Դրա հիման վրա հարկ կլինի բոլորի համար համապատասխան գործ ծրագրել, կազմակերպել, համադրել ու ղեկավարել այդ գործերն ու դրանց արդյունքների օգտագործումը: Էական է, որ այդ գործերի վարձատրումը լինի և ընկալվի նախևառաջ որպես հոգու պարտքի կատարում՝ Աստուծո հավատքով ու Հայ Ազգային Գաղափարախոսության գիտակցությամբ:

* * *

Ուշացած պահանջ է, որ հայության և Հայաստանի Հանրապետության տարբեր բնագավառների կենսական կարիքների բավարարման ու այդ գործընթացի առավել կատարելագործման ու արդյունավորման համար համազգային կարողությունների և ներուժի հայտնաբերման, գնահատման և

օգտագործման համար ստեղծվեն աշխատանքային խմբեր ու այդ ծրագրերի կիրառման միավորներ:

Այդ խնդրի կատարման համար հարկ է համահայկական ընդգրկումով հաշվարկել, քննարկել, նախագծել, եղածը լրացնել, ճշտել, կատարելագործել ու այդ նպատակով կազմակերպել առաջին «էշելոնի» համար ընտրվածներին:

* * *

Հավատքի և գաղափարի նպատակը կյանքի իմաստ-պարտականություն դարձնելը և պատվի գործ համարելը, դրանով հպարտանալը, դրան ձգտելը ու դա զանգվածային ձգտում դարձնելը ուժի և զորության հզոր աղբյուրներ են թե՛ ոգու, թե՛ մտքի և թե՛ ֆիզիկական ակտիվության:

Ուրեմն՝ պետք է հավատք, գաղափար և դրանցով բնորոշվող բարոյական նորմեր, կյանքի իմաստավորման չափանիշներ և կազմակերպական կառավարում:

Հավատքը՝ Ավետարանով և խաչով:

Գաղափարը՝ Ավետարանի և խաչի հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ:

Բարոյական նորմերը, կյանքի իմաստավորման չափանիշները և կազմակերպական կառավարումը՝ հավատքով, ՀԱԳ-ով ու նաև համազգային պետական կառույցով:

Չորեքշաբթի, 6-ը հունիսի, 2007 թ.,

Ժամը 12:30

ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Միասնական ազգը, այսինքն՝ միասնական ոգով, գիտակցությամբ, նպատակով և վերջինիս իրագործման համար մեկ ազգ լինելը, բնորոշվում է մեկ հավատքով և մեկ մշակույթով: Եվ սա հատկապես հայերիս պատմականորեն ճանաչված առանձնահատկություններից է: Սակայն ակնհայտ է, որ հայ ազգը մեկ՝ ընդհանրական մշակույթ չունի: Աշխարհատարած հայության մեծամասնության մշակույթն ավելի շատ համապատասխանում է նրա ապրած երկրների մշակույթին, և դա զնալով ավելի ցայտուն է դառնում նույնիսկ թուրքիայում ապրող հայության մեջ:

Իսկ հավա՞տքը: Ինչ վերաբերում է հավատքին, ապա եթե հայ մշակույթից դեռ մի բան մնացել է հայության հատվածների մեջ (և խոսքը ոչ թե ստամոքսի և ստամոքսո՞վ մշակույթի մասին է) ու աստիճանաբար նահանջում է՝ «նահանջ

առանց երգի», ապա հավատքը թե՛ արտերկրում և թե՛ Հայաստանում վաղուց շեղվել և տկարացել է, ու միայն վերջերս է կամաց-կամաց վերաճանաչվում ՀՀ-ում (այլ ոչ թե վերականգնվում), այն էլ ձևական կողմով, բնույթով...

Ուրե՞մն: Ուրեմն՝ այդ երկուսի՝ հավատքի և մշակույթի այդ վիճակում լինելու պատճառով վերոնշյալ իմաստով միասնական, մեկ ազգն էլ նույն վիճակում է...

Սա լավ չէ՞ հայ ժողովրդի, եկեղեցու, իշխանությունների, մտավորականության համար: Եթե իրապես գիտակցվում է, որ լավ չէ, ապա թող ժողովուրդը, հատկապես եկեղեցականները, մտավորականներն ու իշխանավորներն աշխատեն՝ չափեն, հաշվեն, հաշվարկեն և լուծում փնտրեն: Միայն թե հարկ է չնոռանալ, միշտ հիշել, որ լավագույն լուծումը սեփական կյանքի ապրումի Աստվածահաճո, դրական օրինակն է: Անկե՞ղծ ու իսկական օրինակը...

Կիրակի, 30-ը ապրիլի, 2008 թ.

ՎՍՏԱ՛Յ ԼԻՆԵՆՔ, ՈՐ ԼԱՅՆ ԴՈՒՌԸ ՆԵՂՈՒԹՅԱՆ ՉԻ ՏԱՆՈՒՄ

Հայաստանի քաղաքական միտքը կթելադրե՞ր ջանք կգործադրել Եվրամիության անդամ դառնալու ուղղությամբ, եթե նյութական օգուտներ և տարբեր քաղաքական հարմարություններ չակնկալեր:

Սակայն այդ հարցից այլ հարցեր էլ են առաջանում. իսկ ո՞րն է այդ նյութական օգուտը և արդյո՞ք այդ օգուտն ստանալու պայմանների կատարմամբ չեն առաջանա վնասակար հետևանքներ, որոնք չեզոքացնում, ի չիք են դարձնում այդ օգուտները և նույնիսկ վտանգում մեր գոյությունը: Չէ՞ որ արագ հայացքով իսկ ակնհայտ է դառնում, որ օգուտների դիմաց պարտադրվող պայմանների մեջ կան պահանջներ, որոնք սպառնում են արդեն իսկ մեր աղավաղված ինքնությունն ավելի ևս աղավաղել, այլասերել՝ հասցնելով... քայքայման, որով և՛ իսպառ կորստի:

Ուրեմն՝ ի՞նչ է ստացվում: Ստացվում է, որ Հայաստանի քաղաքական միտքը համակերպվո՞ւմ է իր ժողովրդի այլասերմանը, հետևապես և քայքայմա՞նը նյութական օգուտների և որոշ քաղաքական հարմարությունների դիմա՞ց: Այսինքն՝ ուրանում է իր ինքնությունը և ծախվում է (իր ժողովուրդն էլ հետը) նյութի համա՞ր, նյութականի դիմա՞ց:

Եթե դա դուրյզն չափով իսկ ճշմարիտ է, ապա մի՞թե դա չի նշանակում նյութապաշտություն ու նաև անբարոյականություն՝ անհավատությամբ, ուրացումով և դավաճանությամբ:

Եվ ի՞նչ կարելի է ակնկալել այդ հոգեբարոյական և գաղափարական

անկունից՝ բացի վատից. պատիժ՝ հետընթաց, դժվարություններ և... կործանում:

Երանի՛ թե սխալ լիներ Եվրամիությանն անդամակցության համար պահանջված պայմանների կատարման վնասակարության մասին վերոնշյալ ենթադրությունը: Բայց քանի որ, այնուամենայնիվ, ակնհայտ նշաններ և նույնիսկ տարբեր երկրներում կատարված փաստեր կան վնասների մասին, ապա առնվազն տրամաբանական է, որ մեր քաղաքական միտքը և մանավանդ պատկան մարմինները որոշեն, ծրագրեն ու աշխատեն մանրամասն քննել տվյալ էական նշանակության հարցը, որպեսզի ըստ այնմ, դրա հիման վրա՝ լինեն մեր պետական դիրքորոշումը և ջանքերն այդ ուղղությամբ:

Եվ եթե պարզվի, որ մեր անդամակցության համար, որին ձգտում ենք մենք, ծանր, կորստաբեր գին չենք վճարելու, այլ ընդհակառակը՝ մեծ օգուտներ ենք ստանալու, այդ դեպքում նշյալ վերլուծության ուսումնասիրության հիման վրա՝ ստացված օգտակարության մասին տվյալները թող պարզ, փափանցիկ ու հանրամատչելիորեն ներկայացվեն, որպեսզի ազգային ավելի լայն ընդգրկումով և բազմապատկված ջանքերով ձգտենք Եվրամիության անդամակցությանը: Մի բան, որն անելու համար ներուժը մենք ունենք թե՛ Հայաստանում և թե՛ արտերկրում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԳ

ՀԱՅ

ԱԶԳԱՅԻՆ

ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ

ՀԱՅՐԵՆԻՔԻ

ՉԱՐԳԱՑՈՒՄՆ ՈՒ ՉՈՐԱՑՈՒՄԸ

Սեպտեմբեր, 1986 թ.

ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայ Ազգային Գաղափարախոսության (ՀԱԳ) նշանակությունը Հայ Ազգի համար հույժ կենսական է նաև այն առումով, որ հայի կողմից ՀԱԳ-ի ճանաչմամբ, ընդունմամբ և կիրառմամբ, իր ազգի գոյապահպանման և զարգացման գործին ամենակտիվ և հարատևորեն մասնակցելու շահագրգռվածությունը նրա համար տիեզերական և հավիտենական չափանիշ ու իմաստ է ստանում:

Հայ Ազգի գոյության և բնականոն զարգացման համար անհրաժեշտ բոլոր բնագավառներում բազմակողմանի կարիքների բավարարումը բարդ խնդիր է: Այդ խնդիրը հայությանն է, և ինքն է պատասխանատու դրա կատարման համար: Սակայն անհնարին է դրա կատարումը ջանքերի այն չափով ու նաև որակով, որ ներդրել է և ներդնում է հայությունը: Այդ խնդիրը կատարելու համար հայությունն ունի անհրաժեշտ ներուժը, բայց չունի դրա գործադրման համար անհրաժեշտ մասշտաբի և որակի կազմակերպումը, չունի ցանկությունը, կամքը և ամենակարևորը՝ չունի անհրաժեշտ բարոյական և գաղափարական շահագրգռվածությունն ու խթանումը:

Այսօրվա վիճակով հայն իր ազգի գերագույն շահերին ու ազգի ապագային հարկ եղած չափով ծառայելու (և դրանով իր ու իր սերնդի ազգային բնականոն, պատվավոր գոյությունը ապահովելու) բավարար չափով ո՛չ շահագրգռվածությունն ունի, ո՛չ էլ պարտաճանաչությունն է զգում:

Ամենացավալին այն է, որ այս կենսական նշանակությամբ բացը լրացնելու ոչ միայն պատշաճ ձգտումն ու ջանքերն են բացակայում, այլև դրա մտածումն ու մտահոգությունը: Մինչդեռ հայ իրականության մեջ վաղուց ի վեր պետք է գոյություն ունենային պետական ու այլ կառույցներ, որոնք Հայ Ազգային Գաղափարախոսության հիման վրա հասարակության բոլոր խավերում, տարբեր ձևերով և միջոցներով կտանեին դաստիարակչական և կամ նյութականի ու բարոյականի դրական և բացասական խթանումներ առաջացնող աշխատանքներ:

Այս նպատակի գործնականացման շուրջ խոսակցությունը դեռ պետք է շարունակվի ու ամբողջացվի...

* * *

Ամեն ազգի մեջ կա լավը և վատը: Սակայն հայության համար էական հարց է, թե իր ո՞ր տոկոսն է լավը և ո՞րը՝ վատ: Ո՞ր տոկոսն է գաղափարապաշտ և ո՞ր տոկոսը՝ գաղափարագուրկ, դատարկ: Եվ այսպես շարունակ, և ի վերջո, ո՞ր տոկոսն է «տղամարդ», ո՞ր տոկոսը՝ «պիժոն», ու անկախ նրանից, թե հայ երիտասարդության մեջ վատերի, «պիժոնների» տոկոսը բարձր է կամ ցածր, դարձյալ կարևոր հարց է ծագում, թե այդ դեպքում ինչո՞ւ, ի՞նչ

պատճառով է դա այդպես և ի՞նչ պետք է անել, որ խեղճ հայ երիտասարդները, գաղափարագրկության հետևանքով և քաղքենիաբար բանակից խուսափելով, «նայթ» կլուբներում չմոլորվեն, իրենց ունևոր ծնողների ուղղակի կամ անուղղակի հովանավորությամբ չտարվեն: Չէ՞ որ մեր երիտասարդների նույնիսկ մեկ-երկուսն էլ ափսոս են: Քանի որ նրանք էլ հայկյան են...

Ո՞վ, ովքե՞ր, ի՞նչ խարդախ ու նենգ դավադրությամբ են նրանց վարակում. դա պետք է բացահայտվի:

Բա՛ց աչքերդ, հայ: Տե՛ր Աստված, օգնի՛ր մեզ...

ՃԳՆԱԺԱՍ

Եթե մեր հայրենիքի պատշաճ արագությանը և մասշտաբով զարգացումն ապահովելու համար հարկ է ճգնաժամային աստիճանի դժվարություններ հաղթահարվեն, ապա գործնական հարց է առաջանում. միայն Հայաստանի՞ ճգնաժամ, թե՞ ամբողջ հայության, նյութականի՞ ճգնաժամ, թե՞ հոգևորի, բարոյականի՞, գաղափարի ու ազգային նկարագրի՞ ճգնաժամ:

Այս հարցերի ճիշտ ու շուտափույթ պատասխանից է կախված, թե ինչ հաջողությամբ ենք կարողանալու իրագործել Հայաստանում (նոր ու հին պատճառներով) առաջացած տարբեր բնագավառների ճգնաժամային իրավիճակների վերացումը: Այդ թվում՝ Հայաստանի քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական, մշակութային, առողջապահական ու այլ ճգնաժամային աստիճանի խնդիրների լուծումը:

Ոչ շատ հեռու անցյալում Հայաստանի պաշտոնական և որոշ չափով նաև այլ շրջանակների բացատրություններում, ընդհանուր առմամբ, Հայաստանի ճգնաժամային իրավիճակի պատճառը համարվում էր ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով առաջացած տնտեսության կազմալուծումը և Ղարաբաղի ազատագրական պայքարի պատճառով շրջափակումը: Դժբախտաբար, այդ տեսակետից դեռ լրիվ չենք ձերբազատվել: Մեր կարծիքով, սակայն, պատճառները դրանք չեն: Տնտեսության կազմալուծումը և շրջափակումը, հատկապես վերջինիս այսքան երկար շարունակումը և դեռ շատ այլ կարևոր խնդիրներ պատճառներ չեն, դրանք, ավելի շուտ, հետևանքներն են: Բուն պատճառը հայ ազգի գաղափարականության, ազգային ինքնագիտակցության, նկարագրի և բարոյական արժեքների նվազումն է, անկումն է, որն առաջացնում է ազգային, քաղաքական, հասարակական արդյունավետ ակտիվության և պետական կազմակերպական կառավարման անկարողություն՝ լրիվ և լիարժեք օգտագործելու համայն հայության բազմակողմանի և բազմաբնույթ կարողությունն ու ներուժը:

1990-ական թվականներից տիրող և լայն տարածում ստացած այն տեսակետը, թե ՀՀ ճգնաժամային դժվարությունների վերացման միջոցը արտասահմանյան վարկերի ստացումը, օգնությունը և կապիտալի ներդրում-

ներն են, մեր ըմբռնմամբ, նախ այնքան էլ ճիշտ չէր և, վերջին հաշվով, ապակողմնորոշող ու վնասակար էր: Վնասակար էր, որովհետև հայ ժողովրդի և պետության ուշադրությունն ու ջանքերը կենտրոնացնելով ճգնաժամի վերացման, լավագույն դեպքում, այդ կիսամիջոցների վրա՝ ազգը թանկագին ժամանակ էր կորցնում, հուսախաբվում ու հուսալքվում էր, և ճգնաժամի վերացման խնդիրն ավելի էր դժվարանում:

Դժվարությունը խորանում էր նաև նրանով, որ գնալով նվազում էր ազգի ինքնավստահությունը, դատարկվում էր երկիրը, ավելի շատ էր փոշիանում, արժեզրկվում ՀՀ արդյունաբերական, ներառյալ՝ գիտական, տեխնոլոգիական և մասնագիտական ներուժը և, որ ոչ նվազ կարևոր է, արժեզրկվում էր ՀՀ ու հայության միջազգային քաղաքական և բարոյական վարկն ու հեղինակությունը:

Հայաստանի Հանրապետության ֆինանսատնտեսական և դրան առնչվող հասարակական, առողջապահական, կրթամշակութային ու այլ բնագավառների դեռևս առկա որևէ չափի ճգնաժամային վիճակը վերացնելու համար անհրաժեշտ պայման է վերացնել Հայաստանի ու համայն հայության հավատամքի, ազգային գաղափարականության, ինքնագիտակցության, նկարագրի և բարոյականության ճգնաժամը:

Առաջին ճգնաժամի հիմքում ֆինանսատնտեսականն է, երկրորդի հիմքում՝ հոգեբարոյականը և գաղափարականը: Առաջին ճգնաժամի վերացումը պայմանավորված է երկրորդի վերացմամբ:

Առաջին հայացքից թեև թվում է, թե ճգնաժամի պատճառը ֆինանսատնտեսականն է, սակայն ուշադիր և որոշակի պատմական չափանիշներով մոտենալիս տեսնում ենք, որ պատճառը հոգեբարոյական և գաղափարական է: Երկրորդի՝ հոգեբարոյական և գաղափարական ճգնաժամի վերացմամբ առաջինի՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական ու հարակից մյուս բնագավառների ճգնաժամի վերացումը ժամանակի հարց կլինի միայն: Առաջինի վերացման արագությունը, ծավալը և որակը կախված են երկրորդի վերացման արագությունից, ծավալից և որակից:

Միաժամանակ՝ երկրորդի վերացումը, ի տարբերություն առաջինի, կախված է Հայաստանից ու հայությունից միայն: Այդ ճգնաժամային վիճակի հիմնական լուծումը պայմանավորված է ոչ թե օտար վարկերով, օգնությամբ և նույնիսկ կապիտալի ներդրումներով (որը վերջին հաշվով սահմանափակ միջոց է և կարող է նաև վտանգել մեր պետական անկախությունը և խաթարել մեր նարդկային-ազգային ինքնությունը), այլ իրական, իսկական Հայ Ազգային Գաղափարախոսությամբ (ՀԱԳ)*:

Ծնարիտ տոհմիկ, հարազատ ու փորձված ՀԱԳ-ի ճանաչումը, ընդունումը և դրա չափանիշներով ապրելը որքան արագ, կատարյալ ու համընդհանուր

* Տես այս գրքի էջ 23-31

դառնա հայ իրականության մեջ, հայ պետական ու հասարակական կյանքում, այնքան շուտ, հիմնավոր ու համապարփակորեն կլուծվեն թե՛ Հայաստանի և թե՛ համայն հայության ամեն տեսակ ճգնաժամային և ընդհանրապես ազգային բնականոն կյանքը խոչընդոտող խնդիրները: Հայաստանն իր զարգացման տեմպերով կհասնի աշխարհում ամենաբարձր նվաճումների մակարդակին, և հայությունը կիրականացնի իր ամենամվիրական իղծերը:

Այս հաստատումը հիմնված է մեր նախնիների դավանած հավատքից բխող և դրա վրա խարսխված ՀԱԳ-ի վրա:

Դա նշանակում է, որ Աստված մեր փրկությունը, մեր ապահովությունն ու բարեկեցությունը մեր ձեռքն է տվել: Սեզնից է կախված մեր ճակատագիրը, մեր բախտը: Հոյակապ հնարավորություն:

Հավատա՛ և կփրկվես:

Ահա դրոշը վերելքի: Ո՞վ է բարձրացնելու այն: Ո՞ւմ պարտականությունն է այդ: Ո՞ւմ նայենք, ո՞ւմ հետևենք...

Կիրակի, 16-ը օգոստոսի, 1998 թ.

ՀՈԳԵԲԱՐՈՅԱԿԱՆ ԶԱՐԿԵՐԱԿԻ ԶԳԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ

Ազգի ու Հայրենիքի խնդիրները ճիշտ հասկանալու, ճիշտ գնահատելու և ըստ այնմ լուծումներ գտնելու համար անհրաժեշտ է վերլուծել ու հասկանալ հայության մեջ և Հայաստանում գոյություն ունեցող հոգևոր, գաղափարական, բարոյական և դրանցից բխող սոցիալական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային և հասարակական հարաբերությունների վիճակը: Գնահատել դրանց ճիշտն ու սխալը, դրականն ու բացասականը, օգուտն ու վնասը, առաջացման պատճառները, պայմանները և քրիստոնեական հավատքի հիման վրա առաջարկել լուծումներ:

Աստուծո հավատքը, Քրիստոսի Ավետարանի գիտությամբ ու խաչի խորհրդով ապրված մեր նախնիների կյանքը, նրանց՝ մեզ ժառանգություն թողած վարքն ու խոսքը հզորագույն և միակ միջոցը, միակ ուժն ու իմաստությունն են, որ կարող են մեզ պարզել, հասկացնել, ուղի նշել՝ լուծելու մեր բոլոր խնդիրները և միաժամանակ արդար, ճիշտ ու արագ բուժելու մեր ազգային-հասարակական և կենցաղային ու անհատական ախտերը:

Աստուծո հավատը՝ Քրիստոսի Ավետարանով և խաչով, ու նրանից բխող և նրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունը և մեր նախնյաց վարքն ու խոսքը պետք է դառնան հայ հասարակության, հայ մարդու, որտեղ էլ նա գտնվի, և մանավանդ նոր սերնդի ուսման, կրթության, դաստիարակության, աշխարհայացքի, բարոյական արժեքների չափանիշների և կյանքի տարբեր

բնագավառներում կողմնորոշման ու վերաբերմունքի հիմքը: Դա պետք է դառնա հիմքը ու նաև փարոսը, մանավանդ, հայ եկեղեցականի, ղեկավար, պատասխանատու աշխատողի և մտավորականի: Այս խավերի էության, կարողության և գործունեության գնահատման չափանիշը պետք է դառնա նրանց կյանքում այդ հիմքի և կողմնորոշման հարատև առկայությունը, հաստատությունը և գործնական կիրառելիությունը:

Ո՞վ պետք է սկսի, ե՞րբ պետք է սկսի այդ հիմքի վերականգնման և դրա վրա հայ կյանքի ապրումի վերակերտման գործընթացի կազմակերպական կառավարումը: Առաջին և մեծագույն պատասխանատուն էջմիածինն է, և նրա հետ մեկտեղ հաջորդ մեծագույն պատասխանատուն հայոց պետությունն ու պետականությունն է՝ ներառելով կաթողիկոսներ, եպիսկոպոսներ, քահանաներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության նախագահ, վարչապետ ու նախարարներ, Ազգային ժողովի նախագահ ու երեսփոխաններ, դատաիրավական համակարգի պաշտոնեություն, զինվորականություն և համայն պետական պաշտոնեություն: Հատուկ պատասխանատվություն են կրում ազգային ակադեմիական-գիտական համակարգի ներկայացուցիչները, բուհերի ղեկավարներն ու դասախոսները, դպրոցների ուսուցիչները, գրողները, մշակույթի բոլոր գործիչները, լրագրողներն ու ամբողջ մտավորականությունը, ինչպես և կուսակցական ու հասարակական գործիչները:

Պատասխանատվություն՝ ազգի, մարդկության ու Աստուծո առաջ:

* * *

Այսօր ՀՀ-ում, ըստ երևույթին, շատ ավելի դեղորայք է գործածվում, քան երբևէ, բայց արդյո՞ք ավելի առողջ ենք:

Հայությունը երբեք այսքան ուսյալներ չի ունեցել, բայց արդյո՞ք ավելի իմաստնացած ենք:

Եվ հայության մեջ երբեք այսքան հարուստ չի եղել, բայց ազգն ու հայրենիքը ինչո՞ւ են աղքատ...

Հուսո արևը չպետք է թողնել, որ խավարի, որպեսզի հայ կյանքը չխամրի: Հավերժական պետք է լինի հույսը՝ Աստուծո հավատքով, Քրիստոսանվեր Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, ըստ այնմ՝ բարոյական նորմերով և դրանցից առաջացած նախնյաց վարքով:

ՎԻՃԱԿԻ ՊԱՏՃԱՌ ԵՎ ՀԵՏԵՎԱԼՔ

...Ըստ երևույթին, մենք, բայց ամենակարևորը՝ մեր ղեկավարությունը, այլ կերպ ենք հասկանում մեր դարավոր պատմությունը և հարկ եղած դասերը չենք քաղում դրանից: Ելնելով մեր ընթացքից՝ ակնհայտ է, որ մենք լավ չենք հասկացել ո՛չ մեր վերելքի, ո՛չ էլ անկման պատճառները:

Հայոց՝ առնվազն նորագույն պատմության օտարազգի մեկնաբանությունները հիմնականում վերապահ և կամ անիրազեկ են: Հայ իրականության մեջ մեկնաբանությունները մեծ մասամբ կուսակցականացած, քաղաքականացած, սեկուլյարացած և կամ «բայֆայականացած» են: Հայոց նորագույն շրջանի պատմագիտությունը դեռ պետք է կայանա...

Միաժամանակ նույն և դեռ ավելի անմխիթար է հայրենիքի դարավոր ստրկացման, ազգի պետականագրկման, իշխանագրկման, հարստահարման, կեղեքումների, ջարդերի ու, ի վերջո, եղեռնի և զանգվածային աքսորի ու երկրի կորստի և մեր սփյուռքացման պատճառահետևանքային, բայց հատկապես պատճառի իմաստով մեկնաբանումը՝ համաձայն մեր հավատքի գիտության: Այդ փաստերն իրենց լրիվ ու ճշգրիտ բացատրությունը տակավին չեն ստացել: Նույնը վերաբերում է նաև անկախության ժամանակաշրջանին: Ինչո՞ւ:

Որովհետև մեր ազգային միտքը և գիտակցությունը, հատկապես վերջին մեկուկես հարյուրամյակում, աստիճանաբար դադարել է հավատքից և դրանից բխող ու դրա վրա հիմնված գաղափարից սնվել: Դրա փոխարեն հարաճունորեն սնվում է նյութապաշտական, սեկուլյար և քաղքենիական (բացասական իմաստով) գաղափարներից: Եվ ըստ այնմ կողմնակալորեն էլ մոտենում է մեր պատմությանը կամ ընդհանրապես չի մոտենում...

* * *

Ազգօգուտ անհրաժեշտություն է, որ Սովսես Խորենացին ու նրա դպրոցը դարձյալ տիրեն հայ պատմագիտության անդաստանում: Մեր ամբողջ մշակույթը, գրականությունն ու կրթությունն այդ պատմության լույսի տակ պետք է վերագնահատվեն ու վերականգնվեն: Որոշակի իմաստով և կերպով նույնը պետք է անենք մեր ազգային և պետական ներքին ու արտաքին քաղաքականության մշակման և կիրառման պարագայում: Հայության ներկայիս ու ապագայի աշխարհայացքը, մարդկային կյանքի և մանավանդ ազգային կյանքի ըմբռնումը պետք է լինի խորենացիների պատմության՝ քրիստոնեական հավատքի և դրանից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային

Գաղափարախոսության հիմունքներով ու մեկնաբանությամբ:

Եվ այդ բոլորը պետք է առաջին հերթին դրոշմվեն հայոց հոգևոր ու աշխարհիկ իշխանությունների կառույցների գիտակցության մեջ ու արտահայտվեն նրանց ծրագրերում, վարքում, արարքներում և գործունեության մեջ: Հայ ղեկավար և պատասխանատու պաշտոնների համար ընտրության գլխավոր չափանիշը պետք է դառնա այդ պատմության մեկնաբանությամբ ճանաչվող, մեր քրիստոնեական հավատքից բխող և նրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության ըմբռնումն ու այն ընդունելու և տարբեր բնագավառներում կիրառելու ցանկության ու կարողության աստիճանը:

Այս խնդրի իրագործման համար կարևոր է, որ մեր համապատասխան հաստատություններն ամեն ջանք գործադրեն, որպեսզի այն, բացի կրթական համակարգում ներառվելը, ստեղծվի նաև (ինչ-որ իմաստով՝ վերաստեղծվի) Խորենացու ուսումնասիրման, մեկնաբանման և զանգվածային ուսուցման համապատասխանաբար կազմակերպված և գործող արդիական դպրոց-հաստատությունը:

Կենսական է, որ այդ դպրոցի գործունեության արդյունքը, որպես ուսմունք, մաս կազմի ազգային ինքնաճանաչման ու ինքնագիտակցության շաղախի, որ կստեղծվի մեր 1700-ամյա հոգեկերտվածքի վերականգնմամբ: Դա այն շաղախն է, որն ամուր, կանգուն և կենսունակ կպահի հայոց ազգն ու պետականությունը:

Այդ դպրոցի տեսությունը և գործունեությունը պետք է նպաստեն ազգային տոհմիկ կերպարի և գաղափարների այժմեական ըմբռնմանը, քանզի հայոց պատմության ճշմարիտ ճանաչման ու հասկացման պակասը տկարացրել է, իսկ նրա նենգափոխումը ախտահարել է ազգային տոհմիկ կերպարն ու անլացրել է ազգային գաղափարների դաշտը՝ աճեցնելով այնտեղ որոն:

Այսօր Հայաստանն անկախ է, իբրև թե ազատված է «իզմերի» մի մասի բռնավարակից: Ու թեև Սփյուռքը մեծ մասամբ դուրս էր դրանից, բայց ազգային հոգեբարոյականությունը, գաղափարականությունը և ըստ այնմ՝ ազգային գաղափարների և բարոյական արժեքների պահպանման ու աճեցման դաշտը, այնուամենայնիվ, ազատ չեն: Ազգային ոգին ու հավատամքը չեն տիրում այնտեղ: Ազգային ոգին ու հավատամքը հայ կյանքի իրականության մեջ պատշաճ տեղ չունեն, տիրական չեն, այլ մեծ չափով դեռ մեկուսացված են մնում, եթե իսպառ վանված չեն առնվազն նրա մեծ մասից...

Խորհրդային կայսրության քայքայումը, կազմալուծումն ու կործանումը (որոնց ակնհայտ գործընթացը տևեց առնվազն քսանհինգ տարի) պատմական հնարավորություն տվեցին հայությանը գո՛նե այդ ժամանակամիջոցում նախապատրաստվելու, որ 1991 թվականին կարողանար իրապե՛ս ազատ, ավելի՛ մեծ չափով անկախ, կենսունակ, կայուն, հաստատուն, ապահով, զարգացող ու արագ բարգավաճող պետություն ստեղծել: Պետություն, որն ունենար

աշխարհով մեկ ազգային բարձր ինքնագիտակցությամբ կազմակերպված և քաղաքացիական ինքնաբուխ պարտաճանաչությամբ պատրաստական շուրջ տասը միլիոն քաղաքացի (որի մոտ կեսն անմիջականորեն Հայաստանում ապրող), որ բարձր մակարդակով ու արագ տեմպերով կառուցում է հայրենի երկիրը: Չունեցանք դրա համար անհրաժեշտ գաղափարը, գիտակցությունը, նախապատրաստումը, կազմակերպական կառավարումը... Եվ...

Այդ պատմական հնարավորությունը կորավ: Այն մենք կորցրինք, ոչ ոք չխլեց մեզանից: Մենք բաց թողեցինք, մենք՝ մեր արածներով ու չարածներով, պատճառ դարձանք մեր՝ համայն հայության ազգային շահերի ընկրկման ու ազգային հույզերի խափանման և հատկապես Հայաստանի ու նաև ամբողջ կովկասահայության տառապանքների, զոհերի և վնասների: Եվ փոխանակ կովկասահայությանը համայն հայությամբ պատշաճորեն՝ մարդավարի, հայավարի, քրիստոնեավայել և պետականավայել վերաբերմունք ցուցաբերելու՝ պաշտպանելու նրանց կյանքը, ինչքն ու պատիվը, իսկ հարկ եղած դեպքում նաև պատսպարելու և համախմբելու մեր երկրում, մենք էլ գաղթական դարձրինք նրանց ու նաև՝ Հայաստանի հիմնականում կենսունակ տարրի զգալի մասին...

Պատճառները տարբեր են, սակայն հիմնական պատճառն այն էր (և է՛), որ Ազգային Գաղափարախոսությունը մոռացված կամ ուրացված էր: Ավելին, մեր Ազգային հավատամքից բխող և նրա վրա հիմնվող՝ Ազգի Գաղափարները սնուցող և կյանքի կոչող դաշտն ախտահարված, ամլացած էր թշնամու ցանած որոմով և մեր սեփական փուշ ու տատասկով:

Իսկ հիմա՞: Մտածո՞ւմ ենք մաքրել այդ դաշտը և հարազատ, առողջ, կենսունակ սերմ ցանել այնտեղ՝ մեզ համար և նոր սերնդի...

Այլապես ո՞ւմ, ինչի՞ վրա է հույսներս՝ օտարի՞, մեր խելքի՞, մեր ուժի՞, գուցե հրաշքի՞: Այո՛, հրաշքի, ըստ երևույթին, մեր իրավիճակի համար միակ իրապաշտականն այդ է: Բայց այդ դեպքում նույնքան իրապաշտական հարց է առաջանում. նախ՝ ո՞վ է ի զորու հրաշք գործելու, և երկրորդ՝ ինչո՞ւ պիտի գործի այդ հրաշքը: Մի՞թե մենք արժանի ենք դրան: Եվ ի՞նչ է պահանջվում մեզնից՝ այդ հրաշքին արժանանալու համար...

Տարբեր երկրների պաշտոնատարներ, միջնորդներ, գործարարներ, բանկերի ներկայացուցիչներ և այլն, և այլն, մեր այս կամ այն խնդրանքը կամ առաջարկը կատարելու համար պայմաններ ու պահանջներ են դնում, այդ թվում՝ ի՛նչ ծախսենք, ո՛ւմ ծախսենք, ինչպե՛ս ու ե՛րբ ծախսենք, ի՛նչ օրենքներ ընդունենք, ի՛նչը թույլատրենք, ի՛նչը՝ ո՛չ, անկախ նրանից, թե դա մեր ազգային հավատամքին, հոգեմտավոր կերտվածքին, բարոյական արժեքներին, ավանդույթներին հարի՞ր է, և կամ ազգային շահերին համապատասխանո՞ւմ է, թե՞ ոչ:

Եվ դա մենք հասկանո՞ւմ ենք, ըմբռնումով ենք մոտենում՝ հաճախ և

չուզենալով: Բայց դարձյալ հարց. եթե մի քանի տասնյակ միլիոն դոլար պարտք կամ ողորմություն ստանալու կամ որևէ կազմակերպության անդամ ընդունվելու համար պայմանները, պահանջները (գուցե նաև դեռ գաղտնի պայմաններ ու պահանջներ) ընդունելն ու կատարելը մենք հասկանում ենք և ենթարկվում ենք, ապա մեր անձնական, ազգովի ու երկրի համընդհանուր բարելավման համար անկումային վիճակից դուրս գալու (մասնավորապես Չայաստանի բոլոր բնագավառներում՝ անվտանգություն, տնտեսություն, առողջապահություն, կրթություն, մշակույթ ու, ամենաեականը, ազգային և մարդկային ինքնության, արժանապատվության և հոգևոր ու բարոյական ապրումի բնագավառներում) և մեր երաշխավորված հարատև վերելքն ապահովելու համար մի՞թե չարժեք, որ մեր պետական, հասարակական, գիտական, մտավորական ու առաջին հերթին՝ հոգևորական միտքը խղճով և գիտակցությամբ անհապաղ ջանար պատասխանել, թե մեր առաջ դրվող պայմաններն ինչքանով են համապատասխանում մեր դավանած հավատամքին:

Որպես քրիստոնյա ազգ, այն էլ պետականորեն առաջինը, ի՞նչ է պահանջվում, որ մենք՝ որպես անհատ, ընտանիք, ազգ և պետություն, կատարենք կամ չկատարենք, որպեսզի արժանանանք այդ հրաշքանման օգնությանը և չկորչենք, փրկվենք ու հարատև բարգավաճում ապրենք՝ ՀԱՎԱՏՔԻ ԻՄԱՍՏԱՆԻՑ ԿՅԱՆՔՈՎ:

Եվ մի հարց ևս. եթե այդ պատասխանը դժվարանում ենք ստանալ, այն չի՞ տրվում, մի՞թե պետք չէր, որ հայ ազգի՝ պետականորեն առաջինը քրիստոնեանալու 1700-ամյա հոբելյանի տոնակատարությունը հիմնականում ներառեր այդ ոգով և շնորհով համազգային և պետականորեն թե՛ ապաշխարության և գովաբանության աղոթք և թե՛ նոր որակի աշխատանքի ու ապրումի խոստում՝ ուխտ՝ ստանալու համար այդ Պատասխանը...

Ո՞վ, ովքե՞ր պետք է զբաղվեն այս հարցերով: Կարծես թե բոլորս շատ զբաղված ենք...

Ինչո՞վ...

Աստված օգնի...

30-ը հուլիսի, 1999 թ.

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

Հետսառը պատերազմյան (1946-1991թթ.) գլխավոր երևույթներից մեկը, ըստ երևույթին, մարդու (ինչպես և ազգերի) իրավունքների ըմբռնման մեջ կատարված որոշակի փոփոխությունն է, հատկապես արևմտյան երկրներում:

Եթե սառը պատերազմի ընթացքում ավելի շատ շեշտը դրվում էր խոսքի և մամուլի ազատության, ազատ ընտրությունների, հավաքների և նման իրավունքների ապահովման վրա, ապա այժմ շատ երկրներում մարդու

իրավունքների խնդիրն ավելի շատ դիտվում է աշխատանքի առկայության, աշխատանքային կեցության պայմանների բարելավման և կենսամակարդակի ռեալ ու հարաճուն աճի ապահովման տեսանկյունից:

Տարբեր երկրների բազմաթիվ ընկերաբանների, տնտեսագետների և քաղաքագետների մեկնաբանությունների համաձայն՝ մասնավորապես նախկին խորհրդային հանրապետությունների ու Արևելյան Եվրոպայի շատ աշխատավորներ համարում են, որ ժամանակին կամայաբար, առանց հասարակական վերահսկողության գործող կոմիսարներին, իսկ հետո՝ ավելի հղկված ապարատչիկներին այժմ փոխարինում են չկարգավորվող կապիտալիստները՝ աշխատավորության մարդու այդ իրավունքները չեզոքացնելու միտումներով, ջանքերով:

Մինչ սույն նորաթուխ կապիտալիստները ձգտում են նվազագույն աշխատավարձով ու աշխատանքային սոցիալ-կենցաղային նվազագույն պայմաններով և համարյա առանց աշխատանքային ապահովման երաշխիքի առավելագույն ծառայությունն ստանալ, շատ աշխատավորների համար «ազատ» ձեռներեցության այդ ձեռնարկությունների վարմունքն ավելի սպառնալից է իրենց մարդկային արժանապատվության, քաղաքացիական իրավունքների ու իրենց ընտանիքների ապրուստի ու ապագայի համար, քան թե սառը պատերազմի ժամանակ մուրճ ու մանգաղի խորհրդանիշով կատարվածը...

Այս երևույթը հայերիս համար կարևոր է նրանով, որ ինչ-որ չափով ու ձևով այն առկա է նաև Հայաստանում: Եվ այդ առումով, ինչքան իշխանություններն ու գործարարները ջանում են զարգացնել ազատ շուկայական տնտեսությունը (անհրաժեշտ լավ ձգտում), առանց խուսափելու, սակայն, վերոհիշյալ երևույթի այս կամ այն չափով ու ձևով կրկնությունից, այնքան խորանում է այդ բացասական երևույթի հայաստանյան տարբերակը: Արդյունքը՝ աշխատավորության, որպես այդպիսին, օտարացում, չեզոքացում, տարրալուծում, արժանապատվության վիրավորում դասակարգային անարդարության զգացումով, հասարակության անառողջ բևեռացում, երկրի զարգացման անկենսունակություն՝ իր բոլոր հետևանքներով և, վերջին հաշվով, Ազգի ու երկրի զարգացման արգելքների խորացում:

Այս իրադրության վնասակար ընթացքի կասեցմանը և հայ ազգի ու Հայաստանի վերելքին էապես օգնելու համար, ամեն ինչից բացի, Ազգի մեջ ու Հայրենիքում և, մասնավորապես, պետություն-ազգ, իշխանություն-ժողովուրդ հարաբերություններն իրենց անկեղծությամբ, ազնվությամբ, արդարությամբ, մարդասիրությամբ և մանավանդ հարգանքով ու հարազատությամբ պետք է լինեն մարդկության լավագույններից: Եթե ոչ լավագույնը...

Իսկ այդ հարաբերությունները կենսականորեն անհրաժեշտ մակարդակի հասցնելուն ոչ մի արտաքին ուժ չի՝ կարող օգնել, ընդհակառակը: Ոչ էլ որևէ

համաշխարհային բանկ կամ մեծահարուստ բարերար կարող է այդ խնդիրը կատարել: Դրա համար կա միայն մի իրական հնարավորություն. հայությունն ինքը պետք է փոխվի՝ սկսած ղեկավար, գործարար և մտավորական խավից (եթե բառիս բուն իմաստով վերջինս դեռ մնացել է, ապա հատուկ պատասխանատվություն է կրում):

Այնուամենայնիվ, դատելով ՀՀ-ում գոյություն ունեցող ընդհանուր մտայնությունից, երկրի վերոհիշյալ ու այլ անառողջ վիճակներից դուրս գալու հիմնական միջոցը, որն առաջին հայացքից էլ երևում է, ՀՀ տնտեսական զարգացումն ու սոցիալ-տնտեսական վերելքն է, ինչպես նաև սրանց հարակից բնագավառներում առաջադիմությունը, որը և շատ ճիշտ է: Բայց... Այդ ճիշտ եզրակացությունը ոչ մի օգուտ չի բերի, եթե չտեսնենք այդ իրավիճակների բարեփոխման օրգանական կապակցվածությունը և նաև օրգանական կախումն Ազգի Գաղափարախոսությունից, բարոյականությունից, նկարագրից, ազգային ինքնագիտակցությունից և քաղաքական մշակույթից, իսկ այս բոլորը՝ ՀԱՎԱՏԱՄՔԻՑ:

Այսինքն՝ թե ինչի՞ն և ինչքանով է հավատում ազգը, նրա ավագանին և պետությունը, և ինչպե՞ս ու ինչքանով է այդ հավատամքը ապրում դառնում անձնական, հասարակական և պետական կյանքում...

Եվ մինչ տվյալ վիճակի բարելավման աշխատանքային ծրագրերի ստեղծմանն անդրադառնալը, դիտենք այդ իրավիճակի ստեղծման որոշ հանգամանքներ:

Հայությունն իր բազմադարյան գոյության ընթացքում երբեք այնքան գրագետ չի եղել, որքան այժմ, բայց նաև երբեք այնքան անգրագետ չի եղել ինքնաճանաչման իմաստով: Մասնավորապես ճանաչելու (էլ չասած՝ նաև ընդունելու և կիրառելու պարտաճանաչություն, պատրաստակամություն և պայմաններ ունենալը) իր հայրերի հավատամքը, դավանած արժեքները, աշխարհայացքը և վերաբերմունքն ազգային կյանքի, հայրենիքի և ընդհանրապես հայկականության նկատմամբ:

Հայությունը երբեք այնքան անհավատ չի եղել, ինչպես հիմա՝ մե՛ր սերնդի ընթացքում: Նա նաև երբեք այնքան անհաղորդ չի եղել իր քրիստոնեական հավատքից բխող հոգևոր իմաստությանը, գիտությանը և իր հոգևոր արժեքների ու հոգևոր կյանքի իմաստին: Պատմական ոչ շատ վաղ անցյալում՝ մինչև խորհրդայնացումը, հայությունը մեծ մասամբ հաստատակամորեն հավատացել է իր Աստվածաշնորհի քրիստոնեական հավատքի հույսով գերերաշխավորված հավիտենական կյանքին Աստուծո Արքայությունում: Հայն ընդհանուր առմամբ իրեն ընտրված, կոչված և վստահված է համարել՝ ապրելու համար Աստվածապատվեր ու Աստվածահաճո կյանքով՝ որպես իր երկրային գոյության գլխավոր, հիմնական և էական իմաստ:

Դրա համար նա պատրաստակամորեն վճարել է պահանջված երկրային գինը, սակայն երբեք սակարկության չի դրել երկնայինը՝ Յոգին: Նա եղել է առավել հավատացյալ, առաքինի, բարոյական, գաղափարական, գթասիրտ, ազնիվ ու իր խոսքի տերը, քան մենք կարող ենք այսօր պատկերացնել:

Այդ նա սովորել է իր հոգևորականներից, մտավորականներից, ազգի առաջնորդներից և իր ծնողներից: Սովորել է նրանց պատգամներից ու հատկապես գործերից, նրանց ապրած կյանքի օրինակից:

Հայր երբեք այնքան գաղափարազուրկ չի եղել, ինչպիսին այժմ է: Թեև հայության մի մասը (հատկապես ուսյալ) իր հավատքից բխող մարդկային-ազգային գաղափարից արագորեն սկսեց շեղվել, հեռանալ դեռ 19-րդ դարավերջից, սակայն զոնե օտարոտի և հաճախ նաև արհեստական թերարժեք գաղափարներ, այնուամենայնիվ, որդեգրեց և դրանցով այս կամ այն չափով ապրեց: Նման նյութապաշտ գաղափարազրկություն, ինչպիսին այժմ է հայության մեջ և Հայաստանում, դժվար է գտնել մեր ազգի բազմադարյան գոյության պատմության մեջ:

Գոյություն ունեցող և դժբախտաբար հարածունորեն տարածվող ներկայիս գռեհիկ նյութապաշտությունը և քաղքենիությունը, ըստ երևույթին, նույնիսկ օտարոտի կամ արհեստական թերարժեք գաղափար իսկ չի կարելի անվանել: Դա ոչ թե գաղափար, այլ կեղծ ազգային տարբեր երանգներով համամարդկային մոլություն է: Ավելին՝ ախտ է:

Թվում է, թե ներկայիս նյութապաշտությունն ու քաղքենիությունը տարբեր անհատների, հասարակությունների և մարդկության զոնե մի մասին հարստացնում է նյութապես, ինչպես նաև ուսումով, մշակությամբ և տարբեր ազատություններով, սակայն իրականության մեջ և վերջին հաշվով՝ աղքատացնում, սնանկացնում է թե՛ նրանց և թե՛ ամբողջ մարդկությանը այդ բոլոր հատկանիշներով և մանավանդ՝ հոգեպես, բարոյապես և դրանցից բխող գաղափարականությանը և սկզբունքայնությամբ: Թվում է, թե այն կառուցողական է, շինում է, բայց իրականության մեջ և վերջին հաշվով կործանում է, ոչնչացնում է, որը, սակայն, չի կարող երկար շարունակվել...

Որպեսզի հայությունն ու Հայաստանը իրապես առաջադիմեն ու ամեն ինչում վերելք ապրեն, որպեսզի պաշտպանվեն, ապահով լինեն, զարգանան, բարգավաճեն ու ապրեն իմաստալից, արժանավայել և հայրենի կյանքով, պետք է վերափոխվեն: Պետք է վերակերտվեն ու ապրեն իրենց տոհմիկ կերպարով, հավատամքով, գաղափարով և դրանցից բխող հոգեբարոյական արժեքներով՝ միշտ, ամենուր, ամեն ինչում: Որը նաև հօգուտ մարդկության է:

Աստուծո օգնությամբ:

Հոկտեմբեր, 1999 թ.

ԱԶԳԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԵԼՔԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

21-րդ դարի շեմին հայության գոյության պահպանման, զարգացման ու ՀՀ անվտանգության և վերելքի համար անհրաժեշտ մակարդակի հայ ազգային-պետականամետ մտածելակերպի զարգացումն ու դրա ազգային պատշաճ կազմակերպական կառավարմամբ արդյունավետ գործի վերածումը կարող է իրականանալ միայն ու միայն հայության առնվազն մի զգալի մասի մեջ երեք նախապայմանների առկայությամբ.

ա. Հիսուս Քրիստոսի Ավետարանով և խաչով ճանաչված ու ընդունված Աստուծո հավատքով և բարոյականությամբ ապրումի:

բ. Այդ հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ տոգորված Ազգային կրիտիկական զանգվածի:

գ. Աստուծո Սուրբ Հոգով այդ զանգվածի քաղաքական-հասարակական-պետական կազմակերպված գործունեության:

* * *

Հայ ազգային կյանքի առավել արդյունավորումը 21-ին դարում, որով և հայ ազգային կյանքի ընդհանուր կազմակերպման և կառավարման իրականացումը պետք է համադրվի և կատարվի համապատասխան ծրագրով և միջոցներով Հայաստանի Հանրապետության կողմից:

Դրա համար պետք է ապահովել.

1. Համապատասխան ծրագրով կառույց՝ համալրված համապատասխան անձնակազմով.

2. Գաղափարական հիմք, որը պետք է պարզաբանվի, հստակեցվի ու հաստատվի նախքան վերոհիշյալ նպատակի համար որևէ քայլ անելը:

Ո՞րն է այդ գաղափարական հիմքը և ո՞վ պիտի պարզաբանի ու ընդունել տա, ո՞ւմ միջոցով...

- Գաղափարը, որ պետք է հիմք ծառայի, աներկբայորեն Հայ Ազգային Գաղափարախոսությունն է (ՀԱԳ):

ՀԱԳ-ի պարզաբանումը, տարածումը և ընդունել տալը պետք է իրագործի վերոնշյալ կառույցը՝ համապատասխան գիտահետազոտական հիմնարկի մասնակցությամբ և Հանրապետության և Հայրապետության առաջնորդությամբ:

Այդ առաջնորդությունը նպատակահարմար է իրագործել մասամբ ուղղակիորեն և մասամբ տվյալ կառույցի և գիտահետազոտական հիմնարկի միջոցով: Շատ կարևոր է տվյալ ընդհանուր խնդրի կատարման աշխատանքային բաժանումը:

ԺՈՂՈՎՈՐԴ ԵՎ ՅԱՅՐԵՆԻՔ

Հարուստ, զորեղ և զարգացած հայերի տկար, աղքատ և հետամնաց հայրենի՞ք, թե՞ հավատավոր, գաղափարական, ազնիվ հայերի զորեղ, զարգացած, կենսունակ և հարուստ Ազգ ու Յայրենիք...

* * *

Հայը պիտի ազնվանա, զարգանա և զորանա՝ զարգացնելով, զորացնելով և հարստացնելով իր ազգն ու հայրենիքը: Այդպիսի ազգն ու հայրենիքը յուրաքանչյուր հայի ապահովության ու երջանկության գրավականն են, երաշխիքն ու հիմքը:

Այս նպատակի ծրագրումը, կազմակերպական կառավարումն ու իրագործումը պետք է կատարվի մարդկության ամբողջ փորձառությանը՝ սկսած հին աշխարհից մինչև ամենաարդիականը, հայկականից մինչև ճապոնականը, համայնքայինից մինչև դրամատիրականը, ամենահասարակից ու պարզից մինչև ամենահատուկն ու բարդը:

Հայ ազգը կդառնա աշխարհի Աղը: Կդառնա կենսունակ, ստեղծագործ, օգտակար մասնիկը մարդկության: Հայաստանը կդառնա աշխարհի լուսավոր ցուցահանդես-կրթարանը:

Սա կարող է իրականանալ Աստուծո նղորմածությամբ, Տիրոջ սիրով, Նրա կամքով և ծրագրով: Դա հաստատում է Հայոց դավանանքը՝ քրիստոնեական հավատքը, և նրանից բխող ու նրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ)՝ Աստվածապատվեր, Աստվածահաճո, մարդասիրական:

Ազգային-պետական էական կենսագործումներ կարող է կատարել ՀԱԳ-ով տոգորված Հայը:

ՀԱԳ-ի հստակեցումը, պարզաբանումը և ուսուցումը Հայ Ազգի, Հայրապետության և Հանրապետության հիմնական, էական ու Աստուծո առաջ պատասխանատու պարտքն է, որը կվճարվի ՀԱԳ-ի ճշտիվ գործադրությամբ: Եվ այնժամ հայ ազգն ու հայրենիքն ամեն տեսակի օրհնությունները վայելելուց բացի կդառնան ֆինանսատնտեսական միջազգային ոսկյա շղթայի օղակներից մեկը, որի ասպարեզն աշխարհի գործարար դաշտն է, ուր արշավելու են ինֆորմացիոն մայրուղիներով՝ էական նվաճումներ կատարելու համար նրանց բոլոր հատվածներում՝ գիտությունից, կրթությունից և բարձրակարգ տեխնոլոգիաներից, արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրությունից ու առևտրաֆինանսական գործառնություններից մինչև բազմաբնույթ մասնագիտական ծառայություններն ու արվեստի տարբեր

բնագավառները:

Այնժամ նաև Ազգն ու Հայաստանը կդառնան փեթակը, իսկ յուրաքանչյուր հայը՝ մեղուն, որ աշխարհի բազմազան գիտելիքների, հարաբերությունների և գործառնությունների նեկտարից բերում է փեթակ: Բերում է որպես իր էության խնդրի կատարում՝ իր հավատամքի բնագրական մղումով: Հայի համար իր էության խնդրի կատարումը, այն է՝ իր կյանքի իմաստավորումը և հավերժացումը, իր հավատքի բնական մղումով, իր ազգային գաղափարախոսության գիտակցումն ու դրանով ապրումն է:

ՀԱԳ-ի իրական, արմատական և անկեղծ գիտակցումով ու ապրումով ժամանակակից հայը վերալուսավորվում է, Սուրբ Հոգով վերաորոգեզրվում Աստծուն, դառնում անընկրկուն, աննկուն ու անհաղթահարելի, կենսունակ և կենսատու, դառնում է ՄԱՐԴ՝ ԱՍՏՈՒԾՈՒ ԺԱՌԱՆԳՈՐԴ ՈՐԴԻ: ԵՎ ԵՂԲԱՅՐ՝ ԱՍՏՈՒԾՈՒ ՈՐԴԻՆԵՐԻ, ԺԱՌԱՆԳՈՐԴ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ, ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԱՍՏՈՒԾՈՒ ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ:

Ուրեմն՝ Ազգի ու Հայրենիքի գոյատևման, զարգացման, հզորացման և բարգավաճման խնդրի կատարումը հայերից է կախված: Բայց այդ խնդիրը կարող է կատարել հավատավոր և գաղափարական հայությունը, գաղափարազուրկ հայությունն անկարող է ապահովել Ազգի ու Հայրենիքի գոյությունը՝ ներկայիս մրցակցային պահանջների համապատասխան զարգացմամբ, զորացմամբ և դիմացկունությամբ: Անկարող է, մանավանդ որ առկա գոյությունը տկար է, անկազմակերպ ու անկառավարելի և գտնվում է հակառակորդ զորեղ ուժերի հետևողական, բազմակողմանի և բազմաբնույթ հարածուն ճնշումների տակ: Եվ դա այն ժամանակ, երբ Ազգի ու Հայրենիքի կառավարման կառույցներն էլ մեծ մասամբ զուրկ են թե՛ դրական և թե՛ բացասական խրախուսման միջոցներից՝ խթանելու համար հայության՝ իր ամբողջ կարողությամբ և ներուժով ծրագրված, համակարգված դրական արարքների կատարումը՝ կարգապահ հետևողականությամբ, և զսպելու ամեն տեսակի բացասական արարքները:

Հետևապես, ներկա իրավիճակում առնվազն տեսանելի ապագայի համար ազգային, պետական և հասարակական գործունեությունը (որի որակը պետք է միջազգային միջինից բարձր աստիճանի լինի, այլապես չի կարողանա պարտադրված մրցակցության մեջ մեծ հաջողության հասնել) պետք է լինի ինքնաբուխ, ինքնակարգապահ, շատ դեպքերում՝ նաև ինքնակառավարվող: Այսպիսի պայմաններով պահանջը հայությունը չի՝ կարող կատարել առանց գաղափարի: Հետևապես, հայության գոյության, զարգացման և բարգավաճման խնդրի կատարման մակարդակը կախված է իր դավանած գաղափարի արժեքի մակարդակից, տվյալ դեպքում՝ Հայ Ազգային Գաղափարախոսությունից, որ բխում է և հիմնված է Աստուծո հավատքի վրա՝ Ավետարանով և խաչով:

Թե՛ սեփական անձից և թե՛ նույնիսկ հայությունից ու Հայրենիքից ավելի

բարձր արժեք ունեցող գաղափարին զորագրումը, ավելին՝ այդ գաղափարի միսն ու արյունը, նրա էության մաս դառնալը միայն կարող է ապահովել հայության կենսական խնդրի կատարումը՝ ԱԶԳԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐ ՈՐԱԿԻ ԳՈՅԱՑՈՒՄԸ՝ ԱՍՏՈՒԾՈՆ ՇՆՈՐՀՈՎ:

Այդ շնորհն ամենազորեղ ու ամենաստեղծագործ ուժն է հայության կյանքի: Այն կարող է վերափոխել ամեն ինչ. քայքայումից ծաղկեցնել, անկումից բարձրացնել: Այդ շնորհը նաև թանկարժեք է, անգին, կենարար է համայն մարդկության համար, որովհետև խաչի վրա թափված Հիսուս Քրիստոսի արյամբ է ...

Ձատիկ, կիրակի, 3-ը ապրիլի, 2000 թ.

ԱՄԲՈՂՁ ԱԶԳԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝ ԱՇԽԱՐՀԻ ԸՆԴԳՐԿՈՒՄՈՎ

Այն, ինչ պետք է Հայաստանի Հանրապետության նյութական վերականգնման, հզորացման և բարգավաճման համար՝ արտահայտված հաշվարկներով, ծրագրերով՝ քաղաքի և գյուղի արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության, ճանապարհաշինության, հաղորդակցության և այլ ճյուղերի վերաբերյալ, այդ թվում նաև տարբեր թեմաներով գրքեր, վեպեր, սցենարներ գրելն ու արվեստի գործեր պատրաստելը, հարկ է ուղղակիորեն կամ աճուրդներում վաճառվեն (ներկայացվեն) աշխարհատարած հայերին, հայերի բարեկամներին ու այդ «արտադրանքների» մի զգալի մասն էլ՝ շատ ուրիշներին, այնպես որ տեսնեն, թե այդ ծրագրերին և մանավանդ նյութերին առնչվելով իրոք կօգտվեն:

Սա ազգային և պետական գլոբալ ծրագրի կարևոր մաս կազմող նախագիծ է, որն ընդգրկում է մի շարք այլ բնագավառներ ևս ու կարիք ունի հետագա մանրամասն մշակման: Այդ ծրագիրը (հայության և Հայաստանի համար աշխարհը դարձնել առաքման ու սպառման դաշտ) բավական բարդ է, սակայն կարող է հոյակապորեն իրագործվել: Կարո՞ղ է: Դրա համար հարկ է, որ հայերը վերափոխվեն հոգեպես, մտայնությամբ, գիտակցությամբ, արարքներով և կազմակերպվածությամբ՝ սկսած բանվորից, ծառայողից, ուսանողից և զինվորից մինչև կաթողիկոս, նախագահ, վարչապետ, օրենսդրական և դատական իշխանություններ, եպիսկոպոսներ ու նախարարներ, սպաներ ու գիտնականներ, ոստիկաններ և ուսուցիչներ, հայրեր ու մայրեր, որդիներ ու դուստրեր՝ բոլոր հայ մարդիկ:

Բայց, նախ պետք է վերափոխվի ղեկավարությունը՝ հայտարարելով, խոստանալով, իրագործելով ու օրինակ դառնալով: Ազգային հարցախույզներ տվյալ ղեկավարի հատկության և կարողության մասին պետք են, և ընդունելի

է, որ դրանցում կարծիքները տարբերվեն ըստ տոկոսների. բայց ազնվության, առաքինության, հավատարմության և վստահելիության մասին ընդունելի է ոչ պակաս իննսուները մեկի դիմաց տոկոսային տարբերությունը:

Իդեալական կլինի, եթե ընտրողը փորձով համոզված լինի, որ տվյալ ղեկավարին ընտրում է նրա համար, որ իրեն վստահված պաշտոնը նախ և առաջ նա կատարելու է որպես հոգու պարտք իր Արարիչ Աստուծո հանդեպ՝ հավիտենական կյանքին արժանանալու համար, մեր Սուրբ Հայրերի կարգով: Եվ այդ հոգու պարտքից է բխում և դրա վրա է հաստատված այդ ղեկավարի՝ Ազգին ու Հայրենիքին իր պաշտոնում ծառայելու գաղափարը, գիտակցությունը, քաղաքացիական պարտաճանաչությունը և պատրաստակամությունը:

Այս հոգեկան հավատքի բարոյական նորմերից, գաղափարական համոզմունքներից և քաղաքացիական գիտակցությունից հետո կարևորվում է նաև տվյալ ղեկավարի մասնագիտական հմտությունն ու հարաբերվելու մշակույթը, որը կարող է և շարունակ ավելանալ, զարգանալ սովորելով:

Այսպիսի կերպարով ու հավատամքով, գաղափարականությամբ և բարոյականությամբ հայության մեջ կտիրի այն գիտակցությունը և ձգտումը, որ լինի՝

- Մարդն իր ընտանիքով՝ ազգից ու ազգի համար.
- Ազգն իր պետականությամբ՝ մարդկությունից և մարդկության համար.
- Մարդկությունն իր հումանիզմով՝ Աստուծոց ու Աստուծո համար՝ Հիսուս Քրիստոսով՝ աշխարհի մեծագույն հեղափոխականով:

Աստվածային բնությունից առաջացած այս արարումը 1700 տարի առաջ Հայոց պետականությանը շնորհված լուսավորմամբ բովանդակեց Ազգի Գաղափարախոսությունը՝ Հայ Ազգային Գաղափարախոսություն:

Եվ Նրանով՝ Աստվածորդով, ու Նրա համար աշխարհի ամենամեծ հեղափոխությանը հայ ազգը տվեց իր պատմության երկու մեծագույն հեղափոխականներին՝ Գրիգոր Լուսավորչին և Մեսրոպ Մաշտոցին, ովքեր Ազգը պետականորեն դեպի լույս հեղաշրջեցին...

Այդ հեղաշրջման 1700-ամյա խորհուրդը պետք է լիցքավորի նաև մեր՝ ժամանակակից հայերիս հոգիները՝ սկսելու համար Գրիգորյան-Մեսրոպյան հեղափոխության 21-րդ դարի արշավը՝ դեպի դարե՛ր, ամբո՛ղջ աշխարհում...

Առաջնորդություն է պետք... Ո՞ւր ուղղենք մեր հայացքները. էջմիածի՞ն... Նախագահական նստավա՞յր... Ազգային ժողո՞վ... Էլ ո՞ւր:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՏ Է ՊԵՏՔ

Հայկական գյուտն անհրաժեշտություն է հայ ազգի, Հայաստանի և հայ պետականության վերելքի համար մարդկային կյանքում...

Հայկական գյուտի ներուժն առկա է, բայց գյուտը դեռևս չկա: Այն կարող է լինել միայն Աստուծո՞վ: Ովքե՞ր պիտի փնտրեն, աշխատեն և գործեն, որ գտնեն Գյուտը: Ովքե՞ր, ե՞րբ պիտի խնդրեն Աստծուն, որ օգնի՝ գտնելու հայության ամրության, զորության և վերելքի Աստվածապարզ և Հայկական գյուտը... ինչպես գտնվեց Գրեթի Գյուտը... և հետևեց Թարգմանչաց շարժումը... ու առաջացավ Ոսկեդարը...

Այժմ էլ՝ քսանմեկերորդ դարասկզբին, կարելի է առաջ բերել հայոց նոր ոսկեդար, հոգևոր, մտավոր, քաղաքական, հասարակական, տնտեսական, գործարար, կրթական, գիտական, մշակութային և կենցաղային նոր ոսկեդար, հայոց կյանքի՝ ոսկեդար՝ ոսկյա դարերի ապագայով, պետականորեն: Դրա կենսագործման գյուտի ներուժն անխախտորեն առկա է հանձին Մաշտոցյան-թարգմանչաց Աստվածամատույց ժառանգության: Միայն պետք է արժանի լինենք այդ ժառանգությանը և կլինենք արժանի՝ ճշմարտորեն վերահաստատելով ու ապրելով այդ ժառանգության էությունը կազմող քրիստոնեական հավատքով, դրանից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ (ՀԱԳ) և դրանք արտահայտող բարոյական կյանքով: Որով և գտած կլինենք Աստծուն՝ Գյուտի Տիրոջը:

Եվ Հայկական գյուտի՝ քսանմեկերորդ դարի հայկական աշխարհահամբավ այդ հրաշքի հայտնագործումն ու կյանքի վերածումը կկատարվի:

Այս ուղղությամբ պետք է գործեն ազգի և Հայրապետության ու Հանրապետության, առաջին հերթին, ղեկավարության ու առաջատար մտավորականության միտքը, կամքը, եռանդը, ժամանակն ու միջոցները: Որ բացվեն դռներն հուսո ու սիրո և մեր երկրեն ու կյանքեն փախ տա ձմեռ... Նաև հօգուտ մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության:

Հինգշաբթի, 5-ը մարտի, 2004 թ.

ԻՆՉՊԵՍ ԳՏՆԵՆՔ ՊԱՏՃԱՌԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐՀԱՐՑԻ

Մեկ անգամ ևս անդրադառնանք ՀԱՅՔ հաստատության հարցադրումներից մեկին, թե ինչո՞ւ և ինչպե՞ս է լինում, որ աշխարհի 8-10 միլիոն հայերը չեն կարողանում (կամ գուցե չեն ուզում, անտարբեր են) իրենց հայրենիքից մնացած այսօրվա ՀՀ-ն աշխարհի ամենազարգացած, ամենաապահով և ամենաբարգավաճ երկրներից մեկը դարձնել: Ինչո՞ւ:

Ինչո՞ւ և ինչպե՞ս է լինում այդ, և ի՞նչ պետք է և կարելի՞ է անել, որ փոխվի այս վատ, վտանգավոր, անոթալի և վնասակար վիճակը:

Ո՞վ, ովքե՞ր, ե՞րբ, ինչպե՞ս պիտի անդրադառնան այս խնդրին և ներկայացնեն դրա պատասխանն ազգին:

Ե՞րբ, ովքե՞ր, ո՞ւմ պարտականությունը, հոգու և խղճի՝ պարտականությունը, նաև ազգային հասարակական կամ պետական պաշտոնական պարտականությունն է այդ անելը՝ անհապա՞ղ, անմիջապե՞ս, բոլոր միջոցներով՝ անելը:

* * *

Ի՞նչ է պակասում մեզ, որ մենք մենք լինենք և մեր պարտքը կատարենք...

- Հավատքը:
- Խի՞ղճը:
- Գաղափա՞րը:
- Ինքնագիտակցությունը:
- Հայրենասիրությունը:
- Պարտքի զգացո՞ւմը:
- Կրթությունը:
- Կազմակերպվածությունը:
- Կազմակերպական կառավարո՞ւմը:
- Մեր ինքնության արժևորո՞ւմը:
- Քաղաքացիական պարտաճանաչությունը:
- Պարզապես մարդ լինե՞լը:

Ի՞նչն է պակասում, որ չենք կարող ունենալ, եթե ուզենանք ունենալ՝ մեր պարտքը կատարելու համար:

Մայիս, 2005 թ.

ՀԱՅՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԵԼՔԻ ԳՐԱՎԱԿԱՆԸ

Ինչո՞վ է պայմանավորված հայության և ՀՀ վերելքը: Ո՞րն է այդ վերելքի հիմքը, և ինչպե՞ս կարելի է կառուցել այն:

Հայության ու ՀՀ վերելքը պայմանավորված է Աստուծո կամքով և Նրա կամքի ու ծրագրի հայկական մասի՝ ի՞ր իսկ՝ հայության կողմից կատարմամբ:

Հայության և ՀՀ վերելքի հիմքը կազմում են հայության հարազատ, տոհմիկ հավատքը և դրանից բխող ու դրա վրա հիմնված գաղափարախոսությունն ու բարոյականությունը: Հայության ու ՀՀ վերելքի հիմքը կարելի է կառուցել Հիսուս քրիստոսի Ավետարանով և խաչով, Աստուծո նկատմամբ մեր հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ

ու բարոյականութեամբ: Այսինքն՝ Ավետարանով և խաչով մեր հավատքի պետականորեն քաղաքացիականացմամբ ու քաղաքականացմամբ:

Այս հիմքի վրա հնարավոր է կառուցել հայոց պետականութեան հրաշալի շէնքը՝ ի ապահովութիւն, ի զարգացում և ի բարգաւաճում հայ ազգի և Հայաստանի, ի բարի օրինակ ու հօգուտ մարդկութեան և ի փառս Սուրբ Երրորդութեան:

* * *

Հայրությունը, հատկապէս նրա ղեկավարությունը, մտավորականությունը, ունևոր խավը (դասը) ու նաև կղերականությունը, ըստ երևույթին, պետք է շատ զգույշ լինեն, որ չտարվեն արտաքին ու ներքին սին և խորթ արժեքներով, կորստաբեր մոլորություններով և չանտեսեն ու չուրանան Աստուծո առաջ մարդու և հայի իրենց կոչումն ու պարտականությունները: Նրանք պետք է միշտ արթուն, զգաստ և պատրաստ լինեն՝ թոթափելու, հանելու, արմատախիլ անելու տարբեր ուղիներով ու ձևերով իրենց մեջ սերմանվող ու աճող անհավատության, գաղափարազրկության, բարոյազրկության և նյութապաշտութեան որոմը (ճշմարտանման կեղծը), որպեսզի նրանք չխորհեն, չվարվեն և չգործեն, լավագո՛ւյն դեպքում, ձևով Աստվածահաճո, ազգանպաստ ու պետական, սակայն բովանդակությամբ հակաքրիստոնեական, հակահայ և հակապետական, որով և՛ ծառայելով աստվածամերժ ու հակամարդկային նպատակների...

Կիրակի, 15-ը հոկտեմբերի, 2006 թ., առավոտյան ժամը 9:30

ՋԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Հայրության ազգային և պետական կայացման երաշխիքը Աստուծո հավատքն է Ավետարանով և խաչով:

Հայրությունը չի՛ կարող որպէս ազգ կայանալ և կայացնել համախումբ, կազմակերպված, ժողովրդավար, զարգացած, զորեղ, մրցունակ, ինքնաբավ, անվտանգ, պաշտպանունակ և բարգավաճ հայրենիք ու պետություն, եթէ չփոխի մինչև այժմ ունեցած մտածելակերպը և չզգա իր արժանավայել գոյութեան համար Աստուծո առաջ հոգու պարտքը՝ համաձայն Հայ Ազգային Գաղափարախոսութեան (ՀԱԳ)*: Հայրությունն իր այդպիսի ապահովությունն ու վերելքը կարող է ապահովել՝ ճանաչելով, ընդունելով ու ապրելով ըստ իր Ազգային Գաղափարախոսութեան, որը բխում է և հիմնված է Աստուծո հավատքի վրա՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանով և խաչով:

Զգո՛ւյշ լինենք, ասվածը, դժբախտաբար, անսովոր, տարօրինակ ու

* Տե՛ս այս գրքի էջ 23-31

անընդունելի կամ առնվազն դժվարըմբռնելի լինելով հայության այժմյան մեծ մասի «սեկուլյար ստանդքսի» համար, չչտապենք այն «արմատական ազգայնական», «տերտերական» կամ «հնաոճ պառավական» պիտակել և մեր ականջների կողքով անցկացնել: Ձգույշ լինենք, համբերող և ուշադիր, որպեսզի զգանք և հասկանանք, որ մեր սուրբ հայրերի հավատքի իմաստությամբ, գիտությամբ ու նաև հույսով և սիրով միայն մենք կունենանք գիտակցություն, ցանկություն, կամք և կորով՝ փնտրելու ու նաև հմտություն գտնելու մեր թե՛ անձի, թե՛ ազգի, թե՛ երկրի և թե՛ պետության փրկության և վերելքի ուղին ու միջոցը:

Այդ ամենը պարունակված է մեր ազգի տոհմիկ գաղափարախոսության՝ Հայ Ազգային Գաղափարախոսության մեջ, որն իմաստավորում, նպատակաուղղում է մեր կյանքն ու դրա ընթացքը այժմյան աշխարհատարած հավատազուրկ, գաղափարազուրկ և նյութապաշտ քաղքենիության միտումների մթնոլորտում, որտեղ ձևավորվում են բոլոր քայքայիչ մոլությունները, վարակները՝ առաջացնելով մեր մարդկային ու ազգային հոգեբարոյական էության և գոյության ինունազրկում, որը բերում է հոգեկան փստահարման և հոգու ծառայեցման մարմնին, նյութին, այսինքն՝ սրբությունը՝ պղծության, ճշմարտությունը՝ ստին, մշտականը՝ անցողիկին, կենսունակությունը՝ անլուծյան, էականը՝ ունայնության, և կյանքը հպատակեցվում է մահվան հավիտյանս:

Հայ Ազգային Գաղափարախոսության հիրավի՛ ճանաչման, ընդունման և կյանքում ապրումի վերածման միջոցով այդ կործանարար մթնոլորտը մեր կյանքում մենք կարող ենք չեզոքացնել և դրանից պաշտպանվել՝ վերակերտելով մեր հայկյան տոհմիկ կերպարը, որով ի զորու ու արժանի կլինենք ազգային պետական կյանքի բարձրագույն վերելքի՝ ներկայի ու ապագայի անցողիկ ու անանց բոլոր արդյունքներով:

Կիրակի, 15-ը հոկտեմբերի, 2006 թ., ժամը 23:40

ԱԶԳԻ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԶԱՆԳՎԱԾԻ ՄԱՍԻՆ

Ազգի մրցակցային կարողությամբ գոյապահպանման, զարգացման, զորացման, անվտանգության ու ամեն ինչում բարձրացման համար անելիքների Ալֆան և Օմեգան հայության համապատասխան անձնավորություններից (տարրերից) կազմված կրիտիկական (վճռորոշ, բեկումնային, ծայրագույն անհրաժեշտության) զանգվածի (ԿԶ) ստեղծումն է: Այդ ԿԶ-ն կարող է և պետք է ստեղծվի հայ ազգի պետական հոգեղենության ու այդ իմաստով գաղափարականության և բարոյականության հիման վրա կազմակերպորեն գործող Ուխտի կողմից, որը կազմելու է իր կորիզը:

Այդ զանգվածի ու առավել ևս նրա կորիզի՝ Ուխտի տարրերից մեկը դառնալու ձգտումը հավատքով հոգեկան պարտք և դրանից բխող գաղափարական-բարոյական գիտակցություն և քաղաքացիական պատասխանատվություն զգացող յուրաքանչյուր հայի համար կյանքի էական, իմաստալի ու առաջնային մրցահրավերն է...

Հավատքով հոգեբարոյական և գաղափարական այդ հատկությունների սրբության հասնող մակարդակի նշածողը հաղթահարող հայերից (տարրերից) բաղկացած կրիտիկական զանգվածի կորիզը՝ Ուխտը, պետք է գործի որպես եղբայրակցական ազգային խորհրդատու կառույց՝ իրենով հիմքն ու սկիզբը դնելով հայության (վերջին հաշվով) ամենաբարձրարժեք ներուժի պետական նպատակադրությամբ կազմակերպելու և գործարկելու համար անհրաժեշտ՝

- հոգեբարոյական գաղափարականությամբ վստահության,

- քաղաքացիական պարտաճանաչությամբ մասնագիտական բարձրագույն հմտության,

- դրանցով ապրելու և գործելու հաստատուն, անսասան, մշտական սեփական օրինակի:

Ուրեմն՝ այդ հատկությունների չափանիշներով ԿԶ-ի կորիզը՝ Ուխտը, հայ ազգի գոյապահպանումը և վերելքը մրցունակ զարգացմամբ և հզորացմամբ երաշխավորելու համար պետք է կարողանա ստեղծել բարոյական այնպիսի՝ հեղինակություն, որով բացարձակ վստահություն կվայելի համայն հայության կողմից՝ սկսած նախ նրա 0,1 տոկոսից ու այնուհետև աստիճանաբար մեկ, երեք, հինգ, տասը, հիսուն, ութսուն ու ավելի տոկոսը:

Այդ ընթացքում հայության այդ տոկոսային հատվածները, անկախ իրենց աշխարհագրական վայրից, պայմաններից և վիճակից, կսկսեն ստեղծել հայ ազգային եկամուտ և պատրաստական կլինեն հայ պետական կազմակերպված, համադրված քաղաքացիական ծառայության՝ ըստ ազգային պետական ծրագրի: Բացի այս օրինաչափորեն ստեղծված ազգային եկամուտն ու քաղաքացիական ծառայությունը, ազգային պետական կարողությունը կներառի նաև համայն հայության հոգեբարոյական, գաղափարական, մտավոր, մասնագիտական, քաղաքական, դիրքային և նյութական առկա ու հարաճունորեն ավելացվող ներուժը:

Աստուծո օգնությամբ:

Երեքշաբթի, 5-ը դեկտեմբերի, 2006 թ., ժամը 23:50

ՀԱՅ ԱԶԳԸ ԹԵՎԱԿՈՒՄԵԼ Է 21-ՐԴ ԴԱՐ ԵՎ ՊԵՏՔ Է ԿՈՂՄՆՈՐՈՇՎԻ՝ ԴԵՊԻ ԼՈՒՅՍ, ԹԵ՞ ԽԱՎԱՐ

Հայ Ազգային Գաղափարախոսության ճանաչման, ընդունման և կիրառման տեսակետից 21-րդ դարասկզբին հայ ազգի, Հայաստանի Հանրապետության և Հայոց Հայրապետության հարցերի հարցն այն է, թե ինչպե՞ս է ուզում հայությունն ապրել այսուհետև որպես ազգ: Ուզում է ապրել որպես պետակա՞ն ազգ, որպես գաղափարական և բարոյակա՞ն ազգ ու, ամենաեականը, ուզում է ապրել որպես քրիստոնյա հավատացյալ՞ ազգ, Աստուծո պատգամներով, թե՞ անտեսելով այդ բոլորը՝ ապրել՝ տարվելով իր էությանն օտար ու խորթ «պատահական» հոսանքներից դեպի այլասերում և կորուստ...

Առաջին երկու հարցերի (որպես պետական ազգ և գաղափարական, բարոյական ազգ ապրելու մասին) դրական պատասխանները կախված են երրորդ հարցի (որպես քրիստոնյա հավատացյալ ազգ ապրելու մասին) դրական պատասխանից, որը նշանակում է կյանք և վերելք, այսինքն՝ ազատ, ապահով, բարգավաճ ու արժանավայել կյանք՝ Աստուծո օրհնությամբ:

Մտածել և որոշել է պետք: Եթե որոշենք, որ պետք է մարդկությանն ի բնե հարազատ՝ հայ ազգային քրիստոնեական տոհմիկ կյանքով ապրենք, այնժամ պետք է կազմակերպվենք՝ վերստուգելով, վերատեսության ենթարկելով մեր անցյալն ու ներկան, մեր արածներն ու չարածները և մեր այսուհետև անելիքներն ու չանելիքներն ըստ մեր Հայ Ազգային Գաղափարախոսության (ՀԱԳ), որը բխում է և հիմնված է Աստուծո հավատքի վրա: Հավատք, որը սկզբնավորվում է Հայկ Նահապետի ազատասեր կերպարի կերտմամբ՝ մեր ազգի գոյացումով և 301 թվականին Սուրբ Գրիգորի Լուսավորած շնորհքով՝ մեր ազգի, որով և՛ ՀԱԳ-ի սրբագործմամբ:

ՀԱԳ-ի ճանաչումը, ընդունումը և կիրառումը նախապայման է հայ ազգի, հայրենիքի և պետության կենսունակության, ապահովության և վերելքի՝ մարդկության առաջին շարքերում:

ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ

(Մտքեր մի հիշողության ազդեցության տակ)

Հայաստան երկրում նախորդ 2-3 սերունդների ընթացքում «ի՞նչն է որոշում գիտակցությունը» հարցադրմանը որպես պատասխան բռնակցվում էր «կեցություն» բառը, որովհետև դա՛ էր թելադրում նյութապաշտական գաղափարախոսությունը՝ իբրև թե ճիշտ, իրական և գիտական պատասխան, թե ինչն է որոշում գիտակցությունը:

Սակայն երբ կեցությունն էր որոշում գիտակցությունը, Հայաստանում «կարմիր» մատնիչները, մարդ ծախողները շատացան (նույնիսկ ընտանեկան, ընկերական և մտավորական շրջանակներում), ազգային, նվիրական, հերոսական դեմքերն ու դրվագներն արհամարիվեցին, հերոսները հալածվեցին, եկեղեցիները քանդվեցին, ու աշխարհում Ստալինի ամենամեծ արձանը երևանի վրա տիրաբար կանգնեցվեց:

Այդ ընթացքում մեր ազգի մեջ «քիչ երևացող» ամենամեծ ավերներից մեկը կատարվեց 1941-1945 թթ., երբ Խորհրդային Հայաստանից (և ոչ միայն) ամենաշատ «թնդանոթի միս» «մթերվեց»՝ տխրահռչակորեն գերազանցելով հարևան «եղբայրական» հանրապետությունների «մթերումների» պլանը: Հայաստանի հազիվ մեկ միլիոնն անցած բնակչությանը (շատերը եղեռնից մազապուրծ խլակներ և կամ նրանց որդիները) «ստախանովյան» հարվածայնությամբ թնդանոթի միս» դարձնելու և թիկունքի բացառիկ զրկանքների փաստը դեռ պետք է քննվի, վերլուծվի և պարզաբանվի... Դրանով, բացի ամեն ինչից, հավանաբար կբացահայտվի նաև մեր ազգային նկարագրի և գիտակցության, ինչպես նաև քաղաքական գրագիտության ու ազգային շահի հասկացողության ու նաև մեր ազգի կազմակերպվելու ունակության մակարդակը և, ըստ այնմ՝ ներկայիս վիճակը մեր այսօրվա ազատ անկախ Հայաստանում, որը բազում և տարբեր բնույթի մարտահրավերների, փորձությունների առաջ է կանգնած, որոնց մեծ մասը դեռ քողարկված, աներևույթ է...

Այս իմաստով այն, ինչ տեղի ունեցավ 1941-1945 թվականներին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում, որը հարաբերական, գուցե և բացարձակ ավելի շատ զոհեր տվեց, քան ամբողջ «յուդաշ» Ադրբեջանը, նույնպես մեկնաբանման աղերս ունի: Եվ դա և՛ս մեզ ավելի լավ ճանաչելու համար է: Վերջապես պետք է, որ մենք մեզ լավ ճանաչենք...

Այդ իմաստով, սակայն, մեր պատմությանը ուրույն տեսանկյունից նայելով, այնուամենայնիվ, այժմևեթ որոշ հետևություններ կարելի է անել:

Առանց հավատամքի և դրանից բխող ու դրա վրա հիմնված գաղափարով և բարոյականությամբ տոգորված անձի, հասարակության ու ազգի ուսուցումը և քաղաքակրթումը նման է անձի, ազգի «ռոբոտացմամբ» զարգացմանը: Այդ-

պիսի անձը, հասարակությունը կամ ազգը, թեև լինի ուսյալ, սակայն նրա կրթությունն ու մշակույթը միայն ձևով կլինեն ազգային, դրանով գուցե կարողանա հասնել արդյունաբերելու որոշակի աստիճանի, բայց միայն այդքանը (դա կլինի առանց կայուն ու հարատև կենսունակության, կարողության ու առաջընթացի, դա կլինի ամուլ, և դրա վերջը՝ լճացում, հետընթաց, սպառում, կազմալուծում և կորուստ...): Մենք յոթանասուն տարի այդ ընթացքի մեջ էինք, ու հետևանքը եղավ արյուն-քրտինքով ստեղծվածի ակնթարթային փոշիացումը, հարամի գնալը...

Միայն հոգևոր և հոգևորից բխող և դրա վրա հիմնված գաղափարականությամբ ու բարոյականությամբ կարող է ազգի մեջ առաջանալ հարատև նվիրում, վստահություն, կազմակերպվածություն, ստեղծագործություն և ճշմարտի կողմնորոշումով համագործակցություն՝ նախապայմանը հայ ազգի հարատև զարգացման, զորացման և վերելքի...

Կիրակի, 29-ը հուլիսի, 2007 թ.,
առավոտյան ժամը 8:30

ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄ

Հայ եկեղեցու գործունեությունն արդյո՞ք չպետք է բարեփոխվի, վերակառուցվի: Եթե այո, դրա հարկը կա, այդ դեպքում արդյո՞ք անհրաժեշտ չի լինի, որ վերափոխվի եկեղեցու ղեկավարության մտածելակերպը եկեղեցականի և եկեղեցու կոչումի, պարտականության ու իրավունքների վերաբերյալ: Եվ դա մի՞թե կարելի է՝ առանց զորացնելու եկեղեցական ղեկավարության հավատքը, ազգային ինքնագիտակցությունը և քաղաքացիական պարտաճանաչությունը:

Ըստ երևույթին, Հայ եկեղեցին հանձին, առաջին հերթին, իր ղեկավարության, պետք է զորացնի իր հավատքն Աստուծո հանդեպ՝ Ավետարանով ու խաչով և վերաճանաչի իր՝ հայ հոգևորականի կոչումը: Եվ դրա հետ վերաճանաչի նաև իր՝ հայ մարդու քաղաքացիական պարտականությունն Աստուծո հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ: Որը պետք է ճանաչել, ճանաչելու համար՝ գտնել և գտնելու համար՝ փնտրել, իսկ վերջինիս համար ժամանակ է պետք: Ժամանակ, որը չպետք է վատնվի ամեն մի ձևականության ու աշխարհիկ դատարկության վրա...

Ժամանակը պետք է նաև մտնելու համար ժողովրդի մեջ, ճանաչելու նրան և պաշտպանելու նրան: Պաշտպանելու հայ ժողովրդի հոգեմտավոր և բարոյական անաղարտությունը, նաև հոգեմտավոր և բարոյական առողջությունը, ուժն ու կենսունակությունը: Այդ առումով իսկ եկեղեցին ազգի հոգեմտավոր և հոգեբարոյական պաշտպանության գերատեսչությունն է, ըստ

մեր հավատքի սահմանադրությամբ՝ Ավետարանի և հավատքի Ջորազուխ Տիրոջ կարգադրությամբ...

Եվ հայտնի է, որ չի՛ կարելի անտեսել և խախտել սահմանադրությունը, ժխտել գերագույն գլխավոր հավիտենական Յրամանատարի հրամանները՝ առանց զին վճարելու: Գին՝ սարսափելի և կործանարար հավիտյանս:

Ուրեմն՝ վերակառուցման համար սթափվել է պետք, սթափվել, զգաստանալ և գործել:

Գործել վասն Յիսուսի, վասն ազգի և դրանով՝ վասն փրկության մեր կյանքերի ու հոգիների:

4-ը դեկտեմբերի, 2007 թ., ժամը 23:30

ԻՆՉ Է ՏԱԼԻՍ ՅԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ (ՅԱԳ)

Յայ ազգի, Յայաստանի և հայոց պետականության պաշտպանությունը, կենսունակությունը, զարգացումը, վերելքը և բոլոր հույսերի իրականացումը պայմանավորված են հայության կողմից ՅԱԳ-ի ճանաչմամբ, ընդունմամբ և կյանքի բոլոր բնագավառներում ու հանգրվաններում կիրառմամբ:

Եթե ավելի պարզ և ուղղակի արտահայտվենք, Ավետարանով և խաչով Աստուծո հավատքից բխող և դրա վրա հիմնված ՅԱԳ-ը ճանաչող, հոգեպես ու մտայնությամբ ընդունող և քաղաքացիական գիտակցությամբ կիրառող հայը ազնի՛վ է, ուղղամիտ, առաքինի՛ և վստահելի՛ ու հավատարի՛մ՝ թե՛ իր ընտանիքի, թե՛ իր ընկերային շրջանակի և թե՛ իր ազգի ու պետության համար:

ՅԱԳ-ով տոգորված հայի մարդասիրությունը, հայրենասիրությունը և աներկբայորեն քաղաքացիական պարտաճանաչությունը կարելի կլինի դասել մարդկային հասարակության ամենաբարձր աստիճանին: Նման քաղաքացիներով հայ ազգն ու Յայաստանն իր կազմակերպվածությամբ, բարեկեցությամբ, մշակույթով, կրթությամբ կդառնա աշխարհի նմուշօրինակը՝ արժանի հարգանքի, պատվի, վստահության ու ամենաբարձր գործընկերության...

* * *

- Երբ երկնքից մարդու (հայի) հոգու պարտքը պահանջվի, նա ի՞նչ է տալու, եթե իր հոգին ստրկացած-կորած կամ աղավաղված է: Մինչդեռ հոգու պարտքը հարկ է, որ միշտ պատրաստ լինի հատուցելու այն ինքնաբուխ, ուրախ և մշտապես ազատ, մաքուր ու զորեղ հոգուց:

- Եվ դա կլինի Աստուծո հանդեպ սիրով և Նրա կամքով ու զորությամբ՝ Նրա կամքը, պատգամները կատարելով:

* * *

- Ե՞րբ է լավը վատ՝ ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության:

- Աշխարհը, կյանքն ու այն ամենը, ինչ որ կա դրանց մեջ, ինչքան ավելի լավ են, այնքան ավելի վատ են, եթե մարդուն, օրինակ՝ ինձ, պիտի կտրեն Հիսուս Քրիստոսի խաչից:

Ինչքան ավելի լավն է աշխարհը, այնքան ավելի վատն է, եթե այդ ավելի լավը մարդուն, օրինակ՝ ինձ, չի՛ մոտեցնում Հիսուսին, եթե մարդուն (ինձ) չի՛ ապրեցնում Նրա համար...

Հինգշաբթի, 24-ը հունվարի, 2008 թ.,
ժամը 23:30

ՇԱՏ ԿԱՐԾ ՈՒ ԿՏՐՈՒԿ, ԲԱՅՑ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ

Ինչո՞ւ հայության մեջ և ՀՀ-ում նույնպես բարձրակարգ կինոֆիլմեր, արվեստի և գրականության այլ գործեր հատկապես վերջին տասնամյակներում չեն ստեղծվում: Ինչո՞ւ:

Եթե շատ կարճ ու կտրուկ՝ որովհետև արվեստի մեծ գործերի ստեղծման հիմքում հավատքը, գաղափարը և բարոյական արժեհամակարգն է: Հետևապես, հավատքով, գաղափարով և բարոյական սկզբունքներով ապրելը նախապայման է մարդկային հատկանիշներով արվեստի և գրականության բարձրակարգ գործեր ստեղծելու համար: Իսկ մեր իրականության մեջ այդ ապրումը գրեթե դադարել է՝ տեղի տալով հիմնականում հավատազուրկ, գաղափարազուրկ և բարոյազուրկ ապրումի, և դրա հետևանքն էլ մեր մշակույթի, արվեստի մեջ առկա հոգեղենության դեֆիցիտն է:

Ովքեր համաձայն չեն այս դատողության հետ, խնդրում ենք միանգամից հետևություններ չանել: Միանգամից մի՛ վրդովվեք, մի՛ զայրացեք, մի քիչ համբերե՛ք և մտածե՛ք, մտածե՛ք, համեմատե՛ք և հետո հետևությունների՛ հանգեք:

ՀԱՅ ԱԶԳԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՅԱՆՁ

Պետք է հեղաշրջվեն ներկա օտարոտի, կեղծ և խարդախ արժեքները, որ միտում են դուրս մղել և փոխարինել հայության ազգային-մարդկային հարազատ, ստեղծագործ ու Աստվածապատվեր գաղափարներից բխող արժեքները:

Հայոց պետականության, Հայրապետության ու մտավորականության առաջնային պարտականությունն է վերարժևորել հայության ազգային-մարդկային արժեզրկված (ինֆլացիայի ենթարկված) արժեքները:

Հայաստանում և հայության մեջ պետական-հասարակական ու հոգևոր ծառայության պատասխանատվությունը պետք է վստահվի նախ և առաջ Աստվածավախ, Աստվածասեր, առաքինի, արդարամիտ, ազնիվ, հավատարիմ, անկաշառ, քաջ, մարդասեր, ազգասեր, աշխատասեր և հմուտ անձանց: Այդ հատկությունները որևէ ժամանակ, որևէ պատճառով կոմպրոմիսի ենթակա չպետք է լինեն:

Հայության մեջ պիտի մեծարվի, փառաբանվի, վստահություն ներշնչի և ծառայություն վստահվի հայ քրիստոնյա ասպետական կերպարին:

3-ը մարտի, 2008 թ.

ԱՍՎԱԾ Է՝ ՈՒՄ ՀԱՏ Է ՏՐՎՈՒՄ, ՀԱՏ ԷԼ ՊԱՅԱՆՋՎՈՒՄ Է

(Եվ եթե խոստովանում ես, պիտի կատարես)

Հատկապես հայ իրականությունում ովքեր որ անկախ իրենց դիրքից և կոչումից, Աստուծո անունն են տալիս, Աստծուն են վկայակոչում, Նրան իրենց աղոթելու մասին վկայություն են տալիս, նրանք պետք է շահտ զգույշ լինեն, թե ինչպե՞ս են ապրում, ի՞նչ սկզբունքներով են առաջնորդվում իրենց կյանքում՝ որպես մարդ, որպես հայ, որպես քաղաքացի և որպես ընտանիքի և հասարակության անդամ:

Գիշերային այս մտորումով հարց ու պատասխան:

Մի՞թե մեր նախնիք, մեր մեծերը, մեր սրբերը չեն պատգամել մեզ հեռու մնալ մեղքից, մեղք չգործել: Ինչո՞ւ, որովհետև Ավետարանը՝ մեր կյանքի իրավ, արդար, հաստատուն և հավերժական սահմանադրությունն ասում է. «... Մեղքի վարձը մահն է, իսկ Աստծու շնորհը՝ հավիտենական կյանք՝ մեր Տեր Քրիստոս Հիսուսի միջոցով» (Հռոմ. 7.3): Մեր նախնիք հավատում էին, գիտեին այդ ու ամեն օր, ամեն ժամ հիշում, մտածում էին այդ մասին և ջանում էին, որ ըստ այնմ ապրեն:

Իսկ մենք հիմա, ըստ երևույթին, ո՛չ էապես հավատում ենք, ո՛չ էլ գիտենք, հետևապես ո՛չ հիշում ենք, ո՛չ էլ մտածում այդ մասին, և մեր կյանքն էլ անպաշտպան է մեղքի մահացու հարուցիչներից... Ո՞վ մեզ կփրկի մեր մեղքերից, եթե ոչ խաչյալը... Մնում է Նրան հավատալ, ինչպես հավատացել են մեր մեծերը, մեր Սրբերը՝ մեր երանելի նախնիք:

Ու նաև սա՛ է, որ ուսուցանում է մեզ մեր Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ), որը բխում և հիմնված է մեր քրիստոնեական հավատքի վրա և որն այդ հավատքի քաղաքացիացումն ու քաղաքականացումն է մեր կյանքում:

Ուրեմն՝ այդ քաղաքացիական պարտաճանաչությամբ և գործելու քաղաքականությամբ պետք է ապրենք մեր կյանքը...

Ուրեմն՝ մեր ազգի, հայրենիքի և պետության գոյության ապահովման,

զարգացման ու բարգավաճման աստիճանը պայմանավորված է նախևառաջ մեր հոգեղենության, գաղափարականության և բարոյականության մակարդակով: Մակարդակ, որի բարձրացումը, նույնիսկ շատ բարձրացումը չի պայմանավորված անպայման արտասահմանյան վարկերով, ներդրումներով, ողորմություններով, այլ նախևառաջ պայմանավորված է Աստուծո շնորհով, որը Նա ձրի է տալիս (և մեր նախնյաց տվել է) Իր Որդուն հավատացողներին ու այդ հավատքով ապրողներին և գործողներին:

Ուրեմն՝ ապրենք և գործենք ազգովին, այդ հավատքով և ՀԱԳ-ով:

Բայց քանի որ դրան հասնելը պահանջում է կազմակերպում և կազմակերպման նախաձեռնում ու կառավարում, հարկ է, որ այդ պահանջը բավարարվի:

Իսկ ո՞վ, ովքե՞ր պիտի խաչն իրենց վրա առնեն ու այդ պահանջը բավարարեն, եթե ոչ Խաչալիին հավատացող ու հավատարմորեն հետևող հայ ասպետները՝ ազգի կրիտիկական զանգվածը:

Իսկ կա՞ այն: Աստուծո ողորմությամբ՝ կա՛ և կլինի՛: Խնդրենք Աստծուն, Նա մեր սրտերի համեմատ կտա՝ ինչ որ պետք է:

Երկուշաբթի, 17-ը մարտի, 2008 թ.,

Ժամը 23:50

ՀԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԻ ՈՒ ԱՆԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

- Ինչպիսին է հայության և ՀՀ դրությունը եական՝ իմաստով ...

Կարո՞ղ են հայ ազգն ու ՀՀ-ն զարգանալ, առաջադիմել, բարգավաճել և մանավանդ անվտանգ ու ապահով լինել առանց հավատքի և գաղափարի ճշմարիտ ճանաչման և լիարժեք կիրառմամբ:

Կարո՞ղ են հայության և ՀՀ-ի համար վերելք ապահովել անհավատ և գաղափարազուրկ ղեկավարները:

Կարո՞ղ է անհավատ կամ հավատքին ձևականորեն հետևող գաղափարազուրկ ուսուցիչը, տնօրենը, նախարարն ու նախարարության պաշտոնյան այնպիսի՝ հայեցի կրթություն ապահովել, որով հնարավոր լինի հայ հավատավոր, գաղափարապաշտ, հայրենասեր, քաղաքական պատասխանատվությամբ պարտաճանաչ քաղաքացի ուսուցանել, կրթել, դաստիարակել:

- Ո՛չ: Երի՛ցս ոչ: Եվ նույնը վերաբերում է ոստիկանին, դատավորին, գյուղի և քաղաքի աշխատավորին, արվեստագետին, երկրի նախագահին, ցանկացած նախարարի, խորհրդարանի անդամի ու ... առավելապես կղերականի...

Անդրադառնալով մշակույթին՝ պետք է նշել, որ հատկապես մշակույթը փուչ է առանց հավատքի և գաղափարի: Ավելին՝ անհավատ և գաղափարազուրկ

գրողի, նկարչի, քանդակագործի, երգահանի, երաժիշտի, պարուսույցի գործը ռաբիսի՛ց էլ վատ է: Այն փո՛ւչ է, տգեղ, խայտառակ և վնասակար:

Ռաբիս արվեստը վատ է, բայց չարյաց փոքրագույնն է: Մեծ չարիքը անհավատ և գաղափարագուրկ արվեստից է սերվում: Որովհետև եթե ռաբիսը ճաշակն է վիրավորում և կարող է նաև այն փչացնել, ապա անհավատ և գաղափարագուրկ հղկված արվեստը վիրավորում է հոգին և կարող է այն սպանել:

Ինչքան զոհեր է տվել հայ ժողովուրդը յոթանասո՛ւն տարի. ինչքան զոհեր է տալիս այժմ՝ ազա՛տ ՀՀ-ում և ովքե՞ր ու երբ կարող են վերջ տալ հայության մշակութային և կրթական եղեռնին...

Ո՞ւր է հայության ղեկավարությունը և հայոց Հայրապետությունը, գիտական և մտավորական միտքը: Եվ ո՞ւր է բոլորիս խի՞ղճը: Մնացե՞լ է այն, գուցե հիվանդ՝ խուլ ու հա՞մր է կամ գերված, ստրկացած, անզգայնացա՞ծ է կամ էլ գուցե հոգեվարքի մե՞ջ է...

Աստվա՛ծ հասնի մեզ:

Շաբաթ, 22-ը մարտի, 2008 թ., ժամը 7:10

ԱԶԳ

Ի՞նչ է նշանակում «ազգ»:

«Ազգ» հասկացության տարբեր բացատրություններ կան: Ազգի բնորոշումները տարբեր հասկացողություններով տարբեր տեսանկյուններից են եղել: Տարբեր՝ փիլիսոփայական առումով, քաղաքական առումով, դասակարգային առումով և ամենաեականը՝ կրոնական-քրիստոնեական առումով են եղել: Մեզ՝ հայերիս համար մեր ազգի ամենաեական և միաժամանակ ամենաճիշտ ու ամենաանմիջական առումով բնորոշումը կարող է լինել Հայ Ազգային Գաղափարախոսության տեսանկյունից, որը, սակայն, դժբախտաբար, բացակայում է արդի հայ թե՛ քաղաքական, սոցիալական, մշակութային և թե՛ գաղափարական ու նույնիսկ հոգևոր մտածողությունից:

- Սա՛, այս վիճակը թեև բնական չէ, սակայն մի պահ անցնե՛նք դրա վրայով, ինչպես անցել ենք տարիներով և գուցե նաև դարերով: Այսօր դիտենք ազգ հասկացությունն այն տեսանկյունից, թե ազգի անդամը՝ հայ մարդը, զգում, մտածում և գործո՞ւմ է ազգի համար այնպես, ինչպես ի՛ր համար: Անո՞ւմ է ազգի համար այն, ինչը լավ, բարի ու անհրաժեշտ է համարում անել ի՛ր անձի ու ընտանիքի համար: Եվ դա արվո՞ւմ է արդյոք հավաքականորեն, այսինքն՝ ազգի՝ հավաքականի համար ազգովին՝ հավաքականորեն...

- Ո՛չ, պարզվում է, որ դա չի՛ արվում մե՛ծ մասամբ:

Եվ դա ունեցել է իր բազում-բազում բացասական լուրջ հետևանքնե՞րը...

- Այո՛, ըստ երևույթին այդպես է:

- Այդ դեպքում, որպես ազգային հավաքականություն, ինչո՞ւ չենք արել այն, ինչը կարող է ամրացնել, զորացնել և բարձրացնել մեզ որպես ազգ ու ազգային հավաքականություն:

- Որովհետև... ինչուի պատասխանը Հայ Ազգային Գաղափարախոսության (ՀԱԳ) մեջ է, իսկ մենք երկար ժամանակից ի վեր չենք ըմբռնել, չենք հասկացել մեր ՀԱԳ-ը, իսկ երբ էլ հասկացել ենք, ապա հաճախ ուրացել, մոռացել ենք այն:

- Ինչո՞ւ:

- Ահա և մի այլ ինչու... որովհետև ուրացել, մոռացել ենք մեր քրիստոնեական հավատքը: Իսկ մեր ՀԱԳ-ը բխում և հիմնված է մեր հավատքի վրա... Ահա՛ թե ինչու որպես ազգ ու ազգային հավաքականություն չենք գործել մեր ազգի համար հավաքականապես...

Դրանից բխող, բայց այլ դասի պատկանող երկրորդ պատճառն էլ այն է, որ որպես ազգ հավաքականորեն չենք կազմակերպված:

- Ինչո՞ւ:

- Որովհետև որպես ազգ հավաքականորեն կազմակերպված լինելու համար անհրաժեշտ է ունենալ ազգի, ազգային հավաքականության ղեկավար: Բայց ղեկավար, որը իշխան է ու նաև ծառա, այսինքն՝ իշխան - ծառա, ով իշխում է ծառայությամբ: Այ սա՛ արդեն մենք վաղուց չենք ունեցել և պատշաճորեն չենք էլ ձգտել, որ ունենանք...

Մարդկության պատմության մեջ հանդիպում ենք ազգային հավաքականությունների, որոնք որպես իրենց անձնական ու հավաքական խնդիր՝ հավաքականության իմաստուններից իմաստություն են պահանջել, որ նրանք իրենց համար, իրենց միջից թագավոր՝ ղեկավար կարգեն...

- Ինչո՞ւ:

- Որպեսզի իրենց տեր կանգնի, կազմակերպի ու առաջնորդի: Որպեսզի ամբոխ հավաքականությունից ազգային հավաքականություն դառնան: Եվ դա համարվում էր ծառայություն թե՛ ծառայությունն ընդունողների և թե՛ ծառայությունը կատարողի կողմից: Ճիշտ է, դա արժևորվում էր որպես հատուկ ազնիվ ծառայություն, որը միտում է դառնալ սուրբ ծառայություն: Իսկ չափանիշն ազնիվ, սուրբ ծառայության Աստվածահաճությունն է:

Եվ դա մենք՝ հայերս էլ գիտեինք: Դա գիտեինք այնքան ժամանակ, քանի դեռ հասու էինք, գիտեինք, ճանաչում և ընդունում էինք մեր ՀԱԳ-ը: Որովհետև մեր ՀԱԳ-ի հիմքում է դրված, որ ազգն Աստվածակերտ է և ծառայում է Աստծուն՝ ծառայելով մարդկությանը... Եվ այդպիսի հավատքով և գաղափարով ապրող ազգի իշխանը և տերը զգացել ու համարել է իրեն նաև ծառա: Ազնիվ, սուրբ ծառա, որովհետև հավատացել է, որ ազգի ծառայությունն Աստծո՛ւն ծառայություն է, և պարտականություն է, որի կատարման կամ թերացման գնահատա-

կանն է՝ պատիվ, զորություն, երջանկություն և վերելք կամ անարգանք, տկարություն, դժբախտություն ու անկում:

Իմաստուն հավաքականություններն այդպիսի իշխաններ են ուզել, պահանջել, փնտրել, գտել, կարգել և նրանց հպատակվել, որպեսզի ամբոխ հավաքականություններն ազգային հավաքականություններ դառնան և ըստ այնմ պաշտպանվեն, դիմանան, զորանան և բարգավաճեն: Եվ հայությունն այդպիսի՝ ազգային հավաքականություն դարձավ, որի յուրաքանչյուր անձ ձգտում էր իր պարտքը, հոգո՛ւ պարտքը կատարել Աստծու առաջ, որ նաև հոգեպես և հավերժորեն փառավորվի... Եվ սա՛ է ՀԱԳ-ը: Հարազատ, հզոր, գեղեցիկ ու ազգասեր ՀԱԳ-ը...

Գալով ազգ-հավաքականություն բնությամբ նաև անձնապես աճելու, կայանալու հասկացության նշանակությունն ըմբռնելուն՝ կարելի է ասել, որ շատ բացվելու կարիք չկա և օգտակար էլ չէ... Ով կարող է և ուզում է հասկանալ, նրա համար մի օրինակն էլ բավ է (թեև կա նաև մի ամբողջ այլ ազգի ներկա և պատմական օրինակը): Ինչո՞ւ, ինչպե՞ս եղավ, որ պետականագուրկ և մեծ մասամբ նաև իրավագուրկ հայությունը կամ հայ գոյությունը Սուրբ Երուսաղեմում այնպիսի տեղ, դիրք ու վիճակ էր ստանում, ինչպիսին միայն մեկ - երկու կայսրություն ունեին, իսկ շատ ու շատ թագավորություններ միայն կարող էին երազել դրա մասին:

Ինչո՞ւ, ինչպե՞ս էր լինում, ինչպե՞ս եղավ դա, երբ մարդիկ, հայերը, ոտքով կամ էշերով շաբաթներով էին ուղևորվում՝ հասնելու համար սուրբ վայրերը, և լուրերն էլ շաբաթների, ամիսների ընթացքում էին ստացվում, նման պայմաններում հայերն այդպիսի սուր մրցակցական դիրքեր էին նվաճում: Եվ ինչո՞ւ ու ինչպե՞ս եղավ, որ հետո հայերի նվաճումների ընթացքը սառեցվեց, իսկ ավելի ուշ, երբ օդանավերով մի քանի ժամից կարող ենք ֆիզիկապես, իսկ տեղեկատվությամբ՝ րոպեների ընթացքում հաղորդակցվել այդ սառեցված դրության հետ, սառույցները չեն քանդվում, և հայկական Երուսաղեմը նահանջ ու կորուստ է ունենում:

Մտածե՛նք այդ ու այլ օրինակների մասին, մտածենք և խոսենք: Խոսենք և գործենք, որպեսզի ամբոխ չմնանք, այլ ազգ դառնանք ու ազգային հավաքականություն...

Եվ դա հօգուտ նաև մարդկության ու ի փառս Աստուծո՛ւ և Նրա ծառա մեր սուրբ նախնյաց:

Շաբաթ, 10-ը փետրվարի, 2007 թ.

ԱԶԳԱՅԻՆ ԷԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հայի համար Աստծուն ծառայությունը հայության ծառայություն է: Այսինքն՝ Աստծուն կարելի է ծառայել՝ ծառայելով հայ ազգին, հայությանը...

Իսկ հայ ազգին ծառայելն սկսվում է առաջին հերթին ծառայելով հայության և Հայաստանի ազնվացման գործին՝ որպես նրանց ապահովության, զորացման, բարգավաճման և բարձրացման հիմնական նախադրյալ:

* * *

Ո՛չ թե տիրել, հրամայել, ուղղորդել, կարգադրել, այլ ծառայել:

Ո՞ւմ ծառայել, ինչի՞ն ծառայել: Ծառայել նախ Աստծուն՝ կատարելով Նրա պատգամները, կամքը, ծրագիրը, գործը: Այսինքն՝ ծառայել Նրա արարածներին և ստեղծածներին:

Մեր՝ հայության դեպքում, համաձայն մեր հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության, այդ ծառայությունը հոգու պարտքի կատարում է, որն իմաստավորում է ապրված կյանքը՝ ծառայելը Աստծուն՝ ծառայելով հայ ազգին, հայությանը, Հայաստանին, հայոց պետությանը և մերձավորին...

Այդպիսի՝ ծառայությունը, համաձայն մեր հավատքի Ջորազլխի պատգամի, թեթև, քաղցր, պտղաբեր է և երջանկացնող՝ մշտապես, հավիտյանս:

* * *

Հայության հատվածները ճյուղեր են, բունը Հայաստանն է (իր ժողովրդով և իշխանությամբ), արմատը հավատքն է, որից բխում է և որի վրա հիմնված է հայկականության գաղափարախոսությունը և բարոյականությունը: Հետևապես, եթե Հայաստանը հայ ծառի բունն է, ապա նրան պահողը և սնողը արմատներն են, որոնք ամենուր են, ուր կա հավատավոր հայը՝ հայկականության գաղափարով և բարոյականությամբ:

* * *

Ազգի կայացում: Պետք է կայացնել ազգը, որպեսզի կայանա երկիրը թե՛ կայուն իշխանությամբ և թե՛ զարգացող տնտեսությամբ, մշակույթով, կրթությամբ և կարողունակ քաղաքականությամբ: Այդ բոլոր կայացումների կառուցման շաղախը հավատքն է՝ հայոց բերդը, իսկ քարը՝ հավատավոր հայը: Հայոց բերդը, որպեսզի դիմանա արհավիրքներին, գրանիտե քարերով պետք է կառուցվի, այլ ոչ թե հուն աղյուսի կտորտանքներով... Եվ քանի որ

ամեն մի շարանի համար անկյունաքարեր են պետք, ապա բոլոր հավատավոր հայորդիները թող լինեն հայոց բերդի գրանիտե քարերը և անկյունաքարերը: Ուստի միացե՛ք իրար հավատքի շաղախով՝ հոգևոր ցեմենտով, որ ամուր, անքակտելի է: Այդ դեպքում բոլորս մարդ և հայ կդառնանք ու կյանք կունենանք: Ու այս հավատքով ծառայելով՝ մեզանից ո՛չ մի մազ չի պակասի, այլ կշնորհվի ԿՅԱՆՔ, երջանկություն երանությամբ՝ հավիտյանս: Հանենք, նետենք մեր սրտից, մտքից և մեր միջավայրից տարակույսը, որը հավատքի հակառակորդն է և որդի նման կրծում է հայոց կաղնու արմատները: Սրբվենք ու ամրանանք հայկականության՝ Աստվածաստեղծ մարդկային հարազատ ընտանիքի հավատքով, գաղափարով և բարոյական արժեքներով :

Ուրբաթ, 20-ը հոկտեմբերի, 2003 թ.

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հայ կյանքում (խոսենք մե՛ր տան մասին) ազգային կառույցներն իշխանություն պիտի բանեցնեն, թե՞ ծառայություն մատուցեն: Հատկապես Հայ եկեղեցին, նրա կոչումն ու պարտականությունն իշխանություն բանեցնե՞լն է, թե՞ ծառայություն մատուցելը, իշխե՞լն է, թե՞ ծառայելը: Եվ եկեղեցականները իշխաննե՞ր են, թե՞ ծառաներ, հոգևոր իշխանություն բանեցնող, թե՞ հոգևոր ծառայություն մատուցող:

Հիսուսն ի՞նչ է ասում, ի՞նչ է ուզում իր եկեղեցուց՝ իշխանություն, թե՞ ծառայություն: Իր օրինակն ի՞նչ է ցույց տալիս մարդկանց, իշխե՞լ, թե՞ ծառայել, թեև Ինքն Աստված է, Արարիչ Տեր և Տիրակալ ամեն ինչի, որ կա և դեռ պիտի լինի, երևելիների ու աներևույթների:

Օրինակ՝ հայ կրթական համակարգը իշխանությունն է, թե՞ ծառայություն, նույնը՝ առողջապահությունը, նույնը՝ ազգային անվտանգության և դատաիրավական համակարգը իշխանություննե՞ր են, թե՞ ծառայություններ: Ազգային անվտանգությունը՝ մեր այդ համակարգը, իշխանությունն է, թե՞ Ազգային անվտանգության ծառայություն: Իսկ ի՞նչ կլինի, ի՞նչ կնշանակի, եթե ծառայության փոխարեն ՀՀ անվտանգության կառույցն իրականում լինի իշխանություն:

Այդ դեպքում այն կվերածվի սովետական չեկայի կամ, լավագույն դեպքում, ՊԱԿ-ի: Կարևոր է, որ հայ ազգային կառույցները՝ թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր, իրականում լինեն ոչ թե իշխանություններ, այլ ծառայություններ... Իրենց ոլորտներում գործեն որպես ծառաներ, այլ ոչ թե իշխաններ: Սա ունի իր խորհուրդը, ինչպես նաև գործնական նշանակությունը՝ համաձայն Հայ Ազգային Գաղափարախոսության, որը բխում է մեր քրիստոնեական հավատքից և հիմնված է նրա վրա:

* * *

- Ի՞նչն է իրավունք տալիս անձին իշխանության ձգտելու, իշխանություն ունենալու, եթե ոչ բարոյականությունը: Բայց ո՞ր բարոյականությունը: Ո՞ւմ կողմից սահմանված բարոյականության մասին է խոսքը...

- Հավատքի բարոյականությունը՝ Աստծուց սահմանված, Հիսուս Քրիստոսի Ավետարանով:

Ով որ ունի այդ բարոյականության նման ըմբռնում, հավատում է դրա ամենագոր ստեղծագործ ուժին, ապացուցել է, որ ինքը դրանով է ղեկավարվել կյանքում և հանձնառու է դրանով ապրել և գործել միշտ, ամենուր ու ամեն ինչում, այդ պարագայում այդ անձը վստահելի է ու արժանի է իշխանություն ունենալու: Աստված նմաններին է արժանացնում լինելու ժողովրդի իշխանավոր, եթե գոհ է Իր ժողովրդից, ներում է Իր ժողովրդին Աստվածային հավիտենական Իր սիրով, որպեսզի փրկության ճանապարհով տանի Իր ժողովրդին դեպի վերելք: Ժողովուրդն էլ իր հերթին պետք է հասուն, զգոն և նույնպես բարոյական լինի, որպեսզի առաջին հերթին բարոյականության չափանիշներով ընտրի ու ենթարկվի իր ղեկավարներին:

Կիրակի, Ջատիկ, 23-ը մարտի, 2008 թ.,
 ժամը 21:20

ՀԱՅՈՑ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՎՈՐ Է ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻԱՑՈՒՄԸ

Ինչո՞վ ու ինչպե՞ս կարելի է բացատրել, որ Ռուս ուղղափառ օրթոդոքս երկու եկեղեցիների՝ Մոսկովյանի և Արտասահմանյանի կողմից միայն կոմունիստական շրջանից ժառանգված բաժանումը վերացավ և միացումն իրականություն դարձավ Ռուսաստանի նախագահի հեղինակությամբ ու անձնական ջանքերով: Իսկ Հայ եկեղեցու բաժանումը դեռ որևէ հուսոյ նշույլ իսկ չի տալիս, որ միտում ունի միանալու: Եվ ո՞վ, ո՞ր ղեկավարը կամ մշակութային, գիտական, հասարակական հեղինակությունը ի գորու և ի վիճակի է միջնորդելու և իրականացնելու Հայ Առաքելական եկեղեցու երկու Աթոռների միացումը:

Ինչո՞վ ու ինչպե՞ս կարելի է բացատրել, որ ուղղափառ բազմազգ և բազմամիլիոն հավատացյալ ունեցող եկեղեցիների ծառաները, կղերականները պահում են իրենց ավանդական հագնվածքը, մորուքն ու կեցվածքը ո՛ր էլ լինեն, բոլոր դեպքերում, իսկ Հայ եկեղեցու կղերականները՝ ո՛չ: Նրանք իրենց մորուքները կամ սափրել են կամ էլ պրոֆեսորական ձևի են հասցրել (ըստ երևույթին, թե՛ աշխարհիկ մտավորական երևալու և թե՛ եկեղեցու ավանդությունն ինչ-որ չափով պահելու համար):

Մենք տեսել ենք նաև Հայ Առաքելական Եկեղեցու թեմերի առաջնորդներ, արքեպիսկոպոսներ, որ ընդհանրապես սափրվել էին աշխարհիկ (կամ կաթոլիկ) ձևով՝ առանց որևէ բացատրության, կամայականորեն, որպես ոչ թե իրենց եկեղեցու ծառա, այլ տեր ու տիրական՝ «ինչ կուզենք, այն էլ կանենք, ո՞ւմ պիտի հաշվի առնենք որ...» հասկացությամբ:

Վա՛յ մեզ: Բայց մի բացատրություն պիտի՞ լինի... որ ժողովուրդն էլ իրեն մարդ զգա: Որ մի օր էլ խառնակիչ ազգադավները, այդ և նման երևույթները շահարկելով, ժողովրդի մի զգալի մասին Էջմիածնի դեմ չգրգռեն ու չփորձեն բարիկադներ ստեղծել...

Արդյո՞ք չարժե թեկուզ այդպիսի՝ ու նման հեռանկարների համար, որոնցից մեկն էլ կարող է կոչվել Հայաստանում աղանդավորների որոշակի նվաճումը, տեղի չունենա: Թե՞ կարելի է մեջքի վրա անտարբեր ու հանգիստ պառկել՝ սպասելով, որ դանակը ոսկորին հասնի ու դրանից հետո հարայ-հրոց գցել, թե այս ի՞նչ դրություն է, եկան՝ գրավեցին, այս ինչե՞ր են անում... և սպասել նաև, թե դրսի իմաստուն խաղաղարարները օլիմպիական բարձունքներից հայ քրիստոնեությանը՝ Հայ եկեղեցուն, աղանդավորների հետ հավասար, հանդուրժողականության դասեր և երկխոսության հորդորներ անեն...

Կիրակի, 25-ը մայիսի, 2008 թ., առավոտյան 6:40

ԽԵԼԱԳԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՍ ՍՐԲԱՊՂԾՈՒԹՅՈՒՆ

(Հայ ազգային իրականության մեջ)

Հայի՝ հայից և կամ հայի՝ ՀՀ-ից գողանալը մեկ դրամ կամ հազար դրամ, մեկ միլիոն կամ տասը միլիոն դրամ, նշանակում է, որ այդ հայը կան՝ գաղափարապես խելագար է, այսինքն՝ անմեղսունակ, որը չի՝ հասկանում իր կատարածի ահավորությունը, որի դեպքում այդ հայը, հավանաբար, պետք է արգելափակվի հոգևոր, գաղափարական և բարոյական բուժման համար, կամ էլ, եթե այդ հայը գաղափարապես խելագար՝ անմեղսունակ չէ, նշանակում է սրբապիղծ է... Այդ դեպքում ինչպե՞ս պետք է վարվել այդպիսինի հետ. այրե՞լ խարույկի վրա... անարգանքի սյունի՞ն գամել... թե՞ նույնպես բուժման ենթարկել՝ հոգևոր, գաղափարական և բարոյական բուժման:

Այս հարցադրումներն ի՞նչ գիտակցությամբ, տրամաբանությամբ և մեր մարդկային-ազգային ո՞ր չափանիշներով պետք է դրվեն և ըստ այնմ պատասխաններ ստացվեն:

Այդ անելու համար գուցե հարկ է նախ դիտել, պարզել և ասել, թե ի՞նչ է հայի համար իր քույր, եղբայր հայը և ի՞նչ է քույր, եղբայր հայի համար հայրենիք Հայաստանը և պետությունը: Ի՞նչ նշանակություն ունի հայի՝ հայ մնալու և Աստուծո առաջ պարզերես մնալու համար հայ ազգի, երկրի և պետության

հանդեպ ազնիվ, առաքինի և պարտաճանաչ լինելը...

Եթե այս հարցերին մոտենանք և պատասխանենք ոչ թե որպես կապիկից առաջացած մարդ-հայ, այլ որպես Աստուծո ստեղծած մարդ-հայ՝ ծագումով Հայկ Նահապետի տոհմից, տոգորված հայկյան տոհմիկ հավատքով և դրանից բխող և դրա վրա հիմնված մարդկային-ազգային գաղափարախոսությամբ և բարոյականությամբ, որոնք սրբակերտվեցին, սրբագործվեցին, նվիրագործվեցին Աստուծո մարդեղացմամբ և 301 թվականին ազգի պետականորեն քրիստոնեացմամբ (Աստվածաորդիացմամբ, Աստվածաժողովրդացմամբ, Աստվածապետականացմամբ), այնժամ կստանանք այնպիսի՝ պատասխան, ինչպես կպատասխանեին հայ մեծերը՝ սրբերը՝ Հայկից սկսած մինչև մեսրոպյանք, մովսիսյանք և վարդանանք և մինչև մարզպետունիները և Տարոնի ֆիդայիները, նժդեհները և Հայաստան-Արցախ հայրենիքի կյանքի, իրավունքի և պատվի համար իրենց կյանքը նվիրած ազատամարտիկները... Ու նաև այսօր իրենց մարդկային-ազգային խիղճն ու գիտակցությունն անաղարտ պահած հայ կանայք և տղամարդիկ, տղաներն ու աղջիկները:

2007-2008 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ

Հայաստանում 2007-2008 թվականների ընտրությունները, ըստ երևույթին, ճակատագրական նշանակություն կունենան հայության, Հայաստան երկրի և պետության համար: Ավելի՛ ճակատագրական, քան երբևէ...

Դրանց հաջորդող երկու-երեք տարիների մեր գոյավիճակի փոփոխությունը մի կողմից կարող է ընթանալ ազգային անվտանգության, կենսունակության և վերելքի՝ մեզ համար աննախադեպ միջազգային բարձրագույն չափանիշներով, մյուս կողմից այդ ակնկալությունը կարող է մնալ տկարացող ազգի մարող հիշողության մեջ՝ որպես երանելի երազ:

Հնարավոր ամենավատ վիճակի փոխարեն լավագույն վիճակի հասնելու գլխավոր նախապայմանը մեր ժողովրդի կատարելիք ճիշտ ընտրությունն է:

Ի՞նչ է նշանակում ճիշտ ընտրություն: Ինչպե՞ս է չափվում այդ ճշտությունը:

Ճիշտ ընտրությունը համապատասխան հատկանիշներով անձանց համապատասխան պաշտոնների համար ընտրությունն է: Իսկ ճշտության չափումը ճիշտ չափանիշների կիրառությամբ է հատկապես ազգին ու հայրենիքին մատուցած ծառայությունների ծավալի և որակի առումով: Դրանցով բնորոշվում է նաև անձի հմտությունն ու փորձառությունը, և, մանավանդ, հայ մարդու քրիստոնեական հավատքից բխող և դրա վրա հիմնված գաղափարախոսության և բարոյականության չափանիշները:

Այս հատկանիշներով ուժեղ, ինչպիսի՞ քաղաքացիներ են գոյացրել 2007 թվականի Հայոց Ազգային ժողովը:

Եվ այս հատկանիշներով օժտված ո՞վ, ո՞ր քաղաքացին է վարելու հայոց պետության ղեկը ու ինչպիսի՞ պաշտոնյաներով:

Ճակատագրական նշանակությամբ էական հարցեր, որոնց ճիշտ պատասխանները պետք է գտնի ու ըստ այնմ ընտրի մեր ժողովուրդը:

Հայ Ազգային Գաղափարախոսության ճանաչումը, ընդունումը և ըստ այնմ վարվելն ու ապրելը կօգնեն այդ պատասխանները գտնելուն: Հայ Ազգային Գաղափարախոսություն, որը բխում է և հիմնված է Աստուծո հավատքի վրա՝ Ավետարանով և Խաչով:

Հինգշաբթի, 16-ը մարտի, 2006 թ., ժամը 23:10

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱԽՏԱՀԱՐՈՂ ՎԻՐՈՒՄԸ (Բիճ և բճություն)

Բիճը, ընդհանրապես կենսաբանական երևույթ լինելով, միաժամանակ նաև հասարակական երևույթ և հասկացություն է: Այդ իմաստով կյանքն ապացուցում է, որ կա նաև գաղափարական բիճ և քաղաքական-հասարակական գործունեությամբ բիճ: Ամենավատը և վնասակարարը հոգեբարոյական արժեքներով դիմակավորված բիճն ու բճությունն է: Այդպիսի բճերի համար ընկերություն, ազգ, երկիր, պետություն, գաղափար ու առավել ևս սրբություն չկա... Նրանց սրբությունը և սկզբունքը եսն է: Եսը, որի համար բիճը օրինավոր է համարում քաղաքական, սոցիալական, տնտեսական ու այլ տեսակի մանիպուլյացիաներ, կեղծիքներ, խարդախումներ, մինչև իսկ՝ դավաճանություն և դաժան ճնշումներ՝ սնուցելու, հաստատելու համար իր եսը:

Մարդկությունն իր պատմության ընթացքում միշտ էլ արտադրել է բճեր: Եղել են ժամանակներ, երբ բճությունը գերակայել է այս կամ այն հասարակության հարաբերություններում: Այդ պարագաներում կյանքը տուժել է՝ արձանագրելով արդարության ու իրավունքի ճնշում, խեղում, խախտում, որով և՛ կյանքի ընկրկում...

Մեր ազգն ու հայրենիքն էլ հաճախ տեսել են բճության կատարած ավերներ: Եվ ամենաամոթալին, ցավալին և վտանգավորն այն է, որ այդ ավերներն ավելի շատ ոչ թե պարզ ժողովրդի, այլ ղեկավար, մտավորական, կղերական կամ հարուստ խավերի միջից են եղել... Վկա մեր Պատմահայրն ու մինչև մեր ժամանակակից պատմությունը...

Եվ մենք՝ հակառակ մեր շատ մեծերի պատգամների, որ մեր ազգային

առաքինության, ազնվության մեջ բճուխություն չխառնենք, այնուամենայնիվ մեր մեջ հաճախակի այլասերումների պատճառով առաջացած մտածելակերպը, խորհուրդները, վերաբերմունքն ու արարքները մեր ազգային առաքինության, ազնվության մեջ բճուխություն խառնեցին, որով ազգի՝ դեպի վերելք ընթացքն արգելակվում էր, խոչընդոտվում և մղվում էր դեպի անկում, ճահիճ...

Այժմ մեր կյանքի ընթացքում թե՛ դրսից ներմուծվող և թե՛ ներսում արտադրվող բճուխյան վիրուսը շատացել, և դրա վնասները մեծացել են...

Հետևապես բճուխունը, նաև քաղաքական, հասարակական, գաղափարական և մշակութային վիրուս լինելով, դրա հարուցիչներն արտահայտվում են նաև կրթության, դաստիարակության, տեղեկատվության ու արվեստի մեջ՝ իրենց բոլոր ցավալի, խայտառակ և կործանարար հետևանքներով...

Ի՞նչը կարող է կասեցնել, չեզոքացնել և իսպառ վերացնել հայ կյանքից ու Հայաստանից այդ վիրուսը՝ բճուխունը, բճուխյան վարակը և դրա ամոթալի՛, խայտառակ և կործանարար հետևանքները, եթե ոչ Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ):

Ասքուր, հստակ, հարազատ ՀԱԳ-ը, որը բխում է և հիմնված է Աստուծո հավատքի վրա՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանով և խաչով, ինչպես դարերի ընթացքում, այնպես էլ մեր օրերում միակ աղբյուրն է, որ սնուցում, կազդուրում և զորացնում է հայ ազգի հոգեբարոյական ինուևիտետը՝ վարակամերժ կարողությունն ամեն տեսակի վիրուսների դեմ:

Խորհրդային հասարակարգն իբր թե պիտի վերացներ բճուխունը՝ իբր թե բուրժուական քաղքենիության վերացմամբ և մարքսիզմ-լենինիզմի գաղափարականության հաստատմամբ...

Կարծես թե մի կարճ ժամանակ դա ստացվում էր, բայց միայն թվում էր. իրականում սկսվեց բճուխյան վիրուսի սովետական տարատեսակի զանգվածային տարածումը մանկապարտեզից մինչև ամենուր՝ հոգևոր, մտավոր, քաղաքական, հասարակական ու արվեստի և գրականության բնագավառները...

Առաքինությունը, ազնվությունը, ազգասիրությունը, որով և արիությունը, տղամարդկությունը՝ Սուրբ ասպետությամբ, որը հակառակ կողմն է բճուխյան, սկսեց հարաճուևորեն խամրել, դուրս մղվել հայ կյանքից՝ տեղի տալով ինտերնացիոնալի քողի տակ հակամարդկային ու հակազգային դավաճանական հոգեբանության, մտայնության ու դրանցից բխող արարքների տիրապետությանը: Իսկ արիության, քաջության ըմբռնումն սկսեց արտահայտվել խուլիգանական համարձակությամբ, լիբր հանդգնությամբ և սին ցուցամուլ ռիսկի արտահայտությամբ... Եվ փառավորվում էին ազգի դավաճան մատնիչներից ու անողնաշար հարմարվողականներից մինչև փողոցի գողերը... Մեր նոր սերնդի մեջ շատերը, անիրազեկ ճշմարտությանը, նրանց հերոս նկատելով, համարում էին արժանի ընդօրինակման... Իսկ շատ

անմեղ երեխաներ, պատանիներ նույնիսկ երդվում էին գողերի անունով...

Այդ անկումային վիճակն ստեղծվում էր այն թյուր հասկացողությամբ, որ դրանում բռնություն չկա, այլ կա մի դեպքում՝ պրագմատիզմ, առաջադիմություն և նույնիսկ հայրենասիրություն (հիշենք մեր Տիրոջ՝ Աստվածորդու խոսքը՝ ուղղված էր աշակերտներին. «Մինչև իսկ ժամանակը կգա, երբ ով ձեզ սպանի, պիտի համարի, թե Աստծուն պաշտամունք է մատուցում» (Յովհաննես 16.2), իսկ մյուս դեպքում իբր թե կա արիություն և քաջություն, ուժեղ տղաներ...

Իհարկե, այդ բոլորը սխալ էր և հույժ վնասակար, որովհետև իրականում գործում էր բռնության վիրուսի (բացիլի) պարզապես մեկ այլ տարատեսակը, որն աճում էր կոմկուսի վերնախավերում և տարածվում մինչև տեղական ապարատներ...

* * *

Ազգային հոգեբարոյական և գաղափարական առողջապահության մեր դարավոր կառույց-համակարգը, որն իր վայրիվերումներով հանդերձ իր խնդիրը կատարում էր նույնիսկ մեր ազատագուրկ և պետականագուրկ պայմաններում, յոթանասուն տարվա ընթացքում խախտվեց, խեղվեց ու խորապես ախտահարվեց բռնության վարակով: Հայությունն ու Հայաստանն առայժմ դեռ չունեն այդ ստեղծված վիճակի և բռնության նոր ձևերի նոր ազդեցություններով ավելի վատթարացող դրությունը վերահսկելու ու իսպառ լավացնելու ո՛չ կառույց-համակարգ և մեխանիզմներ, ո՛չ էլ պատշաճ գիտակցություն ու կամք: Դրա պատճառներից մեկն այն է, որ վերոնշյալ ընթացքում ազգի ոգին, գաղափարը, բարոյական արժեքները և ազգային ինքնագիտակցությունը վառ պահող համակարգերը, կառույցները, մեծ մասամբ անպաշտպան ու անգորմնալով, ենթարկվում են սաստկացող վարակի ազդեցությանը՝ այս անգամ նաև աշխարհի այլ ուղղություններից աստիճանաբար ներարկվող բռնության վիրուսի նոր շտամպով...

Այս վիճակում չգտնվելու համար, զոհն 1991 թվականի ազատության ու անկախության հանրաքվեի և Արցախի ազգային-ազատագրական պայքարի հետ պետք է սկսվեր համահայկական-հայաստանյան հոգեբարոյական և գաղափարական առողջացման հաստատուն, կազմակերպված, համադրված և գիտական մակարդակով, պետական մոտեցումով ու ազգային գաղափարական գիտակցությամբ գործընթացը: Այն հաստատունորեն պետք է ներառեր ազգի հոգեկան, գաղափարական, բարոյական վիճակի ու ազգային, քաղաքական, հասարակական և քաղաքացիական գիտակցության ամբողջական ախտազերծումը բռնությունից, որով և՛ այդ տեսակի քաղքենիության վիրուսային վարակից... Սակայն, ցավոք, այդ տեղի չունեցավ:

Իսկ ի՞նչ տեղի ունեցավ:

Տեղի ունեցավ այն, որ բճուխության հին վիրուսը, դրսից ներմուծված նոր վիրուսի հետ համասերտ աճելով, նոր տարածում ստացավ՝ նոր խավերի նոր հարթություններում... Եվ նորաճ վիրուսն սկսեց ներթափանցել այս անգամ նաև պոռնո և զեխ կյանքի բազմաբնույթ գովազդներով՝ նոր ոսկե հորթի գռեհիկ նյութապաշտության ազդակներով, որոնք կործանարար ներգործություն են ունենում մեր արմատներից զգալիորեն խորթացած, հեռացած հավատազուրկ, գաղափարազուրկ և բարոյազուրկ իրականությունում...

* * *

Դժբախտաբար, փաստն այն է, որ հետխորհրդային շրջանում ևս մեր երկրում բճուխությունը ո՛չ միայն մնաց, այլև ավելացավ, նորոգ կազմակերպվեց, այլափոխվեց ու ավելի մեծ ագրեսիվությամբ շարունակում է իր տնավեր, ազգավեր, մարդավեր գրոհը:

- Սակայն ի՞նչ: Այդ գրոհին տեղի՞ ենք տալու, հանձնվելո՞ւ ենք:

- Ո՛չ: Եվ երի՛ցս ոչ...

Պիտի դիմադրենք և դիմանա՛նք: Անպայման և ո՛չ միայն այդ. պիտի բուժվենք, կազդուրվենք, առողջանանք, հզորանանք և կենսունակ դառնանք: Կենսունակ՝ մեր ընտանիքների, հասարակության, մեր գյուղերի ու քաղաքների և մեր ազգի ու պետության համար: Մենք պիտի զորանանք, աճենք և բարգավաճենք: Դրա նոր ժամանակը, նոր միջոցը, նոր առիթը 2007-2008 թվականների բախտորոշ ընտրություններն են: Ճիշտ ընտրություն կատարելով՝ ճիշտ օգտագործելով դրանք՝ մենք օգտաշատ ուղի կհարթենք համայն հայության հայրենիքի՝ Հայաստանի հայոց պետության և մեր սերունդների ապագայի համար: Աստուծո օգնությամբ:

Այն, ինչ որ ազգը բաց թողեց մինչև 1991 թվականը ու նաև դրանցից հետո, դրա տեղը պետք է լրացնի՝ բաց չթողնելով 2007-2008 թվականների ճակատագրական նշանակությամբ ընտրությունների առիթն ու հնարավորությունը:

Այդ մեզ պարտավորեցնող, հոգով պարտավորեցնող Աստվածաշնորհ առիթն ու հնարավորությունը հասկանալու և ըստ այնմ ճիշտ վարվելու չափանիշները լինելու են բարձր մակարդակի ընտրությունների անցկացումը և ճիշտ ղեկավարների ու ղեկավարի ընտրությունը: Բարձր մակարդակը պետք է որոշենք, բացի միջազգային, նաև հայկական չափանիշով, որը մենք հայտարարենք ու ապացուցենք, որ միջազգային ամենաբարձր մակարդակից էլ բարձր է: Ինչ մնում է ճիշտ ղեկավարների և ղեկավարի ընտրության, հատկապես մեր երկրի ու ազգի ղեկավարի, առաջնորդի, պատասխանատուի ընտրության չափանիշին, ապա այն պետք է ներառի թեկնածուի հետևյալ հատկությունները. Հայաստանի ու հայ ազգի նախագահը նախ և առաջ պետք է լինի հայ: Ո՛չ թե որտեղացի հայ, այլ ՀԱՅ, ով խորապես կրում է, կյանքում

առաջնորդվում է և երկիրն ու ազգը առաջնորդում, ղեկավարում և դրանց նկատմամբ հոգով պատասխանատվություն է զգում Աստուծո հավատքով, դրանից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, որոնցմով և բարոյականությամբ:

Երկրորդ՝ այդ թեկնածուն պետք է լինի արդարամիտ, քաջ ու հայրենասեր, և նրա անձնական եսը պետք է տեղի տված լինի ազգի եսին...

Երրորդ՝ այդ թեկնածուն պետք է լավ գիտենա և սիրի իր ազգն ու հայրենիքը, պարտք ու պատի՛վ համարի դրանց ծառայելը և գիտելիքներ, փորձառություն ու կամք ունենա՝ չընկրկելու ներքին ու արտաքին փորձությունների առաջ, այլ հմտությամբ, քաջությամբ ու արժանապատվությամբ շրջանցելու կամ չէզոքացնելու, հաղթահարելու դրանք:

Սրանք այն հիմնական հատկություններն են, որոնցով պետք է օժտված լինի Հայաստանի ու հայ ազգի յուրաքանչյուր ընտրյալ ղեկավար, բայց հատկապես նախագահը, որպեսզի իր հոգու հավիտենական պատասխանատվության հավատքով կատարի իր պարտքն ազգի, հայրենիքի, պետության ու նաև Աստուծո առաջ, Աստուծո օրհնությամբ ու օգնությամբ:

2008 թվականի հայ իրականության մեջ անձ, որն առավել մոտ է նախագահի թեկնածուի այդպիսի հատկություններին և ունի գիտակցությունը, ցանկությունը, կամքը և շնորհքն իրեն բարձրացնելու մինչև այդ հատկությունների բարձրագույն աստիճանը, ես ճանաչում եմ միայն մեկին. նա ծագումով Սյունիքից, Արցախի ծնունդ, դարբին Ազատի որդի Սերժ Սարգսյանն է:

Հայաստանի քաղաքացիները ճի՛շտ ընտրությամբ նրան պետք է վստահեն Հայաստանի Նախագահական ծառայությունը:

Ես կասկած չունեմ, որ Հայաստանի քաղաքացիների ճնշող մեծամասնությունը նրան կվստահի:

Աստված նրան օրհնի, պահի, պաշտպանի ու օգնի, որ հայ ազգի փրկության խաչը կարողանա առաջիկա հինգ տարիներին փառքով առաջ տանել...

Ընտրի՛ր, հա՛յ ժողովուրդ, և ցնծա՛ ու վայելի՛ր քո ընտրությունը, որից Աստված էլ կգոհանա: Փա՛ռք Նրան:

Սա մակարդակ է, որին հասնելու գործընթացը պետք է ազգի պատասխանատուների կողմից ծրագրվի, կազմակերպվի և կառավարվի հայկական մաքուր սրտով գաղափարականությամբ, պատվախնդրությամբ ու նաև հմտությամբ, համարձակությամբ և վճռականությամբ:

Ու Աստված կօգնի...

Եվ հայը կհաղթի ի վերելք ազգի, հայրենիքի և պետության, ի բարօրություն մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության:

5-ը մարտի, 2008 թ., ժամը 22:15

ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՐՈՅԱԿԱՆ, ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Ինչպես կարելի է բնորոշել և գնահատել 2008 թ. նախագահական ընտրությունների առնչությամբ դրսևորված ընդվզումները, անկարգությունները և հանցագործությունները և դրանց ձևերն ու մասշտաբները, եթե ոչ որպես մեր ժողովրդի հոգեբարոյական, գաղափարական և սոցիալ-քաղաքական վարակվածության փաստանիշներ...

Այդ հատուկ վարակի վիրուսն աճեցվում և տարբեր ձևերով ու միջոցներով ներարկվում էր հայ ժողովրդին երկար ժամանակից ի վեր: Սակայն դրա ներարկումը նոր թափով և նոր հնարքներով սաստկացվեց հատկապես խորհրդային իշխանության տարիներին, որն ուրույն ձևով և ներգործությամբ կիրառվեց նաև խորհրդային կարգերի քայքայումից հետո Հայաստանի անկախության ակունքներում...

Եվ ազգի հոգեբարոյական, գաղափարական և քաղաքական արդեն իսկ տկար, անկազմակերպ և տարերայնորեն հանդես եկող առողջապահական համակարգը նոր դավադրությամբ մեկուսացվեց և չգործեց...

Այս պայմաններում մինչև 2007 թվականի վերջերը հատուկ դավադրական միջոցներով կառավարվող հայ հասարակության փստահարման գործընթացի արդյունքը ցավալիորեն դրսևորվեց հատկապես 2008թ. փետրվարի 19-ից մարտի 2-ը և նոր ձևերով նենգորեն շարունակվում է ակնհայտ նպատակադրմամբ՝ փստահարել թե՛ Հայաստանի և թե՛ արտերկրի հայության նորանոր խավերի նորանոր մոլորյալներին...

Բայց, ո՛վ հայություն և մանավանդ՝ ո՛վ ազգի պատասխանատուներ, չի կարելի ա՛յդ աստիճանի աչքաթող անել ազգին, երկրին և պետությանն սպառնացող սատանայական վտանգը: Չի՛ կարելի հանցավոր պարտազանցության աստիճանի թուլացնել զգոնությունը և թույլ տալ ազգի մի զգալի մասի խրոնիկական աստիճանի հոգեբարոյական, գաղափարական ու քաղաքական փստահարումը և, բացի այդ նաև, հոգեմտավոր ու քաղաքացիական գիտակցության անդամալուծությունը, և դրա ազգային ու պետական իմաստով անձնասպան արարքների փաստը տեսնելուց հետո՝ միայն հարայիրոց գցել, թե... եկան, խաբեցին, ապակողմնորոշեցին, զոմբիացրին ու հանցագործ դարձրին...

Հասպա ի՞նչ պիտի լիներ, սատանայից ի՞նչ էր պետք սպասել, երբ նա ազգի հոգին, միտքը, գաղափարն ու բարոյական համակարգն փստահարելու վիրուսների արտադրությունը վաղուց ներկրել, կազմակերպել էր և վիրուսների զանգվածային ներարկման տեխնոլոգիան էլ իր ճտերով համահայկական մասշտաբով իրագործում էր դիվային մեթոդներով և հրճվանքով...

Դրա համար կոչում ենք. «Զարթնիր, լա՛ն, դուշման մեր մե՛ջ ի, դուշման կուզե սըրե՛ մըզի»: Ուզում է ոչնչացնել մեր հավատքը՝ հոգին և գաղափարը, ազգային միտքը և պատիվը՝ քրիստոնեական բարոյականությունը, և ինչ որ մարդկայնորեն-ազգայնորեն վեհ, նվիրական ու էական է մեր գոյության պահպանման և վերելքի համար...

* * *

5-ը մայիսի, 2008 թ.

Շատերն են փորձել դարերի ընթացքում ոչնչացնել հայ ազգի բարոյական կերտվածքը, այլասերել հայի նկարագիրը, որպեսզի թուլացնեն ազգի ոգին, դիմադրողականությունը և նվաճեն հայ ազգը կամ եթե նվաճել են արդեն, ապա ավելի խորացնեն նվաճումը: Բայց այդ արել են օտար թշնամական ուժերը, իսկ ազգային ուժերը անձնագոհաբար դիմադրել, պաշտպանել են ազգը: Շատ հազվադեպ է եղել, երբ հայերը գործել են ազգի դեմ թշնամաբար՝ գործակցելով թշնամու հետ կամ իրենց գործունեությամբ օգնելով թշնամուն: Եվ մեր հայ պատմությունը պարսավել, նախատել, դատապարտել է հայ ազգին թշնամաբար վնասող հայերին՝ նրանց անվանելով վասակներ ու մերուժաններ: 20-րդ դարի սկզբում հայ բոլշևիկների քայքայիչ գործունեությունը դեռևս լիովին չի պարզաբանվել և գնահատվել: Եթե այդ հարցում շտապողականությունը թվում էր, թե անհրաժեշտ չէ, սակայն դա միայն թվում էր, մինչդեռ նկատի ունենալով հայության, Հայաստանի և պետականության դեմ մերօրյա հայ դավադիր դավաճաններին՝ որոշ հանրահայտ դեմքերի գլխավորությամբ, ապա հայ բոլշևիկների 1910-20-ական թվականների դավադիր, քայքայիչ գործունեության պարզաբանումն ու գնահատականը խիստ ակտուալ է դառնում:

Երկուշաբթի, 12-ը մայիսի, 2008 թ.

ԸՆԴԴԻՄԱԴԻ՞Ր, ԹԵ՞ ԹՇՆԱՄԻ

Ընդդիմադիրը, եթե հարազատ է, այդ դեպքում պարզապես այլամիտ է, այլ ոչ թե մի այլ թշնամի, որը մեր բազում թշնամիներից տարբերվում է լոկ նրանով, որ իր թշնամական արարքները, թշնամական գործունեությունը ներսից է կատարում՝ թաքնված իբր թե ազգային շահերին հետևելու շղարշով:

Այդպիսի ընդդիմությունը, թեև խիստ նենգաբար, խորամանկ, խարդախ, այնուամենայնիվ կուրացած իր ազգի և պետության դեմ տածած ատելու-թյունից, կատարում է նաև միամիտ, պարզունակ քայլեր՝ բացեիբաց հայտնելով իր դժգոհությունը Հայաստանի ժողովրդի և պետության հզորացման և վերելքի

փաստի վերաբերյալ:

Հայաստանի ներկայիս ընդդիմադիր կոչվողները (դժբախտաբար ներառյալ հոգսերով բեռնավորվածները, «հոգնածները» և խաբվածները), մեղմ ասած, դժգոհություն, իսկ իրականում ցասում են արտահայտում Հայաստանի նորընտիր նախագահի դեմ, ոչ թե նրա համար, որ նա թույլ է, անկարող և վատ է ղեկավարում, չի՛ լուծում ազգի, հայրենիքի և պետության առաջ ծառայած բազմամյա հարցերը, այլ ընդհակառակը՝ դժգոհության ցասում են արտահայտում և երդվյալ թշնամու վերաբերմունք ցուցաբերում, որովհետև Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը թույլ չէ, այլ շատ ուժեղ է, անկարող չէ, այլ շատ կարող է, և վատ չի ղեկավարում, այլ շատ լավ է ղեկավարում՝ որպես հմուտ պետական գործիչ, ով ո՛չ թե անլուծելի է թողնում բազմամյա խորացած պրոբլեմները, այլ արագ, վճռական, բայց և սահուն ու արդյունավետորեն լուծում է դրանք: Եվ դա բավական չէ: Ի դժբախտություն այդ 5-րդ շարասյունայինների, նախագահը հարաճուն հույս և վստահություն է առաջացնում ժողովրդի լա՛յն շրջանում, որ երկիրն ավելի է ամրապնդվելու, բնակչության բոլո՛ր խավերը բարեկեցիկ կյանքով են ապրելու և պետությունը զորանալու և միջազգայնորեն իր հեղինակությունն ու վստահելիությունը հարատևորեն բարձրանալու է:

Ահա՛ թե ինչի՛ց են վատ զգում, դժգոհում, անիծում թաքուն և հայտնի ընդդիմությունը ու նրա թույնից խեղճ կուրացածները:

Բայց սա երկար չի՛ տևելու, հայ աշխարհում ավելի պայծառանալու է ճշմարտության լույսը, և կույրերը տեսնելու են, խուլերը լսելու են, սառած սրտերը ջերմանալու են և մոլորվածներն էլ գտնելու են բարի, հարազատ ճիշտ ճանապարհը՝ վաղուց ցանկալի ազգային համերաշխություն, խաղաղություն, զորություն և վերելք: Իսկ չարացած, այլասերված, խորթացած ու օտարացածներն այդ լույսից դուրս են մղվելու դեպի իրենց օտար տերերը: Բարեբախտաբար նրանք՝ անբուժելիները, շատ քիչ են, որոնք, որպես չոր ճյուղ, հայկական ծաղկուն ծառից պոկվելու և դեն են նետվելու՝ օտար քառուղիներում «վայելելու» ազգից թալանածը, մինչև որ գա երկնային դատաստանը, որը բոլորովին չի՛ ուշանալու...

Իսկ կյանքն Աստուծո՞ւ ողորմությամբ առա՛ջ է գնում, առաջ է գնալու և հայ ազգը, Հայաստանն ու մեր հարազատ պետությունը:

Աստուծո՞ւ վ առա՛ջ:

* * *

Հայ ազգ, համայն հայություն, շնորհավոր քո պետական վերածնունդը: Իսկ որպեսզի այն ամրապնդվի ու հարատևորեն կենսագործի, պատրաստվիր քո հոգևոր, դրանով՝ քո գաղափարական և դրանցով՝ քո բարոյական վերածննդին, որպեսզի գրավես քո արժանի տեղն աշխարհում ու, ամենակարևորը, որպեսզի գոհացնես քո Տեր Աստծուն:

Հայ ազգի ինչպիսի՜ փառավոր հեռանկար...

Չորեքշաբթի, 7-ը մայիսի, 2008 թ., ժամը 21:00

ՍՈՎՈՐԵՑԻՆՔ ԿՈՎԵԼ ԱՐՏԱՔԻՆ ԹՇՆԱՍՈՒ ԴԵՍ, ԲԱՅՑ ՆԵՐՔԻՆ ԹՇՆԱՍՈՒ ԴԵՍ ԿՈՎԵԼ ԱՐԴՅՈ՞Ք ՍՈՎՈՐԵՑԻՆՔ

Երկարատև, շատ երկարատև պետականազրկության, ազգային կենտրոնաձիգ իշխանազրկության ու ըստ այնմ՝ ազգային ռազմաքաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային ու այլ բնագավառների կազմալուծման և տկարացման պատճառով դիմադրող, կռվող ազգից վերածվեցինք մեծ մասամբ համակերպվող, հպատակվող ազգի կամ, ավելի ճիշտ, ազգային մասնատված հավաքականությունների, խավերի:

Այս պայմաններում մեր ինքնության (կերպար, նկարագիր, հոգեբանություն) ճանաչման և պահպանման համար անհրաժեշտ մեր պատմությանը ևս պատշաճորեն հաղորդ չլինելուց բացի (մի դրություն, որ հիմա էլ շատ չի փոխվել) այն գրողներն ու մեկնաբանողները ևս միշտ չէ, որ հարազատ ու օգտակար էին մեր ազգային ինքնության իրավ՝ ճանաչման համար: Այսպիսով, մեր ժողովուրդն իր ազգային-պետական գոյության վերականգման համար իր մոռացված պատմությունը վերհիշելու և դրանից պատշաճ օրինակներ վերցնելու ու առավել ևս քաղաքանապես զարգանալու համար պատշաճ հնարավորություն չէր ստանում: Հայն այդ մասին, լավագույն դեպքում, սովորում էր իր շրջապատի ոչ թե ազգային պետականամետ շարժումների օրինակներից, այլ ազգային սոցիալական արդարության քյոռօղլիական բնույթի տարբեր ընդվզումների օրինակներից: Եվ դա հիմնական պատճառներից մեկն էր, որ տարբեր ժամանակներում, տարբեր տեղերում հայության որևէ հատված, մեծ մասամբ տարերային ու չհամակարգված, մասնակի ելույթներ էր ունենում՝ հիմնականում իր ազգային գեներտիկական, մարդասիրական ու ազգասիրական մղումներով...

Պատմական նշանակության այդ վիճակի խորացմանը նպաստեց նաև բալկանյան ազատամարտերի օրինակը, և ֆրանսիական հեղափոխության ազատամտության հետ որդեգրեցինք նաև բալկանյան ազգային-ազատագրական հայդուկային փիլիսոփայությունը, բայց ավելի շատ՝ դրա

ոգին և գաղափարականությունը, քան թե պետականության կերտման ռազմաքաղաքական-տնտեսական գործնականությունը: Դրան ավելացավ նաև օտարածին և մեր ազգային իրականությանը խորթ ռուսական նարոդնիկության և տարբեր ծախակողմյան ըմբոստությունների ալիքը, որը Արևմտյան Եվրոպայից անցել էր Ռուսաստան և ռուսականացել (քանի որ ռուսական ամուր պետականակազմ օրգանիզմի ծավալը թույլ էր տալիս դա անել, ի տարբերություն հայկական պետականազուրկ բովանդակությամբ փոքրակազմ օրգանիզմի)... Եվ սկսվեց հայ ֆիդայական-հեղափոխական պայքարը, որը թեև ուներ հայ ազգային պատմական և նույնիսկ մասամբ պետական հիշողություն, մեծ մասամբ, գոնե հանձինս հեղափոխությունը ծրագրողների, բայց զուրկ էր հայ պետական թե՛ գաղափարից ու մտածելակերպից և թե՛, առավել ևս, քաղաքականությունից: Այս դրությամբ արտաքին թշնամու դեմ պայքարի ընթացքում ոգի, ուժ ու երբեմն նաև դրական արդյունքներ ցուցաբերում էինք, բայց արտաքին քաղաքականության ասպարեզում մեր պայքարը, գործունեությունն ու արդյունքները մինուսական էին: Որով օտարները, լինեն թշնամի թե՛ բարեկամ, իրենց ցանկացած ձևով մեզ շուռ ու մուռ էին տալիս տարբեր մանիպուլյացիաներով...

Մի դժբախտ հանգամանք էլ էր առաջացել, որի պատճառով հայությունը չկարողացավ համախմբել իր ազգային ուժերը, այլ ընդհակառակը... Նորաստեղծ հայ արդյունաբերական բուրժուազիան և հին փորձառու վաճառական դասը մեծ մասամբ օտարացվեց և կամ մեկուսացվեց ազգային որոշումներ ընդունելու գործընթացներից, իսկ դարերի ընթացքում որոշ չափով պետական ֆունկցիան որդեգրած և կիրառող Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին չեզոքացվեց հայ բուրժուազիայի հետ մեկտեղ՝ նույնիսկ երբեմն դասակարգային թշնամու տեղ դրվելով...

Այս վիճակում, մի շարք եղեռներից հետո, ստացանք ցեղասպանական հարված, տարագրություն և հայրենիքի մեծ մասի կորուստ: Դա պատմականորեն շատ սեղմ ժամանակամիջոցում տեղի ունեցած այնպիսի՝ սաստկության հարված և սթրես էր, որին մարդկայնորեն չա՛տ դժվար էր դիմանալ և վերապրել:

Բայց հայությունը դիմացավ, վերապրեց ու անհավասար պայքարում նույնիսկ ի վերջո հաղթանակ տարավ և պետականացավ:

Այս հրաշքը կատարվեց. համարյա հազարամյա պետականազրկությունից հետո վերապետականացանք: Բայց ինչպե՞ս, ի՞նչ վիճակում կերտեցինք, պահեցինք և պաշտպանեցինք մեր նորանկախ պետությունը:

Ինչպե՞ս պահեցինք, պաշտպանեցինք մեր պետությունը արտաքին թշնամուց և ներքին թշնամուց: Վերջապես պե՛տք է լրջորեն անդրադառնանք այս պետական, նաև ազգային-մարդկային հոգևոր, գաղափարական և բարոյական նշանակության հարցին:

1918 թվականի մայիսին, երբ մենք պարտության մատնեցինք մի մեծ պետության զինվորական և քաղաքական գերակշիռ ուժը և անկախացանք, պետականացանք, այդ կարգավիճակն առաջին հերթին ճանաչվեց հենց այդ պարտված պետության կողմից, ինչն ի վերջո հանգեցրեց նաև նրա կողմից ճանաչմանն իր իսկ կատարած եղեռնագործության և Հայաստանի ինքնիշխանության՝ մեր հայրենիքի մեծ մասի վրա:

Իսկ երկուսուկես տարի հետո՝ 1920 թվականին, մեր ոչնչացմանը ձգտող այն օտար ուժը, որ հակադրվեց Հայաստանի պետական անկախ գոյությանը, պետություն չէր, այլ իր իսկ պետական իշխանության դեմ (որը 1918 թ. ճանաչել էր Հայաստանի անկախությունը) ըմբոստացած նոր կազմավորվող ուժ էր՝ թույլ զինված և վատ կազմակերպված... Բայց մենք մեր համեմատաբար արդեն շատ ավելի մեծ և լավ զինված ու կանոնավոր բանակով տեղի տվեցինք, պարտվեցինք այդ երդվյալ թշնամուն:

Եվ 1920 թվականին մեր պետականությունը նորից կորցրինք. մեր պետությունը պարտվեց ոչ թե արտաքին թշնամուց, այլ ներքին թշնամուց:

Համաձայն պատմական տվյալների՝ 1920 թ. երկրորդ կեսին միջազգայնորեն ճանաչված Օսմանյան կառավարության կողմից, որպես ապստամբ, դավաճան դատապարտված և օրենքից դուրս հռչակված Մուստաֆա Բենալի ուժերը, որոնք սպառազինությամբ ու հանդերձանքով զիջում էին Հայաստանի Հանրապետության զինված ուժերին, կռվում էին երկու հակադիր ռազմաճակատներում՝ արևելքում Հայաստանի, իսկ արևմուտքում Հունաստանի դեմ, որի ուժերը զգալիորեն գերազանցում էին քենալական ուժերին:

Քենալական ղեկավարությունն իր ունեցած զորքի գերակշիռ մասը՝ հիսուն հազարը՝ Կարաբեքիր փաշայի ղեկավարությամբ, տեղակայել էր հայկական բանակի դեմ, իսկ փոքր մասը՝ հունական բանակի: Ինչո՞ւ: Որովհետև ուզում էր նախ ոչնչացնել հայկական բանակը, հաղթել Հայաստանին, իսկ հետո ավելի ուժեղացած ու ամուր թիկունքով ավելի ակտիվ կռվել հունական ուժերի՝ Հունաստանի դեմ:

Այդ օրերի ազգային գործիչներն այս փաստը մեկնաբանում են նրանով, որ այդ պահին Հայաստանի ռազմաճակատում հաղթանակն ավելի կարևոր էր Թուրքիայի համար: Եվ դա համապատասխանում էր նաև քենալականների հիմնական և միակ դաշնակից խորհրդային Ռուսաստանի հաշիվներին:

Ամենայն հավանականությամբ, դա այդպես է, բայց կար նաև այլ պատճառ. քենալականներն իրենց հաղթանակը Հայաստանի դեմ համարում էին ավելի դյուրին, որովհետև Հայաստանում գործում էր ներքին զորեղ թշնամի՝ հանձինս հայ բոլշևիկների, որոնք իրենց վերադասի՝ բոլշևիկյան Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության ղեկավարների ցուցումներով պետք է կազմալուծեին հայոց պետությունը՝ թուլացնելով, տկարացնելով ու

ամլացնելով հայոց բանակը, կռվող ուժերը և նրանց թիկունքը:

Այսպիսով՝ քեմալականները երկու օգուտ էին ստանում, առաջինը՝ իրենց թշնամի Հայաստանի ազգային պետության կազմալուծումը և Հայաստանի տկարացումը, երկրորդ՝ դրա համար Լենինի իշխանությունից, որպես վարձատրություն, զենքի, զինամթերքի, հանդերձանքի, ֆինանսական (ոսկով) և քաղաքական, գաղափարական, դիվանագիտական աջակցությունը:

Ռուսաստանի բոլշևիկներին էլ կարելի էր հասկանալ: Նրանք մղում էին կենաց ու մահու պայքար՝ դիմանալու և տարածելու իրենց իշխանությունն ամբողջ Ռուսաստանի վրա: Այդ ընթացքում բոլշևիկների երերուն իշխանությունն աշխարհի և ոչ մի երկիր չէր ճանաչում, ընդհակառակը՝ շատ զորեղ երկրներ տարբեր ձևերով և միջոցներով գործում էին նրա դեմ: Միակ ուժը դա Մուստաֆա Քեմալի՝ նույնպես ոչ մի պետությունից չճանաչված կառավարությունն էր, որ դաշնակցել էր բոլշևիկյան կառավարության հետ և փոխադարձ օգնության հույս էր ներշնչում:

Ռուսաստանի բոլշևիկների քաղաքականության նպատակն էր օգնել քեմալականներին՝ պարտության մատնելու Հայաստանը, որը դաշնակցում էր իր թշնամի Անտանտի երկրների հետ, և միաժամանակ օգնել Մուստաֆա Քեմալին՝ հեղաշրջելու Օսմանյան պետությունը, որը նույնպես դաշնակցում էր Անտանտի երկրների հետ և անվերապահորեն կատարում նրանց պայմանները (քեմալականների իշխանության զավթումով Ռուսաստանը բարենպաստ պայմաններ էր ստանում Բոսֆորի և Դարդանելի նեղուցների նկատմամբ):

Եվ Ռուսաստանի բոլշևիկյան կառավարության միջազգային դավադրական այդ նպատակը Հայաստանի դեմ իրագործվեց հիմնականում հայ ներքին թշնամիների օգնությամբ, հանձինս հայ բոլշևիկների և անհոգի, տգետ ու անտարբեր հայերի... Ու հայերի ձեռքով 88 տարի առաջ միջազգային բոլշևիզմի դավադրությունն ընդդեմ հայ ժողովրդի և պետության՝ Հայաստանի Հանրապետության, 88 տարի անց՝ մեր օրերում, դարձյալ ընդդեմ հայ ժողովրդի և պետության՝ Հայաստանի Հանրապետության, փորձում են նույն բնույթի դավադրությունն անել ազատականության դիմակի տակ՝ դարձյալ հայերի ձեռքով, միջազգային՝ այս անգամ նեոբոլշևիզմը, գլոբալականությունը:

Այն, ինչ տեղի ունեցավ, և մեր օրերում էլ փորձեր են արվում, որ իր ուրույն ձևի մեջ նույնը տեղի ունենա, որովհետև բթացել, ընդդարմացել ենք, մի քիչ էլ վարակվել, բայց ամենավատը, որ Աստծուց չենք վախենում, որը մեր ամենամեծ դժբախտությունը և կորուստն է: Մինչդեռ պետք է վախենանք Աստծուց, որ իմաստուն լինենք, որով և սիրենք Աստծուն, որ կարողանանք ուղղել մեր ընթացքը և Կյանք ունենանք, մենք և մեր սիրելիները, մեր սերունդները, այժմ և հավիտյանս:

Իր օգնությամբ Քեմալի իշխանությունը զորացնելով, Հայաստանի ու Հունաստանի դեմ նրա տարած հաղթանակով և իր ու Թուրքիայի դիրքերն

ամրապնդելով՝ Ռուսաստանը Եվրոպայում և Մերձավոր Արևելքում բարենպաստ պայմաններ ստացավ ու նաև լավացրեց իր դիրքը Բոսֆորի և Դարդանելի նեղուցների նկատմամբ: Բացի այդ, քեմալական Թուրքիայի միջոցով պայմաններ ստացավ մեծացնելու իր քաղաքական և գաղափարական ազդեցությունը թրքալեզու և որոշ մահմեդական երկրների, ժողովուրդների վրա՝ հակադրելով նրանց Անտանտի երկրների, հատկապես՝ Անգլիայի և Ֆրանսիայի դեմ՝ հոգուտ նաև բոլշևիկների հրահրած և ղեկավարած համաշխարհային սոցիալիստական հեղափոխության հաղթանակի:

Նշյալ և նման այլ հանգամանքները Քեմալին և Լենինին մերձեցրին, փաստորեն, հայության ու Չայաստանի դեմ, և սա հասկանալի է: Բայց մի՞թե չպետք է հասկանանք նաև, թե ի՞նչը մերձեցրեց և Քեմալի ու Լենինի գործիք դարձրեց հայ բոլշևիկներին: Ի՞նչը պատճառ դարձավ, որ նրանք խաբվեն, այլասերվեն և նենգ ու ժրաջան դավադրությամբ հայության մեջ ներարկեն հոգեբարոյական, գաղափարական և քաղաքական քաղցկեղի վարակը՝ կազմալուծելու համար հայոց բանակը, կազմաքանդելու համար հայոց նորաստեղծ պետությունը և ոչնչացնելու համար բազմաչարչար հայ սպայությունը և վիրավոր մտավորականությունը՝ իբրև թե համաշխարհային սոցիալիստական հեղափոխության հաղթանակով ապահովվելու հայ ժողովրդի գոյությունը, բարգավաճումը...

Եվ ի՞նչ թշվառություն. Չայաստանի երրորդ Չանրապետության նախագահը 1990-ականների սկզբին չարախնդաբար նշում էր, թե հայկական այդ հանրապետությունն ընդամենը երկուսուկես տարի դիմացավ...

Ինչպե՞ս դիմանաս, երբ թշնամին քո մեջ է: Ներքին թշնամին մեծ ուժ է, մեծ փորձանք է, մանավանդ, երբ դու, տարբեր արիավիրքներից տկարացած, ցնցված ու անգլուխ մնացած, անփորձ ես նրա համեմատ՝ թե՛ քաղաքականապես և թե՛ գաղափարապես և հոգեբանորեն...

Կիսամերկ, կիսաքաղց 2-3 զինվորը մեկ հրացանով և սահմանափակ փամփուշտներով, հանպատրաստից կազմակերպված, հոգնած հայկական զորքը, Սարդարապատում, Բաշ Ապարանում, Ղարաքիլիսայում կայսերական թուրք զորքին կանգնեցնելով, պարտության մատնեց... Սակայն երկուսուկես տարի հետո, արդեն համեմատաբար շատ լավ կազմավորված, զինված, ավելի լավ հանդերձանքով, մարզված և կուլտուրալ հայ զինվորը նույնիսկ անառիկ իր բերդն ու քաղաքի հայ բնակչությանն իսկ չպաշտպանեց և ժամերի ընթացքում հանձնեց ռևանշով կուրացած, գազանացած արյունարբու թշնամուն...

Սա ոչ վաղ անցյալի փաստ է, և փաստ են նաև դրա հետևանքները: Բայց այդ փաստերից մենք պատշաճ դասերը, փաստորեն, չենք քաղում, քանի որ այդ ներքին թշնամության քաղցկեղի վարակը ժամանակին չենք նկատում, առաջը չենք առնում, այլ թողնում ենք, որ ճարակի մեր ազգային օրգանիզմը՝ փորձելով կազմալուծել հայրենիքի պաշտպանների շարքերը և կազմաքանդել

մեր դեռ կայացող պետությունը: Մեր անփութությամբ, անտարբերությամբ և քաղաքական անգրագիտությամբ շատ անգամ ուղղակի կամ անուղղակի օգնում ենք օտարածին, խորթ և մահացու վարակի տարածմանը... կամ լավագույն դեպքում թամաշա անում և նույնիսկ չարախնդուն ազգի ու հայրենիքի պաշտպանների դժվարությունների վրա՝ ուրախացնելով նաև թշնամիներին, տարբեր խորհրդատուների, ու արդեն ստիպված մեր դմները բացում նրանց ռեկզորների առջև... որ իբր օգնեն մեզ՝ ժողովրդավարանալու, իսկ իսկության մեջ՝ ազգի ու հայրենիքի զգոն ուժերի դիմադրությունը չեզոքացնելու, կապկպելու, խափանելու և ներքուշևիզմի դավադրությանն աջակցելու համար:

* * *

Մեր երկրի ազգային պետական գոյության հիմքերը, նախադրյալները և ընթացիկ վիճակը բավականին թույլ և վտանգավոր են: Վտանգավոր են նրանով, որ հարաճունորեն առկա ներկայիս ներքին տատանումներն ու արտաքին ճնշումները (մի կերպ) հավասարակշռելու (այն էլ զիջումների գնով) դրությունը կարող է խախտվել և նոր վիճակն ու դրա ընթացքը դուրս գալ վերահսկողությունից:

Այստեղ, այս գնահատանքին ոչ ամբողջությամբ համաձայնվելու դեպքում իսկ հարկ է շեշտել հետևյալ տրամաբանական պահանջը. այն «արտակարգ» միջոցներին, որ պիտի դիմենք ճգնաժամային ակներև պայմաններում, դիմենք հիմա՝ նախաճգնաժամային պայմաններում, ըստ այդմ հստակ հաշվարկներով, ծրագրավորումներով, կազմակերպչական կառավարմամբ ու համապատասխան հոգեբարոյական և գաղափարական համատարած վերազինմամբ...

Շաբաթ, 23-ը փետրվարի, 2008 թ.,
առավոտյան ժամը 7:00

ՀԱՅԻ «ՀԱԼԱԼ» ԿԱԹ

Հայ կաթ, Հայ Ազգային Կաթ: Այսինքն՝ կա մոր հայկական, հարազատ, հալալ՝ ազնվագույն կաթ և կա օտար՝ արհեստական կաթ:

Ինչպես որ մոր կաթով սնված երեխան առողջ է լինում՝ ստանալով և զորացնելով իր իմունիտետը, այսինքն՝ վարակամերժ կարողությունը՝ դիմացկունությունն օտարամուտ վարակների դեմ, այնպես էլ հայ-հարազատ կաթով սնվածն ստանում է հոգեբարոյական և գաղափարական վարակամերժ ու հոգեհարազատ կարողություն օտարամոլության ու այլասերման դեմ...

Արդար կաթով սնված հայը, օրինակ, այս օրերին չի՛ գնա օպերայի

հրապարակ և փողոցները՝ փառաբանելու ու աջակցելու մի մարդու, ով բազմիցս գործնականորեն դրսևորել է իր իսկ ապագային ու հակապետական թե՛ կերպարը և թե՛ նպատակը: Եվ ով շուրջ տասը տարի, անարժանորեն ապրելով իր իսկ կողմից արհամարհված ժողովրդի սուղ միջոցներով, նենգաբար խոտորեցնում է նույն ժողովրդին՝ կազմաքանդելու նպատակով հայոց կայացման ու զորացման ուղու վրա գտնվող նորանկախ պետությունը:

Ի՞նչ բաղադրություն ունի հայ կաթը, և ե՞րբ ու ինչպե՞ս է սնուցվում դրանով հայ երեխան: Մինչև ո՞ր տարիքը, ի՞նչ դոզաներով...

Հարցերը պահանջում են պատասխաններ, և սույն պատասխանները, որ տրվում են Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, պետք է հայտնի լինեն բոլոր հայերին՝ փոքրերին և մեծերին... որ ՀԱՅ լինեն...

Կիրակի, 17-ը հունիսի, 2007 թ.,
 Ժամը 22:50

ՄԵՐ ՆԵՐՔԻՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՉԱՐԸ ՄԵՋ ԿՈՉՆՉԱՑՆԻ, ԵԹԵ ԱՍՏՎԱԾ ՄԵՋ ՉՊԱՇՏՊԱՆԻ

Վիրուսը նաև մեր մեջ է, ու այն սաստկանում, հարձակվում և ճարակում է մեզ, երբ դրսի վիրուսը՝ չարը, օգնության է գալիս, ու նաև, երբ մենք տկարանում ենք մեր թերություններով, թուլություններով:

Քանի՜-քանի անգամ մենք սպառված, ոչնչացած և կորսված կլինեինք, եթե մեր Տերը մեզ չպաշտպաներ, չզորացներ և չփրկեր:

Փառք, շնորհակալություն և մեր հավատարմությունը Նրան՝ այժմ, միշտ և հավիտյանս հավիտենից:

* * *

Մեր ճամփան Նրա՛ ճանապարհն է. մենք Նրանն ենք և Նրա ճամփաներով պիտի գնանք...

Ովքե՞ր ենք մենք:

Մենք նրանք ենք, որոնց Հայկյան ցեղի խմորը Հիսուս Քրիստոսի՝ խաչի վրա հեղված արյամբ հունցվեց, սրբագործվեց և Քրիստոսի հավատքով, Վարդանանց Մահ իմացյալ Անմահություն գաղափարին և Մամիկոնյան Ուխտին նվիրումով ընթանում ենք Տիրոջ ճանապարհով՝ կյանքում երկրային դեպի կյանքը երկնային, հավիտենական:

Այս էր Հայ Ազգային Գաղափարախոսությունը երեկ, այս է նաև այսօր և կլինի վաղը, քանզի այն գալիս է հավերժությունից և գնում է հավերժություն:

Այս գաղափարական հիմքի վրա պիտի վերահաստատվեն հայ ազգը, Հայաստան երկիրը և պետությունն իրենց նպատակներով, ծրագրերով,

վերաբերմունքով և գործերով...

Եվ Աստված կօգնի... Եվ մարդկային հայկական Աստվածահաճո իղձը կիրականանա ի փառս Սուրբ Երրորդության՝ Արարիչ Հոր, Որդու և Սուրբ Հոգու:

Ուրբաթ, 28-ը մարտի, 2008 թ.

ԱՄԵՆԱՄԵԾԸ, ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐԸ ԵՎ ԷԱԿԱՆՆ ԱՆՏԵՍՎԱԾ Է

Երեկ և այսօր ու նաև հայոց՝ վաղվա համար ազգային և պետական ամենամեծ, ամենակարևոր և ամենաէական պահանջն ու խնդիրն է ճանաչել կյանքի ճշմարտությունը, որը ներառում է նաև ճշմարտությունը հայկականության մասին, և ըստ այնմ ընթանալ որպես մարդ և կառուցել ու ապրել ազգային և պետական կյանքով...

Այդ ճշմարտությունը մեր քրիստոնեական հավատքի մեջ է, որով և Հայ Ազգային Գաղափարախոսության...

Առանց այդ ճշմարտությունների ճանաչման և դրանք կյանքի ապրում դարձնելու չի՛ կարող լինել ազգի, հայրենիքի և պետության իրավ՝ կայացում, որով և՝

Չի՛ կարող լինել խաղաղություն:

Չի՛ կարող լինել կայունություն:

Չի՛ կարող լինել անվտանգություն, պաշտպանություն ու ապահովություն:

Չի՛ կարող լինել զարգացում և վերելք:

Չի՛ կարող լինել բարգավաճում և բարեկեցություն:

- Հետևապես ճշմարտության ճանաչումը և նրանով ապրումը մարդկային-ազգային ու պետական առաջնային խնդի՞ր է:

- Ա՛յո, և երի՛ցս այո...

- Ինչպե՞ս հասու լինենք, ճանաչենք կյանքի ճշմարտությունը և դրանով՝ ճշմարտությունը հայկականության մասին:

- Ավետարանով, խաչով և դրանից բխող և դրանց վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ:

- Ինչպե՞ս ապրում դարձնենք կյանքի ճշմարտությունը և հայկականության ճշմարտությունը:

- Հիսուս Քրիստոսի Ավետարանի և խաչի հավատքով, Հայ Ազգային Գաղափարախոսության ճանաչմամբ, ընդունմամբ և կյանքում կիրառմամբ:

Հայաստանի Հանրապետությունում խոսում ենք գիտության կարևորության մասին և վերջերս այդ կարևորությունն արտահայտում ենք նաև կառավարական ծրագրերում: Բայց, արդյոք գիտակցո՞ւմ ենք, որ ամենամեծ, ամենակարևոր և ամենաէական նշանակությամբ գիտությունը մեր հավատքի

գիտությունն է՝ Ավետարանով և խաչով, որի մեջ կա նաև կյանքի անգերազանցելի իմաստությունը, փիլիսոփայությունը, որը հիմնական բաղադրամասն է մարդկային-ազգային կենսունակ պետականության շինության:

Այդ գիտության կյանքի վերածման տեխնոլոգիան, կապող օղակը, պորտալարը Հայ Ազգային Գաղափարախոսությունն է...

Եթե այս գիտությամբ չապրի ու այս տեխնոլոգիայով չգործի հայ ազգը, հայրենիքը և պետությունը, դա մե՛ծ սխալ կլինի և յուրաքանչյուր հայ ու հատկապես հոգևոր ու աշխարհիկ ղեկավար Աստուծո առաջ պակաս կմնա ամեն ինչում, որ կենսական է:

Մեզ ամեն ինչ տրված է, որպեսզի պակաս չմնանք և կենսական ապրումից դուրս չնետվենք խավարի մեջ, որտեղ կլինի լաց և ատամների կրճտում, այլ՝ որպես հարազատ որդիք մնանք Լուսավոր Տանը՝ այժմ և հավիտյանս:

Քանի որ, ըստ երևույթին, այդ իրականության պատշաճ ճանաչումը պակասում է և հետևապես տվյալ գերխնդրի կատարման համար պատրաստ չէ հայոց աշխարհիկ գիտությունը, կրթությունը, մշակույթը և ցավոք նույնիսկ Հայ Առաքելական Եկեղեցին: Իսկ պատրաստվելու համար, նույնիսկ ցանկության դեպքում (որը դժբախտաբար դեռ չի՝ երևում), բավականին շատ ժամանակ կպահանջվի (իսկ ժամանակի գործոնը մինչև իսկ ճակատագրական նշանակություն ունի), ուստի հարկ է, որ այդ խնդրի գոնե արժարժումն անհապաղ սկսվի հայկական ՁԼՄ-ների ու առաջին հերթին հանրային հեռուստատեսության, ռադիոյի և թերթերի միջոցով՝ ներգրավելով հայության՝ դրա համար համապատասխան ուժերը: Հուսանք, որ դրանք կան...

Աստուծո օգնությամբ:

ԿՅԱՆՔԻ ԱՊՐՈՒՄԸ ՀԱՎԱՏՔՈՎ

Աստուծո կամքը և ծրագիրը կարելի է կատարել հավատքի Կյանքն ապրելով: Հավատքի կյանքով ապրելու շնորհը Աստուծուն է, Նա է այն պարգևում Իր Որդու Ավետարանի շնորհով, իմաստությամբ, գիտությամբ և խաչի խորհրդով ու զորությամբ: Աստված այդ պարգևն է շնորհել մեր ազգին՝ պետականորեն, 1700 տարի առաջ: Եվ մեր ազգի պետականորեն հավատքի ապրումը քաղաքացիական կյանքի վերածվեց Աստվածաբուխ Գաղափարականությամբ, այսինքն՝ Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, որն ակունքն ու վեմն է հայ ազգի կենսունակության ու ազգապետական Աստվածահաճո կենսագործումների...

* * *

Մարդկային կյանքում, մարդկության զարգացման ընթացքում թալիբների կարծրաբիրտ, տոտալիտար ռեժիմի բռնադատած չադրաների (բուրկաների) հասարակության մյուս ծայրահեղությունը հանդիսանում է դրամատիքության նյութապաշտական թալիբանության գլոբալացող փափկալիզող ռեժիմի բռնադատած ստրիպտիզմի մշակույթը, որը համահունչ է սեքսուալ հեղափոխությանը:

Եղել են հեղափոխություններ հանուն ազատության, անկախության, արդարության, հավասարության և նման վեհ գաղափարների, բայց ազատ անբարոյականությամբ, ազատ պոռնկությամբ հեղափոխություն... Ո՞ւմ գյուտն էր այդ: Ի՞նչ նպատակով... Իսկ արդյունքը և հետևանքները, որոնց մեծ մասը դեռ չեն երևում, բայց ավելի՛ կործանարար են, դեպի ո՞ւր են ուղղված...

Ստրիպտիզմի մշակույթն ավելի վտանգավոր, խայտառակ և կործանարար է նաև նրանով, որ այն կիրառողների մեծ մասը խոսում է ազատության, արդարության, մարդու իրավունքների ու երբեմն նաև Աստուծո անունից, բայց, փաստորեն, դավաճանում է Նրան՝ ուրանալով այդ բոլորն ի չարը...

Այս ընթացքում ո՞ւր են նայում հայությունն ու Չայաստանը: Կա՞ն այն հարազատ, քաջ և հմուտ նավագները, որ հայոց նավն անփորձ հասցնեն հարազատ ափը...

* * *

Այն, ինչ որ ճիշտ է և պետք է անել հայության համար (որպես մարդկության հարազատ մասնիկի), ինձ ու քեզ՝ մեզ վկայում են և պատգամում մեր նախնիք, մեր մեծերը, Սուրբ Չայրերը, մեր նահատակները և նրանց գործերը՝ Աստուծո հավատքով: Դրանում մեզ առարկում են Լենինը, Ստալինը, Չիտլերը և նրանց նեոհետնորդ դրամատիքական մատերիալիզմի նյութապաշտները՝ աստվածամարտ քրիստոսամերժությամբ...

Որո՞նց վկայությունն ենք ընդունում: Որո՞նց ենք հավատում ու հետևում և ըստ այնմ մեր կյանքն ապրում:

Սա կենսական հարց է և հստակ ու պատասխանատու պատասխան է պահանջում...

Էջմիածնից ձայն չկա: Երևանի բարձր տեղերից՝ նույնպես... Սփյուռքը: Չազի՛վ թե, ի՞նչ Սփյուռք... Աստված մեզ օգնի:

* * *

Այս կյանքում սովորում ենք, հարաբերություններ ստեղծում ու աշխատանք փնտրում, որ ապրենք՝ ինչքան հնարավոր է լավ ու ավելի՛ լավ, ու ավելի, ու

ավելի... այս անցողիկ (վերջում արդեն՝ ակնթարթ թվացող) կյանքում: Իսկ մշտական, հավերժական կյանքում ապրելու, լավ ապրելու համա՞ր... Սովորո՞ւմ ենք, հարաբերություններ ստեղծում կամ ճշտո՞ւմ ենք ու աշխատանք փնտրո՞ւմ ենք, աշխատո՞ւմ ենք...

Ի՞նչ ուսում է դա: Ի՞նչ հարաբերություններ են և ո՞ւմ ենք հետ ու ի՞նչ աշխատանք է դա, ի՞նչ գործեր են, ո՞վ է գործատերը, գնահատողը, վարձատրողը: Եվ ի՞նչ հմտություն, աշխատանքային կարգապահություն ու անձնական տվյալներ են պահանջվում, որ գործը կատարվի դրական գնահատականով...

Հայկական և հայաստանյան կրթությունը, ուսումը, ընտանեկան դաստիարակությունն ու հասարակական հարաբերություններն ինչքանո՞վ են ճիշտ նախատեսված երկրային կյանքում լավ ապրելուն նպաստելու համար: Այդ մասին խոսակցությունը, ըստ երևույթին, դեռ վերջացած չէ (գուցե չի էլ սկսված, ըստ էության), բայց կառավարությունը և պատկան մարմիններն ու շրջանակները, հուսանք, որ կսկսեն, կավարտեն խոսակցությունը և ըստ այնմ կառաջնորդեն... Սակայն մինչ այդ, ինչքանո՞վ են համապատասխանում մեր կրթությունը, ուսուցումը և մշակույթը ու նաև ընտանեկան և հասարակական հարաբերությունների բարոյական նորմերը հավերժության մեջ կյանք ունենալու համար...

Մի՞թե սա չէ մեր գոյության էական հարցը՝ համաձայն մեր 1700-ամյա պետականորեն ընկալված ազգային հավատքի, թե ինչպես կարող ենք առավել կատարյալ ապրել երկրային կյանքում, որպեսզի իրական կատարելության կյանքին արժանանանք՝ հավիտյանս: Բայց մեր կառավարությունը, ազգային իշխանությունը և պատկան մարմիններն ու քաղաքական, հասարակական շրջանակները և մտավորականներն իսկ այս մասին, փաստորեն, խոսելու անգամ պատրաստ չեն...

Ի՞նչ է նշանակում սա... Մանավանդ որ առաջին հանգամանքը՝ հայու-թյամբ, Հայաստանով և մեր ընտանիքներով երկրային կյանքի վերելքը, պայմանավորված է երկրորդով՝ հավիտենական կյանքին արժանի հավատքի ապրումով՝ որպես մարդ և որպես հայ...

Այս իրավիճակում էջմիածինն ինչպե՞ս կարող է հանգիստ քնել...

Ո՞ւր է Լուսավորչի հավատարմությամբ, Մաշտոցյան պարտաճանաչու-թյամբ ու Ղևոնդյան նախանձախնդրությամբ Քրիստոսի Փոքր ածուխ տնտես հայ հոգևորականը, որ զգաստ սպասում է Տիրոջ վերադարձին՝ բացճակատ...

Չէ՞ որ քանքարը, եթե թաղվել է հողի մեջ և չի գործարկվում, այգին, եթե չորանում է և նվազ պտուղն էլ շուն ու գելին է մնում, և տան գերանները, եթե կոտրել, սյունները խախտել... և լաճը տնավեր է դառնում, այն ժամանակ առաջին հերթին հայ կղերն է դուրս նետվելու արտաքին աշխարհ, ուր հավիտյան ատամների կրճտոց է լինում...

Արդյո՞ք հայ կղերը, ոչ թե ամեն կիրակի, այլ ամեն օր այն չի ասելու նախ իրեն ու նաև այն մի քանի ոչխարներին, որ դեռ չեն մոլորվել շուն ու գելի

որոգայթներում կամ դեռ չեն հիասթափվել իրենից և դեռ փարախում են...

Այս հարցերին անդրադառնալիս (եթե այդ անդրադարձի գիտակցությունը և պատասխանատվությունը դեռևս կա) երանի թե փաստվի, որ դրանք անհիմն են և մտահոգությունը՝ անտեղի:

Աստված մեզ գթա և փրկի...

ՓՐԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԵԼՔ

Հայ՛ ազգ, հավատա՛ և կապրես. կինքնամաքրվես, կզորանաս, կաճես, կբարգավաճես ու կերջանկանաս՝ հիմա, միշտ և հավիտյան:

* * *

Հայոց հավատքի սահմանադրությունում՝ Ավետարանում, Աստուծո Միածին Որդին ասում է.

«Դո՞ւք էլ այդպես անմիտ եք, չե՞ք իմանում, թե ամեն բան, որ դուքից մարդու մեջ է մտնում, չի կարող նրան տղծել, որովհետև ոչ թե նրա սիրտն է մտնում, այլ՝ որովայնը և դուրս է ելնում և մաքրում բոլոր կերածները»: Եվ նաև ասում է. *«Ինչ որ մարդուց դուրս է գալիս, այն է, որ տղծում է մարդուն, որովհետև ներսից, մարդկանց սրտից են ելնում չար խորհուրդները՝ շնություն, տղռնկություն, զորություն, սղանություն, ազահություն, չարություն, նենգություն, գիջություն, չար նախանձ, հայիոյանք, ամբարտապանություն, անզգամություն: Այս բոլոր չարիքները ներսից են ելնում և տղծում մարդուն»* (Մարկոս 7. 18-23):

Ամեն ինչ ասված է, չկա թաքուն բան, որ իմացված չլինի՝ տվյալ դեպքում հայ ազգի համար շնորհիվ Հիսուս Քրիստոսի արյան հեղման, որով՝ Սուրբ Լուսավորիչը լույս սփռեց հայոց թագավորի, նրա ավագանու և համայն ազգի սրտում, որով՝ նրանք սրբացան և կյանք ստացան ու փոխանցեցին սերունդներին:

1700 տարի առաջ ճառագայթած սրբագործող Լույսով ապրեցինք, ստեղծագործեցինք և դիմացանք բազում փորձությունների: Այժմ, երբ 1700 տարի անց արժանացանք ազատության, անկախության ու պետականության, գոհանանք, փառք տանք Ամենակալ Տիրոջը և չկարծրացնենք մեր սրտերը, չամբարտապանանանք, չանբարոյանանք ու նյութապաշտությամբ չօտարանանք և չչեղվենք, չհեռանանք Նրանից, այլ հավատանք, հուսանք ու ամբողջ սրտով, ամբողջ մտքով, ամբողջ էությամբ և զորությամբ Նրան սիրենք, Նրան դաշնակցենք, Նրա ծրագիրը, Նրա գործը կատարենք, որն ըստ Աստուծո նկատմամբ հավատքից, հույսից և սիրուց բխող և դրանց վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության՝ նշանակում է՝

Սուրբ հավատարմությամբ մեր ժամանակը, եռանդը, ուժը, զորությունը, միջոցներն ու հնարավորություններն անկեղծորեն և հարասն կարգադատ

հեստողականությամբ ի սոդաս դնենք մեր ազգի ու հայրենիքի վերելին՝ ի երջանկություն մեր ժողովրդի, հոգուս մարդկության և ի փառս Աստուծո:

Համոզված ենք, որ այս հավատքի, այս հավատարիմ նվիրումի ու այս հանձնառության և պատշաճ պատրաստակամության պակասն է պատճառը բոլոր մեր տկարությունների, կորուստների և տարբեր չափերով շարունակվող անկումային ընթացքի: Վերականգնենք, վերահաստատենք ու վերարտահայտենք մեր սուրբ հավատքը և դրանից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ նվիրումը, վերաբերմունքն ու գործերը... և մեր բոլոր խնդիրները կլուծվեն անպայման...

Այդ դեպքում մեր մտքերը կճառագեն, մեր ծրագրերը կիմաստնանան, մեր բազուկները կգորանան, և գործերը միշտ ու ամենուր կհաջողվեն. հակառակորդները կտկարանան ու կչքանան, արգելքները կնվազեն ու կվերանան, և մարդկության առաջատար շարքերում մեր կյանքի ընթացքը կպսակվի պատվով ու փառքով, որը մեր էությամբ կընծայենք մեր հավատքի՝ կյանքի աղբյուր Սուրբ Երրորդությանը:

Այս, այս է եղել մեր նախնյաց հավատքն ու այդ հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունը, որ դարձել է նաև դարերի ընթացքում մեր մարդկային խիղճը, բարոյականությունը, աշխարհայացքը, ապրումը և միաժամանակ սնել է մեր ազգային ինքնագիտակցությունը, պարտաճանաչության զգացումը և արարքների սկզբունքայնությունը: Այժմ ևս այս գաղափարախոսությունը պետք է դառնա հայոց պետականության ներքին ու արտաքին քաղաքականության և համայն պետական ու հասարակական կյանքի թե՛ հիմքը և թե՛ փարոսը.

Որ բացվեն դռներն հուսո,

Եվ մեր երկրեն փախ տա ձմեռ...

Որ ծիծառն յուր բույն դառնա,

Եվ ծառերը հազնեն տերև...

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԳ

ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄՆ

ԸՍՏ

ՀԱՅ

ԱԶԳԱՅԻՆ

ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ՃԱՆԱԶԵՆՔ ՄԵՉ

Կարևոր է, որ ճանաչենք մեզ, հասկանանք, թե ովքե՞ր ենք, որտեղի՞ց ենք գալիս և ո՞ւր ենք գնում, ինչո՞ւ:

Մինչև մենք մեզ չճանաչենք և ըստ այնմ չհաստատվենք, չկայանանք և չկազմակերպվենք որպես ազգ, չենք կարող ունենալ կայացած ու կազմակերպված երկիր և պետություն՝ կենսունակ ու զորեղ այնքան, որ ի վիճակի լինի պաշտպանվել արտաքին և ներքին փորձություններից ու վտանգներից՝ ուղղված իրենց իսկ գոյության դեմ, և քայլ պահել մարդկային առաջադիմության ընթացքի հետ մարդկության առաջատար շարքերում:

Այս իմաստով և տվյալ խնդրի կատարման նպատակով մեր սերնդի առաջ անհրաժեշտություն ու նաև պարտականություն է առաջանում՝ ճանաչելու մեր պատմությունն ու այն կերտողներին:

ԴՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՅԱՍԱԿԱՆ ԻՆԵՐՑԻԱ

Մեր նախնյաց հավատամքի, հայկականության գաղափարի և բարոյական արժեքների, ինչպես նաև մեր տոհմիկ կերպարի և նկարագրի բովանդակության իներցիայի ուժով մեզ հասած արտահայտությունը կարո՞ղ ենք նախ՝ ընթռնել, հասկանալ, պահպանել և երկրորդ՝ կյանքի մշտական դինամիկ աղբյուրից (հավատքից և դրանից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունից) սնվող մղումով զորացնել ու փոխանցել մեր սերունդներին...

Միաժամանակ, դրան զուգահեռ, կարո՞ղ ենք հավատազուրկ, գաղափարազուրկ և պետականազուրկ, քաղքենիական նախախորհրդային և ստրկական խորհրդային ժամանակաշրջանների ապրումի՝ ներկայիս իներցիան կանգնեցնել և հայկականության որակական բովանդակության իներցիայի տոհմիկ ընթացքը որդեգրել, վերահաստատել և մեր կյանքի բոլոր բնագավառների ապրում դարձնել, որ Կյանք և վերելք ունենանք մարդկության առաջավոր շարքերում:

Իհարկե կարող ենք, բայց միայն Աստուծո օգնությամբ...

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ ԷԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(Համաձայն Հայ Ազգային Գաղափարախոսության)

Աստված ու Աստվածություն:

Հայություն և հայկականություն:

Հասկանալու համար հայությունը և հայկականությունը՝ պայման է հավատովն Աստուծո ընթացել Աստվածությունը...

Հասկանալու համար Հայաստանը և հայոց պետականությունը՝ պետք է հասկանալ երկնային դրախտն ու երկնային Արքայությունը:

Իսկ լինելու համար ճշմարտապես ու իրապես հայ՝ պետք է լինել երկնային Արքայության երկրային քաղաքացի, ով երկնային Արքայությանը տալիս է իր երկրային տուրքը՝ ծառայելով հայությանն ու Հայաստանի պետությանը:

Այնժամ հայը կդառնա Աստուծո որդի, որով և կարժանանա դրախտում բնակության, կարժանանա երկնային Արքայության հավերժական քաղաքացիության:

Հետևապես, ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության, երկրային հայ քաղաքացիության կյանքի ընթացքում, երկնային Թագավորության հավերժական քաղաքացիության կյանքի համար անհրաժեշտ գիտելիքները ձեռք բերելու և քննությունը հանձնելու համար դասագիրքն Ավետարանն է: Հարկ է հաստատ գիտենալ նաև, որ քննությունն ընդունողն անկաշառ է, և Նրա զնահատականը՝ բացարձակապես արդար:

Շաբաթ, 28-ը օգոստոսի, 2006 թ., Ժամը 24:00

Ո՞Վ Է ՀԱՅՐ, Ի՞ՆՉ Է ՀԱՅՐ ՈՒ ԻՆՉՊԵ՞Ս

ԿԱՐԵԼԻ Է ՀԱՅ ԼԻՆԵԼ ԵՎ ՄՆԱԼ

(Ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության)

Ո՞վ է հայը:

- Հայն Աստուծո արարած մարդու հայ տեսակն է, որի ազգային կազմավորումը կատարվել է Հայկ Նահապետի Աստվածաշնորհի ազատասեր ոգով, կերպարով և սրբազործվել է Աստվածորդու հավատքով՝ Սուրբ Գրիգորի Լուսավորմամբ և Սուրբ Տրդատ արքայի պետականորեն Քրիստոսադարձմամբ:

- Ինչպե՞ս կարելի է հայ լինել և մնալ հայ:

- Հայ լինելու համար պետք է քրիստոնյա՝ լինել և մնալ քրիստոնյա՝ ապրելով քրիստոնեական հայկականությամբ:

Հայը քրիստոնյա՛ է:

- Հայն ինչպե՞ս կարող է քրիստոնյա լինել և մնալ՝ ապրելով քրիստոնեական հայկականությամբ:

- Հայը կարող է քրիստոնյա լինել և մնալ: Այսինքն՝ Աստուծո որդի լինել այժմ և հավիտյանս՝ հետևելով Աստուծո պատվիրաններին ու ապրելով քրիստոնեական կյանքով: Հայը կարող է քրիստոնեական կյանք ապրել Հիսուս Քրիստոսի Ավետարանի շնորհով՝ իմաստությամբ, գիտությամբ, և Նրա խաչի խորհրդով ու զորությամբ՝ կատարելով Աստուծո կամքը, ծրագրերը՝ իր ամբողջ կյանքի ընթացքում, կյանքի բոլոր հանգրվաններում, որը հայի համար նշանակում է՝ ծառայել Աստծուն՝ ծառայելով հայությանը, հայ ազգին, որպեսզի հայ ազգն էլ ծառայի Աստծուն՝ ծառայելով մարդկությանը, որպեսզի մարդկությունն էլ ծառայի Աստծուն միշտ, ամենուր, ամեն ինչում:

- Հավատքի այս ճշմարտությունը՝ որպես ուսմունք, առանցք է Հայ Ազգային Գաղափարախոսության (ՀԱԳ): Գաղափարախոսություն, որը բխում է և հիմնված է Աստուծո հավատքի վրա՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանով և խաչով:

Եական է, որ հայը ճանաչի, ընդունի ու ապրի ՀԱԳ-ով, միշտ, ամենուր, ամեն ինչում:

Հուլիս, 1964 թ.

**ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ
ՊԱՏՏԱՌԱՅԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԿԱՊԸ
ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
(Ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության)**

- Ինչո՞ւ ենք մենք հայ:

- Մարդկային բնության մղումով՝ ազգերի առաջացման օրինաչափ գործընթացի հետևանքով: Մենք հայ ենք, որովհետև մարդ ենք:

- Ինչո՞ւ մենք պետք է լինենք հայ:

- Որովհետև այդ մեզ պարտավորեցնում է մարդկայնությունը (Աստվածակերտ մարդկային բնությունը): Երբ մարդը ծնվել է հայ, եթե նա չլինի հայ, ապա նա թերի է որպես մարդ՝ մարդկության մեջ: Նա այս կամ այն չափով դադարում է լինել նաև մարդ: Հետևապես դադարում է նաև լինել, Աստուծո հավատարիմ կերտվածք՝ իր բոլոր (սարսափելի) հետևանքներով...

- Ինչպե՞ս մենք կարող ենք լինել հայ:

- Հավատքով, գաղափարով և բարոյականությամբ և ըստ այնմ՝ պարտաճանաչությամբ ու նվիրումով՝ հանդեպ մեր ազգը: Հայը հայ լինելու համար պետք է լինի լավ մարդ: Եվ հայը լավ մարդ լինելու համար պետք է լինի լավ հայ:

* * *

- Ի՞նչ է մարդը:

- Բանական մի էակ:

- Ի՞նչ է մարդկությունը:

- Բանական էակների մի ցեղ՝ տեսակ՝ բաղկացած ուրույն խմբավորումներից՝ ազգերից:

- Մարդկություն հասկացությունը չէր կարող ստանալ իր հասարակական ու ընկերային պատմական իմաստը, եթե այն բաղկացած չլիներ ազգերից:

* * *

- Ազգը՝ մարդկային հասարակության այդ ընտանեկան կերտվածքը, ունի իր ուրույն բնությունը, ոգին, ներշնչումն ու տեսլականը և ունի նաև իր հոգեկան ու մտավոր ընկալման հատկությունն ու ընդունակությունը՝ համապատասխան իր աշխարհագրական բնության և դիրքի ազդեցությանը, որն առաջացրել է նաև նրա ուրույն պատմությունը: Այդ պատմությունն էլ ազդել է հայի նկարագրի, բնավորության, սովորությունների, բարոյական ընթրնումների և կյանքի նկատմամբ պահանջների, ձգտումների ձևավորման վրա:

Եթե ամփոփենք ամբողջ վերոհիշյալը ազգային բնություն և բնազդ հասկացության մեջ, ապա համաձայն մեր ազգային բնության՝ առաջադիմելու մարդկային բնածին ձգտումը մենք տեսանք աշխատանքի մեջ և մեր ազգային ջանքերն ուղղեցինք աշխատելու, ստեղծելու և ստեղծագործելու միջոցով առաջադիմելու նպատակին:

Մենք ձգտում էինք աշխատել, ստեղծագործել և ոչ թե կռվել, իսկ եթե կռվեցինք, ապա հիմնականում կռվեցինք մեր սահմանների վրա, մեր բերդերի պարիսպների տակ:

Եթե հարվածեցինք, կոտորեցինք, ապա հիմնականում այդ արեցինք մեր կիրճերում, մեր դաշտերում, մեր հողը ներխուժողների, մեր երկիրը ասպատակողների հանդեպ:

Մեր ազգային բնությունը եղել է նման մեղվի բնությանը, մրջյունի բնությանը: Մեր ապահովվածությունը, առաջադիմությունը, փառքն ու մեծությունը մենք տեսել և փնտրել ենք աշխատանքի մեջ, ստեղծելու մեջ, ստեղծագործելու մեջ:

Կռվել ենք, երբ ստիպված ենք եղել, կռվել ենք չհաղթվելու, չգերվելու, չստրկանալու համար: Կռվել ենք՝ պաշտպանելու մեր գոյությունը (և շատ անգամ թեկուզ միայն մեր հոգևոր գոյությունը):

Մենք ուրիշներից միայն լավն ենք սովորել, լավն ենք վերցրել, բազմապատկել այն ու հասցրել մինչև նույնիսկ հեռավոր ուրիշները:

Մենք ուրիշների սահմաններից մեր զենքն ու զորքը չէինք անցկացնում, հուր

ու ավերածությունը չէինք սփռում, սուգ ու դժբախտություն չէինք առաջացնում, նրանց զարգացումը, վերելքը չէինք կասեցնում ու ոչնչացնում:

Մենք ուրիշների սահմաններից անցկացնում էինք մեր հողի բարիքները և մեր արհեստավորների արտադրանքները: Մեր արտադրողները, շինարարները, վաճառականները մտնում էին ուրիշների երկրներ և շենացնում, երջանկացնում այնտեղ: Աշխատում էին, ստեղծում էին և նպաստում նրանց առաջադիմությանը:

Այս հատկություններով և դերակատարությամբ հայ ազգը, բնականաբար, հարազատ, արժանի և արժեքավոր մասնիկն է մարդկության: Հետևապես հայ ազգի գոյության և հարատևման համար պայքարն արդարացի է, մարդօգուտ, պատվավոր և պարտադիր (լրիվ չափով՝ բոլոր հայերի համար և մասնակի չափով՝ բոլոր մարդկանց համար):

Ինչ չափով որ հայն անտարբեր է իր ազգի գոյության և հարատևման պայքարի նկատմամբ, նա կրկնակի չափով զուրկ է մարդկությունից:

Հայ ազգի գոյության և հարատևման դեմ պայքարը, գործունեությունը կամ էլ դրանց նպաստելն անարդարացի է, հակամարդկային և դատապարտելի, հետևապես և օրենքից դուրս: Եվ օրենքից դուրս է ինչ պատրվակով էլ լինի, քանի որ խնդիրը վերաբերում է ոչ թե մեր շահերին, այլ մեր գոյությանը և հարատևմանը:

Այս տեսանկյունից մարդկությունն ընդհանրապես և հայությունը մասնավորապես իրավունք ունեն և պարտավոր են հարվածել՝ ոչնչացնելու կամ չեզոքացնելու համար մեր գոյության դեմ տարվող թշնամական պայքարը, նախահարձակ տարբեր գործունեությունները կամ էլ ստեղծված իրադրությունը, ամեն տեսակի սահմանափակումները, մեր բոլոր միջոցներով, բոլոր ժամանակներում ու ամենուր, թեկուզ դրա դիմաց պահանջված գինը լինի շատ թանկ:

Երեքշաբթի, 1-ը մարտի, 2005 թ., առավոտյան ժամը 6:10

ՀԱՅՈ

Ինչպիսի՞ն պետք է լինի 1700-ամյա քրիստոսակերտ հավատքով Հայկացեղ, Աստվածասեր, ազգասեր ու մարդասեր հայը:

Ինչպիսի՞ն պետք է լինեն հայ տղան ու աղջիկը, հայ կինն ու տղամարդը և հայ պապիկն ու տատիկը՝ հայի տոհմիկ կերպարի ազգային գիտակցությամբ և քաղաքացիական պարտաճանաչությամբ:

Հավատքի, գաղափարի և բարոյականի տոհմիկ բովանդակության իմաստով ինչպիսի՞ն պետք է լինի հայ՝

- աշակերտն ու ուսանողը,
- գյուղի ու քաղաքի արդյունաբերողը,

- ուսուցիչն ու ուստիկանը,
- բժիշկն ու դատավորը,
- գիտնականն ու մշակույթի գործիչը,
- պետական պաշտոնյան ու քաղաքական գործիչը,
- մտավորականը, հոգևորականը և հոգևոր ու աշխարհիկ առաջնորդը,
- Ալֆայի և Օմեգայի տարողության հոգեկանով հայրենիքում և դրսում ապրող Հայ մարդը:

Ո՞վ, ովքե՞ր, ինչպե՞ս կարող են հասկանալ, բնորոշել և իրենց էությանը կերտվել մեր սրբերի, մեծերի կերպարներով (որոնց արժանիքն անանց է) և դրանով ներկայանան Աստծուն և մարդկությանը՝ որպես խոսուն խոստուն և ուխտ՝ պահպանելու իրենց մարդկային ու ազգային ինքնությունը, ապրելու Աստվածահաճո կյանքով: Ու նաև փոխանցելու ազգին և մանավանդ նոր սերնդին իրենց տոհմիկ կերպարները՝ որպես խոսուն հայելի: Որպեսզի հայը տեսնի իր հոգեկան, գաղափարական և բարոյական ներկայիս էությանը ծեփված աղավաղումների խորքում իր հարազատ տոհմիկ կերպարը՝ իր իսկակա՞ն ինքնությունը՝ քրիստոսակերտ, Աստվածասեր և հավերժական...

Ո՞վ, ովքե՞ր կմտածեն, կխրախուսեն և կամ նաև կկազմակերպեն հայ անհատի ու ազգի հայկյան ազատասեր և խաչաշնորհ կերպարի (ինքնանկարի), կերպարվեստի ցուցահանդեսը և ալբոմ-դասագիրքը: Ու նաև ովքե՞ր կկազմեն հայի ու հայ ազգի այդ կերպարի էության մարդկային վկայականը՝ նաև որպես հայ սերունդներին մեր ժառանգության նմուշօրինակը և կտակը...

Ովքե՞ր են նրանք, որոնց՝ հավատքով հոգու պարտաճանաչությամբ ընկալվող կոչումի շնորհն է արված և ըստ այնմ հավատքի շնորհն է տրված՝ կազմակերպվելու և կատարելու ազգի հոգևոր վերածննդի, գաղափարական վերաճանաչման, բարոյականության վերահաստատման և դրանցով ազգի, երկրի և պետության կայացման առաջին վճռական, հաստատուն, հաղթական քայլերը:

Աստուծո օգնությամբ:

ՀԱՅ ՄԱՐԴՈՒ ԿԵՐՊԱՐԸ

Ինչպիսի՞ն պետք է լինի ճշմարիտ հայ մարդու կերպարը՝ ազգային ու մարդկային կայուն արժեքների չափանիշներին համապատասխան, որին ձգտի և ցանկանա նմանվել հայ երեխան՝ տղան ու աղջիկը, ու նաև բոլորս: Մենք, որ հայելին ենք մեր նոր սերնդի...

Այդ կերպարը մեր մեծերի, մեր Սուրբ Հայրերի կերպարն է, որը պետք է վերակերտենք մեր մեջ նրանց հավատքով և դարձնենք մեր հոգու գաղափարի ու ըստ այնմ բարոյական նորմերի կյանքի ապրում՝ մեր զգացումներով, մտածումներով ու արարքներով: Սա պետք է դառնա մեր եկեղեցու, ազգային դպրոցի, մշակույթի, արվեստի, գիտության ու ամբողջ հասարակության

նպատակն ու գործը: Այդ կերպարի նոր ձևավորմամբ վերականգնման, վերահաստատման, ինչպես նաև այդ կերպարի սեփական օրինակով համագալին կենսագործումներն առաջնորդելու սրբազան պարտականությունն ընկնում է նախ և առաջ հայոց Հայրապետի և Հայաստանի նախագահի վրա՝ իրենց ավագանիներով: Այդ սրբազան պարտականությունն ընկնում է նաև հայոց գիտության, կրթության և մշակույթի ղեկավարների, առաջատարների ու այդ բնագավառների բոլոր մշակների վրա: Դա նաև յուրաքանչյուր հայ մարդու, հայ ծնողի, տատի ու պապի պարտականությունն է:

Ո՞ւմ առջև ենք բոլորս պարտավոր և պատասխանատու դրա համար.

- Աստուծո՛ւ, Ում կանքով և ծրագրով է ստեղծված Հայ Ազգը:

- Մարդկության առջև, որի մի մասնիկն է Հայ Ազգը:

- Նախնայ՛ց առջև, որոնց վաստակի շնորհի՛վ գոյություն ունի Հայ Ազգը:

- Եվ նոր սերնդի առջև, որպեսզի այն գոյատևի ու հարատևի՝ ապրելով արժանավայել կյանքով, ըստ մեր 1700-ամյա քրիստոնեական հավատքից բխող ու նրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության:

Եվ դա կլինի նաև ի բարօրություն մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության:

4-ը մայիսի, 2007 թ.

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆ, ՈՐԸ ՆԱԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ Է

Մարդկային գործոնը հիմնականում պայմանավորված է մարդու կենսաբանական վիճակով, հոգեբանական վիճակով և մարդու կրթական, մասնագիտական, բարեկրթական՝ կուլտուրական մակարդակով: Բայց մարդկային գործոնի այս պայմանները, պետք է ասել, երկրորդական նշանակություն ունեն. առաջնային նշանակություն ունի մարդու հոգեղենությունը՝ հավատքը և դրանից բխող ու դրա վրա հիմնված գաղափարականությունը և ըստ այնմ՝ բարոյականությունը:

Մեզ՝ հայերիս համար այդ հավատքը քրիստոնեական հավատքն է, գաղափարականությունը՝ այդ հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ): Եվ մեր ազգային տոհմիկ բարոյականությունը, բարոյական արժեքներն ու նորմերը բխում են և հիմնված են մեր հավատքի ու մեր ՀԱԳ-ի վրա:

ՀԱԳ-ը հայի և հայ ազգի խոհերի, ծրագրերի, գործերի ու կյանքի ապրումի լուսատու աստղն է: Միաժամանակ ՀԱԳ-ը, լինելով մեր հավատքի քաղաքացիականացումն ու քաղաքականացումը, նաև կողմնորոշողն ու առաջնորդողն է մեր ներքին ու արտաքին քաղաքականության, որի

կենսագործունը կհովանավորի և կպաշտպանի Աստված:

Այնժամ հայի, հայության և Հայաստանի լույսն ու սերը կզգա մարդկությունը, իսկ երկյուղը՝ թշնամին:

* * *

Մարդը մարդ չէ, եթե միայն երկրային ծնունդ է, այդ դեպքում մարդը կենդանի է, գազան, որը և՛ չար: Մարդը մարդ է, եթե երկրայինի հետ նաև հոգևոր էակ է՝ երկնային բաղադրությամբ: Այդ դեպքում մարդը չար չէ, բարի է...

Եվ մարդն իսկապես այդպիսին է՝ բարի, ստեղծագործ ու կառուցող, քանզի Աստուծո շնչով է հոգի առած, հետևապես պատրաստ՝ դառնալու ցորենի հատիկ և մեռնելու, որպեսզի բազում արդյունք տա՝ ըստ Աստվածորդու պատգամի:

Հայ մարդն այդպիսին է եղել իր ստեղծման օրից՝ հանձինս Հայկ Նահապետի, Գրիգոր Լուսավորչի, Վարդան Մամիկոնյանի և բոլոր Մամիկոնյանների, Մաշտոցների, Խորենացիների, Նարեկացիների և նրանց հոգևոր ու գաղափարական հետևորդների, մինչև մեր օրերը...

Կեցցե՛ հայ մարդը՝ Աստվածասեր ու Աստվածահաճո իր խոհերով, գաղափարով, գործերով ու ընդհանրապես ապրած կյանքով՝ վասն հավատո և վասն հայրենյաց. վասն Հիսուսի և վասն ազգի հայկյան:

Երեքշաբթի, 9-ը հունվարի, 2007 թ.

ՄԱՐԴԸ՝ ՄԱՐԴ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ՝ ՔԱՂԱՔԱՅԻ՝ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ

Ասվել է և ճի՛շտ է ասվել, որ իրավ մտավորականը, գիտակից քաղաքացին ու ազնիվ հայրենասերը երբեք անհարգալից չի լինի, չի՛ վարկաբեկի հայրենի իշխանությունը, քանի որ վերջին հաշվով դա ուղղվում է պետության դեմ (տվյալ դեպքում հայոց պետության, որը և հույսն է մեր բազմաչարչար ազգի գոյության):

Նույնիսկ քննադատությունը, ինչքան էլ խիստ, պետք է լինի քաղաքավարի, կառուցողական, հարգալից և նույնիսկ ավստսանքի արտահայտությամբ, այլ ոչ թե բամբասանքներով, ծաղրուծանակով, թշնամությամբ և չարական հրճվանքով:

Նման վերաբերմունքն իշխանության նկատմամբ հետևանք է տվյալ անձի նախ և առաջ ազնվության ու քաղաքական մշակույթի, ինչպես նաև ազգային ինքնագիտակցության և պետական մտածելակերպի ցածր մակարդակի: Ավելին, սույն վերաբերմունքն ազգի նկատմամբ հարազատությունն է հարցականի տակ դնում:

Նման անարժան, անպատվաբեր, վնասակար վերաբերմունքը բացառելու համար մեծ դեր է կատարում հայի մարդկային բարությունը, խիղճը և պատասխանատվության զգացումը... Երանի՛ այն օրվան, երբ հայությունը կամ գոնե նրա ճնշող մեծամասնությունն այդպիսի հայորդիներից բաղկացած կլինի: Ովքե՞ր, ե՞րբ, ի՞նչ պետք է անեն, որ այդ օրը շուտ գա, քանի որ շատ է ուշացած, մինչդեռ դրանով նաև շատ ուրիշ կարևոր բաների կատարումն է պայմանավորված...

Բոլոր հայերն անելիք ունեն, բայց առաջին հերթին՝ հայ քրիստոնյաները՝ էջմիածնի առաջնորդությամբ, և հայ մտավորականությունը՝ պետության ղեկավարությամբ պետք է զգոն և գործուն լինեն այդ օրը մոտեցնելու համար և դա՝ նախևառաջ սեփական օրինակով...

Կիրակի, 26-ը նոյեմբերի, 2006 թ., ժամը 14:00

**ՀԱՅՆ ԵՅԵ ԼԻՆԻ ՀԱՅ,
ԴԱ ԱՄԵՆ ԻՆՉ Է, ՈՐ ԼԱՎ Է
(Ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության)**

Հայը չպետք է արևմտականանա, եվրոպականանա, ամերիկականանա, ռուսանա, չինացիանա, պարսկանա, վրացիանա կամ թրքանա:

- Հապա ի՞նչ անի:

- Ո՛չ մի բան: Հայը մնա հայ, և եթե պետք է ինչ-որ... անա...-ականանա, ապա թող հայանա, հայկականանա:

- Հայն ինչպե՞ս հայանա, հայկականանա, երբ արդեն իսկ հայ է:

- Իսկ ինչո՞ւ ամերիկականանա, ֆրանսիացիանա կամ գերմանացիանա: Եթե հայն այդպիսի խնդիր է դնում իր առաջ, նշանակում է կարիք ունի հայանալու, հայկականանալու:

- Իսկ ի՞նչ է հայը, և ի՞նչ է նշանակում նրա հայկականանալը:

- Եթե մեկը դա չգիտի՝ և մինչև հիմա այդ հարցերը չի՛ տվել և պատասխանները չունի և չի՛ փնտրել, նշանակում է նրա հայկականությունը հիվանդ կամ հաշմված է և բուժման, վերականգման կարիք ունի: Եվ չափանիշը հիվանդության՝ նրա վերաբերմունքն է հայոց պետականության նկատմամբ՝ որպես գիտակից, գրագետ ու նաև խղճով քաղաքացի...

- Ո՞ւր գնա բուժվելու, ի՞նչ բուժում ընդունի: Դեղի անունն ի՞նչ է:

- Եթե հայն անկեղծորեն այս հարցերը տալիս է, նշանակում է իր մարդկային հայկականության օրգանիզմը դեռ մաքառում է, որովհետև նրա հոգեբարոյական իմունիտետը չի սպառվել: Բայց քանի որ մեր հոգեբարոյական և գաղափարական բուժարանները չեն գործում, և բուժելու կոչվածները շատ դեպքերում իրենք կարիք ունեն բուժման, վերականգման, իսկ դեղամիջոցներն

էլ վաղուց են մոռացված, այս պայմաններում կարևոր է ինքնաբուժումը՝ առողջանալու, զորանալու, գործելու ու երջանկանալու համար:

- Ինչպե՞ս:

- Հավատքով կարդալով Սուրբ Ավետարանն ու հետո մեր Խորենացիներին, Կորյուններին ու Եղիշեններին և դրանից հետո նորից կարդալ Ավետարանը, նայել, սիրել խաչը և նորից լսել մեր մեծերի խոսքը, ու այնժամ կճանաչես, կհասկանաս, կսիրես այդ աղբյուրներից բխող և դրանց վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ) և կյանքում կկողմնորոշվես դրանով:

- Եվ ի՞նչ:

- Ամեն ինչ: Կլինի այն, ինչ որ պետք է լինի, կատարյալը՝ կլինես մարդ, հայ մարդ՝ հոգեպես, գաղափարապես, բարոյապես և կենցաղապես առողջ, կենսունակ ու երջանիկ: Միաժամանակ (և սա 20-21-րդ դարերի երևույթ ու պահանջ է) կլինես հայոց պետության հարազատ, պատվախնդիր ու արժանավայել քաղաքացի՝ պարտքի գրագետ գիտակցությամբ:

- Իսկ թուրք, արաբ, բուլղար, արգենտինացի, կանադացի դառնալու, ֆրանսիացիանալու հարցը մի՞թե դա էլ մարդկային չէ...

- Հայ բարեկամ, ճանաչելով և ընդունելով ՀԱԳ-ը՝ քեզ համար պարզ ու հստակ կլինի, որ դու պետք չունես որևէ ազգ անալու-ականանալու: Դու հայ մարդ ես, և դրա մեջ ամեն ինչ կա, որ լավ է: Դու կարող ես լինել բոլոր ազգերի բարեկամ, բայց մնալ հայ՝ միշտ, ամենուր ու հարատևորեն հայանալով, որպեսզի դու, ուզենալուց բացի, նաև կարողանաս բարեկամ լինել, իսկական բարեկամ բոլոր ազգերի հետ և սովորել ու սովորեցնել, օգնել ու օգտվել, սիրել ու սիրվել և ստեղծել, ստեղծագործել ու Աստուծո ժողովուրդ լինել՝ հօգուտ քո հայ ու այլ ազգերի, ի խաղաղություն, ի բարեկեցություն ու ի երջանկություն ամբողջ մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության:

Ամեն:

Թել Ավիվ, 24-ը մարտի, 2006 թ.,

առավոտյան ժամը 5:40

ՀԱՅ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայ Ազգային Գաղափարախոսության (ՀԱԳ) համաձայն՝ կարող է լինել հայ՝ իսկական, իրական, այսինքն՝ բովանդակալից հայկականությամբ և հայ՝ օտարացած, ձևական, այսինքն՝ բովանդակազուրկ հայկականությամբ:

Ո՞ր հայն է առաջին խմբից՝ բովանդակալից հայկականությամբ:

Սակայն, նախ՝ ի՞նչ է հայկականությունը. ժառանգական կամ լեզվական հատկություն՞ն է, կամ տեղայնական-հայրենակցական պատկանելիություն՞ն, և

կամ քաղաքացիական կարգավիճակ, թե՞ հայկականությունը ոչ միայն լոկ ժառանգական, այլև ժառանգական-հոգեկան, բարոյական, գաղափարական հատկություն է և դրանց հիման վրա միայն նաև լեզվական, մշակութային և հայրենակցական պատկանելություն ու քաղաքացիական կարգավիճակ է: Եվ վերջինս՝ քաղաքացիական կարգավիճակը, ոչ թե քաղաքական-վարչական կարգավիճակի առումով, լոկ անձնագրով, այլ նախնառաջ ազգային պատկանելության հոգեբարոյական պարտքի գաղափարական գիտակցության առումով:

Այս գիտակցությամբ է, որ հայի հայկականությունը բովանդակալից է: Բովանդակություն, որը կերտվում է Հայ Ազգային Գաղափարախոսությամբ: Եվ հայն իր կյանքի իմաստը գտնում և նպատակը համարում է ծառայել Աստծուն՝ ծառայելով իր ազգին՝ հայությանը, որպեսզի իր ազգն էլ ծառայի Աստծուն՝ ծառայելով մարդկությանը, որպեսզի մարդկությունն էլ ծառայի Աստծուն՝ միշտ, ամենուր, ամեն ինչում:

Այդպիսի հայը, ի տարբերություն բովանդակազուրկ հայկականությամբ հայի, մեծ մարդ է, լավ մարդ է և ստեղծագործ ու շինարար՝ իր ազգի՝ հայության և երկիր Հայաստանի համար...

Այդպիսի հայը Աստվածասեր է և մարդասեր...

Այդպիսի հայը անհաղթ է և շատ կարող...

Այդպիսի հայը իմաստուն է և գիտուն...

Այդպիսի հայը երջանիկ է ու երանելի հավիտյանս, քանզի նրա հայկականությունը բովանդակալից է:

Այդպիսին էին մեր այն նախնիք, որոնց հավատքի հոգեբարոյական ու ազգային գաղափարական հավատարմության համար Աստվածային վարձատրության շնորհով մենք դեռ գոյատևում, ապրում և պայքարում ենք այսօր և ունենք ապագայի Աստվածահաճո, արժանավայել կյանքի հավատքի հույսը:

Այն, ինչ որ մեր նախնիք հարազատ, տոհմիկ ժառանգություն են թողել մեզ, մենք պարտավոր ենք սրբությամբ գործածել և դեռ ավելիով փոխանցել մեր նոր սերնդին՝ որպես հոգեկան պարտք և իմաստավորում մեր կյանքի: Եվ այդ պետք է անենք նաև ի բարօրություն մարդկության և միշտ ի փառս Սուրբ Երրորդության:

Ամեն:

ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայկականությունն Աստվածաստեղծ մարդկային ընտանիքի ազգային ազնվագարմ տեսակի հայկական բովանդակությունն է:

Հայկականությունն ունի մարդկային ուրույն հոգեկերտվածք, խառնվածք և նկարագիր, որոնք սերում են մարդու մարդկայնացման հոգեվիճակի սկզբնավորումից:

Հայկականության հավատադրոշմ հոգեկերտվածքից, խառնվածքից և նկարագրից բխող աշխարհընկալման (մարդկային) արդյունք է հայկականության տոհմիկ հավատամքը և գաղափարականությունը, որոնք ձևավորել են ազգային լեզվամտածողության արդյունք հանդիսացող՝ հայի տոհմիկ մշակութային զգայունությունը (զգացողականությունը) և դրա արտահայտությունը:

* * *

31-ը հունվարի, 2008 թ., գիշերվա ժամը 2:00

Աստուծո երկյուղը, սերը և հավատարմությունը հայ ազգին բնավորվել է հայակերտության Աստվածային ստեղծագործության հիմքից և Հայկ Նահապետի հավատքով դարձել է ազատասիրություն:

Սրանով է հայկականության՝

- Աստվածաճանաչումը,
- Աստվածասիրությունը,
- Աստծուն հավատարմությունը,

- Ով ճանաչում է, ունի ու ապրում է հայկականությամբ, իր մեջ ունի նաև այս երրորդությունը՝ Քրիստոսաշնորհ:

ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ, ՈՒԺԸ ԵՎ ՎԵՐԵԼՔԸ

- Ի՞նչ է հայկականությունը:
- Ո՞րն է հայկականության գաղափարը:
- Ո՞րն է հայկականության գաղափարի ուժը (ՀԳՈՒ):
- Ի՞նչ դեր է կատարել այն հայության կյանքում:
- Ինչքանով է այժմ հայությունն իրազեկ ՀԳՈՒ-ին:
- Հետևանքներ...
- Անելիքներ...
- Ինչպե՞ս...

Հայկականությունը, լինելով մարդկային ընտանիքի ազնվագարմ

ազգային տեսակի էության հայկական բովանդակությունը, կազմում է հատուկ խառնվածքի և նկարագրի մարդկային տեսակ: Այդ տեսակի հոգեկանությունը, զգայունությունը սերում են մարդու մարդկայնացման հոգեվիճակի սկզբնավորումից: Այն ուրույն է իր Հայաստան բնաշխարհի հատկությունների նմանությամբ և խորքում կրում է Աստվածակերտության հավատքի դրոշմը: Այդ դրոշմից և դրա խառնվածքից ու նկարագրից առաջացող աշխարհընկալման արդյունք է հայկականության տոհմիկ գաղափարականությունը, գաղափարապաշտությունը և դրան ավելացրած՝ հայի հոգեմտավոր զգացողությամբ ու լեզվամտածողությամբ պայմանավորված տոհմիկ մշակույթը:

Հայկականության հավատադրոշմ հոգեկերտվածքը, խառնվածքը և նկարագիրը, պարարտ ու պատրաստ լինելով, ընկալեց Աստվածության խորհուրդը և Նրա կերտած կյանքի ճշմարտությունը: Այդպիսով, Քրիստոսի Ավետարանի և խաչի Աստվածաշնորհի հավատքով հայկականությունը հաղորդվեց իրական կյանքին և որակական թռիչքի թևեր ստացավ... Այդ թռիչքը հայությունը դեռ պիտի ավարտին հասցնի իր հավատքից բխող և դրա վրա հիմնված գաղափարախոսությամբ՝ Հայ Ազգային Գաղափարախոսությամբ:

Երեքշաբթի, 7-ը նոյեմբերի, 2006 թ., ժամը 22:10

ՀԱՅՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Հայի վերաբերմունքն իր Ազգի և Հայաստանի նկատմամբ համեմատելի է որդու վերաբերմունքին իր ծնողի և հայրական տան նկատմամբ:

Եթե կա որդի, որը հրաժարվում է իր ծնողից ու անտարբեր է հայրական տան նկատմամբ, և նա նորմալ մարդ կարող է համարվել, ապա կարող է լինել և այնպիսի հայ, ով նորմալ կարող է համարվել, եթե նման վերաբերմունք ունի Ազգի և Հայաստանի նկատմամբ: Եվ ինչքանով բնական կամ անբնական է երևույթը որդու վերաբերմունքի դեպքում, նույնքան (հավանաբար ավելի) բնական կամ անբնական կարելի է համարել երևույթը հայի վերաբերմունքի դեպքում: Նույնը վերաբերում է առաջին և երկրորդ երևույթի անարժան ու անոթալի լինելուն կամ չլինելուն:

Այս միտքը, այս համեմատությունը և, մանավանդ, եզրակացությունը կարելի է ճիշտ համարել: Եվ ըստ այնմ, կա՞ն անելիքներ կամ չանելիքներ մեր ազգի դաստիարակության, յուրաքանչյուր հայի՝ Հայաստանի նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ:

Դրա մասին պետք է մտածել ու աշխատել... բոլորս, հատկապես հայոց պետությունը, Հայ եկեղեցին և հայ հոգևոր մտավորականը:

* * *

Եվ մի խոսք էլ, որ պե՛տք է ասվի մասնավորապես մեզ՝ հայաստանցիներին:

Չի կարելի հարցադրել հային, որպես թերութուն, թե ո՞ր արտասահմանյան երկրի քաղաքացի է, այլ բավական է հարցադրել՝ հա՞յ ես, թե՞ ոչ: Եթե հայը հա՛յ է, նա քեզ նման է, և դու՛ էլ նրան ես նման՝ իրավունքներով, իսկ պատասխանատվությամբ՝ դու ավելի, որովհետև դու ավելի՛ օրհնյալ ես էական այն առավելությամբ, որ հայրենիքում ես ապրում՝ անկախ նրանից՝ դու հասկանո՞ւմ ես դա, թե՞ ոչ, ու անկախ նրանից, թե ինչպե՞ս է հասկանում այդ օրհնությունն ու առավելությունը հայ քաղքենիական հավատազուրկ-զաղափարազուրկ միտքը... Եվ եթե իրապե՛ս երկուսդ էլ հայ եք, այդ դեպքում հարցն այն է, թե սիրո՞ւմ եք միմյանց, թե՞ ոչ: Պե՛տք է սիրեք միմյանց, այլապես խորթ եք ձեր ծնողին՝ հայ ազգին, և խորթ՝ ձեր Հայրական տանը՝ Հայաստանին, և ամենասարսափելին՝ խորթ եք Աստծուն...

Այդ խորթությունը թերսնումից է, լավ չսնվելուց ազգային կաթով՝ հայոց սուրբ լեզվով, բառ ու բանով, մշակույթով, պատմությունով, ու ամենակարևորը՝ անհաղորդ մնալուց Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, բարոյականու-թյանը և դրանց ակունք ու հենարան հայոց հավատքին:

Ուրբաթ, 5-ը դեկտեմբերի, 2003 թ.

United Airlines Flight 93, Վաշինգտոն-Լոս Անջելես

ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՍՏՈՒԾՈՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԾԱՌԱՅԵԼՈՎ ՀԱՅՈՒԹՅԱՆԸ

Հայկականությունն Աստվածատուր մարդկային արժեք է: Բայց մենք՝ հայերս, այդ լավ չենք ճանաչում, չենք գիտակցում ու արժևորում:

Հայկականությունը, կազմելով մեր՝ հայի մարդկային էությունն ու ազգային արժեքը, նշանակում է, որ մենք՝ հայերս, լավ չենք ճանաչում և չենք գիտակցում մեր մարդկային էությունն ու ազգային արժեքը:

Եթե մենք լավ չենք ճանաչում ու գիտակցում մեր մարդկային էությունը և ազգային արժեքը, այդ նշանակում է, որ չենք կարող ըստ արժանվույն գնահատել ու արժևորել մեր հավաքականությունը, այսինքն՝ ժողովուրդ և ազգ կազմը: Եթե սա ճիշտ է, ապա նշանակում է, որ հայությունը չի կայացած որպես ազգ, իսկ չկայացած ազգն անկարո՞ղ է կայացած երկիր, իշխանություն և պետություն ունենալ:

Հայությունը չի կայացած որպես ազգ և չունի կայացած երկիր՝ իշխանություն և պետություն, որն ի գորու լինի դիմադրել ներքին ու արտաքին մարտահրավերներն ու մրցահրավերները, մնա առողջ, զորեղ, կենսունակ և

հաղթի մրցակցություններում, որ անխուսափելիորեն կան և միշտ պիտի լինեն, գնալով՝ ավելի զորեղ, բարդ և դաժան, որ կուլ տան մեզ...

Որպեսզի հայությունն ունենա կայացած երկիր, իշխանություն և պետություն, հայությունն ինքը պետք է կայանա որպես ԱԶԳ:

- Ինչպե՞ս կարող է հայությունը կայանալ որպես ազգ:

- Հայ մարդու՝ հայկականության, որպես Աստվածատուր մարդկային արժեքի ճանաչմամբ, արժևորմամբ և ընդունմամբ:

Իսկ դրան հայ մարդը կարող է հասնել հավատքով և դրանից բխող ու դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ (ՀԱԳ) և բարոյականությամբ:

Քրիստոնեական մեր տոհմիկ, հարազատ հավատքը և ՀԱԳ-ը շաղախն են ազգի կայացման ու կայունության:

Այլ կերպ ասած՝ հավատքն ազգի, հայրենիքի ու պետականության կայացման և կայունության արմատն է, գաղափարախոսությունը՝ բունը, բարոյականությունը՝ ճյուղերը, իսկ կազմակերպական կառավարումը՝ պտուղը:

Եթե արմատը չլինի, մնացածների մասին խոսք չի մնում, բայց մնացածներից որ մեկն էլ թույլ լինի, թույլ կլինի և արոյունքը: Բայց երբ հավատքը լինի սուրբ և հաստատ, մնացածն անպայման կլինեն, որովհետև կա ամենաեականը՝ հավատքը շնորհող Աստուծո զորությունը, որ երբեք չի թողնի, միշտ կբարձրացնի իրեն սիրող և հավատացող հավատարիմներին:

Շաբաթ, 26-ը մարտի, 2005 թ., ժամը 10:45,

Վաշինգտոն (ԱՄՆ)

Ո՞ՐՆ Է, ԻՆՉՈ՞ՒՄՆ Է ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Ի՞նչ է հայագիտությունը, ինչի՞ համար է այն և ո՞ւմ համար է այն, ինչպե՞ս պետք է այն հասկանալ, որ ի՞նչ անի ու ի՞նչ լինի:

Նախքան մեր տեսակետն արտահայտելը, նշենք, որ հայագիտության բնույթի վերաբերյալ կան տարբեր հաստատումներ, օրինակ՝ Հայկական սովետական հանրագիտարանում (հատոր 6, էջ 130) գրված է՝

«Հայագիտությունը գիտությունների համակարգ է: Ընդգրկում է հայ աշխարհագրությունը, լեզվաբանությունը, պատմագիտությունը, ազգագրությունը, հնագրությունը, հնագիտությունը, աղբյուրագիտությունը, մատենագիտությունը դրամագիտությունը, արձանագրագիտությունը, գրականագիտությունը, բժշկագիտությունը, իրավագիտությունը, տնտեսագիտությունը, փիլիսոփայությունը, արվեստագիտությունը: Հայագիտությունը որպես գիտությունների համակարգ ձևավորվել է XVIII դ. սկզբին, թեև հետաքրքրությունը Հայաստանի և հայերի նկատմամբ սկսվել է հնագույն ժամանակներից (տարբեր անվանումներով

Հայկական լեռնաշխարհի, Հայաստանի և հայերի մասին տեղեկություններ են պահպանվել դեռևս մ. թ. ա. III-II հազարամյակներից): Հայագիտության աղբյուրներ են՝ հնագիտական պեղածոները, ճարտարապետական հուշարձանները, ասուրա-բաբելական, խեթական, ուրարտական, հին պարսկական սեպագրությունները, արամեական, հունական, լատինական, վրացական արձանագրությունները, հունա-հռոմեական, եբրայական, ասորական, իրանական, վրացական, արաբական, թուրքական մատենագրական տվյալները, ճանապարհորդների տեղեկությունները, հայկական բազմատեսակ սկզբնաղբյուրները (պատմիչների երկեր, ժամանակագրություններ, տարեգրություններ, վավերագրեր, հիշատակարաններ, վիճագրություններ և այլն): Հիմնականը հայկական աղբյուրներն են»:

Ստեղծվել է բազմալեզու և մեծածավալ հայագիտություն, որը սերտորեն առնչվում է բյուզանդագիտության, կովկասագիտության, ուրարտագիտության, ասուրագիտության և արևելագիտության այլ ճյուղերի հետ:

Այս ամենով, մեր ընթրնամբ՝

- Հայագիտությունն իր էությամբ, նախևառաջ, հայոց հավատամքի պարզաբանումն ու հայությանն իրազեկելն է: Դրա հետ միասին հայագիտությունը հայոց քրիստոնեական հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության պարզաբանումը և դրանով ազգի ուսուցումը, կրթությունը և դաստիարակումն է:

- Այդ իմաստով հայագիտությունը մեր ազգի գոյացման, գոյության և կյանքի ապրումի օրինաչափությունը հասկանալու գիտություն է. ինչո՞ւ է առաջացել հայ ազգը, ինչպե՞ս է առաջացել և հայ ազգն ինչո՞ւ ու ինչպե՞ս պետք է կատարի իր Աստվածային առաքելությունը մարդկային ընտանիքում դարերի ընթացքում:

- Հայագիտությունը նաև գիտություն է, որը վերլուծում, պարզաբանում և սովորեցնում է հայկականության ու դրա արժեքի մասին: Սովորեցնում է, թե ի՞նչ է հայկականությունը և ինչպե՞ս կարելի է զգալ հարզը և գնահատել հայկականության արժեքը, գիտակցել այդ արժեքի պահպանման անհրաժեշտությունը և պայմանները, միջոցները, ձևերը և թե ինչպե՞ս պետք է և կարելի է ապրել այդ արժեքով՝ այդ արժեքի հարատևության համար, սովորեցնում է նաև հայկականության մարդկային մեծ բերկրանքի և դրա վայելքի մասին:

- Հայագիտությունը, որպես իր ամենաէական խնդիր, դաստիարակում է մեզ երախտագիտության և շնորհընկալության զգացումն ու գիտակցումը Աստուծո նկատմամբ և սովորեցնում Նրա Միածին Որդուն հավատալու շնորհի կենսունակության մասին: Կենսունակություն, որը նախապայման-հիմքն է մեր անձնական, ազգային և պետական ապահովության, առաջընթացի, զորացման և բարգավաճման:

- Հայագիտությունը նաև սովորեցնում է, թե ինչպե՞ս է տեղի ունենում

մարդկությանը եղբայրության պատվաստումը Սուրբ Հոգու միջոցով՝ համամարդկային մտավոր արտահայտությամբ, սիրով, փոխօգնությամբ, գործակցությամբ և հարազատության հարաբերությամբ:

- Հայ մարդու՝ մանուկ հասակից հոգեմտավոր և գաղափարաբարոյական կերտվածքի, դաստիարակության, կրթության և ուսուցման իմաստը, տրամաբանությունը և նյութը պետք է շաղախված լինի հայագիտությամբ: Դրա համար իսկ հայագիտությամբ պետք է համակված լինի հայոց կրթությունը, մշակույթը, արվեստը, լեզվամտածողությունը, ազգային գործառնությունը և պետական մտածողությունը:

- Հայագիտությամբ պետք է զբաղվի և դրա համամարդկային խնդիրը կատարի, նախևառաջ, հայ ազգը և յուրաքանչյուր հայ՝ իր պետականության, Հայրապետության և մտավորականության նախանձախնդրությամբ, նախաձեռնությամբ ու առաջնորդությամբ:

Աստուծո օգնությամբ:

Հունիս, 2003 թ.

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

Կա՞ հայկականության ազգային գաղափար, գաղափարական հայեցակարգ՝ ծայրաստիճան մարդկային և խորապես ազգային:

Թանկարժեք ու երկարաժամկետ գիտական ուսումնասիրություններ պետք չեն՝ պատասխանելու այս կարևորագույն հարցին, քանզի այս հարցի փաստացի պատասխանը մեր գոյության փաստն է: Եթե հայությունն ազգային գաղափար չունենար և դրանով չապրեր, չէ՛ր գոյատևի, մանավանդ դարավոր պետականազուրկ պայմաններում:

Շուրջ հազար տարի հայության մեծամասնությունը և շուրջ վեց հարյուր տարի ամբողջ հայությունն առանց պետության և շատ դեպքերում ազգայնորեն անկազմակերպ ու անկառավարելի լինելով հանդերձ, գոյատևել է: Հայ ժողովուրդն առանց գաղափարի, այն էլ առանց զորեղ գաղափարի, չէր կարող գոյատևել: Թեև տկարացած, ցիր ու ցան եղած և մեծ կորուստներ տված՝ հայ ազգն այսօր կա՛: Եվ դրա հիմնական պատճառը այն է, որ իր նախնյաց գաղափարը՝ Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ), հավատքով և մասամբ ավանդություններով, սովորության իներցիայով ու նաև ժառանգական հիշողությամբ դարերով դիմացել, պահպանվել է և պահպանել է մեզ: Ու ազգային այդ գաղափարով էր, որ հայ մարդն անվերապահորեն պատրաստակամ է եղել վճարելու իր ազգային ինքնության պահպանման բարձր, հաճախ շատ բարձր գինը:

Արդ, հայության ազգային-պետական և հոգևոր առաջնային պարտա-

կանությունն ու խնդիրն է հիմնականում հավատքով ու նաև սովորություններով, ավանդությամբ, ժառանգական հիշողությամբ մեզ հասած, մեր նախնյաց Աստվածային բնությամբ կերտված ազգային գաղափարը՝ ՀԱԳ-ը, մեր սարերի անաղարտ, զուլալ ջրերի նման պարզաբանել, հստակեցնել և ընդունել որպես՝

- Մեր ազգի սրբազան դավանանքի օրգանական մաս,

- Ազգային պարտաճանաչության գիտակցություն և

- Մարդկային բարձրագույն չափանիշներով սոցիալական համոզմունք, ու այդ առումներով ՀԱԳ-ը կիրառենք հավատարմորեն՝ մեր անհատական, հասարակական և պետական կյանքի բոլոր բնագավառներում և հանգրվաններում՝ միշտ, ամենուր, ամեն ինչում:

Այդ անելով՝ ՀԱԳ-ը սնելու է մեր ազգի աշխարհայացքը, լուսավորելու է մեր պատմական ընթացքը, բարձրացնելու է մեր մշակույթը, դառնալու է մեր նոր սերնդի դաստիարակության բովանդակությունը և զորացնելու է մեր հոգեկան ու բարոյական իմունիտետը՝ դարձնելով ազգը վարակամերժ, ամուր և դիմացկուն շատ կողմերից եկող ամեն տեսակ ախտ ու վարակների դեմ:

Եվ դրանով ազգի միտքը, ստեղծագործական ոգին և գործունեությունը ստանալու են անսպառ ուժ, եռանդ, ճկունություն և ճիշտ ուղղություն:

Մինչ այդ, սակայն, տարբեր նշաններ կան անհանգստանալու հայ ազգի ու Հայաստանի ապագայի համար: Այդ նշանների ցուցակը երկար է, դրանց բովանդակությունը՝ ցավալի: Դրանցից մեկն աշխարհատարած հայության ու հատկապես երիտասարդության մի զգալի մասի ազգային պատկանելության, բարոյական կերպարի ու ազգի նկատմամբ տրամադրվածության, վերաբերմունքի վիճակն է: Այդ վիճակը հեռու է առողջ լինելուց: Այդ վիճակն ուղղակի վտանգի տակ է դնում հայ ազգի և Հայաստանի կենսունակությունն ու զորությունը, դրանով՝ զարգացման ու բարգավաճման կարողությունը, դրանով՝ ազատության ու անկախության հեռանկարը՝ լրջորեն վտանգելով հայ ազգի գոյությունն իսկ:

Ազգի տարեց սերունդը հայ երիտասարդության առաջ պետք է դնի իսկական հայ մարդու կերպարի հստակ չափանիշները, և ինքն իսկ դառնա գիտակից, պարտաճանաչ ու արժանապատիվ, հավատավոր հայի նմուշօրինակը:

Թե՛ Հայաստանի և թե՛ արտերկրի հայ երիտասարդության զգալի մասը, եթե ոչ ճնշող մեծամասնությունը, իր ծնողների շփոթված, տարուբերվող, անստույգ, անապահով ու ապազգային վիճակի կողքին տեսնելով բախտախնդիր, բարոյական արժեքները սակարկող, ճարպիկ, խաբեբա անձանց, ովքեր անհոգ կյանք են վարում, չհաշված չարաշահումների օրինակները, կորցնում է հավատը և հույսն իր ու իր ազգի և երկրի ապագայի նկատմամբ՝ զրկվելով չարին դիմադրելու և բարին կերտելու թե՛ կամքից և թե՛ կարողությունից:

Այս ազգային սոցիալական-հոգեբանական-բարոյական ախտը, արտ-

երկրում իր առանձնահատկություններով եթե նույնիսկ հայության միայն 20-30%-ին վարակած լինի, լուրջ ազգային-պետական ախտահարում է, որն «Արմենիկումն» իսկ չի կարող բուժել, այլ Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ)... Բայց պետք է ճանաչենք, ըմբռնենք և ընդունենք այն: Ընդունենք որպես ազգի, հայրենիքի և պետության վերակերտման, հզորացման, ապահովման և բարգավաճման երաշխիք՝ ապրելով և գործելով ՀԱԳ-ով:

27-ը մայիսի, 2005 թ.

ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏՔԻ ԷՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔ

Հավերժական էության՝ քրիստոնեական հավատքի աղբյուր Աստվածաշնչի համաձայն՝ Աստվածային լույսով՝ սիրով շնորհված հավատքն արդարացնում, ստեղծագործում և կյանք է տալիս: Աշխարհն ու մարդկությունը դրանով են կայացել և գոյատևում են: Եթե որևէ ժամանակ աշխարհի և մարդկության մեջ այդ հավատքը «կրիտիկական» չափից նվազի, դրանց զոյությունը կղադարի:

Այդ հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության (ՀԱԳ) համաձայն՝ այդ հավատքով են ստեղծվում ազգերը և կյանք ունենում, ստեղծագործում ու ապրում նաև պետականորեն: Եվ այդպես է հայ ազգն ստեղծվել, կյանք ունեցել, ստեղծագործել, պետականացել և հարատևել:

Եվ ինչ աստիճանի որ լինում են ազգի այդ հավատքը և հավատքով գործերը, այն աստիճանի լինում են ազգի կենսունակությունը, գոյավիճակը, դրությունը, հնարավորությունը և հարատևությունը:

Աստվածաշնչում ասված է. «Աբրամը (հետագայում նա անվանվեց Աբրահամ) հավատաց Աստծուն, և այդ հավատը նրա համար արդարություն համարվեց» (Ծննդ. 15.6): Աբրամը ուներ մեծ հարստություն, տուն, տեղ և ամեն ինչ, որ կարող էր բավարարել, իր ժամանակի չափանիշով, մարդու շատ բարձր կենսամակարդակը: Սակայն երբ Աստված նրան ասաց «Հեռացի՛ր քո երկրից, քո ցեղից ու քո հոր տնից և գնա այն երկիրը, որ ցույց կտամ քեզ» (Ծննդ. 12.1), նա անսաց Աստուծո խոսքին և 75 տարեկան հասակում հեռացավ իր բնակած երկրից և գնաց այնտեղ, ուր Աստված իրեն ասաց ու առաջնորդեց:

Այստեղ դրսևորվում է Աբրամի զորեղ հավատքը Աստուծո հանդեպ: Թեև այն երկիրը, որ իրեն ասվել էր, նա չգիտեր և չգիտեր, թե ինչպես է գնալու, հասնելու այնտեղ, ինչ է լինելու իր վիճակը, սակայն քանի որ կար Աստուծո խոսքը, դա նրա համար երաշխիք էր ամեն ինչի, որ լավ է և կատարյալ: Աբրամը պարզապես հավատաց Նրան. «Աբրամը հավատաց Աստծուն, և այդ հավատը նրա համար արդարություն համարվեց»:

* * *

Մեր Պատմահայրը՝ Մովսես Խորենացին, իր «Հայոց պատմությունով» մեզ տեղեկացնում է, որ Հայկը նույնպես հեռացավ իր բնակած տեղից: Նա հեռացավ, որովհետև Աստուծո Յոգով նա չուզեց ենթարկվել բռնակալ Բելին՝ չարի իշխանությանը: Մեր Նախահայր Հայկը հավատքով չվախեցավ բռնակալի զորքի մեծությունից, հավատքով արհամարհեց նրա սպառնալիքները և հավատքով արձակեց իր նետը, որ խոցեց չարը՝ Բելին, ու ազատություն բերեց իր տոհմին:

Եվ Աստված արդարություն համարեց Հայկի հավատքը և նրան կարգեց հայր հայ ազգի՝ մարդկային ընտանիքի հարազատ ու կարևոր ազգային մասնիկի:

Աբրամը և Հայկը նման են իրար Սուրբ Յոգու ներգործությամբ՝ Աստուծո հանդեպ իրենց հավատքով և Նրա կամքը կատարելով:

Աբրամը Սուրբ Յոգով հավատաց Աստուծո խոսքին և չերկյուղեց իր ազգատոհմին վերապահվող անորոշության առաջ:

Հայկը Սուրբ Յոգով հավատաց աստվածապարզ և ազատության ճշմարտությանը և չերկյուղեց և չընկրկեց իր ազգատոհմին սպառնացող վտանգի առաջ:

Աբրամն ու Հայկը և բոլոր նրանք, որ Աստուծո հավատքով ճանաչեցին ճշմարտությունը, գնացին ազատության ճամփով ու ազատ պահեցին իրենց հոգիները, միտքը և գաղափարը, որով և ազատ մնացին իրենք ու իրենց կացութեանը: Եվ այդ ճշմարտության ազատությամբ տեսան Աստվածորդուն՝ Քրիստոսին, և Կյանք ունեցան իրենք և իրենց ժառանգները...

Այս իմաստով հայ ազգն առաջատար է ոչ միայն պետականորեն քրիստոնեացմամբ, այլև առաջատարներից է հոգևոր, մտավոր և գաղափարական ապրելակերպի ազատությամբ: Ու եթե հայոց պետական կյանքը, դարերի ընթացքում խզվելով ազատությունից, խզվել էր նաև նրա հավատամքի պետական արտահայտությունը, ապա հայ ազգի հոգևոր, մտավոր և գաղափարական ազատությունը երբեք չի խզվել: Այն կաշկանդվել է, տկարացել, բայց իսպառ չի խզվել, չի վերացել: Այն կա և այսօր՝ որպես երաշխիք ազգի, երկրի և պետության լուսավոր վերելքի...

Մարդկային ցեղի հայ ազգի՝ մեր այդ մեծագույն գանձ-ժառանգությունը պետք է արձագանքի հայության հոգիներում ու մտքերում՝ լուսավորելով ազգի, հայրենիքի և պետության ընթացքը մեր հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ (ՀԱԳ)* որպես հայոց պետության առաջնային նպատակ, քաղաքականություն ու գործ:

Աստուծո օգնությամբ:

* Տես այս գրքի էջ 23-31

24-ը սեպտեմբերի, 2006 թ.

Ի՞ՆՉ Է ՏԱՐՈՆԸ

(Որպես հայկականության արտահայտություն)

Ի՞նչ է Տարոնը հայ ազգի համար:

Տարոնը նախևառաջ Ոգի է, Աստվածաշունչ Ոգի, որը հավիտյան է:

Տարոնական Ոգին Հավատքի աղբյուր է, և այդ հավատքից ու հավատքով՝ գաղափարախոսություն, հավատարմություն և ծառայություն՝ անմահ հոգու պարտքի հավիտենական հատուցման գիտակցումով: Գիտակցում, որը սրբագործվեց և հավերժացավ Վարդանանց նահատակությամբ՝ վասն Հիսուսի և վասն Ազգի...

Տարոնական Ոգու գաղափարը ամենահարազատ ու սերտ առնչությունն ունի Հայ Ազգային Գաղափարախոսության (ՀԱԳ) հետ:

Տարոնական Ոգուց ծնված Ասպետությունը կրում է հայ մարդու հոգու պարտքի զգացումը, գիտակցությունը և պատասխանատվությունն Աստուծո, մարդկության ու հայ ազգի առաջ:

Տարոնական Ասպետությունը Քրիստոնեական Հավատքով և դրանից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ՝ բարոյական կյանքի ապրում և դրա իմաստությամբ ու քաջությամբ՝ հարատև նվիրում ու ծառայություն է հայությանը, Հայաստանին և հայ պետականությանը:

Տարոնական Ոգին գոյացած է Ավետարանի և Խաչի հավատքի հավերժական շնորհից, սրբությունից, բարությունից, իմաստությունից, գիտությունից, արդարամտությունից, քաջությունից ու Աստուծո՝ Ազգի և մարդկության նկատմամբ անսասան, անխախտ սիրուց՝ հաստատագրված Մամիկոնեից Ուխտով:

Տարոն աշխարհն իր Ոգով հայ պետականության գաղափարի հայրն է, Արարատյան աշխարհն իր Ոգով՝ մայրը:

Այն հայը, որ Հայ Ազգային Գաղափարախոսությամբ՝ ազգային ոգով, դրանից բխող գիտակցությամբ ու նաև ֆիզիկապես, հաղորդվում է իր ծնողների՝ Տարոնի ու Արարատյան աշխարհների էությանը և կյանքի բոլոր հանգրվաններում ապրում է այդ էությամբ, անմահանում է...

Գիտական հիմքեր, փաստեր եք փնտրում այս մտքի հաստատման համար, խնդրեմ, նայե՛ք 28 կիլոգրամանոց Մշո ճառընտիրի ու անկախ Հայաստանի գոյության փաստերին:

Նայե՛ք ճառընտիրի և հայոց պետության ստեղծման ոգուն, գաղափարին, նպատակին և դրանց գոյության անհրաժեշտությունն զգացողների գիտակցությանը. դա էլ երկրորդ փաստ:

Եվ այն փաստը, որ ճառընտիրն այսօր Հայաստանի Հանրապետությունում՝ Մաշտոցի անվան Մատենադարանում է, որովհետև կային տարոնցի այդպիսի՝

կանայք, որ մարդկայնորեն աննախադեպ գաղափարապաշտությամբ, կյանքի գնով փրկեցին կորստից այդ սրբությունն ու մշակութային գանձը և ժառանգություն թողեցին մեզ, դա էլ փաստերի փաստն է: Այդ փաստերի փայլը կույրերն էլ կարող են տեսնել, եթե կուրացած չէ ճշմարտությանը հաղորդ լինելու նրանց կարողությունը, ցանկությունը և ձգտումը:

Եվ ի՞նչ կարող ենք ասել այս անանց փաստերի առնչությամբ, որ արդար, ճիշտ և բարի լինի:

- Փառք Աստուծո, և կեցցե՛ Տարոնը:

- Կեցցե՛ Տարոնական Ոգին:

- Կեցցե՛ Տարոնական Ասպետությունը:

- Եվ կեցցեն Տարոնական Ոգու և Ասպետության ժառանգորդները, ովքեր (Տարոնական Ոգով ու Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, իրենց կյանքի ապրումով են սրբագործված) կարող են դառնալ 21-րդ դարի Վարդանանք...

- Եվ կեցցե՛ նրանց կրիտիկական զանգվածը, որը կորիզն ու թթխմորը կարող է դառնալ սրբագործված հայ ազգի, սրբագործված հայրենիք-Հայաստանի և սրբագործված հայ Քրիստոնյա պետականության՝ առաջիկա դարերի ընթացքում փառավոր վերելքի համար, հոգուտ նաև մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության:

Ամեն:

Կիրակի, 24-ը սեպտեմբերի, 2006 թ., առավոտյան ժամը 4:30

ԻՆՉ Է ՏԱՐՈՆԱԿԱՆ ՈԳԻՆ, ԵԹԵ ՈՉ ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Տարոնական Ոգին Հայկյան, տոհմիկ հայկական, Աստվածաշունչ Ոգի է:

Տարոնական Ոգին նաև համայն հայության հոգեկան կորովի, բարոյական դիմադրողականության և գաղափարական կյանքի ապրումն է հայության ծննդից ի վեր:

Տարոնական Ոգին ապրեցրել է և ապրեցնելու է հայությանը, հայ ազգին մինչև մարդկության վախճանը և երկնային բնությամբ նոր կյանքի սկիզբը:

Տարոնական Ոգին առաջնորդում է Աստվածորդին՝ իր խաչի լույսով, լուսավորությամբ ու Ավետարանի իմաստությամբ և գիտությամբ:

Տարոնական Ոգին, որ Տարոնականությունն է, նաև հայության Հայկյան հոգեբարոյական և գաղափարական վարակամերժ կարողությունն է, որ գործել և գործում է միշտ ընդդեմ Բելի՝ չարի ստրկահոգության, ստրկամտության և նյութապաշտության վարակի:

Տարոնական Ոգին միշտ, ամենուր և բոլոր պայմաններում հայ տոհմիկ ինքնության պահպանման ու դրան հարատև ուժ, կարողություն, քաջություն

և դիմացկունություն հաղորդող Հայ Ազգային Գաղափարախոսությունն է արտահայտում:

Տարոնական Ոգին Ազգի կենսունակության, ստեղծագործության և պետականակերտության աղբյուր է՝ հավատքի իմաստությամբ, կամքով և զորությամբ:

Տարոնական Ոգին Հայկյան, Մամիկոնյան և Ֆիդայական Քրիստոսաշնորհ ազատասիրություն է, որն անխառն է հավատքով, մաքուր է բարոյականությամբ և հարազատ է գաղափարականությամբ: Այն ունենալու համար հայը պետք է այդպիսին լինի, նույնպես և՛ հայությունը:

Տարոնի, Տարոնականության Աստվածաշունչ Ոգին պարունակում է Հայկյան ազատատենչ ծննդով հայոց տրված Աստվածաշնորհի հավատքը, որը վերակենդանացավ Աստվածորդու մարդացմամբ և հավերժորեն սրբագործվեց 301 թվականին՝ Աստվածորդուն պետականորեն դավանմամբ:

Այդ հավատքից է բխում և դրա վրա է հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունը՝ մեր հավատքի քաղաքացիականացումը և քաղաքականացումը, որոնք պետք է պահենք, պահպանենք և կիրառենք մեր ոգու և հավատքի պես մաքուր, ամուր և հավերժ սուրբ, որպեսզի ամրանանք, զորանանք, բարձրանանք, աճենք և բարգավաճենք...

Այն ժամանակ մեր ազգի, մեր երկրի և մեր պետության կյանքից

«Ձմեռը փախ կտա, ծառերը կհագնեն տերև, և ծիծառը կդառնա յուր բույն»:

31-ը դեկտեմբերի, 2007 թ., ժամը 22:40

ՏԱՐՈՆ ԱՇԽԱՐՀԻ ԶՎԱԿՆԵՐԸ

Ո՞Վ Է ՏԱՐՈՆՑԻՆ

Տարոնցու հիմնական բնորոշումը հոգեղենությունն է: Այն 301 թվականին սրբագործվեց և նորոգ կայացավ խաչապաշտությամբ:

Տարոնցու հավատամքն Աստուծո հավատքն է՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանով և խաչով:

Տարոնցու կյանքի ապրումն Աստուծո հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ է իմաստավորվում և ուղղորդվում:

Կա մարմնավոր, ֆիզիկական ու երկրային ապրումով Տարոն ու տարոնցի և կա հոգեղեն, հոգևոր ու երկնային ապրումով Տարոն և տարոնցի:

Կա նաև տարբեր գաղափարներով տարված տարոնցի և կա Հայ Ազգային Գաղափարախոսությամբ տոգորված տարոնցի:

Իսկակա՞ն տարոնցին, որ հավատքով, գաղափարով և դրանցից բխող

բարոյականութեամբ է տարոնցի, նա տարոնցի է միշտ, ամենուր ու ամեն ինչում, որովհետև հոգեղեն, հոգևոր ու երկնային ապրումով է Տարոնի զավակ: Նա հոգու պարտք է զգում և միշտ, ամենուր, ամեն ինչում տե՛ր է այդ պարտքին և պատրաստակամ՝ այն վճարելու... վասն Հավատո և վասն Հայրենյաց, վասն Հիսուսի և վասն Ազգի: Այդ պարտքն զգացվում է նաև Տարոնականութեան խորհրդով, որը հոգևոր է, Քրիստոսափայլ...

Այս է Տարոնը, որ անմահ է, կյանք անսպառ: Նրա զավակները պետք է ճանաչեն միմյանց, մեկտեղվեն և գործեն՝ վասն Հավատո և վասն Հայաստանի:

Սեպտեմբեր, 2006 թ.

ԱԶՆԻՎ, ՍՈՒՐԲ ԵՎ ՔԱԶ ՀԱՅ «ԲԵՌՆԱԿԻՐՆԵՐԻ»

ՄԱՐՂԱՍԻՐԱԿԱՆ ԱՐԱՐՔԸ

(մարդկային-հայկականության ըմբռնումով)

Էրզրի՝ Տարոն աշխարհի Սուրբ Առաքելոց վանքի Մշո ճառընտիրի և եկեղեցու դռան փրկիչ «բեռնակիրների» մարդկային-ազգային բարձրագույն առաքինությանը, գաղափարականությանն ու ասպետությանը բնորոշ արարքը մենք պարտավոր ենք ճանաչել, գնահատել, ընդօրինակել ու ազգային-հայագիտական կրթությամբ փոխանցել նոր սերունդներին:

Կեցցե՛ Տարոն աշխարհի ազգային, մարդասիրական և հայ սերունդների ինքնահաստատման ու դաստիարակության կռվան-օրինակ՝ Մամիկոնյանց քրիստոնեական հավատքի ասպետական, քաջ, իմաստուն և Սուրբ Ոգին, որից բխում է և որի վրա հիմնված է Հայ Ազգային Գաղափարախոսությունը՝ հայոց հավատքի քաղաքացիական և քաղաքական արտահայտությունը, հայոց պետականության նորոգ կառույցի ամրությունն ու կենսունակությունը...

Հայոց մայրաքաղաք Երևանում հիմնադրված Մատենադարանից և տարոնցի Մեսրոպ Մաշտոցի արձանից ներքև պետք է կանգնեցնենք իրենց սուրբ հավատքից բխող մարդասիրությամբ՝ մշակույթի և գիտության նվիրյալներ Մշո «բեռնակիրների» արձանները՝ որպես մարդկության և հայ ժողովրդի կողմից երախտագիտության արտահայտություն՝ նրանց հավատքի, գաղափարապաշտության և քաղաքակրթության հանդեպ ցուցաբերած անձնագոհ նվիրումի համար: Այդ արձանախումբը ծառայելու է նաև որպես սերունդների՝ նյութապաշտությունից զերծ դաստիարակության խորհուրդ:

Նրանց կատարած այդ մարդկային-ազգային սխրագործության ժամանակ հայոց պետություն չկար, սակայն հավատքով նրանք տեսնում էին հայոց պետականացման արշալույսը, որով և պետական գերազանց գիտակցությամբ ու նվիրումով կատարեցին իրենց քաղաքացիական Սուրբ պարտքը: Վերջինս

կարող էր լինել մեր հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության (թեկուզև ենթագիտակցաբար) ճանաչմամբ, ընդունմամբ ու ըստ այնմ ծառայության ոգու զգացումով:

Արձանախմբի շուրջը լավ կլինի, որ ստեղծվի հանգստյան մի փոքրիկ պուրակ՝ նստելու, նայելու արձանախմբին և մտածելու դրա մարդկային-ազգային Աստվածահաճո խորհրդի մասին:

Երկրորդ հուշարձանը պետք է լինի հրատարակվելիք գիրքը, որ պատմում է մարդկային պատմության, հավանաբար, անգերազանցելիորեն ազնիվ, մարդասեր, անձնագոհ, գաղափարապաշտ ու հավատքով, քաջ, տոկուն և զորեղ մշեցի «բեռնակիրների» կերպարի, նկարագրի և դրանք կերտած ու դաստիարակած ոգու և հող ու ջրի մասին, որոնք (ինչքան արդեն հայտնի է) միայն պատմողների վկայություններով չեն ճանաչվում, այլև նրանց կատարածի փաստերով: Այդ մասին է, որ գիրքը՝ որպես գրական հուշարձան, պետք է վկայի, մեկնաբանի, բացատրի, գնահատի, սովորեցնի ու կրթի մեզ և հետագա սերունդներին...

Արձանախմբի, ինչպես նաև գիրք-հուշարձանի, դրանց հերոսների կերպարների, նկարագրերի և նրանց սխրանքի մասին տարբեր հրատարակությունների, երաժշտության, երգերի, պարերի ու արվեստի այլ գործերի ստեղծման ու տարածման ծախսերին կարող են և վայել է, որ մեկ կամ մի քանի հարուստներ զգալի մասնակցություն ունենան, բայց ամբողջական գումարը պետք է հայթայթվի բոլոր հայերի կողմից, որովհետև բոլոր հայերին են պատկանում Էրզրից փրկված այդ մասունքները և մանավանդ նրանց մարդկային սխրանքի բարոյական ազգային ժառանգությունը: Նույնն ակնկալվում է համայն մարդկության կողմից, ում որ կհասնի այս նախաձեռնության լուրը և ընթերցում կգտնի... (Դե՛յ, տարոնցիք, մշեցիք, սասունցիք... և Տուրուբերանի համայն ժողովուրդ, դո՛ւք հատկապես՝ արթուն կացեք, որ չկորցնե՛ք ազնիվ գործին մասնակցելու առիթը...):

10-ը մարտի, 2007 թ.

ՏԱՐՈՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՐՕՐՅԱ ՄԻ ԿԵՐՊԱՎՈՐՈՒՄ

Արդար ու օգտակար կլինի, որ հայ հասարակությունը Երևանում՝ Մատենադարանի փեշերին, կանգնեցնի մշեցի «բեռնակիրների» մի արձանախումբ և մտածի մրցույթ հայտարարել նաև մի կտավի ստեղծման մասին, ուր ուրվագծվում են սարսափած, շվարած կանայք, ծերունիներ ու երեխաներ, որոնք դուրս են գալիս կիսավեր վանքից: Նրանց հետ են հալումաշ եղած երկու կանայք՝ գրկած (շալակած) Մշո ճառընտիրի երկու մասերը, որոնց հետագա

միացմամբ վերակազմվեց մեր նախնյաց հանճարեղ գործերից մեկը՝ Մշո ճառընտիրը՝ ներկայացված Մատենադարանում:

Արձանախմբում, նկարում, ինչպես նաև գրական, երաժշտական ու այլ ստեղծագործություններում այդ կանայք իրենց դեմքը և հայացքն ուղղած են դեպի հավատքով փրկություն և Կյանք...

Նրանք հոգնած են, բայց ո՛չ թուլացած.

Սոված են, բայց ո՛չ տկարացած.

Անտեր են, բայց ո՛չ լքված:

Նրանց հայացքի մեջ չկա սարսափ, նրանք հանգիստ ու գոհ են, որը բխում է պարտքի, հոգու պարտքի կատարման զգացողությունից և գիտակցությունից:

Նրանք ցնցոտիներով են, բայց բարեկազմ.

Նրանք մրոտված են, բայց գեղեցկադեմ.

Որովհետև նրանք Հայկյան ազնվական ցեղից են, Մամիկոնյան ասպետների դուստրեր...

Իրենց Սուրբ հավատքի ու դրանից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության գիտությամբ, մարդասիրությամբ ու... Աստվածասիրությամբ են իմաստնացած, հուսադրված, ազնվացած, գեղեցկացած, զորացած և քաջացած՝ Հայկյան ցեղի այդ դուստրերը, մեր հոգեզմայլ մայրերը:

Շնորհակալություն և փա՛ռք նրանց և նրանց ծծած կաթին՝ մեր Հայկյան Ոգուն:

* * *

Արձանախմբի և պատկերի մեջ (խորքում կամ այլուր) առաջ է նետվում երիտասարդ հաղթանդամ ծուռ մշեցին՝ շալակած Մշո Սուրբ Առաքելոց վանքի եկեղեցու 1134 թվականից գործած դուռը՝ փրկելու համար այն պղծության կորստից և պահպանելու որպես հայ ազգի մշակութային ժառանգություն սերունդներին...

Դա դուռն է Մշո այն սուրբ եկեղեցու, որն ամեն անգամ այնտեղ մտնելիս համբուրում էր այդ ծուռ մշեցին՝ իր հոր ու մոր, պապի ու տատի, բուլոր ծուռ տարոնցիների ու ամեն մի հայի նման...

Կիրակի, 7-ը մարտի, 2004թ.

ՏԱՐՈՆԸ ՎԵՐԱԳՏՆԵՆՔ ՆԱԽ ՄԵՐ ՍՐՏԵՐՈՒՄ ԱՍՏՈՒԾՈՒ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

(Որպես հայկականության հարատևություն)

Հարկ է անհապաղ ու անպայման ձեռնարկել Տարոնի առանձնահատուկ Ոգու և տոհմիկ հայկականության կերպարի վերականգնման, վերահաստատման գործն ու նաև դրանց համապատասխան ձեռնարկել հայագիտության դրսևորումներով (բարբառ, երգ ու պարից բացի) Տարոնական հայկականության հավատարիմ ապրումի վերականգնումը: Եվ միաժամանակ ստեղծել դրանք պահպանող (նույնիսկ զարգացնող) և համահայկականորեն բոլոր հարթություններով տարածող, ապրեցնող «Տարոն-Տուրուբերանի ժառանգության» Կառույցը:

Արդար և հույժ օգտակար է վերակենդանացնել Տարոնական և Վարդանանց շնչով հայկականության հավատքի, ոգու և գաղափարի ժառանգորդների դարավոր ապրումը հայոց նորոգ պետականության ժամանակաշրջանում՝ 21-րդ դարասկզբին:

Ի՞նչը, ինչպե՞ս կարող է դեմ հանդիման ի մի բերել նախանձախնդիր տարոնցիներին՝ բացելու համար իրենց սրտերը, միտք մտքի տալու, խորհուրդ անելու և վերագտնելու այն, ինչը ոչ ոք չի՛ կարող խլել մեզանից, եթե մենք ինքներս այն չզիջենք, չուրանանք և չլքենք:

- Չենք զիջելու, չենք ուրանալու և չենք լքելու: Վկա՝ մեր խաչը և մեր նախնյաց հոգին, որ միշտ կենդանի է:

Միությունը պետք է ունենա նաև այնպիսի՛ մշակութային կենտրոն՝ իր խորհրդով և մասնաճյուղերով, որ հարազատորեն արտահայտի Տարոն աշխարհի միտքը, խոսքը, երգը, պարը և ամենաէականը՝ ոգին և նկարագիրը: Արտահայտի նաև Տարոն աշխարհի նազանքն ու առնականությունը, հայոց հողի և մտքի մշակի հավատքը, ազգասիրությունը, մարդասիրությունը, բարոյականությունը և... հայկականությունը, որն անկորնչելի է և չնսեմացող, եթե մենք այդ չանենք... Սակայն մենք դեռ մենք ենք, ու այդ անել մեզ չի՛ թողնի մեր հավատքը, որ Աստվածաշնորհ է խաչով ու Ավետարանով, չի՛ թողնի այդ անել և մեր հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունը, որ համակված է Մամիկոնեից Քրիստոսախորհուրդ և Քրիստոսավկա Ուխտով:

ՄԱՐԴԿԱՅԻՆ-ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՀԱՅ ԿՅԱՆՔՈՒՄ

Մարդկային-հայկականության գործոնը կենսականորեն անհրաժեշտ է հայ կյանքում ազնվությունը բարձրագույն մակարդակով կիրառելու համար:

21-րդ դարասկզբի հայ իրականությունում մարդկային-հայկականության գործոնի այդ մակարդակով կիրառումը կարող է առավելագույնս մարմնավորել հայ սպան, հայոց բանակի սպայությունը, որովհետև ներկայիս հայ հասարակության կյանքում բոլոր խավերից ամենամեծ պատասխանատվություն կրողը, ամենակոփվածը և բարոյապես տոկունը սպայությունը պետք է լինի: Հետևապես, սպայությունն է, որ հայ իրականությունում պետք է լրացնի հայ ազնվականության պակասը՝ ստանձնելով հայ ազնվականության կոչումը, պատասխանատվությունը և դերը: Եվ դա ոչ թե իր ազնվագարմությամբ, այլ հոգու ազնվությամբ...

Հայ սպա: Հայ սպայություն:

Որո՞նք պետք է լինեն հոգով ազնիվ հայ սպայության հիմնական հատկանիշները:

- Ազգային հոգեկան ինքնագիտակցություն:

- Այդ ինքնագիտակցությամբ քաղաքացիական ինքնաբոլիս պատրաստականություն՝ արտահայտված ազնվականի արժանապատվությամբ, պատվախնդրությամբ, գաղափարականությամբ, քաջությամբ, բարությանբ, արդարամտությամբ, հայրենասիրությամբ և մարդասիրությամբ, մի խոսքով՝ ասպետությամբ: Ասպետություն, որը հոգեպես, գաղափարապես և բարոյապես սնվում է և հիմնված է ԱՍՏՈՒԾՈՒ ՀԱՎԱՏՔԻ վրա՝ Ավետարանով և խաչով:

Հավատքով ազնվացած ու ասպետացած հայ սպայությունն է ի գորու լրացնել հայոց ազնվականության պակասը: Ազնվականություն, որն ապրելով և գործելով քրիստոնեական հավատքից բխող և դրա վրա հիմնված հայ Ազգային Գաղափարախոսությամբ ու ըստ այնմ բարոյական նորմերով, 21-րդ դարի հայ իրականության մեջ կկարողանա ազգի մեջ պատվաստել հայի տոհմիկ ազնիվ կերպարը, նկարագիրը և պետականության գաղափարը՝ օրինակ հանդիսանալով հայ արդիական պետության կառուցման նվիրական նպատակի կազմակերպական կառավարման ու իրագործման համար:

Ըստ երևույթին, ԼՂՀ-ն այդ գործի նախապատրաստման համար Աստուծո ստեղծած «լաբորատորիան» է: Կարևոր է, որ այդ «լաբորատորիան» ղեկավարի հայոց բանակի հրամանատարության եղբայրակցությունը՝ Աստուծո օգնությամբ:

Այդ նշանակում է, որ մարդկային-հայկականության գործոնը հայ կյանքում, հայ իրականության մեջ ազգի, հայրենիքի և պետականության պաշտպա-

նական և կառուցողական իմաստությունն է, ուժն ու կարողությունը: Եվ այդ գործոնի առկայության և կիրառության համար ճակատագրական նշանակությամբ անհրաժեշտ հայ ազնվականության բացն այսօր կարող է լրացնել հավատքով ազնվացած և գաղափարով ասպետացած ու ըստ այնմ բարձրագույն բարոյական նորմերով ապրող հայ սպայությունը:

Ուրեմն՝ հայ սպա, քո կոչումն ու պարտքը խրամատներից տարածվում է ազգի հոգեբարոյական և գաղափարական դաշտը, հետևապես՝ կրթի՛ր քեզ և մարզվի՛ր, զորացի՛ր ու նաև իմաստնացի՛ր ըստ այնմ:

Աստուծո օգնությամբ:

ՀԱՅ ՍՊԱ՝ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՄՏՔԻ, ՊԱՏՎԻ ԵՎ ԲԱԶԿԻ ԱՌԱՋԱՏԱՐԸ

Ո՞վ է մտածում, ցանկանում և ջանում դառնալ հայ սպա:

Պարզաբանվա՞ծ է այս հարցը համայն հայ իրականությունում, Հայաստանի նորոգ անկախության 16-րդ տարում:

Ովքե՞ր են հայկական բանակի սպաները: Սոցիալական ո՞ր խավերից են սերում բարձր հրամանատարական կազմը, միջին հրամանատարական կազմը, կրտսեր հրամանատարական կազմը և այսօրվա կադետները: Ի՞նչ անցյալ ունեն նրանց ծնողներն ու պապերը:

Այսօրվա դպրոցականների ո՞ր տոկոսն է մտածում, ո՞ր տոկոսը՝ ցանկանում, ո՞ր տոկոսն է ջանում ու դիմում հայկական բանակի սպա դառնալ: Եվ եթե ցանկանում և դիմում են, ապա ինչո՞ւ են դա անում, ի՞նչ շահագրգռվածությամբ՝ գաղափարակա՞ն, ավանդակա՞ն, նյութակա՞ն կամ է՞լ ինչ այլ շահագրգռվածությամբ են այդ անում:

Եթե այդ տոկոսը անտրամաբանորեն կամ գործնականորեն ցածր է հատկապես մայրաքաղաքի ու այլ քաղաքների դպրոցականների և ուսանողների շրջանում և ցածր է նաև համեմատաբար բարեկեցիկ կամ մտավորական և կամ ղեկավար խավի ընտանիքներում, ապա հույժ կարևոր է տարբեր տեսակետներից պարզել դրա պատճառը, մտածել ինչ անելու մասին ու անհապաղ գործել: Որովհետև եթե այդպիսին է վիճակը, նշանակում է՝

- հայ իրականության մեջ սխալ հասկացողություն է տիրում հայ բանակի դերի և նշանակության մասին.

- կամ սխալ հասկացողություն չկա, բայց անտարբերություն կա այն դերի հանդեպ, որ կոչված է կատարելու հայոց բանակը, այսինքն՝ հայրենիքի պաշտպանությունը՝ առաջին հերթին ապահովելով մեր ժողովրդի ֆիզիկական անվտանգությունը, ազատությունն ու անկախությունը.

- կամ առկա են վերը նշված երկու հանգամանքները միասին՝ իրենց բոլոր ոչ պատվաբեր և հույժ վտանգավոր հետևանքներով:

Ի՞նչ պետք է անել այս դեպքում, որն ունի մոտ և հեռավոր անցյալում առաջացած պատմական պատճառներ.

Ո՞վ, ովքե՞ր են պատասխանատու նման կացության համար և ո՞վ ու ովքե՞ր են պարտավոր անհապաղ շտկել այն՝ բնականոնացնելով համայն ազգի և մասնավորապես հայ քաղաքացիների հոգեբարոյական և գաղափարական մակարդակը և դրա հիման վրա՝

- նախ՝ ազգային և քաղաքացիական ինքնագիտակցությունը,
- երկրորդ՝ քաղաքական գրագիտությունը:

Առաջին դեպքում հոգեբարոյական և գաղափարական համապատասխան մակարդակով առաջացած ազգային և քաղաքական ինքնագիտակցությունը պետք է հասկանալու համար, որ եթե մա՛րդ ենք և ուզում ենք մա՛րդ մնալ, ապա այդ կարող ենք անել հա՛յ լինելով ու հա՛յ մնալով: Նույն կերպ, եթե հա՛յ ենք և ուզում ենք հա՛յ մնալ, այդ կարող ենք անել մա՛րդ լինելով:

Երկրորդ դեպքում, եթե մենք մա՛րդ ենք և հա՛յ մարդ ենք, պարտավոր ենք ունենալ մեր պապենական տուն-հայրենիքը և պաշտպանել այն: Ինչպես և պաշտպանել մեր՝ հա՛յ մարդու ազատությունը, անկախությունը և մեր ունեցվածքն ու բարեկեցության հնարավորությունները:

Եվ այդ պարտքը նախևառաջ մեր հոգու, անմահ հոգու պարտքն է Աստուծո առաջ: Պարտք, որի կատարման համար պետք է նաև համապատասխան հմտություն, տվյալ դեպքում՝ քաղաքական գրագիտություն, որը նույնպես պարտավոր ենք ձեռք բերել:

Եթե հասկանանք այս ամենը, ներառյալ՝ հա՛յ մարդու և մա՛րդ հայի հոգեկան պարտավորությունը, կհասկանանք նաև, որ հայոց բանակում ծառայելը, մանավանդ հայոց բանակի սպա՝ դառնալը կյանքի մեծագույն առավելություն է՝ փա՛ռք, պատի՛վ ու երջանկություն...

Հասկացի՛ր այդ, մանավանդ դո՛ւ՝ հա՛յ մտավորական, հայ հարուստ և իշխանավոր: Կարևոր է, որ դուք այդ հասկանաք, որովհետև հայ մշակն ու աշխատավորն այդ բավականին լավ հասկացել են:

Եվ եթե դա այսպե՛ս է, ուրեմն սովորեցնելու կոչվածը իմացողի՛ց պետք է սովորի...

Սովորե՛նք բոլորս և կատարե՛նք մեր պարտքը ազգի, հայրենիքի, որով և՛ մարդկության առաջ: Դա նախևառաջ Աստվա՛ծ կգնահատի: Եվ մարդկանցից ավելի Նա՛ կհատուցի և կփառավորի արժանավորներին՝ իրենց գիտակցության, պարտաճանաչության, պատրաստվածության և պատրաստակամության համար, այժմ և հավիտյանս:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԳ

ՀԱՅ

ԱԶԳԱՅԻՆ

ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ

ՀԱՅ ՄԱՐԴԸ

5-ը հոկտեմբերի, 1998 թ.,
Փարիզ, առավոտյան ժամը 7:30

ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՀԱՎԱՏԸ ՈՐՊԵՍ ՓՐԿԱՐԱՐ ԳԱՂԱՓԱՐ ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆՅԱՅԻ ԿՅԱՆՔՈՒՄ

- Քրիստոնեություն, հայություն ու մարդկություն.
- Դավանանք ու հայրենիք.
- Կրոն և ազգ.
- Եկեղեցի ու պետություն.
- Եվ դրանց նկատմամբ հավատարմությամբ զարգացում և բարգավաճում:
- Բայց, նախ և առաջ՝ հավատքով փրկություն ու ԿՅԱՆՔ, այժմ և հավիտյանս:

Հայ մարդն այս բոլորը միաբանել, միացրել ու ամբողջացրել է մարդկային կյանքի մեկ՝ «միասնական ազգ» գաղափարի մեջ՝ քրիստոնեական հավատքից բխող և նրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ:

301 թվականի հոգևոր մկրտության այս գաղափարով տոգորված հայ մարդն իր կյանքի գլխավոր իմաստը, գլխավոր նպատակը, որով և հիմնական ու իրական երջանկությունն իր ավագանու օրինակով ամրագրել է որպես ազգային հոգևոր-գաղափարական ծառայություն՝ հետևելով Աստվածորդու Ավետարանով և խաչով տրված Աստուծո պատգամներին և կատարելով Նրա կամքն ու ծրագրերը:

Եվ Հայ Ազգային Գաղափարախոսությամբ հայ մարդը ծառայել է Աստծուն՝ ծառայելով ազգին՝ հայությանը, որպեսզի ազգն էլ ծառայի Աստծուն՝ ծառայելով մարդկությանը, որպեսզի մարդկությունն էլ ծառայի Աստծուն՝ միշտ, ամենուր, ամեն ինչում:

Սա է եղել մեր ազգի դեպի կյանք առաջնորդող բանալին, որն ի զորու է բացելու մեր անհատական, հասարակական, ազգային և հայրենիքի ապահովության, զարգացման և բարգավաճման դռները՝ լուծելով բոլոր խնդիրները... թե՛ երկրային՝ մեր այսօրվա, և թե՛ երկնային՝ մեր վաղվա:

Այդ բանալին նախագծվել է 301 թվականին մեզ շնորհված հավատքի լույսով և կոփվել մեր Թարգմանչաց սուրբ դարբնոցում:

Այդ բանալին Թարգմանչաց՝ մեզ թողած սուրբ ժառանգությունն է հայոց հոգևոր գանձարանում: Այդ գանձարանը մտնելու և սույն բանալուն արժանանալու պայմանը հայության հոգևոր, բարոյական և գաղափարական վերածնունդը, վերակերտումն ու վերահաստատումն է՝ սկսած ազգի վճռական զանգվածից (կրիտիկական մասսայից), որ պետք է ձևավորվի և կայանա ու ճառագայթի...

Հայ քրիստոնյան դարերի ընթացքում հավատացել է, որ ինքը երկու կյանք ունի՝ մեկը նյութական և ժամանակավոր, մյուսը՝ հոգևոր ու հավիտենական,

որին արժանանալու համար իր ժամանակավոր կյանքը պետք է ապրի Ավետարանի պատգամներով: Իր այդ հավատքից մարմնավորված Հայ Ազգային Գաղափարախոսության համաձայն, եթե ինքը նյութական, ժամանակավոր կյանքը բարելավելու կամ նույնիսկ պահելու համար ուրանա իր ազգը, որն իր համար նշանակու՞մ է ուրանալ Քրիստոսին, քանզի ազգն Աստվածակերտ է, ապա նա կզրկվի հավիտենական կյանքից: Իսկ նա, ով ո՛րևէ փորձության առաջ կանգնելու դեպքում կընտրի ծառայեցնել իր երկրային կյանքը վասն հայրենյաց, դրանով՝ նաև վասն հավատո, կարժանանա հավիտենական կյանքին, ինչպես 451 թվականին արժանացան Վարդանանք:

Այսպիսով, հավատացյալ հայի Ազգային Գաղափարախոսությունը, սնվելով Հիսուս Քրիստոսի Ավետարանից ու խաչից և հիմնվելով նրանց վրա, դարձել էր նրա կյանքը կողմնորոշող ու կանոնավորող հավատամք, սուրբ սահմանադրություն ու կանոնադրություն և դրանով՝ իր հավատքի համաձայն, կատարյալ կյանքին արժանանալու միջոց ու ճանապարհ:

Այս հոգևոր-գաղափարականից մինչև առօրյա կենցաղային կյանքի ըմբռնումը մեր սուրբ նախնիք արտահայտել են իրենց ապրումի հաստատումով:

Մենք՝ ժամանակակիցներս, ևս պետք է մեր կյանքն արտահայտենք այդպիսի ապրումի հաստատումով ու այն փոխանցենք հաջորդ սերնդին՝ ի վերելք մեր ազգային գոյության ու յուրաքանչյուրիս հավերժ փրկության, ինչպես նաև հօգուտ մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության:

25-ը նոյեմբերի, 1998 թ.

ՁԱՐԹՈՒՆՔ

Հայ քրիստոնեական հավատքի լույսով՝

- Հայ քրիստոնեական եկեղեցու ազդը.
- Հայ քրիստոնեական մշակույթի կանչը.

- Եվ մեր բյուրավոր Սուրբ Հայրերի և միլիոնավոր նահատակների կոչը արձագանքում են...

- Ձարթնի՛ր, լաո՛... Հայությունը, հայ ազգը, հայոց պետությունը այլևս պետք է ընթանա սրբացած...

- Ձարթնի՛ր, հա՛յ հավատացյալ, այլևս ժամանակ չկա: Բավական է լռենք, բավական է աչքներս, ականջներս փակենք և համր, անզոր ու անտարբեր ձևանանք:

- Մեզնո՛վ, մեր հավատքո՛վ ու հավատքի գործերո՛վ է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին Սո՛ւրբ և Քրիստոսի մարմին, այլ ոչ թե քար ու շինություն՝ լոկ ծեսերի տուն: Ովքե՞ր կլինենք մենք և ի՞նչ արած կլինենք, եթե մնանք այնպիսին, ինչպիսին դարձանք ու ենք այսօր և չփոխվենք:

- Մեր Աստվածապատվեր ընթացքով վառ կպահվի Լուսավորչի արագած-նավետ կանթեղը, որ խավարել է... կույրերիս համար:

- Արագածի վրայից Լուսավորչի կանթեղը կսկսի դարձյալ լուսավորել մեր հոգիները, սրտերն ու մտքերը և դեռ այն կողմ՝ կլուսավորի ամբողջ մարդկությանը, եթե մատակարարենք կանթեղի յուղը հավատացյալներիս սուրբ խոհերով և գործերով:

- Մենք մե՛ր սրբությանը պիտի ապրեցնենք մեզ, մեր ընտանիքները, մեր ազգը, երկիրն ու պետությունը: Չխաբվենք: Ո՛չ մի զենք, ո՛չ մի վարկ, ո՛չ մի ներդրում չեն բարձրացնի, չեն ապահովի ու չեն ապրեցնի մեզ: Ո՛չ մի փախուստ դեպի ապահով օտարություն, ո՛չ մի դաշինք ու օգնություն, ո՛չ մի ուսում ու գիտություն չեն բարձրացնի մեզ:

Հարստության ու ապահովության ձգտելով՝ անվտանգ, զարգացած ու բարեկեցիկ կյանք չենք կարող կերտել: Մենք կարժանանանք այդ կյանքին և դեռ շատ ավելիին, եթե մեր կյանքը մեր Սուրբ Հայրերի հավատքի գիտակցության սրտաբուխ պատրաստակամությամբ ծառայեցնենք մեր ազգի ու հայրենիքի մեջ Աստուծո ծրագրի, կամքի և գործերի կատարմանը՝ ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության...

24-ը փետրվարի, 2001 թ.

ԱՅԱԶԱՆԳ

Ազգի և Հայրենիքի Գոյության Վտանգի ԵՎ ԿՈՉ

Հավատքի՝ Ազգային Ժառանգության Հաստատման ու Կիրառման

Մարդկային-ազգային գիտակից և պատասխանատու դիտարկմամբ ակնհայտ է դառնում, որ հայոց քրիստոնեական հավատքն էապես տկարացած, ազգային գաղափարախոսությունը հիմնովին աղավաղված և բարոյական արժեքները զգալիորեն արժեզրկված են: Այս իրավիճակի պատճառով հայությունը թե՛ հայրենիքում և թե՛ արտերկրում հարաճուճորեն այլասերվում է՝ կորցնելով իր մարդկային-ազգային ժառանգական լավագույն հատկությունները և վտանգելով իր գոյությունը ոչ միայն որպես պետական ազգ, այլև որպես ազգային ինքնություն:

Եթե հայության այս իրավիճակը չբարեփոխվի ու ներկա ընթացքը շարունակվի, ապա ըստ մեր՝ 1700-ամյա հավատքով ընկալված պատմական օրինաչափության, դրա հետևանքը կլինի հայի մարդկային կերպարի և արժանապատվության լիովին աղավաղում ու անկում: Բայց կա նաև դրանից անհամեմատ ավելի վատը. ըստ մեր հավատամքի՝ հայը կկորցնի իր հոգին...

Ինչպես Ավետարանն ասում է. «... Մարդ ի՞նչ օգուտ կունենա, եթե այս ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կործանի: Կամ մարդ իր անձի փոխարեն ի՞նչ փրկանք պիտի տա...» (Մատթ. 16.26):

Մինչ այդ հարկ է ընթանել, որ ներկայիս հոգեբարոյական և գաղափարական անկունային ընթացքից առաջացող մարդկային-ազգային այլասերումը հիմնական պատճառն է նախ՝ ազգի ու հայրենիքի բոլոր դժվարությունների, տկարացման ու դրա արդյունքում՝ հնարավոր ճակատագրական կորուստների, և երկրորդ՝ դրանք վերացնելու կամ կանխելու մեր անզորության:

Հետևապես, ազգի ու հայրենիքի՝ ճգնաժամային վիճակից դուրս գալու, ապագայի վտանգները կանխելու և բոլոր բնագավառներում Հայաստանի ու ամբողջ հայության վերելքն արագ ու անթերի ապահովելու համար բազմաթիվ անելիքներ կան, սակայն դրանք սկսելու և հաջողությամբ ավարտելու նախապայմանը մեկն է՝ հայության հոգեկան վերածնունդը: Այն է՝ 1700-ամյա Աստվածաշնորհի քրիստոնեական Հավատքով, Ավետարանի իմաստությամբ, գիտությամբ, Սուրբ Խաչի խորհրդով և դրանցից բխող և դրանց վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ ընկալենք, գնահատենք, վարվենք, գործենք ու ապրենք մեր կյանքը:

Այս պարզ ու դյուրին և միաժամանակ անկարելիի չափ դժվար, սակայն նվիրական խնդրի կատարման՝ պատմականորեն ապացուցված Աստվածահաճո, արգասաբեր միջոցը Թարգմանչաց շարժումն է ներկա պայմաններում, որը, փաստորեն, նշանակում է 21-րդ դարի Հայ Ազգային Իրազեկման Ծառայություն: Այդ շարժման ուղղակի խնդիրը պիտի լինի Թարգմանչաց շարժման ռահվիրաների սուրբ ժառանգության ճանաչումը և կիրառումը 21-րդ դարասկզբի հայ անհատական, ազգային և պետական կյանքում:

Իսկ ծրագրային իմաստով այս խնդիրը հետևյալ կերպ կարելի է բնորոշել. Թարգմանչաց ժառանգության Վերահաստատման Շարժումը ազգային հոգեկան, գաղափարական, բարոյական, մշակութային, կրթական և տեղեկատվական բնույթի, հոգևորական, մտավորական և հասարակական գործունեության համահայկական պետական ծրագիր է, որն ունի ուսուցողական բնույթ:

21-ը հոկտեմբերի, 2001 թ.,

առավոտյան ժամը 8:00

ՊԱՏԳԱՄ ՀԱՎԱՏՔՈՎ

Իրական ազատությունը կյանք է, և իրական կյանքը՝ ազատություն, որը միայն հավատացյալն ունի՝ տրված Աստուծո հավատքով, Քրիստոսի Ավետարանի և Խաչի միջոցով:

Այս հավերժական ճշմարտությամբ է համակված հայ ազգի հոգեկերտվածքը՝ սկսած Հայկ Նահապետից:

Այս էին հասկացել մեր սուրբ նախնիք ու այս փոխանցելու համար առաջ բերեցին Թարգմանչաց շարժումը:

Այս էր, որ առաջացրեց Վարդանանց դիմադրության հավատավոր ու ազատատենչ ոգին:

Այս է բոլոր ժամանակներում մեր բյուրավոր նահատակների հայրենիքին ու հավատքին հավատարմության ակունքը:

Այս է քրիստոնեությունը՝ մեր կենսատու ժառանգությունը...

Այս հավատքով հայերս ամեն ինչ ենք, որ լավ է, ու ամեն բարձունք՝ մեզ հասանելի, եթե մեր կյանքի ապրումով արժանի դառնանք մեզ կտակված ժառանգությանը, ինչպես դարձանք արժանի, և դա արտացոլվեց ավարայրներում, սարդարապատներում և շուշիններում...

Առանց այս հավատքի ոչինչ ենք, անպաշտպան չարի առաջ ու անկարող ո՛րևէ վերելքի, քանի որ չենք կարողանա արժանանալ մեր ժառանգության կտակին...

Այս է Ավետարանի և խաչի հավատքից բխող և դրա վրա հիմնված հայկյան Հայ Ազգային Գաղափարախոսության 1700 տարի առաջ սրբագործված ընդհանուր պատգամը... Սրանից պետք է սնվի ու առաջնորդվի Հայրապետության, Հանրապետության ու ամբողջ ազգի միտքը, նպատակը, քաղաքականությունը, ձգտումը, գործն ու կյանքի ապրումը, որ իրական ԿՅԱՆՔ ունենանք...

Աստուծո օգնությամբ:

ՏԵՐՆ ԻՄ ՄՐՏՈՒՄ

Երբ մեր սրտերը դարձնում ենք դեպի Տերը, Նա ընդունում է մեզ: Նա գալիս է մեր սրտում... Եվ այն ժամանակ, ըստ Ավետարանի, թե՛ հավատարիմ ծառա ես, թե՛ հմուտ տնտես, և դեռ ավելին՝ սիրելի որդի ես, իշխանագուն ժառանգորդ Յոր՝ Աստուծո Երկնային Հավիտենական Թագավորության:

Ու այս բոլորը Հիսուս Քրիստոսով է, Նրանից է և Նրա համար ըստ մեր Սուրբ Հայրերի Աստվածաշնորհի հավատքի, որից բխում և որի վրա է հիմնվում Հայ Ազգային Գաղափարախոսությունը՝ եռանդը, կարողությունը և կողմնացույցը հայ ազգի կյանքի Աստվածապատվեր ու Աստվածահաճ ընթացքի:

Եվ այդ ընթացքը կլինի միշտ պաշտպանված և դեպի վերելք, քանի որ Աստվածապատվեր է, Աստվածահաճ ու Աստուծո օգնությամբ:

ՅՈՒՆԿՈՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԵՂԾՈՒԹՅԱՆ ՊՂԾՈՒԹՅՈՒՆՆԻՑ

Պատմական երևույթները և հատկապես ներկա իրականությունն ապացուցում են, որ քրիստոնեությանը, հետևապես և մարդկությանը, այդ թվում և մեր ազգին, աթեիզմից ավելի մեծ և գործուն վտանգ է սպառնում՝ քրիստոնեական դավանանքն ու բարոյականությունը առերես ընդունած կեղծ քրիստոնեությունը: Բնությամբ խարդախ և դավադիր լինելով՝ նման քրիստոնեությունը առաջացնում է քրիստոսամերժություն՝ վերաճեցնելով այն ստելության և թշնամության ընդդեմ Յիսուս Քրիստոսի՝ Աստվածորդու...

Աթեիզմը՝ որպես անհավատություն, անաստվածություն, վտանգավոր է նրանով, որ մարդուն աստիճանաբար դատարկում, զրկում է մարդկությունից, Աստուծո կերպարից, բայց համեմատած կեղծ ու խարդախ քրիստոնեությունից առաջացած քրիստոսամերժության հետ՝ այն իր պարզունակությամբ միամիտ ու պասիվ է, հետևապես դեռ հնարավորություն ունի Աստուծո գթությամբ ստանալու փրկության շնորհը հավատի միջոցով... Սակայն կեղծ հավատքի դավաճանությամբ քրիստոսամերժ, քրիստոսամարտ դարձած քրիստոնյա անձը, հավաքականությունը, կառույցը, որը, փաստորեն, պայքարում է քրիստոնեության դեմ՝ ստելով, խարդախելով, վարկաբեկելով և գործածելով Աստուծո անունը և Նրա շնորհած միջոցները, մահացու թշնամի է ազգին և մարդկությանը, բայց նախ՝ ինքն իրեն: Սա այն դեպքն է, երբ փրկություն չկա, ինչպես Տերն է Իր Ավետարանում ասում նրանց մասին, ովքեր հայիոյում են Սուրբ Յոզուս, թե նրանց ներում չի՝ լինի... Դա այնպիսի դավաճանական կեղծության պղծություն է, որ տանում է անդունդի մյուս կողմը, որից անցում չկա դեպի ԿՅԱՆՔ...

Ինչպե՞ս կարելի է և ինչպե՞ս պետք է պաշտպանվել նրանց այդ պղծության որոգայթներից, որոնք ոչ միայն Աստուծո շնորհած երկրային միջոցներն են գործածում, այլև Նրա անունը և Նրա պատգամներն են կեղծում ու նենգափոխում... Ինչպե՞ս կարելի է չազդվել, չպարտվել, եթե ոչ... խաչի հավատքով: Արդարև, Ավետարանի և խաչի հավատքի շնորհը, խորհուրդը, իմաստությունը, գիտությունը և զորությունը միայն կարող է փրկել չարի նենգ որոգայթներից և տալ ԿՅԱՆՔ այժմ և հավիտյան...

Հայ Ազգային Գաղափարախոսությունը, որը բխում է և հիմնված է այդ հավատքի վրա, որից առաջանում են մեր բարոյական արժեքները և դրանք վերածում կյանքի Աստվածահաճո կենսունակ ապրումի, ամենաթանկագին ժառանգությունն է, որ մեր նախահայրերը թողել են մեզ... նաև որպես վահան՝

ընդդեմ չարի որոգայթների, և փարոս՝ ամենայն բարի ընթացքի: Հարկ է ամեն ինչ անել, որ արժանի լինենք օգտագործելու ու ապրելու այդ ժառանգությամբ...

Թռիչք Վաշինգտոն-Վիեննա,
ապրիլի 17-ի լույս 18-ի գիշեր, 2002 թ.

ԲՈԼՈՐ ԾԱՆԱՊԱՐՅՆԵՐԸ ՀՈՍՍ ԵՆ ՏԱՆՈՒՄ

Հայ իրականության մեջ երեկվա, այսօրվա և հավանաբար վաղվա բոլոր դժվարությունների առաջացման պատճառն ազգի նկատմամբ ազնվության, պատվախնդրության, հարգանքի, սիրո ու ամենից առաջ գաղափարականության պակասն է:

Եվ բոլոր դժվարությունների հաղթահարումն ու հարցերի լուծումը պայմանավորված են Ազգի նկատմամբ ազնվության, պատվախնդրության, նախանձախնդրության, հարգանքի և սիրո առկայությամբ ու, վերջին հաշվով, Հայ Ազգային Գաղափարախոսության ճանաչմամբ, ընդունմամբ ու ապրումով՝ միշտ, ամենուր, ամեն ինչում՝ կյանքի բոլոր հանգրվաններում...

Հայ Ազգային Գաղափարախոսություն (ՀԱԳ). վերոհիշյալ հաստատունով եթե այն ճանաչվի, ընդունվի և դառնա հայոց կյանքի ուղեցույց ու արարքների գնահատման ու իմաստավորման չափանիշ, ազգի ու հայրենիքի բոլոր հարցերը կսկսեն լուծվել և հայության վայրընթացը կփոխարինվի վերընթացով բոլոր բնագավառներում՝ քաղաքական, տնտեսական, ներքին, արտաքին, հոգևոր, մտավոր... այժմ և միշտ...

Բայց ո՞ր ՀԱԳ-ը: Ո՞րն է այդ ՀԱԳ-ը՝ ճշմարիտը, իրականը և մշտականը, որ ի զորու է Ազգի ու Հայրենիքի կյանքը վերափոխել դեպի լույս ու վերելք, դեպի ազնվություն, արժանապատվություն, զարգացում, բարգավաճում ու ապահովություն: Արդյոք «իզմե՞րն» են՝ ի դեմս մարքսիզմի ու լենինիզմի, սոցիալիզմի կամ կապիտալիզմի: Կամ 1991 թվականից ի վեր մեր նախընտրական ծրագրե՞րն են արտահայտում այն:

Գուցե որևէ հայկական կազմակերպություն է ներկայացրել ազգին իր հոգեմտավոր ծագումնաբանական Աստվածաշնորհի կերպարի ու հավատանքի կերտումից գոյացած և 1700 տարի առաջ սրբագործված գաղափարախոսությունը՝ այն ՀԱԳ-ը, որը պարզաբանի, թե ինչո՞ւ հայ ծնված մարդը հայ պետք է մնա միշտ՝ բոլոր պայմաններում ու ամենուր: Ու նաև պարզաբանի, թե ի՞նչ է նշանակում հայ լինել գաղափարով, բարոյականությամբ, նպատակով, գործով ու ընդհանրապես ապրումով: Պարզաբանի, թե ինչո՞ւ և ինչպե՞ս մարդկայնորեն հայ մնալը վեհ է, գեղեցիկ է ու օգտակար: Եվ ինչ կկորցնի հայ ծնված մարդը՝ մարդկայնորեն և դեռ ավելին, եթե որպես հայ չապրի ըստ ՀԱԳ-ի...

Եվ բացի այդ, հայկականությունը մոդայիկ արժեք է, որ, այսպես կոչված, առաջադիմական դարաշրջաններում տեսնում ենք, թե ինչպես է արժեզրկվում, թե՞ մարդկային հարատև արժեք է: Արժեք, որը նույնիսկ կարող է ավելի բարձրանալ ուղիղ համեմատությամբ հայի մարդկայնորեն հայկական հավատարմության, պարտաճանաչության, նվիրումի և դրանցով ապրումի աստիճանի:

Ըստ երևույթին, չկան այս ու սրանց հարակից հարցերի պատասխանները քսաներորդ լուսավոր հորջորջված դարի մեր գրականության ու դասագրքերի մեջ: Այդ պատասխանները տրված չեն մեր ազգի ճակատագիրը (կամա թե ակամա, կոչված կամ ինքնակոչ) տնօրինող անձանց ու կառույցների կողմից: Նույնիսկ հայ կղերականության քարոզներում չես գտնի այդ պատասխանները: Արդյունքը՝ ազգային սեղանի վրա ոչ թե պատասխանները, այլ հարցադրումն իսկ դրված չէ: Հետևապես, դրված չեն նաև այս իրավիճակի ակնկալելի հետևանքները: Եվ սա այն դեպքում, երբ հայության երկու երրորդը չի՝ ապրում, չի՝ սնվում և չի՝ սնում իր հայրենիքը: Եվ դեռ շարունակում են մեծանալ, կամա թե ակամա, պանդխտության միտումները, իսկ այլասերման գործոնները բազմաթիվ են, բազմատեսակ և նեղ ու... գլոբալ...

Հայ աղջիկն ու տղան վեց, ութ, տասը և տասներկու տարեկանից և դեռ ընտանիքներ կազմելուց հետո հոգեբարոյական ու մտավոր, մարդկային ու ազգային այլասերման այդ գործոնների ազդեցության տակ են, գրեթե անպաշտպան: Ավելին, այդ ազդեցությունները դիմագրավում են հոգեբարոյական և գաղափարական արագորեն տկարացող մարդկային-ազգային իմունիտետով: Ստացվել է մի վիճակ, որ մասնատված հայրենիքի սահմանները, կուշտ թե կիսաքաղց, պաշտպանվում են, սակայն մեր սրտերն ու մտքերը, նույնիսկ կուշտ, անպաշտպան են: Դրանք գերվում են նաև հայրենիքի ներսում, հայրենի պետականության պայմաններում: Եվ վատից էլ վատն այն է, որ գուցեև այդ գերվածներից են ազգային գաղափարախոսության ու այլ տեսանկյուններով հինգերորդ շարասյուն դառնում...

Անհավանակա՞ն նկարագրում է սա: Այդպիսի վիճակ և վտանգ չկա՞: Երանի թե այդպես լինի: Բայց եթե այդպես չէ՞, և էական կորուստն ու նահանջը տեղի են ունենում իրենց բոլոր հետևանքներով, որոնց դեռ չերևացող ահավորությունը պատկերացնելն իսկ դժվար է: Այդ դեպքում... Թե՞ արդեն մեր հոգը չէ՞, թե ինչ կլինի. այդ աստիճանի բթացել ու խորթացել ենք: Ունե՞նք ամրության պաշար՝ մեր ազգի հոգին ու միտքը, էությունն ու ֆիզիկական գոյությունը, հայրենիքն ու ապագան պաշտպանելու, զարգացնելու և բարձրացնելու:

Մեքենաշինության մեջ ամրության պաշարը հաշվարկով գոյացած պահանջից մեծացվում է կրկնակի աստիճանից մինչև բազմապատիկ: Նույնը վերաբերում է շինարարության մեջ կառուցվածքներին: Իսկ առողջապահության մեջ, դրանից էլ ավելի շատ, մարդու կյանքին սպառնացող հավանականության

հարյուրի մեկ տոկոսն իսկ անընդունելի է, հանցագործություն է: Իսկ հայ ազգին ու Հայաստանին սպառնացող որևէ վտանգ չեզոքացնելու համար անհրաժեշտ կարողության ամրության պաշարը քանի՞ անգամ մեծ պետք է լինի:

Արդյոք ճի՞շտ է, որ մեր էությանն ու գոյությանը, արժանապատվությանն ու կյանքին վերաբերող բազմաթիվ բնագավառների անվտանգության համար անհրաժեշտ ամրության պաշարը ոչ թե մի քանի անգամ, այլ մեկ ամբողջից էլ պակաս է՝ 50 %-ին մոտ, երբեմն էլ՝ ավելի վատ...

Ջարթնիր, լաո՞... ուշքի՛ եկ, վե՛ր կաց...

Բոլոր ճանապարհները Յոռն են տանում: Բոլոր բնագավառների, բոլոր-բոլոր դժվարությունները հաղթահարելու և բոլոր մեծ ու փոքր հարցերը, խնդիրները լուծելու նախապայմանը մեր ազգային ու մարդկային որակի բարձրացումն է: Իսկ դրա բարձրացման հիմքը մեր հոգեկան, բարոյական և գաղափարական որակն է: Այդ որակը մեր մեջ՝ մեր զգացմունքներում, մտածումներում և խորհուրդներում ամրացած, կարող է մեր հարաբերություններում, արարքներում և գործերում արտահայտվել, եթե մեր Աստվածաշնորհի քրիստոնեական հավատքը և դրանից բխող ու դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունը կյանքի ուղեցույց, իմաստ, նպատակ, գործ ու ապրում դարձնենք՝ միշտ, ամենուր ու ամեն ինչում...

Աստուծո օգնությամբ:

Կիրակի, 27-ը մարտի, 2005 թ., Ս. Ջատիկ,
ժամը 10:15, Վաշինգտոն

ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՈՒԺՆ ՈՒ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

*Գաղափարները ղեկավարում են առխարհը
և բարձրացնում կամ խոչնդում են կյանքը:*

Այո՛: Գաղափարը ուժ, եռանդ, շարժում է առաջացնում և բարձրացնում է: Բայց գաղափարը նաև անկման է տանում, եթե բարուց, բարիով չէ և բարի նպատակի համար չէ: Ընդհանուր առմամբ գաղափարագրկությունը նույնպես «գաղափարական» վիճակ է, սակայն՝ մարդկային ընդունակության և կարողության լճացման, կամքի տկարացման և մարդկային կյանքի բնական ապրումի ընթացքի ապակողմնորոշման ու շեղման վիճակ:

Գաղափարագրկությունը, առավել ևս անկումային, կործանարար գաղափարախոսությունն ուղղակի հետևանք է հավատագրկության...

Հավատքն է, որ կենարար գաղափար և գաղափարախոսություն է ծնում ու այն պահում է կենսունակ, ստեղծագործ, կառուցողական և բարձրացնող: Գաղափարը, գաղափարախոսությունը չի՛ կարող հավատք ծնել, ստեղծել:

Դրա փորձն իսկ կործանարար է լինում, որովհետև հավատքն է աղբյուրը գաղափարականության: Եվ ինչքան մարդու հավատքն անկեղծ է՝ Աստուծոց է ու Աստուծուն մերձեցնող, այնքան այն լուսավորում է մարդու միտքը և դրանով նրան մղում ու առաջնորդում դեպի վերելք: Գաղափարը, գաղափարախոսությունը, երբ հիմնված է և պահպանվում ու գործում է Աստուծո հավատքի վրա, վերածվում է Աստվածահաճո ստեղծագործության, գործի՝ առաջացնելով կյանքի վերամբարձ ուժ ու լուսավոր ընթացք: Իսկ այդպիսի գաղափար, գաղափարախոսությունն ծնած հավատքն «անձեռակերտ» է ու ո՛չ մտացածին, որովհետև այն միայն Աստվածաշնորհի է լինում:

Այո՛: Ավետարանի և Խաչի հավատքով Աստուծո ճանաչումը բացարձակապես Աստվածաշնորհի է: Այն չես կարող ստեղծել, գնել կամ նվաճել: Չես կարող, որովհետև արևի տակ չկա և չի՛ կարող լինել մարդկային այնպիսի հատկություն, զորություն, գանձ կամ գիտություն, որ մի «մանանեխի հատիկի» չափի հավատք ստեղծի: Մարդն իր գիտությամբ և հարստությամբ, որ մի կենդանի բջիջ իսկ արհեստականորեն չի կարող ստեղծել, արհեստականորեն հավատքի մի հատիկ առավել ևս չի կարող ստեղծել: Եթե փորձի, կհիմարանա ու եթե մի քիչ հավատք ունի, այդ հավատքն էլ կկորցնի...

Մինչդեռ մեզ՝ հայերիս, ինչպես և համայն քրիստոնեությանն ու մարդկությանն Աստված շնորհեց իր Միածնի հավերժական տիեզերանիստ հավատքը՝ փրկվելու, բարգավաճելու, բարձրանալու ու երանելի կյանքով ապրելու երկրային կյանքում և հավիտյանս հավիտենից:

Այս հավատքից բխող ու այս հավատքի վրա հիմնված գաղափարը, որը մեզ՝ հայերիս համար Յայ Ազգային Գաղափարախոսությունն (ՅԱԳ) է, կոչված է և ի գորու է ճանապարհի հարթել դեպի այդ կյանքը:

ՅԱԳ-ը տվել է, տալիս է և շարունակելու է կյանք պարգևել այժմ և հավիտյանս, սակայն պայմանով. ՅԱԳ-ը պետք է մաքուր, անաղարտ պահել ու ազնվորեն կյանքում գործադրել... Քանզի սուրբը, վեհը, նվիրականը նաև «նուրբ» է և ստորի նվազագույն իսկ խառնուրդով «չի աշխատի», չի պտղաբերի, ինչքան էլ հնարքներ գործես: Օրինակ՝ մեր մարդկային կյանքի ներկայիս (գոյության) վիճակի փաստը...

Ավետարանի և Խաչի հավատքով ՅԱԳ-ն Աստվածաշնորհի փրկության, վերելքի և հավիտենական կյանքի՝ հավատքի քաղաքացիականացումը և քաղաքականացումն է: Յետևապես, հայ ազգի, Յայաստանի Յանրապետության սահմանադրությունը, պետական խորհրդանիշները, քաղաքացիական օրենսդրությունը, բոլոր գրված և չգրված օրենքները, մեր ներքին ու արտաքին քաղաքականությունը և դրա կիրառման սկզբունքներն ու ձևերը, ինչպես նաև քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները և նրանց գիտակցությունը, պարտաճանաչությունն ու պատրաստականությունը պետք է բխեն ՅԱԳ-ից և հիմնվեն դրա վրա, քանի որ ՅԱԳ-ն ինքը բխում է և հիմնված է

հայոց քրիստոնեական հավատքի վրա:

Այս ճշմարտության արտացոլումը մեր ազգի, երկրի և պետության կառավարման նպատակների, ծրագրերի և ձգտումների մեջ պետք է հարազատորեն, առանց որևէ շեղումի արտահայտվի նաև մեր ազգի խոհերում, վերաբերմունքում և գործերում...

Այս ճշմարտության գիտակցման ու այս ճշմարտության ընդունման փաստը, ինչպես նաև այս ճշմարտությունը հայ ազգի, Հայրենիքի և պետության կյանքի իրականություն դարձնելու անձնական հատկությունը, կարողությունը ու անկեղծ ձգտումը պետք է դառնան Հայ Ազգի և Հայաստանի աշխարհիկ ու հոգևոր ղեկավարության ու հատկապես նախագահի և կաթողիկոսի ընտրության գլխավոր չափանիշը:

Հայաստանի Հանրապետության նախագահը՝ որպես նաև հայ ազգապետ, և Հայ Ս. Եկեղեցու գահակալը՝ որպես ամենայն հայոց հոգևոր պետ, և մեր ազգի ու հայրենիքի աշխարհիկ և հոգևոր երկու գերագույն իշխանությունների ամբողջ ավագանին ու պաշտոնեությունը պետք է ընտրվեն և նրանց գործունեությունը գնահատվի այդ ճշմարտության չափանիշներով... Հետևապես, այդ չափանիշները պետք է հստակեցվեն, մշակվեն և մատչելի դարձվեն ազգի բոլոր խավերին՝ վերևից մինչև ամենուր՝ հայ հասարակության բոլոր ծալքերում:

Եվ այն ժամանակ մեր հավատքն Աստվածաշնորհի և նրանից բխող և նրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունն ավելի լավ կճանաչենք, կընդունենք ու ապրում կդարձնենք՝ որպես մեր կյանքի Սուրբ Սահմանադրություն, որի կիրառման համար մեր բարձրագույն ղեկավարից մինչև յուրաքանչյուրս մեր հոգով կզգանք, մտքով կգիտակցենք և ըստ այնմ մեզ պատասխանատու կզգանք տիեզերքի և մեր Արարիչ Հայր Աստծու առաջ:

Ու այդ պատասխանատվությամբ կյանքում ինչպիսին որ լինի մեր հանձնած քննության արդյունքը, այնպիսին էլ կլինի մեր կյանքի հետևանքը՝ այժմ և հավիտյանս: Հետևապես՝

Չարթնիր, լա՛ն, տ լա՛ճ սնավեր...

Տե՛ր կանգնիր սանդ, շինիր ու աղբեցրո՛ւ այն:

Երբե՛ք չսասանես, Ասված քեզ հե՛տ է :

Նա սիրե՛ց քո հայրերին, սիրում է և քե՛զ:

Ասու՛ծո սիրով ամեն ինչ կանես, որ բարի է:

Իսկ Հայաստանը բարձրացնելն Ասու՛ծո սիրով

Ու նաև կամֆով, ծրագրով և գործով,

Շա՛տ բարի է ...

ՄԱՐԴ ԷԱԿԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՏՔՈՎ

Հավատքով գիտեն, որ Աստված է ինձ կյանք տվել: Եվ քանի որ հավատում եմ, որ Աստուծո կամքով է ստեղծված իմ կյանքը, գիտակցում եմ, որ Աստուծո համար է իմ կյանքը: Եվ գիտակցում եմ նաև, որ ես պատկանում եմ Նրան, Նրանով եմ և Նրա՝ համար:

Հավատքով այդպես է մարդկությունը, հավատքով այդպես է հայ ազգը, հավատքով այդպես եմ ես:

Չկա ավելի մեծ իմաստություն, ավելի մեծ գիտություն ու նաև ավելի մեծ երջանկություն, քան Աստծուն պատկանելու գիտակցությունն ու վստահությունը հավատքով, և հավատքով կյանքը սնելն Աստծուց և հավատքով կյանքը ծառայեցնելն Աստծուն՝ Նրա պատգամները լսելով, սովորելով և Նրա կամքն ու գործը կատարելով:

Եվ այս բոլորի աղբյուրն ու էությունը Աստուծո Սերն է: Նրա սիրով են այս բոլորն ստեղծվել և կատարվում: Մարդու, ազգի և մարդկության գոյության իմաստի գազաթնակետն է՝ սիրել Աստծուն՝ ամբողջ հոգով, ամբողջ սրտով, ամբողջ մտքով, ամբողջ զորությամբ, ամբողջ էությամբ՝ միշտ, ամենուր ու ամեն ինչում: Եվ սիրել Աստուծո բոլոր ստեղծածներին և հատկապես մարդ էակին, նույնպես միշտ, ամենուր, ամեն ինչում:

Այն ժամանակ մենք կդառնանք Աստուծո որդիներ, իսկ մեր ազգը՝ Աստուծո Ազգ, իսկ մարդկությունը՝ Աստծուն հաճելի մարդկային ցեղ՝ Նրա հավիտենական և տիեզերական խորհուրդներին հաղորդ, Նրա կամքը, ծրագրերը և գործերը կատարող ու դրանով Նրա արքայությանն արժանացող:

Իմ՝ հայ մարդու այս հավատքից բխում է և դրա վրա հիմնված է իմ ազգային գաղափարը՝ Հայ Ազգային Գաղափարախոսությունը, ինչպես նաև բարոյական արժեքները: Դրանցով իմ ազգին, հայրենիքին և հարազատ պետությանը ծառայելը դառնում է հոգուս պարտքի կատարումը, որն իմաստավորում է իմ երկրային կյանքը՝ երկնային հավերժական հատուցման հավատքով, հույսով և սիրով:

Հինգշաբթի, 7-ը ապրիլի, 2005 թ., առավոտյան 5:10

ԱՌԱՋԱԴԻՍՈՒԹՅՈՒՆ` ԶԵՏԱԴԻՄԱԿԱՆ

*Առաջ, առաջ կողոռանք, ես-ես կեքթանք:
Յ. Պարոնյան*

Դա այն առաջադիմությունն է, որը կասեցնում, այլասերում և կործանում է առաջընթացը դեպի լույս և վերելք: Դա սեկուլյար առաջադիմությունն է, որն ընթացք է առանց Աստուծո: Հետևապես, ընթացք՝ հակառակ Աստուծո բնության ճանապարհների, ընթացք՝ կուրության՝ դեպի անդունդ թունավոր ճահճի...

* * *

TOLERANSE-ԹՈՒԵՐԱՆՍ, ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սա՛ է քարոզում, պահանջում և ձգտում առաջացնել սեկուլյար «մարդասիրությունը» և «գործնականությունը»: Սակայն ինչի՞ն թուլերանս, այսինքն՝ հանդուրժողականություն: Այլասիրությա՞նն ու մոլորությա՞նը և խոտորումի՞նն ու դրանց հարուցիչների՞ նկատմամբ թուլերանս:

Ո՛չ: Ո՛չ թուլերանսին: Այո՛ ներումին: Ոչ թե հանդուրժել, այլ ներել...

Ոչ թե հանդուրժել (թույլատրել, նպաստել) մոլորությունը և խոտորումը, որ այն կուրորեն առաջնորդի կուրությանը դեպի անդունդը խավարի, վախճանը գոյի, այլ ներել, զսպել, լուսավորել մոլորությունը և ուղղել խոտորումը, որպեսզի մարդը լույսի սիրով ուղղվի դեպի լույս, վերելք և Կյանք:

Սա՛ է իսկական թուլերանսը, հանդուրժողականությունն իսկական, քրիստոնեական՝ կյանք պարզևող հանդուրժողականություն՝ սիրով Աստվածային: Եվ կեղծ է, խարդախ և կյանքի թակարդ է թուլերանսը նյութապաշտության...

Ո՞ր առաջադիմությունը և ո՞ր թուլերանսը, հանդուրժողականությունն է քարոզվում այսօր Հայաստանում (թողնենք մի պահ ուրիշ երկրները):

Ո՞ւմ կողմից: Ի՞նչ նպատակով է այդ արվում:

Ի՞նչ արդյունքների է հասել այդ նպատակով տարվող բազմաբնույթ և բազմակողմանի գործունեությունը՝ մեր 6-ից 16 և 16-ից 6 տարեկան տղաների ու աղջիկների, նաև մեր բոլորի մտքերում, սրտերում, ապրելակերպում և ձգտումներում: Իսկ մեր մտավորականության և մեր ղեկավարության և նույնիսկ կղերականության շրջանո՞ւմ:

Նույն համեմատությամբ էլ մարդասիրական հորջորջվող անհոգի, կարճատես և տգետ կամ հայրենասիրական հորջորջվող, խրոխտ ու անգրագետ արտահայտությունները դեռ մարդասիրություն չեն, հայրենասիրություն չեն, լուսավորող չեն, պաշտպանող և բարձրացնող չեն, քանի որ ամուլ են, եթե, վերջին հաշվով, կատարվում են եսասիրական մղումով, եսի փառքի համար,

նյութապաշտորեն: Դրանք, փաստորեն, անուղղակի գործակցում և նպաստում են գահավեժ առաջադիմությանը և մահաբեր հանդուրժողականությանը:

Մարդկությունը դարերի ընթացքում այդպես չի արձանագրել իր իրական առաջադիմությունն ու վերելքը, այդ թվում նաև մարդկության հարազատ մասնիկ հայությունը: Այլ արձանագրել են առաջընթաց, և դեռ հույս ու հավատ կա, որ պիտի արձանագրեն շատ ավելին՝ թե՛ քանակապես և թե՛ մանավանդ որակապես՝ ընթանալով Տիրոջ լույսով, Նրա ճանապարհներով ու Յոգու առաջնորդությամբ, Ավետարանով և Խաչով: Էական է, որ դա լինի որպես կրթություն և քաղաքականություն, որպես մշակույթ և կենցաղավարություն, որպես աշխարհայացք և գաղափար: Իսկ այդ գաղափարը հայության համար Հայ Ազգային Գաղափարախոսությունն* է:

Հայությունն ու Հայաստանը, այդ գաղափարախոսությամբ զինված, դրանով կազմակերպված և դրա բարոյական չափանիշներով գոտեպնդված, պետք է ապրեն, գործեն ու ընթանան, որպեսզի իմաստնանան, զորանան, միանան, ամրանան և շրջանցեն թակարդները, դիմանան փորձություններին և հաղթական դուրս գան իրենց պարտադրված բազմաթիվ, բազմակողմ և բազմաբնույթ ճակատամարտերից. աճեն, բարգավաճեն ու երջանկանան նաև հոգուտ մարդկության և ի փառս ու ի հաճույս Աստուծո:

Ալֆան և Օմեգան, Սկիզբը և Վերջը, որով եղել է հայության արարչական սկիզբը, պետք է լինի նաև հայության արարչական վերջը, որը Երկնային Արքայության երանություն է:

Օ՛ն, հայորդիներ, ահա՛ բարձունքը կյանքի լուսավոր, և մենք ունենք այնտեղ հասնելու հույսը, որովհետև ունենք լույսը և զորությունը՝ որպես ժառանգություն մեր Աստվածասեր Սուրբ Հայրերի հավատքի: Բաց անենք մեր հոգու աչքերը, տե՛ր կանգնենք Աստվածատուր մեր ժառանգությանը, գործենք դրանով, ապրենք դրանով և կարժանանք ԵՐԱՆՈՒԹՅԱՆՆ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ, ԱՅԺՄ ԵՎ ՀԱՎԻՏՅԱՆՍ:

27-ը ապրիլի, 2005 թ.

ՆՈՒՅՆ ՎԱՐՄՈՒՆՔԻ ՏԱՐԲԵՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կյանքի շատ պարագաներում և, բնականաբար, մեր հայ իրականության մեջ նույն վարմունքի տարբեր նշանակությունների դեպքերը քիչ չեն, սակայն դիտարկենք Հայաստանից հեռանալու երևույթը. ո՞ր դեպքում է այն նշանակում լքել հայրենիքը՝ անկախ անձնական պատճառներից, և ո՞ր դեպքում՝ ոչ թե լքել հայրենիքը, այլ պարզապես մեկնել:

Այն հասկացողությամբ, որը մեր մեծերից է գալիս և բխում է Հայ Ազգային

* Տես այս գրքի էջ 23-31

Գաղափարախոսությունից, Յայաստանից հեռանալը պարզապես մեկնել է, երբ Յայաստանում վիճակը բնականոն է, ապահով է և կենսական կարևորության խնդիրներ, դժվարություններ, վտանգներ չկան: Եվ միաժամանակ՝ Յայաստանից հեռանալը հայրենիքի լքում է, երբ Յայաստանը դժվարությունների, էլ չասած՝ վտանգի մեջ է...

Մեր ազգային իրականության մեջ հակառակ հասկացողությունն է տիրում՝ հեռանում ենք, երբ հայրենիքում դժվար է դրությունը, և մնում ենք, երբ լավ է: Ըստ երևույթին, այո՛, մեծ մասամբ դա այդպես է, բայց ի՞նչ է նշանակում այդ իրականությունը: Ինչո՞ւ է այդպես և ի՞նչ հետևանքներ է առաջացնում...

Առաջին հայացքից այս երևույթի պատճառը Յայաստանի Յանրապետությունում ազգային ինքնագիտակցության և հայրենասիրության «կրիտիկական» մակարդակից ցածր լինելն է, որը «հին» ապազգային գաղափարախոսության հետ («Որտեղ հաց՝ այնտեղ կաց») կազմում է նենգամուծված աշխարհաքաղաքացիության (կոսմոպոլիտիզմի) հայկական խառնուրդը՝ թուլացնելով, աղավաղելով պետական մտածելակերպը և բթացնելով քաղաքացիական պարտաճանաչության զգացումը: Եվ այս հետևությունը, ըստ երևույթին, բավականին ճիշտ լինելով հանդերձ, դեռևս սպառնիչ չէ: Յարկ է գտնել բուն պատճառը, թե ինչո՞ւ Յայաստանում հայերը, ասենք, դեռ հարյուր տարի առաջ, երբ չէին ապրել 2,5 տարվա Յայաստանի Յանրապետության ու այնուհետև 70 տարվա Խորհրդային Յայաստանի (թեկուզ վերջինիս մասամբ ազգային) պետականության կյանքով, համեմատաբար ավելի շատ ազգային ինքնագիտակցություն և ինքնաբուխ քաղաքացիական պատասխանատվություն ցուցաբերեցին, քան նրանց սերունդները՝ մենք: Այս երևույթի բուն պատճառը կարելի է բնորոշել ու ընդօժեղել երկու խոսքով և կարելի է այդ անել բազմաթիվ հատորներով: Կարճն այն է, որ ազգային ինքնագիտակցությունը, քաղաքացիական պարտաճանաչությունը և դրանք առաջացնող կրթությունն ու դաստիարակությունը, վերջին 80-85 տարիների ընթացքում, թեև գոյացան ուսման, մշակույթի, գրականության, գիտության ու արվեստի համեմատաբար բարձր մակարդակով, բայց ամուլ գտնվեցին: Եվ այդ ամուլությունը հետևանք էր նրա, որ այդ ուսումը, մշակույթը, գրականությունը, գիտությունն ու արվեստը հիմնականում գաղափարազուրկ էին, չէին բխում և իրենց հիմքում չունեին Յայ Ազգային Գաղափարախոսությունը*, որ բխում է և հիմնված է մեր քրիստոնեական հավատքի վրա:

Մեր պապերն ու տատերը, թեև նվազ գրագետ, պակաս քաղաքակրթված, սակայն ավելի՛ մարդկային ու ավելի՛ ազգային կենսունակություն ունեին, որովհետև նրանց մարդկայնությունը և հայկականությունն ավելի շատ էին սնվում խաչով ու Ավետարանով, հոգու անմահության հավատքից:

Ահա՛: Ահա՛ այն պարզ, հստակ և միաժամանակ որևէ սեկուլյար գիտության

*Տես այս գրքի էջ 23-31

համար անհասանելի ճշմարտությունը:

Մենք կարող ենք հասու դառնալ մեր նախնյաց հավատքի իմաստությամբ և գիտությանը՝ ճանաչելու ճշմարտությունը, որի միջոցով միայն կարելի է ազատ լինել: Այսինքն՝ մարդ լինել ու նաև հայ լինել՝ ազատ լինելով ամեն տեսակ հին ու նոր «իզմերի» ստրկությունից, այսինքն՝ նյութապաշտությունից ու իրական վերելք ապրել՝ կայուն, մշտական...

Նյութապաշտական ստրկությունից՝ գոյի կործանումից փրկությունը հնարավոր է միայն քրիստոնեական իսկական հավատքով և դրա ապրումով:

Մեր տատերն ու պապերը հիմնականում ունեին այդ հավատքը: Հիմնականում այդ հավատքով ապրեցին ու այն սակարկության չդրին, երբ հարկ էր՝ նահատակվեցին ու դրանով նորից ապրեցին: Նրանք ապրում են հավիտենական երանելի կյանքով:

Մե՞նք: Մենք ո՞ւմ ենք հետևում, ումի՞ց ենք սովորում: 70 տարի մտրակով ուղեկցվող և պարտադրվող ստի փոխարեն հիմա էլ շաքարակալած, տոտալիտար, «փափուկ» ստի՞ն, դրամատիրական ունայնությամբ ենք հետևում: Եվ այդ ունայնությունը մեզ մատուցողներից ենք սովորում և նրա՞նց ենք ձգտում մանավել: Եվ հարց է նաև, թե ինչպե՞ս ենք փորձում ապրել՝ մեր ազգը, հայրենիքը և պետությունը պաշտպանել, ամրապնդել, բարձրացնել մեզ մատուցվող նրանց կորստաբեր նյութապաշտությամբ, թե՞ մեր տոհմիկ, հարազատ, կենսատու գաղափարականությամբ՝ մեր նախնյաց, մեր մեծերի, մեր սրբերի հավատքից բխող և դրա վրա հիմնված ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ու ըստ այնմ բարոյականությամբ և կենցաղավարությամբ...

Զարթնի՛ր, լաո՛, գտի՛ր ճամփադ՝ դեպի Լույսը՝ Լույսով, Լույսի համար...

Եվ կդառնաս երանելի մարդ, հայ մարդ և կունենաս կենսունակ, զորեղ ու արժանավայել կյանքով ազգ և պետություն, որը հոգուտ նաև համայն մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության՝ Աստուծո:

Հինգշաբթի, 5-ը մայիսի, 2005 թ., առավոտյան ժամը 3:10

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆՔ ԸՄԲՌՆՈՒՄ ՈՒ ԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄ

ՄԵՐ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՅԱՆՔԸ

(Հայ Ազգային Գաղափարախոսության տեսակետից)

Մարդկությունը կայացել է ազգերի կայացմամբ, իսկ ազգերը կայացել են՝ կառավարվելով ու ապրելով իրենց մարդկային-ազգային գաղափարախոսությամբ:

Հայ ազգի գաղափարախոսությունը սկիզբ է առել Հայկ Նահապետի Աստվածաշնորհի հավատքից՝ հանդեպ ճշմարիտն ու բարին, որով և մեր Նախահայրը ձգտեց մարդկային-ազգային ազատության ու արժանապատիվ կյանքի:

Ճշմարտության և բարու հանդեպ Հայկ Նահապետի Աստվածաշնորհ հավատքի մարդկային գաղափարով հաստատված մեր ազգային գաղափարը 1700 տարի առաջ սրբագործվեց մեր ազգի պետականորեն քրիստոնեացմամբ, և հայ մարդը նորոգ իմաստավորեց իր գոյությունը:

Հայ ազգը, պետականորեն քրիստոնեանալով, ուղղակի պետական մտածելակերպով և հասկացողությամբ հաղորդակից դարձավ Աստուծո հավիտենական և տիեզերական խորհուրդներին, նպատակներին ու գործերին և, սուրբ Ավետարանի իմաստությամբ ու գիտությամբ և սուրբ Խաչի խորհրդով ու զորությամբ իր Աստվածաշնորհ հավատը քաղաքացիականացնելով և քաղաքականացնելով, հաստատեց Հայ Ազգային (պետական) Գաղափարախոսությունը (ՀԱԳ):

Այս հավատքի գաղափարախոսությամբ ընկալելով աշխարհն ու իրենց կյանքի իմաստը՝ մեր նախնիք, լինի դա պետական կամ պետականազուրկ վիճակում, հայրենիքում կամ անհայրենիք պայմաններում, մտածեցին, ձգտեցին, գործեցին, պայքարեցին և մեր ազգային գոյությունը հասցրին մինչև մեր օրերը:

Այդ իմաստով միշտ չէ՛, որ առանց շեղումների ու հարթ է եղել մեր դարավոր ընթացքը: Բայց այն փաստը, որ մենք այսօր կանք (թեկուզ և այս վիճակում, որը բավարար չէ, սակայն ինքնըստինքյան հրաշքանման է), ապացուցում է, որ մեր հայրերն ընդհանուր առմամբ գտել էին գոյատևելու և զարգանալու ճշմարիտ ճանապարհը՝ անկախ իրենց գտնված վայրից, վիճակից և պայմաններից:

Իսկ մե՞նք: Մենք արդյո՞ք այդ ճանապարհի վրա ենք: Դրանո՞վ ենք ընթանում: Չե՞նք մոռացել այն: Չե՞նք շեղվել: Գիտե՞նք այն, թե՞ ոչ: Գոնե մտածո՞ւմ ենք այդ մասին, թե՞ ոչ: Եվ եթե շեղվել ենք և մոռացել, այդ դեպքում ուզո՞ւմ ենք հիշել, ճանաչել, գտնել և վերստին ընթանալ այդ ճշմարիտ ճանապարհով՝ մեր տոհմիկ հարազատ ընթացքով:

Այն, որ սա մեր անձնական ու ազգային-պետական էական նշանակություն ունեցող հարց ու խնդիր է, չէ՛նք կասկածում: Սակայն այդ խնդրի կատարումը քանի որ սկսվում է մեր հոգու պարտքի գիտակցումից և դրանով Հայ Ազգային Գաղափարախոսության վրա հիմնված մեր քաղաքացիական պարտաճանաչությունից, ապա մեր այսօրվա իրականությունում կարո՞ղ ենք նույնպես անկասկած համարել, պատկերացնել, գիտենալ և հասկանալ, թե ինչպե՞ս էին ըմբռնում ու իմաստավորում իրենց էությունը և կյանքը հավատավոր ու հայրենանվեր մեր նախնիք: Մի բան, որ գործնականորեն մեզ համար հույժ կարևոր է ու նաև ուսանելի:

Դրա մի հավանական օրինակը կարող է լինել նրանցից մեկի հետևյալ հոգեբուխ մենախոսությունը.

«Աստված իմ ու Արարիչ Հայր իմ: Շնորհակալ եմ, որ Դու իմ Տերն ես, և ես

Քե՛զ եմ պատկանում ու իմ ամբողջ հոգով, սրտով և զորությամբ Քե՛զ եմ սիրում ու ապավինում:

Ու նաև Քո կամքն ու գործերը կատարել, Քո ճամփաներով գնալ և միշտ Քեզ ծառայել եմ ուզում Քո պարգևած՝ իմ Հայկյան Անդաստանում:

Եվ իմ բոլոր օրերում, որ ինձ պարգևել ես, Քո՛ փառքի համար ապրել ու աշխատել եմ ուզում: Քանզի դա՛ է կյանքն իսկական և երանությունը հավիտյան, որ շնորհեցիր ինձ Հավատքով՝ Քո Միածին Որդու Հարությամբ»:

Ուրբաթ, 13-ը մայիսի, 2005 թ., առավոտյան ժամը 8:50

ԿՅԱՆՔԻ ՊԱՏԿԵՐ ԵՎ ԻՍԿՈՒԹՅՈՒՆ

(Ճանաչված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ)

Ֆիզիկական կյանքը կյանք է, սակայն կյանք չէ, որ ապրում է հավիտյան: Ֆիզիկական կյանքը նեգատիվ պատկերն է իսկական կյանքի: Այն խամրում ու անցնում է՝ կախված ժամանակից:

Դու ո՞ր կյանքին ես ձգտում, ո՞րն ես ուզում ունենալ և պայքարում ես դրա համար: Նեգատիվ՝ պատկերով կյանքը, թե՞ իրական, իսկական կյանքը, որն անանց, երանելի և լուսավոր է և Լուսի մեջ է ու Լուսի համար: Ո՞ր կյանքն ես ուզում: Այն քեզ կարող է Նա՛ պարգևել: Դիմումդ տո՛ւր:

Զգիտե՛ս դիմում գրել: Քեզ չե՞ն սովորեցրել: Ի՛նչ ափսոս...

Բայց ոչինչ, կարևորը, որ պարզևդ պատրաստ է: Այն Աստվածորդու՝ Հիսուս Քրիստոսի մոտ է և ունի հայանշան դրոշմը քո սուրբ հայրերի թողած ժառանգության: Քո դիմումը շատ գիր ու գրություն և մեծ ուսում չի՛ պահանջում: Այն շատ պարզ ձև ունի, միայն թե պետք է բխի սրտիցդ՝ մաքրվելու, սրբվելու անկեղծ ձգտումով, սրտիցդ ուղղված քո Արարչին շատ պարզ խոսքով՝ յոթ բառով՝ **սիրում եմ Քեզ, Հայ՛ր, ների՛ր, ընդունի՛ր ինձ:**

Եվ տեսողությունդ ու լսողությունդ կբացվեն, կտեսնես Ավետարանը և կլսես Արարչիդ խոսքը և կընթանաս Փրկչիդ խաչով դեպի կյանքն իսկական ու հավերժ լուսավոր փառքովն Աստուծո:

Այդ իսկական կյանքն այս երկրային կյանքում գաղափարով է կերտվում: Այն գաղափարով, որ բխում է և հիմնված է Աստվածաշնորհի քրիստոնեական հավատքի վրա՝ Ավետարանով ու խաչով և կոչվում է Հայ Ազգային Գաղափարախոսություն (ՀԱԳ):

ՀԱԳ-ը նաև կյանքիդ ընթացքի հրահանգավորումն է:

17-18-ը մայիսի, 2005 թ., գիշերվա ժամը 12:30

ՀԱՐՍՈՒԹՅԱՆ ՎՏԱՆԳԸ, ՀԱՐՍՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՐՍՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԻՔԸ

Մարդու և մարդկային կյանքի ամենամեծ վտանգներից է նյութական հարստությունը, որն սպառնում է խեղել մարդու հոգեկանը և մղել նրան դեպի անկում ու կորուստ:

Նյութական հարստացումը վտանգավոր է նրանով, որ կարող է, խեղելով մարդու հոգեկանը, գաղափարագրկել և բարոյագրկել մարդուն՝ աճեցնելով նրա մեջ ամբարտավանություն, գոռոզամտություն, փառասիրություն, հեշտամոլություն ու արհամարհանք իր իրական, իսկական կյանքի և ընդհանրապես մարդ արարածի նկատմամբ:

Մարդու նյութական հարստացումն սպառնում է աճեցնել նրա մեջ այն ամենը, ինչ ատելի է Աստծուն:

Հայ մարդը, ինչպես և ամեն մարդ՝ մարդկությունը, կարող է խուսափել նյութական հարստության կորստաբեր վտանգներից երկու պայմանով. առաջին և գլխավոր պայմանը՝ միշտ գիտակցել, որ նյութական հարստությունը Աստուծո շնորհիվ է և պետք է օգտագործվի Նրա պատգամների համաձայն՝ Նրա կամքը, Նրա գործերը կատարելու համար: Այդ դեպքում նյութական հարստությունը կլինի ոչ թե կյանքի ունայնացմանը նպաստող կորստաբեր մամոնա, այլ կլինի հավերժական հատուցմամբ կյանքի իմաստավորմանն օգնող միջոց, կարողություն և դրանով նաև՝ վայելք:

Առաջին և գլխավոր այս պայմանի չափ կարևոր երկրորդ պայմանն այն է, որ հայ մարդու, ինչպես և ամեն մարդու՝ մարդկության նյութական հարստացումը նրանց մեջ այնպիսի պատասխանատվություն առաջացնի Աստուծո առաջ, որ զգան իրենց որպես ավետարանապատվեր հավատարիմ տնտես... Եվ ըստ այնմ ընկալեն իրենց հարստության նշանակությունը և օգտագործեն այն որպես այդպիսիներ...

Այս դեպքում կիրականանա նյութական հարստության գործակցությունը Աստվածահաճո հայրենաշեն գործերին՝ ստեղծող, կառուցող, զարգացնող, բուժող, բարձրացնող... երջանկացնող:

Հային, հայությանն այսպիսի՝ նյութական հարստություն է պետք, որը կբարձրացնի իր եղբայր հայ մարդուն և իր հայրենիք Հայաստանը: Դրանով էլ կբարձրանա ու կերջանկանա ինքը՝ որպես Անձ և որպես Ազգ, ու կբարձրանան հայոց հայրենիքն ու պետությունը:

Եվ այդ բոլորը համաձայն մեր հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության*:

* Տես այս գրքի էջ 23-31

ԽՍՏՈՒԹՅՈՒՆ

Խստությունը խստություն չէ՝ լինի դա անձի, ազգի թե մարդկության նկատմամբ, երբ կիրառվում է Աստուծո ճշմարտությանը ու Արդարությանը ապրելու համար: Այդ խստությունը համազոր և դեռ ավելին է հայրական իմաստուն խրատից՝ բարի, պահպանող, ստեղծագործ, կառուցող և կենսատու: Սակայն խստությունը, երբ նյութական շահագրգռվածությամբ նյութին է ծառայում, աղավաղում, վնասում, չարացնում և կործանում է առաջացնում:

Խստությունը, երբ նյութապաշտության «խրատն» է լինում, այն նյութին՝ անցողիկին, ունայնին և ունայնությանն է ծառայում և դեպի կործանում տանում, որովհետև Աստվածասիրություն, մարդասիրություն, ազգասիրություն, եղբայրասիրություն ու ընկերասիրություն չունի իր մեջ...

* * *

Հայ ազգային ինքնության, ազգային պատկանելության ու ազգային ինքնագիտակցության իմաստի հասկացողության առաջացման, արժևորման ու այդ իմաստն ազգին և մասնավորապես նոր սերնդին փոխանցելու համար հայության ու Հայաստանի ո՞ր կառույցները և ո՞ր պաշտոնյաներն են պատասխանատու: Ո՞ւմ առաջ են պատասխանատու: Ինչո՞վ: Ինչպե՞ս:

Չորեքշաբթի, 19-ը հոկտեմբերի, 2005 թ.,

առավոտյան ժամը 8:30

ԾՈՒՌ ՀԱՅԵԼՈՒ ՄԵՁ ՉՆԱՅԵՆՔ ՄԵՁ

Վերջին տարիների ընթացքում հայ իրականության մեջ շրջանառվող որոշ պատմագիտական, քաղաքագիտական և գաղափարախոսական հավատախույս տեսակետներից ելնելով՝ հարց է առաջանում. մի՞թե 1700 տարվա ընթացքում ծուռ հայելու մեջ ենք նայել մեզ՝ չիմանալով, որ «հրեացել էինք և հիմա էլ հրեացած ենք»:

Մի՞թե հրեական են մեր էությունը դարձած հավատամքը և դրանից բխող բարոյական արժեքները, կենցաղն ու հասկացությունները, և ընդհանրապես, մեր պատմությունը:

Մի՞թե հրեական են մեր Սիմոններն ու Սիմոնյանները, Պետրոսներն ու Պետրոսյանները, Պողոսներն ու Պողոսյանները, Հակոբներն ու Հակոբյանները, Հովհաննեսներն ու Հովհաննիսյանները և դեռ Թադեոսներ, Մկրտիչներ, Մարիամներ, Աննաներ և այլք:

Մի՞թե մեր կենցաղային ու կրոնական շատ ծեսեր և խորհուրդներ, ինչպես

խնկարկունը, եկեղեցական զգեստավորունը և այլն, իբր թե մեր հրեանալը կամ առնվազն 1700-ամյա հրեականության զգալի կերտվածքով ապրելն են արտահայտում ու ապացուցում:

Ո՛չ: Ո՛չ, թեև, իբր հրեաներին չսիրողները, նրանց ստորադասողները, մեղադրողները կամ պարզապես քննադատողներն այդ են փորձում ապացուցել:

Սակայն դա ճիշտ չէ, և պետք չէ հրեաներին ստորադասել, վարկաբեկել, որը նաև վնասակար է տարբեր տեսանկյուններից... Եվ սխալ է նաև, որ իբր ստացվում է, թե հայ ազգի մեծերը, սրբերը այդ հրեական խայծը կուլ են տվել և դրանով հրեացել են, որը նշանակում է, մեղմ ասած, հեռացել և մեզ էլ հեռացրել են հայկականությունից: Այդ դեպքում ի՞նչ է ստացվում՝ Պարթև Սահակները, Խորենացի Մովսեսները, Շիրակացի Անանիաները, մինչև Թումանյան Յովհաննեսները, Վրացյան Սիմոնները և այլք իրենց հրեական անուններով որպես թե ինքնագիտակցության հրեակա՞ն դրոշմ ունեն, այսինքն՝ խայծը կուլ տվածնե՞ր են: Եթե այո, այդ դեպքում տակն ի՞նչ է մնում:

Մնացին երեկ ու այսօր իրենք իրենց հայ հեթանոս հորջորջողները կամ սեկուլյար ազգայնականները: Նրա՞նք են, որ պիտի ջնջեն կամ սրբագրեն 1700-ամյա հայոց կյանքը՝ գիր ու գրականություն, մշակույթ և պատմություն ու ավելին՝ հավատքը, հույսը և սերը, որ մեր հոգևոր էության ժառանգակիր հիմնական մասնիկներն են, որոնցմով դեռ գոյություն ունենք և վստահ ենք, որ գոյություն ենք ունենալու և դրանցով մեր մեջքը շտկվելու ու ընթացքը զորեղանալու և բարձրանալու է: Ա՞յդ է, որ պիտի ջնջեն ու փոխեն մերօրյա հայ հեթանոսները:

Ինչո՞վ, ինչպե՞ս պիտի փոխեն... Չէ՞ որ այդ մտածողությամբ ու ընթացքով նրանք կտորած տաշտակի՝ իսկ չեն հասնի:

Իսկ ո՞րն է իրականությունը: Եթե չենք հրեացած կամ հրեականացած, ապա ինչպե՞ս բացատրենք բազում հրեական անունները, կրոնական ծեսերը, ժողովրդական սովորությունները և դեռ ավելին, Աստվածաշնչյան ճշմարտությունների և պատվերների, մեր ազգային-հասարակական-կրոնական կյանքի ու նաև կենցաղի հազարյոթհարյուրամյա պատմական ներկայությունը...

Կարճ բացատրությունն այն է, որ այդ «հրեականը»՝ հայությանը պատվաստած Աստվածորդու շնորհն ու հավատքը, հրեայինը չէր, որովհետև Նա հրեա չէ՛ր, այլ Աստծու ծնունդ Աստված էր ու հետո միայն Աստվածային կանխատեսությամբ՝ մարմնով հրեա: Ե՛վ հայը, և՛ հույնը, և՛ անգլիացին, և՛ ռուսը, և՛ ֆրանսիացին, և՛ այլք վերցրեցին մարդեղացած Աստուծո՞՛ հոգեղենի հետ նաև մարմնեղեն խորհուրդները և դարձրին ազգային, որոնց մեջ էին նաև նրա աշակերտների մարմնեղեն խորհուրդները և կենսաձևերն ու անունները՝ Պետրոս, Յովհաննես, Հակոբ, Պողոս, Թադեոս, Բարդուղիմեոս և այլք:

Տիրոջ՝ երկնքի և երկրի, երևելիների ու աներևույթների Ստեղծողի մարդկային կյանքի ապրումի խորհրդանիշները չեն կարող որևէ առանձին ժողովրդի պատկանել: Դրանք Աստվածային են՝ տարբեր ձևերով և ճանապարհներով շնորհված մարդկությանը, որի մեջ տարբեր ազգեր տարբեր կոչում, դեր, հետևապես և կարգ ունեն: Հայկական կոչումն ու կարգն ընտիր է...

Եթե հավատքով հասկանանք երկնքի ու երկրի, երևելիների ու աներևույթների և մեր՝ մարդկանց Արարչի էությունը և բնությունը, Նրա կամքը, ծրագիրը և գործը, այն ժամանակ կիմանանք, թե ո՛վ ենք մենք, ի՞նչ ենք մենք և ի՞նչու՞ կանք մենք: Ի՞նչ է նշանակում լինել հայ, քրիստոնյա՝ հայ: Եվ եթե այս իմանանք և հասկանանք, կիմանանք ու կհասկանանք նաև, թե ի՞նչ է սպասվում մեզնից, որ լինենք, որ անենք (կամ չանենք), որպեսզի Կյանք ունենանք: Այսինքն՝ ապրենք հավերժ... Ապրենք մեր սուրբ նախնյաց պես:

Երբ հավատքով իմանանք, հասկանանք մեր Արարչի էությունն ու բնությունը, այնժամ կիմանանք և կհասկանանք նաև Արարչի խոսքն ու Աստվածորդու ապրած մարդկային կյանքի էությունն ու ինքնությունը, որով կճանաչենք նաև մեզ, մեր էությունն ու ինքնությունը՝ թե՛ մարդկային և թե՛ ազգային:

Ի՞նչ հոյակապ հասկացողությամբ վիճակ: Եվ ինչ կորստաբեր՝ վիճակ, երբ չես գիտակցում այդ, որի արդյունքն է լինում տգիտությունը, խավարը՝ հոգու և մտքի, որ առաջացնում է անմարդկայնություն՝ իր բոլոր կորստաբեր հետևանքներով, որոնք, ըստ երևույթին, խտանում են 21-րդ դարում...

Այս պայմաններում մաքուր պահենք և ծուռ հայելիներով չաղավաղենք հայոց հոգու, մտքի, գիտակցության ու կյանքի ապրումի երկնակամարը: Չխաբվենք, չտարվենք և չայլասերվենք նյութապաշտության, այն է՝ չարի քրիստոսամերժության որոգայթներում:

Պաշտպանենք ու պահպանենք մեզ ու մեր սերունդներին, ինչը կարող է լինել Աստվածաշնորհի հավատքով ու այդ հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ: Գաղափարախոսություն, որը մեր քրիստոնեական հավատքի քաղաքացիականացումն ու քաղաքականացումն է՝ փարոսը և եռանդը մեր ազգային պետական Աստվածապատվեր կյանքի փառավոր ընթացքի:

28-ը դեկտեմբերի, 2005 թ., առավոտյան ժամը 8:00

ԱՔԼՈՐԱՑԱԿ

21-րդ դար...

Թռչնավարակ է առաջացել և սպառնում է մարդկանց նույնպես հնձել:

Սա նորություն է, բայց նորություն չէ «աքլորավարակը», երբ մարդ աքլորակերպվում է՝ կորցնելով իր Աստվածաշնորհի մարդկայնությունը...

Մարդու, տվյալ դեպքում հայ՝ մարդու աքլորավարակումը, որն առաջանում

է հայ մարդու հոգու վարակամերժ կարողության տկարացումից, ախտահարելով հոգին, նվազեցնում կամ նույնիսկ էապես զրկում է նրան առաքինությունից, գաղափարականությունից ու բարոյականությունից:

Դրանով իսկ հայ մարդը՝ որպես մարդ և որպես հայ, դառնալով եսամուլ ու նյութապաշտ, փաստորեն, ձգտում է ծառայել միայն իրեն, որով և կորցնում է ինքն իրեն... Նրա նույնիսկ հայրենասիրությունն ու մարդասիրությունը վերածվում են անձնական փառասիրությանը հազուրդ տալու նպատակի...

Նման ցավալի դեպքերը շատ են եղել պատմության ընթացքում: Դրանք շատ են և այսօր: Սակայն աքլորացավն առավել չափով վնասում է ազգին, երբ այդ վարակն արտահայտվում է ո՛չ միայն հին ու նորաթուխ հարուստների, այլև ղեկավարների, կղերականների և մտավորականների շրջանում՝ դրանով իսկ դառնալով նաև սուր վարակիչ շրջապատի ու առավել ևս՝ նոր սերնդի համար...

Մի քանի օր առաջ հայկական աքլորացավի սինդրոմի ցավալի արտահայտությունը նկատեցի մի վաղեմի ծանոթ-բարեկամի մոտ: Ի՛նչ ափսոս... Ինձ համար ավելի պարզ երևաց, որ նա անձկագին թափահարում է գաղափարապես և բարոյապես աստիճանաբար փետրաթափվող թևերը, որ բարձրանա, բայց չի կարողանում, ընդամենը ցատկոտում է անփառունակ ունայնության ճահճավիհի վրայով: Ինչքա՞ն է տևելու այդ ցատկոտուքը, մինչև դրա մեջ ընկնե՞լը: Ի՛նչ ափսոս... Երանի՛ թե հնարավոր լիներ օգնել, որ զգաստանա...

Եվ ի՞նչը կփրկի մեզ աքլորավարակի ճահճավախճանից, եթե ոչ Աստվածորդու Ավետարանի լույսը, իմաստությունը, խաչի շնորհը, զորությունն ու դրանցից բխող և դրանց վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունը:

7-ը փետրվարի, 2006 թ.

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ԲԱԽՏԱԽԱՂ (ՂՈՒՄԱՐ)

(Ժանի՛ր զքեզ՝ ճանաչի՛ր քեզ, հա՛յ մարդ)

Մեր մեծերի պատվիրանների համաձայն, եթե մենք ճանաչենք մեզ, ճանաչենք որպես մեր նախնյաց ժառանգորդ հա՛յ մարդ (որի դեպքում կճանաչվենք որպես հայ քրիստոնյա՛ մարդ), ապա կհասկանանք, որ հայ և Հայաստան հասկացությանը և մանավանդ դրանց էությանն անհարի՛ր, անհամատեղելի՛, հակասական է կազինոյի երևույթը:

Նույնը վերաբերում է ամեն տեսակի անառակ կրքեր առաջացնող և մեր մայրերի, քույրերի և դուստրերի մարմինները շահագործմամբ պղծող «բիզնեսներին», ինչպիսի «փայլուն» անվան տակ էլ դրանք չմատուցվեն և ինչպիսի «առաջադիմական գաղափարներով» էլ չքողարկվեն:

* * *

21-րդ դարասկզբին հայոց հայրենիքում և մայրաքաղաք Երևանում պետական ու հասարակական բարձր գիտակցության արգասիքն է արդյունաբերության՝ տարբեր արտադրությունները և սպասարկումներն արագորեն զարգացնելու նպատակաուղղվածությունն ու ձգտումը: Դա հոյակապ է... Բայց դրա համար, կասկած չկա, որ անհրաժեշտ է աշխատել, աշխատել ու դարձյալ աշխատել և սովորել, սովորել ու դարձյալ սովորել ու նորից աշխատել. գրագետ, մվիրված ու հարատև աշխատել և մրցունակ դառնալ:

Իր նման խնդիրը լրջորեն հասկացող և վճռական հետևողականությամբ դրա կատարմանը ձգտող հասարակությունը կամ գոնե դրա մեծամասնությունը, ըստ իր խնդիրների, ընդունում է որոշակի դիմագիծ, կեցվածք և գործադրում է համապատասխան ջանքեր: Տեսնո՞ւմ եմք մենք թեկուզ մեր մայրաքաղաքում (երկրի ուսման, գիտության, բայց միաժամանակ նաև արդյունաբերական տնտեսության կենտրոնում) այդպիսի հասարակության դեմքը, կեցվածքը և համապատասխան ջանքերը, որի մեջ պիտի առանձնանար հատկապես երիտասարդությունը...

Դրա փոխարեն մեր առողջ հայության կողքին մենք տեսնում եմք «ոսկյա» մի երիտասարդություն և մի «վերնախավ», որոնց սպասարկում են սնկի նման աճող թանկարժեք ավտոմեքենաներ, գեղեցկության սրահներ և տարբեր զվարճությունների գիշերային հաստատություններ:

Եթե այս է մայրաքաղաք Երևանի ուսումնական ու արդյունաբերական դոմինանտ «դեմքը», ապա դրա մարմինը կարո՞ղ է արտահայտել երկրի և հասարակության անվտանգության, զարգացման և կենսամակարդակի պահանջը...

- Թվում է, թե ոչ:

- Ուրե՞մն: Ի՞նչ պետք է անել, ովքե՞ր, ինչպե՞ս...

* * *

Մի՞թե չկա մեկը, որ ասի մեր աղջիկներին և դեռատի կանանց, թե ի՞նչ է իսկական գեղեցկությունը: Ասի, թե հայ երիտասարդներին (ոչ թե պիժոններին), տղամարդկանց հրապուրելու զգացումն ու պահանջը եթե բնական է և հրապուրելը պետք է, ապա այդ անել ո՛չ թե հեթանոսաբար շպարվելով, զուգվելով և հարեմավայել փորն ու պորտը ցույց տալով, որն ավելի շատ մարդու մեջ անասնական կիրք և, լավագույն դեպքում, վայրկենական սիրո հրապուրանք կարող է առաջացնել, քան թե մարդու հոգուն և սրտին խոսող տևական, անկեղծ և ստեղծագործ սիրո հրապուրանք, որը դու քո մարդկային-հայ կնոջ Աստվածատուր բնական գեղեցկությամբ, կանացի նազանքով և շնորհքով կարող ես առաջացնել և զարգացնել ու կյանք դարձնել... Այդ հրապուրը

քո տատերն ունեին, որով և պակաս սիրելի չէին: Այդ իշխանական և սուրբ հրապույրը որպես թանկագին ժառանգություն՝ դո՛ւ էլ ունես, բայց անտեսում, ուրանում և փչացնում ես, այ՛ երեխա ջան, աղջիկ ջան, քո՛ւյր ջան...

Ինչո՞ւ մենք չենք ասում հատկապես մեր աղջիկներին, որ նրանք այդ հատկությունը և շնորհքը, որպես սուրբ ու կենսատու ժառանգություն, ունե՛ն: Չէ՞ որ իրենց համար անմտություն ու մեծ վնաս է այդ անտեսելն ու մերժելը, որովհետև այդ կերպ իրենց մարդկային ու ազգային կանացի էությունը և վեհությունն են ախտավորում ու նաև վիրավորում այն երիտասարդներին, տղամարդկանց, որոնք դեռ հայ են մնացել և ուզո՛ւմ են հայ մնալ՝ հայկական ընտանիք կազմելով և հայ սերունդ ստեղծելով ու դաստիարակելով՝ որպես ժառանգորդներ մեր ազգային արժեքների գոյության, որովհետև հասկանում են, որ այդպիսով միայն արժանի կդառնան հայ քրիստոնյա մարդ կոչվելու ու Աստուծո գոհությանն արժանանալու՝ այժմ և հավիտյանս:

Հայ ազգի մեջ կոչումից ելնող մի ամբողջ շարք պատասխանատուներ կան, որ պարտավոր են քննել, պարզաբանել, հորդորել և օգնել՝ ճի՛շտը, պատվավորը, օգտակարը հասկացնելու աղջիկներին և տղաներին, ամբողջ հասարակությանը:

Ո՞ւր են մեր խոհեմ, գիտակից և նախանձախնդիր ծնողները, մտավորականությունը և ղեկավարությունը... Ո՞ւր է էջմիածինը: Իր լռությունն ի՞նչ է ասում... Ինչպե՞ս հասկանանք...

Կիրակի, 19-ը նոյեմբերի, 2006 թ., ժամը 11:10

ԻՆՉՊԵ՞Ս ԵՐԵՎԱԼ ԵՎ ԻՆՉՈ՞Վ ՊԱՐԾԵՆԱԼ

Ավետարանում՝ մեր հոգևոր սահմանադրությունում, ասվում է պարծանքի մասին և մարդկանց մասին, «...որոնք աչքին երևացածով են տարծենում և ոչ թե *ursում եղածով*» (Բ Կորնթ. 5.1-2):

Բայց մեր օրերում ոչ թե ոմանք են, որ աչքին երևացածով են պարծենում և ոչ թե սրտում եղածով, այլ, ըստ երևույթին, բոլորս ենք այդպիսին, որ մեր աչքին երևացածով ենք պարծենում: Ի՞նչ է նշանակում սա և ի՞նչ հետևանքներ է ունենում. այս հարցը շատ խորիմաստ է և կարևոր, որի պատասխանը, սակայն, հայտնի չէ, թե փնտրողներ կա՞ն: Թեկուզ և մեր ազգի կղերական, մտավորական և ղեկավար շրջաններում: Փնտրվո՞ւմ է նշանակության իմաստը: Եվ ինչ՞ է նշանակում մեր ազգի այս վիճակը, արդյոք բթացո՞ւմ է սրտի, մտքի և հոգու: Է՞լ ինչ է, նաև այլասերո՞ւմ...

Ո՞վ, ի՞նչը կփրկի մեզ այս վիճակից:

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

(հստակեցման և ճանաչման շարունակվող քայլեր)

ԵՄ ԵՄ. ԱՍՈՒՄ Է ԱՍՏՎԱԾ

Հայ Ազգային Գաղափարախոսության (ՀԱԳ) հստակեցումն ու ճանաչումը կարելի է միայն Աստուծո հավատքով՝ Ավետարանի և խաչի միջոցով, որից բխում է և որի վրա հիմնված է ՀԱԳ-ը:

Եվ Հիսուս ասաց. *«...Բայց մեռելների հարության մասին չե՞ք կարդացել Աստուծոց ձեզ ասվածը. ԵՄ ԵՄ Աբրահամի Ասվածը, Իսահակի Ասվածը և Հակոբի Ասվածը. և Ասված մեռելների Ասվածը չէ, այլ կենդանիների»* (Մատթեոս 22. 31-32):

Ավետարանի բացատրությամբ՝ Աստված Իրեն Աբրահամի Աստված է կոչում, որովհետև նա Աստծուն հավատաց:

«Աբրահամը հավասաց, և այդ իրեն արդարություն համարվեց»: Այսինքն՝ արդար դարձավ: Այսինքն՝ Աստուծո մարդը դարձավ:

Ի՞նչ է նշանակում դառնալ Աստուծո մարդը: Նշանակում է նորից ծնվել Քրիստոսի հավատքով ու երկրային կյանքում ապրել և գործել որպես երկնային հավիտենական արքայության ժառանգորդ: *«Ամեն ժամ Հիսուսի մահը մեր մարմիններում կրում ենք, որդեսզի Հիսուսի կյանքն էլ մեր մարմիններում հայտնվի»* (Բ. Կորնթ. 4.10-11):

Մենք գիտենք, գոնե մոտավորապես, թե ինչ է նշանակում դառնալ այսինչ իշխանավորի, այնինչ փող ու զորություն ունեցող անհատի «մարդը» և մոտավորապես պատկերացնում ենք, թե ինչ էր նշանակում դառնալ որևէ թագավորի՝ մարդը՝ նրա վստահելին, նրա խորհուրդների հաղորդակիցը, նրա սիրելին, շնորհընկալը և պաշտպանյալը: Ի՞նչ մեծ փառք, ապահովություն և նախանձելի վիճակ էր նրանց համար, որ վայելում էին կայսրերի, թագավորների, շահերի, սուլթանների, ցարերի, գլխավոր քարտուղարների կամ թեկուզ՝ ավելի փոքր կարողությամբ իշխանավորների կամ հարուստների բարեհաճությունը: Բայց ի՞նչ մնաց այդ փառքից, ապահովությունից, նախանձելի դրությունից, որ ունեին մակեդոնացիների, կեսարների, նապոլեոնների և այլն և այլն, մինչև տարբեր ստալինների բարյացակամությունը և հովանավորությունը վայելողները...

Ո՞ր են, ի՞նչ եղան նրանք: Ո՞ր են նրանց հովանավորող զորեղները...

Կարելի է ենթադրել, որ երկրում, այս արևի տակ նրանցից ինչ-որ տեղ գուցե մի քիչ փոշի դեռ մնացել է, իսկ երկնքում... Ինչպիսի՞ն է նրանց հոգիների հավիտենական վիճակը...

Իսկ կա՞ երկինք: Նրանք այնտե՞ղ են: Ի՞նչ վիճակում են... Իսկ մե՞նք...

Մի՞թե սա չէ մարդկային կյանքում հարցերի հարցը, որի պատասխանը,

սակայն, մենք չգիտենք, եթե չենք հավատում Աստծուն՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանով: Իսկ եթե չենք հավատում, այդ դեպքում գիտենք միայն, որ նրանք՝ այս աշխարհի հզորներն ու նրանց հովանավորյալները, չկան, և, ըստ բնության մեր սեկուլյար հասկացողության, չէին էլ կարող լինել, ինչպես նաև նրանց հոգիները, որովհետև, թեև խոսում ենք հոգեբանությունից և հավատում հոգեբանություն կոչվող գիտությանը, բայց չենք հավատում հոգու անմահությանը և կարծում ենք, որ հոգին ևս մեռնում է մարմնի հետ:

Ե՞վ... Կե՞րջ:

Ո՛չ: Մնացածներս, որ հավատում ենք Աստծուն՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանով, գիտենք, որ թեև նրանց մարմիններից կարող է փոշի էլ մնացած չլինի, բայց հոգիներն ապրում են անդրշիրիմյան կյանքում, երկնքում: Բայց: Բայց չգիտենք նրանց «հասցեն»: Տեղեկություն չունենք, չգիտենք, թե ո՞ր են և ի՞նչ վիճակում: Դրախտո՞ւմ են, թե՞ դժոխքում: Ապրո՞ւմ են, թե՞ տանջվում: Զգիտենք, որովհետև չգիտենք, թե ինչպես է Աստված կարդացել և գնահատել նրանց սրտերն ու գործերը և տրամադրված եղել նրանց նկատմամբ:

Եվ ահա մարդկային, երկրային տգիտությունը և խեղճությունը: Մեզ թվում է, թե խելացի՛ ենք, գիտո՞ւն ենք, զարգացա՞ծ ենք, բայց՝ չենք: Չենք հասկանում մեզ համար էականը...

Հարուստի, իշխանավորի բարյացակամությանը ձգտում ենք (դեռ ինչ և ինչ ջանքերով և դրանց ուղեկցող ինչ և ինչ շողոքորթություններով), բայց մեր Տիրոջ, մեր հավիտենական ու ամենակալ Տիրոջ բարյացակամությանը ձգտո՞ւմ ենք: Դժբախտաբար՝ ո՛չ: Չենք էլ մտածում և նույնիսկ արհամարհում ենք Նրա սերը, բարությունը, գութը, ներունը... և զորությունը, ամենակարողությունը և՛... Եվ հիմարություններ ենք անում... Մեծամտանուն և նյութապաշտ ու ամբարտավան դառնում՝ չհասկանալով, որ դրանով մենք մեզ նսեմացնում և կորստյան ենք մատնում, դեպի անդո՛ւնդ ենք գլորվում...

- Ինչո՞ւ...

- Որովհետև չգիտենք:

- Ի՞նչ չգիտենք:

- Զգիտենք կյանքի իրական, հավերժական օրենքը և իմա՛ստը...

Դժվար է լինել երկրի քաղաքացի, եթե չգիտես երկրի օրենքը և, դեռ ավելի՛ վատ, եթե սխալ ես հասկանում այն:

Չես կարող դառնալ երկնքի քաղաքացի, եթե չգիտես և չես կատարում երկնքի՛ երկրային կյանքի համար սահմանած օրենքը...

Եվ դա իմանալուց և հասկանալուց էլ ավելի՛ էականը դրան հավատալն է... «Հավատա և կփրկվես» ու կապրես...

Մի՞թե կարծում ես, թե քեզ սիրող երկնավոր Հայրը չի՛ մտածում այդ մասին, չի՛ խղճում քեզ և չի՛ ուզում փրկել քեզ:

Հասպա ինչո՞ւ ուղարկեց Իր Միածին սիրելի Որդուն, որ քո՛ տգիտության

գին մեղքը խաչի վրա իր արյանք քավի: Քեզ քո մեղքից փրկի և հավատքով հավիտենական կյանք պարգևի:

Զգիտե՞ս: Սովորի՛ր: Հայաստան աշխարհում երբեք այսքան շատ Ավետարան չի եղել և երբեք մեսրոպատառն այսքան շատ ճանաչող չի՛ եղել...

Ժամանակ չկա: Շրջապատում և հեռուստատեսային էկրաններում ավելի հետաքրքիր բանե՞ր կան: Բայց այդ դեպքում ինչպե՞ս է, որ այս կամ այն երևելի ծանոթիցդ աչքդ չես հեռացնում և նրա մեկ «սուլոցին ավալ-թավալ» վազում ես...

Մի՞թե կարելի է այդքան կույր, տգետ ու անզգամ լինել... Ու նաև անշահանկատ: Այո՛, այո՛, անշահանկատ: Ինչպես որ ամեն տեղ ու ամեն ինչում քո շահն ես փնտրում (նյութականն ու հաճույքը), որը վերջին հաշվով փուչ է, ունայն ու անցողիկ, մի քիչ խելացի ու իրապե՛ս շահանկատ լինեիր, հասկանալի և քո իրական, անանց շահն էլ փնտրեիր...

Մի դիպլոմի համար տարիներով ժամանակդ ես տրամադրում, շատ անզամ եղած-չեղած փողիցդ էլ ես տալիս, եթե պետք է լինում, ամեն տեսակ ճարպկություն էլ ես բանեցնում, որ այդ դիպլոմը ձեռք բերես, որպեսզի՞...

Բայց մի «դիպլոմ» էլ կա հավերժական «տևողությամբ» կարգավիճակի համար, որ Երկինքն է տալիս: Պայմանը: Միայն թե հավատա՛, սերտի՛ր Աստուծո խոսքը և նորի՛ց հավատա: Եվ կյանքիդ ընթացքում այդ հավատքով մտածի՛ր, վարվի՛ր և գործի՛ր... Եվ Աստված դա քեզ արդարություն կհամարի: Այսինքն՝ դու կդառնաս Աստուծո մարդը: Աստուծո մարդը, ինչպես Հայր Աբրահամը, Հայկ Նահապետը, Գրիգոր Լուսավորիչը, սուրբ Վարդանը և բոլոր նարեկացիները, տաթևացիները, նժդեհները և թունանյանները...

«Ով որ Իմ խոսքը լսում և կատարում է, նա՛ է Ինձ սիրողը, և Ինձ սիրողն Իմ Հորից կսիրվի, ու ես կսիրեմ նրան և Ինձ կհայտնեմ նրան» (Հովհաննես 14. 21):

Ինչ գիտություն, փառք ու երանություն, հավիտյանս հավիտենից:

6-ը մարտի, 2006 թ.

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՍԲ ԱԶԳԻ, ՊԵՏՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, ՎԵՐԵԼՔ ՈՒ ԲԱՐԳԱՎԱՃՈՒՄ

Համաձայն Հայ Ազգային Հոգեբարոյագիտության (ՀԱՀ) և Հայ Ազգային Գաղափարախոսության (ՀԱԳ)՝ ո՞վ է հայը՝ ղարաբաղցին, շիրակցին, տարոնցին, նախիջևանցին, վասպուրականցին, ջավախքցին և այլն, որ ապրում է հայրենիքում կամ դրսում: Ո՞վ է Հայաստանի Հանրապետության քաղաքացին

և հայ զինվորն ու սպան: Ինչպիսի՞ կոչում, պարտականություն և դեր ունի կատարելու յուրաքանչյուր հայ տատ ու պապ, հայր և մայր, տղա ու աղջիկ՝ անկախ իր բնակության վայրից և սոցիալական վիճակից, համայն հայության ու Հայաստանի ներկայի ու ապագայի համար:

Յուրաքանչյուր հայի կոչումն ու պարտականությունը նույնն է՝ հավասար, դերը՝ տարբեր:

Եվ ինչպես Միացյալ Նահանգների մի նախագահ էր մոտավորապես ասել՝ թող հարց չդրվի, թե հայրենիքն ու պետությունը ի՞նչ կարող են և պետք է անեն մեզ համար, այլ թող հարցադրվի, թե մենք բոլորս և մեզանից յուրաքանչյուրն ի՞նչ կարող է և պետք է անի հայրենիքի ու պետության համար:

Ազգային ներկայիս իրականությունում, երբ, փա՛ռք Աստուծո, ունենք ազատ ու անկախ հայրենի պետություն, մեզանից յուրաքանչյուրը երկու հեռանկար ունի. մեկը՝ հայ ազգայնորեն ազատ, իմաստալի ու պարտաճանաչությամբ արժանավայել կյանք հայաշխարհում և պետությունում՝ մեր նախնյաց օրինությամբ, մյուսը՝ հայոց ազգայնորեն կախյալ, անիմաստ ու պարտազանցությամբ անարժան կյանք օտար քառուղիներում՝ մեր նախնյաց ավստսանքով և կամ անեծքով:

Աստուծո շնորհով ընտրությունը մե՛զ է տրված: Այսօր պետք է մեր հայացքները սևեռենք, տեսնենք ու հասկանանք, թե մեր ջանքերը ո՞ր նպատակով ենք գործադրում և ո՞ր ուղղությամբ ենք ընթանում՝ առաջի՞ն, թե՞՞ երկրորդ:

Մեր զավակները և գալիք սերունդները մի դեպքում դատապարտելու են մեզ՝ մեր և իրենց ազգային կյանքի ամլացման համար, մյուս դեպքում երախտագիտությամբ են հիշելու մեզ՝ մեր և իրենց ազգային կյանքի իմաստավորման համար: Բայց մեզ տրված է կարողություն՝ արժանանալու մեր զավակների և թոռների երախտագիտությանը, ինչպես նաև՝ Աստուծո օրհնանքին: Փա՛ռք Նրան:

Վերջին հաշվով, դա՛ է, որ մնալու է մեզ ժառանգություն՝ անկախ մեր մտածելակերպից, տարբեր պատճառաբանություններից և տրամաբանությունից ու ըստ այնմ արարքներից:

Այնուամենայնիվ, հայ կյանքում գոյություն ունի նաև Աստվածահաճո այն իրողությունը, որ հայրենիքում ապրելը, աշխատելը և հայրենի ազգային եկամուտ ստեղծելը ֆիզիկական ներկայությամբ, բնականաբար, շատ կարևոր է: Սակայն ավելի էական է հոգեկան, գաղափարական և դրանց գիտակցությամբ հայրենիքի նկատմամբ քաղաքացիական ինքնաբուխ պարտաճանաչությունն ու հարատև պատրաստականությամբ պարտքի կատարումը, որի դեպքում, անկախ բնակության վայրից, վիճակից ու պայմաններից իսկ, հայը կստեղծի հայրենիքի ազգային եկամուտ և դեռ ավելին...

ԱՆԿՅՈՒՆԱՔԱՐ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ

Առաջինը և Վերջինը, Սկիզբը և Վերջը, Ալֆան և Օմեգան, Էականը, Կատարյալը, Սո՛ւրբը, Բարի՛ն, Կենարարը, Ստեղծարարը, Հավիտյանս Երանելին և դեռ անսահմանորե՛ն ավելին ու ավելին, որին մարդկային միտքն ու պատկերացումն անկարող են հասնել, Աստվածային Սերն է:

Աստվածային Սեր, որ նաև պարզ է, մոտ և հասանելի, ինչպես մոր կաթը:

Ով ունի՝ Աստվածային Սերը՝ ամեն ինչ ունի այժմ և հավիտյանս: Ով չունի՝ այդ Սերը՝ ոչինչ չունի այժմ և հավիտյանս...

Հայ մարդ, ինչպե՞ս իմանաս, թե արդյոք ունե՞ս Աստվածային Սերը:

Կարող ես իմանալ նրանով, թե արդյոք ունե՞ս սեր ազգիդ հանդեպ: Հայ Ազգային Տոհմիկ Գաղափարախոսության համաձայն՝ հայ մարդու՝ Աստուծո և Նրա արարածների հանդեպ ունեցած սիրո վկայությունն ու ապացույցը իր սերն է Հայ Ազգի հանդեպ:

Հայ մարդը, եթե չի՝ սիրում իր ազգը, չի՝ սիրում և Աստծուն: Որովհետև Աստուծո հանդեպ հայ մարդու սերը, որն առաջացնում է Աստուծո ու Նրա արարածների նկատմամբ իր հավատքով ծառայության ոգին, կյանքի ապրում է դառնում ու իրագործվում է սիրելով, հավատալով և ծառայելով Ազգին:

Այս ճշմարտությունը անկյունաքար է Հայ Ազգային Գաղափարախոսության:

Կիրակի, 3-ը սեպտեմբերի, 2006 թ., առավոտյան ժամը 5:00

ԾՆՈՒՆԴ ԵՎ ԿՅԱՆՔ, ՄԱՐԿԱՆԱՑՈՒ ՈՒ ԱՆՄԱՐ

(Դարձյալ Հայ Ազգային Գաղափարախոսության տեսակետից)

Ծնունդը մարմնով մահկանացու է, ծնունդը հոգով՝ հավերժություն:

Երբ մարմինը ծնվում է, անպայման պիտի մեռնի, քանզի մարմնի ծնունդը մահ է:

Երբ մարմնի հետ հոգին է ծնվում, անպայման պիտի ապրի, քանզի հոգին հավիտենական է:

Մարմնի ծնունդը մահ է, և դա հաստատ է ու անպայման, նույնիսկ առանց հավատքի:

Մարմնի ծնունդով հոգու ծնունդը կյանք է, և դա ևս հաստատ է ու անպայման, սակայն՝ հավատքով:

- Ո՞ր հավատքով:

- Հավատքով առ Աստված, մեզ՝ հայերիս համար Հիսուս Քրիստոսի Ավետա-

րանով և խաչով: Այդ հավատքով հաստատ է, որ մարմնի հետ ծնունդ առած հոգին հավերժական է: Սակայն հարցական է, թե հավիտենապես հոգին որտե՞ղ է ապրելու: Ապրելու է դրախտո՞ւմ, արդարների Աստվածային լույսով որպես լո՞ւյս, երանելի կյանքո՞վ, թե՞ ապրելու է դժոխքում, չարի խավարում՝ չարի կամակատարի տանջանքով:

Սա՛ է, որ մեր հավատքով գիտենք, որ դրա մանրամասները չգիտենք: Բայց այդ հավատքով միաժամանակ հաստատ գիտենք, որ Հիսուսի խաչը փրկություն է...

Ավետարանի հավատքով մենք հաստատ գիտենք, որ այս մարմնավոր, անցողիկ, ժամանակավոր կյանքում, եթե Աստվածորդու խաչի շնորհով ապրենք, այսինքն՝ ո՛չ թե մեր հոգին մարմնին ծառայի, այլ մեր մարմինը հոգուն ծառայի, ինչպես Ավետարանում է ասված (հոգո՞վ գնացեք և մարմնի ցանկությունը չեք կատարի), այն ժամանակ մեր կյանքի «քննությունը» տված կլինենք և կստանանք հավիտենական երանելի լույս կյանքի «անձնագիրը և վիզան»:

Այդ հավերժական լույս կյանքի քննության առարկան հայի համար հայ ազգն ու Հայաստանն են՝ հայ ընտանիքներով: Եվ քննության առարկայի բովանդակությունը, հավատքով առ Աստված, ամբողջ սրտով, ամբողջ հոգով ու ամբողջ գորությամբ սիրելով Աստծուն, Նրան ծառայելն է՝ սուրբ սրտով ծառայելով հայ ազգին, որպեսզի հայ ազգն էլ սրբությամբ ծառայի Աստծուն՝ ծառայելով մարդկությանը, որպեսզի մարդկությունն էլ, ի դեմս բոլոր ազգերի, սուրբ սիրով ծառայի Արարիչ Հայր Աստծուն՝ միշտ, ամենուր, ամեն ինչում:

* * *

Ուրեմն՝ հայի երկրային կյանքն իմաստավորող հավիտենական լույս կյանքի համար քննությունը հաջող հանձնելու պայմանը սիրելն ու ծառայելն է Աստծուն՝ սիրելով և ծառայելով մեր մերձավորին ու հայ ազգին՝ արդարությամբ, ազնվությամբ, նվիրումով և հմտությամբ:

Հավատքի աչքերով ավետարանական այս ճշմարտությունն ենք տեսնում (որպես կյանքի իրավ իմաստավորում և փրկություն) մարդկային պատմության և մեր ազգի պատմության մեջ: Մեր նախնյաց հոգևոր և մտավոր ժառանգությունը, մեր հայրերի կերպարը, նրանց մտածողությունը և գործերը այդ իրողությունն են արտացոլում, ապացուցում: Չկա՝ մարմնավոր կյանքի ավելի մեծ իմաստ, գեղեցկություն ու երջանկություն, քան ծառայելը Աստվածաստեղծ մարդկության հարազատ մասնիկ (հայ ընտանիքներից բաղկացած) հայ ազգին: Դրա նախապայմանն է ամբողջ հոգով, սրտով և գորությամբ սիրելը և ըստ այնմ նվիրումով, հետևողականությամբ և հմտությամբ ծառայելը հայ ազգին՝ անմահ հոգու պարտքի հավիտենական պատասխանատվությամբ Աստուծո առաջ:

Հայ՛ մարդ, այս ճշմարտությունը բխում է քո հայրերի հավատամքից և

դրանից բխող ու դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունից (ՀԱԳ): Դա միակ ճշմարտությունն է: Ուրիշ ճշմարտություն մի՛ փնտրիր, չե՛ս գտնի, այլ կգտնես միայն կեղծը, որը ոչ թե լույս և կյանք, այլ խավար և մահ է քեզ համար: Բայց դու ընտրիր լույսը և կյանքը: Դրա համար նայի՛ր խաչին ու չե՛ս սխալվի, կգտնես՝ ՀԱԳ-ը՝ հայ կյանքի փարոսը:

Մեր հավատքի սիրով, հարատև և հետևողական նվիրումով ու դրա արդյունք բարձրագույն հմտությամբ և ջանասիրությամբ ազգին ծառայելն սկսվում է մեր կերպարի, նկարագրի, մտածելակերպի, վերաբերմունքի ու արարքների ազնվացմամբ, ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության:

Շաբաթ, 4-ը նոյեմբերի, 2006 թ.,

առավոտյան ժամը 6:50

ՄՏՔԵՐ

(դիտելով CNN-ի մի ծրագիր)

«Փչացած (խաթարված) կառավարություն» խորագրի տակ CNN-ը 2006թ. հոկտեմբերի վերջից մինչև նոյեմբերի սկիզբը օրական մի քանի անգամ հաղորդումներ հեռարձակեց ԱՄՆ-ի գործադիր ու օրենսդիր իշխանությունների որոշակի գործունեության և խնդիրների մասին՝ վկայակոչելով այդ իշխանությունների պատասխանատու պաշտոնեության ներկայացուցիչների, ներառյալ՝ նախկին սենատորների և Ներկայացուցիչների պալատի անդամների...

Ներկայացուցիչների պալատի մի ներկայացուցիչ՝ Կոնգրեսում պաշտոնավարության ընթացքում ձեռք բերած արտակարգ փորձառության մասին հաղորդման մեջ, երբ բացատրվում էր «լոբբինգի», կոնգրեսմենների ընտրարշավների և ընդհանրապես Վաշինգտոնի քաղաքական խոհանոցի մասին, դերակատարներից մեկն իր ելույթի ժամանակ բացականչեց. «*I am a Ronald Reagan Republican*» (Ես Ռոնալդ Ռեյգանի տեսակի հանրապետական եմ)...

Օրինակս ի՞նչ կցուցանե: Կցուցանե մի բան, մի օրինակ, որի մասին հավանաբար օգտակար կլինի մտածել:

Հետո նորից մտածել, հիշել մեր գոյավիճակը, արածներն ու անելիքները և եզրակացություններ անել ու ծրագրել, բացատրել, խորհրդակցել և գործել, գործել հարատևորեն, մինչև խնդիրը կատարվի, հետո անցնել հաջորդ խնդիրների կատարմանը: Եվ կատարել ո՛չ միայն հաջորդաբար, այլև զուգահեռ:

Ու նաև մտածել, ըստ հարկի հայտարարել և ըստ այնմ դարձյալ մտածել և վերաբերմունք ցույց տալ, գործել, սակայն որպես ըստ ո՞ր հայ անձնավորության: Հետևենք ո՞ւմ օրինակին: Եվ մենք, մեր հերթին ո՞ւմ համար, ինչպիսի՞

օրինակ ծառայենք... ինչո՞ւ, որ ի՞նչ լինի:

Մի՞թե չարժե մտածել այն մասին, թե մենք ո՞ր տեսակի հանրապետականներ, դաշնակցականներ և այլն, և այլն «-ականներ» ենք: Բայց, ամենաէականը, մտածենք, թե ո՞ր տեսակի հայ ենք: Եվ ինչպիսի՞ օրինակ ենք ծառայում մեր կուսակիցների, մեր համաքաղաքացիների, հայրենակիցների, մեր տղաների, աղջիկների, թոռների և ընդհանրապես նոր սերնդի և սերունդների համար:

Հայոց պատմության՝ մեր ապրած ժամանակաշրջանի տողերն ի՞նչ բովանդակությամբ են գրվելու... գրվելու են դառն ու անոթալի՞ բովանդակությամբ, թե՞... թե՞ հոգու պարտքի կատարման բովանդակության զգացումով, գիտակցությամբ ու համոզմունքով, որ մեր հաջորդները հպարտություն զգան, ուզենան սովորել դրանից ու այդ ոգով, այդ գիտակցությամբ ու այդ փորձառությամբ ապրեն և գործեն ազգի, հայրենիքի և պետության վերելքի համար, հօգուտ նաև մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության, մեր հավատքի:

Մտածենք այս մասին: Նորի՞ց մտածենք, հաղորդակցենք, բացատրենք, քննարկենք, որոշենք, ծրագրենք, նորի՞ց խորհրդակցենք, ստուգենք և գործենք, գործենք ու գործենք հավատքով, հույսով և սիրով հանդեպ մեր ազգի, մարդկության ու Աստուծո:

Եվ փառք Նրան այժմ, միշտ ու ամեն ինչում...

Շաբաթ, 18-ը նոյեմբերի, 2006 թ., ժամը 9:53

(իմ տարեդարձի օրը)

ԳԱՂԱՓԱՐԻ ԱԿՈՒՆՔՆ ԷԱԿԱՆ Է

Կա գաղափար չար, որից ծնվում է նպատակ չար և տարբեր միջոցներով գործադրվում է չարիք, որը ոչ միշտ է երևում, զոհն սկզբում:

Եվ այդ միջոցների գործադրումն ունի նախնական չար գաղափարից ծնվող իր գաղափարախոսությունը և կատարվում է դրանից բխող նպատակներով ու միջոցներով...

Բայց դրա դեմ կա դիմադրություն բարի՝ Ավետարանով, որ ասում է. «*Հսկեցե՛ք, արթո՛ւն կացե՛ք, քաջ եղե՛ք, զորացե՛ք, ձեր ամեն ինչը թող սիրով լինի*»:

Բարու գործադրումն իր կողմից ունի նախնական բարի գաղափարից ծնվող իր գաղափարախոսությունը, որն Ավետարանի հավատքով է և կատարվում է դրանից բխող նպատակներով և միջոցներով:

Այդ դեպքում՝

հավասքը՝ վահան և զգոնություն,

նղասակը՝ հաղթանակ և կյանք, իսկ

միջոցը՝ քաջություն և նվիրում:

Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ), որը մեր քրիստոնեական

հավատքից է բխում և նրա վրա է հիմնված, ծնունդ է հուսալի, երաշխավորված ու օրհնյալ վահան, զգոնություն ու նաև միջոց՝ քաջություն, նվիրում, որոնցով կերտվում է նպատակ, հաղթանակ ու կյանք: Կյանք՝ իմաստավորված, իրական և հավերժական...

Հայ մարդ, ՀԱԳ-ով դու նախևառաջ սիրելի ես Աստուծո համար: Հետևապես՝

- Ունես Նրա խաղաղությունը, որ ամեն բանից վեր է.

- Ունես Նրա իմաստնությունը, գիտությունը, որ ամեն ինչ է, ինչ որ բարի է.

- Ունես Նրա կարողությունը, որ ամենագոր է և կատարում է Նրա գործը, որ իմաստավորում է քո գոյությունը ու դրանով՝ Որդի ես Արարիչ Հոր և ժառանգորդ Նրա Թագավորության:

Հավատա՛ և կապրես:

Ուրբաթ, 15-ը դեկտեմբերի, 2006 թ., ժամը 23:40

ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄՏՔԵՐԻ ԵՎ ՄՐՏԵՐԻ ՎՐԱ

Շա՛տ է խոսվել անձնական ու ազգային շահերի և դրանց համար գործադրվող ճնշումների ու պայքարների մասին: Վերջին տարիներին հարածունորեն խոսվում է գլոբալացման մասին, թեև միշտ չի կարելի վստահ լինել, որ բոլոր խոսողներն ու լսողները հասկանում են գլոբալացման իմաստը, նպատակը, դրա իրագործման միջոցները և մանավանդ հետևանքը, խոսվում է շատ կարևոր նպատակների իրագործման գործընթացների ու երևույթների մասին, բայց դրանց մեջ շատ չի լսվում մարդու, հավաքականության, ազգի և մարդկության մտքի և սրտի տիրապետության մասին...

Զի խոսվում նաև մեզ համար շատ էական հարցի մասին, թե ո՞վ է ձգտում տիրել կամ արդե՞ն իսկ տիրո՞ւմ է հայ մարդու, հայ հասարակության ու ազգի, հատկապես նոր սերնդի մտքին և սրտին:

Ո՞ւմ նախահարձակման կամ այս կամ այն չափով արդե՞ն իսկ տիրապետության ենթակա են ՀՀ բնակչության մտքերն ու սրտերը:

Կա՞ նպատակ, ձգտում և գործունեություն՝ նվաճելու, հպատակեցնելու, տիրելու հայի միտքն ու սիրտը:

Եթե այո, ո՞ւմ նպատակն է այդ, ինչո՞ւ և ինչպե՞ս է գործադրվում (մեթոդ, միջոց և այլն):

Մի հարց էլ՝ ուրիշ կողմից: Կարո՞ղ է անձի, հասարակության, ազգի միտքն ու սիրտը լրիվ, բացարձակ ազատ ու անկախ լինել՝ չազդվել, չենթարկվել, չընկնել որևէ ազդեցության տակ, այն էլ խո՛րթ ազդեցության:

Ըստ երևույթին, ո՛չ, սակայն խոսքը վերաբերում է ոչ միայն բացարձակ ենթակայության հարցին, այլև ո՞ր տեղին, ինչի՞ն ենթակա լինելուն: Երևի անհնար է, որ մարդկային հասարակության մաս կազմող անհատը,

հավաքականությունը, ազգը չառնչվի համամարդկային կյանքի գործընթացներին, զարգացումներին, նորություններին, մանավանդ տեղեկատվական հեղափոխության այս դարաշրջանում: Բայց եթե կա նորություն, դա չի նշանակում, թե պետք է անխտիր ամեն ինչի վրա ու ամբողջությամբ տարածել այդ նորույթը, ինչպես ամեն ինչ չէ, որ ուտում ու խմում ենք, նույնիսկ խիստ քաղցի կամ ծարավի դեպքում:

Մեր ազգային աշխարհիկ և հոգևոր իշխանություններին անմիջականորեն վերաբերվող էական հարցերից է, թե ո՞վ պետք է և կարող է ազդել, ո՞վ պետք է և կարող է տիրել հայ մտքին և սրտին:

Մինչդեռ պարզից էլ պարզ է, որ հայ մտքի և սրտի վրա պետք է տիրեն հայկականության տոհմիկ գաղափարը, խիղճը և բարոյականությունը, սակայն արդյո՞ք դա այդպես է այսօր: Եվ ոչ պակաս կարևոր հարց է նաև, թե վաղվա հայ մտքի և սրտի տիրակալները կամ վերահսկողներն ովքե՞ր կարող են լինել և պետք է լինեն, որպեսզի այդ տիրակալությունը, վերահսկողությունը չհակասի, այլ լրացնի ու առավել կենսունակացնի հայի միտքն ու սիրտը:

Ըստ երևույթին, այդ տիրակալները նախ՝ պետք է հայկականությանը խորթ ու օտար չլինեն ու երկրորդ՝ օժտված լինեն, կարճ ասած, ազգի հոգևոր, գաղափարական և բարոյական տոհմիկ նույն որակական հատկություններով...

Պետք է օժտված լինեն, իսկ եթե չկա՞ն հայ իրականության մեջ այնպիսիները, որ այդպիսին լինեն...

- Խնդրենք Աստծուն, որ Սուրբ Հոգով ծնունդ տա այդպիսիներին:

Ուրեմն՝ մնում է խնդրել Աստծուց շնորհ՝ հաղորդվելու համար իր պարզևած մեր տոհմիկ մտքին և սրտին, որ ապրենք և գործենք դրանով կյանքի բոլոր հանգրվաններում՝ ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության:

Այս երևույթի, այս խնդրի ու այս պահանջի հստակեցումը և բավարարումը մեր մարդկային ու ազգային կյանքի, գործի և պայքարի կարևորագույն ասպարեզներից է, որտեղ պետք է հաղթենք: Հաղթենք, որպեսզի կարողանանք մեր մարդկային ու ազգային ինքնությունն անաղարտ պահել կամ ըստ հարկի վերակերտել ու վերականգնել ու ապրել ազատ, ապահով, պատվավոր և բարեկեցիկ կյանքով:

Աստուծո օգնությամբ:

ԻՆՉՈ՞Ւ ԶՈՒՆԵՆՔ ԵՎ ԻՆՉՊԵ՞Ս ՈՒՆԵՆԱԼՔ

Ազգովին այս նեղ վիճակում եմք, որովհետև չունենք...

Զունենք, որովհետև չի՛ տրված:

Զի տրված, որովհետև չենք ուզել, խնդրել:

Ուրեմն՝ չի՛ տրված, որովհետև չենք ուզել...

- Ինչպե՞ս ուզել, խնդրել...

- Հավատքով աղոթելով:

Կարո՞ղ եմք խնդրել, աղոթել հավատքով: Թե՞ դա շատ դժվար է: Ի՞նչն է դժվար՝ խնդրելը աղոթքով քո երկնային Հո՞րը:

Բայց ինչո՞ւ է դժվար, որովհետև մեծամի՞տ ես: Բայց չէ՞ որ դու այնքան մարդու ես խնդրել և խնդրում ես շատ անցողիկ բաների համար ու հազի՛վ թե միշտ ստանում ես խնդրածդ...

Կամ չես խնդրում, որովհետև չե՞ս հավատում Նրան, Ում որ պետք է խնդրես: Ուրեմն՝ չե՛ս հավատում, նախ՝ որ Նա կա՛, երկրորդ՝ որ Նա քեզ լսո՛ւմ է, երրորդ՝ որ կարո՞ղ է կատարել խնդրանքներդ:

Զե՞ս հավատում Նրան, բայց այդ դեպքում ո՞ւմ և ինչի՞ն ես հավատում, որ կարող է տալ՝ ինչ որ պետք է կյանքիդ համար, և պաշտպանի ամեն ինչից, որ վնասակար, կորստաբեր է կյանքիդ համար, այժմ ու հավիտյանս...

Խելո՛ք եղիր... Քո նախնիք քեզնից խելոք էին շա՛տ ավելի... նմանվի՛ր նրանց: Խնդրի՛ր, որ շնորհ ստանաս և նմանվես, որ կյանքդ ապրես աղոթքով և հավատքի գործերով, ինչպես նրանք՝ մեր ազգի մեծերը...

Հինգշաբթի, 5-ը ապրիլի, 2007 թ., Գլենդել,
առավոտյան ժամը 6:10

Ո՞Վ ՊԵՏՔ Է ԱՄԱԶԻ

Ասվում է. ես ուսյալ եմ, գիտուն եմ և ունեմ այնպիսի՛ պաշտոն, որ կարիք չունեմ և ինձ հարմար չէ՛, վայել չէ՛ հաճախել եկեղեցի, հետևել կրոնի և հավատալ Աստծուն և Հիսուս Քրիստոսին՝ որպես հավիտենական Տիրոջ և Փրկչի:

Ի՛նչ ամբարտավանություն, ի՛նչ տգիտություն և ի՛նչ մեծ թշվառություն անձի, ազգի և պետության, նաև մարդկության համար, երբ մարդիկ այդպիսի մտքերով են համակված...

Զգո՛ւյշ եղիր, հա՛յ մարդ, հա՛յ ազգ և պետություն: Զգո՛ւյշ եղիր, որ քո սուրբ նախնյաց Աստվածային շնորհով տրված հավատքի ժառանգությանդ մեջ տարակուսյսի որդը չարի միջոցով չսպրդի և չտապալի հավատքիդ կաղնին:

* * *

31-ը հունվարի, 2008 թ., գիշեր

Հայությունն, հայ ազգ, հայեր, զգո՛ւյշ:

Հսկեցե՛ք, հաստատո՛ւն մնացեք հավատքի մեջ, քա՛ջ եղեք, զորացե՛ք, ձեր ամեն ինչը թող սիրով լինի...

Հայի հիմնական, էական կարգախոսը, ուղղությունը և ընթացքը դա հավատարմությունն է Աստծուն, այն է՝ հավատքի ապրում՝ Ավետարանով և խաչով, Աստուծո պատգամներով և հավատքից բխող ու դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ:

- Այս է հիմքը հայկականության, այս է փրկությունը հայկականության, այսինքն՝ հայ ազգի, Հայաստանի և պետականության: Եվ այս է հայ մարդու փառքը, վերելքը և կյանքը հայկական՝ այսօր և հավիտյանս:

* * *

Ի՛նչ փառավոր հրապարակ ունենք մեր մայրաքաղաքում՝ շրջապատված հոյակապ շենքերով... Ի՛նչ բարձրարժեք քաղաքաշինական նախագիծ... և մենք արձան ենք կանգնեցնում ու փառավորում ենք մեր հանճարեղ ճարտարապետին, ուսումնասիրում նրա գործերը, սովորում նրանից ու հետևում նրա խորհուրդներին... Եվ շատ ճի՛շտ ենք անում, լավ ենք անում, որովհետև նա արժանի է դրան և մեզ համար պատիվ է ու օգտակար այդ անելը...

Սակայն բարձրացնենք մեր հայացքը մի քիչ ավելի և նայենք դեպի երկինք՝ տիեզերական կառույցը... արևն ու աստղերը, դրանց շարժումն ու հավասարակշռումը...

Ո՞վ է նախագծել, ստեղծել և կյանքի կոչել տիեզերքը, ժամանակը և մեր աշխարհը՝ օդը, հողը, ջուրը, և լուսավորել ու ջերմացրել դրանք: Ո՞ւմ ստեղծածն է այն, ո՞ր համակարգիչներով է հաշվարկվել դրանց ստեղծումն ու փոխկապվածությունը և փոխազդեցության հավասարակշռությունը. ու նաև ամբողջ բուսական և կենդանական կյանքը, մի փոքր հունդի մեծ ծառ դառնալը և դրա պտուղների կենսահյութով քո ստամոքսից՝ արյանդ հոսքով մարմնիդ միլիարդավոր բջիջները սնելը՝ ներառյալ ուղեղիդ բջիջները, որ մտածես ու հասկանաս, թե ո՞վ ես, որտեղի՞ց ես գալիս և ո՞ւր ես գնում, անպայման գնում ու պիտի՞ գնաս, և քո իսկական եսը հողի տակ չպիտի՞ մնա... Բայց այս հարցերի հարցն այն է, թե ի՞նչ վիճակում, ի՞նչ «կարգավիճակով», ո՞ւր պիտի գնաս: Դրա համար մի՞թե պետք չէ ուղեղիդ նեղություն տալ, որ մտածի և գտնի պատասխանները... բարի լույսի և բարի հույսի պատասխանները, այլ ոչ թե չար խավարի հուսահատ պատասխանները, որոնք պատվում են ուղեղիդ մեջ և լեզվիդ վրա են ու, ըստ այնմ, քո վարքն ու բարքն են արտահայտում այս շահտ կարճ, այս ակնթարթային, ունայն կյանքում...

* * *

Էջմիածին, որ հիանում ես ակադեմիականների գիտությամբ, սո՛ւրբ եղիր, քանզի կերտվածքդ և կոչումդ սո՛ւրբ է: Այդպիսին էլ պետք է լինի նպատակդ, վարքդ և զործդ... Դու ունես ավելի՛ մեծ գիտություն, քո ունեցածը գերգիտություն է, որից պետք է թե՛ բեղմնավորվի և թե՛ սովորի ակադեմիական գիտությունը, որպեսզի պտղաբեր դառնա...

Դու հիանում ես շինծու, ժամանակավոր, անցողիկ գիտությամբ, երբ իրական, իսկական ու հավերժ գիտությունը քո մեջ է, նույնպես և մարդ-հայի բուժման ու հավերժացման գիտությունը: Լուսավորի՛ր, բուժի՛ր և կյանք տուր բոլորիս... որ դո՛ւ էլ ունենաս:

Ասված է՝ բարձրացի՛ր և բարձրացրո՛ւ: Առանց որևէ մեկին նեղացնելու բանանք մեր բերաններն ու ասեմք՝ զարթնի՛ր և զարթնեցրո՛ւ, Սո՛ւրբ Էջմիածին: Եվ ների՛ր մեզ, մեր այս համարձակության համար, որ դո՛ւ էլ ներվես: Որ քո՛ կյանքով հայ ազգն էլ կյանք ունենա քրիստոնեավայել՝ Աստվածասեր ու Աստվածահաճո իր երկիր Չայաստանով և պետությամբ, ի բարօրություն նաև բոլոր՝ ազգերի և ի փառս Սուրբ Երրորդության:

Ամեն:

Երեքշաբթի, 23-ը ապրիլի, 2007 թ., Վաշինգտոն,
առավոտյան ժամը 10:00

ՉԿԱ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ` ՉԿԱ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

Այո՛, առանց արդարության ազգերի միջև չի՛ կարող լինել խաղաղություն: Առանց արդարության խաղաղությունը գերեզմանային, անկեղծան, անկենսունակ խաղաղություն է՝ լի լռելյայն հակամարտությամբ ու աներևույթ ավերումներով: Իսկ կողմերի միջև արդարության հաստատումը պայմանավորված է նաև ճի՛շտ, իրական պատմությամբ, անխարդախ, չնենգափոխված, գիտական ու չքաղաքականացված պատմությամբ...

19-րդ դարում միջազգայնացած Չայկական հարցը այժմ չի՛ հիշատակվում (հետևապես և չի՛ լուծվում), բայց ո՛չ թե նրա համար, որ հարցն սպառված և հանված է միջազգային օրակարգից, այլ՝ որովհետև հայկական հարցը պատմազրկված, չարաշահված և ուրացված է արդարության «ջատագովների» և խաղաղության «երաշխավորների» կողմից:

Իսկ դա, անարդար լինելով, դե՛մ է խաղաղությանը...

Որպեսզի այդպես չլինի, միջազգային հարաբերություններում պետք է տիրի մաքուր, ուղիղ ու արդար սիրտ և միտք՝ հավատքով հավիտենական ու պատասխանատվության երկյուղով:

Այս միտքը միամիտ ու անհրակա՞մ է թվում:

Ճիշտ է, անհրակա՛ն է, սակայն անհրակա՛ն մարդկանց, անհրակա՛ն կյանքի համար: Եվ այդ կյանքը չի՛ կարող տևական լինել ու իրակա՛ն երևալ: Կեղծը, թերին չեն՛ կարող ճշմարիտի և կատարյալի փոխարեն հարատևել: Չեն՛ կարող, որովհետև... Աշխարհը շուռ կգա, կկործանվի...

Բայց արդարներն ապրելու են այժմ և հավիտյանս: Նրանց կյանքը երաշխավորված է անանց իրավունքի գորությանը...

Ինչի՞ վրա է հիմնված այս հաստատումը:

Հիմնված է մեր քրիստոնեական հավատքի և դրանից բխող Հայ Ազգային Գաղափարախոսության վրա, որ Աստված շնորհել է հայ ազգին: Հավատք, գաղափար և բարոյականություն՝ էությունը հայկականության ու երաշխիքը նրա հարատևության ու վերելքի...

Հավատա՛ և կփրկվես:

27-ը ապրիլի, 2007 թ., Սպրինգֆիլդ, Վիրջինիա,
առավոտյան ժամը 9:30

ՀԱՅ ՄԱՐԴՈՒ ՀԱՅԱՑՔԸ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՆԴԵՊ ԵՎ ԵՐԵՔ

«ԱՅՈՒ»-ՆԵՐ

- Ի՞նչ է մեր եկեղեցին: Հայ հավատացյալի աղոթքի տո՞ւնը, Աստուծո տո՞ւնը:

- Այո՛:

- Ուրիշ ի՞նչ է եկեղեցին, բացի վայր լինելուց նաև կազմակերպական կառո՞ւյց է:

- Այո՛:

- Ո՞րն է կառույցի՝ Հայաստանյան Սուրբ եկեղեցու հիմնական նպատակը և գործը, որ պետք է կատարի: Կարելի՞ է ասել, որ եկեղեցու հիմնական նպատակը և գործն Աստուծո հավատքի ուսուցումն է՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ավետարանով և խաչով, ու այդ հավատքի՝ որպես կյանքի ապրումի կազմակերպումը՝ առ ի փրկություն... Եվ եթե եկեղեցին՝ որպես կառույց, այս նպատակը և գործն ամբողջապես չի՛ կատարում, անկախ նրանից, թե ուրիշ ինչ է անում, կարելի՞ է համարել, որ իր կոչումի ամբողջական տերը չէ և իր պարտականությունը թերի է կատարում...

- Այո՛:

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐ

Շատ հաճախ հայերը համեմատում են հայությանն ու հրեությանը և նրանց օգտակարությունն իրենց ազգին, հայրենիքին և պետությանը: Շատ կարծիքներ կան, որոնք հիմնականում հանգում են այն եզրակացությանը, որ մեծ տարբերություն կա երկու ժողովուրդների կարողությունների և դրանցով իրենց ազգին, հայրենիքին և պետությանը նպաստելու մեջ:

Ինչո՞ւ գոյություն ունի այդ տարբերությունը: Ինչո՞ւ հրեաների ջանքերը և նպաստն իրենց ազգին, երկրին ու պետությանն ավելի մեծ ու արդյունավետ են, քան մեր՝ հայերիս:

Նախ նշենք, որ այդ տարբերությունը մեծ չէր 19-րդ դարում և դրանից առաջ: Այդ տարբերությունը հաճախ նույնիսկ հոգուտ հայերի էր...

Ինչ վերաբերում է 20-րդ դարում ու այժմ գոյություն ունեցող՝ հոգուտ հրեության տարբերության պատճառներին՝ մեր ըմբռնումով դրանք հիմնականում երեքն են.

1. Հրեաների մեծ մասի ազգային պարտաճանաչությունը և երկրին ու պետությանը ծառայությունը բխում է իրենց հավատքից և հոգու պարտք է համարվում (դրա համար, իհարկե, պետք է հավատք՝ հոգու առկայության և նրա անմահ լինելու նկատմամբ):

2. Հրեաների մեծ մասը հավատում է, որ հոգու պարտքի կատարմամբ պայմանավորված է հավիտենական կյանքին իրենց արժանանալը:

3. Հրեաների մեծ մասը հավատք և վստահություն ունի, որ ազգի և պետության համար իրենց տրամադրած միջոցները, ջանքերն ու աջակցությունը հավատարիմ մարդիկ են տնօրինում, ովքեր ժամանակին, լրիվ ու ամենայն արդյունավետությամբ դրանք ծառայեցնում են իրենց բոլորի համար նվիրական նպատակներին:

Այդ երեք պատճառների առումով ազգի նկատմամբ հայության՝ նախկինում ունեցած նվիրումն ու ներդրումը նույնիսկ ավելի բարձր մակարդակի էր, որը հետո՝ 1918-20 թվականներին, սկսեց արտահայտվել նաև նորաստեղծ պետության՝ Հայաստանի Հանրապետության նկատմամբ: Մենք ինչ-որ չափով զիջում էինք միայն 3-րդ կետով, որի ուղղումը, սակայն, միայն ժամանակի հարց է, եթե առկա է 1-ին և 2-րդ կետերի համապատասխան մակարդակը:

Մեր ըմբռնմամբ՝ սրանք են տարբերության հիմնական պատճառները: Կարո՞ղ ենք գիտակցություն, կամք և հետևողականություն ունենալ հոգուտ մեզ փոխելու տարբերությունը՝ հոգուտ մեզ դարձնելով պատճառները: Սա ավելի կարևոր խնդիր է, քան շատ այլ խնդիրներ, որոնց անդրադառնալը մեր կողմից այսօր առաջնահերթություն է համարվում:

Երեքշաբթի, 14-ը օգոստոսի, 2007 թ.,
առավոտյան ժամը 5:45

ՀԱՅ ՄԱՐԴՈՒ ՄԱՍԻՆ

(Նվիրվում է նորածին արեգնական մանչուկներին)

Ո՞րն է 21-րդ դարի հայ մարդու կերպարը, նկարագիրը, հոգեբանությունը, հետևապես և կյանքի ընկալումը, արժևորումը և ըստ այնմ իր ձգտումը:

Ո՞ր հավատամքի, ո՞ր գաղափարի և ո՞ր բարոյական արժեհամակարգի վրա է կազմավորվում, ապրում և կերտում հայ մարդը, հայությունը, ինչո՞ւ, ինչի՞ համար, իղձն ու նպատակն ի՞նչ է...

Ո՞վ է կերտում 21-րդ դարի հայ մարդու կերպարը, նկարագիրը և բարոյական արժեհամակարգը...

Իսկ ո՞վ պետք է կերտի...

Ինչպե՞ս պետք է կերտի, ինչի՞ հիման վրա պիտի կերտվի...

Ո՞ր դպրոցն է սովորեցնում այս պահանջի և խնդրի կատարումը: Ովքե՞ր են ուսուցիչները, որո՞նք են դասագրքերը, ովքե՞ր են սովորեցնողները, որոնցից պիտի սովորեն երեկ ծնված հայ տղան ու աղջիկը... Եվ այն տղան, որ լսեցի, թե ծնվեց օտար երկրի այդ մեծ մայրաքաղաքում... Աստված պահի նրան և մեր բոլոր անմեղ նորածիններին: Եվ Աստված գթա և շնորհք ու կարողություն տա նրանց ծնողներին, դաստիարակներին ու ազգի մեծերին...

Փա՛ռք Քեզ, Աստվա՛ծ, որ կանք:

Շնորհակա՛լ ենք, որ մեզ պահել ես և պաշտպանում ես, թեև մեծ մասամբ մենք խոտորվել ու անարժան ենք...

Շնորհակա՛լ ենք, որ մեզ հույս ես տվել, և դրանով ապրել ու ապրում ենք:

Մեր հույսը Քո բարությունն է և Քո ամենակալ արդարությունն ու զորությունը Քո Միածին Որդով, որ պարզևեցիր մարդկությանը զոհաբերությամբ: Որ ապրենք Նրա հավատքով, հույսով և սիրով Քեզ համար, մարդկության համար և մեր ազգի ու հայրենիքի համար, որը կարող ենք անել Քո Որդու հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության ճանաչմամբ, ընդունմամբ և կիրառմամբ:

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆ

ԸՍՏ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ

Ինչպե՞ս ազատ լինես: Ինչպե՞ս ձեռք բերես, պահպանես ու օգտագործես այն, այսինքն՝ ապրես ազատ՝ ազատության մեջ:

- Սակայն նախ՝ ի՞նչ է ազատությունը:

- Ազատությունը մարդ էակի գոյության, զարգացման ու երջանկության թթվածինն է: Այն Աստուծո պարգևն է մարդուն և ունի Աստվածային բովանդակություն:

- Ինչպե՞ս կարելի է ազատ լինել, ազատություն ունենալ:

- Ազատ կարելի է լինել՝ ճանաչելով ճշմարտությունը:

- Ազատության հետ ի՞նչ կապ ունի ճշմարտությունը:

- Ամենաուղիղ կապն ունի: Առանց ճշմարտության չկա՝ ազատություն: Առանց ճշմարտությունը ճանաչելու չես՝ ճանաչի իրական-ճշմարիտ ազատությունը, հետևապես և չես ունենա այն:

- Ո՞ր ճշմարտությունը, ի՞նչ ճշմարտություն: Ի՞նչ է ճշմարտությունը:

- Հիսուս Քրիստոսի Աստվածությունն է ճշմարտությունը, որը կարելի է ճանաչել՝ հավատալով Հիսուս Քրիստոսի Հարությանը՝ Աստուծո շնորհով: Առանց այդ հավատքի չկա՝ ճշմարտություն, հետևապես և՝ ազատություն:

- Պատմության ընթացքում ու նաև ներկայումս առանց Քրիստոսի հավատքի չի՞ եղել և չկա՞ ազատություն:

- Ո՛չ, չի՛ եղել և չի՛ էլ լինելու, երբեք, բացի ազատության պատրանքից, բացի խաբուսիկ, կեղծ ազատությունից, որը դավադիր է, խարդախ և գերող, այլասերող և ստրկացնող...

- Ուրե՞մն: Ի՞նչ է ստացվում... Մինչև հիմա այսքան շատ կողմերից այսքան շատ պայքարները, կարգախոսները, քարոզները, տեսություններն ազատության մասին սուտ ու ապարդյո՞ւն են:

- Այո՛: Սուտ, ապարդյուն ու ինչպես ասվեց՝ նաև խարդախ, դավադիր, այլասերող և կործանարար են՝ ստրկացմամբ հոգու, մտքի և գոյի:

- Ես ուզում եմ ազատ լինել: Ի՞նչ անեմ, ինչպե՞ս:

- Ճանաչի՛ր ճշմարտությունը՝ Աստվածորդուն՝ Նրա Ավետարանով և խաչով: Կարդա՛ Ավետարանը մեկ, տասը, քսան... Ամբողջ կյանքիդ ընթացքում, ամեն օր:

Ինչպե՞ս կարդաս. մանուկի պես՝ անմեղ միամտությամբ և վստահությամբ, հեզությամբ ու խոնարհությամբ: Երբեք չապավինես քո խելքին, գիտությանը, այլ ապավինի՛ր Աստուծո բարությանը, ողորմությանը:

Եվ էական է, որ աղոթես Աստուծուն, խնդրես Նրա ողորմությունը: Եվ որպես

մանուկ՝ մաքուր, պարզ ու անկեղծ սրտով և մտքով Ավետարանը կարդալիս, սերտելիս, ինչպես ամենօրյա հաց ու ջուր, Աստված կբացի հոգուդ աչքերն ու լսողությունդ, և կտեսնես, կլսես, կհասկանաս Աստվածորդու պատգամները, կհաղորդվես Աստվածային Արարչական բնությանը և կճանաչես ճշմարտությունը: Այսինքն՝ վրադ կգա Աստուծո շնորհը, և կհավատաս Նրա Որդուն ու կլինես ԱԶԱՏ:

Դարձյալ, Հիսուս Քրիստոսի՝ որպես Աստվածորդու Հարությանը հավատալը ճշմարտության ճանաչում ու ազատ լինել է: Եվ դա Աստուծո շնորհն ու պարգևն է մարդուն, որ կյանք է երկրում ու երկնքում, այժմ և հավիտյանս:

1700 տարի առաջ հայ մարդն ազգովին և պետականորեն ստացավ Աստուծո հավերժական Շնորհով Հիսուս Քրիստոսի հավատքն ու ազատվեց հավիտենապես: Դրա համար է, որ հայկականությանը հավատարիմ հայի հոգին երբեք չստրկացավ, ստրկություն չապրեց, նույնիսկ երբ ֆիզիկապես իր կացությունը, երբեմն նաև միտքը ստրկացավ:

Այս իմաստով, առավել պարզաբանման համար, հավանաբար, նպատակահարմար կլինի անդրադառնալ ՀԱՅՔ հաստատության թիվ 3 տեղեկագրում (մարտ, 1991թ.) տպագրված «Ահազանգ» հոդվածին, ուր մասնավորապես ասված է.

«...Որովհետև ստրկական վիճակը՝ իբրև ազգային, քաղաքական, ընկերային և տնտեսական կարգավիճակ, դեռ ի գորու չէ բացարձակապես ստրկացնելու անձը և հասարակությունը. իրական, բացարձակ ստրկությունն սկսվում է ստրկամտությունից և ավարտվում է ստրկահոգությամբ: Անձն ազատ է, եթե ստրուկ չէ հոգին: Ազատ հոգին, իր հերթին, հզոր գործոն է ստրկացած մտքի ազատագրման համար, իսկ երբ ազատ է նաև միտքը, անձի կամ ազգի ստրկական կարգավիճակը դառնում է ժամանակավոր, ու լիակատար ազատագրումը՝ իր բոլոր հետևանքներով, ժամանակի հարց միայն»:

Միևնույն տրամաբանությամբ, բոլոր այն դեպքերում, երբ ստրկամտության ախտը, վարակելով միտքը, ախտահարում է և հոգին, ախտահարման աստիճանին համապատասխան նվազում և աստիճանաբար զրոյի է հավասարվում ազգի վարկամերժունակությունը (իմունիտետը)՝ ազատագրման հույսը: Ազատ կացությունը՝ ազատ մտքի, իսկ ազատ միտքը ազատ հոգու վրա կարող է հենվել միայն: Ուրեմն, վերջին հաշվով, ազատության հիմքն ու նախապայմանն ազատ հոգին է: Ազատ հոգու պահպանումը, փաստորեն, ազատ կեցության պահպանումն է, այսինքն՝ ազատության պահպանման կամ ձեռքբերման առաջնահերթ և կարևորագույն գործոնը: Ազատություն, որի առկայությամբ միայն կարելի է նվաճել ազգային կենսունակ պետականություն ստեղծելու իրավունքը և կարողությունը:

Իսկ ո՞րն է հոգու ազատության ակունքը: Պատասխանը դարձյալ մեկն է ու աներկբա՝ Հավատքը: Հավատքն Աստուծո նկատմամբ, Հավատքը

Նրա տիեզերական և հավիտենական ուժի նկատմամբ, Նրա բացարձակ արդարության, բարության, կատարելության նկատմամբ: Անմահ է այն անձը կամ ազգը, որի գոյությունը խարսխված է այս Հավատքի վրա: Նա ենթակա չէ հոգեկան ստրկացման, քանզի այդպիսի ստրկությունը Մահ է, վախճանը Գոյի՝ անհարիր Անմահության գաղափարին. իսկ Աստծո Հավատքով տոգորված կյանքն իրապես անվախճան է, քանզի դրա բովանդակությունն ազատ հոգին է: Հետևաբար, Աստծո Հավատքը կրող անձը կամ ազգն Ազատ Հոգի ունի. եթե Ազատ Հոգի ունի, ստրկություն չի կարող ճանաչել. եթե ստրկություն չի ճանաչում, Անմահ է նա:

Ահա թե ինչու են մեր նախահայրերը զոհվել-նահատակվել՝ ապրելու համար: Հավատո՞ւմ ենք դրան, հավատո՞ւմ ենք, որ Վարդանանք անմահ են, այսինքն՝ ապրում են իրական կյանքով՝ Տիեզերական ու Հավիտենական կատարելության կյանքով, և ոչ թե մեր մտապատկերներում սոսկ՝ գրական կերպարներ իբրև և կամ որպես քարոզչության միջոց: Եթե հավատում ենք սրան, ապա պետք է հավատանք նաև, որ Աստված շնորհեց նրանց այդ կյանքն իրենց Հավատքի միջոցով, որով կարողացան ազատ պահել Հոգին: Եվ այդ իսկ պահից Անմահ էին նրանք արդեն, քանզի մերժեցին ստրկությունը, այսինքն՝ մահը. Ազատ Հոգով ազատ պահեցին իրենց մտքերը. Ազատ Հոգու և Ազատ մտքի թելադրանքով ընդունեցին նրանք Գիտակցական-Իմացյալ մահը, այսինքն՝ իրաժարունը հոգևոր ստրկությունից, հետևաբար և Անմահությունը՝ ըստ Աստվածային Բնության, որ նրանք ճանաչեցին Հիսուս Քրիստոսի Ավետարանով և Խաչով:

Չե՞նք հավատում սրան, այդ դեպքում ո՞ւր է, հապա ո՞րն է ճշմարտությունը...

Չկա՛ այլ ճշմարտություն: Միակ էական, կենսատու և հավերժական ճշմարտությունը Հիսուս Քրիստոսի Աստվածությունն ու Հարությունն է՝ արտահայտված քրիստոնեական հավատամքով:

Ճանաչի՛ր քո հավատամքն ու ապրի՛ր դրանով, ո՛վ հայ մարդ, ինչպես նաև այդ հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ ու դրանց էությանը հարազատ՝ հայ տոհմիկ բարոյականությամբ, որ Աստվածահաճո կյանք ունենաք՝ դու, քո սերունդը և քո ազգը, այժմ և հավիտյանս:

Կիրակի, 3-ը փետրվարի, 2008 թ.,
առավոտյան ժամը 9:40

ՀԱՎԱՏՔԸ ԵՎ ՀԱՎԱՏԱՑՅԱԼԸ

Ի՞նչ է հավատքը, և ո՞վ է հավատացյալը:

Ավետարանն ասում է. «Հավատքը հուսացած բաների հաստատությունը և չերևացող բաների ապացույցն է» (Եբր. 11.1): Եվ մենք հասկանում ենք, որ հավատացող անձը՝ հավատացյալը, ընդունելով հավատքը, այսինքն՝ հավատքով հուսացված բաներն ընդունելով որպես հաստատուն իրողություն և չերևացող բաները՝ որպես ապացույց, ինքը՝ հավատացյալը, մաս է դառնում այդ հուսացվածին և չերևացողին: Այսինքն՝ հավատացյալը երկրային կյանքում արդեն մասնակցում և մասն է դառնում իր հուսացած երկնային հավիտեճական կյանքի՝ ապրելով իրեն չերևացած Աստուծո Արքայությունում:

Մեր Տերն ասում է. հավատա՛ և կփրկվես: Այսինքն՝ հավատքով դու այլ մարդ կդառնաս՝ կատարելության ձգտող, անհաղթ ու ապահով. ժամանակակից լեզվով ասած՝ իմաստուն, բարի, գեղեցիկ, զորեղ, ստեղծագործ և չարի որոգայթներից, նրա ոտնձգություններից ապահով ու անխոցելի:

Որովհետև հավատքով հավատացյալը դառնում է իր հավատացածի Բնությունից ու իր էությանը էպես փոխվում է. նա իր հավատացած խաչի լույսով դառնում այդ Լույսից...

Եվ երբ հավատացյալը կատարում է իր կյանքի սահմանադրության՝ Ավետարանի պատգամը՝ «Հաստատուն մնացեք հավատքի մեջ, քա՛ջ եղեք, զորացե՛ք, ձեր ամեն ինչը թող սիրով լինի», և սա իրեն ապրում է դարձնում, նա նմանվում է իր Տիրոջը, դառնում է Բարձրյալի որդի երկրային կյանքում: Եվ գաղափարախոսությունը, մեր դեպքում Հայ Ազգային Գաղափարախոսությունը, որը բխում է այդ հավատքից և հիմնված է դրա վրա, դառնում է այդ հավատքի քաղաքացիականացումը և քաղաքականացումը ու ըստ այնմ սահմանում է մարդկային-ազգային մեր Կենսաձևը և դրա բարոյական նորմերն ու ազգի բարոյական սահմանները, սահմանում է մեր ազգի ներքին ու արտաքին քաղաքականությունը ու նաև հասարակական, ընտանեկան ու ընկերական հարաբերությունները: Ու այդ բոլորով սահմանում է նաև մեր ազգային ուսուցման, դաստիարակության ու կրթության, ինչպես նաև գրականության, արվեստի և ընդհանրապես մշակույթի նպատակը, խնդիրները, որոնք ուղղված կլինեն կատարելու Ավետարանի հետևյալ պատգամը, որը մեր առաջնային պարտականությունն է, որ պետք է կատարենք Աստուծո օգնությամբ.

«Հաստատուն մնացեք հավատքի մեջ, քա՛ջ եղեք, զորացե՛ք, ձեր ամեն ինչը թող սիրով լինի»:

ԸՆՏՐՅԱԼ ԱԶԳ՝ ԱՐԱՐՄԱՄԲ

Հայ ազգը՝ որպես մարդկության հարազատ մասնիկ, ընտրվեց արարմամբ, այսինքն՝ Աստված հայ ազգն ընտրել է՝ արարելով, ստեղծելով...

Դրա համար մարդկային ցեղի մեջ Աստված հայի նաև ազգային էության Արարիչ Հայրն է. Հայր մեր, որ երկնքում ես...

Դրա համար մեր քրիստոնեական դավանանքով «Հավատում եմք մեկ Աստուծո՝ ամենակալ Հորը, երկնքի և երկրի, երևելիների ու աներևույթների Արարչին»:

Եվ մեկ Տեր Հիսուս Քրիստոսին՝ Աստուծո Որդուն՝ ծնված Հայր Աստծուց՝ Սիածին, այսինքն՝ Հոր էությունից...

Եվ Աստուծո հավատքը, պաշտամունքը, հավատամքը քաղաքացիականացավ և քաղաքականացավ՝ դառնալով Հայ Ազգային Գաղափարախոսություն (ՀԱԳ): Այսինքն՝ ՀԱԳ-ը մեր հավատամքի քաղաքացիականացումն ու քաղաքականացումն է. մեր պետական կյանքի, հասարակական հարաբերությունների և ներքին ու արտաքին քաղաքականության սկզբունքը և բարոյական արժեհամակարգի հիմքն է:

Դրա համար հայ ազգային պարունն ու պետական և հասարակական կյանքն Աստվածային քրիստոնեական պարունակություն ունեն: Այսինքն՝ ի բնե մարդասիրական, ժողովրդավարական, Աստվածապատգամ են:

Ճանաչի՛ր քեզ, հա՛յ մարդ...

Ապրի՛ր և գործի՛ր ըստ այնմ, որ Կյանք ունենաս, հա՛յ մարդ ...

Եվ մի՛շտ փառք տուր Սո՛ւրբ Երրորդությանը՝ Աստծուն, և ծառայի՛ր Նրան՝ ծառայելով ազգիդ՝ հայությանը՝ միշտ, ամենուր, ամեն ինչում՝ ըստ ՀԱԳ-ի, որ դո՛ւ էլ փառավորվես, այժմ և հավիտյանս:

ՍՐԲՈՒԹՅՈՒՆ

(Ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության)

Սուրբ ժողովուրդ, սուրբ հայրենիք, սուրբ պետություն. այս իրականությունն է վայել հայ ազգին, իսկ այս էական վիճակին հասնելու համար, որը մեծություն, զորություն ու երջանկություն կրերի, պետք է ձգտենք անհատապես ու ազգովի: Սակայն դրա համար հարկ է սրբացնել մեր սրտերը, մեր մտքերը և մեր հարաբերությունները՝ մեր ընտանիքներում, ընկերական շրջանակներում և հասարակության մեջ:

- Իսկ ի՞նչ է սրբությունը, ո՞վ է սուրբը:

- Չե՞նք փնտրել երբևէ դրա իմաստը բառարաններում և կամ մեր սուրբ նախնյաց գրվածքներում:

Սակայն նախքան այդ անելը, լսենք նաև, թե ինչ են ասում սրբության մասին մեր լեզվամտածողությունն ու առավել ևս՝ մեր սիրտը և խիղճը:

Սուրբը, սրբվածը մաքրվածն է ամեն վատից: Սրբությունն ընկալենք և գնահատենք սրտի գիտակցությամբ և խղճի դատողությամբ, որ Աստվածային ծագում ունեն և Նրա պարգևն են մարդուն:

Այդ բովանդակությամբ ու հասկացողությամբ սրբությունն առաջանում է նախևառաջ Աստուծո շնորհով, Նրա լույսով՝ ճշմարտությամբ՝ Քրիստոսի հավատքով: Եվ մնում ու արդյունք է տալիս Աստվածասիրությամբ՝ Աստուծո Խոսքը լսելով, մարդասիրությամբ՝ մերձավորին սիրելով (որ առաջին հերթին հայն է ու հետո՝ ամենայն մարդ), և Նրա կամքը, պատգամներն ու գործերը կատարելով:

Մարմինը, որ մեղքով է, մահին է պատկանում: Իսկ հոգին, որ հավատքով է, կյանքին է պատկանում՝ ըստ Աստվածային կանոնի, որ ճանաչում ենք Հիսուս Քրիստոսի Ավետարանի հավատքով, իմաստությամբ, գիտությամբ և խաչի շնորհով ու խորհրդով:

1700 տարի առաջ մեր ազգի՝ Աստուծո արդարության և զորության հանդեպ հավատքը սրբագործելով խաչապաշտությամբ՝ խաչի լույսը հայ ազգի մեջ սփռող Թարգմանչաց շարժման սրբերը մեր քրիստոնեական հավատքը քաղաքացիականացրին ու քաղաքականացրին՝ այդ հավատքի վրա հիմնելով Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ), որով դարերի ընթացքում առաջնորդվեցին հայ ազգն ու պետությունը (իսկ պետության բացակայության պարագաներում՝ այդ դերն ստանձնած հոգևոր և աշխարհիկ իշխանությունները):

Այժմ՝ 21-րդ դարասկզբին, հայությունից և պետությունից պահանջվում է հասարակական և պետական գործերը վարել այդ քաղաքացիականացմամբ, քաղաքականացմամբ և դրանք կյանքի ապրում դարձնելու անկեղծ ձգտումով և ջանքով՝ Հայ Ազգային Գաղափարախոսության ճանաչմամբ ու ընդունմամբ:

Աստուծո հավատքով իմաստավորված կյանքի ապրումը նշանակում է Աստծուն ծառայություն, որն ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության՝ կարելի է՝ ծառայելով ազգին՝ հայությանը, որպեսզի հայ ազգն էլ ծառայի Աստծուն՝ ծառայելով մարդկությանը, որպեսզի մարդկությունն էլ ծառայի Աստծուն՝ միշտ, ամենուր, ամեն ինչում:

ԻՄ ԱՍՏՎԱԾԸ՝ ԻՄ ՓՐԿԻՉԸ ԵՎ ԻՆՁ ԿՅԱՆՔ ՊԱՐԳԵՎՈՂԸ

*Ինչի՞ց է կախված,
 ինչո՞վ է տայմանավորված
 մարդու, ազգի վերելքն ու անկումը,
 մարդու և ազգի փառքն ու թշվառությունը:*

Մեր մեծերը, մեր Սուրբ նախնիք այդ հարցերը զգում, գիտակցում և ըստ այնմ հավատում էին, որ՝

Մարդու, ազգի վերելքն ու փառքն Աստուծո՞վ է.

Մարդու, ազգի անկումն ու թշվառությունը՝ անաստվածությամբ:

Անաստված մարդը կենդանի է, գազան է՝ վատ տեսակի:

Աստուծո՞վ մարդը մարդկային է՝ լավ տեսակի:

Մարդու լավ տեսակը հոգով է պայմանավորված: Ինչքան սրբացած է հոգին, այնքան լավ է մարդու տեսակը, որակը, գործը և գործի արդյունքը:

- Արդյո՞ւնք: Ի՞նչ արդյունք...

- Տերն ասաց. «Եթե ցորենի հատիկը հողի մեջ ընկնելով չմեռնի, միայն ինքը կմնա, իսկ եթե մեռնի, բազում արդյունք կտա»:

- Հայն ինչպե՞ս կարող է արդյունք տալ: Ի՞նչ արդյունք, ո՞ւմ համար արդյունք, որ ի՞նչ լինի և ի՞նչ արվի այդ արդյունքով:

- Հայը կարող է արդյունք տալ՝ որպես հատիկ չմնալով իր համար, այլ հողի մեջ ընկնելով և մեռնելով:

Հողը մարդկության մասնիկ՝ հայկական անդաստանն է՝ Աստվածակերտ հայ ազգը, նրա հայրենիք Հայաստանը և նրա իշխան ու ծառա Հայոց պետությունը: Ընկնել մեջն այդ հողի և միշտ մնալ, նշանակում է նրա հարազատ (անդավաճան) մասնիկը դառնալ:

Մեռնել նշանակում է այդ երրորդությանը՝ ազգին, հայրենիքին և պետությանը (որի մեջ առաջնայինն ու գլխավորը ազգն է, որի նշանակությունը բարձրանում է այնքանով, ինչքանով մեծանում է իր ծառայությունն Աստծուն) նվիրված լինել, այսինքն՝ երբ հայը նվիրաբերվում է՝ առանց փոխարենը որևէ բան ակնկալելու, այնժամ այդ նվիրաբերումն արդյունավորվում է: Արդյունք է տալիս միանիշ, երկնիշ, եռանիշ կամ քառանիշ: Վերջնական ի՞նչ նիշով՝ դա արդեն Աստուծո գործն է՝ ըստ Իր կամքի և ծրագրի ու նաև ըստ նվիրաբերվողի (հատիկի) ու իրեն պատկանած երրորդության (ազգ, հայրենիք, պետություն) վիճակի: Ընդ որում, Աստուծո կողմից վիճակը որոշվում է կարիքով, արժանիքով ու հետագա անելիքների ակնկալիքով:

Հատիկի՝ հողի մեջ ընկնելով բազում արդյունք տալը նման է բայց համազոր չէ «Մահ իմացյալ՝ անմահություն» հասկացությանն ու փաստին: Այլ նույնիսկ ավելի բարձր է: Որովիետև անմահություն է նաև կոնկրետ արդյուն-

քով: Այսինքն՝ ոչ միայն հավատարմությամբ (որն ինքըստինքյան ավելի քան վեհ է), այլ դրա հետ նաև «բազում արդյունքով»...

Բայց այս բոլորը կարելի է նաև շատ չհասկանալ և դրա մասին շատ էլ չմտածել, եթե... Եթե կա Աստուծո հանդեպ սեր: Դրա համար առաջնայինների և գլխավորների մեջ ամենաառաջնայինն ու ամենագլխավորն ու նաև ամենաեականը (մարդու համար) Աստծուն սիրելն է:

Ինչպե՞ս է առաջանում մարդու մեջ Աստծու հանդեպ սերը:

Զգիտեմ, միայն գիտեմ, որ դրա սկիզբն Աստծու սերն է մարդու հանդեպ, որ սեր է մտցնում, լցնում մարդու սիրտը...

Ու գիտեմ նաև, որ Աստծու հետ մարդու հաղորդակցության բնականոն սկիզբը երկյուղն է: Մարդ պետք է վախենա Աստծուց, վախենա Նրա կամքն ու պատգամները չկատարելուց և պահանջին դեմ գնալուց: Իսկ վախենալ Աստծուց նախևառաջ նշանակում է հավատալ Աստծուն և ինչ-որ չափով ու ձևով ճանաչել Նրա բնությունը: Եվ դրանով մարդ օժտվում է բարձրագույն հատկությունով՝ երկնային իմաստությամբ (այն իմաստությունը, որը վեր է աշխարհի ամեն գիտությունից և հողեղեն մարդուն դարձնում է երկնայինին ձգտող հոգևոր էակ), այդ իմաստությամբ ապրումը՝ հատիկի՝ հողի մեջ ընկնելով մեռնելու գործընթացը, այսինքն՝ հայի՝ Աստծուն ծառայությունը՝ ծառայելով ազգին, հայի մեջ առաջացնում է Սեր Աստուծո հանդեպ: Այդ սերը մարդկային գերագույն հատկությունն է, որը վերափոխում է մարդուն հողեղենից հոգեղենի:

Երբ որ կա սեր, այլևս չի՝ կարող լինել վախ: Աստուծո հանդեպ սիրով լի մարդը դառնում է Աստուծո որդի. «Այլևս դուք ծառաներ չեք», - ասաց Աստվածորդին Աստծուց Իրեն տրվածներին՝ առաքյալներին:

Դրա համար Ավետարանը՝ հավատացյալի կյանքի սահմանադրությունը, ասում է՝ հավատք, հույս և սեր: Կյանքն սկսվում է հավատքով, ապրում դառնում հույսով ու հավերժանում է սիրով: Այդ երեքով և, մանավանդ, Սիրով է, որ հատիկը կարող է ընկնել հողի մեջ և մեռնել, որպեսզի արդյունք տա... Հայ ժողովուրդն այսօր իր գոյությամբ նախևառաջ պարտական է իր նախնյաց՝ այդպիսի երրորդությամբ ապրած կյանքին: Այդ արդյունքը մեր մեծագույն ու ամենաեական ժառանգությունն է, որը հասկանալու՝ տեսնելու ու օգտագործելու համար գոնե որոշակի չափով պետք է համակված լինենք այդ երրորդության հատկություններով: Այստե՛ղ է, որ հայոց պետությունը մեծ գործ ունի անելու: Այստե՛ղ է, որ հայ հոգևորականության կոչումը պետք է գործի վերածվի՝ անձնավեր, ուղղամիտ ու ամեն աշխարհիկ բարքերից զերծ գործի, Սուրբ գործի (չէ՞ որ կեղծ, ձևական թխմոր չի՛ լինում, և թխմորից կամ մերանից է կախված, թե հացը կամ մածունն ինչի պետք կլինի):

Փա՛ռք մեր Տիրոջ զորությանը և իմաստությանը և Սիրուն, որ մեզ ապրեցնում է, կյանք է տալիս այժմ և հավիտյանս...

Սիրե՛նք մեր Աստծուն:

ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅ ԶԷ, ԱՅԼ՝ ԿՅԱՆՔ

Չարք. ո՞ւմ ենք հիշում, ինչո՞ւ ենք հիշում, որպես ի՞նչ ենք հիշում:

Մեր նահատակներին եթե հիշում ենք, որովհետև զոհվել են մեր հավատքի ու ազգի համար՝ վասն հավատո և վասն հայրենյաց, ապա շատ լավ ենք անում: Ուրեմն՝ հիշենք նրանց ցնծությամբ, շնորհակալությամբ ու նաև պատասխանատվությամբ: Պատասխանատվությամբ մեր ապրած կյանքի համար, մեր անելիքների և չանելիքների համար...

Իսկ ինչ վերաբերում է նրանց նահատակությանը, նահատակ լինելուն, ապա դա արդեն փառք է երկնային՝ և՛ իմաստով, և՛ չափանիշով: Կեցցեն մեր նահատակները: Մարդկային ցեղի հայ ընտանիքին պատկանող նահատակները, որոնք այդ ընտանիքի մարդկայնության արժեքներին՝ Աստվածային պատգամի համաձայն հավատարիմ մնալու համար նահատակվեցին, այսինքն՝ էապես փառավորեցին իրենց և փառավորում են մեզ էլ: Շնորհակալ ենք:

Ցնծա՛, հայ՛ ժողովուրդ: Եվ ցնծա՛, մարդկություն, որ քո մի ընտանիքը՝ հայ ազգը, այդպիսի՛ զավակներ է ունեցել:

Թող արցունք չլինի, այլ՝ խնդություն:

Թող տխրություն չլինի, այլ՝ ուրախություն:

Եվ չլինի նաև թերարժեքության զգացում, այլ՝ լիարժեքության:

Եվ թող լինի նաև այն գիտակցությունը, որ մեր ազգը ոչ թե կորցրել է, ինչպես մոտ մի դար է, որ պնդում ենք, այլ՝ շահել: Շահել է, որովհետև հաղթել է: Քանի որ նահատակությունը պարտություն չէ՛, հաղթանակ է: Նահատակությամբ չէ՛ս կորցնում, այլ շահո՛ւմ ես:

Էական նահատակությունը հաղթանակն է կյանքի: Այն, ինչ կորցրել ենք, կարող ենք վերագտնել, այն էլ ավելիով, որովհետև նահատակ ազգ ենք: Եթե մենք նահատակվելու ընդունակ չլինեինք, ընդհանրապես ունենալու մասին խոսք անգամ չէր կարող լինել, որովհետև այն ժամանակ կլինեինք ստրուկ՝ հոգով ու մտքով, և մեր ինքնությունն էլ մեզ չէր պատկանի. այն նսեմացած, աղավաղված և գերված կլիներ...

Այսօր մենք՝ մեր նահատակաց ժառանգորդներս, որպեսզի արժանի լինենք և կարող լինենք վայելել նրանց անանց ժառանգությունը, պետք է անպայման ժառանգենք նրանց նահատակության ոգին, գիտակցությունը և սերը: Այո՛, այո՛, սերը, որովհետև առանց սիրո, առանց սիրելու նահատակությունը նահատակություն չէ, հետևապես և սրբություն ու ասպետություն չի՛ կարող լինել, որովհետև եթե հոգեղեն սեր չկա, նշանակում է նահատակություն էլ չկա և հավատք էլ չկա: Այլ ամեն ինչ երկրային փառասիրությամբ և նյութապաշտությամբ է: Իսկ դրա հետևանքները սարսափելի են:

Սակայն Աստված Իր բարությանը միշտ գթացել է մեզ ու ազատ է պահել անհավատության անխտից՝ հոգևոր ստրկությունից...

Փառք Աստուծո՛ւ:

Փառք Աստուծո՛ւ՝ մեզ նվիրած նահատակ ոգու համար, որն ինչպես մեր Տերն է ավետարանում, ընդունակ է որպես ցորենի հատիկ մեռնելով՝ բազմապատիկ արդյունք տալ:

Մի քայլերգ կա հայկական. «Առա՛ջ, նահատա՛կ ցեղի անմահներ»...

Մենք էլ կրկնենք. «Առա՛ջ, նահատա՛կ ցեղի անմահներ, հոգու պարտքի կատարմամբ՝ դեպի հավերժական հաղթանակ...»:

Ուրբաթ, 15-ը օգոստոսի, 2008 թ.,

ժամը 23:55

Ո՞Ր ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ, ԻՆՉԻ՞՞ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ

Խոսում ենք հայ ազգի մեջ հոգևոր վերածննդի անհրաժեշտության մասին: Դժբախտաբար, քիչ ենք խոսում, բայց, այնուամենայնիվ, երբեմն խոսում, նշում ենք այդ մասին: Դա լա՞վ է: Այո՛, իհարկե, լավ է, բայց քիչ է, լրի՛վ չէ, թերի՛ է. մենք պետք է ավելի շատ, լուրջ և գործնականորեն խոսենք այդ մասին և, մանավանդ, հստակեցնենք, թե հոգևոր վերածնունդ ասելով արդյո՞ք հասկանում ենք հավատքի վերածնունդը: Եվ դեռ սա՛ էլ բավական չէ, պետք է հստակ ասենք, հայտարարենք, որ մեզ օդից էլ ավելի պետք է քրիստոնեական հավատքի, քրիստոնեական բարոյականության և ընդհանրապես քրիստոնեական կյանքի՝ վերածնունդ: Վերածնունդ, որ մեզ նոր մարդ է դարձնելու՝ նորոգված սրտով, սրբացած հոգով ու արդար մտածումներով, արարքներով և գործերով...

Պետք է նաև հստակեցվի և մեզ ասվի, թե այդ վերածննդի համար ի՞նչ պետք է անենք, այսինքն՝ ինչպե՞ս վերածնվենք անձնապես ու ազգովին, մեր երկրով և մեր պետությամբ:

Սա շատ դժվար խնդիր է, նույնիսկ անհնարին և միաժամանակ շատ դյուրին է, որովհետև, եթե անկեղծորեն դրան ձգտենք՝ հավատալով և սիրելով մեր Արարիչ Աստծուն, այդ դժվարը կդյուրանա, ու անհնարինը հնարավոր կդառնա, որովհետև Աստված բարի է և Նրա համար անհնարին բան չկա:

Աստված մեզ մի անգամ շնորհ արեց և մեր նախնյաց հոգու աչքերը բացեց, որ տեսնեն և տեսան Փրկիչ Աստվածորդուն: Հավատանք, որ այժմ Նա նորից կթափի մեզ վրա Իր շնորհը, և մենք նորից կտեսնենք Իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի Աստվածության փառքը. և դա էլ հենց մղում կտա մեր անձնական ու ազգային հոգևոր վերածննդին, հավատքի՝ վերածննդին, Քրիստոնեական հավատքի վերածննդին, որը մեզ մեր սուրբ նախնյաց հետ դարձյալ կյանք կտա՝ ծառայելով Իրեն, կատարելով Իր պատգամները, Իր կամքն ու գործերը

հայ կյանքում:

Եվ այնժամ հայ կյանքը կգեղեցկանա, կծաղկի և կպտղաբերի աշխարհի ամենակենսատու արդյունքով՝ ի վերելք մեր ազգի, ի բարօրություն նաև մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության՝ Աստուծո:

ՀՈԳԵՎՈՐԻ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ԴԵՄ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱԳՐԵՍԻԱ

Հայության և Հայաստանի հոգևոր, գաղափարական, բարոյական, որոնցով և մշակութային-ազգային պաշտպանությունը խախտված է. մենք գտնվում ենք ոչ միայն երկրի և պետության նկատմամբ ագրեսիայի վտանգի, այլև մեր ազգային ու մարդկային ինքնությունը կորցնելու, այսինքն՝ որպես հայ և մարդ կենսազրկվելու վտանգի դեմ հանդիման, սակայն միշտ չէ, որ դա տեսնում, զգում և գիտակցում ենք:

Եվ այս վիճակի և դրա հետևանքների հեռանկարի գիտակցությունը եթե լինի, բնականաբար, կլինի նաև այդ վիճակը փոխելու և դրա հետևանքները թույլ չտալու թե՛ իրավունքի և թե՛ պարտականության ճանաչումը: Եվ դա այնպիսի անանց տիեզերական իրավունք և պարտականություն է, որ դրա կատարմանը ոչ մի խոչընդոտ չի կարող արգելել: Ավելին, բոլոր բնական և օրինական միջոցների կիրառմամբ դրա չկատարումն անարդարանալի, մահացու մեղք է, քանի որ դա ուրացում, դասալքություն և դավաճանություն կլինի՝ փոքրոգությամբ, վախկոտությամբ ու այլասերմամբ...

Հետևապես, առկա անհոգությունը, անտարբերությունը, խորթացումը և անհավատարմությունը մեր էության իսկ պահպանման դեմ է: Հիմա, թեև ուշացած, պետք է հնչեցնել «Անլռելի զանգակատունը», որպեսզի այն, ինչ կատարվեց մեր երկրի ու կյանքի հանդեպ 20-րդ դարի առաջին կեսին, չկրկնվի 21-րդ դարի առաջին կեսին՝ այս անգամ մեր հոգու և բարոյականության դեմ, որից հետո մենք կդադարենք ոչ միայն հայ, այլև մարդ լինելուց՝ անհիծված ու դատապարտված թե՛ երկրային և թե՛ երկնային կորստի:

Ովքեր չեն կորցրել լսողությունը և լսում են ահազանգը, ովքեր չեն կուրացել և տեսնում են կատարյալ վտանգը, պետք է գտնեն միմյանց և պատվար ու բռունցք կազմեն չարի այլասերող, մահացու վտանգի դեմ: Պետք է կանգնեցնեն, դուրս մղեն նախահարձակումը, որը տեղի է ունենում մեր ժողովրդի հոգիների, սրտերի և մտքերի, որով և մեր երկրի, պետության ու Հայրապետության նվաճման և ստրկացման համար: Այդ պետք է արվի ի ազատագրում, ապահովություն ու բարգավաճում մեր ազգի և հայրենիքի, ի խրախուսում, օգնություն և վերելք մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության:

Շաբաթ, 18-ը մարտի, 2007 թ., ժամը 23:10

ԿՐԹԱԿԱՆ ՊԱՅԱՆՁ

ՀՀ կրթական համակարգը բովանդակում է այն, ինչը պետք է մինչև 18 տարեկան աշակերտներին ուսուցանելու և կրթելու այնպես, որ նրանք պատրաստ լինեն կայուն, կենսունակ ու երջանիկ ընտանիք կազմելու՝ տղաները՝ որպես տղամարդ, պատասխանատու ընտանիքի ու հայրենիքի պատվի, պաշտպանության և բարեկեցության համար, իսկ աղջիկները՝ նույնպես պատասխանատու ընտանիքի ու հայրենիքի պատվի՝ պաշտպանության և բարեկեցության համար՝ որպես կին՝ քնքուշ, համբերատար և տան կազմակերպիչ ու սյուն:

Իսկ սերնդի այդպիսի կրթության մեջ համապատասխան բաժին ունե՞ն պետությունը և հասարակությունը՝ իրենց տեղեկատվական քաղաքականությամբ (ՁԼՄ-ներ, հրատարակչություն, մշակույթ, արվեստ) ու նաև գրված և չգրված օրենքներով և մանավանդ դեկավարների և տարեցների օրինակով: Իսկ եկեղեցի՞ն...

Այս հարցերի վերաբերյալ, կլոր սեղաններից և սեմինարներից բացի, որ պետք է կազմակերպեն Հայաստանի բազում գիտական, հասարակական ու կրոնական հաստատությունները, ի՞նչ են մտածում հեռուստաընկերություններն իրենց «շոուներից» մի քիչ ժամանակի բաժին հանելու մասին, թե՞ կարծում են, որ իրենց «ռեյտինգը» կընկնի, եթե մոլորեցնող կիսապոռնո ֆիլմերի, երգերի և պարերի փոխարեն ազգի, պետության և վերջապես հայ մարդու կյանքի կայունության հարցերին էլ եթերաժամ հատկացնեն, մի քիչ...

Մոլորությունը քայքայող, փչացնող և կործանող է...

Մեր հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության ճանաչումը, ընդունումը և կյանքում կիրառումը մեզ կծերբազատի ամեն տեսակ մոլորություններից և ունայնություններից:

«ԽՈՍՔԵՐ, ՈՐՈՆՔ ՓՈԽԵՑԻՆ ՄԻ ԱՄԲՈՂՋ ԱԶԳ, ԱՄԵՐԻԿԱՆ»

Միտքը և խոսքը, եթե գաղափարով են, գաղափար, որը բխում է և հիմնված է հավատքի վրա, մեծ ուժ ունեն...

Ինչպես վերջին տարիներին, այս տարվա՝ 2007 թվականի մարտ ամսին ևս Ամերիկայի Միացյալ Նահանգներում ամենամյա տոնակատարություն էր՝ ի պատիվ մի սևամորթ ամերիկացու՝ Մարտին Լյութեր Քինգ կրտսերի, որը, ինչպես տոնակատարության վերաբերյալ հաղորդումների կարգախոսն էր ասում, փոխեց Ամերիկան. «Խոսքեր, որոնք մի ամբողջ ազգ փոխեցին»:

Դրանք 39 տարեկան մի սևամորթ ամերիկացի կղերականի խոսքերն էին,

որոնք նա սկսեց արտասանել երեսուն տարեկանում, և նրա կյանքի վերջին՝ երեսունհիններորդ տարում, ինչպես այս տարվա տոնակատարության ժամանակ ասվեց. «Ամերիկյան այլևս այն չէ, ինչ որ էր»...

Կիրակի, 11-ը փետրվարի, 2007 թ.

ՀՀ ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ «ԽԵՐԸ»

ՀՀ հեռուստաալիքներով հաղորդվող նորածնության համաշխարհային համբավ ունեցող մի ընկերության նույնքան համբավավոր դիզայների մանր առուլիսում, որպես գովեստ, որպես նախանձելի առավելություն հնչեց հետևյալ խոսքը. «Սպիտակ շրջագգեստներով աղջիկներն ավելի սեքսուալ տեսք ունեն...»:

ՀՀ հեռուստահաղորդումներում մի հետևողական միտում է նկատվում՝ ուղղված երիտասարդական շրջանակներին, հատկապես դեռատի աղջիկներին համոզելուն, որ սեքսուալ տեսք և շարժ ու ձև ունենալով մոդել դառնալն ամենաերջանիկ պատեհությունն է, որ կարող է նրանց անվանի դարձնել, հարստացնել ու երջանկացնել:

Մեր երկրում պոռնոմտայնության և բարքերի պատվաստումն ինչո՞ւ է տարբեր հզոր շրջանակների խնդիրը դարձել: Չէ՞ որ մեր նոր սերնդի բարոյական ախտահարումը կանլացնի մեր ազգի, երկրի ու պետության ապագան: Ովքե՞ր, ե՞րբ, ինչպե՞ս պետք է ազգային դիմադրություն կազմակերպեն հայ հոգեբարոյական և գաղափարական անաղարտ մթնոլորտի պահպանման համար՝ որպես ազգային անվտանգության գերակա խնդիր:

Մի հեռուստաընկերություն էլ կիրակնօրյա իր ծրագրում հատուկ գովազդում էր, որ երկուշաբթի առավոտյան երիտասարդների համար, որպես ուսումնական ծրագիր, հաղորդվելու է շուրփզնեսի մասին... Սա էլ մի՞թե խայծ չէ հեռվից, կամաց-կամաց երեխաների քթից կարթ անցկացնելու համար: Բայց ինչո՞ւ է այդ հեռուստաընկերությունը խաբված. չենք ուզում հավատալ, որ գիտակցաբար է գործակցում...

Եթե մեկը ինչ-ինչ պատճառներով առարկի, թե ի՞նչ է եղել որ, բիզնեսը բիզնես է, ինչո՞ւ երեխաներն էլ չտվորեն բիզնես անել, որ լավ ապրեն, դրան մեր պատասխանը կլինի:

Հայաստանի հանրօգուտ գործարար, ընդարձակ դաշտո՞ւմ տեղ գրավելու ցանկություն առաջացրեք և հմտություն սովորեցրեք, այլ ոչ թե «կիսապոռնո, կիսամաֆիոզ, քայքայիչ բիզնեսների» մասին գովազդեք որպես «ազատական գործարարություն»: Ի՞նչ է, առաջադեմ, քաղաքակիրթ երևալու համար մեր երիտասարդներն էլ իրենց երեսները ներկեն, մազերը ցցեն կամ աղջիկ ու տղա ականջ, շրթունք և էլ չգիտես ուր՝ օղակներ անցկացնեն և իրենց մատղաշ, մաքուր մարմիններն այլանդակ դաջվածքներով պղծեն... Մոռացե՞լ ենք, թե

մենք ո՞ւմ սերունդն ենք, և մեր նախնիք ինչպիսի՞ կյանք ապրելով և հարկ եղած ժամանակ ի՞նչ գին վճարելով են մեր ազգը պահպանել և մեզ մինչև 21-րդ դար հասցրել՝ դժվարին, բայց պատվավոր վիճակում... Եվ մանավանդ, մոռացե՞լ ենք, որ մենք քրիստոնյա՝ ազգ ենք: Ո՞վ է ասել, որ քրիստոնեական կյանքը միայն մոմ վառելով է...

Այս և սրանց նման երևույթները մի՞թե հայ ծնողը, պապն ու տատը, եղբայրն ու քույրը պետք է կուլ տան, լռեն, որպեսզի արևմտամետ կամ քաղաքակիրթ, ազատական ու առաջադեմ երևան... իսկ պետությունը, մտավորականությունը և...

Եվ մեր կղերականությունը, եթե, իհարկե, վերջինիս մեջ դեռ կա նաև հոգևորականություն և խանութպան, արիեստավոր չի դարձել: Մի՞թե նրանք գլխավոր պատասխանատուները չեն քաղքենիացած և վարակահարույց հեռուստահաղորդումների, պոռնո, կիսապոռնո հանդեսների, գիշերային ակումբների և նման բիզնեսների համար...

Ի՞նչ է, ամոթը կորցրած՝ Աստծուց չե՞նք վախենում այլևս:

Ո՞վ, ի՞նչը զգաստացնի մեզ, որ անհատապես ու ազգովին մեր հոգևոր ու աշխարհիկ ղեկավարության առաջնորդությամբ մեր մարդկային-ազգային տոհմիկ ու Աստվածահաճո կյանքի հունի մեջ մտնենք և դարձյալ դրանով ընթանանք, ինչպես որ վայել է հայ մարդուն: Չէ՞ որ միայն այդ դեպքում մենք կոյառենք, կզարգանանք, կաճենք ու կբարգավաճենք նաև հոգուս մարդկության և ի փառս մեր սուրբ հավատքի:

Շաբաթ գիշեր, լույս կիրակի, 29-ը հուլիսի,

2007 թ., ժամը 1:45

ՍԵՓԱԿԱՆ ՏՆԱՔԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Քունս չէր գալիս, հոգնեցի կարդալուց ու երբ միացրեցի հեռուստացույցը, հանկարծ Հայաստանի հեռուստաէթերում «Նոր ալիքին» պատահական հանդիպելիս զգացի այդ ալիքի կողմից գիտակցված կամ չգիտակցված հակամարդկային և հակազգային-հակահայկական քայքայիչ դավադրություն: Դրա օրինակները հաճախ այս կամ այն չափով կարելի է տեսնել նաև տարբեր հեռուստաալիքներով, սակայն ավելի հաճախ՝ «Նոր ալիքի» հաղորդումներում:

Սա ակնհայտորեն կատարվում է հազարների աչքի առաջ, և մենք բոլորս մեղսակից ենք դառնում մեր լռությամբ: Լռություն, պասիվություն, որը հավասարազոր է այլասերության մեղսակցության ու ազգի, Հայաստանի և մեր հավատքի նկատմամբ դավաճանության...

Ինչի՞ց է առաջանում դա. մեր վախկոտությունի՞ց, անտարբերությունի՞ց, անճարակությունի՞ց, թե՞ նաև մեր այլասերվածությունից...

Խի՞ստ է հնչում: Բայց եթե արդար է գնահատակա՞նը... Երանի՛ թե սխալ լինեինք, բայց եթե սխալ չե՞նք, այդ դեպքում ո՞վ հասնի մեզ, ո՞վ զգաստացնի մեզ: Որտե՞ղ գտնենք հարցերի պատասխանները և մա՛րդ դառնանք, հա՛յ մարդ, գոնե մի քիչ «թասիբով», պատվով հայ մարդ, որ անտարբեր չի կարող լինել, երբ կործանիչ, զզվելի լաքան լղոզում է մեր ազգի և յուրաքանչյուրիս պատիվը, թքում մեր հոգիների մեջ և խայտառակում է յուրաքանչյուրիս՝ մտնելով մե՛ր իսկ օջախներն օտարոտի, պոռնկի ձայնով, տեսքով և շարժումներով՝ իբրև թե «զվարճացնելու» և դեռ ավելին՝ «դաստիարակելու» մեր երեխաներին...

Այդ հաղորդման մեջ մի պահ միտք հայտնվեց, թե լավ կինը պետք է օգնի իր ամուսնուն՝ հարստանալու... իր մարմնի գնով:

Իշխանավորներ, ժողովրդի հայերն ու առաջնորդներ, ո՞ւր հասանք: Ինչպե՞ս կարող ենք համակերպվել, մարսել այս ազգային թշվառությունը, խայտառակությունը և կորստաբեր փորձանքը: Դուք ո՞ւմ կողմն եք, ո՞ւմ կողմից եք: Առանց խղճի խայթի, առանց ամոթի ու առանց Աստուծո հատուցման երկյուղի ո՞ւր կհասնենք, եթե ոչ կյանքի ճահիճը թունավոր...

Շաբաթ, 19-ը ապրիլի, 2008 թ.

ԾԻՉ ՀՈՒՍԱՅԱՏՈՒԹՅԱՆ

(Սա ի՞նչ փորձանք է)

Ո՞ւմ հաշվին պետք է դուրս գրել մեր ժողովրդին և մասնավորապես մատղաշ սերնդին իբր մշակութային հեռուստահաղորդումներով մատուցված թույնը...

Այս՝ մեր ազգովին և պետականորեն ազատ ու անկախ վիճակում մեր հոգիներն ախտահարող, բարոյական ըմբռնումները խաթարող ու նաև քաղաքականապես ապակողմնորոշող հեռուստափորձանքների մասին խոսում ենք մենք մեր մեջ և ժամանակ առ ժամանակ անդրադառնում ենք նաև պարբերական մամուլով, բայց հոգեբարոյական և գաղափարական ավերը շարունակվում է... Ինչո՞ւ, ինչպե՞ս է դա լինում: Սա մի՞թե մեր ազգի, երկրի և պետության գլխին փորձանք չէ:

Շաբաթ, 19-ը ապրիլի, 2008 թ., ժամը 18-ի մոտերը Հանրային հեռուստատեսությամբ երաժշտական ինչ-որ ծրագիր է, հայկական երգերի ինչ-որ մրցանակաբաշխությունների մասին: Հանկարծ լսում եմ աֆրո-ամերիկյան երաժշտություն, նայում եմ հեռուստաէկրանին. հաղորդվում է խորթ, անիմաստ, բութ երգ ու նվագ՝ ուղեկցված անամոթ, պոռնկաբարո պարային շարժումներով: Մինչ զարմացած մտածում եմ՝ ինչպե՞ս է լինում, ո՞վ, ինչո՞ւ համար, շուրջ ընդմիջվում և էկրանը հարստանում է բախտախաղի, դումարի տեսարաններով: Թանկարժեք հագուստով, առնական արտաքինով, ինքնավստահ

տղամարդիկ, շպարված գեղեցկուհիների հիացական հայացքների տակ, վիսկիի բաժակը սեղանին, սիգարի ծխով պարուրված, խաղում են պոկեր և հաղթում... Եվ սա տեղի է ունենում անկախ Հայաստանի Հանրապետությունում Հանրային կոչված հեռուստատեսությամբ. հարձակում հայ հոգու դեմ. եղեռն՝ օրը ցերեկով մեր հազարավոր ազգակիցների՝ մասամբ անտարբեր, անբան, մասամբ՝ շփոթված ու ապուշ կտրած, մասամբ՝ հիացած, ոգևորված, մասամբ էլ՝ վրդովված, կատաղած և հուսահատ հայացքի տակ:

Ի՞նչ է, տեր չկա՞: Բոլո՞րն են հիպնոսացած կամ կուրացած կամ անզորությամբ հուսահատված:

Երևի այդպես է, քանի որ վերջին մի քանի ամիսների ընթացքում հայկական հեռուստածրագրերով գիշերները ո՛չ թե մեր պատմության, մեր հերոսական կերպարների մասին են հաղորդում կամ թեկուզ (վարորդի և հետիոտնի համար) փողոցային երթևեկության կանոններն են բացատրում՝ նշելով, թե ինչքան կարևոր է դա մեր ժողովրդի անվտանգության ու նաև պատվի համար (այո՛, այո՛ նաև պատվի համար, նկատի ունենալով, որ մեր փողոցներով օրական անցնում են հազարավոր բարեկամ կամ ոչ բարեկամ օտարերկրացիներ), այդ և նման կարևոր հարցերի մասին իրազեկելու փոխարեն գովազդվում է, թե ինչ լավ բան է, պատվավոր, օգտակար, հաճելի և շահավետ է պոկեր խաղալը... կամ կեսգիշերային պորտապարի դասեր են տալիս, էլ չասած՝ մարդասպանությունների, սադիստական և պոռնոֆիլմերի ցուցադրման մասին: Այս վիճակի մասին մի օրինակ էլ. Մաշտոցի պողոտայում՝ թատերական ընկերության շենքի առաջ, ծանուցում է դրված մի թատերախաղի մասին. շատ լավ, բնական է, որ Հայաստանի թատերական ընկերության շենքի առաջ թատերախաղ է ծանուցվում, բայց ի՞նչ գովազդային մոտեցումով, ո՞ւմ հետաքրքրելու համար, երբ մեծադիր նկարում ցույց է տրված, թե ինչպես մի երիտասարդ տղամարդ սպառնում է ձեռքի սուր դանակը մի երիտասարդ աղջկա կոկորդը խրել... Այս ի՞նչ է կատարվում... Ամոթի և խղճի հետ խելքն է՞լ է չքացել...

Գանք դարձյալ մեր հեռուստատեսությանը. իսկ ի՞նչ կլիներ, ո՞ւմ փորը կցավեր, եթե հայրենի հեռուստատեսությունը, ներառյալ երիտասարդական հորջորջված «Նոր ալիքը», սեռական գրգռումներով աֆրո-ամերիկյան կամ այլ հաղորդումների հաշվին մի քիչ էլ հայրենի և կամ օտարերկրյա աշակերտների, ուսանողների, երիտասարդ մասնագետների՝ արդյունաբերության, շինարարության, գյուղատնտեսության ու այլ բնագավառներում աշխատող երիտասարդների կյանքից պատմեր, թե ինչպես են առաջադիմում, աշխատանքային հաջող ասպարեզ (կարիերա) ստեղծում (կամ դժվարությունների հանդիպում) և ինչպես են սիրահարվում, իրենց կեսին գտնում, ընտանիք կազմում ու նաև անընդհատ սովորելով՝ ինքնազարգացմամբ ավելի առաջադիմում ու հասարակության ավելի պիտանի անդամ դառնում...

Այս և նման թեմաներով հաղորդումների փոխարեն գովազդում են, թե ինչպես փող կարող են շահել, հարստանալ՝ զվարճանալով կազինոներում, կիսամերկ կանանց շրջապատում: Իսկ թե ինչո՞ւ են այդ «երջանիկ» կանայք այնտեղ, և ո՞ր հայ մարդը կուզենա, որ իր աղջիկը, քույրը, կինը կամ մայրն այնտեղ գիշերները երջանկանալով փող աշխատի, որ իր ընտանիքը պահի, այդ էլ թողնենք, որ յուրաքանչյուրս մտածի: Ու մտածի նաև, թե այդ այսպես կոչված զվարճանքներով գիշերները լուսացնելուն ինչպիսի դժբախտություններ են հետևում, ինչքան կյանքեր ու ընտանիքներ են քայքայվում, և վա՛յ այն հասարակությանը, որ այդպիսի անդամներ ունի և, այս ճշմարտության և նման փաստերի մասին չի՛ խոսվում: Այս ճշմարտությանը հայկական հեռուստաբիզնեսը մեծ մասամբ դավադրաբար է մոտենում: Բայց չէ՞ որ մեր հեռուստաբիզնեսում էլ հայ մարդիկ են: Եվ մի՞թե կարելի է հավասարվել այնպիսիներին, ովքեր գլխահան անող գովազդներով անմեղ մարդկանց, երիտասարդներին թմրադեղ են սպրդեցնում՝ վաճառում, ինչ է թե փող աշխատեն... Մի՞թե սա բիզնես է: Վա՛յ այն հայրենի տնտեսությանը, որ նման բիզնեսով պիտի զարգանա: Վա՛յ Հայաստանի այն բյուջեին, որ նման բիզնեսի հարկերով պիտի գոյանա: Եվ վա՛յ մեր երկրին, որ նման աղբյուրներից գոյացած բյուջեով պիտի զարգանա, պաշտպանվի և նոր սերնդի ապագան հարթի: Կամ էլ մի՞թե մեր հեռուստաժրագրողները և կառավարիչները, հեռուստատեսության մենեջերները կարծում են, թե հայրենիք ու պետություն կարելի է կայացնել, մրցունակ ու անվտանգ դարձնել, ազգ համախմբել, ժողովրդի բարեկեցությունը բարձրացնել աֆրո-ամերիկյան կիսապոռնո երգերով ու պարերով և մարդատյացության զազանաբարո ներկայացումներով կամ էլ երիտասարդական կոչվող պրիմիտիվ խաղերով ու դատարկաբանություններով... և գիշերները կազինոներում լուսացնելով... բայց ո՞ւմ փողերով, ինչպե՞ս ձեռք բերված փողերով են կազինոներում թրև գալիս այդ մարդիկ, դրա մասին հայ հեռուստաբիզնեսը հարկ չի համարում խոսել: Ի՞նչ գնով, ի՞նչ միջոցներով են ձեռք բերվում կազինոներում վատնվող գումարները: Իհա՛րկե, ոչ ազնիվ ճանապարհով: Եվ այդ կասկածելի գումարներից, որպես փշրանքներ, պետությանը տրված հարկերով պիտի ֆինանսավորվի մեր երեխաների կրթությունը, մեր ժողովրդի մշակույթը, առողջապահությունը, պաշտպանությունը...

Զե՛նք խոսում, չե՛նք խոսում, բայց ինչքա՞ն կարելի է լռել... Հիմա՞ էլ լռենք, եղբայրներ, ինչպես ասում էր հայ բանաստեղծը դեռ 19-րդ դարում:

Եվ հիմա էլ մե՞նք լռենք... Սա էլ ուրիշ հարց...

Ո՞ր մեկն ասենք, ո՞ր մեկը թողնենք: Ծիծաղե՞նք, թե՞ լաց լինենք: Թե՞ ցախավելն առնենք և...

Ձարթնի՛ր, լաո՛... քեզ ուզում են դարձնել լա՛ճ տնավեր:

Շաբաթ, 26-ը հունվարի, 2008 թ.,
առավոտյան ժամը 7:10

ՃԱՇԱԿ, «ՊԱՅԱՆՁ ԵՎ ՌԵՅՏԻՆԳ»

Ո՞վ է ստեղծում ճաշակը, որն առաջացնում է պահանջը, և ըստ այնմ որոշվում է հայաստանյան հեռուստաբիզնեսի ռեյտինգը:

Ումի՞ց: ՀՀ պետական կամ հասարակական ո՞ր հաստատությունից կամ հաստատություններից (որոնք պարտավոր են այս երևույթները հսկել կամ առնվազն դրանց մասին տեղյակ լինել) կարելի է ստանալ նշված հարցերի պատասխանները:

Ելնելով համամարդկային, ինչպես և մեր ազգային շահերից և սկզբունքային տրամաբանությունից՝ ճաշակը ճաշակ չէ՝ այլևս, եթե մոլութամբ է կերտվում և մոլություն արտահայտում: Նույնպես և պահանջը, եթե մոլության հետևանք է, այլևս օրինական պահանջ չէ, քանի որ այդ դեպքում դադարում է բնական լինելուց, հետևապես և բնական-օրինական պահանջ լինելուց: Ինչպես, օրինակ, թմրադեղը, ծխախոտը, բախտախաղն ու ամեն ինչ, որ մոլություն է առաջացնում...

Դրանից հետո ով որ այդ ճաշակը և պահանջը վկայակոչելով արդարացնում է դրանց բավարարումը, գիտակցաբար կամ ոչ (բայց ավելի շատ գիտակցաբար), հանցագործություն է կատարում:

Օրինակ՝ Միացյալ Նահանգներում տեսել ենք ֆիլմերում, կարդացել ենք ընդհանուր տեղեկատվական և մասնագիտական մամուլում, պատահել է նաև, որ կյանքում տեսել, վկա՝ ենք եղել ճաշակ, պահանջ, ռեյտինգ և ըստ այնմ բավարարման (մատակարարման) հետևյալ երևույթին:

Դպրոցներում, մարզահրապարակներում, պարասրահներում ու անչափա-հաս տղաներով ու աղջիկներով լի վայրերում մոտենում են մոդայիկ, ճաշակով հագնված, խիստ ընկերական, «լավ տղաների» բառապաշարով խոսող, մեծ մասամբ տղաներ, որոնք հետաքրքիր խոսակցության բռնվելով՝ առաջարկում են ընկերական ծխել մարիխուանա կամ նման այլ «թեթև» թմրադեղ:

Այդ «այցելուներն» արդեն իսկ, որպես «ծանոթ-ընկերներ» են երևում հաջորդ օրերին՝ «շռայլորեն նվիրելով» իրենց կյանքը «գերազանց» դարձնող, իսկական կյանքը «հասկացնող», կյանքի իսկական «հաճույք» պարզևող թմրամիջոցները: Ու երբ ժամանակի ընթացքում «ճաշակը» ձևավորվում է միամիտ զոհերի մոտ և պահանջարկ է առաջանում, այնժամ «ծանոթ-ընկերները», դարձյալ «հոգատարությամբ» առաջարկում-մատակարարում են այդ «կայֆի» միջոցները՝ բավականին մատչելի գներով:

Որոշ ժամանակ հետո իսկական կյանքի «հաճույքը» հասկացողների պահանջարկի մեծացմանը համապատասխան մեծանում են նաև դրանց ավելի թունդ, քայքայող տեսակները, բավարարման քանակները և զուգահեռաբար՝ նաև գները:

Մի որոշ ժամանակ հետո ուրիշ ուսումնական հաստատություններում, մարզահրապարակներում, պարասրահներում կամ թաղամասերում ճաշակն ու պահանջարկն առաջացնում և տարածում են արդեն նախկին զոհերը, որոնց սովորությունն արդեն մոլություն է դարձել, ու դրա համար նաև հավելյալ եկամուտի կարիք է զգացվում: Նրանք դառնում են վարժեցնող գործակալներ, երբեմն նաև մանր, տեղական մատակարարողներ (distributor- ներ):

Սկզբնական շրջանում զոհերի կողմից, ըստ իրենց ճաշակի պահանջների բավարարման, ծախսերը համեմատաբար շատ մեծ չեն, գները մատչելի են, և ծնողների կողմից սննդի, տրանսպորտի, տարբեր պիտույքների և որոշ զվարճանքի համար տրվող գումարները բավարարում են: Հետո սկսվում են պարտքով վերցված գումարներով վճարումները՝ նոր ճաշակի պահանջների բավարարման ծախսերի համար: Հետո, երբ ճաշակն ու պահանջն ավելանում են, դրանց բավարարման ծախսերը փակելու համար գործադրվում են տարբեր խորամանկություններով կիսահանցագործ միջոցներ, հետո՝ գողություն, դավաճանություն և ընդհուպ՝ մարմնավաճառություն և սպանություն...

Կարծես թե էլ տեղ չմնաց մարդկային թշվառության ու անկման համար... Եվ տվյալ մատղաշների (թեև իրենք իրենց շատ հասուն, դատող, ճարպիկ, խելոք և մանավանդ ճաշակով ու կյանքը լավ հասկացող են համարում, ավելի լավ հասկացող, քան իրենց հնաճ, հետամնաց ծնողները, և տարբեր ձանձրալի բարոյախոսները) կյանքը կոտրվեց, ճզմվեց, խայտառակվեց ու կորավ: Կորավ՝ առանց մի օգտակար բան կամ գոնե հաճելի հիշատակ թողնելու՝ փոխարենը թողնելով միայն հարազատների ցավն ու կսկիծը, ազգի և մարդկության կրած կորուստը և Աստուծո ղժգոհությունը:

* * *

Ըստ երևույթին, գոնե ՀՀ հեռուստաընկերությունների ղեկավարները, որոնք մեծ մասամբ դինամիկ ու եթե ոչ լրիվ բիզնեսմեն, գոնե բիզնեսմեն դառնալու բուռն ձգտումով երիտասարդներ են և յուրաքանչյուրը, բնականաբար, ունի իր սեփական հայացքը, սակայն, ըստ երևույթին բոլորի համար բիզնեսը բիզնես է հասկացողությունն ընդհանուր սկզբունք է: Եվ բիզնես անելու համար, այսինքն՝ փող շինելու համար (make money) գտնում են, որ բացի կապեր ունենալուց, հարկ է բարձրացնել իրենց հեռուստաընկերության ռեյտինգը: Մի պահ ընդունե՞նք այս դատողությունը, սակայն, որի համար կարելի է ի՞նչ անել: Սկսել «ճաշակ» ձևավորել, այսինքն՝ զանգվածային հետաքրքրությունն ձևավորել և դրանով զանգվածային պահա՞նջ առաջացնել: Բայց պահանջ, որով նորաթուխ բիզնեսմենների ցանկացած ռեյտինգն ապահովելուց հետո դրա բավարարման համար հասարակությանը և հատկապես 8-ից 18 և մինչ 25 տարեկաններին ի՞նչ մատուցվի, և դրանով բավարարվելուց հետո նրանք ի՞նչ վիճակում, մակարդակում կգտնվեն: Արդյոք գաղափարապաշտ, բարոյական

արժեքներով տոգորված, կիրթ, գրագետ հայ զինվորների, քաղաքացիների, հաջողակ մասնագետների, ձեռներեցների և ընտանիք կազմող հայրերի և մայրերի վիճակում կլինեն, թե՞ հավատազուրկ, գաղափարազուրկ անբարոյական, տգետ, անգրագետ, «սերը նայթ կլաբներում» փնտրող կոսմոպոլիտ և հայոց բանակից խուսափելի արժանիք, իսկ հայ զինվորին, սպային ծաղրելը ճաշակ համարող անխիղճ, կրիմինալ պիժոններ կլինեն:

Ձգո՛ւյշ, ՀՀ հեռուստատեսություն և որոշ պարբերական մամո՛ւլ, հատկապես հանդեսներ, զգաստացե՛ք, գիտակցաբար թե անգիտակցաբար դուք պիժոնական ճաշակի ձևավորմամբ մեծացող պահանջարկի բավարարմամբ ձեր ռեյտինգը մեծացնելու անփառունակ ճանապարհով եք գնում... Իսկ չե՞ք նտածում, թե ո՞վ է տալու ձեր ռեյտինգը և ի՞նչ բնութագրությամբ: Առայժմ այդ բնութագիրն արտահայտում է հակամարդկային, ազգադավ հանցագործություն:

Այս պայմաններում, դրա հետևանքը լինելու է ՀՀ-ում հակազգային, հակահասարակական, հակապետական վնասակար ու անոթալի արարքների ի հայտ գալը՝ զանգվածային մասշտաբով: Եվ դուք էլ (հուսանք, ցավոք սրտի) ականատես կլինեք դրանց ազգաքանդ ու պետականակործան արդյունքներին:

Հիմա՛ զգաստացեք, դարձի՛ եկեք, որպեսզի չամաչեք հայ երեխաներից և չդատապարտվեք պատմությունից...

Չի կարելի ռեյտինգ բարձրացնել, փող շահել ու ընտանիք պահել ի հաշիվ անմեղ, միամիտ, դյուրահավատ երեխաների, պատանիների ու աղջիկների և իրենց կյանքի կողմնորոշումը կորցրած տարեցների հոգևոր, գաղափարական և բարոյական ախտահարման (դրա բոլոր հակամարդկային, հակաազգային և հակապետական հետևանքներով) տեղեկատվական, գեղարվեստական և ժամանցի թմրադեղ մատակարարելով:

Ձգո՛ւյշ եղեք, ազգը և մարդկությունը դա չի՛ ների: Բայց ամենասարսափելին՝ Աստված չի ների:

Մեղա՛ եկեք, ուղղե՛ք ձեր ընթացքը, որով և ավելի ու իրապե՛ս կհարստանաք, քանի որ ներո՛ւմ կստանաք ու իրական երջանկություն կունենաք: Արե՛ք այդ, քանի դեռ ուշ չէ...

ԽՈՐԵՐ ՀԱՄԱՁԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՐՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԴԵՐԻ ՄԱՍԻՆ

Աստված մարդու մեջ դրել է բնագո և զգացումներ ու նաև՝ գիտակցություն:

Շատ բան մենք անում ենք բնագոյով, շատ բան՝ զգացումներով, շատ բան էլ՝ գիտակցությամբ: Միշտ չէ, որ այդ երեքը միասին կամ հավասարապես են գործում: Որդիական սիրո բնագոյը, եղբայրականը (քույրականը) արդյոք

գորե՞ղ են սեռականից: Ինչո՞ւ: Արդյո՞ք ամուսնական կապի ամրությունն ի վերջո ավելի շատ պայմանավորված է գիտակցությամբ: Այն հանգամանքը, որ Աստուծո այս դասավորում-կարգավորումը՝ ամուսնական (ամուսինների) կապը, որից կախված է սերնդի գոյացումը, պահպանումը և որակը, որ բացի զգացմունքներից, կրքից, ավելի շատ գիտակցությանն է թողնված՝ նտածել է տալիս...

Ծնողասիրության բնագրի նման է հայրենասիրությունը (հայրենի հող, բնություն, լեզու-մշակույթ, ավանդույթ, սովորություն): Բայց ազգասիրությունը, բացի զգացմունքներից, կարծես ավելի շատ գիտակցության վրա է հիմնված, որն ավելի առարկայական է դառնում կրթությամբ, դաստիարակությամբ և ըստ այնմ քաղաքացիական պարտաճանաչությամբ:

Մեր աշխարհատարած ազգի համար, որը վաղուց և հարաճունորեն շարունակում է զուրկ լինել հայ հայրենասիրության գոյացման միջավայրից և պայմաններից (իր բոլոր հետևանքներով), ազգասիրությունը մնում է ազգային ինքնության պահպանման էական ու ըստ երևույթին միակ կռվանը: Եթե դա այդպես է, ապա ազգասիրության գոյացումը, պահպանումն ու զարգացումը դառնում են հայ ազգի գոյության խնդիրը: Այդ դեպքում մեր պայմաններում ինչպիսի՞ն պետք է լինի ազգասիրությունը, և ո՞րն է նրա ստեղծման, գոյացման աղբյուրը...

- Ըստ երևույթին պետք է լինի այնպիսի՝ ազգասիրություն, որն առաջացնում է առողջ և գրագետ ազգային ինքնագիտակցություն՝ ի զորու, իր հերթին, առաջացնելու ազգային պարտաճանաչություն, որը ելնելով մեր ազգի սփռվածությունից և դրանից բխող այլ վիճակներից՝ պետք է լինի ինքնաբուխ, կարգապահ ու ինքնակառավարվող պատրաստականությամբ պարտաճանաչություն:

Արագ հայացքով իսկ դիտված՝ մեր հայրենասիրության պես մեր ազգասիրությունը ևս (որոնք իրարից ոչ հեռու՝ երկվորյակներ են, առնվազն վերջին 2-3 սերունդների ընթացքում) տարբեր բնորոշումներով է ի հայտ գալիս: Դրանցից են՝

- ընտանեկան հայրենասիրություն-ազգասիրությունը,
- երկրի, վայրի (աշխարհագրական) հայրենասիրություն-ազգասիրությունը,
- կենցաղային-խոհանոցային հայրենասիրություն-ազգասիրությունը,
- գաղափարական հայրենասիրություն-ազգասիրությունը,
- քաղաքացիական հայրենասիրություն-ազգասիրությունը,
- վերջապես, այս բոլորը կամ մի մասը պարփակող (էական է, որ վերջին երկուսը՝ գաղափարականը և քաղաքացիականը, մեջը լինեն) գրագետ հայրենասիրություն-ազգասիրությունը:

Գաղափարական և քաղաքացիական գրագետ հայրենասիրության-ազգասիրության կրիտիկական չափի առկայությունը հայության մեջ անհրա-

Ժշտ է՝ ունենալու համար գրագիտորեն ընտրված գրագետ և պատասխանատու ղեկավարություն՝ ստեղծելու համար գրագետ երկիր և պետություն՝ կազմելու ու վարելու համար գրագետ օրենսդրություն և ներքին ու արտաքին, բոլոր բնագավառների քաղաքականություն...

Հնարավոր է այս գերխնդրի կատարումը մեր իրականության մեջ:

Ո՛չ, եթե չկա գաղափար, ու, այո՛, հնարավոր է, եթե ազգը ճանաչի, վերընդունի և նորից ապրի Հայ Ազգային Գաղափարախոսությամբ (ՀԱԳ):

Հետևապես, ՀԱԳ-ը, որ բխում է և հիմնված է հայոց 1700-ամյա քրիստոնեական հավատքի վրա, միակն է, որ վերջին հաշվով ի զորու է կատարել հայ ազգի, հայրենիքի և պետականության պահպանման ու հարատև զարգացման գերխնդիրը...

* * *

Մեր մարդկային կյանքի տևողությունը թիթեռի կյանքի հետ էլ չի՛ կարող համեմատվել, այն իմաստով, որ տիեզերական լույսի աղբյուրի համեմատությամբ մարդկային կյանքն անչափելիորեն փոքր է: Եվ սա դեռ ֆիզիկական լույսին է վերաբերում: Ինչ վերաբերում է հոգեղեն լույսին, ապա համեմատություն հասկացությունն իսկ անհամատեղելի է ֆիզիկական ընկալման համար: Բայց ոչ հոգևոր ընկալման համար: Որովհետև եթե հոգին կույր չէ, խուլ չէ, անզգա չէ, ապա այն, ինչ անհնարին է մարմնավորի համար, կդառնա հնարավոր հոգեկանի համար:

Սա ընդգրկում, պարունակում, վերաբերում է անհատին, ընտանիքին, հասարակությանը, ազգին և մարդկությանը՝ որպես Աստվածային տարրերի:

Եվ այս տարրերի իսկական մեծությունը, զորությունը, կարողությունը և գոյության իմաստավորումը հարաբերակցում է այդ ընդգրկումի ու պարունակության աստիճանին:

Հիսուս Քրիստոսի ծնունդով՝ Աստուծո Մարդեղացման փրկարար շնորհի զորությամբ, Հայ Ազգի պետականորեն քրիստոնեացումով հայ մարդը, ինչպես նաև հայ ընտանիքը, հայ հասարակությունը, ազգն ու պետականությունը վերակերտեցին իրենց կյանքն այդ ինքնությամբ, այդ խնորհից լինելու ընդգրկումի ու պարունակի աստիճանով...

Եվ համաձայն մեր՝ այդ խնորհից լինելու հատկության՝ պետք է, և կարո՞ղ ենք մաքրվել, ձերբազատվել և սրբագործվել նյութապաշտության ախտից, ստրկամտության թմբիրից և հավատքից հեռացման և ուրացման ժանգից, որ զգաստանա մեր հոգին, ազատագրվի միտքը, զորանա կամքը, ծաղկի ստեղծագործ ոգին և բարգավաճի մեր անձնական, ազգային ու պետական կյանքը՝ թե՛ հոգևոր, գաղափարական ու բարոյական և թե՛ մարմնավոր, մտավոր ու նյութական՝ հոգուտ նաև մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու:

* * *

Հայության՝ որպես ազգի գոյապահպանունը, զարգացունը և վերելքը պայմանավորված են հայի ինքնության պահպանմամբ, զորացմամբ ու հարատև զարգացմամբ: Եվ սա հայտնի ճշմարտություն է: Սակայն հույժ կարևոր է, որ հայտնի դառնա նաև այն ճշմարտությունը, որ այդ պայմանի ապահովունը միայն ու միայն մեկ աղբյուր ունի՝ Աստուծո հավատքը Հիսուս Քրիստոսի Ավետարանով ու խաչով և դրա վերածունը ապրումի՝ այդ հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ (ՀԱԳ):

Դրանով կապահովվի թե՛ անհատ հայի և թե՛ համայն հայության ամեն ինչուն վերելքի պայմանը: Պայման՝ անխախտ, անբեկանելի, անփոփոխ:

Հայությունն իր կյանքը պետք է ինքնակամ նվիրի իր Արարչին՝ Աստծուն, որով և կյանք կունենա հավիտյանս: Կյանք՝ իմաստավորված, կատարյալ ու երջանիկ:

Հայը հավատքի կյանքի ամենօրյա ապրումով ավելի՛ պիտի ճանաչի, ապավինի ու նվիրվի իր Երկնավոր Հորը և պիտի ընդունվի Նրանից: Այնժամ հայը ավելի՛ կգորանա, կզարգանա, կերջանկանա՝ ծաղկեցնելով իր ազգն ու հայրենիքը՝ դրանով օգնելով նաև մարդկությանը և փառավորելով իր Հայր Աստծուն:

Ահա այս է ՀԱԳ-ը: Եվ այս է հայ ազգային պետական քաղաքականությունը, որից պիտի բխեն ազգային պետական ծրագրերը և դրանց իրագործման հայոց վերաբերմունքը, արարքներն ու գործերը:

* * *

Հայության՝ իր ինքնության գիտակցունը, արժևորումն ու այդ ինքնության նկատմամբ հավատարմությունը բխում են նաև հայի ներաշխարհից՝ նրա հոգևոր ժառանգությունից:

Ազգի հոգևոր ու աշխարհիկ պատասխանատուների կարևորագույն խնդիր-պարտականություններից է՝ ստուգել, քննել ու ապահովել ազգի ու ամեն մի հայի հոգևոր գեների (ժառանգակրության) առողջությունն ու կենսունակությունը:

Հայության հատվածները, մասնիկները որտեղ, ինչպես և ինչ պայմաններում էլ լինեն, իրենց որպես Ազգ միավորող և պահպանող շաղախն ու ազգային պետականության կառուցման ու այդ կյանքով ապրելու ձգտման ակունքը նրանց հավատքի ժառանգությունն է եղել՝ հոգևոր գեներով փոխանցված: Եական է, որ դրա վրա հիմնվի հայոց կրթությունն ու մշակույթը և ձևավորվի ազգային քաղաքացիական պարտքի գիտակցությունը:

Որքան անաղարտ, առողջ ու կենսունակ է այդ գենը, այնքան հստակ, մաքուր և զորեղ կլինի հայի և հայության ազգային ու մարդկային ինքնությունը, ինքնագիտակցությունը և դրանցով՝ քաղաքացիական պարտաճանաչությունն ու պատրաստականությունը:

Դրանից ուղղակիորեն կախված է թե՛ ազգի կազմակերպական կառավարման ունակության, կարողության, նպատակաուղղվածության ու կիրառության մակարդակը և թե՛ ամենակարևորը՝ իր հավատամքի և գաղափարախոսության նկատմամբ անձնական ու հավաքական հավատարմության հարատևությունը:

ՔՐԻՍՏՈՍ ՉԻ ՀԱՅԱՆՈՒՄ, ՀԱՅՆ Է ՔՐԻՍՏՈՆԵԱՆՈՒՄ

Ներկայիս հայ իրականության մեջ, հատկապես Սփյուռքի եկեղեցական քարոզներում ասվում է. «Աստված հայացուցինք, Քրիստոս հայացուցինք, Քրիստոսի եկեղեցին հայացավ»: Ինչպե՞ս կարող էին հայանալ, երբ հայը հենց ինքն է Աստուծունը, Քրիստոսինն ու Նրա եկեղեցունը, Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն: Չէ՞ որ Աստուծո Որդին Սուրբ Հոգով ստեղծեց ամենը, ինչ որ կա: Եվ որևէ բան առանց Նրան չի ստեղծվել՝ ո՛չ հայը, ո՛չ աշխարհը, ո՛չ տիեզերքը, քանզի Նա՛ է Սկիզբը և Վերջը, Ալֆան և Օմեգան...

Աստուծո Հոգին կա նաև հայ ազգի մեջ: Եվ Տրդատ արքան շատ անառակ որդիներից մեկն էր, բայց առավել սիրելի, այդ պատճառով փրկության հավատքով լուսավորվելու առաջնությանն արժանացան նա և նրա տերությունն ու սերունդները: Աստված «չտրդատացավ», Տրդատն աստվածացավ, ինչպես Լուսավորիչը Քրիստոսին չհայացրեց, այլ Քրիստոսի՝ հայկական եկեղեցին հաստատեց. Աստուծո Հոգով՝ հայի հոգին, միտքը և նրա կյանքի ճանապարհը լուսավորող սրբարան կառուցեց: Կառուցեց օգնելու, որ հայը Հոր հարազատ որդի և Նրա արքայության ժառանգորդ դառնա՝ Աստվածային խորհուրդներին և բնությանը հաղորդվելով: Եվ ըստ այնմ ապրելով...

Ինչպես Ավետարանն է ասում. «Եվ Որդին կասարում է Հոր գործերը: Դրանից է երևում, որ որդին Որդի է»:

Եվ Աստուծո հայ որդու գործն է, որպես հոգու պարտականություն պահպանել, զարգացնել և ծաղկեցնել իր ազգը՝ հայությունը, և նրա Աստվածատուր հայրենիք Հայաստանը՝ որպես մարդկային ընտանիքի հարազատ ու օգտակար մասնիկ:

Աստվածային կամքի, նպատակի, ծրագրի ճանաչումը և կենսագործումը հնարավոր է առաջնորդվելով ու ապրելով Աստուծո Հոգով: Եվ առանց այդ Հոգուց սնվելու՝ լուսավորվելու, անհնարին է որևէ դրական բան անել:

Սա՛ է եղել մեր նախնյաց պետականորեն ընդունած 1700-ամյա Աստվածաշնորհի Հավատամքը: Այդ հավատից է բխում և նրա վրա է հիմնված Հայոց Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ)՝ ազգի և նրա պետականության հարատև իմաստության, զորության, կենսունակության և վերելքի Աստվածատուր շնորհը:

Հավատքով լուսավորված մեր Սուրբ Հայրերն ազգը ՀԱԳ-ով դաստիարակելու ու այն կյանքի ապրում դարձնելու նպատակով առաջ բերեցին Թարգմանչաց շարժումը, որը դարձավ Քրիստոսափառ հավատքի գիտության

դարբնոցը և կյանքի հոգևոր ու մտավոր ապրումի փարոսը:

Բավականին երկար ժամանակ է, որ մեր ազգի գոյության ամենամեծ, ամենափառավոր ու ամենակենարար շարժման հավատքի լույսին՝ իմաստությանն ու գիտությանը, այլևս լավ հաղորդ չեն մեր հոգիներն ու մտքերը: Ոչ թե լույսը՝ իմաստությունն ու գիտությունն են նվազել, այլ մեր հոգու և մտքի տեսողությունն ու լսողությունն են խիստ տկարացել: Արդյունքում՝ շատ հաճախ խավարի գործերին ենք ձգտել և խավարի միջով ընթացել ու ընթանում՝ անօրինությամբ, նյութապաշտությամբ, անխղճությամբ, անզգամությամբ, հավատալուրացումով, գաղափարազրկությամբ, կոռումպացմամբ ու ազգային դասալքությամբ:

Նախքան քաղաքական մեր նորոգ ազատագրումը, երբ մենք մեզ չէինք պատկանում, և մեզ քշում, տանում էին, մեր կուրությունը և խլությունը շատ չէր զգացվում: Հիմա ավելի է զգացվում, երբ ազատ լինելով՝ փորձում ենք մենք մեզ պատկանել և մեր սեփական ուղով ընթանալ, բայց լավ չի ստացվում, որովհետև պատրաստ չենք: Բայց պատրաստ չլինելը չարյաց փոքրագույնն է, ուղղելի է. զգույշ լինենք ու աղոթենք, որ անարժան չգտնվենք: Որովհետև, ըստ երևույթին, այդ վտանգը կա՛, քանի որ մեր հայրենիքի ազատագրման և պետականացման պատմական մրցահրավերը ժամանակին չզգացինք, չգիտակցեցինք, չգնահատեցինք և ըստ այնմ չնախապատրաստվեցինք... Եվ խարխափում ենք՝ հոգով, մտքով, գործով և... անգործնականությամբ: Արդյոք հոգու կուրության և խլության պատճառով չէ՞...

Ձարթնի՛ր, լաո՛ւ. բա՛ց սիրտդ, միտքդ ու հոգիդ Սուրբ Հայրերիդ հավատքի լույսին՝ իմաստությանն ու գիտությանը, որ զորանաս և կարողանաս քո մեջ վերակերտել նրանց Աստվածակերտ հոգևոր ու մտավոր կերպարը, որ ապրես դրանով ու արժանանաս իրական ազատության, քո գոյության իսկական անկախության, բարգավաճման, վերելքի և կյանքի լիարժեք, երանելի՛ երջանկության: Այժմ և միշտ...

ՏԵՍԻՔ, ՈՐ ԿԱՐՈՂ Է ԻՐԱԿԱՆԱՆԱԼ

301 թվականին սրբագործված և դարերի ընթացքում հայության ապրումը դարձած Հայ Ազգային Գաղափարախոսության (ՀԱԳ) արդի գործնականացման ընթացքում Հայաստանում կառաջանա նաև մի նոր քաղաք՝ «Քրիստոսակերտ» անվամբ:

Մինչ այդ, սակայն, Հայոց ազգային վերականգնված հանրապետությունը պետք է Քրիստոսասեր՝ հռչակվի, և նրա սրբագործված կղերականության, ազգային ղեկավարության և մտավորականության օրինակով ու առաջնորդությամբ քաղաքներում ու գյուղերում Քրիստոսասեր Հայաստանի Հանրապետության Սուրբ Ասպետությամբ տոգորված քաղաքացիները շատանան Սուրբ Հոգով՝ ի փրկություն և ի վերելք հայ ազգի ու հայրենիքի, ի բարօրություն

ու առաջադիմություն մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության:

Աստված օգնի հայ ազգին, որ այս տեսիլքն իրականանա...

Դրա արդյունքում ի՞նչ վեհություն կառաջանա ու ինչպիսի՞ երանություն հայ մարդու, հայ ազգի և համայն մարդկության համար:

Եվ այդ բոլորն ի փառս Սուրբ Երրորդության՝ Աստուծո:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԳ

ՀԱՅ

ԱԶԳԱՅԻՆ

ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ

ՀԱՅ

ԿՅԱՆՔԻ

ՄԱՐԴԿԱՅՆՈՐԵՆ

ԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ

ՄԱՐԴ ԷԱԿԻ ԿՅԱՆՔԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԻՄԱՍՏԸ ԿԱԶՄՈՂ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԴՐԱ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄԸ

(Հայ Ազգային Գաղափարախոսության տեսակետից)

Մարդ էակի կյանքը որպեսզի իմաստավորվի, պետք է էական նպատակ-խնդիր ունենա, ու այն կենսագործվի, արդյունք տա:

- Ինչպե՞ս կիմաստավորվի կյանքը և կարդյունավորվի այն:

- Երկրային կյանքի ապրումն իմաստալից կդառնա ու կհասնի նույնիսկ երանության, եթե ծառայի իր հոգուն այնպես, որ այն արժանանա երկնային թագավորությանը:

Այդ նպատակը և դրա կատարումը հոգևոր արժանիք է: Հետևապես, մարմինը (և բոլոր աշխարհիկ կարողությունները) պետք է ծառայի որպես հոգու, այսինքն՝ իսկական եսի միջոց՝ կատարելու համար նրա երկրային կյանքի էական նպատակ-խնդիրը, որն է՝ արժանանալ հավիտենական կյանքին Աստուծո Արքայությունում:

Ինչպես մարմնին պետք է սնունդ, հագուստ, տուն և տարբեր միջոցներ ապրելու համար, այնպես էլ հոգուն են պետք կենսամիջոցներ: Ու Աստված հոգուն տվել է մարմին՝ երկրային կյանքում բնակվելու և մարմինը որպես գործիք, որպես միջոց օգտագործելով՝ աշխատելու, ստեղծագործելու և Աստուծո կամքն ու ծրագիրը կատարելու համար:

Հոգուն ծառայելու ունակությունն ու կարողությունն են, վերջին հաշվով, որ արժևորում ու կարևորում են մարմինը:

Ուրեմն՝ կյանքի իմաստավորումն Աստուծո կամքի և ծրագրի կատարումն է. պահպանել անձը՝ հոգիդ և մարմինդ մաքուր, առողջ, կենսունակ ու այդպես ծառայել մարդկությանը՝ այդպես պահպանելով և բարձրացնելով ընտանիքդ ու ազգդ: Ինչպես հոգուդ համար մարմին է պետք, իսկ մարմնիդ՝ տուն, այնպես էլ ազգիդ համար հայրենիք է պետք ու հայրենիքիդ՝ պետականություն: Մարմնիդ առողջությունը, զորությունն ու վայելչությունը պետք է հոգուդ. հայրենիքիդ, կարողությունը, զորացումն ու ծաղկումը պետք է ազգիդ, որը կենսունակ պետականությամբ կլինի, իսկ պետականությունը կազմակերպական կառավարման կառույց է, միջոց է, ինչպես տանդ կառավարման կազմակերպումը:

Երկիրդ էլ պետք է մաքուր, առողջ, գեղեցիկ պահի մարդկության տունը՝ Աստուծո ստեղծած և մարդուն ժամանակավորապես (արենդայով) հանձնված երկրագունդը: Եվ, ինչպես որ մարդկությունը պահպանելու և բարձրացնելու համար պետք է պահպանես ու բարձրացնես ընտանիքդ ու ազգդ, այնպես էլ մարդկության տուն-ազարակը՝ երկրագունդը, պահպանելու և ծաղկեցնելու համար պետք է այդ անեն ազգիդ տուն-ազարակի՝ երկիրդ: Հայաստանի համար: Ընտանիքիդ համար էլ՝ այդպիսի՝ տուն, և հոգուդ համար այդպիսի՝ մարմին է պետք, ըստ Աստուծո հավատքից բխող և դրա վրա հիմնված մեր Հայ Ազգային Գաղափարախոսության:



Կյանքում տարբեր տեսակի պատահարները, ներառյալ հիվանդություններն ու էական կորուստները, օրինաչափության օրինաչափություններից են, որ ունեն իրենց ուրույն իմաստն ու բնորոշումը՝ ոչ միշտ ըմբռնելի երկրային դատողությամբ... Այդ չի նշանակում, սակայն, որ քրիստոնեական հավատքից բխող և նրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությանն անըմբռնելի է երկնային դատողությունը: Այլ նշանակում է, որ մեր հավատքի հոգևոր իշխանությունը՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, իրեն վերաբերող և չվերաբերող երկրային բազում հարցերով զբաղվածության մեջ, պետք է ժամանակ գտնի իր հոգևոր կոչումին և պարտականությանն ուղղակիորեն առնչված երկնային օրինաչափություններից բխող տրամաբանություններն ու դատողությունները երկրայինի թարգմանելու և մեզ՝ ժողովրդիս, լուսավորելու համար:

Դրանց մեջ առաջնությունը, ըստ երևույթին, պետք է տրվի այնպիսի եղելությունների թարգմանությանը, ինչպես հայոց ցեղասպանությունը, հանընդհանուր աքսորը, Էրզրի կորուստը, ազգի սփռվածությունը, ազգի տկարությունն ու նաև նրա բազում հարածուն ախտերի՝ անտարբերության, օտարանդության, այլասերման և նման այլ պատճառների բացատրությունը, դրանց հավանական հետևանքների և այդ հետևանքներից խուսափելու համար՝ մեր անելիքները, որ չենք անում, և մեր չանելիքները, որ անում ենք: Հայոց հոգևորականության այս պարտականության կատարման համար ունեցած կենսական նշանակությունը կասկած չի հարուցում: Պետք է անկասկած լինի նաև դրա կատարման պատրաստականությունը, ինչպես անկասկած է մեր հոգևորականության կարողությունը՝ առնվազն տեսական...

ՄԱՐԴԱՅԻՆ ՀԱՅ ԻՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՌԱՆՑՔԸ

ՍԵՐՆ Է, ՄԻՋՎԱՅՐԸ՝ ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ

Աստվածային Հոգու բնությամբ՝ Նրա կամքով և ծրագրով ստեղծված մարդկային կյանքի առանցքը սերն է: Այն ամենակենարարը, ստեղծագործականը և կառուցողականը լինելով՝ առաջնային և հիմնական նախապայմանն է մարդկության զարգացման, որն ընթանում է ազգերի զարգացման միջոցով, որը և՛ ընտանիքի, իսկ վերջինս էլ՝ անհատի զարգացման միջոցով՝ հոգեպես, բարոյապես և նյութապես...

Սերը ծնում է սրբություն, այն տարրը, որը պարունակող միջավայրում սերը գործում է ստեղծագործաբար, կառուցողականորեն՝ կյանք ու երջանկություն պարգևելով... Եվ կյանքը, երջանկությունը և երանությունն իսկ սիրո առանցքի շուրջ են ստեղծագործվում և կառուցվում: Ինչքան կատարյալ, ազնիվ (այսինքն՝ անխառն, անարատ) է սերը՝ առանցքը, հետևապես և սրբու-

թյան մթնոլորտը, միջավայրը, այնքան դրան համապատասխան են ստեղծագործությունը, կառուցողականությունը կյանքի ու երջանկության... Ամեն ինչ, որ հեռանում է առանցքից և ընկնում այլ մթնոլորտի, միջավայրի մեջ, կենսազրկվում, աղավաղվում, այլասերվում և ոչնչանում է իր էությամբ: Դրա ձևը կարող է միառժամանակ մնալ (մարդկային կյանքում անձի, ազգի, հասարակության մեջ դա կարող է օրերից, ամիսներից մինչև տասնյակ տարիներ տևել) ու արդեն թեև արհեստական դարձած նրա փայլը կարող է հրապուրել թուլացած, խախտված հոգիներն ու մտքերը, բայց ոչինչ տալ չի կարող, բացի, վերջին հաշվով, ախտից, վարակից, քայքայումից և կորստից...

Շատ բարդ, միառժամանակ հստակ և պարզ վիճակ ու հեռանկար է սա, որի ըմբռնումից և ըստ այնմ անդրադարձից կախված է անձի, ընտանիքի, ազգի և մարդկության կյանքի վիճակն ու հեռանկարը: Այդ ըմբռնումը, եթե երկրային գիտությամբ է միայն, այդ դեպքում կարելի է խճճվել, ապակողմնորոշվել, խաբվել և մոլորվել... Սակայն, եթե երկրային գիտությամբ, բայց տոգորված Հիսուս Քրիստոսի հավատքի շնորհով ու իմաստությամբ է, այդ դեպքում կարելի է պարզ և հստակ ըմբռնել, այնքան դյուրին, մանկանն իսկ հասկանալի: Որովհետև Քրիստոսի հավատքը Լույս է, որ փարատում է խավարը և տեսանելի դարձնում ճշմարտությունը՝ ԿՅԱՆՔԸ, նախևառաջ մանուկներին ու այս աշխարհի ոչ թե գիտուններին և հզորներին, այլ միամիտներին և տկարներին...

1700 տարի առաջ մեր ազգն իր պետականությամբ Աստվածաշնորհ քրիստոնեական հավատքի լույսով լուսավորվեց հոգով, մտքով և տեսավ, հասկացավ ԿՅԱՆՔԸ ու ապրում դարձրեց այն:

Մեր նախնյաց այդ կյանքի ապրումով առաջացած արդյունքի հոգևոր ժառանգությամբ է, որ գոյատևել ենք: Այժմ սպառված է արդյոք այդ ժառանգությունը, թե՞ ոչ: Սա էական հարց է, որի պատասխանը երևի հաստատ չգիտենք: Բայց մի բան հայտնի է, որ այդպիսի՝ կյանքի ապրումով վաստակված ժառանգությունն է, որ պետք է ստեղծենք և փոխանցենք սերունդներին, որպեսզի ԿՅԱՆՔ ունենան մեր ազգը, մեր հայրենիքը, մեր որդիներն ու թոռները և մենք՝ այժմ և միշտ...

Աստուծո օգնությամբ:

12-ը սեպտեմբերի, 1998 թ.

ՀԱՎԱՏՔԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մարդկային ցեղի՝ հայ ընտանիքի էության ամենաբնորոշ հատկանիշն այն է, որ իր՝ հայի էությունը ստեղծված օրից շաղախված է Աստվածաշնորհ Հավատքի իմաստությամբ և գիտությամբ: Սակայն անդրադառնանք հավատքի գիտությանը, որի կատարելության գագաթնակետը Քրիստոսի Ավետարանն է. «Տերևն անգամ ծառից չի ընկնում առանց Աստուծո գիտության»... Իսկ

մարդկության քրիստոնեացած առաջին պետությունը Յայոցն է՝ աշխարհի ոչ մեծ մի պետություն: Եղելություն, որ ավելին է, քան տերևի՝ ծառից ընկնելը:

- Ինչո՞ւ...

- Յարցին պատասխանենք հարցով: Իսկ ինչո՞ւ Աստված մարմնացավ՝ Իր Որդու ծնունդով մսուրի մեջ, աշխարհի ոչ մեծ երկրի ամենահամեստ անկյունում...

Այն ամենը, ինչ որ հայն ու հայությունը կատարել են որպես էական արժեք և դեռ պիտի անեն, քանի որ կոչված են և պարտավոր են անել, հավատքի՝ գիտությամբ է...

* * *

Յավատքի գիտությունը սեկուլյար գիտությամբ չպետք է ընկալենք, այլ Աստուծո հավատքով՝ Ավետարանի գիտությամբ: Այլապես մտքով կհիմարանանք և հոգով կսնանկանանք...

... Ոչ միայն հակագիտական, իռացիոնալ, այլև պարզ տրամաբանությունից զուրկ է (էլ չասած, որ մեղանշում և կուրություն է) Յայ Ազգային Գաղափարախոսությունը գիտականորեն որոնելիս չնայել առաջին հերթին և գլխավորապես 1700 տարի առաջ մեր ազգի խիղճն ու գիտակցությունը Սուրբ Երրորդության հավատքով և դրանից բխող ու դրա վրա հիմնված Յայ Ազգային Գաղափարախոսությամբ (ՅԱԳ) վերակերտողներին: Չէ՞ որ նրանցից մեկին՝ Սեարոպ Մաշտոցին, փաստորեն, գիտնական հռչակելով՝ նրա 1600-ամյակը ամենաբարձր գիտական գնահատականներով ազգովին ու միջազգայնորեն տոնեցինք նույնիսկ խորհրդային տարիներին՝ 1962 թվականին, ոչ միայն մեր սեկուլյար, այլև պաշտոնապես անհավատ հռչակված ժամանակ: Այդպես վարվեցինք և արձաններ կանգնեցրինք նաև մեր շատ խորենացիների ու նարեկացիների...

Այս տրամաբանությամբ պետք է ակնկալել (գուցե և պահանջել), որ հայ գիտությունը, մտավորականությունը և հատկապես պետական, քաղաքական և հասարակական ղեկավարությունը հռչակեն իրենց հավատարմությունը մեր 1700-ամյա Յավատքին և վերանորոգեն իրենց հավատքով ու ՅԱԳ-ով Ազգին ու Յայրենիքին ծառայելու 1700-ամյա Ուխտը՝ Յայոց Յայրապետության առաջնորդությամբ ու օրինակով...

Սա դառն լուծ է ծանր բեռ չէ՛, այլ Տիրոջ շնորհած քաղցր լուծը և թեթև բեռը՝ իմաստը կյանքի և ուղին հավերժական երանության...

Բացե՛նք մեր սրտերը Տիրոջը, արժանանանք Նրա Շնորհին...

* * *

Մեր նախնյաց հավատամքից բխող և դրա վրա հիմնված գաղափարախոսությամբ (Հայ Ազգային Գաղափարախոսություն) մեր կյանքը Աստվածահաճո ապրումի վերածելու անկեղծ ձգտումը մեր ազգի կենարար ժառանգությունն է, որ ի զորու է հատուցելու թե՛ մեր բազում մեղքերի և թե՛ մեր բոլոր կարիքների ու պահանջների համար, ի զորու է բացելու մեր առաջ փակված բոլոր դռները և ի զորու է ապահովելու մեր Ազգի ու Հայրենիքի անվտանգությունն ու հաստատուն վերելքը միշտ, ամենուր ու ամեն ինչում:

Միայն թե կարողանանք արժանի դառնալ Սուրբ Հայրերի ժառանգությանը: Դրա համար պետք է զգաստանանք և վերափոխվենք այնպե՛ս, որ կարողանանք այսօրվա փորձությունների, մոլորությունների և գայթակղությունների մեջ վերագտնել մեր Աստվածապատգամ ուղղությունը, ընթանալ նրանով և դառնալ Աստուծո Ազգը:

Մի՞թե սա չէ մեր ամբողջ ազգի, մեր պետականության, մեր Հայրապետության և բոլորիս գերխնդիրը... ռազմավարությունը, քաղաքականությունը և կյանքի էական, երանելի իմաստը, որը կարող ենք կենսագործել մեր Սուրբ Հայրերի հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ... որ սկիզբ առավ Հայկ Նահապետի Աստվածատուր ազատասիրությամբ, սրբագործվեց 301 թվականին՝ Ազգի Քրիստոսասիրությամբ, և որպես սրբազան, էական և կենսատու ժառանգություն՝ հասավ 21-րդ դարի հայ իրականությանը՝ մեզ:

3-ը դեկտեմբերի, 1998 թ., Երևան

ԱԶԳԻ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝ ԻԲՐԵՎ ԽԱԶ, ՈՐՈՎ ԵՎ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԿՅԱՆՔ

Եվ ով իր խաչը չի վերցնում ու Իմ հետևից չի գալիս, Ինձ արժանի չէ:

Ով որ իր անձը գտնում է, այն կկորցնի, և ով իր անձը կորցրեց Ինձ համար, այն կզսնի:

(Մատթ. 10.38-39)

Խաչը կյանքի տարբեր խնդիրներն են, որոնք խաչի հավատքով լուծվում են ի բարին:

Միրելով Աստծուն և մերձավորին խաչի հավատքով, ըմբռնումով և գիտակցությամբ՝ կառաջանա ընտանիքի, ծնողների, բարեկամների ու մերձավորների (բոլորի) նկատմամբ խնամք, նվիրվածություն և ընդհանրապես կառաջանա կյանքում առաքինություն, ազնվություն, սկզբունքայնություն, արդարամտություն, հանդուրժողականություն, ժուժկալություն, բարեսիրություն, արիություն, հավատարմություն, սեր ու ամեն ինչ, որ առաջանում է սրանցից:

Այս բոլորն ընդհանրական մարդկային լինելով՝ անհրաժեշտ են, բայց դրանք նաև բավարար կդառնան Երկնային Արքայությանն արժանանալու համար՝ ուղղակիորեն առնչվելով նաև ազգին ու հայրենիքին: Տվյալ դեպքում հայի՝ «հավիտենական կյանքին արժանանալու համար, Աստվածաշնորհ քրիստոնեական հավատքից բխող և նրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության համաձայն, հայը պետք է վասն Սուրբ հավատի ու նաև Ազգի և Հայրենիքի ապահովության, զարգացման ու բարգավաճման խաչը վերցնի ու գնա Հիսուսի հետևից, որ տանում է հավերժական կյանք: Հայերի համար հավիտենական կյանքի անձնագրերը հայկական դրոշմ ունեն...»:

Աստվածաշնորհ քրիստոնեական հավատքով՝ Ավետարանով և խաչով, հայ հավատացյալները, մեր իրավ՝ հոգևորականության առաջնորդությամբ, հայ ազգի աղն ու լույսն են, որով և Կյանք կունենան, եթե իրենց շնորհվածը գործադրեն ազգի ու հայրենիքի (որով և մարդկության) բարօրության համար: Եվ կկորչեն, եթե զլանան գործադրել իրենց շնորհվածը, քանզի «*Ում աս է սրված, աս էլ թափանջվելու է նրանից*»: Ավետարանում նաև ասված է. «*Դուք եք երկրի աղը. սակայն եթե աղն անհամանա, ինչո՞վ այն կաղվի, այնուհետև ոչ մի բանի յոհանի չի լինի, այլ միայն դուրս կթափվի և մարդկանց ոտքի կոխան կլինի: Դուք եք աշխարհի լույսը. մի ֆաղաֆ, որ լեռան վրա է կանգնած, չի կարող թափվել: Եվ ծրագ չեն վառում ու կաթսայի ջակ չեն դնում, այլ՝ առժամակի վրա, և նա լույս է տալիս բոլոր նրանց, որ ճան մեջ են*» (Մատթ. 5.13 - 15):

* * *

Հայոց պետականորեն քրիստոնեանալու 1700-ամյա տարեդարձի տոնակատարությունը որպեսզի էապես իմաստավորվեր, պետք է դառնար հայոց հոգևոր վերազարթոնքի և հավատքի վերահաստատման տոն: Բացի դրանից, այն պետք է դառնար նաև ազգային կյանքում քրիստոնեական նորմերի վերաճանաչման, վերահաստատման և դրանք կյանքի ապրում դարձնելու ուխտի օր՝ ամենօրյա կիրառությամբ և ամենամյա ստուգատեսներով:

Ծա՞նր բեռ է, խի՞ս է, հոգնեցուցի՞չ: Այո՛, այդդե՛ս է, եթե այդ բեռը չենք վերցնում որդես խաչադա՞ռ ժողովուրդ: Այդ դեղինում 1700-ամյակի մասին խոսելն էլ ավելորդ է: Նույնիսկ ազնի՞վ չէ, ամո՞թ է: Իսկ եթե որդես ֆիստոնյա ենք վերցնում այդ բեռը, ադա երանելի ենք: Սեր Տերն ասել է. «Իմ լուծը ձեզ վրա վերցրե՛ք և սովորեցրե՛ք Ինձնից, որ հեզ են և ւրսով խոնարհ, և ձեզ համար հանգիստ յոհի զսնեք, որովհետև Իմ լուծը ֆաղր է և Իմ բեռը՝ թեթև» (Մատթ. 11.29):

Երկակիություն չկա, երկու տիրոջ չի կարելի ծառայել... Քանզի Տերը մեկն է...

Չի՛ կարելի, հնարավոր չէ՛ թե՛ նյութապաշտ ու քաղքենի լինել և թե՛ Աստվածապաշտ ու գաղափարական: Չի՛ կարելի, հնարավոր չէ՛ միաժամանակ ծառայել մամոնային և Աստծուն...

1700 տարի առաջ մեր Սուրբ Հայրերն Աստվածային շնորհով հոգեպես լուսավորվելով՝ երկրային պաշտոնականությամբ՝ պետականորեն և հավաքականորեն ընտրություն կատարեցին: Մերժեցին այն, ինչ որ մերժելի էր, և դավանեցին այն, ինչն իրենց հոգուն խոսեց՝ Լույսի Լույսը, մեկընդմիջտ, որով և այդ հավատով արդարացան ու ապրում են հավիտյանս, ըստ Աստվածային կամքի: Եվ մեզ էլ ժառանգություն թողեցին այդ հավատքը, որով ազգովին ապրեցինք ու ապրելու ենք հավիտյանս, եթե այսուհետև էլ հավատարիմ մնանք խաչին, որ դրոշմված է հայի սրտում: Այն զգալու համար պետք է սիրտը սրբել, մաքուր պահել. անել այն, ինչ որ մեր Սուրբ Հայրերն արեցին՝ իրենց սրտերը դարձրին իրենց Տեր Աստծուն, և մեզ էլ պատգամեցին հետևել իրենց, չձեռվել խաչի ուղուց, այլ ինչպես Առաքյալն արեց՝ կատարել ընթացքը:

Ուրեմն՝ 1700-ամյա տարեդարձի՝ մեր քրիստոնեական հավատքի ընդունման և հավիտյանս կյանքի ապրում դարձնելու Ուխտի օրը, փաստորեն, կարող էր դառնալ և հիմա՝ ու այսուհետև բոլոր տարեդարձերին, պետք է դառնա Ազգի, Հայրապետության և Պետականության Քրիստոսի խաչին նորոգ հավատարմության ուխտի տոն:

Եվ հայոց սրտերը, հոգիները և Հայոց աշխարհը վերալուսավորվելով՝ հայ կյանքը կընթանա Աստուծո Հոգու շնորհով: Ազգը, երկիրը և պետությունը կազնվանան, կիմաստնանան, կգորանան, կաճեն ու կբարգավաճեն նաև հօգուտ մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության:

Կարո՞ղ է ազգն այս բեռը վերցնել իր վրա՝ Տիրոջից սովորելով: Կարո՞ղ է հայ հոգևոր ու աշխարհիկ ղեկավարությունը խաչն առնել, ազգի զլուխն անցնել ու հետևել Հավատքի Ջորագլուխին՝ Հավիտյանս Տեր Հիսուս Քրիստոսին, դեպի... ԿՅԱՆՔ:

Հինգշաբթի, 23-ը հոկտեմբերի, 2003 թ., ժամը 8:10

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՐԱ

ԵՎՍ ՄԻ ՕԳՈՒՏԸ ՀԱՅ ԱԶԳԻՆ

Ճշմարտությունն ընդհանրապես էական է, բայց մեր դեպքում՝ հայ իրականության մեջ, հայության արդյունավետ ու հեռանկարային հաջողությամբ կառավարման հիմքն է, որի վրա կերտվում է վստահություն, հարգանք և հարազատություն: Սրանք հանգամանքներ են, առանց որոնց անհնարին է հայ կյանքում հաջողությամբ կառավարել, առաջնորդել ու ապահովել հիմքը հաղթանակների և վերելքների դեպի ազգային ապահովություն, բարգավաճում ու իմաստալից կյանքն Աստվածահաճո:

Ճշմարտությունը նաև առաջացնում և սնում է միասնության ոգի և միասնական նպատակ, մի հանգամանք, որը նույնպես օդի պես պետք է հայությանը:

Սակայն ի՞նչ է ճշմարտությունը:

Երկու հազար տարի առաջ հռոմեացի կառավարիչն այդ հարցը տվեց Հիսուս Քրիստոսին, Նրան, Ով հավիտյանս մարմնավորում է ճշմարտությունը և Ինքը հոգին է ճշմարտության...

1700 տարի առաջ մեր նախնիք ընդունեցին Աստվածաշնորհի հավատքը, և մենք ազգովին հասկացանք, որ ճշմարտությունը Հիսուս Քրիստոսն է, Նրա Աստվածությունը:

Եվ հայ ազգի մեծերի, սրբերի՝ այդ հավատքով մեզ պատգամած Հայ Ազգային Գաղափարախոսության (ՀԱԳ) համաձայն՝ մարդկային կյանքի, նույնպես և հայ կյանքի որևէ բնագավառի, որևէ դրվագի առնչվող ճշմարտությունը ճշմարտություն է, եթե բխում է Քրիստոսի ճշմարտությունից:

Ընդունե՛նք մեր մեծերի, սրբերի պատգամած ՀԱԳ-ը և ճանաչե՛նք ճշմարտությունը, որպեսզի միշտ, ամենուր, ամեն ինչում ծառայենք Աստծուն՝ ունենալով իմաստալից, կենսունակ կյանք և չարի դեմ հաղթանակներ:

3-ը հունվարի, 2005 թ.

ԳՈՅՈՒԹՅԱՆ ՄԱՐՆ ՈՒ ԱՆՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ

(ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության)

Եթե միտք ունես, մտածում ես, ուրեմն կաս, գոյություն ունես: Այդ դեպքում մի օր պիտի մեռնես, անպայման: Որպեսզի չմեռնե՛ս, պետք է գոյությունդ հարատևի: Բայց ինչպիսի՞, ո՞ր գոյությունդ ու ինչպե՞ս հարատևի...

Քանի որ միտք ունես և մտածում ես և, ուրեմն, գոյություն ունես, այդ գոյության վերջը պետք է գա, ըստ դրա բնության: Սակայն եթե ուզում ես, որ քո գոյությունը չմեռնի, հարկ է, որ ապրես նաև ըստ մի այլ բնության՝ քո երկրային հոգևոր բնության, որն այս կյանքում պետք է ծննդագործես՝ ստեղծես, աճեցնես, պաշտպանես ու ապրեցնես: Ինչպե՞ս: Հավատքով և հավատքի գործերով: Այն ժամանակ քո երկրային գոյությունը կստանա երկնային իմաստ և կսկսի գործել քո երկնային գոյության կերտման համար: Եվ կստացվի, որ թեև մարմնով ես, բայց գործերդ հոգևոր են, թեև ժամանակավոր ես, բայց գործում ես քո երկնային հավերժության համար: Եվ այդպիսի՝ երկրային գոյությանդ ավարտով կսկսվի երկնային գոյությունդ: Այսինքն՝ գոյությանդ հարատևումը հավիտյանս՝ անմահությունը:

Ու եթե հայ՛ ես ու երկրային կյանքդ ապրում ես երկնային իմաստով ու նպատակով և հոգու պարտքի հավատքով ու գիտակցությամբ ծառայում ես քո Արարիչ Աստծուն, կատարում ես Նրա կամքը, նպատակը և ծրագրերը՝ ծառայելով ազգիդ, հայությանը, որպեսզի քո ազգն էլ այդ հավատքով և գիտակցությամբ ծառայի Աստծուն՝ ծառայելով մարդկությանը, որպեսզի

մարդկությունն էլ այդ հավատքով և գիտակցությամբ ծառայի Աստծուն միշտ, ամենուր ու ամեն ինչում, ապա դա նշանակում է, որ դու ճանաչում ես, ընդունում ես և ապրում ու գործում ես ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության: Այն գաղափարախոսության, որը բխում է և հիմնված է Աստուծո հավատքի վրա՝ Ավետարանով և խաչով:

Կիրակի, 20-ը փետրվարի, 2005 թ., ժամը 10:30

ՔՆՆԵՆՔ ՈՒ ՔՆՆԱՐԿԵՆՔ ԱՅՆՊԵՍ, ՈՐ ՀԱՍԿԱՆԱՆՔ

Աշխարհի՛ գիտուններ և գիտնականներ, ուսյալներ և մասնագետներ, փորձառուներ և փորձագետներ, խելացիներ, իմաստուններ ու նաև ղեկավարներ և տիրակալներ, ձեր ամբողջ ուսումնական, նյութական ու իշխանական կարողությամբ՝ բոլոր համակարգիչներով, օգնականներով և խորհրդականներով խորհրդակցե՛ք, քննե՛ք, քննարկե՛ք, հաշվե՛ք ու հաշվարկե՛ք, թե ի՞նչն է, ո՞րն է մարդկային կյանքում մարդու ամենամեծ, ամենակարևոր ու կենսական հատկությունը: Հատկություն՝ անգերազանցելի, անփոխարինելի ու հավերժորեն էական:

Չի՞ ստացվում հարցի պատասխանը: Չի՞ ստացվում, քանզի չի՛ կարելի գտնել, իմանալ այդ պատասխանը, եթե երկրային, հողեղեն տրամաբանությամբ և կարողությամբ է փնտրվում: Երկրային և հստակ, մատչելի ու հասկանալի պատասխանը կարելի է ստանալ երկրային, բայց հոգեղեն տրամաբանությամբ ու կարողությամբ՝ Աստվածատուր և Քրիստոսակերպ:

Այդ պարագայում պատասխանն Աստուծո նկատմամբ Սերն է... որով և՛ սերը մերձավորի նկատմամբ:

Սեր, որ կերտված է Ալֆայով և Օմեգայով, որ ստեղծագործել է տիեզերքի՛ երկնքի ու երկրի, երևելիների ու աներևույթների էությունը, գոյությունը, զարգացումը, հավասարակշռությունը և կյանքը Քրիստոսով: Սա՛ է պատասխանը, որը մեզ՝ մարդկանց համար պարունակվում է Նրա հավատքի մեջ իր Ավետարանով և խաչով:

Եվ մեզ՝ հայերիս համար այդ հավատքից բխում է և դրա վրա հիմնված է մեր Հայ Ազգային Գաղափարախոսությունը, որի ճանաչումը, ընդունումը և կիրառումն անձնական, ազգային և պետական կյանքում կերաշխավորի հայի և հայության Աստվածահաճո երջանիկ գոյությունը երկրային կյանքում, որը նաև հօգուտ մարդկության և երկնային հավիտենական կյանքում՝ ի փառս Սուրբ Երրորդության:

ԳԼՈՒԲԱԼԱՑՈՒՄ

Բարու և չարի գլոբալացում՝ նախնական և ժամանակակից

Բարու գլոբալացումը՝ համաշխարհայնացումը, աշխարհի քրիստոնեացմամբ է: Չարի գլոբալացումը՝ համաշխարհայնացումը, աշխարհի նյութապաշտացմամբ է:

Նախնական՝ ադամական բարու գլոբալացումը, որ Աստուծո՝ մարդուն շնորհած Իր կերպարի մարդկայնությամբ առաջացավ, աշխարհը փորձում է փոխել չարի՝ նյութապաշտության գլոբալացմամբ:

Նախնական գլոբալացման հոգով, Աստվածորդու՝ խաչի վրա թափած արյան հավատքով Նոր Ուխտի երկուհազարամյա գլոբալացման դեմ շարունակվում է չարի՝ նյութապաշտության գլոբալացումը ժամանակակից փաթեթավորմամբ...

Նորագույն պատմաշրջանում կոմունիզմի քրիստոսամարտ և մարդկային կեղծ համերաշխության, այսինքն՝ չարի՝ նյութապաշտության գլոբալացմանն այսօր փոխարինում է դրամատիրության հռչակած՝ մարդու կեղծ ազատության, այսինքն՝ նույն չարի՝ նյութապաշտության գլոբալացումը: Դա շարունակությունն է Աստվածային նախնական և Նոր Ուխտի գլոբալացման ընթացքը նենգաշեղելու ջանքերի:

Ի՞նչը կարող է փրկել անձին, ազգին, մարդկությանը ստով, կեղծիքով և նենգ ընթացքով կատարվող չարից՝ նյութապաշտությունից, եթե ոչ Աստծո հավատքը՝ Քրիստոսի Ավետարանով և խաչով: Իսկ հայերիս համար նաև այդ հավատքից բխող ու այդ հավատքի վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունը:

* * *

Նշենք նաև հաճախ հնչող մի բազմաբեմ հարցադրման մասին:

Արդյո՞ք 20-րդ դարավերջում և 21-րդ դարասկզբում առաջ բերված գլոբալացումը 19-րդ դարավերջում և 20-րդ դարասկզբում նույն խոհանոցում եփված, նույն նպատակը հետապնդող՝ աշխարհին մատուցված ինտերնացիոնալը չէ՝ ձևը տարբեր, բովանդակությունը՝ նույնը: Համաշխարհային մասշտաբով արդարության, հավասարության և միջազգային աշխատավորության բարօրության համար պայքարի այն ժամանակվա կոչերի իրական նպատակների բովանդակությունն արդյո՞ք տարբերվում է այսօրվա գլոբալացման շարժման նպատակների բովանդակությունից...

ԴԱՐՁՅԱԼ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՄԱՆ (ԳԼՈՒԲԱԼԱՑՄԱՆ) ՄԱՍԻՆ

ՀՀ հասարակության տնտեսական, բայց ավելի շատ սոցիալ-հոգեբանական և գաղափարական ակնկալելի զարգացման առումով հարցը ավելի ճիշտ կլինի ուղիղ, ավելի կոնկրետ դնել, թե արդյո՞ք մարդիկ ավելի ու ավելի մեծ չափերով ձգտելու են հասնել, նմանվել զեխ կյանքով ապրողներին:

Իսկ սա գաղափարական (փիլիսոփայական) հարց է՝ ինչո՞վ և ինչքանո՞վ բավարարվել երջանիկ լինելու համար... Եվ ինչպե՞ս բնորոշել և ընդունել անձնականի և հասարակականի, ազգայինի հարաբերակցությունը որպես անձնական գերադասություն:

* * *

Հայության և ՀՀ այսօրվա և մանավանդ ապագայի առումով ինչքանո՞վ է ընկալելի այն, ինչ թելադրում են կյանքի տարբեր բնագավառների վերաբերյալ արևմտյան կամ միջազգային նորմերը, չափանիշները՝ որպես պայման եվրոպական, արևմտյան ինտեգրումների համար...

Գլոբալացում-համաշխարհայնացումը իրականում պետք է ընկալել որպես աշխարհակալում, աշխարհակալացում, որը շարունակությունն է գաղութատիրության ու նեոգաղութատիրության և նշանակում է տիրապետություն «մշակված» (աղավաղված) անհատ մարդու և մարդկային զանգվածների ուղեղների (գաղափար, գիտակցություն) և սրտերի (խիղճ, բարոյականություն) վրա:

* * *

Մի շատ պարզ հարց, որ բխում է նույնպես շատ պարզ փաստից. առնվազն կես դար առաջ լուրջ հիմնավորումներով որոշում է ընդունված, որ Ամերիկայում կիրառվի չափային մետրական համակարգը՝ որպես ազգային և միջազգային չափ, սակայն մինչև օրս այդ որոշումը չի կիրառվում, և խուսափում են նաև պատճառաբանել, թե ինչո՞ւ չի կիրառվում, կամ հայտնել, թե ե՞րբ կկիրառվի: Թեկուզ մի անհիմն պատճառ էլ չի բերվում:

Դարերով հիանալի գործում է մետրական չափը (մետր, սանտիմետր, կիլոմետր, լիտր, կիլոգրամ, տոննա և այլն) թե՛ ազգային և թե՛ միջազգային գործառույթներում, նույնիսկ համադրվելով այլ ստանդարտների հետ՝ փառունդ, ոտք և այլն: Եվ այս փոքրացող աշխարհում, երբ վաղուց ընդունված է համակարգություն, ունիֆիկացիայի առավելության միջազգային նշանակությունը և այդ իսկ ըմբռնումով չափային մետրական համակարգի առավելությունը, ստացվում է մի շատ արտառոց երևույթ: Այն, որ այդ միջազգային հարմար ու օգտակար համակարգի կիրառումն իրենց երկրներում զլացողները, չխրախուսողները խրախուսում են գլոբալացումը՝ հանդես գալով որպես գլոբալացման ջատագովներ: Նրանք փորձում են համոզել (կամ ստիպել), թե իբր ազգերի ամեն ինչը, նույնիսկ հոգեկերտվածքի հետ առնչվող առանձնահատկություններն օգտակար է և պետք է գլոբալացնել, համաշխարհայնացնել... Մտածենք այս երևույթի մասին:

Բայց սա չպետք է զարմանալի լինի մեզ համար, որ տեսել ենք, թե ինչպես ինտերնացիոնալիզմի անվան տակ շովինիզմ էր կիրառվում, ազատու-

թյան դիմակի տակ՝ բռնություն, և ժողովրդավարության անվան տակ՝ բռնատիրություն:

Չզարմանալը՝ չզարմանալ, բայց դասեր պիտի քաղվե՞ն, և դասերը քաղվելուց հետո պիտի գործնականորեն կիրառվե՞ն, որպեսզի նորից չապակողմնորոշվենք և փոսի մեջ չընկնենք՝ թե՛ ֆիզիկապես և թե՛ հոգեպես: Սա՛ է հարցը, և այս իրականության լույսի տակ օգտակար է, որ առաջանում են հարցեր ու հարցեր, բայց դրանք պատասխանի կարիք ունեն: Եվ պատասխանները, օգտակար ու հետևապես անհրաժեշտ լինելով, պարտադիր են: Եվ դա առաջին հերթին նրանց համար, որ կոչված են և պարտավոր են պատասխանել, եթե... Անզգայացած չեն հոգեբարոյական և գաղափարական թմբիրով:

Բայց այդ դեպքում ի՞նչ անի խեղճ Կարապետը: Ո՞վ ասի՝ զարթնի՛ր, լա՛ն, տո լա՛ն տնավեր: Մինչև հիմա տունդ և մուլքերդ ու այգիդ էին տանում, յուրացնում, հիմա ուզում են քո հոգին, սիրտն ու միտքը, ինքնությունը, այսինքն՝ քո էությունը տանել, յուրացնել: Ջարթնի՛ր, մի՛ թող, լա՛ն:

Շաբաթ, 26-ը մարտի, 2005 թ., Վաշինգտոն, Ժամը 10:45

ԼԻՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

ԱՆՁԻ, ԱԶԳԻ, ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ

Որպեսզի մի բան լինի, պետք է ստեղծվի:

Որպեսզի մեկը լինի, պետք է ծնվի:

Բայց որպեսզի ծնվի, պետք է լինի ա՛յն, ինչից պիտի ծնվի: Ու նաև պետք է լինի պատճառը՝ ինչո՞ւ, ինչպե՞ս, ե՞րբ, ո՞ւր ծնվելու համար: Այս բոլորը մարդու կամքի կամ պատահականությունների շղթայի օղակները չեն և չեն կարող լինել տարբեր պատճառներով: Սակայն սրանց մեջ կա մի էական պատճառ, ա՛յն, որ ֆիզիկական ծննդի պայմանը հոգու ծնունդն է. առանց հոգու ծննդի մարմնի ծնունդն անկենդան է, քանի որ հոգու ծննդով է մարմինը կենդանություն ստանում, իսկ հոգու ծնունդն Աստվածային է...

«Նրա աճյունը, ինչպես որ հող էր, հող պիտի դառնա, և հոգին, որ Աստված էր տվել, պիտի վերստին Նրա մոտ գնա» (Ժողովող 12.7):

Անձի ու ընտանիքի ծնունդը, զերդաստանի ու ազգի ծնունդը և մարդկության ու մարդկային հասարակության ծնունդն Աստվածային է ուղղակիորեն: Դրա համար էլ մարդիկ եղբայրներ ու քույրեր են: Դրա համար էլ մարդկությունն ընտանիք է, մարմին է, և ազգերը դրա մասնիկները, անդամներն են: Դրա համար էլ մեկ ազգի սպանությունը (ցեղասպանություն) հանցագործություն է ամբողջ մարդկության հանդեպ: Եվ Աստված Հայր է բոլորին, և Նրա Միածին Որդին Նրա նման է՝ աշխարհի՛ Արարիչ և համա՛յն մարդկության հավիտենական թե՛

Փրկիչ և թե՛ արդար Դատավոր. Նա Սեր է՝ Լույս և Կյանք՝ ընդմիջտ, սկզբից մինչև... Անվերջ: Քանզի Ինքն է Ալֆան և Օմեգան՝ Իր Հոր եռթյունից, Իր Հոր բնությունից, Իր Հոր նման և Իր Հոր հետ միասին՝ մե՛կ:

Մեր ազգն այդ ճշմարտությունը հասկացավ պետականորեն Աստվածաշնորհի հավատքով 301 թվականին: Այդ հավատքի ապրումով զոյացավ այդ հավատքից բխող և դրա վրա հիմնված իր Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ):

Ուրեմն՝ Աստուծո եռթյան, բնության, Նրա խորհուրդների, նպատակների, ծրագրերի և գործերի ըմբռնումը մարդկության հարազատ մասնիկ հայության կողմից կարելի է՝ ճանաչելով, հասկանալով, ընդունելով և կյանքի ապրում դարձնելով ՀԱԳ-ը:

* * *

Այո՛, որպեսզի մի բան լինի, պետք է ստեղծվի, բայց որպեսզի ստեղծվի, պետք է մի բան լինի, ու այն ստեղծողը լինի՝ նախ, սկզբից... Եվ այդ է, դրա մասին է, որ Ավետարանը մեր աչքերը բացում է՝ ասելով, թե աշխարհի ստեղծագործությունից առաջ էր Բանը և կյանքը Նրանով սկիզբ առավ. «Սկզբից էր Բանը և Բանը Աստուծո մոտ էր, և Բանը Աստված էր: Նա սկզբից Աստուծո մոտ էր: Ամեն ինչ Նրանով եղավ. և առանց Նրան չեղավ ոչինչ, որ եղել է: Կյանքը Նրանով էր: Եվ այդ կյանքը մարդկանց համար լույս էր: Եվ լույսը խավարի մեջ լուսավորում է, և խավարը նրան չնվաճեց» (Հովհաննես 1.1-5):

Ավետարանի հավատքով ու այդ հավատքի իմաստությամբ և գիտությամբ, որ կերտվեց մեր Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ), մենք իմացանք, թե ո՞վ ենք, որտեղի՞ց ենք, ո՞ւր եկանք և ո՞ւր ենք գնում (ո՛չ թե գնալու ենք, այլ գնո՛ւմ ենք անընդհատ, հարատև ու անպայման գնո՛ւմ ենք...): Եվ խնդիրը միայն այն է, թե ինչպե՞ս պետք է գնանք, որ ո՞ւր հասնենք, ինչպիսի՞ վիճակում, ինչի՞ն արժանի...

Մեր սուրբ նախնիք, հայրերը և պետական այրերը և մեր ամբողջ ազգը, Աստվածաշնորհի հավատքով լուսավորված և ՀԱԳ-ով տոգորված, այդ ճշմարտությունը լա՛վ հասկացան ու ապրեցի՛ն դրանով: Նրանք տքնեցին, աշխատեցին իրենց և մեզ համար հոգով ու մտքով, ստեղծեցին հոգևոր մշակույթ, գիր, գրականություն և պատմություն, որ ճանաչենք մեզ և իրենց ժառանգորդը դառնանք, որ երջանկանանք և կյանք ունենանք միշտ ու ամենուր՝ մեր երկրային հայրենիքում ու երկնայինում...

* * *

Ամեն տեղ նույնն է Աստուծո համար, քանի որ Նա ամեն տեղ է:

Աստուծո համար չկա հեռու և մոտ, նոր ժամանակ և հին ժամանակ: Չկա թաքուն ու բացահայտ, անցյալ և գալիք, որովհետև Աստված միշտ ու ամեն

տեղ է, ամեն ինչում է, և Նա բարի է ու ամեն ինչ գիտե...

Աստված լույս է, Աստված սեր է ու ամենուր է: Սակայն դու պետք է լինես քո տեղում, որ քեզ համար սահմանել է Նա. ու եթե հայ ես, Հայաստանում պետք է լինես և եթե ոչ ֆիզիկապես, ապա անպայման հոգեպես և մտքով, կարողությամբ ու արդյունքով:

Փառք Աստուծո, որ Նա այդպես է սահմանել:

Մեր նախնիք դա գիտեին, պետք է մենք և մեր սերունդներն էլ գիտենանք:

Շաբաթ, 23-ը ապրիլի, 2005 թ., ժամը 23:35

ՈՎ ՈՒՄ ՀԱՄԱՐ ԱՂՈԹԻ ԵՎ ԲԱՐԵՆՈՍԻ Ի ՓՐԿՈՒԹՅՈՒՆ

Խոսում ենք մեր նահատակների մասին: Հաճախ ենք հիշատակում նրանց: Եվ շատ լավ ենք անում... Սակայն ո՞վ է նահատակը, եթե ոչ՝ մարտիրոսը: Իսկ ո՞վ է նահատակ-մարտիրոսը, եթե ոչ սուրբը՝ սրբված, մաքրված, արդարացած և հրեշտակի նման Աստուծո առաջ կանգնածը:

Հաճախ ասում ենք, թե պետք է աղոթենք, ու աղոթում ենք մեր նահատակների հոգիների համար: Այսօր հայոց քահանայապետն ասաց, որ Ծիծեռնակաբերդում մատուռ է կառուցվելու՝ աղոթատեղի, որտեղից աղոթք է «բարձրանալու» մեր նահատակների հոգիների համար: Ըստ երևույթին, պիտի հասկանալ նահատակների հոգիների հանգստության կամ փրկության համար:

Բայց: Բայց, ըստ երևույթին, նախ պետք է պարզել՝ մի՞թե մենք պիտի բարեխոսենք, աղոթենք մեր նահատակ-մարտիրոս-սրբերի հոգիների համար, թե՞ նրանք պետք է բարեխոսեն մեզ համար: Եվ երկրորդ՝ մի՞թե մենք արժանի ենք բարեխոսելու նրանց համար... Մի՞թե Աստված կընդունի մեր աղոթքը, խնդրանքը, բարեխոսությունը...

Միգուցե ճիշտ չէ հարցադրումը: Գուցե մեր մեջ կան արժանիներ, ովքեր կարող են համարձակվել նայելու դեպի երկինք և խոսք ուղղելու Արարչին, խնդրելու Նրա Միածին Որդուն և Սուրբ Հոգուն այսքան ազգային անտարբերությունից և կեղծիքից, այսքան հոգեկան չարությունից և ուրացումներից, այսքան հավատամերժ պոռնկացումից և պղծություններից հետո, որ տեսավ և տեսնում է հայ կյանքը:

Այո՛, ճիշտ չէ հարցադրումը, քանզի եղել են և դեռևս կան այդ արժանիները, որ հակառակ ազգային նման ախտերին ու անկումներին, դիմացան, մնացին, գործեցին և ապրեցին ու ապրում են՝ որպես մարտիրոսացած սուրբ նահատակների հայկյան քրիստոսաշնորհ ցեղի հարազատ որդիներ...

Նրանք կան և նրանք պետք է աղոթեն: Բայց ոչ թե մեր սրբացած նահատակների համար, ովքեր դրա կարիքը չունեն, այլ մե՛զ՝ ապրողներիս

համար, որ դրա կարիքն ունենք, որպեսզի մենք էլ նրանց նման դիմանանք այժմյան պայմանների փորձություններին՝ նոր տեսակի նյութապաշտության, նոր տեսակի ոսկե հորթի գայթակղություններին, որոնք պղծությամբ և չարությամբ տանում են մեր հավատքի, դրանից բխող և դրա վրա հիմնված ազգային գաղափարի և բարոյական արժեքների նկատմամբ խորթացման, որով և անտարբերության, ուրացման: Նրանք թող աղոթեն մեզ համար, որպեսզի մենք էլ դառնանք նրանց նման և գործենք ու ապրենք նրանց նման՝ որպես մարտիրոսացած սուրբ նահատակներ՝ Հայկյան Քրիստոսակերտ ցեղի որդիներ: Այդպիսով, այնժամ, ինչպես երգում է ասվում, կբացվեն դռները հուսո և մեր երկրեն փախ կտա ձմեռը, ծառերը կհազնեն տերև, և ծիծառը կդառնա յուր բույն:

Բայց կա և սրանից էապես ավելին: Երբ մենք կսովորենք ու արդեն պահանջ կզգանք ապրելու «Մահ իմացյալ՝ անմահություն է» պատգամի ոգով, որով մեր կյանքը կիմաստավորվի երկրային կյանքի բարձրագույն արժեքների չափանիշներով: Այն ժամանակ դա կնշանակի նաև արժանանալ հավատքի ուղեգրերին դեպի հավերժական կյանք՝ մեր սրբերի հետ՝ Աստուծո առաջ:

Այդ ուղեգրերը «տպվել» են 17 դար առաջ՝ խաչի ու Ավետարանի շնորհով ու գիտությամբ և ունեն հայկական դրոշմ: Այդ ուղեգրերն անհնար է զեղծել այլասեռ տվյալներով, ու նաև անհնարին է դրանք ստանալ կյանքի կեղծ ստուգարքով: Այն, ինչ Աստվածային, տիեզերական և հավիտենական օրենքներով է, անհնար է զեղծել մարդկային ջանքով ու հնարքով: Սա՛ է ճշմարտությունը: Չկա՛ ազատություն և կյանք առանց Աստվածության: Մեր Տերն ու Փրկիչը պատգամեց, Իր օրինակով սովորեցրեց և շնորհեց մեզ այդ ճշմարտությունը: Նա պատգամեց ճանաչել ճշմարտությունը՝ ասելով, որ «ճշմարտությունը ձեզ կազատի»: Այսինքն՝ կազատի ամեն ինչից, որ ստրկացնող և ունայն է, ու կտա հավիտենական կյանք:

Այդ հավատքով, այդ հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ* և Հայ Ազգային Բարոյական Արժեքներով ապրեցին, նահատակվեցին, մարտիրոսացան և սրբացան մեր նախնիք, որ նայում, հետևում և բարեխոսում են մեզ համար, որ մենք էլ Աստվածապարզ և շնորհքով կարողանանք գործել ու ապրել արժանավորապես, որ մեր հոգիներն էլ արժանանան հավիտենական, իրական կյանքին:

Ի դեպ, նրանց հոգիների հանգստության մասին որ մտածում և ծեսեր ենք անում, լավ ենք անում, բայց հոգով պետք է ամենք՝ ինչ որ անում ենք... Պետք է իմանանք, որ նրանք մեր թե՛ ֆիզիկական և թե՛ մանավանդ հոգեկան բարօրության համար են «մտածում» և առանց ծեսերի են բարեխոսում և օգնում մեզ, քանզի Հորն ուղղված աղոթքը ծեսերով չի ընդունվում, այլ որդիական սիրո սրտաբուխ, պարզ հաղորդակցությամբ...

* Տես այս գրքի էջ 23-31

Պետք է իմանանք, միշտ հիշենք ու գնահատենք, որ ունենք մեկուկես միլիոն և դեռ շատ ավելի վասն հավատո և վասն հայրենյաց, վասն Հիսուսի և վասն հայ ազգի նահատակ-մարտիրոս-սրբերի բանակի հավերժական պաշտպանությունը:

Դա գերագույն հզորություն և անանց հարստություն է:

Շատերը, շատ ազգեր ու երկրներ երջանիկ ու ապահով պիտի զգային, եթե այդպիսի զորության և հարստության մի մասն իսկ ունենային:

Ցնծա՛, հայ ազգ ու Հայաստան աշխարհ, որ քո անմահ սրբերի բանակը քեզ ապավեն ու զորություն է կյանքի՛ համար: Ցնծա՛ և աշխատի՛ր, որ սրբությամբ միշտ պատրաստ ունենաս այն բանալին, որ սրբությամբ բացում է քո հաղորդակցության ուղին նրանց հետ...

Բանալին խաչն է, այն գտնելու ճանապարհը՝ Ավետարանը, որոնք Աստուծո սիրով՝ հավատքի միջոցով շնորհվեցին քո Հայկյան ոգու ստեղծումից ի վեր, քո նախնիներին և 1700-ամյա քրիստոսադրոշմ սրբագործումով հասան քեզ:

26-ը ապրիլի, 2005 թ.

ԾՆՈՒՆԴՈՎ ՄԱՅ ԵՎ ՄԱՅՈՎ ԾՆՈՒՆԴ

Ծնունդը և մահը նման են նրանով, որ առանց մարդու ծննդի չկա կյանք և առանց կյանքի չկա մահ: Ինչպե՞ս կարող է մարդ մահանալ, եթե կյանք չունի՝ չի ապրում, և ինչպե՞ս կարող է մարդ ապրել, եթե չի ծնվում: Եվ ինչպե՞ս կարող է ծնվել, եթե կյանք չկա:

Ուրեմն՝ ծնվելու համար պետք է կյանք լինի, իսկ կյանք ունենալու, ապրելու համար պետք է ծնվել. ծնվել՝ մահանալու համար:

Եվ մարդը պետք է մահանա, որպեսզի ապրի հավիտյանս:

Ծնունդով՝ կյանք ժամանակավոր, մահով՝ կյանք հավերժական:

Ուրեմն՝ մահը ծնունդ է: Առանց մահի չկա՝ ծնունդ: Ու առանց մահով առաջացած ծնունդի չկա կյանք՝ իրական, հավերժական:

Ուրեմն, որպեսզի մարդու մահով ծնվի նրա կյանքն իրական՝ հավերժական, պետք է դադարի, մեռնի նրա հողանյութ ծնունդի երկրային կյանքը: Բայց մեռնի միայն երկրային կյանքը, մարմինը, ո՛չ թե հոգին: Անցողիկ կյանքում անմահ ու հավերժական է մնում մարդու հոգին՝ ազատ մնալով, ծառայության չմտնելով մարմնին, նյութին, անցավորին, այլ ընդհակառակը. մարմինը, նյութը, անցողիկը ծառայեցնելով և լավ ծառայեցնելով հոգուն՝ մշտականին, հավերժականին:

Իսկ դա հնարավոր է միայն ու միայն Աստուծո օգնությամբ, որ բխում է Նրա Հայրական սիրուց, Արարչական բարությունից և հավերժական զորությունից, որոնք ըստ մեր 1700-ամյա դավանանքի՝ «Էությունն են Աստուծո Որդու, որ Ամենակալ Հոր Միածինն է՝ Աստված Աստծուց, Լույս Լույսից, Ճշմարիտ Աստված Ճշմարիտ Աստծուց»: Որդին կատարեց Հոր կամքը, և կատարելով

փառավորեց Յորը՝ սիրելով խաչը և հաղթելով մահին և դրանով փրկություն բերեց աշխարհին, ազատեց մարդու հոգին մահվան կապանքներից՝ պարգևեցով կյանք հավիտենական՝ Հավատքով, Հույսով և Սիրով:

Հավատա՛ և կապրե՛ս:

Հայ՛ մարդ, հավատա՛: Քո նախնիք՝ պապերդ ու տատերդ, հավատացել են և կյանք ունեն հավիտենական ու ապրում են: Եվ քեզ էլ ժառանգություն են թողել շնորհն իրենց հավատքի՝ հայկական դրոշմով, վերցրու՛ խաչը՝ բանալին, և բաց, ընդունի՛ր հավատքի գանձը նրանց ժառանգության, որ դու՛ և քո սերունդները Կյանք ունենաք և ապրեք Աստվածային շնորհի փառքով այժմ և միշտ, հավիտյանս:

1700 տարի առաջ սրան հավատացին մեր նախնիք և այն դարձրին իրենց հավատքով կյանքի գաղափարախոսություն՝ Հայ Ազգային Գաղափարախոսություն, որը բխելով և հիմնվելով մեր քրիստոնեական հավատքի վրա՝ մարմնավորվում, զորանում և կենսագործվում է այդ հավատքի պետականորեն ապրումի քաղաքացիականացմամբ և քաղաքականացմամբ: Այսինքն՝ ինչքան զորեղ է մեր հավատքը և ինչքան զորեղ ու ամուր է մեր կյանքի ապրումով նրա քաղաքացիականացումը, քաղաքականացումը և պետականացումը, այնքան զորեղ, ամուր և լուսավոր է Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ)՝ մեր վարականերժ գորության, կենսունակության և բոլոր բնագավառների վերելքի երաշխիքը:

Եվ սա բացարձակ ճշմարտություն է, որովհետև մեր ՀԱԳ-ը հավատքից, հավատքով և հավատքի համար է, ու այն երբեք չի փոխվում, հավերժական է, քանզի Աստված է հավերժական, Ալֆան և Օմեգան: Ինչպես Առաքյալն է ասում, Հիսուս նույնն է՝ երեկ, այսօր և հավիտյանս, այնպես էլ Նրա հավատքից բխող և դրա վրա հիմնված մեր ՀԱԳ-ը՝ ճշմարիտը: Միակ՛ ճշմարիտը:

Եվ դրա համար ուրիշ աղբյուրից բխող ինչ-որ ՀԱԳ չի՛ կարող ճշմարիտ լինել, այլ կլինի միայն կեղծ, արհեստական, փուչ, ամուլ և, վերջին հաշվով, ապակողմնորոշող և կորստաբեր: Ինչպես որ մինչև հիմա մեր հոգևոր խոտորման պատճառով եղել են և ըստ այնմ հետևանք են թողել մեր որդեգրած կամ մեզ պարտադրված չակերտավոր ՀԱԳ-երը:

Ուրեմն՝ մենք ՀԱԳ ունենք, հոգեհարազատ, տոհմիկ, հզոր և սուրբ ՀԱԳ: Հետևապես, ուրիշ տեղ ՀԱԳ չփնտրենք, քանզի հոգեգաղափարական պոռնկություն է այլ ՀԱԳ-ի ձգտելը, քանի որ, բացի եղած տոհմիկից, հարազատից մենք ուրիշ ՀԱԳ չենք կարող ունենալ՝ բացի կեղծը, խարդախը և պիղծը...

Մեր ՀԱԳ-ը, մեր հավատքի պետականորեն ապրումի քաղաքացիականացումը, քաղաքականացումը լինելով, նաև քաղաքական լույս է՝ կողմնորոշվելու մեր ազգի, պետության, անձնական ու հասարակական բոլոր-բոլոր հարցերը լուծելու, խնդիրները կատարելու ու ամեն ինչում վերելք ապահովելու համար:

Եվ դա՛ նաև՝ հոգուտ մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության:

ԴԱՐՁՅԱԼ ԻՍԿԱԿԱՆԻ ՈՒ ԷԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

(Եվ դարձյալ ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության)

Չէ՞ որ ես ծնվեցի, որ մեռնեմ: Եվ կմեռնեմ, որ նորից ծնվեմ, այս անգամ՝ հավիտյանս ապրելու համար:

Ապրելու համար, ուրեմն, ես մեռնելու եմ, որպեսզի ծնվեմ. ինչքան մոտենում է իմ մահվան ժամանակը, այնքան մոտենում է իմ ծննդյան ժամը:

Ուրեմն՝ ես պետք է շտապե՞մ, որ մեռնե՞մ:

Իհա՛րկե, ո՛չ: Որովհետև իմ կյանքը ծառայություն է Աստուծո կամքին և աշխատանք է նրա ծրագրի կատարման, որի դաշտն ինձ համար հայությունն ու Հայաստանն է: Հետևապես, այս աշխարհում իմ կյանքի ավարտը տեղի կունենա ո՛չ իմ շտապելով, ո՛չ էլ դանդաղելով, այլ Աստուծո կամքով: Երբ որ Նա որոշի, որ իմ ծառայության ժամկետն ավարտվել է այս կյանքում, այնժամ ես կմեռնեմ, որպեսզի ծնվեմ հավիտենական կյանքում:

Սա իմ հավատքն է: Հավատք, որ ավելի բարձր է, քան որևէ փաստարկ, ապացույց կամ գիտություն (երկրային): Հավատքը դա հուսացած բաների հաստատությունը և չերևացող բաների ապացույցն է, քանզի նրանով առաջինները վկայություն ընդունեցին (Եբր. 11.1):

Սա ի՛ն հավատքն է և միաժամանակ ի՛ն հավատքը չէ, այլ իմ նախնյաց հավատքի ժառանգությունն է: Հավատք, որն Աստված շնորհել է մեզ Իր Միածին Որդու միջոցով՝ մեր ազգի ստեղծման սկզբից և եթ, որն արտահայտվեց Հայկ Նահապետի ազատասիրությամբ ու հաղթանակով:

Այդ հավատքը սրբագործվեց Աստվածորդու արյամբ՝ քսան դար առաջ Հիսուսի մահով և հարությանբ, որը տասնյոթ դար առաջ արտահայտվեց Գրիգոր Լուսավորչի լուսավորմամբ՝ հայ ազգի պետականորեն քրիստոնեացմամբ:

Այս է հայության հավատքը, որ Թարգմանչաց շարժմամբ քաղաքացիականանալով և քաղաքականանալով՝ հիմնեց Հայ Ազգային սրբագործված Գաղափարախոսությունը՝ պետական սկզբնավորությամբ ու մակարդակով: Եվ ա՛յդ գաղափարն է, որ ի զորու եղավ կողմնորոշել հայ ազգը դարերի միջով՝ նույնիսկ առանց ազգային պետականության...

Այսօր այդ ճշմարտության ըմբռնումը, դրա արդիականորեն պարզաբանումը, իրազեկումն ու դրանով ապրումը մեր կյանքում կդառնա մղիչ անսպառ ուժ ազգի արագ ու ամուր կայացման, որով և՛ հայոց պետականության, պետության ու երկրի կայացման և մարդկության բարձրագույն մակարդակների հասնող անվտանգության, զարգացման և բարգավաճման համար:

Աստուծո օգնությամբ:

Ուրբաթ, 6-ը մայիսի, 2005 թ. (Ջանգյուլունի օրը)

ՀԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՇԲԸ ԵՎ ՀԱՅ ԱԶԳԸ

Այն տեղը, ուր ոչ մի հրթիռ չի՝ կարող հասնել և ոչ մի էլեկտրոնային կամ այլ հեռադիտակ կամ ռադիոալիք չի՝ կարող թափանցել և նույնիսկ մարդը մտքով իսկ չի հասնում, չի՝ պատկերացնում, այնտե՛ղ եմ ես, որովհետև «այնտեղն» իմ ներսում է, քանզի հարություն առած Հիսուսը միշտ իմ սրտում է. նա՛ է իմ խաղաղությունը, որ ես ունեմ՝ իր Լույս հավատքով, որ Աստուծո շնորհն է...

Ամեն ինչ, որ սկիզբ ունի և վերջ, ամեն ինչ, որ եղել է, կա ու պիտի լինի, Նրանով է՝ Հիսուս Քրիստոսով: Նա՛ է Սկիզբը և Վերջը՝ իր էությանը հավերժ, որովհետև հավերժությունը ևս ինքն է ստեղծել: Եվ իր հրաշափառ Հարության հավատքով այդ հավերժությունը դառնում է նաև մերը, եթե Նրան հավատանք ու իր լույսով ընթանանք, որով մենք էլ լույս կդառնանք՝ իր նման:

Այդ լույսը ես զգում եմ իր Հարության հավատքով, որն ինձ համակելով պահում, ապրեցնում է: Ես հույս ունեմ, որ իմ ազգն էլ է զգում այդ Լույսը և նա համակված է դրանով, որպեսզի շարունակի ապրել Քրիստոսափայլ հավատքով և դրանից բխող ու դրա՛ վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ: Ապրի՛ որպես հրաշքով փրկված և վերածնված նահատակ՝ մարտիրոս, Ազգ, Երկիր և Պետություն՝ անհաղթ և բարեգութ... Նրա նման:

Կիրակի, 8-ը մայիսի, 2005 թ., ժամը 22:00

ՍԱՏԱՆԱՅԱԿԱՆ ՍՏԻ ԶՈՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Պատմական որևէ ժամանակաշրջանում երբե՛ք այնքան մեծ թվով եկեղեցիներ չեն կործանվել, ինչքան կործանվել են 20-րդ դարում: Ու առավել ևս երբե՛ք չեն կործանվել հենց քրիստոնյաների ձեռքով, իրենց ուրացման պատճառով:

Ինչո՞ւ:

Որովհետև մարդկության այդ նոր շրջանի պատմության չարի սրբապիղծ գործունեությունը՝ աստվածամերժությամբ և քրիստոնեության դեմ դավադրություններով, սկսվեց նոր նյութապաշտական տեսություններով և նախապատրաստեց ու կատարեց արևմտաեվրոպական մի շարք հեղափոխություններ: Այնուհետև այդ սրբապիղծ դավադրությունների նոր կիզակետ մարքսիզմով ստեղծվեց լենինիզմը, իբրև թե կործանելու համար ինչ որ փտած էր ցարական Ռուսաստանում, և Ռուսաստանը որպես ցատկատախտակ գործածելով՝ նույնը կատարել ամբողջ աշխարհում, որն էության մեջ նշանակում էր ռուսական բոլշևիկյան կայսրություն ստեղծելուց հետո այդ բոլշևիկյան կայսրությամբ այլասերել ու ստրկացնել ամբողջ աշխարհը:

Մարդկության սկզբից ևեթ գոյություն ունեցած հակաքրիստոնեությունը,

որ ուղղակի պայքարի վերածվեց քրիստոնեության դեմ 2000 տարի առաջ, երբեք այդպիսի հաղթանակ չէր տարել, ինչպիսին տարավ 20-րդ դարասկզբին Ռուսական կայսրությունում՝ գերազանցելով նույնիսկ 19-րդ դարի իր հաղթանակները Ֆրանսիայում:

Եվ սատանայական հակաքրիստոնեությունը, սատանայական հատկություններով և մեթոդներով՝ սուտ, կեղծիք, խարդախություն, ապակողմնորոշում, և զուգակցված արյունարբու դաժանությամբ և գործածելով հատկապես իշխանավոր քրիստոնյաների ու եկեղեցու իշխանավորների՝ ոչ առանց իրենց ջանքերի տեղ գտած թերացումներով, շեղումներով, իր ստով, կեղծիքով և խարդախությամբ խաբեց և գայթակեցրեց շատ քրիստոնյաների: Նրանք, իրենց էության մեջ ներարկված պիղծ գաղափարների գինովությամբ ապակողմնորոշվելով, գործեցին քրիստոնյա ժողովրդական զանգվածների մեջ հավատքի, քրիստոնեական արժանիքների և քրիստոնեական կյանքի ապրումի դեմ՝ իբր արդարության, հավասարության, խեղճին, ընկածին տեր կանգնելու, իրավունքը պաշտպանելու նպատակով:

Այդ բոլորի վկայությամբ այժմ հայության մեջ և Հայաստանում վխտացող աղանդավորների փաստը:

Եվ ոչ մի այլադավան կամ աղանդավորական շարժում կամ ուժ չի՛ քանդել այնքան քրիստոնեական եկեղեցի ֆիզիկապես ու ավելի շատ հոգեպես և բարոյապես, ինչքան քանդել են սատանայական սոցիալ-քաղաքական և գաղափարական հրապույրներով գայթակղված ու այլասերված ուրացյալ քրիստոնյաները: Իսկ սատանայականները դրդում, քաջալերում և նայում, ուրախանում էին: Մի բան, որ այժմ էլ շարունակվում է տարբեր ձևերով ու միջոցներով:

Հիմա, երբ «նախկին խորհրդային հանրապետություններում և խորհրդային նախկին արբանյակ-երկրներում վերականգնվում է ճշմարտությունը, սատանայական դարավոր ուժերը, որպես հիմք և միջոց գործադրելով իրենց արևնտյան» նվաճումները, խարդավանքներ են պատրաստում ու արդեն իսկ գործադրում: Այդ ուժերն առաջին հերթին իրենց ստի թունավոր սլաքները նոր փաթեթավորմամբ ուղղում են իրենց պիղծ էությունն ու կործանարար նպատակները հասկացողների և դրանք չեզոքացնել ջանացողների դեմ:

Եվ այդ ընթացքը հարաճունորեն տարածվում է ամբողջ աշխարհում:

Այդ ընթացքը սպառնում է ուղղակիորեն նաև հայ ժողովրդին, երկրին, պետությանը և, մանավանդ, մեր նոր սերնդին՝ մեր ապագային:

Ձարթնիր, լա՛ո:

Կիրակի, 26-ը փետրվարի, 2006 թ., ժամը 10:50

ՀԱՎԱՏՔ ՏԵՍԱԾԻ ԵՎ ՉՏԵՍԱԾԻ

Հավատալ նշանակում է հուսալ ու առանց տեսնելու գիտենալ և համոզմունքով հաստատորեն վստահ լինել:

Այս տրամաբանությամբ հավատալ Աստծուն նշանակում է ճանաչել Նրան: Սակայն ինչպե՞ս կարող ես ճանաչել Աստծուն, եթե Նա Ինքը հավատք շնորհելով չբացի քո աչքերը, որ տեսնես, ճանաչես, գիտենան և Իրեն պաշտես ճշմարտությամբ, այլ ոչ թե երեսպաշտորեն որևէ մեկին հաճոյանալու, մարդկանց կողմից փառավորվելու համար...

Փառքը մարդկանց կողմից կուրության է տանում, կուրացնում է, հեթանոսացնում է մարդուն, նսեմացնում նրա փառքը և տկարացնում է հոգին, բթացնում է միտքը, նույնիսկ եթե մարդը լի է երկրային ուսումով և գիտությամբ:

Մարդկային (աշխարհիկ) փառքը թույն է հոգու համար: Եվ միայն Աստուծո հավատքի իմաստությամբ տոգորված և Նրա պաշտպանությանն արժանացած անձը կարող է չվարակվել փառամոլությամբ, չախտավորվել հոգեպես և չգտնվել այնպիսի վիճակում, որ ինչպես Ավետարանում է ասված, կարող է շահել աշխարհը, բայց կորցնել իր անձը և զրկվել հավիտենական կյանքից:

- Սա շա՞տ էական խնդիր է ու նաև բա՞րդ:

- Իհարկե: Սա ամենաէական խնդիրն է, որովհետև կյանքի խնդիր է՝ հավերժական: Ուրիշ էլ ի՞նչ խնդիր կարող է նման նշանակություն ունենալ: Նաև շատ բարդ խնդիր է, եթե միայն ուղեղիդ ես ապավինում, աշխարհիկ աչքերով ես դիտում, այլ ոչ թե հոգուդ աչքերով:

- Բայց ինչո՞ւ են մարդիկ այդ խնդրին քիչ անդրադառնում, չեն ձգտում այն լուծել, երբ այն ավելի կենսական է, քան աշխարհում մարդկային կյանքի որևէ այլ խնդիր:

- Որովհետև այդ խնդրի՝ նախ հասկանալը ու որպես այդպիսի՝ նշանակության խնդիր համարելը և թե առավել ևս այն լուծելը՝ միայն Աստծուն տեսնելով, ճանաչելով և սիրելով կարող է լինել: Իսկ դրա միակ ճանապարհը Հիսուս Քրիստոսն է: Եթե հավատացիր Նրան և տեսար առանց տեսնելու ու ճանաչեցիր որպես Աստուծո Միածին Որդու՝ Նրա Ավետարանով և Խաչով, ուրեմն՝ ինչպես Ինքն է ասում, և՛ տեսար Հորը, և՛ ճանաչեցիր Նրան:

Իսկ դա նշանակում է, որ Աստուծո շնորհը թափվել է քեզ վրա, համակել է քեզ և դարձրել Իր խնորհից... Ցնծա՛: Ցնծա՛ հոգով, ո՛վ երանելի հայ մարդ: Առանց հոգեկանի և գաղափարի քեզ այլևս ոչ մի երկրային փառք, հարստություն ու իշխանություն պետք չէ, որովհետև դրանք վարակակիր են: Եվ դրանցից Աստվածորդին քեզ պաշտպանում է՝ տալով քեզ վահան՝ Իր հավատքից բխող ու դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունը, որ զերծ պահի

քեզ հոգեկան, գաղափարական և բարոյական ախտահարումից և ունենաս Ի՛ր կողմից՝ փառք, վեհություն ու երջանկություն, իրականը՝ ճշմարիտը, թե՛ երկրային և թե՛ երկնային կյանքում:

Փա՛ռք Նրան:

Երեքշաբթի, 28-ը փետրվարի, 2006 թ., ժամ 6:20

ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(Ազգային խիղճ և գիտակցություն)

Խիղճը մարդկային հասարակության և ընդհանրապես մարդկային կյանքի կայունության, կենսունակության և զարգացման էական մասնիկն է, ինչպես ուղեղը՝ մարդու օրգանիզմում:

Բայց ի՞նչ է խիղճը, գիտե՞նք, թե ինչ է:

Ինչի՞ց է բաղկացած խիղճը, և ինչպե՞ս է, որ այն ուժ ունի կառավարելու, կայունացնելու, կենսունակություն տալու և զարգացնելու մարդկային կյանքը, հասարակությունը և դրանով՝ երկիրն ու պետությունը և յուրաքանչյուրին:

Սակայն հարց է.

Պետք է հասկանալ, ըմբռնել, թե ի՞նչ է խիղճը, ինչպե՞ս է այն ստեղծվում, ինչի՞ց է բաղկացած, ի՞նչ ֆունկցիա է կատարում և այս ըմբռնելուց հետո հասկանալ, թե ի՞նչ կարելի է անել խղճով և ի՞նչ չի կարելի անել առանց խղճի:

Օրինակ՝ ի՞նչ է նշանակում խղճով գինվոր և առանց խղճի գինվոր: Եվ ի՞նչ է նշանակում խղճով սպա, գեներալ, հրամանատար, և ի՞նչ է նշանակում սպա, հրամանատար առանց խղճի: Ինչպես նաև՝ առանց խղճի պատգամավոր, նախարար, վարչապետ, նախագահ, կաթողիկոս և մյուս դեպքում՝ նրանք բոլորը՝ խղճով:

Մի դեպքում՝ խղճի առկայության դեպքում, առկա է նաև բարու, արդարի գաղափարականի, ընկերականի, ազգի և հայրենիքի ընդհանուր շահի պաշտպանման ինքնաբուխ, ինքնագիտակից և ինքնակառավարվող վերաբերմունքը, արարքը, գործը: Մյուս դեպքում՝ խղճի բացակայության դեպքում, այդ բոլոր առաքինի, կենսական և կառուցողական, ինքնաբուխ, ինքնագիտակից ու ինքնակառավարվող վերաբերմունքի, արարքների և գործերի բացակայություն: Եվ այս բացակայությամբ առաջ է գալիս եսասիրություն, փառամոլություն և նյութապաշտություն: Եսը, որն անցողիկ և ունայն է, դառնում է կենտրոնը կյանքի: Եվ դրանով կյանքն ինքն ունայնանում է և ունայնությանն է ծառայում:

Բայց դարձյալ՝ ի՞նչ է խիղճը, խղճով մարդը: Կյանքի օրինակներից մենք

գիտենք, որ խղճով մարդը, որ բարի է լինում կյանքում, ավելի խոցելի է, տկար է և հետևապես նրա նվաճումները դժվար են ձեռք բերվում և քիչ են: Մինչդեռ անխիղճ անձը մեծ մասամբ ուժեղ է, նրան հաշվի են առնում, նրանից վախենում են, և նա շատ դեպքերում հասնում է իր նպատակին:

Հավատքով գիտենք, որ իրապես ԲԱՐԻ մարդն է հիրավի ուժեղը, թեև այլ է աթեիստական բարոյագիտական «բարի մարդ» հասկացողությունը:

Անխիղճ մարդ ուժեղ երևում է արտաքնապես, ու այլ հարց է, որ նրանց հանդեպ ոմանք տածում են ստրկամիտ հարգանք, բայց ո՞ւմ է պետք սույն պիղծ սերմը՝ պետությանը՝ ո՛չ, ազգին՝ ո՛չ, հասարակությանը՝ ոչ և նույնիսկ իրեն՝ «ուժեղ»-անխիղճ մարդուն իսկ, վերջին հաշվով, պետք չէ:

Այսպես է, սա՛ է իրականությունը: Ուրե՛մն: Այս հարցին պատասխանելու համար պետք է պարզենք, թե ի՞նչ է խիղճը:

Խղճի իմաստը կհասկացվի, եթե պարզենք, թե ինչից է առաջանում խիղճը, ինչի վրա է հիմնված և ինչպես է գործում:

Խիղճը չի կարող թուլության նշան ու հետևանք լինել: Խիղճը զորության նշան ու հետևանք է:

Բարի, արդար, ստեղծագործ, կառուցողական և մշտական, հարատև զորության նշան ու հետևանք է խիղճը: Եվ այդ խիղճը բխում է հավատքից՝ Աստված ճանաչողությունից: Եվ դա մեզ՝ Հայկյան ցեղ ու ազգ կազմող հայերիս համար Սուրբ Ավետարանով և խաչով է:

Սուրբ Վարդան զորավարը, ինչպես և դարերի ընթացքում մեր բյուրավոր վարդանները, նախևառաջ խղճով զորավար էր: Նա խղճով քաղաքական և պետական այդ էր: Եվ նա այդ հավատքի խղճով գործեց, բարոյականությամբ՝ որպես գաղափարական մարդ:

Դրա համար նա նախքան սուրը բարձրացնելն Ավետարանն ու խաչը բարձրացրեց, նայեց երկինք, հետո բարձրացրեց սուրը, զարկեց, զարկվեց, ու անմահացան ինքն ու իր զինակիցները և այն ազգը, որ հետևեց իրեն՝ մե՛նք, դո՛ւք և բոլո՛րս...

* * *

Խիղճը, միահյուսված լինելով մարդու ոգեղենության հետ, անհրաժեշտ է մեր քաղաքացիական գիտակցության, պարտաճանաչության և պատրաստականության համար: Խիղճը նաև անհրաժեշտ է մեր զինվորականությանը՝ կատարելու իր քաղաքացիական և դեռ ավելին՝ իր կյանքի գնով հայրենիքի պաշտպանության պարտքը: Հայ զինվորականը խղճով կլինի ավելի պարտաճանաչ իր կոչումին, դերին և կունենա ավելի զորեղ, տոկուն, աննկուն, մարտունակ, ստեղծագործ ու ասպետական հատկություններ:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՐՁՐԱՅՈՒՄԸ

Հայ հայրենիքի պաշտպանությունը յուրաքանչյուր հայի սրբազան պարտականությունն է ամբողջ կյանքի ընթացքում՝ մինչև 18 տարեկան ուսումնառությամբ ու այնուհետև՝ ամբողջ կյանքում սովորելով, աշխատելով, պայքարելով ու ապրելով: Եվ սա անկախ տարիքից, սեռից, սոցիալական վիճակից ու գտնված վայրից:

Ինչպե՞ս կարելի է բնորոշել, ձևակերպել, կազմակերպել, համադրել և գործադրել համայն հայության գործնական և բազմաբնույթ ներդրումը հայ ազգի, Հայաստանի և պետականության պաշտպանության, կայացման, զորացման, զարգացման և բարգավաճման նպատակի (որը պետք է լիովին պարզաբանվի) կենսագործման համար:

Ո՞վ պիտի կատարի այդ:

Հայոց պետությունը, օրենսդիր և գործադիր իշխանությունները՝ ՀՀ նախագահի գլխավորությամբ, և նախագահին առընթեր ազգային անվտանգության հանձնաժողովի համադրմամբ:

Միաժամանակ, հայ հայրենիքի ռազմական պաշտպանությունը, սրբազան պարտականությունն ու գործն է նախ և առաջ հայ զինվորականության:

Կիրակի, 19-ը մարտի, 2006 թ.,

առավոտյան ժամը 10:00

ԽԻՂՃ

Մարդու մեջ խիղճը գերակա է ամեն մի զգացումից և գորեղ է բոլոր զգացումներից, քանզի խիղճն Աստվածապարզ և զգացում է՝ բարության, կարեկցության և գթության հետ:

Ով խիղճ ունի, ունի բարի կողմնորոշում և վահան՝ պաշտպանություն փորձությունների դեմ...

Առանց խղճի մարդը չոր ճյուղ է, անպտուղ՝ ենթակա դյուրությամբ այրվելու չարի փորձություններից:

Եթե խիղճ ունես, դու պաշտպանված ես եսասիրության ախտից՝ նյութապաշտության վարակից...

Եթե Աստված քեզ խիղճ տվեց (իսկ խիղճը միայն Աստված է տալիս), դու գորեղ ես հոգեբարոյական իմունիտետով, այսինքն՝ վարակամերժ կարողությամբ, դրա բոլոր հետևանքներով... Եվ երբե՛ք չխաբվես, առավել ևս չընկճվես նյութապաշտական թյուրըմբռնումից, թե խիղճը տկարացնում է մարդուն, քանի

որ նրան դարձնում է բարի, կարեկից, գթասիրտ և... զիջող:

Այդ ճի՛շտ է, որ խիղճը մարդուն դարձնում է այդպիսին և դեռ ավելին. դարձնում է արդարամիտ, օրինապահ, հավատարիմ... Բայց ո՞վ ասաց, թե դրանք տկարության հատկանիշներ են և տկարացնում են մարդուն: Ընդհակառակը, դրանք կարողության և զորության հատկանիշներ են և հզորացնում են մարդուն մինչև Սուրբ Ասպետություն: Այն, ինչ որ, ավստ՛ս, շա՛տ է բացակայում մեր ազգի մեջ (թողնենք այլ ազգերին մի կողմ), ու առա՛նց այդ կենսամասնիկի ազգը չի՛ կարող Ազգ դառնալ. Ազգ կենսունակ, մրցունակ, պաշտպանունակ, բարգավաճ և օգտակար նաև մարդկությանը: Իսկ հայ ազգն այդպիսի՛ Ազգ պետք է դառնա և կարող է դառնալ (ոչ ոք թող չասի, թե ինչպե՞ս կլինի, հապա մեր աշխարհագրական դիրքը, չափը, քանակը...): Այդ բոլորը կան, և հենց դրա՛ համար էլ հարկ է, որ պահենք, պահպանենք մեր ազգի մեջ ու նաև յուրաքանչյուրիս մեջ եղած Աստվածաշնորհի խիղճը: Եվ կյանքում կիրառենք այն միջտ, ամենուր, ամեն ինչում՝ ասպետորեն, Աստուծո հավատքով:

Եվ մենք կդառնանք ազգ ապահով, բարեբեր, բարեկեցիկ ու երանելի:

Հայ Ազգային Գաղափարախոսության (ՀԱԳ) ճանաչումը, ընդունումն ու կիրառությունը կյանքում պայմաններն են այդպիսի ազգ դառնալու, որովհետև Աստուծո հավատքից բխող և դրա վրա հիմնված ՀԱԳ-ը և նույն ծագումն ունեցող խիղճը եղբայր և քույր են:

ԴԱՐՁՅԱԼ ԽԻՂՃ

Խիղճը որակ է, որակական հատկություն է. առաջին հերթին այդ հատկությամբ պետք է բնորոշել մարդուն, հային, թե ո՞վ է նա, ի՞նչ կարող է անել և ի՞նչ կարելի է նրանից սպասել (կամ չսպասել), նրան վստահել կամ ոչ:

Հավատքով և խղճով, գոտեպնդված, ազգային-մարդկային հոգեբարոյական արժեքներով տոգորված և Հայ Ազգային Գաղափարախոսությամբ ապրող ու գործող անձինք, որ դրանցով ունեն նաև կամք, գիտելիքներ և հմտություն, պետք է ընտրվեն ազգի կողմից որպես հայության, Հայաստան երկրի և պետության ղեկավարներ, առաջնորդներ:

Այնժամ կժողկի՛, կբարձրանա՛ հայ ազգը, կամրանա, կբարգավաճի Հայաստան երկիրը, և օրինապաշտ ու հզոր կդառնա հայոց պետությունը:

Ու այդ բոլորը՝ Աստուծո հաճությամբ, օրհնությամբ ու օգնությամբ:

ԵՎ ԴԱՐՁՅԱԼ ԽԻՂԵ

Խիղճը մարդու հոգեկան գոյության մեջ պարունակվող Աստվածապարզև զգայարանն է, որն զգացվում, տրամաբանվում ու արտահայտվում է երկրայինից դեպի Երկնային ձգտող գիտակցությամբ:

Խիղճը մարմնականի, ֆիզիկականի, երկրայինի մեջ հոգեկան, հոգևոր, Երկնային զգացողությունն ու դրա արտահայտությունն է:

Մարդ էակի Երկրային կյանքում Երկնային, հոգեկան՝ Աստվածային գիտակցությունն արտահայտվում է խղճով: Ով ունի խիղճ (ավելի շուտ, ուն որ տրված է խիղճ), ունի Երկնայինի հետ հոգևոր գիտակցական կապը:

Եթե մարդ արարածն իր խղճով (պիտի) գնահատվի, որպեսզի որոշվի նրա մարդկայնության աստիճանը, ապա այդ գնահատականի հստակությունը և դրա ճիշտ կիրառությունը կհարստացնի մարդուն (մարդկությանը) և նրա կյանքի ապրումի արդյունքը՝ թե՛ անձնական-ընտանեկան և թե՛ ազգային-մարդկային իմաստով:

Ո՞վ կարող է առաջացնել մեր մեջ խիղճ կամ օգնել մաքրելու մեր խղճի վրա ծեփված բալաստը՝ մեղքը...

Մարդու խիղճ-զգայարանը ինչպե՞ս աշխատի և գործի մարդու մեջ, եթե «գերված» է մեղքի բալաստով, լղոզված, ժանգոտած է նյութապաշտությամբ ու անզգայացած է ամբարտավանությամբ:

Ո՞վ կարող է փրկել մարդուն մաքրվել՝ առողջացնելով կամ վերակենդանացնելով նրա խիղճը, եթե ոչ միայն Նա, ով ստեղծել է պարզև էլ է խիղճը: Նա՛ կարող է օգնել մարդուն, մարդկությանը՝ ազատագրելու իր գերված խիղճը՝ շնորհելով հավատքը Հիսուսի Աստվածության՝ Ավետարանով և խաչով:

Երեքշաբթի, 5-ը փետրվարի, 2007 թ., ժամը 5:50

ՍԻՐՏ

(տեսակներ)

Ասել են, ու մենք էլ ասում ենք՝ ազնիվ սիրտ, բարի սիրտ, իմաստուն սիրտ, քաջ սիրտ, փխրուն սիրտ և այլն: Բայց ինչքանով են ճիշտ այս արտահայտությունները, երբ սիրտը, ընդամենը մկան և հյուսվածք լինելով, պոմպի դեր է կատարում, ինչպե՞ս կարող է սիրտը լինել ազնիվ, բարի, քաջ, իմաստուն, և այլն, և այլն և կոտրվի կամ ամրանա, ուրախանա կամ տխրի: Բայց այդ բաներն ասել է մարդկությունը դարերից ի վեր, սխալ է ասել:

Այդքան երկարատև ու համընդհանուր սխալ կլինի՞:

Այո՛ և ո՛չ: Այո՛, կլինի, քանի որ սիրտը՝ այդ մսի կտորը, չի՛ կարող տխրել և ուրախանալ: Եվ ո՛չ, չի՛ լինի, որովհետև, ըստ երևույթին, սիրտը հոգուն ենք նմանեցնում, սիրտ ասելով՝ հոգի ենք հասկանում...

31-ը մայիսի, 2006 թ., Թուրին, Իտալիա,
առավոտյան ժամը 9:20

**ԽԱՉԸ ՆԱԵՎ ՊՈՐՏԱԼԱՐ Է ԿՅԱՆՔԻ,
ԲԱՅՑ ՆԱԽԵՎԱՌԱՋ ՍԵՐ Է
(Ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության)**

*Խաչը կյանք է, վահան և ղախադրան:
Խաչը լույս է, փառոս և փրկություն:
Խաչը իմաստություն է և կյանքի վերելք:
Խաչը ղորտալար է այս աշխարհի ու երկնային Արքայության միջև:*

* * *

Խաչը ամեն ինչ է, որ բարի է, որովհետև խաչը Սեր է...

* * *

*Ի՞նչ են ուզում ամենից շատ ունենալ: Ի՞նչ են ուզում ամենից շատ, որ ինձ
սրվի: Ուզում են ունենալ Ասուծո Սերը, որ գործեց խաչով:*

*Եթե Հիսուսի խաչն ունենամ և կարողանամ կրել իմ կյանքի ընթացքում,
իմ ազգի, հայրենիքի և ղեռնության ծառայությամբ, նշանակում է ամեն ինչ ինձ
սրված է, և ես ամեն ինչ ունենմ:*

*Ունենմ Ասուծո Սերը՝ լույս, կյանք ու երանություն հավիշյան, որն ուզում են,
որ լինի միայն ու միայն ի փառս Սուրբ Երրորդության՝ Ասուծո:*

18-ը հունիսի, 2006 թ., առավոտյան 9:20

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԽՈՐԵՐ

Բնական մահը հնանալու արդյունք է:

Երկրային կյանքում անկարելի է չմեռնել, քանզի ամեն ինչ փոխվում, հնանում, սպառվում է:

Սպառվում է ամեն ինչ, որ նյութական է, անսպառ է միայն հոգին, որը կարող է միայն տարբեր վիճակներում լինել...

- Երկրային կյանքում կարելի՞ է մահի առաջն առնել:

- Կարելի է միայն մեկ միջոցով՝ վերացնելով ծնունդը: Չկա՛ ծնունդ, չկա՛ մահ: Մի՛ ծնիր, որ չմահանա: Չե՞ս ուզում երեխադ մահանա, մի՛ ունեցիր երեխա...

Բայց այդ դեպքում կյանք էլ չի լինի, առանց ծնունդի ի՞նչ կյանք... Այսօրվանից եթե ծնունդ չլինի, 80 տարի հետո կդադարի ամեն բնագավառի արտադրություն և կառուցում, իսկ 100 տարի հետո մարդ չի՛ մնա, մարդկային կյանք չի՛ լինի աշխարհի վրա (կմնան միայն վերջին ծերերի և պառավների անթաղ դիակները):

- Ուրեմն՝ կյանքին վերջ չլինելու համար պետք է չվախենա՞լ մահից և պետք է ծնո՞ւնդ ապահովել:

- Այո՛: Աշխարհում պետք է ծնունդ լինի, և դրանով մա՛հ լինի, որպեսզի մահ չլինի, վե՛րջ չլինի երկրային կյանքի:

- Ուրիշ տարբերակ չկա՞:

- Մարդու համար չկա՛:

- Ո՞վ է ստեղծել այս անհեթեթությունն թվացող օրենքը կամ դրվածքը, և ո՞վ ու ինչպե՞ս կարող է վերացնել այն, որ, վերջին հաշվով, ծնունդը մահով և մահը ծնունդով պայմանավորված չլինեն, այլ լինի ծնունդ ու անմահություն:

- Նախ՝ այս պարագայի համար «անմահություն» բառի մասին կարող է մտածել ու արտահայտվել հենց երկրային մահվան ենթակա մարդկային հողեղեն տությունը: Ինչ վերաբերում է այն հարցին, թե ո՞վ է ստեղծել օրենքը, օրենքն ստեղծել է Աստված: Ո՞վ կարող է փոխել այն. միայն Աստված: Ինչպե՞ս կարող է փոխվել՝ բարությանը: Քանի որ Աստված Իր էությանը է ստեղծել կյանքի էությունն ու օրենքը:

- Ինչո՞ւ, ի՞նչ նպատակով:

- Չգիտենք մանրամասնությունները, բայց հավատքով գիտենք էականը. ստեղծել է, որովհետև Ինքը բարի է՝ լույս, սեր, և ստեղծել է բարու՝ լույսի, սիրո համար:

Աշխարհում ծնված մարդն ուզո՞ւմ է անմահանալ, թող բարի կյանքով ապրի, բարություն անի՝ ծառայելով Աստծուն՝ կատարելով Նրա կամքը, ծրագիրը և գործը:

Այն ժամանակ մարդն իր իսկական եսի պատյան և գործիք մարմինը, որ նյութական է ու ենթակա հնացման, փոփոխման և սպառման, կթողնի հենց նույն հատկություններն ունեցող երկրի վրա և իր բարությանը ապրած իսկական՝ եսը կյանք կունենա հավիտյան երանության մեջ՝ որպես լույս, լույսով, լույսի համար:

Ահա մարդու անմահ հոգու կյանքի անմահությունը, ո՛չ թե դժոխքի խավարի մեջ, որն ինքնըստինքյան կյանք չէ, մա՛հ է հավիտենական, այլ կյանք երանելի՝ Աստուծո Արքայությունում հավերժական:

20-ը սեպտեմբերի, 2006 թ.

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ՈՐԱԿԻ ՄԱՍԻՆ

- Ներքին որակը՝ հոգեկան, բարոյական և գաղափարական, մարդու ամենամեծ, էական ու հավերժական հատկությունն է: Սակայն օգտակար ու անհրաժեշտ է հասկանալ, որ այդ որակը պետք է ստեղծել ու կյանքում այն պահպանելու համար միշտ գործարկել:

Ինչպես որ մարզիկին մկաններ, ճկունություն, ուժ ու եռանդ է պետք՝ մրցելու և հաղթելու համար, այնպես ու առավել ևս դա պետք է մարդուն՝ ներքին ու արտաքին չարի հետ պայքարում հաղթելու համար:

Եվ ինչպես որ մարմնական կարողությունն ստեղծելու և պահպանելու համար պետք է ճիշտ սնվել, ճիշտ ռեժիմով ապրել և մարզվել, այնպես էլ ներքինի որակը պահպանելու համար: Եթե դու որևէ առումով եսասեր եղար, եթե պարտազանց եղար, եթե ստեցիր, խաբեցիր, ապա դու քո ներքինով այն ես լինելու, ինչ մարզիկի չարաշահված մարմինը՝ անկարող մրցելու ու առավել ևս՝ հաղթելու:

* * *

Ժամանակները փոխվում են, և մարդու որակ ասելով, ժամանակակից բնորոշմամբ, ավելի շատ նկատի են առնվում մարդու ուսումը, մասնագիտական հմտությունը և աշխատանքային փորձառությունն ու ուշիմությունը: Սակայն մարդկային կյանքում երկար ժամանակ մարդու որակ ասելով հասկանում էին (բարեբախտաբար, կան նաև այժմ այդպես հասկացողներ), որ հոգեկանը, գաղափարականը և բարոյականը մարդուն ընդունակ են դարձնում գործը ճիշտ, լավ ու արդյունավետ կատարելու, այդպես էլ պաշտոնը վարելու, որովհետև ավելի շատ դա արդյունք է անձի ազնվության, անկաշառության, անաչառության, օրինապահության, հավատարմության և նման հատկությունների:

Նույնիսկ մոտ անցյալում աշխատողի, հատկապես պատասխանատու աշխատողի համար առաջին հերթին այդ հատկություններն էին գնահատվում, ու հինականում այդ հատկություններով էին որոշվում նրա պաշտոնը և պատասխանատվության բնագավառն ու չափը: Համարվում էր, որ գործնական հատկությունները՝ մասնագիտական հմտությունը (skills), փորձառությունն ու կարողությունը շատ կարևոր են, բայց երկրորդական են և կարող են համեմատաբար կարճ ժամանակամիջոցում ձեռք բերվել, ի տարբերություն հոգեկան, գաղափարական և բարոյական որակների, որոնք եթե կան՝ կան, եթե ոչ՝ շատ դժվար է, ու երկար ժամանակ կպահանջվի դրանց ստեղծման համար, եթե ընդհանրապես դա հնարավոր է:

Բայց հարաճունորեն նյութականացող աշխարհում գնահատականների չափանիշներն արագ փոխվում են: Սա օգտակա՞ր է, թե՞ վնասակար: Իհարկե, վնասակար է: Եվ հարց է նաև, թե հայ կյանքում, Հայաստանում մենք պիտի

առաջնորդվենք աշխարհի մոդայի՞կ դատողությամբ և ուղղությամբ, թե՞ մարդկային հարատև՝ ճշմարտության ուղղությամբ:

Եթե մարդկային որակի բնորոշումը կատարենք հոգեղենությամբ, գաղափարականությամբ և բարոյականությամբ, ապա մեր՝ հայերիս կյանքի ընթացքը պետք է լինի մարդկային-հայկական ուղիով: Ուղի, որն Աստվածապատգամ ու Աստվածահաճո է:

ԵՅԵ ԻՐԵՐՆ ԻՐԵՆՑ ԱՆՈՒՆՈՎ ԿՈՉՎԵՆ

Ի՞նչ անուն տանք, երբ տեսնում ենք օրինաչափության հասած այն երևույթները, որոնք վերաբերում են սովետական շրջանի (հաճախ նաև ներկայիս) պատասխանատու պաշտոններ գրաված և հայրենասեր ու հայրենիքին վստահելի, հարազատ հորջորջվող ղեկավարներին, որոնց տղաներն ու աղջիկները, երբեմն էլ հենց իրենք արտասահմաններն են «չափում» և արևմտյան մասշտաբի կյանք վարում կամ ամեն կերպ փորձում վարել...

Դրանց մեջ են նրանք, որոնք ժամանակին, երբ ՀՀ-ն ազատ չէր, հարցականի տակ էին դնում մեզանից շատերի ազգային ինքնագիտակցությունը և մեր երկրի նկատմամբ հավատարմությունն ու վստահելիությունը՝ դրանով սահմանափակելով մեր ազգին ու հայրենիքին օգտակար լինելու հնարավորությունները և արգելակելով մեր ջանքերը:

Իսկ հիմա մեզանից շատերն այստեղ՝ հայրենիքում, աշխատում և մասնակցում են՝ լուծելու առկա խնդիրները, վերացնելու դժվարությունները (որոնցից շատերը հենց նրանց անհարազատության ու ապիկարության հետևանք են), բարձրացնելու մեր երկրի կարողությունն ու պատիվը և կերտելու ապահով ու բարգավաճ ապագա:

Իսկ իրենք: Խիղճ, գիտակցություն ու ամոթ կորցրած՝ տարբեր երկրների քաղաքացիություն են մուրում և հայրենիքի ու հայրենի ժողովրդից շատերի աղքատության հաշվին աշխարհի քառուղիներում փափուկ կյանք վայելում: Բայց մի՞թե դա կյանք է առանց չակերտների, և վայելք՝ նո՛ւյնպես առանց չակերտների:

Ո՞ր չափանիշներով կարելի է այդ հարցին տալ ճիշտ, արդար, մարդավայել ու հայավայել պատասխան: Ըստ երևույթին՝ տարբեր չափանիշերով: Բայց դրանցից հատկապես մեզ՝ հայերիս համար, ամենաընդհանրականը, ամենաառարկայականը և ճիշտը Հայ Ազգային Գաղափարախոսության չափանիշներն են, որոնք նաև մարդկային են՝ զոյացած ու հաստատված հավերժական արժեքներով... Եվ ըստ այդմ աշխարհի օտար-ամայի ճամփեքի վրա վարած կյանքը (եթե անհարկի է, այսինքն՝ հայրենիքի շահերից բխող չէ), կյանք չէ, այլ կորուստ: Եվ վայելք չէ, այլ խայտառակություն:

Սա կարճ պատասխանը լինելով՝ ավելի հանգամանալի պատասխանը ևս պետք է տրվի, հատկապես նրանց՝ համար, որոնց հոգիները դեռևս

ամբողջովին չէ՛ն խաթարված գաղափարազրկության, օտարամոլության և նյութապաշտության ախտով: Այդպիսի պատասխանը գուցե դեռ պետք է նաև նրանց համար, որ դեռ հույս կա, թե դարձի կգան Աստուծո օգնությամբ... Եվ դա պետք է արվի, եթե մենք մտածում, գործում ու ապրում ենք Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, որը բխում է և հիմնված է մեր քրիստոնեական հավատքի վրա:

Երեքշաբթի, 30-ը հոկտեմբերի, 2006 թ., ժամը 23:50

ԽԱՀՆ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ Է.

ԻՄ ԽԱՀՆ ԻՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆ Է ԱԶԳԻՍ

Խաչը, կյանքի խնդիրները և հավատքով դրանց լուծումը լինելով, նաև մարդկության Աստվածային փրկությունն է:

Աստված Իր Միածին Որդուն նվիրեց խաչին՝ մարդկության փրկությանը, որով Աստվածորդին խաչը սրբացրեց և նրա հավատքով փրկեց մարդուն և մարդկությանը:

Իմ խաչը հայությունն է՝ հայ ազգը, և խաչի հավատքով հայ ազգին իմ ծառայությունն իմ փրկությունն է, հոգուս փրկությունը և իմ հավիտենական կյանքի երաշխիքը:

Իմ խաչի՝ հայության, հայ ազգի հանդեպ Քրիստոսաստեղծ իմ սերն Աստվածաշնորհ է, քանզի միայն Աստուծո շնորհով է փրկությունը և կյանքը հավիտենական:

Սա հայ ազգի հավատամքն է ու իմ հավատամքը և դրանից բխող ու դրա վրա հիմնված գաղափարախոսությունը՝ Հայ Ազգային Գաղափարախոսությունը:

Ազգ իմ, նորից տես քո փրկությունը, վերընդունի՛ր այն ու ապրի՛ր այդ փրկության շնորհքով՝ իմաստալի, բարի ու վեհ կյանքով, համաձայն քո Աստվածաշնորհ քրիստոնեական հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության, որը մեր Աստվածաշնորհ հավատքի ազգային քաղաքացիականացումն ու քաղաքականացումն է, մեր ազգային-պետական կյանքի հավերժական իմաստությունը, զորությունը և կենսունակությունը:

ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՆԴՐԱՆՔ

Աղոթք Հայկական

Շնորհակալություն և Փա՛նք Քեզ, Արարի՛չ Հայր, Գթասե՛ր Աստված մեր, Քո Միածին Որդու Սուրբ Խաչի՝ մեզ շնորհածդ հավատքի համար:

Ների՛ր մեզ, ջնջի՛ր մեր մեղքերը, հասի՛ր մեր ազգին, Հայաստան երկրին և հայոց պետությանը: Օրհնի՛ր, օգնի՛ր մեզ, որ սրբությամբ Քեզ ծառայենք

և Քո կանքը կատարենք՝ Քո Միածին Որդու Հավատքի՝ շնորհով տրվող իմաստությամբ և գիտությամբ, զորությամբ ու քաջությամբ՝ մեր կյանքի բոլոր հանգրվաններում՝ միշտ, ամենուր, ամեն ինչում՝ մեր ազգի վերելքի, մարդկության բարօրության և Քո՝ փառքի համար:

Երկուշաբթի, 11-ը դեկտեմբերի, 2006 թ., ժամը 23:00

ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՅՔԱՅՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑ

Մարդու կենսունակության տարիքային, ժամանակային փուլերը ֆիզիկական իմաստով՝ որպես մարզիկի և այլն, գուցե 10-20, 20-30, 30-40 են՝ որպես տեխնիկական օպերատորի, արհեստավորի՝ մինչև 40-50, ու առանձին դեպքերում մինչև 60-70 են: Մտավոր և ղեկավար աշխատանքի կենսունակության ժամկետը, ընդհանուր առմամբ, գուցե 80 տարեկանն է, որից հետո այն սկսում է նվազել:

Իսկ ազգի գաղափարական վերածննդի (այն էլ մասնակի) կենսունակության ժամանակամիջոցն ինչքա՞ն է: Մե՞կ տարի, 5, 10, 20, 50... ինչքա՞ն:

Այս օրինակն այն կցուցանե, որ 1991 թվականից հայոց նորոգ պետականացած ժողովրդի գաղափարական վերածննդի կենսունակության ժամանակամիջոցն ամիսներով կամ, լավագույն դեպքում, տարիներով հաշվվեց մինչև 1993-94-ը... Ի՞նչ անել, ինչպե՞ս ապահովել և ինչի՞ հաշվին ապահովել, որպեսզի մեր կենսունակության «երկարակեցությունը» հաշվվի դարերով...

* * *

Ռուսական կայսրության մասնակցությամբ երկու ավերիչ պատերազմ (1904-1905 և 1914-1918), այդ ընթացքում ռուսական երկու հեղափոխություն և մեկ պետական հեղաշրջում:

Այնուհետև երկարատև մեծածավալ քաղաքացիական պատերազմ և սոցիալ-տնտեսական ճգնաժամ, որի հետևանքները ներառում էին թե՛ ժողովրդի լայն զանգվածներին և թե՛ իշխանություններին: Դրանց տարբեր բնագավառների ու աստիճանների պաշտոնատարներ, որոնք հացով ու թեյով էին սնվում. երկրի իշխող քաղբյուրոն իր անդամին կոշիկի հատկացման որոշումն իր աշխատանքի օրակարգի հարց էր դարձնում, իսկ այդ ընթացքում ստեղծված ՆԵՊ-ի (նոր տնտեսական քաղաքականություն) արդյունքում առաջացած համեմատաբար հարուստ մի խավ կարողանում էր լավ հագնվել և ռեստորաններում սնվել ու զվարճանալ...

Այս պայմաններում կարելի՞ էր պատկերացնել (մեր պատմաբաններն ի՞նչ են ասում), որ ուտող-խմողներով լի ռեստորանների առաջ, փողոցներում պարեկություն անող կիսաքաղց կոմերիտական-միլիցիոներները կամ չեկիստ-

ները «ներաճեին» նեպականների մեջ կամ կաշառք վերցնեին նրանցից... մինչև 1920-ականների վերջը:

«Բոլշևիկյան հեղաշրջման և պետականացման գաղափարական կենսունակությունը տևեց շուրջ տասը տարի և սկսեց աստիճանաբար տեղի տալ, փչանալ, որպեսզի քառասուն-վաթսուն տարեկանում արմատապես նեխի և յոթանասունում սատկի»...

* * *

Հայկական պետական վերածննդի գաղափարական կենսունակությունը պետք է ոչ թե աստիճանաբար նվազի և մահանա, այլ զորանա և ծաղկի:

Ինչպե՞ս:

Հայ Ազգային Գաղափարախոսությամբ (ՀԱԳ), որը բխում է և հիմնված է մեր ազգի հավատքի վրա՝ հանդես Արարիչ Հոր, Որդու և Սուրբ Հոգու՝ Աստուծո:

Այդ դեպքում ՀԱԳ-ով հայկական պետական վերածննդի գաղափարական կենսունակությունը կհավերժանա, քանի որ Աստված հավիտենական է, Նրա հավատքով գաղափարը նույնպես կլինի հավիտենական:

6-ը հունվարի, 2007 թ., Սուրբ Ծննդյան տոնի օրը,
առավոտյան 6:40

ԱՄԵՆԱՄԵԾ ԺՊԻՏԸ ԵՎ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆԸ

Կյանքիդ փոփոխությունն սկսվում է, երբ հանդիպում ես Նրան:

Ամենամեծ ժպիտը մարդու դեմքին ու ամենամեծ ուրախությունը մարդու սրտում առաջանում է, երբ մարդ զգում է Աստուծո Հայրական հայացքը և Նրա հպումն իր սրտին:

Կյանք և ուրախություն, երջանկություն, մեծություն, կարևորություն ու փառք և դեռ ամեն ինչ, որ մարդ կարող է և դեռ չի՝ էլ կարող պատկերացնել, թե կարող է ունենալ, արժանանալ, դա Արարիչ Հոր հայացքի և Նրա ձեռքի հպմամբ է, որը պահում, պաշտպանում և բարձրացնում է մարդուն: Եվ ի՞նչը կարող է մոտեցնել մարդուն հավերժական երջանկությանը, եթե ոչ Հիսուս Քրիստոսի Ավետարանն ու խաչը և, հայի պարագայում, դրանց հավատքից բխող ու դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ), որը այդ հավատքի ապրումն է քաղաքացիականացմամբ, քաղաքականացմամբ և պետականորեն:

Հայության կողմից այս իրողության ըմբռնումը և որպես կենարար սկզբունքի կիրառումը կյանքի բոլոր-բոլոր հանգրվաններում, հատկապես՝ ընտանիքի,

ընկերության, ազգի, հայրենիքի և պետության հարաբերություններում, պայման է հայ անհատի, ազգի, հայրենիքի և պետության առաջադիմության, զորության և բարգավաճման համար:

ՀԱԳ-ի այդ ընթացումով կողմնորոշվելը կյանքում հնարավոր է դարձնում հաղթահարել տարբեր փորձություններ ու մարտահրավերներ և Լույսով հասնել նվիրական նպատակների իրագործմանը:

Իսկ այդ Լույսը Սեր է, և Սերն Աստված է... Ի՛նչ երանություն, փառք, պատիվ և մեծություն, երբ ավագի հատիկ անցողիկ մարդը, համակված այդ Լույսով, Աստվածությանը քայլում է դեպի այդ Լույսը, այդ Լույսի համար: Այսինքն՝ Աստուծով՝ Աստուծո համար:

Ահա կյանքի այս գերագույն իմաստը հասկացավ և փրկություն ու երջանկություն ստացավ մարդը՝ Աստուծո մարդացմամբ՝ Հիսուս Քրիստոսի ծննդով, իսկ հայ մարդը՝ նաև այդ ծննդից բխող և դրա վրա հիմնված ՀԱԳ-ով...

Եվ մենք այս հավատքով ու գաղափարով կոչում ենք՝ փա՛ռք Աստուծո և փա՛ռք Նրա Հայտնությանը:

Ուրբաթ, 2-ը փետրվարի, 2007թ., ժամը 24.50

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔԸ

Մեր քրիստոնեական հավատքի համաձայն՝ խաղաղության իշխանը Հիսուսն է, առանց Հիսուս Քրիստոսի աշխարհում չկա և չի՛ կարող խաղաղություն լինել, նույնը և հայության մեջ և Հայաստանում:

Պատերազմի ու ամեն տեսակ դավադրությունների և խառնակությունների հայրը ստի հայր սատանան է՝ նյութապաշտության կուռքը: Երբ նա՛ է իշխում աշխարհում նյութապաշտությամբ, նշանակում է տագնապ, պատերազմ, այլասերություն, ապականություն և կորուստ:

Մարդկությունը կամ որևէ ազգ, եթե ուզում է խաղաղություն, և եթե նա անկե՛ղծ է և ունի ճշմարտության տեսողություն, ուրեմն տեսնում է և հենվում է Քրիստոսին, որովհետև աշխարհում խաղաղությունը միայն ու միայն Հիսուս Քրիստոսով է: Առանց Նրա չկա՛ և չի՛ կարող լինել հարատև խաղաղություն: Մանավանդ, ո՛չ թե գերեզմանային խաղաղություն, երբ ստրկացած է մարդու կամքը, գիտակցությունը և կեցությունը, այլ կյանքի՛ խաղաղություն, որը կարող է լինել արդարությամբ ու իրավունքով... Այն, ինչ որ պետք է և վայել է մարդկությանը, և մեր դեպքում հայ ազգին ու Հայաստանին, որը և ուսուցանում է Հայ Ազգային Գաղափարախոսությունը, որը բխում է և հիմնված է Աստուծո հավատքի վրա՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանով և խաչով:

Կիրակի, 4-ը փետրվարի, 2007 թ.

ՄԻ ՊԱՅ ԱՆԴՐԱԴԱՌՆԱԼՈՎ ՄԵՐ ԲԱԺԱԿԱՃԱՌԵՐԻՆ

Աստուծո՞ւ բարիք հայոց սեղանների շուրջն ասվող կենացները պետք է լինեն սրտաբուխ, անկեղծ ու իմաստալից, այլ ոչ թե հերթական՝ ասողի խելքը, ճաշակը կամ տաղանդը ցուցադրելու համար միջոց (էլ չասած՝ ասողի շողոքորթության մասին): Կենացները պետք է լինեն բարին ու վեհը, նաև իմաստությունը բացահայտող, բացատրող և փառաբանող, որով նաև Աստծուն փառաբանող ու շնորհակալություն հայտնող: Եվ լինեն հավատքի, գաղափարական և բարոյական մաղթանքներով կենացներ՝ հեռու շահադիտությունից, շողոքորթությունից և շաղակրատանքից...

* * *

Կովկասյան և մասնավորապես հայկական կենացները մարդկության արվեստի, կենցաղի և փիլիսոփայության ազգային-ժողովրդական արտահայտման հիանալի ու օգտաշատ ավանդույթ են: Այդ ավանդույթը հայության մեջ պետք է կիրառվի ըստ այնմ: Դրանում կեղտ, արատ («լաքա») չպետք է լինի:

Չինգչաբթի, 1-ը մարտի, 2007 թ.,
առավոտյան ժամը 8:30

ԼԱՎՐ ԵՎ ՎԱՏԸ

Պիղծ է, սխալ և վնասակարար է ամեն ինչ, որ հեռանում է Աստվածությունից: Իսկ ինչ որ ձգվում, պահվում և միանում է Աստվածությանը, Նրանից է, Նրանով է և Նրա համար, որով և օրհնյալ է, ճիշտ է և կենարար:

- Աշխարհը, նյութը և կյանքն ինչպե՞ս կարող են վատ, սխալ և վնասակար լինել, երբ Աստուծո՞ւ ստեղծածներն են, իսկ Աստուծո՞ւ ստեղծած ամեն բան օրհնյալ, սուրբ և բարեբեր է:

- Դա այդպե՞ս է, միայն թե այդ աշխարհիկ կյանքը, նյութը որևէ պատճառով և, վերջին հաշվով, Աստծուց չհեռացնի մարդուն, այլ մոտեցնի...

Դրա համար էլ մեր սուրբ հայրերը զովաբանել են արեգակը. «Առավոտ լուսո, արեգակն արդար...», որովհետև Աստուծո՞ւ ստեղծածն է և մարդուն պարզևածը, բայց չեն պաշտել արևը, ինչպես հեթանոս արևապաշտները...

Կյանքը ոչ միայն քաղցր է, հաճելի, այլև սուրբ է, որովհետև Աստուծո՞ւ ստեղծածն է և Աստուծո՞ւ պարզևն է Արարչական: Ու երբ մարդն իր կյանքը վայելում է Աստծո՞ւն օրհնելով և կյանքի հաճույքը, այսինքն՝ կյանքի պտուղը, հոժարական նվիրելով Տիրոջը (այլ ոչ թե կյանքի հաճույքը՝ պտուղը, նյութապաշտությամբ աստվածացնելով և ինքն էլ դրան գերի դառնալով, իր

հոգին ծախելով և ստրկացնելով), այնժամ մարդու կյանքը քաղցրանում է, ծաղկում, վեհանում և իմաստավորվում է: Իմաստավորվում է նրանով, որ ուղի է բացում դեպի հավիտենական կյանք՝ արքայություն, երանություն, լույս հավերժական:

Փառք Արարիչ Յորը և Որդուն և Սուրբ Յոգուն՝ Աստծուն, որ ստեղծեց երկինքը և երկիրը ու ամեն ինչ, որ կա դրանցում՝ երևելիներ ու աներևույթներ, համաձայն մեր հավատամքի, որից սնվում է և որի վրա հիմնված է Յայ Ազգային Գաղափարախոսությունը:

* * *

Մարդու կողմից մարմինը խնամքի ու հարգանքի է արժանացել և պետք է միշտ արժանանա, որովհետև կացարան և գործելու միջոց է իր հոգու համար երկրային կյանքում, հանուն երկնային երանելի կյանքի:

Մարտ, 2007 թ., Գլենդել, ԱՄՆ

ԱՐԺԵՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սեկուլյարիզմն այս աշխարհի այն արժեքներից է, որոնք հակասության մեջ են Սուրբ Տաճարի արժեքների հետ:

Իսկ սեկուլյարը, միաժամանակ, թեև Տաճարի արժեքներից դուրս աշխարհիկ արժեք է, սակայն ուղղակի հակադրության մեջ չէ Տաճարի արժեքների հետ, այսինքն՝ հոգեղենի հետ...

Դրա համար եկեղեցին պետք է ժողովրդին պաշտպան կանգնի սեկուլյարիզմի դեմ:

Իսկ ինչ վերաբերում է պարզապես սեկուլյարին, ապա դա ոչինչ, այնքան էլ վնաս չունի, որովհետև եթե ասենք սիրային երգ է, սիրո արտահայտություն, ապա դա չի հակադրվում Տաճարի արժեքներին, որովհետև դա Աստվածապարզև սեր է: Սակայն երբ երգը (պարը) արտահայտում է պոռնոարվեստով պոռնոզգացմունքներ («սեքսիզմ»), դա արդեն հակադրվում է Տաճարի արժեքներին, և մեր եկեղեցին պետք է հոգեղեն նախանձախնդրությամբ պաշտպանի ժողովրդին, որով և՛ հենց իրեն, իր կոչումը...

Իսկ հոգեղենը նաև սուրբ միտք է՝ գունարած կամք:

Մեր աշխարհիկ՝ տնտեսական, հասարակական ու այլ զարգացումը պետք է ընթանա համաքայլ և համահունչ հոգևոր զարգացմանը. եթե աշխարհիկը հեռանում է հոգևորից, թեև թվա, թե աշխարհիկ զարգացումը բարձր է, այդ բարձրությունը խաբուսիկ է, և անկումն անխուսափելի, քանի որ համաքայլ, համահունչ չէ հոգևոր զարգացմանը...

Ո՞Ր ԱՇԽԱՐՀ

Կա Աստուծո՛ւ՝ Հիսուս Քրիստոսի ստեղծած աշխարհը, և կա մարդու ստեղծած աշխարհը, որ չարից՝ չարինն է, սատանայինը:

Ես սիրում եմ Հիսուս Քրիստոսի ստեղծած աշխարհը և ասում եմ մարդու ստեղծած չար աշխարհը:

Եվ ես ուզում եմ ապրել և ուզում եմ, որ իմ սերունդը, իմ ազգը և մարդկությունն ապրեն Հիսուս Քրիստոսի ստեղծած աշխարհում՝ ազատվելով մարդու ստեղծած չար աշխարհից, և դա՛ է հաճելի Աստծուն:

Աստված դրա՛ համար է ստեղծել մեզ Իր Հոգով, ու ես իմ կյանքում՝ Ի՛ր նվիրած իմ կյանքում դա՛ պետք է անեմ, ինչպես բոլոր իմ հայ եղբայրներն ու քույրերը, նաև այլազգի եղբայրներն ու քույրերը:

Փա՛ռք և շնորհակալություն Նրան հավիտյան հավիտենից:

Լույսի մեջ քայլենք... Լույսով... Լույսի համար... Ամեն:

Երեքշաբթի, 6-ը մարտի, 2007 թ., առավոտյան ժամը 6:50

ԱՐԺԵՔՆԵՐԻ ԱՐԺԵՋՐԿՈՒՄ ԵՎ ՄԱՐԴԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՆՄԱՐԴԿԱՅՆԱՑՈՒՄ

Ո՞րն է մարդու՝ տիեզերքի հրաշքի արժեքը, ու ի՞նչն է արժեզրկում մարդուն.

- Արժեքն է՝ գուք, գթասրտություն, և արժեզրկումը՝ անգթություն...

- Արժեքը խիղճ է, խղճահարություն, արժեզրկումը՝ անխղճություն...

- Արժեքը սեր է, սիրահարություն, արժեզրկումը՝ ատելություն...

- Բայց անսիրություն չի՛ լինում, չէ՞, սերը մի՛շտ կա, սակայն ինչպիսի՞ սեր. այնպիսի սեր, ինչպիսին կովիդ կաթի՞ նկատմամբ, կամ գառան մսի՞ նկատմամբ, կամ փողի՞, պաշտոնի՞, փառքի՞ և մեջքիդ մերսմա՞ն նկատմամբ է, թե՞ այն սերը, որ պետք է լինի մերձավորիդ բարօրության նկատմամբ, ըստ Ավետարանի, որի մեջ կա և՛ գուք, և՛ խիղճ, և՛ բարություն, և՛ վեհանձնություն ու, վերջին հաշվով, մարդկայնություն Աստուծո հավատքով: Այն, ինչ որ պատգամում է ու սիրում և դրա կիրառությունից գոհանում է Աստված, որ աղբյուրն է և՛ գութի, և՛ խղճի, և՛ սիրո, և՛ ողորմության: Ինչպես մեր Մեծն Ներսես Շնորհալի կաթողիկոսն էր աղոթում. «Աստված իմ, որ բացում ես ձեռքերդ և լցնում արարածներիդ Քո ողորմությամբ»:

Եվ դարձյալ, ուրիշ ո՞րն է մարդու արժեքը: Նրա լավ ձայն ունենա՞լը կամ նվագե՞լը: Մարդկանց, կենդանիների ու աստղերի բնությունն ու լեզուն հասկանա՞լը: Կամ հարստություն դիզե՞լը և իշխանություն ու փառք նվաճե՞լը... Թե՞, ըստ մեր Տիրոջ պատգամի, «այս փոքրիկներից մեկին» մի բաժակ սառը ջուր սիրով տալը, տկարի իրավունքը պաշտպանելը, ընկածին բարձրացնելը

և... պահանջ ու պարտականություն զգալը՝ լինելու... ազնիվ:

Բայց դեռ հարկ կա պարզաբանել, թե ի՞նչ է ազնիվը, որով և ազնվությունը, ազնվականությունը, և հակառակը՝ անազնվությունը...

Իշխելու, ղեկավարելու, ազգ, երկիր և պետություն կայացնելու համար օդի պես կարևոր է, որ բոլորս ճանաչենք, արժևորենք արժանին և ստեղծենք արժեքներ, աջակցենք դրանց կայացմանը և կիրառենք դրանք կյանքի բոլոր բնագավառներում, բոլոր հանգրվաններում: Սակայն զգույշ լինենք, չմոլորվենք պես-պես կեղծ ու խարդախ տեսություններով, հսկենք մեր կյանքը, հաստատուն մնանք մեր հավատքի մեջ, քաջ լինենք, զորանանք մեր Աստուծո հավատքով և հաստատ գիտենանք, որ այդ ամենը՝ բարին, կարող ենք անել Նրա Միածին Որդու Ավետարանի ու խաչի հավատքով և այդ հավատքից բխող ու դրա վրա հիմնված Հայ (տոհմիկ) Ազգային Գաղափարախոսությամբ:

Հինգշաբթի, 15-ը մարտի, 2007 թ., ժամը 21:30

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ ԱՍՈՒՅԹ-ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամենամեծ մարդասերն իսկական ազգասերն է, ու ամենամեծ միջազգայնականը իրապես ազգայնականն է, քանզի ազգասերն է, որ առավել մարդասեր է ու ազգայնականը՝ իրապես միջազգայնական:

* * *

Մեկն ասել է, որ մարդու առաքինությունը չափվում է ոչ թե մարդու արտակարգ սխրագործություններով, այլ ամենօրյա համապատասխան արարքներով: Մենք ասում ենք՝ այդպես է նաև հերոսությունը և քաջությունը, որ ավելի դժվար, սակայն ավելի վեհ ու ավելի օգտակար է, երբ կատարվում է ամբողջ կյանքի ընթացքում, երբ հերոս ու քաջ մարդը, հարազատ իր հավատքին և դրանից բխող և դրա վրա հիմնված գաղափարին ու բարոյական սկզբունքներին, կաթիլ առ կաթիլ, համակարգվածորեն գործում է, գործում է և... գործում է:

* * *

Եվ մի եղբայրական հիշեցման մասին.

Սիրի՛ր, ուրախացի՛ր, ժպտա՛, երջանկացի՛ր Աստուծո Հոգով: Եվ մի՛ հավատա, հեռո՛ւ մնա «հոլիվուդյան ժպիտից», որը մեծ մասամբ անաստված է, կեղծ, պիղծ, խարդախ և խորտակող...

Ուրբաթ, 16-ը մարտի, 2007 թ.

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

(Ո՞ւմ համար ազատություն և ի՞նչ հետևանքներով)

Այն ազատությունը, որն ազատում է չարի ձեռքերն ու լեզուն, չարի՞ք է ծնում:

Եվ ի՞նչ է կատարվում հաճախ մարդկային կյանքում և հատկապես մեր ժամանակաշրջանում. մեծ մասամբ չարն ազատություն է ստանում, իսկ բարուն ստեղծած բարոյական նորմերը սահմանափակվում, վարկաբեկվում և դուրս են մղվում...

Այսօր աշխարհի խնդիրների, ավելի ճիշտ, հասարակական հարաբերությունների, անձի ազատության և նրա իրավունքների, ազգի կրթության, մշակույթի, ընտանեկան հարաբերությունների և նման հարցերի վերաբերյալ օրենքների, կանոնների ընդունման գործընթացներում քրիստոնյա հորջորջված արևմտյան շատ երկրներում իշխանական զորությամբ գործող կողմերն ամեն ինչ անում են, որ ոչ միայն քրիստոնեության նորմերը, սկզբունքները չկիրառվեն, այլև քրիստոնեության անունն իսկ չհիշատակվի...

Արդյո՞ւնքը: Այն արդյունքն է, որն արդեն իսկ երևում է, և սակայն դա ոչինչ է համեմատած նրան, որ դեռ չի՝ երևում, բայց լինելու է որպես փորձանք, ոչ միայն այդ արդյունքն անմիջականորեն ստեղծողների համար, այլև մնացածների, նաև «անմեղների», որ անտարբեր են...

Նույնիսկ երկրագունդը և նրա մթնոլորտը եթե կեղտոտվում, ապականվում են որևէ կողմից, որևէ շրջանում, մասում, դա ուշ կամ շուտ ազդում է ամբողջ երկրագնդի և մթնոլորտի վրա... Եվ միաժամանակ, տարբեր վայրերում բնության պայմանների խախտումների հետևանքով խախտվում է բնության հավասարակշռությունը: Օրինակ երկրագնդի բևեռների սառցահալի հետևանքով էլ տուժելու է ամբողջ մարդկությունը՝ սկսած ավիամերձ շրջաններից...

Այդպես է և մեղքը: Մարդկության մի մասի հոգեկան, գաղափարական և բարոյական ախտահարումը, այլասերումը, ուշ կամ շուտ, հատկապես այս հարաճունորեն «փոքրացող» աշխարհի պայմաններում ազդում է նաև ամբողջ մարդկության վրա՝ սկսած այլասերողներից...

Ջգոն եղիր, մարդ, հայ մարդ, գոտեպնդվիր և զորացիր Աստուծո հավատքով ու այդ հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, որ Կյանք ունենաս...

«Հսկեցե՛ք, հաստատո՛ւն մնացեք հավատքի մեջ, քա՛ջ եղեք, զորացե՛ք: Ձեր ամեն ինչը թող սիրով լինի» (Ա Կորնթ. 16.13-14):

ՕՐԵՆՔԻ «ԽԵՐԸ»

Օրենքը լավ բան է հասարակության համար, ինչպես դեղը լավ է օրգանիզմի համար: Բայց ինչպես ավելի լավ է, որ օրգանիզմն առողջ լինի և դեղի, բժշկի և հիվանդանոցի կարիք չլինի, այնպես էլ լավ է, որ հասարակությունն առողջ լինի ու օրենքի, ոստիկանի, դատախազի, դատավորի և բանտի կարիք չլինի:

Օրենքները դրվում, զարգացվում, խորացվում են հասարակության խակության և կամ տկարության, հիվանդության պատճառով: Առողջ հասարակությունը կարիք չունի շատ օրենքների: Քիչ, պարզ ու հստակ օրենքները կստեղծվեն ու կկիրառվեն մոտավորապես այն պատճառով, ինչ պատճառով ստեղծվում են փողոցային երթևեկության օրենքներն ու կանոնները՝ կանոնակարգելու համար երթևեկությունը...

Օրինակ՝ մեր հեթանոս նախնյաց օրենսդրության մեջ օրենք կա, որն արգելում է կենակցել տնային կենդանիների հետ...

Փառք Աստծո, որ մեր քրիստոնյա իրականությունում մեր հասարակությունը կարիք չունի այդպիսի օրենքի: Հույս ունենանք, որ մարդավաճառության, մանկապղծության և դրանց տոն տվող տարբեր պոռնոգրաֆիական գրականություն, նկարներ, պոռնոֆիլմեր և շոուներ արգելող օրենքներ ընդունելու կարիքը ևս չի՝ ունենա մեր հայ հասարակությունը: Իսկ որտեղ որ մեր մեծ ընտանիք մարդկության մեջ այդ օրենքները, հանգամանքների բերումով, ստիպված ընդունվում, հետո խստացվում և ավելի ու ավելի միջոցներ են ձեռք առնվում դրանց «հաջողությամբ» կիրառման համար, դրա կարիքը ևս չի զգացվի մարդկային հասարակության առողջացման միջոցով...

- Իսկ ո՞րն է ազգային և մարդկային հասարակությունների առողջացման բանալին, դեղամիջոցը.

- Աներկբա պատասխան. Աստուծո հավատքն է՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանով և խաչով: Խաչի շնորհը կասեցնում, մաքրում, սրբում և նույնիսկ սրբացնում է անգամ խո՛ր վարակված օրգանիզմները...

Փառք խաչին:

Վերոհիշյալը գրելուց քիչ հետո նկատեցի CNN-ի հաղորդումն այն մասին, որ ԱՄՆ-ի Միչիգանի նահանգում ձերբակալվել է մի կին՝ իր յոթ տարեկան աղջկան պոռնոգրաֆիկ նկարահանումների տված լինելու պատճառով: Այդ հաղորդման մեջ խոսվում էր նաև այդ յոթ տարեկան աղջնակի՝ իր մոր կողմից «սեքսուալ շահագործման» մասին...

Աստված մեզ փրկի:

Փառք տանք Նրան և միշտ շնորհակալ լինենք, որ հակառակ մեր բազում մեղքերի, մոլորությունների, ամբարտավան մտքերի ու արարքների, Նա դեռ

մեզ սիրում է, ներում և պաշտպանում չարի կողմից տարբեր «փաթեթավորումներով» մեզ մատուցված պիղծ ու կորստաբեր գայթակղություններից...

Հիշենք մեր հավատքի պատգամները: Հիշենք մեր հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսության բարոյականությունը և հիշենք, հավատարիմ մնանք մեր մեծերի, մեր Սուրբ Հայրերի կերպարին ու վարքին, Վարդանանց հավատքի ասպետական ոգուն և Մամիկոնեից հավերժական Ուխտին... Որ Կյանք ունենանք՝ մենք, մեր ազգն ու պետությունը և մեր երեխաներն ու նրանց սերունդները, հօգուտ նաև մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն՝ մեր Աստծուն:

Ամեն:

6-ը հունիսի, 2007 թ.

ՁԵՎ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Ձևապաշտությունը կուրացնող ու աղետաբեր է)

Ինչքան շատ ենք մենք ձևին ավելի նշանակություն տալիս, քան բովանդակությանը: Եվ դրա համար չէ՞ արդյոք, որ մենք ավելի ձևապաշտ ենք, քան թե բովանդակապաշտ... Այլապես ի՞նչ է նշանակում, որ թեև կամաց-կամաց սկսում ենք հասկանալ և զնահատել մեր անկախության իմաստը՝ վեհությունը, փառքը և ազգային կենսատվությունը (որով և անկախության 15-ամյակն արդեն պետական ավելի հասուն գիտակցությամբ նշեցինք), սակայն միաժամանակ ՀՀ հեռուստատեսությամբ մեծ հրճվանքով և հիացմունքով ցուցադրվում են «Սարոյան եղբայրներ», «Ջանգեզուր», «Նվագախմբի տղաները» և նման կինոֆիլմեր՝ առանց հասկանալու (դրա համար էլ՝ առանց ամաչելու), որ եթե ֆիլմի ձևը՝ ռեժիսորական, օպերատորական և դերասանական գործը, հայկական կինոարվեստի չափանիշերով արժեք է ներկայացնում, ապա ֆիլմի գաղափարական բովանդակությունը, հայ ազգային քաղաքական, գաղափարական և բարոյական չափանիշերով, աղբ է, ավելին՝ թույն:

Եվ մեր զանգվածային տեղեկատվության ամենազանգվածային միջոցով՝ հեռուստատեսությամբ, մեր հասարակությանը, որի մեջ և մեր մատաղ սերունդին, հայ ազգային քաղաքական, գաղափարական և բարոյական աղբ և թույն ենք հրամցնում... «Կինոարվեստի» սիրույն:

«Կինոարվեստը» չակերտների մեջ վերցրինք այն պարզ պատճառով, որ եթե արվեստը ճշմարտությանը և բարուն, տվյալ դեպքում մեր ազգին, հայրենիքին և պետությանը չի՛ ծառայում, այլ հակառակը, ապա այդ արվեստը, լինելով հայության թշնամու՝ ստի, կեղծի և չարի գործիք, չակերտվածից էլ վատն է:

Աստված մեզ հասնի...

ԽԵԼԱԳԱՐ, ԱՄՈՁԱԼԻ ԵՎ ՔԱՅՔԱՅԻՉ

Ազգ ենք դաստիարակում, ճշմարտություն ենք սովորեցնում, 21-րդ դարասկզբի ՀՀ գիտակից և գրագետ քաղաքացի ենք պատրաստում ա՞յս մոտեցումներով: Վա՛յ մեզ:

1920 թվականի երկրորդ կեսի հայաստանյան ճակատագրական վիճակ: Թշնամական ուժերը աքցանի մեջ են վերցնում վիրավոր հայրենիքի պատառիկ մանուկ Հայաստանի Հանրապետությունը, որի 90-ամյակը վերջերս նշեցինք շուքով և հպարտությամբ, պետական ու ժողովրդական միջոցառումներով... Եվ ահա հայաստանյան մի հեռուստաալիքով ֆիլմ է ցուցադրվում՝ նկարահանված 1960-ական թվականների մեր անազատ պայմաններում լավագույն հայ դերասանների մասնակցությամբ... Տեսնում ու լսում ենք.

Ծաղր մեր հավատքի և հոգևորականության նկատմամբ,

Ջրպարտություն հայ սպայության և ֆիդայության հանդեպ,

Ջրպարտություն Հայաստանի հանդեպ, թե իբր ինքն է հրահրում պատերազմը թուրք մարդակերների և դավաճան հարևանների դեմ:

Ջրպարտություն Հայաստանի կառավարության դեմ՝ նրան մեղադրելով որպես փոքրոգի գողի ու վախկոտի, դավաճանի և այլն, և այլն:

Հաղորդումն ընդհատվեց, գովազդում լսվում է պոկեր, պոկեր, պոկեր... Բարսելոնա, Փարիզ, Լոնդոն... Ինչպիսի՞ գովազդ, ի՞նչ հրավեր հայ մարդկանց...

Շարունակվում է ֆիլմի ցուցադրումը: Լսվում է. «...Երբևէ չէի պատկերացնում, որ դաշնակցական բանակի համազգեստ են հագնելու...», պատասխան. «Հագի՛ր, հագի՛ր... մի եղ ապուրն էլ կուտես, նոր կիմանաս մեր հալը»:

Խեղճ Հայաստանի Հանրապետություն, նահատակ ազգի պետություն, որ արյունաքամ վիճակում էլ քո որդիք մաքառում էին չորս կողմից թափվող ոհմակների դեմ, և դա էլ բավական չլինելով՝ ներսից էլ էին քեզ դավադրաբար խոցոտում... Ղարսի անառիկ բերդդ դավաճանության զոհ գնաց՝ իր անձնակազմով և շրջակա բնակչությամբ...

Եվ հիմա՝ 2008 թվականին, այդ ազգային ողբերգության բոլշևիկյան նենգափոխումն ու փառաբանումը շարունակվում է. ինչ դժբախտություն ու ամոթ...

«Հայ ժողովուրդ աշխատասեր, լավ մուզիկանտ, դաշնակներ կառավարեն վատ», - սա էլ հրամցվում է որպես «սրտացավ» չեզոք գնահատական, ինչպես և մեր օրերում էլ է արվում. լսում ենք «չեզոք, սրտացավ, բարեկամական» խորհուրդներ:

Ֆիլմի ավարտին լսվում է. «Բացվում է լուսավոր առավոտը Հայաստանի վրա, հնչում է մեր փրկության քայլերգը», որը կատարում ու առաջնորդում են «Նվագախմբի տղաները»:

Սա ֆիլմի ցուցադրման ավարտն է: Եթե խորհրդային ռեժիմի օրերին ինչ-որ տրամաբանությամբ կարելի էր հասկանալ այն, այսօր դա պարզապես հնչում է որպես ուշացած խելագարություն և դավաճանություն՝ դիվերսիայի հետ...

Կիրակի, 10-ը հունիսի, 2007 թ.

ՈՐ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆՆ Է ԱՎԵԼԻ ՄՏԱՅՈՒԳԻՉ

(Ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության)

Աղքատության մասին, նկատի ունենալով նյութական աղքատությունը, խոսում ենք, բողոքում, վերացման համար որոշումներ ընդունում, ծրագրեր մշակում, դրանք քննարկում, գնահատում, մի կողմից հպարտանում դրանցով, մյուս կողմից դժգոհում, քննադատում, մեղադրում, ու այդպես Հայաստանի երրորդ Հանրապետության հիմնադրումից ի վեր ինչպես պետական-կառավարական, այնպես էլ քաղաքական-հասարակական մակարդակով շարունակվում է այս ընթացքը:

Եվ դա վատ ընթացք չէ՛, դա շատ լավ է, գոնե հենց նրա համար, որ աղքատության վերացման համար ջանքերի գործադրումը նկատվում է որպես երկրի բնականոն գործընթաց: Սակայն մի էական հարց է ծագում, թե միայն նյութակա՞ն աղքատությունն է ուշագրավ ու արժանի մտահոգության և ծավալուն միջամտության: Իսկ հոգեկան, գաղափարական և բարոյական աղքատությունը՞:

Ինչո՞ւ մեր մարդկային-ազգային հոգեբարոյական և գաղափարական հարաճո՞ւն աղքատությունը նույն չափով և նույնիսկ ավելի չի՛ անհանգըստացնում հայ պետական-կառավարական և քաղաքական-հասարակական շրջաններին, ու առնվազն նույն մասշտաբով միջոցներ չեն ձեռնարկվում: Ինչո՞ւ Ս. Էջմիածինը կարողանում է գիշերը հանգիստ քնել...

Արդյո՞ք դրա պատճառն այն է, որ մեր հոգեբարոյական և գաղափարական արյունահոսությունն այն աստիճանի է հասել, որ այլևս մեր մարդկային-ազգային և նույնիսկ հոգևոր գիտակցությունն այդ իմաստով տկարացած, անզգայացած է, և չենք կարողանում անդրադառնալ ավելի ավերիչ, ավելի անոթալի ու ամեն հետընթացի պատճառ՝ հոգեկան, գաղափարական և բարոյական մեր հարաճուն աղքատությանը, որը լայներախ արդեն իսկ ճարակում է մեր ժողովրդի, հատկապես մեր նոր սերնդի մարդկային ու ազգային կենսունակությունը:

Մենք զգայուն ու արծազանքող ենք ֆիզիկական, երկրային երկրաշարժերին, ինչպես ցավալի երկրաշարժին՝ 1988 թվականին: Մենք նվաճ զգայուն ու արծազանքող ենք քաղաքական երկրաշարժերին, ինչպես ցավալի 1915-ին, 1920-ին և դրանից հետո դրանցից նվազ սաստկությամբ երկրաշարժերի շղթային: Իսկ հոգեկան, գաղափարական և բարոյական երկրաշարժերի

հանդեպ, որոնք զարգացող սաստկությամբ շարունակվում են մինչև օրս, մենք, ցավոք, գրեթե լիովին անզգա՝ ենք մնում...

Ինչո՞ւ է դա այդպես: Եվ ո՞վ մեզ հասնի մեր ազգային այս կրիտիկական վիճակում, երբ թե՛ դրա առաջացումը և թե՛ դրա վերացումը զուտ հայկական խնդիր է: Այդ խնդրի արագ ու արդյունավետ լուծումը հայկական հարց է հայերի համար ու առանձնահատուկ է նրանով, որ ոչ մի համաշխարհային բանկի վարկի, որևէ հարուստ երկրի դրամաշնորհի կամ ազգային բարերարի կարիքը չի զգում: Եվ նույնիսկ ուրիշների փորձին էլ այնքան պետք չունենք, քանզի մեր նախնյաց, մեր պապերի փորձը և մեզ ժառանգություն մնացած իրենց կերպարներն ու խրատները լրիվ բավարար են: Հետևապես զույգ կաթողիկոսներով, զույգ պատրիարքներով և բազում հոգևոր առաջնորդներով և հայրերով անարդար է, որ այս վիճակում ենք հայտնվել, և դրանից արագ դուրս գալու փոխարեն խորանում է ազգի ու հայրենիքի այս վիճակը: Մինչդեռ այդ հարցում հայությունը և Հայաստանը կարող են և պետք է, որ լինեն մարդկային հասարակության ամենալուսավոր բարձունքներում՝ ի տես ու օրինակ մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության:

Սակայն դրա համար պետք է մենք մեզ ճանաչենք որպես հավատացյալ ու նաև որպես նահատակ ազգ, ընդունենք այդ ու կյանքում մեր արժանի դեկավարների առաջնորդությամբ ընթանանք այդ հավատքով և դրանից բխող ու դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ և մեր նախնյաց, մեր տատերի ու պապերի կերպարների օրինակով...

ԼԱՎՐ ԵՎ ՎԱՏՐ, ԾԻՇՏՐ ԵՎ ՍԽԱԼՐ

Ինչպե՞ս, որտեղի՞ց մարդն իմացավ, որ կա լավ և վատ բան, ճիշտ և սխալ բան: Ինչպե՞ս և որտեղի՞ց իմացավ հայ մարդն այդ մասին...

* * *

Ի՞նչ է մահը անհավատի համար և հավատացյալի համար:

* * *

Կիրակի, Ջատիկ, 8-ը ապրիլի, 2007 թ., Գլենդել,
առավոտյան ժամը 8:30

ՀԱՏՎԱԾ ՄԻ ԶՐՈՒՅՑԻՑ

Ասվել է, թե Վոլտերը մի ամբողջ էնցիկլոպեդիա էր գրել Ավետարանի և Հիսուսի դեմ, բայց երբ նրա մահվան պահը եկավ, խնդրեց, որ մի եկեղեցական կանչեն, և երբ եկավ եկեղեցականը, Վոլտերը մահվան մահճից գոռաց նրա վրա, ասելով՝ դուրս այստեղից, կորի՛ր, քեզ նմանների, ձեր պատճառով է, որ ես

այսպիսին դարձա՝ անհավատ...

Վոլտերը սարսափելի տանջանքների մեջ էր. մեկ լացակումած ներողութուն էր աղերսում Հիսուս Քրիստոսից, մեկ ճչում, անիծում էր, ու այդպես շարունակաբար: Իր անհավատ գաղափարակիցներն աշխատում էին, որ ոչ ոք չտեսնի, վկա չդառնա հայտնի աթեիստի այս ողբերգությանը: Բայց նրա բժիշկը և բուժքույրն այնտեղ էին...

* * *

ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՇԱՏ ԲԱՐԴ ՈՒ ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻ, ԲԱՅՑ ԵՎ ՇԱՏ ՊԱՐԶ ՈՒ ՀԱՍԿԱՆԱԼԻ

Ես երբեք չեմ մահանալու, միշտ կենդանի եմ լինելու՝ անկախ նրանից, թե ինչ է լինելու իմ մարմնի հետ:

Որտե՞ղից գիտեմ: Հիսուսն է ասել. ով Ինձ հավատա՝ մահ չի տեսնելու... Ես հավատում եմ Հիսուսին:

Իմ հավատքով ես միշտ կենդանի եմ լինելու, որովհետև Ինքը մեռելներից հարություն առավ և հավիտյանս կենդանի է՝ նստած Արարիչ Հոր աջ կողմում...

Ես հավատում եմ, և իմ հավատքով իմ մահը մահացավ ընդմիշտ:

* * *

Հիսուսի առաջալնները, բացի Հովհաննեսից, ամենամահ արվեցին: Նրանք փոխզիջման (կոմպրոմիսի) չզնացին հավաստի հարցում, որովհետև հավասում էին, որ Հիսուս հարություն է առել, ողջ է և գալու է աշխարհ՝ Իր Հոր փառով և զորությամբ... Նույնպես հավասաց և հայ ժողովուրդը... Դրա համար նահաճակվեց, մարտիրոսացավ ու անմահացավ: Մահ իմացյալ անմահություն է:

Առասպելները մարտիրոսներ չեն ծնում: Հայ ժողովուրդը, մեր նախնիները, պապերն ու տատերը մարտիրոսացան, որովհետև նրանց հավատքը ճշմարիտ է՝ Հիսուսը Քրիստոս է:

Հինգշաբթի, 5-ը մայիսի, 2005 թ.,
առավոտյան ժամը 6:30

ՊԱՏԱՀԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ՕՐԻՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ

Կյանքի ճանապարհները գնում են իրենց կանգառներով, շրջապատույտներով ու հանդիպումներով: Պատահում է, որ ուշանում ենք, պատահում է՝ շուտ տեղ հասնում: Պատահում է՝ ճանապարհից շեղվում ենք, պատահում է՝ նորից ենք այն գտնում: Բայց մի՞թե դա պատահում է, ամեն ինչ պատահական է լինում և

կարծես թե այլ կերպ էլ կարող էր պատահել: Կարո՞ղ էր: Կարո՞ղ էր այլ կերպ գնալ ճանապարհը, այլ կանգառներ ունենալ, այլ շրջապտույտներ ու այլ հանդիպումներ լինեին, ու այն, ինչ որ եղել է, չլիներ, ու այն, որ չի եղել, լիներ: Կարո՞ղ էր այդպես լինել...

Բայց ինչպե՞ս պիտի այդպես լիներ, ո՞վ պիտի այդպես աներ: Ո՞ւմ ձեռքին է այդ անելը: Ինչո՞ւ պիտի այլ կերպ աներ: Ո՞րն է այլ կերպը: Ո՞վ գիտե...

* * *

Կյանքի ճանապարհին կանգառներ են լինում.

- Եվ մեզ թվում է, թե ուշանում ենք: Մի՞թե:

- Եվ մեզ թվում է, թե շուտ հասանք: Մի՞թե:

- Ո՞ր չափանիշով՝ ուշ և ո՞ր չափանիշով՝ շուտ: Ինչի՞ համեմատությամբ շուտ կամ ուշ: Ո՞ր ժամանակով:

* * *

Կյանքում ամեն մեկն ունի իր չվերթը, իր օրացուցային ընթացքը: Դո՞ւ ես կազմել քոնը: Ո՞վ կարող է կազմած լինել, կազմել է այն, գիտե՞ս: Ինչո՞ւ է այդպես կազմել այն, դու գիտե՞ս: Ո՞վ գիտի: Ինչպե՞ս կարելի է գիտենալ, ո՞ր գիտությամբ, ո՞ր հայացքով կարելի է տեսնել և գիտենալ: Դու գիտե՞ս: Ուզո՞ւմ ես գիտենալ, հասկանալ և ըստ այնմ ընթանալ: Ուզո՞ւմ ես: Այո՞... Եթե այո՛.

- Կարդա՛ Ավետարանը և նայի՛ր խաչին:

Այն ժամանակ կտեսնես քո ճանապարհը, կգտնես քո ընթացքը և կհասկանաս, թե ուր ես գնում: Կհասկանա՛ս, թե ուր ես գնում, որովհետև կիմանաս, թե որտեղից ես գալիս, ինչու ես գալիս և ով է քո ճշմարիտ Յովիվը, որին պիտի հետևես, որ ո՛չ շտապես, ո՛չ ուշանաս, ո՛չ շեղվես և ո՛չ էլ կորչես, այլ ժամանակին ճիշտ տեղը՝ քո հարազատ տունը հասնես՝ հոգու տեսողությամբ, Նրա կանչին հետևելով՝ հոգու լսողությամբ:

* * *

Գնում են մարդիկ, շարժվում «առաջ», բայց իրենք էլ չգիտեն՝ դա հե՞տ է, թե՞ առաջ: Նույնը և ազգերը, նույնը և մարդկությունը: Բոլոր ուղղություններով շարժվում են, գնում են, բայց ո՞րն է ճիշտ ընթացքը... Իսկ ո՞րն է և ի՞նչ է ճիշտը: Երկու հազար տարի առաջ մի հռոմեացի կուսակալ հարցրեց ճշմարտության ճշմարտությունը Հաստատողին (որովհետև Հաստատողն Ինքը ճշմարտությունն է), թե ի՞նչ է ճշմարտությունը...

Ո՛չ ոք չգիտե, թե ինչ է ճշմարտությունը, թեև շատերը կարծում են, թե իրենք ճիշտ են:

Ո՛չ որ չգիտե՞ ինչ է ճշմարտությունը, որովհետև այն երկրային չէ, այլ երկնային:

Եվ երկնայինը երկրայինով չեն կարող տեսնել, հասկանալ, հավանել, ընդունել, հետևել և ապրել դրանով: Դա անհնար է: Երկնայինը երկնայինով կարող ես տեսնել, երբ այդ տեսողությունը քեզ շնորհվի:

Բայց երկնայինը տեսնում է երկրայինը: Դրա համար մեզ տեսնում են նրանք, ում մենք չենք տեսնում և չենք զգում: Նրանց մեջ են մեր սուրբ նախնիք՝ մեր հարազատները...

Բայց մենք՝ երկրայիններս, մենք ևս կարող ենք նրանց տեսնել, զգալ և հասկանալ, եթե ապրենք՝ ինչպես նրանք են ապրել: Ապրել նույն հավատքով, նույն հույսով և նույն սիրով առ մեր Արարիչը՝ Իր Միածին Որդու Ավետարանով և խաչով: Նա է տալիս և՛ տեսողություն, և՛ լսողություն, և՛ ցույց տալիս ճանապարհ ու ընթացք, որովհետև Նա՛ է ճանապարհը, ճշմարիտ ճանապարհը, փրկության ճանապարհը, որ տանում է հարազատ տուն՝ Արարիչ Հոր հավերժական Արքայություն, որտեղից մեզ նայում են մեր սուրբ նախնիք, հարազատները և կանչում ու սպասում՝ նույնպես Հավատքով...

«Մուտքի վիզա՞»: Վիզա պետք է՝ մուտք գործելու համար երանելի Կյանքը հավիտենական: Բայց ինչպիսի՞ վիզա:

- «Վիզան» խաչն է: Վերցրո՛ւ խաչը, հետևի՛ր Նրան և կմտնես Տունդ Հայրական:

- Փա՛ռք Նրան, այժմ և հավիտյանս...

- Հիմնականում սա՛ է նշանակում և սա՛ է մեզ սովորեցնում մեր հավատքից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունը՝ փարոսը հայ անձի, ազգի և պետականության, երեկ, այսօր և մեր գոյության ամբողջ ընթացքում:

Շաբաթ, 9-ը փետրվարի, 2008 թ., ժամը 17:20

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԻՆՔՆԱՃԱՆԱԶՄԱՆ ՈՒ ԱՊԱԳԱՅԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մի՞թե կարելի է հայ սերունդների մեջ քաղաքացի դաստիարակել առանց հայոց պատմության գիտելիքների: Ճշմարիտ պատմության, ճշմարիտ գիտելիքների:

Մենք չունենք գոնե վերջին հարյուրամյա ժամանակաշրջանի համար այդպիսի պատմություն: Սակայն պետք է ունենանք:

Ո՞վ, ովքե՞ր, ե՞րբ են այն գրելու...

* * *

Ամենամեծ համբերությունը թուղթն ունի: Ինչե՛ր չեն գրված թղթի վրա, որ աղբի՛ց էլ վատ, անպե՛տք և վնասակա՛ր են, իսկ թուղթը համբերում է, չի՛ վրդովվում, չի՛ ըմբոստանում:

Թուղթը համբերությամբ ու հույսով սպասում է հայոց հոգևոր, գաղափարական և բարոյական զարթոնքին, որպեսզի հայության մի զգալի հատվածի (ներառյալ մեր մտավորականությունը, քաղաքական ղեկավարությունը) ավելի քան հարյուրամյա մոլորության և ուրացումի անտարբերությունից, ավելի քան յոթ տասնամյակ մարքս-լենինյան հավատամերժ նյութապաշտությունից և վերջին մոտ երկու տասնամյակում էլ նեոհավատամերժության՝ ազատական-դրամատիրական նյութապաշտությունից հետո, Աստուծո օգնությամբ, հայոց հավատքի, գաղափարախոսության և դրանցով բարոյականության վերահաստատմամբ Հայաստանում՝ հայոց կյանքում, թուղթը ծաղկի, լուսարձակի մեր Պատմահայր Խորենացու և նրա հետևորդների ոգով, իմաստությամբ ու հարագատությամբ:

Կիրակի, 18-ը փետրվարի, 2007 թ.

ԱՄԵՆԱՕԳՏԱԿԱՐԸ, ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆԸ ԵՎ ԱՄԵՆԱՎՏԱՆԳԱՎՈՐԸ, ԿՈՐԾԱՆԱՐԱՐԸ

Բարի, հավատացյալ սիրտ և չար, անհավատ սիրտ. ահա երկու վճռորոշ և հակադիր բևեռները՝ անձի, ազգի և մարդկության հոգեվիճակում:

Բարի ու հավատացյալ սրտով մարդ, ընտանիք ու ազգ և, դրան հակառակ, չար ու անհավատ սրտով մարդ, ընտանիք ու ազգ:

Ի՞նչ օրհնություն է լինել առաջին հոգեվիճակում և գործ ունենալ այդ բնությամբ և հատկություններով մարդու, ընտանիքի ու ազգի հետ, և ի՞նչ դժբախտություն ու վնասաբեր է լինել և կամ գործ ունենալ չար, անհավատ սրտով մարդու, ընտանիքի ու ազգի հետ:

Ի՞նչ պետք է անել՝ լինելու այդ օրհնյալ հոգեվիճակում և միջավայրում ու հնարավորինս զերծ մնալու հակադիր հոգեվիճակից և դրա միջավայրից:

Մենք ըստ հարկի չենք մտածում այդ մասին, բայց այդ խնդիրը, վերջին հաշվով, լինելով հույժ էական, տվյալ դեպքում մեզ՝ հայերիս, ու առաջին հերթին մեր կղերականությանը, ղեկավարությանը և մտավորականությանը պե՛տք է ստիպի մտածել, խորհրդակցել ու եզրակացնել այդ մասին, փոխանակ ժամեր վատնելու անօգուտ բաների վրա (լավ ու արդար կլինի, որ մեզանից յուրաքանչյուրն իր խղճով ու գիտակցությամբ ի՛նքը որոշի, թե ո՞րն է իր ժամանակի անօգուտ վատնումը):

Հայ Ազգային Գաղափարախոսության ճանաչումը, ընդունումը և դրանով

ապրելու և գործելու վերաբերյալ մեր ճիշտ որոշումն էապես կօգնեն գտնելու այս հարցի ճիշտ պատասխանը:

Շաբաթ, 7-ը հուլիսի, 2007 թ.,

գիշերվա ժամը 1:00

ՍԱՐՏԱՆ ԱՆՏԵՍԱՆԵԼԻ, ԱՆԸՄԲՈՒՆԵԼԻ, ԲԱՅՑ ԵՎ ԻՐԱԿԱՆ

Մարդկային խելքը և խելացիությունը, գիտելիքն ու գիտությունը եթե չեն բեղմնավորված Սուրբ Հոգով, ապա բոլորը փուչ են և խեղճ ու թշվառ, իսկ երբ շատ են «գոռում», նաև հիմարություն են:

Աստուծո՛ «նալադչիկներն» են կարգավորում մարդ-անհատի և մարդկության խելքի ու մտածմունքի սահմանները: Մարդը, մարդկությունը կարող են ըմբռնել, հասկանալ միայն այն ու այնքան, ինչը և ինչքան թույլատրում է իրենց «կոնստրուկցիան» և «նալադչիկների նալադկան»:

Ուրիշ բան ու ավելին, եթե մարդուն և մարդկությանը չի՛ տրված, որ տեսնեն կամ հասկանան, նրանք ինչ էլ անեն, չեն տեսնի, չեն հասկանա, իսկ եթե շատ «գոռեն», նաև կհիմարանան ու ապակողմնորոշվելով ինչքան էլ վեր-վեր թռչեն՝ չեն իմանա, թե ինչ կա ու կարող է լինել ո՛չ միայն իրենց քթից այն կողմ, այլ հենց իրենց մեջ:

Ու այս խաբուսիկ և ունայն վիճակից կարող է դուրս բերել միայն Ավետարանով և խաչով Աստուծո՛ հավատքի իմաստությունը, գիտությունը, շնորհը և դրանցով՝ տեսանելիությունը: Դրանցով կարելի է անցնել սահմանը մարդկային կարողության և թափանցել, տեսնել ու հասկանալ երկրայնորեն անըմբռնելին: Դրանցով կարելի է նաև ապրել Աստուծո՛ թագավորության կյանքով, ուր օրենքները սրբությամբ են, ու այդ մթնոլորտում շնչառությունն այլ է: Ինչպես և լույսն ու տեսողությունն են այլ...

Երանի՛ հայոց մեծերին, սրբերին ու արդարներին, որ հավիտյանս այդ կյանքով են ապրում... Եվ երանի՛ նրանց, որ այդ կյանքով ապրելու հույսն ունեն, որ Աստուծո՛ նվերն է այս աշխարհի միամիտներին՝ «աղավնու պես» և հոգով խոնարհներին, որ Աստուծո՛ սերն ունեն:

Երանի՛ հայ ազգին, որ իր ժառանգության մեջ ունի այդ բոլորը հավատքով և դրանից բխող և դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, որը երկրային կյանքի փարոսն է և իր լույսն ստանում է երկնային թագավորությունից և հայի երկրային կյանքն առաջնորդում է այնտեղ:

ԽՈՐԵՐ ԿՅԱՆՔԻ ՈՐՈՇԱԿԻ ԻՄԱՍՏԻ ՇՈՒՐՋ

Արևի տակ՝ հասարակության մեջ ու անձնական կյանքում, մտածող մարդու համար, վերջին հաշվով, ամեն մի հարց սկսվում և վերջանում է մարդկային կյանքի իմաստը բնորոշելու հարցադրմամբ. ինչո՞ւ եմ ստեղծվել, ինչո՞ւ եմ ապրում, և ո՞րն է իմաստն իմ ստեղծման, իմ կյանքի ու իմ ապրելու:

Այս հարցերի պատասխանից է կախված, թե մարդն ի՞նչ իրավունք է վերապահում իրեն ընդհանրապես՝ իր անձի և մասնավորապես՝ իր մարմնի նկատմամբ, իր կյանքը տնօրինելու և իր մարմինը նման տնօրինմանն ենթարկելու համար: Հավանաբար այս մոտեցմամբ կարելի է դատել և գտնել նաև ճիշտ, բնական, Աստվածահաճո, հետևապես և օգտակար որոշումը տարբեր հարցերի վերաբերյալ՝ ազգի ու հայրենիքի ծառայության, քաղաքացիական պարտքի կատարման, հասարակական օգտակար վերաբերմունքի հարցերից սկսած՝ մինչև թմրադեղեր գործածելու և ծխախոտ ծխելու կամ չծխելու իրավունքը և պատասխանատվությունը...

Արդյո՞ք կարելի է ընդունել և ճիշտ, տրամաբանական ու օրինակա՞ն է (ո՞ր օրենքով) մտածել, որ մեր կյանքի տնօրինումը մեր ու միայն մեր իրավունքն է: Նույնը՝ մեր մարմնի, ներառյալ՝ մեր առողջության տնօրինման, մի՞թե միակ բացարձակ տերն ու տիրականը մենք ենք: Թե՞ դրանում պատասխանատվություն ենք կրում մեր ընտանիքների, հայրենիքի, մարդկության ու նախևառաջ Աստուծո առաջ, այն էլ՝ մեր հոգով:

Այս հարցերը պարզ ու հստակ դրված են ժամանակակից հայ իրականությունում: Եվ պարզաբանված, մեկնաբանված են, կա՞ն դրանց հստակ պատասխանները: Իսկ հայ հասարակությունը և մանավանդ նոր սերունդը իրազեկված են այդ հարցերի և պատասխանների վերաբերյալ:

Ստացվեց, որ հարցերի վերաբերյալ հարցեր կան: Ո՞վ, ովքե՞ր, ե՞րբ պետք է պատասխանեն:

Կիրակի, 17-ը փետրվարի, 2008 թ., առավոտյան ժամը 6:30

ԻՆՉՈՒ ԻՆՉԻ ՀԱՄԱՐ

Եթե պայքար, կռիվ, պատերազմ, ապա հավատքով՝ հավատքի համար:

Եթե բիզնես, շահ ու հարստություն, ապա հավատքով՝ հավատքի համար:

Եթե ուտել, խմել, զվարճանալ, ապա հավատքով՝ հավատքի համար և ոչ թե հակառակը՝ հավատքն օգտագործել կռվի, բիզնեսի և ուտել-խմելու, զվարճանալու համար:

Ինչպես որ ասել ենք արդեն, թե օվկիանոսը սրվակի մեջ չի՝ կարող պարունակվել, այնպես էլ ու առավել ևս՝ ոչ թե հավատքը ազգի համար, այլ ազգը

հավատքի համար պետք է լինի: Նույնպես և անձն ու համայն մարդկությունը՝ Աստուծո համար: Ու այն ժամանակ կապրի, կծաղկի և կբարձրանա թե՛ անձը, թե՛ ազգը և թե՛ մարդկությունը, որովհետև սիրում, հավատում, նվիրվում և ծառայում են Աստծուն՝ կատարելով Նրա կամքը, պատգամները և գործերը:

Սա՛ է մեր քրիստոնեական հավատամքը: Սրանից է բխում և սրա վրա է հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությունը՝ մեր նախնյաց, մեր պապերի և տատերի կյանքի և ապրումի ուսմունքը, բարոյական արժեհամակարգը:

Դա մե՛րն է: Եվ մենք նրանն ենք: Դրանով պետք է ապրենք և գործենք ու այն զարգացնենք և կտակենք, ժառանգությունն թողնենք մեր երեխաներին, սերունդներին:

Աստուծո ողորմածությամբ ու օգնությամբ...

Երեքշաբթի, 2-ը ապրիլի, 2008 թ.,
առավոտյան ժամը 8:10

ԱՄԵՆ ԻՆՉ ԷՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է, ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԿՅԱՆՔ Է

Ամենաեականն էությունն է: Անձի, ազգի էությամբ է որոշվում անձի, ազգի (նաև մարդկության) ինչ լինելը՝ կարողությունը, ձգտումը և ժամանակի առումով դրանց հետևանքները...

Եթե էությունդ քոնն է, այսինքն՝ քո էությամբ ես ապրում և գործում, ուրեմն դու քեզ ես պատկանում, ամեն ինչ քոնն է՝ թե՛ էությանդ կարողությունը, թե՛ ձգտումը և թե՛ ժամանակի ու ժամանակների հեռանկարում դրանց հետևանքները:

* * *

Էությունը պարունակում, պարփակում է անձի անհատական ու ազգային հատկությունը՝ ունի աղավնո՞ւ հատկություն, թե՞ ագռավի, մեղվի հատկություն, թե՞ ճանճի, ձի՞ու հատկություն, թե՞ օձի: Դրանից են կախված, դրանով են պայմանավորված անձի, ազգի էության դրսևորումները՝ ձգտումները, արարքները և դրանց հետևանքները:

* * *

Եթե հրեաները երկու հազար տարի առաջ մնային իրենց երկրում, չկորցնեին այն, ապա իրենք իրենց՝ ճահճացնող լճացմամբ կկորցնեին իրենց էությունը:

Սա թե՛ հոգևոր և թե՛ աշխարհիկ մոտեցման գնահատականով:

Տարածվելով աշխարհում (երկրագլուխ և պետականագլուխ)՝ նրանք պահպանեցին իրենց էությունը՝ մակերեսորեն վերածնավորելով և վերակազմակերպելով այն (օտարության) բազմազգային, բազմաբնույթ հատկանիշներով, որով և վերակենսավորվեցին, դիմացան, զարգացան, բարգավաճեցին

և հավատարմության տառապանքով թրծվեցին, զորացան, իրենց էությունը վերահաստատեցին, վերադարձան ու սկսեցին վերաիրացնել և վերականգնել թե՛ իրենց երկիրը և թե՛ պետական կարգավիճակը:

Բայց այս բոլորի հիմքում հավատարմությունը և հետևողականությունն էր՝ հավատարմության հետևողականությունը:

- Հետևողականությունը, բայց ո՞ր հավատարմության, ինչի՞ն հավատարմություն...

- Աստուծո հավատքին: Որով և հավատարմություն իրենց տոհմիկ (բնիկ) էության հանդեպ... Եվ սա՛ արդեն սեփական էության կյանքի հաղթանակն էր:

* * *

Այդ հավերժական օրինաչափությունում մենք՝ հայերս, առավել կատարյալ հիմք ունեինք և ունենք: Դա մեզ տրված Աստվածության լրումն է, ամբողջականությունը, այն է՝ ճանաչումը թե՛ Հոր, թե՛ Որդու և թե՛ Սուրբ Հոգու, այսինքն՝ ճանաչումն ամբողջական Աստվածության...

Սա հայ մարդու և հայ ազգի կենսաց հիմքն է:

Բայց աստիճանաբար մեզ պակասեց հետևողականությունը, ՀԱՎԱՏՔԻ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Մենք, որ սկզբում աղավնու բնությամբ էինք, դարձանք ագռավ: Աղավնու պես գնում ու աղավնու պես վերադառնում էինք, սակայն աստիճանաբար դարձանք ագռավ. գնում էինք, բայց չէինք վերադառնում: Եվ մասամբ մեր մեղվի հատկությունն էլ կորցրինք: Նեկտար շարունակում ենք հավաքել աշխարհի ծաղիկներից, բայց դադարեցինք նեկտարը մեր փեթակ բերել...

Եվ ձիու հավատարմությունը, կապվածությունն ու երախտագիտությունն էլ սկսեց փոխվել օձի հատկության՝ խայթոցի... Բայց, ցավոք, մեր իսկ դեմ: Մենք մեր արածներով և չարածներով շատ հաճախ մե՛ր դեմ էինք դառնում՝ մեր էության, այսինքն՝ մեր հավատքի, որով և մեր գոյության, ի դեմս՝ մեր երկրի ու պետականության: Ու այժմ էլ այդ երևույթը չի փոխվել...

Ի՞նչ անենք: Ո՞վ անի: Որտեղի՞ց սկսենք անել: Ո՞վ մեզ հասկանա, մեզ միանա, կամ մենք միանանք, բայց ո՞ւմ... ո՞ր ճամփով գնալու համար և մեր մնացորդն ո՞ւր հասցնելու համար... Նորից Դեր էլ Ջորյան՝ այս անգամ էլ բետոնակե՞րտ անապատները... դատապարտված անդեմ, գոյազուրկ վախճանի...

Մեր էության հանդեպ անհավատարմությամբ, անհետևողականությամբ, մեր կյանքը վերածելով հավատքի և հավատարմության անհետևողականության՝ սկսեցինք կորցնել մեր էությունը՝ հեռանալով Ստեղծողից, Պահպանողից ու Առաջնորդողից:

Եվ ո՞վ կարող է մեզ փրկել, եթե ոչ Նա՛, Ով ունի սերը, գթությունը և ուժն ու կարողությունը հավիտյանս հավիտենից:

Ուրեմն՝ վերազինվենք հավատքի հավատարմությամբ և հետևողականությամբ ու այդպես ապրենք մեր կյանքը՝ Նրանով, Նրա հետ, Նրա համար:

Սա՛ է էականը, որ մեզ պետք է: Սրան ձգտենք մեր ամբողջ զորությամբ ու կարողությամբ՝ էությամբ, բայց հետևողական հավատարմությամբ, որը կկարողանանք խաչի հավատքով, շնորհով ու խորհուրդով:

Կեցցեն՝ հայ ազգը, Հայաստանը, Հանրապետությունը և Հայրապետությունը, որ այս կյանքով՝ խաչով են ապրելու:

Խաչով կյանք կունենանք, անպայման:

ՄԱՐԴՈՒ ՄԵԾԱԳՈՒՅՆ ՓԱՌՔԸ ԵՎ ԿՅԱՆՔԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԻՄԱՍՏԸ

Ո՞րն է մարդու մեծագույն փառքը և նրա կյանքի գերագույն իմաստն ու նվաճումը, եթե ոչ Աստուծո օրհնությամբ Նրա հետ հաղորդակցվելը, Նրան ամբողջ սրտով, ամբողջ հոգով, մտքով ու ամբողջ զորությամբ սիրելը, Նրա որդին դառնալը... և Նրան ծառայելը, Նրա կամքը կատարելը՝ միշտ, ամենուր, ամեն ինչում:

* * *

Հայ ժողովրդի և ՀՀ իշխանության միջև անհրաժեշտ է համաձայնության դաշինք.

իսկ այդպիսի դաշինքի համար՝ լրիվ հասկացողություն,

իսկ դրա համար՝ միմյանց լրիվ ճանաչում,

իսկ դրա համար էլ՝ սեր, հարգանք և վստահություն:

Ի՞նչը կարող է հայության մեջ առաջացնել այդպիսի սեր, հարգանք և վստահություն, եթե ոչ միևնույն հավատքն ու այդ հավատքից բխող ու այդ հավատքի վրա հիմնված գաղափարը՝ Հայ Ազգային Գաղափարախոսությունը, և այդ գաղափարախոսության ապրումի նորմ դառնալը բոլորի համար՝ անկախ անունից, դիրքից և վիճակից:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈՒՍԱՐԵՆ

Դարը պարտավոր ենք ավարտել հաղթանակով*

ՀԱՂԹԱՆԱԿԻ նախապայմանն ու գրավականը՝ ՀԱՅՔ հաստատության ընթրնունով ու համոզմամբ՝

- Հայության ազգային հոգևոր և բարոյական վերածնունդով, դրա վրա հիմնված

- Ազգային գաղափարական ինքնագիտակցությունը և դրանցից բխող

- Պետական քաղաքացիական ինքնապարտաճանաչ պատրաստականությունն է:

ՍԱ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՈԳԻՆ Է՝ ԱԶԳԻ ՀՈԳԵԲԱՐՈՅԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ, որը կարելի կդարձնի թոթափել ստրկահոգության, ստրկամտության ու նյութապաշտության քրոնիկական ախտերը, այդ թվում՝ ազգային և քրիստոնեական ապրումի հանդեպ անտարբերությունը, խորթացումը, քաղքենիացումը և նման այլ ախտերն ու վերականգնել Ազգի հոգեբարոյական վարակամերժ կարողությունը, կորովն ու կենսունակությունը:

Հարկ է գիտակցել, որ մեր հոգեբարոյական վերածննդի ներուժը մշտապես առկա է: Այն կարող ենք օգտագործել որպես Նախնյաց Սուրբ Վաստակի՝ մեզ կտակված անանց ժառանգություն, եթե կատարենք նրանց թողած կտակի այն գրավական-պայմանը, որ ՄԱՔՈՒՐ, ԱՌՈՂՋ ԵՎ ԶՈՐԵՂ ՀՈԳՈՒ ՀԵՏ (ՈՐԸ ՄԵՐ ՄԱՐԴԱՍՅԻՆ-ԱԶԳԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՄՔԸ, ԳԱՂԱՓԱՐԸ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է) ՊԱՐՏԱԿՈՐ ԵՆՔ ՍՏԵՂԾԵԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՐԵՆ ԱՌՈՂՋ, ԶՈՐԵՂ ԵՎ ԿԵՆՍՈՒՆԱԿ ՄԱՐՄԻՆ, ԱՅՆ Է՝ ԱԶԳԻ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ՈՒ ԲԱՐԳԱՎԱՃՈՒՄԸ՝ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԱՏԵՎ ԶԱՆՔԵՐՈՎ:

Պատմական արդի փուլում դա նշանակում է համայն հայության ընդգրկումն Ազգային Պետականության մեջ՝ քաղաքացիական իրավունքների և պարտականությունների այնպիսի սկզբունքների և դրույթների ապահովմամբ, որոնց կիրառումը կառաջացնի ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱՑԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ (առանց որևէ արտաքին բարդության):

Դա կլինի, եթե Ազգի ու առաջին հերթին նրա Հանրապետության և Հայրապետության պատասխանատուները հավատան, գիտակցեն և կամքն ու կարողությունն ունենան կատարելու Ազգի շրջադարձային վերելքի երկու պայմանները՝

1. Հոգևոր տեսողությամբ ու անձնական օրինակով Ազգն առաջնորդեն արժանի դառնալու համար ապրել նախնյաց հոգևոր ժառանգությունը բովանդակող քրիստոնեական հավատքով և դրանից բխող ու դրա վրա

* Հայաստան-Սփյուռք առաջին խորհրդաժողովում հնչած կարգախոս, սեղեսնբեր, 1999թ.:

հիմնված Ազգային Գաղափարախոսությամբ և բարոյականությամբ:

2. Հայությանն ընդգրկել և ղեկավարել «Մեկ ազգ, մեկ Հայրենիք, մեկ ճակատագիր» ըմբռնունով կայացած կազմակերպական կառույցում:

Այդ դեպքում ՆՈՐ՝ 21-ՐԴ ԴԱՐԸ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ԴԱՐ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԻՄ-ՔԵՐԸ ԴՐՎԱԾ ԿԼԻՆԵՆ ԱՆԽԱԽՏ ՎԵՄԻ ՎՐԱ:

*Եթե երկիր մոլորակը ծաղիկներով դառնեն,
դրանով կցուցաբերեն մեր սերը նրա նկատմամբ:
Բնակամարաբ, նույնը վերաբերվում է հայերիս հայրենիքին՝
Հա-յաս-սա-մին:*

ՀԱՅԱՍՏԱՆ

Հողիդ բուրմունքին եմ կարոտ, ջրերիդ քաղցր համին:
Ծաղիկներիդ բուրմունքին եմ կարոտ և քո լեռների տեսքին:
Կարոտ եմ վեհ Մասիսիդ և քո չքնաղ Սևանին:
Հոգուս մեծագույն բաղձանքն է՝ վարդե՛ր ցանեն քո կրճքին,
Վարդեր ցանեն քո կրճքին ու իմ արյամբ ցողեմ դրանք,
Որ բուրմունք սփռեն երկրումդ, բուրմունքը՝ ազատության:

Օ՛հ, հայերի մա՛յր Հայաստան,
Ընդունի՛ր ինձ, սիրտս ու կյանքս՝ քեզ մատաղ:
Վերջին կաթի՛լ արյունս էլ կտամ քեզ համար,
Քո Ազատ ու երջանիկ կյանքի՛ համար:

Եվ երբ ազատ ես դու ու երջանիկ,
Եվ հառնում են մեծ անունները քո անցյալի,
Վրադ ընդմիջտ ճախրող հոգիս պի՛տ հրճվի, աղաղակի, Հայաստան,
Ապրի՛ր հավետ, Աստվածատո՛ւր հայրենիք Հայկյան երկիր Հայաստան:

Հայաստան, Հայաստան, Հայաստան: Հա՛-յա՛ս-տա՛ն...

1950 թ., Ռուսաստան
«Վոլգա-Դոն» կալանավայր

ՀԱՅՐԵՆԻՔ

Հայրենի հո՛ղ ես լսեցի. երկի՛նք, կապո՛ւյտ երկինք:
Հայրենի հո՛ղ ես երազեցի. երկի՛նք, կապո՛ւյտ երկինք:
Հայրենի հո՛ղ ես ուզեցի. երկի՛նք, կապո՛ւյտ երկինք:
Հայրենի հո՛ղ ես տեսա. կապո՛ւյտ, կապո՛ւյտ երկինք:

Հայրենի հո՛ղ ես զգացի. երկի՛նք, կապո՛ւյտ, երկինք:
Հայրենի հո՛ղ ես հասկա՛ցա. երկի՛նք, կապո՛ւյտ, երկինք:
Հայրենի հող ես սիրե՛ցի. երկի՛նք, կապո՛ւյտ, երկինք:
Հայրենի հո՛ղ ես դառնամ. երկի՛նք, կապո՛ւյտ, երկինք:
Հայրենի հողի՛ց ես ծնվեմ. երկի՛նք, երկի՛նք, երկի՛նք:

22. 08. 69 թ., Երևան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Հրատարակչության կողմից.....3
- Առաջաբան7
- Կենսագրական հուշեր և գնահատականներ9

ՀԱՅՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՀԱՄԱՌՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (ինչո՞ւ, ինչպե՞ս) ԵՎ ՆՐԱ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆԸ

- ՀԱՅՔ գիտահետազոտական հաստատության առաջացման պատմությունը..... 15
- ՀԱՅՔ հաստատության կոչումը, նպատակն ու գործունեությունը 17
- ՀԱՅՔ հաստատության հիմնական ծրագրերը..... 18
- Հայ Ազգային Գաղափարախոսությունը ՀԱՅՔ հաստատության ծրագրերում.....20

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ (ՀԱԳ)

- Նախաբան25
- Հայ Ազգային Գաղափարախոսություն (ՀԱԳ). հստակեցման և ճանաչման քայլեր.....27

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

- Հայ Ազգային Գաղափարախոսության ուսմունքը..... 35
- Բացահայտում և պարզաբանում 36
- Հայ Ազգային Գաղափարախոսության ակունքը 37
- Ազգի որակական կատարելագործում..... 39
- Հայոց երկրի և պետականության բախտը 39
- Ազնվությունը՝ թիվ մեկ պայման 41
- Ինչպե՞ս կարող են հայ ազգն ու Հայաստանը զորանալ և վերելք ապրել 43
- Անկաշառ ազգ ու հայրենիք 45
- Խոհեր Հայ Ազգային Գաղափարախոսության բաղադրիչների մասին 47
- Սուրբ Հայաստան..... 49
- Շարունակություն 44 տարվա մտքերի 50
- Ժառանգությանն արժանանալ է պետք 50
- Հայոց պետականության եռաստիճան բովանդակությունը (և դրա խորհրդի իմաստավորումը) 52
- Կոռումպացումը Հայ Ազգային Գաղափարախոսության և հավատքի տեսանկյունից 54

• Հայության էական հարցերից մեկը	57
• Նման է, բայց նույնը չէ.....	58
• Հիմք, որ կարող է կառույցը պահել.....	59
• Ինտերցիայի ուժը (Դրական և բացասական)	60
• Հավատք, ազգային գաղափարախոսություն, հասարակություն և պետականություն.....	61
• Հոգու պարտք և պատասխանատվություն	63
• Ինչն ինչից է բխում պետական կենսագործումներում.....	65
• Այս անգամ էլ կարկուտից փախանք, սակայն ինչպիսի՞ անձրևի տակ ընկանք	66
• Բարության և ժողովրդավարության կապը, հարաբերակցությունը և հավատավոր, գաղափարական ու բարոյական կյանքը.....	67
• Հուսալ և ձգտել իրականի՞ն, թե՞ կեղծին	68
• Ժողովրդավարության իրական դեմքը (եությունը).....	69
• Քաղաքացիական իրապես՝ առողջ հասարակություն.....	70
• Վերջապես, հազիվհազ	72
• Սփյուռքը վերջին 80 տարում՝ 1926-2006 թթ.	74
• Հայ ազգային (համահայկական) անկառավարելիություն (Պատճառ, հետևանք ու անելիքներ)	75
• Հարկ է հայ ազգային կազմակերպական կառավարման նոր քաղաքականություն	77
• Նոր գաղափարների և դրանց գործնականացման նոր մոտեցումների և ջանքերի մասին.....	78
• Հայության մտավոր կարողության լիարժեք օգտագործումը հնարավոր է հավատքով, գաղափարով և բարոյականությամբ	79
• Համահայկական պետականացման աստիճանավորումը Հայ Ազգային Գաղափարախոսության ճանաչմամբ, ընդունմամբ և ապրումով՝ կյանքի բոլոր հանգրվաններում.....	80
• Դարձյալ Հայ Ազգային Գաղափարախոսության ազգակերտ և պետականակերտ զորության մասին.....	81
• Ազգային միասնականության կարևորագույն նախապայմաններից մեկը	81
• Վստահ լինենք, որ լայն դուռը նեղության չի տանում	83

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶԱՐԳԱՅՈՒՄՆ ՈՒ ԶՈՐԱՅՈՒՄԸ

• Էական նշանակություն.....	87
• Ճգնաժամ.....	88

• Հոգեբարոյական զարկերակի զգացողություն.....	90
• Վիճակի պատճառ և հետևանք.....	92
• Անցումային շրջանի երևույթներ.....	95
• Ազգի կայացման և վերելքի առաջնային նախապայմանները	99
• Ժողովուրդ և հայրենիք	100
• Ամբողջ ազգի մասնակցությամբ՝ աշխարհի ընդգրկումով	102
• Հայկական գյուտ է պետք.....	104
• Ինչպե՞ս գտնենք պատճառը և լուծումը ազգային գերհարցի.....	104
• Հայության և Հայաստանի վերելքի գրավականը	105
• Ջարգացման նախապայման	106
• Ազգի կրիտիկական զանգվածի մասին	107
• Հայ ազգը թևակոխել է 21-րդ դար և պետք է կողմնորոշվի՝ դեպի լո՞ւյս, թե՞ խավար.....	109
• Գիտակցություն (Մտքեր մի հիշողության ազդեցության տակ).....	110
• Վերակառուցում	111
• Ինչ է տալիս Հայ Ազգային Գաղափարախոսությունը (ՀԱԳ)	112
• Շատ կարճ ու կտրուկ, բայց ըստ էության	113
• Հայ ազգի հասարակական զարգացման պահանջ.....	113
• Ասված է՝ ում շատ է տրվում, շատ էլ պահանջվում է (Եվ եթե խոստովանում ես, պիտի կատարես)	114
• Հայության և Հայաստանի Հանրապետության վերելքի ու անկման հարցեր	115
• Ազգ.....	116
• Ազգային էական ծառայություն	119
• Իշխանություն, թե՞ ծառայություն.....	120
• Հայոց միաբանության համար կարևոր է Հայ եկեղեցու միացումը.....	121
• Խելագարություն կամ սրբապղծություն (Հայ ազգային իրականությունում)	122
• 2007-2008 թվականների ընտրությունները՝ ճակատագրական	123
• Հայ հասարակությունը և պետականությունն ավտահարող վիրուսը (Բիճ և բճություն)	124
• Ազգային հոգեբարոյական, գաղափարական և սոցիալ- քաղաքական առողջապահություն	129
• Ընդդիմադի՞ր, թե՞ թշնամի	130
• Սովորեցինք կռվել արտաքին թշնամու դեմ, բայց ներքին թշնամու դեմ կռվել արդյո՞ք սովորեցինք.....	132
• Հայի «հալալ» կաթ	137

- Մեր ներքին ու արտաքին չարը մեզ կոչնչացնի, եթե Աստված մեզ չպաշտպանի 138
- Ամենամեծը, ամենակարևորը ու էականն անտեսված է 139
- Կյանքի ապրումը հավատքով 140
- Փրկություն և վերելք 143

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԱԿՈՐՈՒՄՆ ԸՍՏ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ

- ճանաչենք մեզ 147
- Դրական և բացասական իներցիա 147
- Համեմատություն և նախապայման էականի համար (Համաձայն Հայ Ազգային Գաղափարախոսության) 148
- Ո՞վ է հայը, ի՞նչ է հայը ու ինչպե՞ս կարելի է հայ լինել և մնալ (Ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության) 148
- Հայ ազգային պատկանելիության պատճառահետևանքային կապը և տրամաբանությունը (Ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության) .. 149
- Հայը 151
- Հայ մարդու կերպարը 152
- Մարդկային գործոն, որը նաև հայկական է 153
- Մարդը՝ մարդ և քաղաքացին՝ քաղաքացի՝ պետք է լինի 154
- Հայը եթե լինի հայ, դա ամեն ինչ է, որ լավ է (Ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության) 155
- Հայ և հայկականություն 156
- Հայկականություն 158
- Հայկականության գաղափարը, ուժը և վերելքը 158
- Հայը և Հայաստանը 159
- Հայկականություն. Աստուծո ծառայություն՝ ծառայելով հայությանը 160
- Ո՞րն է, ինչո՞ւմն է հայագիտության էությունը 161
- Հայ Ազգային Գաղափարախոսության առնչությունը հայկականությանը 163
- Հայկականության հավատքի էության ակունքը 165
- Ի՞նչ է Տարոնը (Որպես հայկականության արտահայտություն) 167
- Ի՞նչ է Տարոնական Ոգին, եթե ոչ հայկականության աղբյուր 168
- Տարոն աշխարհի զավակները. Ո՞վ է տարոնցին 169
- Ազնիվ, սուրբ և քաջ հայ «բեռնակիրների» մարդասիրական արարքը (մարդկային-հայկականության ըմբռնումով) 170
- Տարոնականության մերօրյա մի կերպավորում 171

- Տարոնը վերագտնենք նախ մեր սրտերում Աստուծո օգնությամբ (Որպես հայկականության հարատևություն) 173
- Մարդկային-հայկականության գործոնը հայ կյանքում..... 174
- Հայ սպա՝ հայոց բանակի մտքի, պատվի և բազկի առաջատարը 175

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՄԱՐԴԸ

- Հավիտենական կյանքի հավատը որպես փրկարար գաղափար հայ քրիստոնյայի կյանքում 179
- Ձարթոնք..... 180
- Ահագանգ ազգի և հայրենիքի գոյության վտանգի և կոչ հավատքի՝ ազգային ժառանգության հաստատման ու կիրառման 181
- Պատգամ հավատքով 182
- Տերն իմ սրտում..... 183
- Հոգևոր պաշտպանություն կեղծության պղծությունից..... 184
- Բոլոր ճանապարհները Հռոմ են տանում 185
- Գաղափարախոսության ուժն ու զորությունը..... 187
- Մարդ էակի բարձրագույն գիտակցությունը հավատքով..... 190
- Առաջադիմություն՝ հետադիմական 191
- Toleranse - թուերանս, հանդուրժողականություն 191
- Նույն վարմունքի տարբեր նշանակությունները..... 192
- Ինչպե՞ս ենք ըմբռնում ու իմաստավորում մեր էությունը և կյանքը (Հայ Ազգային Գաղափարախոսության տեսակետից)..... 194
- Կյանքի պատկեր և իսկություն (ճանաչված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ)..... 196
- Հարստության վտանգը, հարստության պատասխանատվությունը և հարստության արժանիքը..... 197
- Խստություն 198
- Ծուռ հայելու մեջ չնայենք մեզ 198
- Աքլորացավ..... 200
- Հայություն, Հայաստան և բախտախաղ (ղումար) (ժանի՛ր զքեզ՝ ճանաչիր քեզ, հայ՛ մարդ)..... 201
- Ինչպե՞ս երևալ և ինչո՞վ պարծենալ 203
- Հայ Ազգային Գաղափարախոսություն (հստակեցման և ճանաչման շարունակվող քայլեր) 204
- Հայ ազգային հոգեբարոյագիտության և գաղափարախոսության ճանաչմամբ ազգի, պետության, հասարակության կայացում և դրանով անվտանգություն, վերելք ու բարգավաճում 206
- Անկյունաքար Հայ Ազգային Գաղափարախոսության 208

• Ծնունդ և կյանք, մահկանացու ու անմահ (Դարձյալ Հայ Ազգային Գաղափարախոսության տեսակետից)	208
• Մտքեր (դիտելով CNN-ի մի ծրագիր)	210
• Գաղափարի ակունքն էական է	211
• Տիրապետություն մտքերի և սրտերի վրա	212
• Ինչո՞ւ չունենք և ինչպե՞ս ունենանք	214
• Ո՞վ պետք է ամաչի	214
• Չկա արդարություն՝ չկա խաղաղություն	216
• Հայ մարդու հայացքը եկեղեցու հանդեպ և երեք «այո»-ներ.....	217
• Համեմատության դասեր	218
• Հայ մարդու մասին (Նվիրվում է նորածին արեգնական մանչուկներին)	219
• Ազատությունն ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության.....	220
• Հավատքը և հավատացյալը.....	223
• Ընտրյալ ազգ՝ արարմամբ.....	224
• Սրբություն (Ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության)	224
• Իմ Աստվածը՝ իմ Փրկիչը և ինձ կյանք պարզևողը.....	226
• Նահատակությունը մահ չէ, այլ՝ կյանք.....	228
• Ո՞ր վերածնունդը, ինչի՞ վերածնունդը	229
• Հոգևորի և բարոյականի դեմ գաղափարական և մշակութային ագրեսիա	230
• Կրթական պահանջը.....	231
• «Խոսքեր, որոնք փոխեցին մի ամբողջ ազգ, Ամերիկան»	231
• ՀՀ հեռուստահաղորդումների «խեղրը»	232
• Սեփական տնաքանդություն.....	233
• Գիշ հուսահատությա՞ն (Սա ի՞նչ փորձանք է).....	234
• Գաշակ, «պահանջ և ռեյտինգ».....	237
• Խոհեր համազգային պետության կերտման համար ՀՀ քաղաքացիության դերի մասին.....	239
• Քրիստոս չի հայանում, հայն է քրիստոնեանում.....	243
• Տեսիլք, որ կարո՞ղ է իրականանալ	244

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԿՅԱՆՔԻ ՄԱՐԿԱՅՆՈՐԵՆ ԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ

• Մարդ էակի կյանքի գերագույն իմաստը կազմող նպատակը և դրա կենսագործումը (Հայ Ազգային Գաղափարախոսության տեսակետից)	249
--	-----

• Մարդկային հայ իրական կյանքի առանցքը սերն է, միջավայրը՝ սրբությունը.....	250
• Հավատքի գիտություն 251	251
• Ազգի ու հայրենիքի խնդիրները՝ իբրև խաչ, որով և փրկություն ու կյանք	253
• Ճշմարտության էությունն ու նրա ևս մի օգուտը հայ ազգին	255
• Գոյության մահն ու անմահությունը (ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության).....	256
• Քննենք ու քննարկենք այնպես, որ հասկանանք	257
• Գլոբալացում. բարու և չարի գլոբալացում՝ նախնական և ժամանակակից	258
• Դարծյալ համաշխարհայնացման (գլոբալացման) մասին	258
• Լինելիություն անձի, ազգի, մարդկության.....	260
• Ով ում համար աղոթի և բարեխոսի ի փրկություն	262
• Ծնունդով մահ և մահով ծնունդ.....	264
• Դարծյալ իսկականի և էականի մասին (Եվ դարծյալ ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության)	266
• Հարության հրաշքը և հայ ազգը.....	267
• Սատանայական սոփ զորության արդյունքները.....	267
• Հավատք տեսածի և չտեսածի.....	269
• Ազգային հոգեբարոյականություն և գաղափարականություն (Ազգային խիղճ և գիտակցություն).....	270
• Հայոց հայրենիքի պաշտպանությունը և բարձրացումը.....	272
• Խիղճ.....	272
• Դարծյալ խիղճ.....	273
• Եվ դարծյալ խիղճ	274
• Սիրտ (տեսակներ)	274
• Խաչը նաև պորտալար է կյանքի, բայց նախևառաջ սեր է (Ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության)	275
• Կիրակնօրյա խոհեր	275
• Ճշմարտությունը ներքին որակի մասին	277
• Եթե իրերն իրենց անունով կոչվեն.....	278
• Խաչը փրկություն է. իմ խաչն իմ ծառայությունն է ազգիս	279
• Փառաբանություն և խնդրանք. աղոթք հայկական	279
• Կենսունակության և քայքայման ժամանակամիջոցը.....	280
• Ամենամեծ ժպիտը և ամենասուրբ ուրախությունը	281
• Խաղաղության երաշխիքը	282
• Մի պահ անդրադարձնալով մեր բաժակաճառերին.....	283
• Լավը և վատը	283

• Արժեքների մասին	284
• Ո՞ր աշխարհը	285
• Արժեքների արժեզրկում և մարդկայնության անմարդկայնացում ...	285
• Հայ Ազգային Գաղափարախոսությունից բխող ասույթ-մեկնաբանություններ	286
• Ազատություն (ո՞ւմ համար ազատություն և ի՞նչ հետևանքներով) ...	287
• Օրենքի «խերը».....	288
• Ձև և բովանդակություն (ձևապաշտությունը կուրացնող ու աղետաբեր է).....	289
• Խելագար, ամոթալի և քայքայիչ.....	290
• Որ աղքատությունն է ավելի մտահոգիչ (Ըստ Հայ Ազգային Գաղափարախոսության).....	291
• Լավը և վատը, ճիշտը և սխալը	292
• Հատված մի գրույցից.....	292
• Անմահություն հասկացությունը՝ շատ բարդ ու անհասկանալի, բայց և շատ պարզ ու հասկանալի	293
• Պատահականություն, թե՞ օրինաչափություն.....	293
• Պատմությունը որպես ինքնաճանաչման ու ապագայի կառուցման գիտություն	295
• Ամենաօգտակարը, կառուցողականը և ամենավտանգավորը, կործանարարը.....	296
• Սահման անտեսանելի, անընթռնելի, բայց և իրական.....	297
• Խոհեր կյանքի որոշակի իմաստի շուրջ	298
• Ինչը ինչի համար	298
• Ամեն ինչ էության մեջ է, և էությունը կյանք է	299
• Մարդու մեծագույն փառքը և կյանքի գերագույն իմաստը.....	301
• Վերջաբանի փոխարեն. Դարը պարտավոր ենք ավարտել հաղթանակով	302
• Հայաստան (բանաստեղծություն).....	305
• Հայրենիք (բանաստեղծություն)	305

Վարդան Գրիչենց

ՀԱՅ

ԱԶԳԱՅԻՆ

ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅՈՒԹՅԱՆ

ԿԵՆՍՈՒՆԱԿ ՀԱՐԱՏԵՎՄԱՆ

ԳՐԱՎԱԿԱՆ

Տեխ. խմբագիր՝

Լյուսյա Առաքելյան

Չափսը՝ 100x70, 1/16: Ծավալը՝ 19,5 մամուլ

Տպաքանակը՝ 500:

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում: